Մորիս Խաչենց

ԵՐԿՈՒ ՃԱՄԱՊՈՍՈՎ

Առաջին հանապարհ

Ճակատագրով դատապարտվածներ

Երկրորդ հանապարհ

Դատապարտյան

Գորիս 2018

Խմբագիր՝ Ա. Ծատուրյան

Մորիս Խաչենցի ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀ վեպի գործողությունները ընդգրկում են 1990-ական թվականները: Նորանկախ պետության ձևավորման ճանապարհին ճակատագրեր են բախվել: Հեղինակը ականատեսն է եղել արատավոր դեպքերի, որոնք էլ գեղարվեստական խտացմամբ վերարտադրել է վեպում:

Ժամանակակից վեպ:

©Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գորիս, 2018

Հակապատերազմ դատապարտվածները

Առավոտյան Վահան Դարբինյանն արթնացավ ուղիղ 7 անց 10 րոպեին: Հունիս ամիսն էր: Երկինքը պարզ էր, արևը նոր-նոր էր ծագել:

Հինգ-տասը րոպե անկողնում պառկելուց հետո Դարբինյանը վեր կացավ, մտավ ճաշասենյակ, երեխաների ննջասենյակի դուռը կիսաբաց արեց և նայեց: Երեխաները հանգիստ քնած էին: Այնու-հետև նա մտավ խոհանոց, ստուգեց՝ էլեկտրականություն կա, թե՞... Անջատիչը միացրեց, վառվեց էլեկտրալամպը: Ուրախացավ: «Այս ինչ բարեբախտություն է,- մտմտաց նա,- էլեկտրականություն կա»: Թեյնիկը ջուր լցրեց, դրեց էլեկտրական ջեռուցչի վրա, շուռ եկավ ու մտավ լվացարան:

Դժվար ժամանակներ էին: Ամեն օր չէր, որ էլեկտրականութ-յուն էր լինում: Դաժան, բայց հերոսական ժամանակներ էր ապրում հայ ժողովուրդը: Պատերազմը շարունակվում էր Ղարաբաղի ազա-տագրության համար: Ամեն ինչի պակաս էր զգում ժողովուրդը, այդ թվում նաև էլեկտրականության: Այսպես կոչված հովհարային ան-ջատումները սովորական երևույթ էին: Վահանը լվացարանից դուրս գալուց հետո նկատեց, որ թեյնիկը ջեռոցի վրա չէ: Կռահեց, որ թեյը եռացել է և այն կինն է վերցրել՝ Անուշը:

-Բարի լույս,- մտնելով խոհանոց՝ ասաց Վահանը:

-Բարի լույս,- պատասխանեց կինը,- նստի՛ր, թեյ լցնեմ, խմի՛ր:

Վահանը աթոռը մոտեցրեց, նստեց սեղանի շուրջը: Կինը՝ Ա-նուշը, թեյով լի բաժակը բերեց դրեց ամուսնու դիմաց, ինքն էլ նստեց:

-Իսկ ինչո՞ւ քեզ համար էլ թեյ չես լցրել,- հարցրեց Վահանը:

-Երեխաները կարթնանան, հետները կխմեմ,- անտրամադիր ասաց Ա՛նուշը և նայելով ամուսնուն՝ մտահոգ ավելացրեց,- աշխատավարձդ գոնե այս ամիս կստանաս, երկրորդ ամիսն է՝ սպասում ենք: Հույս կա:

-Չգիտեմ, Ա՛նո՛ւշ ջան, չգիտեմ... Եթե տվեցին, կստանամ:

-Եթե այս անգամ էլ չտվեցին, մեզ համար շատ դժվար կլինի: Երեխաների համար կոշիկ պիտի առնենք, չեմ խոսում, որ հագնելու շոր չունեն:

Թեյի բաժակը անշարժացավ Վահանի ձեռքին: Քիչ մտածելուց հետո նա վեր կացավ նստած տեղից, նայեց կնոջ աչքերի մեջ ու տխրաշեշտ ասաց.

-Քոյրերիցդ պա՛րտք վերցրու: Կստանան, կտանք:

Վահանը գնաց դեպի ննջարան, բարձի տակից հանեց ատրճանակը, որ պահում էր հատկապես քաղաքում հայտնված կռվազաններին հանդստացնելու համար: Հետո մտաքբաղ քայլեց դեպի միջանցք, հագավ կոշիկները և ամառային կուրտկան, ատրճանակը թաքցրեց գոտկատեղում հարմարեցված պատյանի մեջ և դուրս եկավ տնից:

Փողոցում հանեց սիգարետների տուփը և տեսավ, որ այնտեղ վերջին սիգարետն է մնացել: Քթի տակ ժպտաց, հանեց սիգարետը և ջղագրգիռ տուփը շպրտեց մոտիկ դրված աղբարկղի մեջ: Նա սիգարետը վառեց՝ մտնելով դիմացի փողոցը, որի անկյունում փոքրիկ խանութ-կրպակ կար: Նա քայլեց դեպի կրպակը և նկատեց, որ կրպակի վաճառողը ուշադիր հետևում է իրեն: Գիտեր, որ մարդը գալիս է սիգարետ գնելու: Վահանը հենց մոտեցավ, վաճառողն իսկույն երկու տուփ «Ախթամար» դրեց վաճառասեղանին:

-Բարի լույս,- ասաց Վահանը,- ինչպե՞ս է ընթանում առևտուրդ:

-Շատ վատ, ընկեր ավագ լեյտենանտ,- պատասխանեց վաճառող Սամվելը և սիգարետի տուփերը հրեց դեպի Վահանը,- վերցրո՛ւ, վերցրո՛ւ, պարտքով եմ տալիս, գիտեմ, որ աշխատավարձ չես ստացել: Երկու տուփ եմ տալիս այսօրվա և վաղվա համար: Քեզ կարելի է, վստահելի մարդ ես: Աշխատավարձդ կստանաս, կտաս:

-Շնորհակա՛լ եմ,- սիգարետի տուփերը դնելով գրպանը՝ ասաց Վահանը,- շնորհակալ եմ, Սամվե՛լ ջան: Հանի՛ր պարտքերի ցուցակդ, նայի՛ր՝ ավել չգրես: Շնեղանա՛ս, կատակ եմ անում:

Վահանը քայլեց դեպի աշխատանքի վայրը: Անցնելով մանկապարտեզի, այնուհետև քաղաքապետարանի շենքի կողքով՝ նա թեքվեց դեպի ձախ՝ մոտենալով իր աշխատավայրին՝ ոստիկանության շենքին: Ոստիկանության շենքի մոտ արդեն կանգնած էին մի քանի ծառայողական ավտոմեքենաներ: Մտնելով շենքից ներս՝ Վահանը մեխանիկորեն նայեց ժամացույցին: ՈՒԹ անց է հինգ րոպե: Ոստիկանության հերթապահությունում հավաքված ոստիկաններ կային: Վահանի համար դա անսովոր էր:

Մի քիչ զարմացած մոտեցավ, բարևեց:

-Բարի լույս:

Ոչ ոք չպատասխանեց: Բոլորը մեծ հետաքրքրությամբ հեռուստացույց էին նայում:

Վահանն ավելի մոտեցավ, միացավ հավաքվածներին: Հեռուստացույցից լսվում էր հաղորդավարի ազդու ձայնը:

-Այսօր՝ առավոտյան՝ մոտ ժամը վեցին հերթապահ զինվորների մի ջոկատ Որոտան գետի ձախ ափին հայտնաբերել է մի կնոջ դիակ՝ կիսամերկ, սև գույնի ցելոֆանե պակետապարկի մեջ: Այդ մասին անհապաղ հայտնվել է ոստիկանությունն:

Շտապ դեպքի վայր են մեկնել քննիչը և սպանությունների գծով բաժնի պետի պաշտոնակատար ավագ լեյտենանտ Աշոտ Մանուկյանը բաժնի երկու ոստիկանների հետ:

Հաղորդավարի խոսքից հետո հեռուստացույցի էկրանի վրա երևում է թղթակիցը, որ դեպքի կապակցությամբ հարցեր էր տալիս Աշոտ Մանուկյանին:

-Պարո՞ն Մանուկյան, սա արդեն երրորդ սպանությունն է, որ կատարվում է վերջին տասը ամսում: Դուք ի՞նչ կարող եք ասել այս մասին: Արդյո՞ք սա մանյակի ձեռքի գործ է, թե՞ պատահական սպանություն է:

-Ես այս պահին ոչինչ ասել չեմ կարող: Դա կպարզվի միայն դեպքի մանրազնին հետազոտությունից հետո,- պատասխանում է սպանությունների գծով բաժնի պետի պաշտոնակատար Աշոտ Մանուկյանը:

-Մենք հասկանում ենք, որ պետք է հետաքննություն կատարվի, ինչպես սովորաբար լինում է նման դեպքերում: Մեզ ուղղակի ուրիշ բան է հետաքրքրում: Դուք կարո՞ղ եք կարճ ժամանակում գտնել հանցագործին և ձերբակալել, որպեսզի ժողովուրդը կարողանա հանգիստ քնել: Մարդիկ շատ են անհանգստացած:

-Ոչ ոք չի կարող ասել, թե ինչ կլինի, ես նույնպես: Բայց մի բան ձեզ խոստանում եմ՝ ճիգ ու ջանք չինայել հանցագործին հայտնաբերելու համար: Վերջ:

Հենց այդ պահին զնգաց հերթապահության հեռախոսը: Հերթապահը վերցրեց հեռախոսափողը:

-Քաղմասի հերթապահ ավագ լեյտենանտ Գարուն Մարտիրոսյանը լսում է:

Հեռախոսի մեջ լսվեց ինչ-որ մեկի ձայնը: Հերթապահ Մարտիրոսյանը շրջվեց ու բարձր ձայնով հայտարարեց.

-Պարո՞ն Դարբինյան՝ պետի մոտ:

Կապիտան Դարբինյանը բարձրացավ երկրորդ հարկ ու գնաց դեպի պետի ընդունարանը: «Տեսնես ի՞նչ փորացավ ոնի: Երևի էլի փող է ուզում»,- մտածեց նա:

Դարբինյանն արագ բացեց ընդունարանի դուռը և ներս մտավ:

-Բարի լույս,- դիմեց քարտուղարուհուն,- կարելի՞ է մտնել պետի մոտ, կանչել է:

-Այո՛, իհարկե,- սիրալիր ժպտաց քարտուղարուհին,- նա ձեզ է սպասում, մտե՛ք:

Դարբինյանը ծեծեց պետի աշխատասենյակի դուռը և ներս մտավ:

-Բարի լույս, պարո՞ն Նազարյան, կարելի՞ է:

Ոստիկանապետ մայոր Մարկոս Նազարյանը առանց նայելու գլխով արեց՝ ցույց տալով, որ խիստ զբաղված է, կարևոր բան է ընթերցում: Նրա ձեռքին ռուսական «Իզվեստիա» թերթն էր: Քիչ հետո նա թերթը մի կողմ դրեց, սառն ու անտարբեր նայեց Դարբինյանին ու առանց որևէ նախաբանի ասաց.

-Փողը բերե՞լ ես:

-Ի՞նչ փող,- զարմացավ Դարբինյանը:

-Ուրեմն չգիտես՝ ինչ փող: Հիմա ասեմ: Քանի՞ ամիս է՝ նախարարության «Թավանը» չես փակում,- խստությունն խաղալով՝ ասաց մայորը,- քո փոխարեն ես եմ փակում քո Հայկ Հովհաննիսյանին հարգելով: Եթե այս ամիսն էլ չփակես... մինչև ամսվա վերջը, այդ դեպքում մի դիմում կգրես աշխատանքից ազատվելու մասին: Այժմ ազատ ես, կարող ես գնալ զբաղվել քո գործերով:

Վահանը պետի առանձնասենյակից դուրս եկավ խիստ անտրամադիր: Դանդաղ ու մտամոլոր քայլեց դեպի իր աշխատասենյակը, բացեց դուռը, ներս մտավ, բայց չնստեց: Մոտեցավ պատուհանին, նայեց դուրս: Ամնհանգիստ մտքերը

պաշարել էին նրան: Նա մտածում էր ոստիկանության պետի մասին...

Ոստիկանության պետ Մարկոս Նազարյանը Խորհրդային Իշխանության տարիներին քրեական հանցագործ է եղել: Աշխատել է Սիրոգ քաղաքի ՍՈՒ-19 շինարարական կազմակերպությունում որպես շինարարության աշղեկ: Ադրբեջանի Աղդամ քաղաքում բեռնատար «Զիլ» ավտոմեքենայով ցեմենտ վաճառելիս բռնվել է Աղդամի ոստիկանության կողմից և դատապարտվել երկու տարվա ազատազրկման: Մեկ տարի վեց ամիս բանտային ռեժիմով նստելուց հետո տեղափոխվում է Ջերմուկ քաղաքի ազատ աքսորյալների կալանավայր: Այստեղ՝ Ջերմուկում էլ նա ծանոթանում է համաքաղաքացի ազատ աքսորյալ Կարո Մկրտչյանի հետ: 90-ական թվականներին՝ Հայաստանի անկախության հռչակումից հետո Մարկոս Նազարյանը հայտնվում է անգործների շարքում: Որոշ ժամանակից հետո, ինչպես ժողովուրդն է ասում, նա կարողանում է քաղաքագլուխ Կարո Մկրտչյանից «գնել» ոստիկանության պետի պաշտոնը: Որպես ոստիկանապետ Մարկոս Նազարյանը հիմնականում զբաղվում է հայոց նորաստեղծ բանակից փախած դասալիք զինվորների հարցերով:

Ձերբակալվածները նրա ձեռքից ազատվում էին միայն երկու հազար դոլար տալու դեպքում: Փողը վերցնելուց հետո նա դասալիք զինվորներին նորից էր ուղարկում ծառայության: Իսկ այն դասալիքները, որոնք չէին կարողանում «վճարել» այդ գումարը, դատապարտվում էին երկու տարվա ազատազրկման:

Ոստիկանապետ Մարկոզ Նազարյանը անխախտ օրենք էր դարձրել քաղաքացիներից փող կորզելու գործը: Նա «խիստ» էր հատկապես օրինախախտ համաքաղաքացիների նկատմամբ: Օրենքի չնչին խախտման դեպքում անգամ նա մարդկանց «պատժում» էր համապատասխան գումարով...

Աշխատասենյակի կիսաբաց պատուհանից Վահանը նայում էր ներքև: Բակում մարդկանց շարժը քիչ էր, բայց բավականաչափ ավտոմեքենաներ կային: Նա տեսավ ինչպես դատախազի օգնական Հարությունը Մարգարյանը մոտեցավ իր ավտոմեքենային ու ներքևից վերև նայելով գոռաց.

-Բանալիները գցի՛ր:

-Վերցրո՛ւ,- վերևից լսվեց վարորդի ձայնը:

Դատախազի օգնականը ձախ ձեռքով ճարպկորեն օդում բռնեց դեպի ավտոմեքենան ու առանց շուրջը նայելու շտապ նստեց ավտոմեքենան ու բակից դուրս եկավ:

-Տես է, ձախլիկ է դատախազի օգնականը,- նկատեց Վահանը,- բայց ինչ անտանելի տեսք ունի:

Դուռը բացվեց: Վահանը դեմքով շրջվեց դեպի այցելուն: Ներս մտավ իր օգնականը՝ լեյտենանտ Արման Աբրահամյանը:

-Բարի՛ լույս, շե՛ֆ ջան,- բարևեց օգնականը:

-Բարի լույս, Արմա՛ն,- ասաց Վահանը և նստեց աթոռին: Քիչ հետո նա վերցրեց հեռախոսափողը, զանգեց հերթապահին:

-Ավագ լեյտենանտ Մարտիրոսյան, նախնական կալանքի վերցված Գալուստ Սահակյանին շտապ բերեք ինձ մոտ հարցաքննության:

Մի քանի րոպե անց հերթապահ սերժանտի ուղեկցությամբ ներս մտավ Գալուստ Սահակյանը:

-Շնորհակալություն, սերժանտ, դրսո՛ւմ սպասիր, պետք լինի՝ ես քեզ կկանչեմ:

Վահանը մնաց կալանքի վերցված Գալուստ Սահակյանի հետ:

-Նստի՛ր,- ասաց Վահանը՝ ցույց տալով դիմացի աթոռը:

Գալուստը նստեց և սպասեց, թե ինչ է հարցեր են տալու իրեն:

Վահանը չէր նայում կալանավորի կողմը: Նա խորասուզված նայում, ստուգում էր դիմացինի փաստաթղթերը:

-Կարելի՞ է այստեղ ծխել,- հարցրեց կալանավորը՝ աչքը սեղանի վրա դրված սիգարետների տուփին:

-Վերցրո՛ւ, վերցրո՛ւ,- տուփը դեպի Գալուստը հրեց Վահանը:

Գալուստը վերցրեց տուփը, մի սիգարետ հանեց, վառեց և սկսեց ագահորեն ծուխը ներս քաշել: Մինչ Գալուստը ծխում էր, Վահանն աչքի տակով նայում էր կալանավորին: Ու հանկարծ հիշեց նրա մայրիկին՝ տիկին Լաուրա Սահակյանին՝ դպրոցական տարիների՝ քիմիայի իր ուսուցչուհուն:

Վահանը սիրում ու հարգում էր նրան: Նա իրեն դասավանդող մանկավարժների մեջ ամենաշատը նրան էր գնահատում, որպես հոգատար, երեխաների հոգեբանությունը հասկացող մանկավարժի: Ընկեր Լաուրան ոչ մեկին չէր վիրավորում, բոլորի հանդեպ բարյացակամ էր և ուշադիր:

Տիկին Լաուրայի ամուսինը՝ Հովհաննես Սահակյանը, աշխատում էր շրջանային կուսկոմիտեում որպես հրահանգիչ: Նա վայելում էր համաժողովրդական սեր ու հարգանք: Խորհրդային Միության փլուզումից հետո հետզհետե մարվեց նաև կոմկուսակցության գործունեությունը: Հովհաննես Սահակյանը, ինչպես շատերը, մնաց անգործ: Նրա վրա դա շատ վատ ազդեց:

1992 թվականին Հովհաննեսի և Լաուրայի որդին՝ Գալուստը, ընդունվում է Սիրոգ քաղաքի մանկավարժական ինստիտուտ, որը հետո կարգավիճակը փոխում է, դառնում ճարտարապետական: Անգործ մնացած Հովհաննես Սահակյանի ընտանիքն ընկնում է տնտեսական ծանր վիճակի մեջ: Դա ուսանող Գալուստի վրա չազդել չէր կարող: Գալուստն ընկնում է վատ շրջապատի մեջ, զբաղվում թմրամոլությամբ: Սկզբում թմրադեղի օգտագործումը նրան խաղ էր թվում: Նա կարծում էր՝ ցանկացած ժամանակ կարող է դրանից հրաժարվել: Ավա՜ղ, երիտասարդը շատ էր սխալվում: Շուտով նա զգաց, որ դրանից հրաժարվել այլևս չէր կարող: Արդեն

անհնարին էր կես ճանապարհից վերադառնալ: Հրաժարվել միայն շատ քչերին էր հաջողվում:

Նա սկզբնական շրջանում «անաշա» կոչված թմրամիջոցն էր օգտագործում, ուղղակի ծխում էր, հետո սկսեց թմրանյութ սրսկել (ներարկել) ինքն իրեն:

Գալուստն առաջին անգամ ոստիկանությունում հայտնվեց, երբ երրորդ կուրսում էր: Դա 1995 թվականն էր: Տուգանեցին և բաց թողեցին: Հայրը չկարողացավ տանել որդու հակաբնական, վտանգավոր արարքը: Դա շատ ծանր էր ազդել նրա վրա: Հայրը ինֆարկտ ստացավ:

Գալուստը վեց ամիս հետո նորից հայտնվեց ոստիկանությունում: Ծնողները մեծ գումար տալով՝ նրան հազիվ կարողացան ազատել բանտարկությունից: Գալուստին տեղափոխեցին Հիվանդանոց՝ դիսպանսերական բուժման: Հայրը երկրորդ անգամ ինֆարկտ ստացավ և վաղաժամ հեռացավ կյանքից: Հոր թաղման առիթով Գալուստը դուրս եկավ դիսպանսերից: Նա խոստացավ, որ այլևս թմրամիջոցներ չի օգտագործելու:

Մայրը՝ Լաուրա Սահակյանը, հազիվ կարողացավ նրան պահել համալսարանում:

Սակայն Գալուստը կարճ ժամանակում դրժեց իր խոստումը: Ինչպես ասում են՝ մղձավանջը հաղթեց: Երկու ամիս հետո նա դարձյալ նույն թմրամոլն էր: Տղան մեծ պարտքերի տակ ընկավ: Թմրադեղեր ձեռք բերելու համար նա վաճառեց տան եղած իրերը՝ կահույքից մինչև հեռուստացույց: Որդու պատճառած հոգեկան ցնցումներից ու տառապանքներից հետո խիստ վատացավ մոր առողջությունը: Տենդ ու տաքության մեջ տառապում էր նա, ճնշումը մեկ բարձրանում, մեկ էլ կտրուկ իջնում էր: Բուժման համար մեծ գումարներ էին պահանջվում: Բայց որտեղից և ով նրան բուժման տաներ:

Գալուստի և նրա ծնողների հետ կապված պատմությունը քաջ հայտնի էր Վահան Դարբինյանին: Նա ուղղակի խղճում էր Գալուստին և նրա մորը, բայց ինչ կարող էր անել:

Իսկական ճանապարհից շեղված որդին արդեն անուղղելի թմրամոլ էր, և դժվար թե նրա վրա ազդեր որևէ խրատ ու խորհուրդ:

Դարբինյանը գլուխը բարձրացրեց, խոր ափսոսանքի արտահայտությամբ օրորեց գլուխը, հոգոց հանելով ասաց .

-Գալո՛ւստ, այսօր քեզ բանտ եմ ուղարկում: Ժամկետը լրացել է, և ես չեմ կարող այլևս քեզ մեզ մոտ պահել,- քիչ լռելուց հետո ավելացրեց,- ես ափսոսում եմ քո երիտասարդությունը, ճանաչում եմ ծնողներիդ, հարգում եմ նրանց, բայց այլ ճանապարհ չկա: Այսօր երևի վերջին անգամ եմ հարցաքննում քեզ: Գիտե՞ս ինչ: Վերջապես դու պիտի ասես, թե այդ թմրադեղերը որտեղից և ումից ես ձեռք բերում: Քեզ համար դա շատ օգտակար կլինի, եթե ասես: Կարծում եմ դու ինձ հասկացար:

Գալուստը խնդրում է ևս մի սիգարետ:

-Վերցրո՛ւ, վերցրո՛ւ, ամբողջ տուփը քեզ,- սիրահոժար ասում է Դարբինյանը:

Գալուստը վերցնում է տուփը, շնորհակալ նայում դիմացինին, վառում սիգարետը և ծուխն ամբողջությամբ կլանում ներս: Մի պահ տիրում է լռություն: Դարբինյանն սպասում է Գալուստի խոստովանությանը: Գալուստը խեղճ-խեղճ նայում է Դարբինյանին և ցածր ու անվստահ ասում.

-Եթե կարող եք, ինձ բանտ մի ուղարկեք: Ես այնտեղ երկար չեմ դիմանա: Խնդրում եմ ինձ ուղարկեք դիսպանսեր բուժման, այս անգամ իսկապես խոստանում եմ հրաժարվել այդ զզվելի թմրադեղից:

Դարբինյանը նայում է Գալուստին և նրա խոսքերի մեջ անկեղծություն տեսնում:

-Խոստանում եմ քեզ բանտ չուղարկել, եթե անկեղծորեն պատմես ամեն ինչ՝ ովքե՞ր են բերում այդ թմրանյութերը և որտեղի՞ց:

Գալուստը լռեց և խոսեց մի քանի րոպե սպասելուց հետո: Զգացվում էր, որ նա որոշել է ամեն ինչ պատմել:

-Ավտոմեքենան գալիս է Երևանից, ուրբաթ օրերը, այսինքն՝ շաբաթը մեկ անգամ:

-Սպասի՛ր,- Գալուստի խոսքն ընդհատեց Վահանը և դիմեց կողքը նստած Արմանին,- ցուցմունքները գրի առ: Իսկ դու՝ Գալուստ, հիմա կարող ես խոսքդ շարունակել:

Այժմ ասա՝ ինչ մեքենա է, մեքենայի մակնիշը, համարը, մեքենան ի՞նչ գույն ունի, ո՞վ է վարորդը, և քանի հոգով են գալիս: Այսպես բոլորը հերթով:

-Ավտոմեքենան «Ժիգուլի 0-7» է՝ սպիտակ գույնի, համարն էլ 555: Թմրադեղը հանում են մեքենայի հետևի աջ կողմից: Ավտոմեքենան ունի չթափանցող, մթնեցրած պատուհաններ: Այն մի քիչ իջեցնում են, այնտեղից հանում են թմրադեղը և վաճառում: Փողը վերցնում են և համապատասխան չափաբաժինը տալիս,- ոչինչ չթաքցնելով՝ արագ ազատ բացատրություններ էր տալիս Գալուստը:

-Պայմանավորված ազդանշան ունեք երևի: Օրինակ, քանի՞ անգամ եք խփում ավտոմեքենայի պատուհանին, որ բացում են և որքա՞ն եք վճարում մեկ չափաբաժնի համար:

-Խփում ենք երեք անգամ, մեկ չափաբաժնի համար վճարում ենք 1500 դրամ:

-Ժամը քանիսի՞ն են գալիս, քաղաքի ո՞ր մասում են կանգնում:

-Ակզբում կանգնում են ուսումնարանի մոտ ժամը 11-ն անց կեսին, մի ժամ, մինչև 12-ն անց կես:

-Հետո ո՞ւր են գնում:

-Հետո մեկնում են համալսարան: Այստեղ կանգնում են երկար ընդմիջման ժամանակ: Կանգնում են երկու ժամ: Ժամը 2-ն անց կեսին թողնում հեռանում են:

-Դեպի ո՞ւր:

-Այդ մեկը չգիտեմ, պարո՞ն Դարբինյան: Բայց երևի Կապան կամ Երևան:

-Շատ լավ, ցուցմունքը կարդա և ստորագրիր,- Գալուստի ցուցմունքներից գոհ ու բավարար՝ ասաց Դարբինյանը,- քեզ առայժմ կթողնենք ոստիկանությունում մինչև երկուշաբթի: Հետո գործերի ընթացքը մի բան ցույց կտա:

Դարբինյանը կանչեց հերթապահ սերժանտին և խնդրեց Գալուստին տեղափոխել ժամանակավոր խուց:

Ուրբաթ օրը՝ առավոտյան ժամը ութին, չորս ոստիկան ներկայացան «Թմրադեղերի դեմ պայքարի բաժնի» պետ Վահան Դարբինյանի աշխատասենյակ: Ինքն էր ոստիկաններին հրավիրել, ինքն էլ ղեկավարում էր խորհրդակցությունը: Ներկա էին Արման Աբրահամյանը և երեք ոստիկան քրեական հանցագործությունների բաժնից:

Խորհրդակցության նպատակն էր մշակել օպերատիվ գործողությունների պլան և ճիշտ տեղում ու ճիշտ ժամանակին ձերբակալել թմրանյութ վաճառողներին: Այդպես էլ որոշվում է հանցագործներին թմրադեղ վաճառելու պահին ձերբակալել և հատկապես ձեռքից բաց չթողնել «Մժեղ» մականուն ունեցող հանցագործին, որ հանցագործ խմբի գլխավորն էր: Որոշվեց թմրադեղ վաճառողներին բռնել համալսարանի մոտ, քանի որ այստեղ բնակիչների թիվը համեմատաբար քիչ էր: Հետևաբար քիչ կլիներ նաև անցնող-դարձողների թիվը:

Ժամը տասին ոստիկանության օպերատիվ խումբը մեկնեց Համալսարան: Ավտոմեքենան կանգնեցրին երկու փողոց հեռու, որպեսզի ամնկատ մնան և կասկածի տեղիք չտան: Ոստիկաններն իրենց հետ վերցրին նաև Գալուստին, որ մոտենա ու թմրադեղ գնի վաճառողներից:

Տեղ հասնելուց հետո Վահանը բաժանվեց խմբից, քայլեց դիմացի արահետով և կանգ առավ ավտոմեքենայից քսան-քսանհինգ մետր հեռավորության վրա: Սկսեց արևածաղիկ շրթել և ուշադիր հետևել շուրջը տեղի ունեցող երևույթներին: Խմբի մյուս անդամները մնացին ավտոմեքենայի մեջ:

Մոտ քառասուն րոպե սպասելուց հետո նրանք նկատեցին , որ սպիտակ գույնի ավտոմեքենա է մոտենում Համալսարանին: «Ժիգուլի» էր: Նկատեցին նաև համարը՝ 555: Կասկած չկար , որ դա հենց Գալուստի ասած թմրավաճառի ավտոմեքենան էր: Ավտոմեքենայից ոչ ոք դուրս չեկավ: Այն կանգնել էր տեղում առանց դուռ ու պատուհան բացելու: Չանցած մի քանի րոպե՝ ավտոմեքենային մոտեցան մի քանի երիտասարդներ: Ավտոմեքենայի պատուհանիկը բացվեց: Մի երկու հոգի թմրադեղ գնեցին ու արագ հեռացան: Մի տաս-տասնհինգ րոպե սպասելուց հետո, երբ ավտոմեքենայի մոտ այլևս այցելու չկար, ոստիկանները նկատեցին Վահանի ազդանշանը, որ նշանակում էր սկսել: Արմանը Գալուստին 1500 դրամ տվեց և ասաց.

-Այս դրամները քիմիական հատուկ նյութերով մշակված են: Գնում ես, դրամը տալիս, թմրադեղն առնում և հանգիստ հեռանում միայն հակառակ ուղղությամբ:

Գալուստը վերցրեց դրամը, գնաց հասավ ավտոմեքենային, գնեց թմրանյութը և հեռացավ հակառակ ուղղությամբ: Քաղաքացիական հագուստով երկու ոստիկան ինքն իրենց ավտոմեքենայից և տարբեր կողմերից մոտեցան թմրավաճառների ավտոմեքենային: Լեյտենանտ Սարգիս Սիմոնյանը աջ կողմից

մոտեցավ, երեք անգամ թիկացրեց ավտոմեքենայի փակ պատուհանիկին: Պատուհանը կամաց բացվեց: Նույն ժամանակ մյուս ոստիկանը ավտոմեքենային արդեն մոտեցել էր վարորդի կողմից:

-Ախպե՛ր ջան, դրանից մի դոզա էլ ինձ տուր էլի,- ասաց Սարգիսը և փողը կիսաբաց պատուհանից կոպտորեն շպրտեց մեքենայի մեջ:

-Փողն ինչո՞ւ ես շպրտում, չե՞ս կարող կարգին տալ,- բարկացավ վաճառողը:

-Չէ, չեմ կարող, չե՞ս տեսնում ձեռքերս ինչպես են դողում: Շո՛ւտ արա, դոզաս տուր, ժամանակ չկա,- հարբածի շարժումներով բլբլաց ոստիկան Սարգիսը:

Վաճառողը շուռ եկավ դեպի վարորդը, նրան կարգադրեց, որ վերցնի ներքև ընկած փողը: Վարորդը շրջվեց, կռացավ, որ փողը վերցնի: Հենց այդ պահին երկրորդ ոստիկանը՝ լեյտենանտ Արսեն Աբգարյանը, ատրճանակի խզակոթով ջարդեց ապակին ու բռնեց վարորդի վզից: Մինչ նա ուշքի կգար, թե ինչ է կատարվում, Աբգարյանը հասցրեց նաև վերցնել մեքենայի բանալիները: Վարորդը հասկացավ, որ մեքենան քշել-թաքցնել չի կարող:

-Արագ իջի՛ր ավտոմեքենայից, թե չէ գլուխդ կջարդեմ,- գոռաց լեյտենանտ Աբգարյանը վարորդի ականջին:

«Մժեղը», որ նստած էր վարորդի կողքին, զգալով վտանգը, արագ բացեց ավտոմեքենայի դուռը և փախավ: Վահանը դա նախապես հաշվի էր առել: Խելահեղորեն փախչող «Մժեղի» ճանապարհին կանգնած էր Վահանը: «Մժեղը» նույնիսկ չհասկացավ, թե ինչպես Վահանը աջ ձեռքի արմունկով հուժկու հարվածեց հանցագործի դեմքին: «Մժեղը» մեջքի վրա ընկավ գետնին: Հետո մի քիչ ուշքի գալով՝ շուռ եկավ փորի վրա և փորձեց տեղից բարձրանալ: Վահանը այս անգամ ավելի ուժեղ հարվածեց «Մժեղի» մեջքին ու սպառնագին գոռաց.

-Դուք ձերբակալված եք, «Մժեղ», մի ավելորդ շարժում, և ես քեզ կսատկացնեմ հենց այս ճամփի վրա:

«Մժեղը» ձեռքերը բարձրացրեց վեր: Վահանը ձեռնաշղթայով կապեց նրա ձեռքերը և նրան տարավ իրենց ավտոմեքենայի մոտ: Ղեկին նստած էր Արմանը, կողքին՝ Գալուստը: Վահանը «Մժեղի» հետ նստեց ավտոմեքենայի ետևում: Լեյտենանտ Աբգարյանը նստեց հանցագործի «Ժիգուլի-07» ավտոմեքենան, կողքին՝ լեյտենանտ Արսեն Սիմոնյանը: Հետևի նստատեղերին ձերբակալված վարորդն էր ու թմրանյութ վաճառողը: Երկուսի ձեռքերն էլ շղթայված էին: Առանց ժամանակ կորցնելու երկու ավտոմեքենաներն էլ շարժվեցին դեպի Սիրոգ քաղաքի ոստիկանություն: Հասնելով քաղաք՝ Վահանը հերթապահ ոստիկանին կարգադրեց խուզարկել ձերբակալվածներին, կազմել համապատասխան արձանագրություն և տեղափոխել առանձին խուցեր:

Դրանից հետո Վահան Դարբինյանը բարձրացավ երկրորդ հարկ և գնաց իր աշխատասենյակը: Տեղում նստելով՝ նա գրպանից հանեց սիգարետների տուփը, մի գլանակ հանեց, վառեց և սկսեց ծխել: Քիչ հետո ներս մտավ լեյտենանտ Արման Աբրահամյանը և առանց տեղը նստելու հարցրեց.

-Ի՞նչ անենք Գալուստ Սահակյանի հետ:

-Ձևակերպիր փաստաթղթերը և ուղարկիր դիսպանսեր: Գուցե հաջողվի նրան այնտեղ բուժել:

Արմանը դուրս եկավ: Վահանը ծխելը վերջացրեց, սեղանի գզրոցից ինչ-որ թղթեր վերցրեց, նստեց ու զանգեց ոստիկանություն:

-Էդ «Մժեղին» բերեք ինձ մոտ:

Քիչ հետո ոստիկանության հերթապահ սերժանտը բերեց «Մժեղին»:

-Դրսում սպասեք, ես ձեզ կկանչեմ, եթե հարկ լինի,- ասաց Վահանը հերթապահ սերժանտին և շուռ եկավ դեպի «Մժեղը»: Սերժանտը պատիվ առավ ու դուրս եկավ:

-«Մժեղ»,- ծակող հայացքով նայելով դիմացինին՝ասաց Վահանը,- ահա քեզ թուղթ, ահա գրիչ, գրիր դեպքի մասին:

-Բայց ես ի՞նչ պիտի գրեմ,- հարցական քամահրանքով ասաց «Մժեղը»:

-Գրիր՝ որտեղ ես ապրում, ինչ մեքենայով եք եկել Սիրոգ, ինչ էիք անում Համալսարանի մոտ, ինչ էիք վաճառում: Մի խոսքով գրիր ամեն ինչի մասին:

-Ես գրելու բան չունեմ: Մի բառ անգամ չեմ գրի: Ես ոչ մի թմրանյութ էլ չեմ վաճառել:

-Դու չես գրում, կգրեն քո ընկերները,- ասաց Վահանը և համոզվելով, որ «Մժեղը» գրելու ոչ մի մտադրություն չունի, կանչեց Հերթապահ սերժանտին:

-Սրան տարեք խուց:

Մյուս երկու հանցագործների հարցաքննությունն տևեց ավելի քան երկու ժամ: Նրանք երկուսն էլ անկեղծ ու ճշմարիտ խոստացան իրենց մեղքերը և բացատրություն տվեցին այն ամենի մասին, ինչ գիտեին:

Թմրամոլների դեմ պայքարի բաժնի վարիչ Վահան Դարբինյանը մանրամասն իմացավ, թե որտեղ են գրանցված հանցագործները, ինչի համար են եկել Սիրոգ, ով է եղել կազմակերպիչը, ում են վաճառել թմրամիջոցները և իրեն հետաքրքրող այլ հարցերի պատասխաններ: Նա տրված ցուցմունքները դասավորեց և խնամքով դրեց չհրկիզվող պահարանում «սեյֆում»:

Նա ծխելուց մեծ բավականություն ստացավ, բայց հետո, իր համար էլ անսպասելի, տրամադրությունն ակնթարթորեն ընկավ:

Այդպես անտրամադիր էլ նա վեր կացավ, դուրս եկավ իր աշխատասենյակից և մտավ կողքի սենյակը: Այստեղ տարբեր

աստիճանի և պաշտոնի ոստիկաններ կային, որոնց հետ նա զրույցի բռնվեց տարբեր թեմաների շուրջը, հենց այնպես, տրամադրությունը մի քիչ ցրելու համար: Հետո տեղից վեր կացավ ու մոտացրիվ ասաց.

-Ժամանակն է տուն գնալու,- և արագ դուրս եկավ սենյակից: Իջավ ոստիկանության շենքի բակը: Խոսեց այնտեղ հավաքված մի քանի ոստիկանների հետ, հետո քայլեց դեպի տուն:

Շաբաթ օրը Վահան Դարբինյանը աշխատանքի ներկայացավ առավոտյան ժամը ութին: Մտնելով շեմից ներս՝ նա բարևեց Հերթապահ ոստիկաններին և որոշեց բարձրանալ երկրորդ հարկ: Հերթապահներից մեկը մոտեցավ նրան և շշուկով ասաց.

-Դու գիտե՞ս, Դարբինյան, որ «Մժեղին» ու նրա ընկերներին ազատ են արձակել:

Դարբինյանն անակնկալի եկավ: Ոնց որ ռումբ պայթի ականջի տակ:

-Չհասկացա, ինչպե՞ս թե ազատ են արձակել:

Հերթապահ ոստիկանը, շուրջը նայելով, ասաց.

-Պետի հրամանն է, նա գտնում է, որ դուք անմեղ մարդկանց եք ձերբակալել:

Դարբինյանի գլուխը պտտվեց: Լսածին չէր հավատում: Գլխին ծանր հարված ստացածի նման սկսեց բարձրանալ երկրորդ հարկ: Եվ ով զարմանք, հենց աստիճանների վրա հանդիպեց «Մժեղին» և նրա երկու ընկերներին: Երկու ոստիկան, ժպիտը դեմքներին, հանցագործներին ուղեկցում էին դեպի շենքի ելքը: Վահանը կատաղել էր: Պղտորված հայացքը հանկարծ հանդիպեց «Մժեղի» հայացքին:

-Հը՛, մե՛նթ, ես քեզ չասի՞, որ մեզ ազատելու են, իսկ դու չհավատացիր, հիմա ո՞նց ես, հավատո՞ւմ ես,- թունոտ ժպիտով ծաղրեց «Մժեղը» և փորձեց անցնել զարմանքից քար կտրած Դարբինյանի կողքով: Վահանը մինչև հոգու խորքը վիրավորված, ցնցված այդ անհերևակայելի շրջադարձից, ինքն էլ չհասկացավ, թե ինչպես ամբողջ

ուժով հարվածեց «Մժեղի» դեմքին: «Մժեղի» քթից արյունը շատրվանեց: «Մժեղը» բռնեց քիթը և ամբողջ շենքով մեկ գոռաց.

-Վա՛յ, մա՛մ ջան, քիթս ջարդեց «մենթը»... Արա՛, էս ո՞վ ա

-Քիթդ ջարդողն ա, «Մժե՛ղ», ես եմ ոստիկանության ավագ լեյտենանտ Վահան Դարբինյանս: Սա էլ ինձ «մենթ» ասելու համար,- ասաց Դարբինյանը և երկրորդ անգամ բռունցքն իջեցրեց «Մժեղի» մռութին:

-Լա՛վ, պարո՞ն Դարբինյան, հերիք ա, մոտենալով նրան՝ ասաց հերթապահներից մեկը:

«Մժեղին» քաշեցին տարան դեպի հերթապահություն:

Դարբինյանի բարկությունը դեռ չէր իջել: Այդպես ջղագրգիռ էլ բարձրացավ երկրորդ հարկ ու գնաց դեպի պետի ընդունարանը:

Մտավ ընդունարան, ծեծեց պետի աշխատասենյակի դուռը և առանց թույլատվության ներս մտավ: Մայոր Նազարյանը նայեց ու իբր չնկատեց, թե ով է ներս մտել, վերցրեց «Իզվեստիան» և իբր սկսեց կարդալ:

-Պարո՞ն Նազարյան,- շունչը հազիվ տեղը բերելով՝ ասաց Դարբինյանը,- ի՞նչ հիմքով եք ազատ արձակել «Մժեղին», նա բացահայտ հանցագործ է և բռնվել է թմրանյութ վաճառելու պահին:

-Ի՞նչ թմրանյութ, ա՛յ տղա,- չթաքցրած ծաղրանքով ասաց պետը՝ շուռ գալով պտտվող աթոռի վրա,- գնացել ալյուր վաճառելիս բռնել եք խեղճերին և ասում եք՝ թմրանյութ: Մենք ստուգեցինք, այնտեղ ոչ մի թմրանյութ էլ չի եղել: Հետո վկաների ցուցմունքները չկան: Զանգել են Երևան՝ Ներքին գործերի նախարարություն: Նախարարությունից էլ մեզ կարգադրել են նրանց ազատ արձակել: Մի պահ պետի և ենթակայի միջև տևեց լռություն: Բարկությունը եռում էր Դարբինյանի ներսում: Պետի նկատմամբ ատելությունը համնում էր անզուսպ չափերի, և

Դարբինյանը կարողացավ միայն պետի երեսին շպրտել հետևյալ խոսքերը.

-Ես ձեզ երբեք փող չեմ տա, դիմում էլ չեմ գրի ազատման մասին, իսկ եթե ցանկանում եք ինձ ազատել, ազատեցեք, ձեր գործն է:

-Զայնդ կտրի՛ր,- բարձրացավ մայոր Նազարյանը,- ոստիկանության պետի հետ այդ ի՞նչ տոնով եք խոսում: Ես լավ գիտեմ, թե ինչ եմ անում: Դուք չպետք է ասեք՝ ես ում պիտի բռնեմ և ում ազատեմ: Դուրս իմ առանձնասենյակից: Սրանից հետո մինչև չկանչեմ իմ աշխատասենյակ, չմտնեք:

Վահանը մի անգամ ևս համոզվեց, որ խոսակցությունը նման պետի հետ ավելորդ է, փորձեց դուրս գնալ, պետը կանգնեցրեց նրան:

-Կիրակի գիշերը,- ասաց նա,- քրեական հետախուզության աշխատակից կապիտան Սեյրան Արզումանյանի հետ կգնաս Հերթապահության մինչև մյուս առավոտ Թեհրան-Երևան մայրուղու վրա: Վարորդներից երկու հարյուր դոլար կվերցնես և կբերես կտաս ինձ: Հիմա կարող ես գնալ, ազատ ես:

Դարբինյանը, հազիվ զսպելով զայրույթը, դուրս եկավ: Չգիտեր՝ ինչ աներ: Ինքնաբերաբար գնաց դեպի իր աշխատասենյակը: Գիտեր, որ Արման Աբրահամյանը այնտեղ իրեն է սպասում: Դարբինյանը երբ ներս մտավ, Արմանը, նկատելով նրա բարկությունը, ասաց.

-Արդեն գիտեմ «Մժեղին» ազատ են արձակել:

-Գալուստին տեղափոխեցի՞ք դիսպանսեր,- հարցրեց Դարբինյանը ակնհայտ ցույց տալով, որ չի ուզում խոսել «Մժեղի» մասին:

-Այո՛, հենց երեկ, անձամբ իմ մեքենայով եմ նրան տարել այնտեղ:

Դարբինյանի տրամադրությունը չէր բացվում: Որոշեց գնալ տուն:

Դուրս գալով աշխատասենյակից՝ նա աստիճանների վրա հանդիպեց կապիտան Սևակ Ակիմյանին: Սևակը նրա ուսանողական տարիների ընկերն էր: Միասին էին սովորել Համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Սևակը Վահանից երկու տարի շուտ էր ավարտել:

-Բարև, Սևա՛կ ջան,- զվարթացավ Վահանը,- քանի՞ տարի կլինի, որ մենք իրար չենք հանդիպում: Այս ինչ լավ է, որ քեզ տեսա, եղբայր:

-Բարև, Վահան ջան, ուրախ արձագանքեց Սևակը,- իրոք, վաղուց չենք տեսնում իրար:

Ընկերները ջերմորեն փաթաթվեցին իրար:

-Այժմ պատմի՛ր, թե ինչ գործով ես եկել այստեղ,- հարցրեց Վահանը:

-Երկուշաբթի օրվանից աշխատելու եմ ձեր քաղմասում, իմ Հայրենի քաղաքում,- ներքին ոգևորությամբ ասաց Սևակը:

-Լավ է, եղբայր ջան,- ուրախացավ Վահանը,- ուրեմն երկուսով կպայքարենք հանցագործների դեմ:

-Այժմ թղթերս կհանձնեմ կադրերի բաժին ու միասին դուրս գանք քաղաքից, մտնենք սրճարան, միասին մի բաժակ սուրճ խմենք ու զրուցենք դեսից-դենից:

Սևակը գնաց կադրերի բաժին: Վահանը ինքավ բակ ու այնտեղ սպասեց Սևակին: Քիչ հետո Սևակը եկավ ու առաջարկեց նստել իր ավտոմեքենան: Նրանք շարժվեցին դեպի «Ինի» սրճարան: Մտան սրճարան, նստեցին ազատ սեղանի շուրջը: Մոտեցավ մատուցողը:

-Սկզբում երկու բաժակ սուրճ, հետո երկու կտոր թխվածք, երկու բաժակ: Հարյուր-հարյուր գրամ հայկական կոնյակ,- պատվիրեց Սևակը:

-Սևակ ջան, դե հիմա պատմիր՝ ոնց ես, ինչ ես արել մինչև հիմա,- ասաց Վահանը:

-Սկզբում աշխատեցի մայրաքաղաքում: Երկու տարի առաջ Կապլանում էի, այնտեղի քաղմասում էի աշխատում: Միշտ մտածում էի գալ և աշխատել իմ հայրենի քաղաք Սիրոգում և ահա այստեղ եմ:

Մատուցողը սկուտեղի վրա բերեց սուրճը, թխվածքը, երկու բաժակ կոնյակ, դրեց սեղանին:

-Քո գործերը ո՞նց են, Վահա՛ն ջան,- հարցրեց Սևակը ու մի քանի վայրկյան լռելուց հետո շարունակեց,- մի թեթև լսել եմ, որ հարաբերություններդ պետի հետ այնքան էլ լավ չեն:

-Ճիշտ ես լսել, Սևակ ջան, ինչ հարաբերությունների մասին կարող է խոսք լինել, երբ նա ամեն ամիս ինձնից երկու հարյուր դոլար փող է ուզում: Այն էլ այն դեպքում, երբ երկու ամիս է՝ աշխատավարձ չենք ստանում:

-Վահան ջան, կտեսնես՝ դա երկար չի տևի, կանցնի մի ամիս, երկու ամիս, թեկուզ մի տարի, միևնույն է նրան պաշտոնից կհանեն: Վերջիվերջո հանրապետությունում կարգ ու կանո՞ն պիտի լինի, թե՞ չէ:

-Դրանում, իհարկե, ես էլ եմ համոզված: Դու ասա՝ ո՞նց ես, երեխաներդ, կինդ:

-Երեխաներիս, Վահա՛ն ջան, որոշել եմ բերել Սիրոգ, բայց ահա կինս համաձայն չէ: Չի ուզում Կապլանը թողնել, գալ Սիրոգ: Սիրոգն ինձ համար հրաշք է, բայց կնոջս համար աշխարհից կտրված անկյուն,- ընկած տրամադրությամբ ասաց Սևակը և խոսքը փոխեց,- դո՛ւ պատմիր, ո՞նց ես, դժվար ժամանակներ են, կարողանո՞ւմ ես ապրել:

-Ի՞նչ ասեմ, Սևակ ջան, հազիվ ծայրին ենք հասցնում... Առանց աշխատավարձ, իհարկե, շատ դժվար է:

-Ոչինչ, Վահան ջան, վատ օրին լավ օր էլ կլինի,- հուսադրեց Սևակը, վերցրեց կոնյակով լի բաժակը,- բարով հանդիպեցինք, խմենք մեր ժողովրդի և մեր ապագայի կենացը:

Ընկերները երկար զրուցեցին տարբեր հարցերի շուրջ. խոսեցին քաղաքականությունից, քաղաքի վիճակից, մարդկային հարաբերություններից: Անցել էր մոտ մեկ ժամ: Դուրս եկան սրճարանից, Վահանը գնաց ոստիկանություն, իսկ Սևակն իր ավտոմեքենայով գնաց իրենց տուն:

Աշխատանքային օրն անցավ իր սովորական հոնով, Վահանը զանգեց անհրաժեշտ մի քանի տեղ, այնուհետև դուրս եկավ իր աշխատասենյակից, մտավ մեկ-երկու բաժին զրուցելու, մտքերը ցրելու նպատակով: Արդեն աշխատանքն ավարտվում էր, երբ նա դուրս եկավ ոստիկանության շենքից և շարժվեց դեպի տուն: Հիշեց, որ երեկոյան ընտանիքով պիտի գնար իր քենակալ Հայկ Հովհաննիսյանի տունը: Այդ օրը Հայկի կնոջ՝ Մարինեի ծննդյան օրն էր: Վահանը ծանր մտքերի մեջ պառկեց մի քիչ հանգստանալու, խմեց կնոջ՝ Անուշի պատրաստած սուրճը, նկատեց, որ Անուշը քրոջ համար նվեր է պատրաստել:

Երեկոյան ժամը յոթին Վահանը տաքսի պատվիրեց և կնոջ ու երկու երեխաների հետ մեկնեց Հայկենց տուն: Տան շեմին նրանց դիմավորեց Մարինեն:

-Բարև՛, Մարինե՛, ծնունդդ շնորհավոր, երկար տարիների կյանք ու առողջություն եմ ցանկանում,- առաջինը խոսեց Վահանը:

Անուշն ու երեխաներն էլ իրենց հերթին շնորհավորեցին Մարինեին: Երկու քույրերը ջերմորեն գրկախառնվեցին:

-Անչափ շնորհակալ եմ,- ուրախության արցունքներն աչքերին՝ ասաց Մարինեն,- անցեք ներս, դրսում ցուրտ է:

Մտան ներս: Իր սենյակից դուրս եկավ Հայկը:

-Բարև Վահան, ինչպե՞ս են գործերդ,- ասաց նա, այնուհետև հերթով գրկեց երեխաներին:

Վահանն ու Հայկը առանձնացան, գնացին, նստեցին բակում դրված սեղանի շուրջը:

-Գործերը շատ վատ են, Հա՛յկ ջան, երկու ամիս է՝ աշխատավարձ չենք ստանում: Նազարյանն էլ ամիսը երկու հարյուր դոլար է ուզում: Ամսանելի օրեր ենք ապրում: Մի նոր աշխատանք գտնեի, դիմում կտայի, աշխատանքից կազատվեի,- մի տեսակ ընկճված տոնով ասաց Վահանը:

Քիչ լռելուց հետո Հայկը նրան հուսադրելու համար խորհուրդ տվեց.

-Համբերել ես, մի քիչ էլ համբերիր: Հնարավոր չէ, որ Նազարյանը երկար մնա իր աթոռին: Հանրապետությունն պատասխանատու այրերը խելքի են գալիս: Կգան Նազարյաններից ազատվելու ժամանակները:

-Ժամանակները, իհարկե, փոխվում են,- մտահոգ ասաց Վահանը,- իսկ ահա քրեական հանցագործները դառնում են մեր ժամանակի «հերոսները»:

Մի քիչ լռելուց հետո նրանց հրավիրեցին սեղանի շուրջը: Համեստ ճաշկերույթի մասնակիցները կերան-խմեցին, շնորհավորանքի խոսքեր ասացին, և ժամը տասնմեկի կողմերը հյուրերը վեր կացան գնացին: Վահանն էլ կնոջ ու երեխաների հետ դուրս եկավ փողոց: Քիչ հետո իր ավտոմեքենայով եկավ Արման Աբրահամյանը: Վահանն էր զանգել նրան:

Տան շեմին չհասած՝ Ամուշն ընկավ ամուսնու ականջին.

-Գիտես, Վահան, քոյրս ինձ անհարմար վիճակի մեջ դրեց:

-Ի՞նչ է պատահել,- զարմացավ Վահանը:

-Երբ տնից դուրս էինք գալիս, նա բոլորից գաղտնի գրպանում ինչ-որ բան դրեց: Նոր նկատեցի, որ դրամ է:

-Չկարողացա՞ր հետ տայիր,- մի քիչ բարկացած ասաց Վահանը,- ախր ես քեզ կատակով էի ասել, որ քրոջիցդ փող վերցնես:

-Վահան, վերադարձի ճանապարհին գլխի ընկա, հետո արդեն ուշ էր:

Վահանը լռեց. տրամադրությունն ամբողջովին ընկավ:

Երեխաներին քնեցնելուց հետո Վահանը թեյ պատվիրեց: Թեյը խմելուց հետո գնաց պատշգամբում ծխելու: «Այս ինչ օրն ընկանք, , , Ավարտես համալսարանի իրավաբանականը, կինդ էլ ավարտի ճարտարապետականը, ու հանկարծ պարտքերի մեջ հայտնվես»,- ինքն իրեն գցում-բռնում էր Վահանը:

Ծխելուց հետո Վահանը գնաց ննջարան, պառկեց քնելու: Հինգ-տասը րոպեից հետո եկավ, ու նրա կողքին պառկեց Անուշը, Վահանը շուռ եկավ ու ջերմորեն գրկեց կնոջը, ու նրան թվաց, թե ինքը աշխարհի ամենաերջանիկ մարդն է: Նրանք երկար ժամանակ հաճելի երանության մեջ էին: Վահանն իրեն բախտավոր էր զգում, կարծես ոչ մի հոգս ու անհանգստություն չուներ: Նույնն էր զգում նաև ամուսնուն ամուր փաթաթված Անուշը:

-Ես քեզ սիրում եմ,- կնոջ ականջին շշնջաց Վահանը:

-Ես էլ քեզ,- քնքշաձայն պատասխանեց Անուշը և ավելի ամուր փաթաթվեց: Վահանը ջերմորեն համբուրեց կնոջ շրթունքները:

Կիրակի օրվա առավոտյան Վահանն արթնացավ երեխաների բարձր կանչերից սովորական ժամից մի քիչ ուշ: Մի քանի րոպե անկողնում պառկելուց հետո վեր կացավ, ձեռքերը գոտկատեղին մի քանի անգամ կքանստեց, իրանը շարժեց աջ ու ձախ, գնաց լվացվելու: Սառը ջրից ահագին զվարթացավ, արագ հագնվեց ու մտավ խոհանոց: Կինը չնկատեց նրան: Նա դեմքով կանգնած էր դեպի ջեռուցիչը: Վահանը ոտքի ծայրերի վրա դանդաղ մոտեցավ ու հանկարծ գրկեց կնոջ մեջքը՝ միաժամանակ համբուրելով նրա շառագույն այտը:

-Ինչպե՞ս ես,- փաղաքշաբար ասաց Վահանը:

-Շատ լավ,- ժպտաց կինը: Վահանը շուռ եկավ ու գնաց ճաշասենյակ, որտեղ երեխաներն էին:

-Բարի լույս, երեխանե՛ր, արդեն նախաճաշե՞լ եք:

-Բարի լույս, պապ, սպասում ենք քեզ,- մեկը մյուսից առաջ անցնելով ճչացին երեխաները:

Վահանն առանձին-առանձին համբուրեց երեխաներին և նրանց տարավ խոհանոց: Ամուշը սեղանին դրեց չորս բաժակ թեյ և ափսեներ:

Կգնա՞ս Սամվելի խանութ-կրպակը, տանը ուտելու բան չկա,- մի տեսակ քաշվելով ասաց Ամուշը:

-Հենց հիմա կգնամ,- ասաց Վահանը:

-Չէ, մի բաժակ թեյ խմիր, հետո,- մտահոգ ասաց կինը:

Թեյելուց հետո Վահանը դուրս եկավ փողոց ու քայլեց դեպի կրպակը:

-Բարի լույս, Սամվել:

-Բարի լույս, պարոն Դարբինյան,- սիրալիր ողջունեց Սամվելը:

-Երկու տուփ սիգարետ տուր, 500 գրամ երշիկ, երկու մատնաքաշ, 500 գրամ շաքարավազ և քաղցրավենիք երեխաների համար,- շուտասելուկի պես իրար վրա ասաց Վահանը:

Առևտուրն անելուց հետո, սակայն, Վահանը տուն չգնաց: Նա նստեց Սամվելի առաջարկած աթոռի վրա: Խիստ մտահոգ էր: Առաջին անգամը չէր, որ նա զրույցի էր բռնվում խանութ-կրպակի վաճառող Սամվելի հետ, նրանց զրույցը ստացվում էր: Սամվելը Վահանի համար հաճելի զրուցակից էր: Նրանք խոսեցին Հայաստանի քաղաքական-տնտեսական ներկա վիճակի, Սիրոգ քաղաքի անցուդարձի, անդրադարձան հանցագործությունների օրեցօր աճող մակարդակին և այլ հարցերի: Հետո, ինչպես միշտ, այս անգամ էլ չկարողացան շրջանցել ֆուտբոլի թեման: Նրանց

հատկապես հետաքրքիր էին Հայաստանի հավաքականի անհաջող խաղերը:

-«Արարատի» խաղի մասին ի՞նչ կասես,- հարցրեց Սամվելը:

-Իմ կարծիքով, ինչպես ապրում են, այնպես էլ խաղում են՝ անհաջող,- փիլիսոփայեց Վահանը և վերցնելով տոպրակ-պարկերի մեջ դրված իր գնումները՝ քայլերն ուղղեց դեպի տուն:

-Էդ ինչո՞ւ այդքան ուշացար,- հարցրեց Ինուշը,- գուցե որևէ բա՞ն է պատահել:

-Երեխաներ, մոտ եկեք, տեսեք՝ ձեզ համար ինչ քաղցրավենիք եմ առել,- առանց կնոջ հարցին պատասխանելու ասաց Վահանը:

Նա չէր ուզում որևէ ուրիշ բանի մասին մտածել: Ուզում էր ամեն ինչ մոռանալ: Սկսեց խաղալ երեխաների հետ: Հետո վերցրեց Անատոլի Լևանդովսկու «Իմ Մարատի սիրտը» գիրքը և խորացավ ընթերցանության մեջ: Կարդաց մոտ 30-35 րոպե ու անկախ իր կամքից քնեց: Արդեն երեկո էր: Ժամը վեցին Ինուշը նրան արթնացրեց ու ասաց.

-Չե՞ս ուզում մեզ հետ ընթրել:

-Կարելի է,- ասաց Վահանը և հիշեցրեց, որ գիշերը չի գալու, Սեյրան Արզումանյանի հետ գնալու է հերթապահության Թեհրան-Երևան ավտոմայրուղու վրա:

Ժամը 8-ն էր արդեն, երբ իր ավտոմեքենայով Սեյրան Արզումանյանն եկավ և բակից երկու անգամ ազդանշան տվեց: Վահանը արագ հագնվեց և տնից դուրս եկավ:

-Բարև, Սեյրան, դու գիտե՞ս, թե հատկապես մայրուղու որ տեղամասն ենք գնալու:

-Բարև, Վահան,- պատասխանեց բարևին Սեյրանը,- կանգ ենք առնելու մայրուղու Շատոնի խաչմերուկում:

Երկնքում սև ամպեր էին կուտակվել: Անձրև էր սպասվում: Հենց ճանապարհ ընկան, սկսեց անձրև տեղալ: Արզումանյանը քշում էր ավտոմեքենան և քթի տակ ինչ-որ երգ դնում: Նա ոտքը դրեց

արգելակի վրա: Ավտոմեքենան կանգ առավ Շատունի խաչմերուկի վրա: Նա ավտոմեքենան կանգնեցրեց խաչմերուկի ձախ կողմում և դուրս եկավ ավտոմեքենայից:

-Սեյրա՜ն, ինչո՞ւ դուրս եկար, դեռ ավտոմեքենաներ չեն երևում,- նրա ետևից կանչեց Վահանը:

-Մի քիչ մթնի, վառած լույսերով շատ ավտոմեքենաներ են լինելու,- շուռ գալով Վահանի կողմը՝ ասաց Սեյրանը,- մթան մեջ շատ լավ են երևալու նրանք:

Մոտ մեկ ժամ անցավ: Մայրուղու վրա ավտոմեքենաների երթևեկությունը շատացավ: Գալիս էին մարդատար բեռնատար տանյակ ավտոմեքենաներ: Արզումանյանը հերթով կանգնեցնում էր նրանց: Վարորդները չէին հակաճառում, ձևի համար ցույց էին տալիս փաստաթղթերը, նստում ավտոմեքենաները և հանգիստ շարունակում իրենց ճանապարհը: Վահանը, որ նստած էր մնացել ավտոմեքենայում, նայում էր բաց պատուհանից և նկատում, որ Արզումանյանը բոլոր վարորդներից էլ փող է վերցնում: Սեյրանն իր գործն էր անում, իսկ Վահանը շարունակում էր նստած մնալ ավտոմեքենայում: «Գործի» արանքում Սեյրանը մի պահ եկավ, մոտեցավ Վահանին ու բողոքեց, որ վարորդները ժլատացել են, քիչ փող են տալիս: Վահանը ոչինչ չասաց, մնաց մեքենայի մեջ նստած:

Հեռվից մի բեռնատար «Կամազ» երևաց: Սեյրանը դիմեց Վահանին.

-Դո՛ւրս արի, եղբայր, մի քիչ օգնիր ինձ, ինչ՞ ես ավտոմեքենայում սառել-մնացել: Աչքիս այս բեռնատարը մեզ շատ փող պիտի տա:

Արզումանյանը կանգնեցրեց «Կամազը»: Վարորդը, որ վաթսուն-վաթսունհինգ տարեկան, նիհար, թրաշը երեսին մարդ էր, բացեց ավտոմեքենայի դուռը և իջավ:

-Բարև, հորեղբայր,- դեմքին ժպիտ սարքելով՝ ասաց կապիտան Արզումանյանը, ի՞նչ ես տանում:

-Շաքարավաղ է, քաղաքացի ոստիկան,- ասաց վարորդը:

-Թղթերդ տուր, տեսնեմ:

Վարորդը գրպանից հանեց ավտոմեքենայի փաստաթղթերը և մեկնեց Արզումանյանին: Արզումանյանը մոտ հինգ րոպե տակ ու գլուխ նայեց փաստաթղթերը, որ մի թերություն գտնի, չգտավ, բայց այն չվերադարցրեց տիրոջը, այլ հանգիստ դրեց գրպանը ու հարցրեց.

-Ասում ես՝ շաքարավաղ ես տանում, հա: Բա որ ստուգենք ու մեքենայիդ մեջ թմրանյութ գտնենք:

-Ստուգեցեք, եթե գտնում եք, որ դա անհրաժեշտ է,- Հանգիստ ասաց վարորդը և ավելացրեց,- ես այդպիսի վտանգավոր գործերից հեռու մարդ եմ:

-Դե լավ, այս եղանակին չենք ստուգում, մանավանդ շաքարավաղ է: Մենք ապահովում ենք ձեր Հանգիստ երթևեկությունը, բայց մեզ ոչինչ չե՞ս տալիս:

-Ո՞վ ասաց, որ ես ձեզ բան պիտի տամ,- մռայլվեց վարորդը,- այդ ձեր պարտականությունն է ապահովել մեր Հանգիստ երթևեկությունը:

-Լավ, շատ ես խոսում, հարյուր դոլար տուր և Հանգիստ քշիր, գնա, եղբայր:

-Ի՞նչ հարյուր դոլար, առանց այն էլ այդքան բարձր արենդավճար ենք տալիս, գումարած մյուս ծախսերը, տակը ի՞նչ է մնում որ...

-Քո գործն է,- չարանում է Արզումանյանը,- չտաս՝ մեքենադ կքշենք ուղիղ քաղմաս: Երկու օր այնտեղ կպահենք, և հետո դու հարյուր դոլարի փոխարեն կվճարես երկու հարյուր դոլար: Հասկացա՞ր: Այն ժամանակ կիմանաս, թե ում հետ գործ ունես:

Վարորդը մի քանի րոպե մնաց անշարժ կանգնած, չգիտեր՝ ինչ անի: Ի վերջո խոսեց՝ ձեռքը տանելով գրպանը.

-Դե... դե որ այդպես է, վերցրեք այս Հիսուն դոլարը և ինձ բաց թողեք: Առանց այն էլ անձրև է գալիս...

-Ի՞նչ Հիսուն դոլար,- ճչաց ոստիկանության կապիտանը,- գիտես թե իզո՞ւր ենք այս ժամին, այս եղանակին այստեղ կանգնել, Հարյուր դոլար չտաս՝ գլուխդ կՁարդեմ:

-Խնդրում եմ վերցրեք այս Հիսուն դոլարը և տվեք իմ փաստաթղթերը, ես գնամ: Երդվում եմ Հիսուն դոլարից ավել ես այս պահին փող չունեմ: Արզումանյանն անսպասելի բռունցքը բարձրացրեց ու Հարվածեց վարորդի ուսին: Հարվածն ուժեղ էր: Վարորդը մեՁքի վրա ընկավ ճանապարհի ցեխի մեՋ: Վահանը բացեց մեքենայի դուռը և դուրս եկավ: Նա զարմացել էր կապիտանի նման վերաբերմունքից: Ներսում եռում էր բարկությունը, բայց Հանգիստ ասաց.

-Սեյրան, էդ խեղճ մարդուն ինչո՞ւ խփեցիր:

-Քո գործը չէ,- ավելի չարացավ Արզումանյանը,- դու գնա Հանգիստ մեքենայումնստիր, ես սրանից պիտի 100 դոլար վերցնեմ:

-ՁեմՁ կարող, դրանից ավել չեմ կարող,- ասաց վարորդը՝ Հազիվ տեղը կանգնելով,- մինչև Երևան Հինգ-վեց տեղ ոստիկաններ են կանգնած, բա նրանց ի՞նչ պիտի տամ, ես էլ եմ՞չէ՞ երեխաներ, տուն-տեղ պահում: Իմ աշխատանքից մի բան պիտի մնա չէ՞, որ նրանց կերակրեմ:

-Քո գործը մեքենա քշելն է ու օրենքի առաՋ Հաշվետու լինելը, իսկ օրենքը մենք ենք, դու պարտավոր ես առաՋին Հերթին մեզ պահես, Հետո մտածես քո ընտանիքի մասին,- ծաղրախառն ասաց Արզումանյանը՝ աչքերը վարորդի վրա ոլորելով:

-Քեզ տալիս եմ Հիսուն դոլար,- նորից կրկնեց վարորդը,- տո՛ւր փաստաթղթերս, թողնեմ, գնամ:

-Ա՛ռ քեզ Հիսուն դոլար,- այս անգամ փորին խփեց Արզումանյանը, որից վարորդը կուչ եկավ, չոքեց Ձրի մեՋ:

Վահանը մոտեցավ, տեղից բարձրացրեց վարորդին ու նայելով Արզումանյանին՝ գոռաց.

-Այ տղա, վերցրու հիսուն դոլարը և տուր փաստաթղթերը, թող գնա, էդ խեղճից ուրիշ ի՞նչ ես ուզում:

-Դարբինյա՜ն, գնա նստիր ավտոմեքենան ու մի՛ խառնվիր այս գործին, թե չէ առանց դոլարի կմաս: Այդ դեպքում՝ Նազարյանին ի՞նչ պատասխան պիտի տաս: Ուրիշ բան չէ՞ քեզ աշխատանքից կհեռացնի: Դու հասկանո՞ւմ ես այդքանը,- խրատական տոնով ասաց Արզումանյանը:

-Տո՛ քո՛ հերն էլ անիծած, Նազարյանի հերն էլ,- այլևս չհամբերեց Վահանը,- Նազարյանին ի՞նչ պատասխան պիտի տաս, աշխատանքից կհեռացնի... քո՛ Նազարյանի մերը... դե հիմա գնա ու Նազարյանին ծախիր իմ խոսքերը... Սա ի՞նչ դժոխք է, Հայաստանում ե՞րբ են գործելու օրենքները...

Վահանին արդեն կանգնեցնել չէր լինի: Նա շուռ եկավ դեպի վարորդը և նրա ականջի տակ ճչաց.

-Այ մարդ, ի՞նչ ես կուչ եկել, գնա նստիր մեքենադ ու առանց ետ նայելու քշիր: Երկու օրից կգաս քաղմաս ու կվերցնես փաստաթղթերդ: Այդ ես եմ՛ քեզ ասում՝ ոստիկանության ավագ լեյտենանտ Վահան Դարբինյանս:

Վարորդը լսածին չէր հավատում, և դա ասում է օրենքի մա՞րդը: Ուրեմն աշխարհում դեռ լավ մարդիկ կան: Նա սաստիկ զարմացած էր: Այդպես էլ զարմացած նա ետ-ետ գնաց, արագ նստեց իր «Կամազը», աշխատեցրեց շարժիչը և սլացավ առաջ:

Վահանը խիստ բարկացած էր: Այդքանից հետո նա այլևս Արզումանյանի մոտ մնալ չէր կարող: Նա թողեց ամեն ինչ ու հեռացավ: Ավելի քան մեկ կիլոմետր քայլեց առաջ, նստեց պատահական մի ավտոմեքենա ու վերադարձավ Սիրոգ: Գիշերվա ժամը երեքին հասավ տուն: Ամբարևից սաստիկ թրջվել էր: Առանց շորերը փոխելու մտավ խոհանոց, մի բաժակ թթի օղի լցրեց ու

միանգամից գլխին քաշեց: Հետո փոխեց շորերը, գնաց պատշգամբ, պառկեց թախտին ու անմիջապես քնեց:

-Էդ ժամը քանիսի՞ն ես եկել,- նրան արթնացնելով հարցրեց կինը:

-Երևի երեք-չորս ժամ առաջ,- քնատ աչքերը բացելով ասաց Վահանը,- Հիմա ժամը քանի՞ սն է:

-Յոթն անց կես,- ասաց կինը,- Հանվիր ու գնա հանգիստ պառկիր քո տեղաշորում: Դեռ կարող ես մի ժամ քնել:

-Տրամադրություն չկա,- հորանջեց Վահանը,- չեմ էլ ուզում աշխատանքի գնալ:

Կինը մոտեցավ, նայեց ամուսնու աչքերի մեջ ու գաղտնիք ասողի նման շշնջաց ամուսնու ականջին.

-Վահան, ինչպես ուրիշները, դո՞ւք էլ փող վերցրիք վարորդներից:

-Ի՞նչ փող,- բորբոքվեց Վահանը,- մարդիկ գիշեր-ցերեկ տանջվում-չարչարվում են էդ ճանապարհների վրա: Արժե՞ էդ խեղճերից փող վերցնել:

Վահանն, այնուամենայնիվ, գնաց ննջարան մի քիչ քնելու: Արթնացավ ժամը 9-ի մոտ: Արագ մի կտոր բան դրեց բերանը և շտապեց աշխատանքի:

Ոստիկանության բակում հանդիպեց տնտեսական ոճրագործությունների դեմ պայքարի բաժնի պետ Սևակ Ակիմյանին:

-Բարի լույս Սևակ,- ասաց Վահանը և ձեռքով նույնպես բարևեց:

-Բարի լույս, Վահան, էդ քեզնից չէ, ինչո՞ւ ես ուշ ներկայանում աշխատանքի:

-Գիշերը հերթապահել եմ, բայց անհաջող, կիսատ-պռատ: Այդ մասին էլ գնում եմ շեֆին զեկուցելու:

-Դու դրա հետ մի քիչ զգույշ եղիր, Վահան, խաբուսիկ դեմք է: Մեկ էլ տեսար՝ գլխիդ մի խաղ խաղաց:

-Արդեն խաղում է,- ասաց Վահանը,- սպառնում է , թե աշխատանքից կհեռացնեմ:

-Ոչինչ, Վահան, մի քիչ էլ դիմացիր, շուտով նրան կազատեն զբաղեցրած պաշտոնից, ես դրանում չեմ կասկածում: կվերականգնվի, կհաստատվի ողջամտությունը, այ կտեսնես,- չորս կողմը նայելով շշուկով ասաց Սևակը,- հետո կհանդիպենք, կզրուցենք, հիմա գնում եմ որոշ առևտրական օբյեկտներ ստուգելու, բողոքներ ենք ստացել բնակչությունից. ժամկետանց ու անորակ մթերքներ են վաճառում:

-Հաջողություն,- ասաց Վահանը և մտավ շենքից ներս:

Սևակ Ակիմյանը գերազանց գնահատականներով ավարտեց Սիրոգ քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցը, ընդունվեց Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Սևակը համալսարանն էլ ավարտեց փայլուն գնահատականներով, արժանացավ կարմիր դիպլոմի: Երրորդ կուրսում ծանոթացավ իրենց հարևանուհի Նարինեի ընկերուհու՝ Անժելա Թուսունյանի հետ: Սևակն առաջին անգամ Անժելայի հետ հանդիպեց Նարինեի ծննդյան օրը նրա վարձով բնակարանում:

-Սևա՛կ, ծանոթացիր, ընկերուհիս է՝ Անժելան, դպրոցում միասին ենք սովորել:

Սևակը տեսավ Անժելային, հմայվեց նրա գեղեցկությամբ և կարծես միանգամից լեզուն կապ ընկավ, չկարողացավ որևէ բան ասել: Երևի դա սեր էր առաջին հայացքից: Թեթևակի սեղմելով Անժելայի ձեռքը՝ միայն կարողացավ ասել իր անունը.

-Սևակ:

Նարինեն, նկատելով այդ ամենը, այնպես արեց, որ Սևակն ու Ամժելան նստեն իրար կողքի:

-Կարելի՞ է Ձեր բաժակը կոնյակ լցնել,- ասաց Սևակը:

-Խնդրեմ, միայն շատ քիչ,- ժպտաց Ամժելան:

Ջերմ ու բարեկամական խոսքերով շնորհավորեցին Նարինեին, նրա ծննդյան առթիվ: Ստեղծվեց ջերմ մթնոլորտ: Երաժշտությունը դրեցին, երգեցին, պարեցին, ուրախացան, փոքրիշատե ճանաչեցին իրար: Սևակի հայացքը միշտ Ամժելայի վրա էր: Երեկոյան ժամը տասնմեկին եկավ բաժանման պահը:

-Կարելի՞ է Ձեզ ուղեկցել մինչև տուն,- ասաց Սևակը Ամժելային:

Ի պատասխան Սևակի, Ամժելան ժպտաց:

-Կարելի է:

Նրանք միասին դուրս եկան Նարինեի բնակարանից: Սևակը իրեն զգում էր յոթերորդ երկնքում: Մեկ ժամից ավել Սևակն ու Ամժելան զրուցեցին իրար հետ: Ժամը 12-ին հասան Ամժելայի տուն:

-Մենա՞կ եք ապրում, թե՞...

-Ոչ, ես ապրում եմ քրոջս՝ Մարգարիտայի հետ,- ասաց Ամժելան,- քույրս սովորում է Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտի երրորդ կուրսում:

Իսկ դուք որտե՞ղ էք սովորում,- Հարցրեց Սևակը:

Ես սովորում եմ Կոմիտասի անվան կոնսերվատորիայում առաջին կուրսում:

Մի քիչ լռելուց հետո Սևակը հարցրեց.

-Մենք կարո՞ղ ենք վաղը հանդիպել:

-Չգիտեմ,- պատասխանեց Ամժելան,- ուղղակի ժամանակ չի լինում, շարունակ դասերով եմ զբաղված:

-Ես Ձեզանից երկար ժամանակ չեմ խլի: Ուզում եմ Ձեզ հետ դասերից հետո հանդիպել և Ձեզ ուղեկցել տուն, կարելի՞ է:

-Լավ, այդ դեպքում Հանդիպենք կոնսերվատորիայի մուտքի մոտ ժամը երեքին, այդպես ավելի հարմար է, կզրուցենք մինչև տուն հասնելը:

-Եղավ,- ուրախ արձագանքեց Սևակը: Ուրեմն վաղը՝ ժամը երեքին: Առայժմ, ցտեսություն:

-Բարի գիշեր,- ասաց Ինժելան և մտավ տուն:

Ամբողջ գիշեր Սևակը չքնեց: Ուշքն ու միտքը Ինժելայի վրա էր:

Հաջորդ օրը մինչև ժամը երկուսն անհանգիստ էր: Մի կերպ կարողացավ նստել դասերին: Կես ժամ շուտ նա արդեն կոնսերվատորիայի մուտքի մոտ սպասում էր Ինժելային: Ժամը ուղիղ երեքին մուտքի մոտ երևաց Ինժելան, տեսավ իրեն սպասող Սևակին, դանդաղ մոտեցավ նրան.

-Բարև Ձեզ:

-Բարև,- պատասխանեց Սևակը և չիմանալով ինչ ասել՝ ուղղակի հարցրեց,- ինչպե՞ս են անցել դասերդ:

-Սովորականի նման,- ասաց Ինժելան ու լռեց՝ սպասելով Սևակի հաջորդ խոսքին:

-Քայլե՞նք,- առաջարկեց Սևակը:

-Քայլենք,- թեթևակի ժպտալով՝ ասաց Ինժելան:

Դիմացը սրճարան էր: Սևակն առաջարկեց մտնել սրճարան, մի բաժակ սուրճ խմել: Ինժելան համաձայնեց: Մտան սրճարան, նստեցին պատուհանի մոտ: Մոտեցավ մատուցողը:

-Երկու բաժակ սուրճ,- պատվիրեց Սևակը:

Խոսեցին տարբեր թեմաներից՝ դասերից, մարդկային հարաբերություններից, առօրյա կյանքից, երկրի իրավիճակից:

Ինժելան ասաց, որ ինքը դաշնակահար է և սովորում է առաջին կուրսում:

-Իսկ ես սովորում եմ Համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

-Ես այդ գիտեմ: Նարինեն քո մասին ինձ պատմել է:

-Դուք և Ձեր քույրը վարձո՞վ եք ապրում, թե՞ բարեկամի տուն է:

-Չէ, վարձով ենք ապրում,- ասաց Անժելան:

-Իմիջիայլոց ասեմ, որ քրոջդ՝ Մարգարիտային, ճանաչում եմ,- անսպասելի ասաց Սևակը,- մի դպրոցում ենք սովորել: Նա այն ժամանակ պիոներական ջոկատի ավագ էր:

-Այո,- ասաց Անժելան,- դպրոցում քույրս շատ ակտիվ է եղել: Իսկ Դուք գիտե՞ք, որ մենք ութ քույր ենք ու մի մինուճար եղբայր: Նա այժմ տասներորդ դասարանի աշակերտ է: Ավարտելուց հետո փորձելու է Երևանի պոլիտեխնիկականում սովորել: Քույրերս բոլորն էլ բարձրագույն կրթություն ունեն, աշխատում են իրենց մասնագիտությամբ, և ես նրանցից ամենափոքրն եմ,- ու Անժելան Սևակի առաջ միանգամից բացեց իրենց ընտանեկան անկետան:

-Քույրերիցդ շատերին և եղբորդ չեմ ճանաչում, կուզեի հատկապես նրա հետ ծանոթ լինել,- ասաց Սևակը:

-Որ գա Երևան, ես Ձեզ անպայման նրա հետ կծանոթացնեմ,- քնքշաձայն ասաց Անժելան:

Դուրս գալով սրճարանից՝ քայլեցին դեպի Անժելայենց տուն: Դրանից հետո նրանք համարյա ամեն օր հանդիպում էին իրար հետ:

Հանդիպման ժամերը երկարում էին, նրանց միջև ջերմությունը մեծանում, խորանում էր:

-Վաղը մայրաքաղաքի կինոթատրոններում հետաքրքիր կինոնկարներ են ցուցադրվում, չգնա՞նք նրանցից մեկը դիտելու,- հմայված աղջկա գեղեցկությամբ՝ իր ցանկությունը հայտնեց Սևակը:

-Վաղը,- վճիտ աչքերը երկնքին հառած՝ մտածեց Անժելան,- վաղը կարող ենք, միայն քրոջիցս պիտի թույլտվություն վերցնեմ:

Հաջորդ օրը՝ երեկոյան ժամը յոթին, նրանք «Նորք» կինոթատրոնում էին: Սևակը երկու տոմս գնեց և Անժելային

առաջնորդեց շենքից ներս: Կինոդիտումից առաջ Նրանք սուրճ խմեցին, որից հետո մտան կինոդահլիճ: Երբ հարմարվեցին իրենց տեղերը, Սևակը անսպասելի բռնեց Անժելայի ձեռքը: Անժելայի մարմնով սարսուռ անցավ: Մի քիչ հետո Նրանք համբուրվեցին:

Առաջին համբույր: Նրանք երկուսով հայտնվել էին հաճելի երանության մեջ: Չէին կարողանում կենտրոնանալ: Չէին էլ տեսնում, թե ինչ է տեղի ունենում էկրանի վրա: Կինոդիտումից հետո Նրանք դուրս եկան: Քայլեցին մաքուր օդում: Լուռ էին: Կարծես խոսելու բան չկար: Երկար լռությունից հետո միայն Սևակը հարցրեց.

-Ինչպիսի՞ կինոնկար էր, հավանեցի՞ր,- առաջին անգամ Սևակը խոսեց եզակի դեմքով:

-Հա, ոչինչ, լավն էր,- վարդ շուրթերի արանքից ասաց Անժելան:

Կես ժամից հետո հասան այնտեղ, որտեղ ապրում էր Անժելան:

-Բարի գիշեր,- ասաց Անժելան և արագ գնաց մտավ շենքից ներս:

Նրանք ավելի հաճախ սկսեցին հանդիպել Սևակի մոտ՝ համալսարանի հանրակացարանում: Սևակի ընկերները, հասկանալով սիրահարներին, նրանց սենյակում մենակ էին թողնում: Սենյակը դարձավ նրանց սիրո հանդիպավայրը: Այստեղ Նրանք զրուցում էին, գրկում իրար, համբուրվում...

Անցավ մեկ տարի: Բարձրագույն ուսումնական հաստատություններում սկսվեցին ընդունելության քննությունները: Երևանում հայտնվեց նաև Անժելայի եղբայրը՝ Արամ Թուսունյանը, որի հետագա գործունեությունը ցույց տվեց, որ նա շատ անհաջող

տիպ է, իսկ ավելի հետո պարզվեց, որ նա ազգի դժբախտությունների մեկն է: Բայց չշտապենք, ամեն ինչ հերթով:

Եվ այսպես Արամը ծնվել է 1949 թվականի մայիսի 19-ին Սիրոգցի Սաղաթելի և Հայկանուշի հարկի տակ: Թվով իններորդ երեխան էր ութ դուստրերից հետո:

Ասում են, թե ըստ կռապաշտ-կրակապաշտների հավատի՝ ինը թիվը և ինը թվով վերջացող թվերը դժբախտության խորհուրդ ունեն իրենց մեջ: Ասում են, որ Արամի ճակատին ի ծնե գրված է եղել՝ «Ով ինձ հետ չէ, նա իմ թշնամին է»: Ցավոք, Աստծու կողմից նրա ճակատին գրված այս գիրը բոլորը չէ, որ կարող էին կարդալ:

Թուսունյանների ընտանիքի բոլոր անդամները համոզված էին, որ իրենք ունեն «կապույտ արյուն» և ի ծնե արիստոկրատներ են: Հայր Սաղաթելը սովորական կոշկակար էր, բայց իրեն համարում էր բոլորից բարձր, ազնվավայել մարդ: Նույն կարծիքն ունեին իրենց մասին նաև Ամժելայի քույրերը: Նրանք էլ գտնում էին, որ իրենք բարձր խավի ներկայացուցիչներ են, և իրենց դեմը խաղ չկա: Ամժելայի ավագ քույրը՝ Ադան, սովորել և ավարտել էր Երևանի բժշկական ինստիտուտի գինեկոլոգիական-մանկաբարձական բաժինը, աշխատում էր Սիրոգ քաղաքի հիվանդանոցի ծննդատանը: Շուտով նա իր մասնագիտական հիմնական զբաղմունքն է դարձնում կանանց աբորտի գործը: Այս գործում նա ոչ ոքից իրավունք չի հարցնում:Նրա համար արգելք չկար: Ցանկացած կին, ով ցանկանում էր հրաժարվել իր ապագա երեխայից, գնում էր Ադայի մոտ: Կարելի է, թե չի կարելի, Ադան իր գործն անում էր: Նշանակություն չուներ նրա համար, թե պտուղը քանի ամսական էր: Նա կանանց ազատում էր անօրինական երեխաներ ունենալու գլխացավանքից: Նրա անունը հայտնի էր նաև Սիրոգ քաղաքի սահմաններից դուրս: Նրա մոտ գալիս էին Հայաստանի Հանրապետության տարբեր քաղաքներից՝ կուսակցության առաջին քարտուղարներից մինչև հասարակ մարդիկ:Նրանք իրենց կանանց

և «սիրուհիներին» լիովին վստահում էին Ադային անկախ հղիության ժամկետներից:

Գալիս էին նաև Վրաստանից և Ադրբեջանից:

Ադայի մյուս քույրերը, որ ավարտել էին մայրաքաղաքային տարբեր բուհեր, աշխատում էին Սիրոգի տարբեր հիմնարկ-ձեռնարկություններում և բոլորն էլ գտնվում էին Ադայի իշխանության տակ:

Արամ Թուսունյանը համարվում էր Սիրոգ քաղաքի անհաջող ծնունդներից մեկը: Հայրը մահացավ, երբ Արամը ընդամենը հինգ տարեկան էր: Ընտանիքի հոգսերով զբաղվում էր Ադան: Պատմում են, որ Արամը ամբարիշտ երեխա է եղել և ոչ մի հարցում չի հաշտվել իր ընկերների հետ մանկապարտեզում և այնուհետև դպրոցում: Նա ամեն անգամ ծեծված է եկել տուն: Տնեցիները և Սիրոգի բնակիչները նրան անվանում էին «Քույրերի բալա»:

Դպրոցի վերջին դասարանում նա հանցագործություն է կատարում: Իր դասընկերուհու՝ Կարինեի հետ ավարտական քննությունները պարապելու պատրվակով, հրավիրում է իրենց տուն և նրան բռնաբարում: Կարինեի մայրը մեկ ամիս հետո է իմանում այդ մասին և որոշում է դատի տալ հանցագործին: Ադան միջամտում է գործին և ամեն ինչ տակովն անում: Արամը, ինչպես ասում են, ջրից չոր է դուրս գալիս և ազատվում առանց որևէ պատիժ կրելու:

Ադան Կարինեի մորը կանչում է իր առանձնասենյակը և սպառնում է նրան. «Եթե բողոքի, Ադան նրա ամուսնուն կհայտնի իր անօրինական աբորտի մասին»: Ադան նրան բոլորովին լռեցնելու նպատակով նրան մի քանի ադամանդե զարդ է նվիրում:

Հազիվ ավարտելով միջնակարգը՝ քրոջ՝ Ադայի միջամտությամբ կարողանում է ընդունվել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը:

Երկուշաբթի օրը՝ առավոտյան մոտ ժամը տասին, Դարբինյանի աշխատասենյակի հեռախոսը երկար զանգեց:

Արման Աբրահամյանը վերցրեց հեռախոսափողը:

-Թմրամոլության դեմ պայքարի բաժնի աշխատակից, լեյտենանտ Արման Աբրահամյանը լսում է:

Հեռախոսի ընկալուչի մեջ լսվեց ոստիկանապետի քարտուղարուհու տիրական ձայնը:

Վահան Դարբինյանին հայտնեք, թող շտապ ներկայանա մայոր Նազարյանին:

Ամեն ինչ հասկանալի էր: Աբրահամյանը բազմանշանակ նայեց Դարբինյանին, ասաց.

-Պարո՛ն Նազարյանը քեզ կանչում է իր մոտ, Դարբինյա՛ն ջան: Թունդ մենամարտ է լինելու, ուժերդ հավաքիր:

-Էլ մի՛ ասա,- մռայլ ասաց Վահանը,- ներվերս կերավ իր դոլարներով:

Դարբինյանը մտավ ընդունարան: Քարտուղարուհին հայտնեց նրան, որ Նազարյանը սպասում է իրեն: Դարբինյանը ծեծեց դուռը և ներս մտավ: Ինչպես միշտ, Նազարյանն այս անգամ էլ «Իզվեստիա» էր ընթերցում:

-Բարև, պարոն Նազարյան, կանչե՞լ եք:

-Երկու հարյուր դոլարը բերի՞ր,- առանց գլուխը սեղանից բարձրացնելու, մռայլ ու խիստ ասաց ոստիկանության պետը:

-Չէ՛, պարոն Նազարյան, չհաջողվեց: Ընդհանրապես անհաջող հերթապահություն էր... Հետո էլ ուժեղ անձրև էր գալիս,- բառերը ծամելով ասաց Դարբինյանը:

-Չհասկացա՛: Էդ ինչո՞ւ Սեյրան Արզումանյանը կարողացավ, իսկ դու չկարողացար, պատճառները կարո՞ղ ես բացատրել:

Դարբինյանը մի պահ լռեց, մատի ծայրով քորեց ծոծրակը և ասաց.

-Արզումանյանը կարողանում է մարդկանց ստիպել, թափ տալ նրանց գրպանները, իսկ ես չեմ կարողանում:

-Դու ինձ հեքիաթներ մի՛ պատմիր: Վերջին անգամն եմ զգուշացնում քեզ: Մինչև ամսվա վերջը դոլարը չբերեցիր, վերջ, դիմումդ պատրաստիր: Հիմա ազատ ես, կարող ես գնալ:

-Ես աշխատանքից ազատվելու մասին մտադրություն չունեմ դիմում գրելու: Ես իրավաբանականը նրա համար չեմ ավարտել, որ դուք առանց որևէ հիմնավոր պատճառի, ազատեք ինձ աշխատանքից:

Ոստիկանության պետը մռայլվեց, գույն առավ, գույն տվեց, բայց ոչինչ չասաց, միայն ձեռքով նշան արեց, որ դուրս գա սենյակից:

Դարբինյանը բարկացած դուրս եկավ և քայլեց դեպի իր աշխատատեղը: Միջանցքում նա տեսավ դատախազի օգնական Հարությունն Մարգարյանին, որ զրուցում էր մի քանի ոստիկանների հետ: Նա էլ իր հերթին էր նկատել Դարբինյանի մտազբաղ ու անհանգիստ վիճակը:

Դատախազի օգնականը մի պահ մտածեց մոտենալ Դարբինյանին և հարցնել, թե ինչու է այդքան բարկացած, բայց հետո միտքը փոդեց և մտավ պետի ընդունարանը:

-Կարելի՞ է երկու րոպեով մտնել պետի մոտ,- հարցրեց նա քարտուղարուհուն:

-Մտեք,- ժպտալով ասաց քարտուղարուհին:

Հարությունն Մարգարյանը դուռը ծեծեց ,ներս մտավ:

-Բարև, պարոն Նազարյան:

-Ա՛, բարև՛ Հարութ,- ժպտադեմ նրան դիմավորեց Նազարյանը,- համեցե՛ք,նե՛րս եկեք,նստեցե՛ք:

-Վահան Դարբինյանը բարկացած դուրս եկավ ձեր աշխատասենյակից, ի՞նչ էր պատահել,- առանց որևէ նախաբանի հարցրեց դատախազի օգնականը՝ տեղը նստելով:

-Ա՛յ մարդ, նախարարության «թավանը» պիտի փակեմ, ամեն ամիս հազար դոլար: Երկու ամսից ավելի է՝ էդ ջահելը ինձ կոպեկ չի տալիս: Կամ չի կարողանում, կամ չի ուզում տալ: Ի՞նչ անեմ: Ճիշտն ասած, չեմ էլ ուզում աշխատանքից հանեմ: Դե գիտես էլի իմ մանկությունն ընկեր Հովհաննիսյանը նրա քենակալն է: Բայց եթե այս անգամ էլ փողը չբերեց, ստիպված պիտի աշխատանքից հանեմ նրան, այլ ելք չկա:

-Ելք էլ կա, ճանապարհ էլ կա,- ինքնավստահ քմծիծաղեց դատախազի օգնականը,- մի տնական հավ ես մորթել տալիս, մի շիշ կոնյակ դնում կողքը, ես ելքը ցույց կտամ:

-Հավը մորթեցի, եփեցի, կոնյակն էլ դրեցի կողքը, ասա տեսնեմ այդ ի՞նչ ելք է, որ ես այդ մասին չգիտեմ,- աշխուժացավ ոստիկանության պետը:

-Գիտես ի՞նչ, նրան հրահանգում ես որպես սպանությունների գծով բաժնի պետի պաշտոնակատար և ժամկետ նշանակում, մինչև մեկ ամիսը թող գտնի հայտնաբերի աղջիկներին սպանողին: Հայտնաբերի՝ լավ, չհայտնաբերի՝ ինքն իր հոժար կամքով թող իր պաշտոնին հրաժեշտ տա:

Նազարյանը վառեց սիգարետը, մինչև վերջ ծխեց, հետո ասաց.

-Հաշվիր տնական հավը մի շիշ կոնյակի հետ սեղանիդ դրված է, գիտե՞ս՝ խելոք բան ասացիր: Այդպես միայն նրանից կարող ենք հեշտ ու հանգիստ ազատվել:

-Ինձանից դեռ շատ բան կսովորես,- քմծիծաղեց դատախազի օգնականը, այնպես որ, պարոն Նազարյան, կիրակի օրը հավ ենք ուտում:

Նազարյանը գոհ ու շնորհակալ ճանապարհեց Հարությունն Մարգարյանին, բազմեց աթոռին ու քթի տակ բարձրաձայն քրթմնջաց. «Ահա և քո վերջն էլ եկավ, տղա՛, դու երբեք չես գտնի հանցագործներին և քո ձեռքով դիմում կգրես»:

Ոստիկանության պետը զանգեց քարտուղարուհուն:

-Երկու րոպեով արի ինձ մոտ:

-Լսում եմ, պարոն Նազարյան:

Ձանցած մի րոպե՝ քարտուղարուհին արդեն Նազարյանի մոտ էր:

-Հրամայեք գրիր ավագ լեյտենանտ Վահան Դարբինյանին սպանությունների գծով բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու մասին մեկ ամսվա ընթացքում աղջիկների սպանողներին հայտնաբերելու պայմանով:

-Վե՞րջ, պարո՞ն Նազարյան,- հարցրեց քարտուղարուհին:

-Վե՛րջ: Հենց այսօր հրամանը հանձնում ես Վահան Դարբինյանին: Կարող ես գնալ:

Մեկ ժամ հետո՝ ժամը 4-ին, քարտուղարուհին Դարբինյանին հանձնեց պետի հրամանը: Վահանը կարդաց հրամանը, նորից մի երկու-երեք անգամ կարդաց և աչքերին չհավատաց: Նրա համար շատ անսպասելի էր նման կտրուկ շրջադարձը: Նա հասկացավ, թե Նազարյանը նման հրամանագրով ինչ է ուզում ասել: Դարբինյանն ուղղակի ցնցված էր: Նրա զայրույթը հասել էր գագաթնակետին: Բայց ի՞նչ կարող էր անել: Բարկացած քայլեց սենյակի մի անկյունից մյուսը, հետո դուրս եկավ աշխատասենյակից և որոշեց, այնուամենայնիվ, մտնել պետի մոտ: Գնաց ընդունարան:

-Պետը տեղում չէ,- հայտնեց քարտուղարուհին

Ուրիշ բան չէր մնում անելու Դարբինյանին, գնաց տուն:

-Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես այդքան տխուր,- հարցրեց կինը:

-Ա՛խ՛ ուշ, հաշվի՛ր, թե՞ Նազարյանը ինձ արդեն հանել է աշխատանքից:

-Ինչպե՞ս թե հանել է, պա՛րզ ասա՝ ինչ է պատահել:

Վահանը կարճ ու հակիրճ կնոջը պատմեց եղելությունը:

Շհամբերեց: Չէր լինում հանգիստ նստել: Գիշերը քունը չտարավ: Առավոտյան նորից մտավ ընդունարան:

-Պետը չի եկել, գնացել է Սիսակավան: Այսօր չի գալու,- ասաց քարտուղարուհին:

Վահանը գնաց իր աշխատասենյակը: Նստեց տեղը: Շկարողացավ նստած մնալ, գնաց սպանությունների գծով բաժնի պետի պաշտոնակատարի մոտ: Պաշտոնակատարն ուրախ էր: Վահանը կռահեց, որ նրա ուրախությունը կապված է Նազարյանի նոր հրամանագրի հետ: Չէ՞ որ Վահանի նոր պաշտոնում աշխատելը նրան ազատում է պատասխանատվությունից և ավելորդ գլխացավանքներից: Այդպես էլ կար:

-Վահան ջան, չնեղանաս, ես տեղյակ չեմ դրանից: Այս նոր պաշտոնին քո նշանակման գործում ես ոչ մի կապ չունեմ: Երեկ կեսօրից հետո եմ իմացել այդ մասին:

Վահանը խոսելու տրամադրություն չուներ: Նա մի պահ մնաց, հետո դուրս եկավ սենյակից, առանց որևէ բան ասելու: Ինքավ առաջին հարկ, հետո դուրս գալով բակ՝ սկսեց ծխել:

-Բարև, Վահան,- նրան մոտեցավ Սևակը, ի՞նչ կա, ինչո՞ւ ես այդպես անտրամադիր, ի՞նչ է պատահել:

-Պետը ինձ համարյա ազատել է աշխատանքից,- ու պատմեց իր նոր նշանակման մասին:

-Դե լավ, սրտիդ այդքան մոտիկ մի՛ ընդունիր, մարդու կյանքում ամեն ինչ էլ կպատահի,- սրտացավորեն Վահանին հուսադրեց Սևակը և արագ մտավ ոստիկանություն:

Աստիճանաբար Վահանը հարմարվեց Նազարյանի հրամանագրին: Սակայն ատելությունը պետի նկատմամբ էլ ավելի էր ուժեղանում:

Նա մոտ երկու շաբաթ աշխատեց իր նոր պաշտոնում, ծանոթացավ աղջիկների սպանության գործին: Որքան ծանոթացավ, այնքան հիասթափվեց: Գործի կապակցությամբ թղթապանակում մի քանի ընդհանուր արձանագրություններ էին, որոնք հանցագործության բացահայտման համար իրենցից ոչինչ չէին ներկայացնում: Չկար բժիշկ-էքսպերտների եզրակացությունները, չկային դատաբժշկական համապատասխան ակտեր: Կարծես մեկը դիտմամբ հետքերը կորցրել էր: Կային միայն աղջիկների լուսանկարները և մի քանի գրություններ սպանության օրվա և ժամի մասին: Կասկածյալների մասին ոչ մի խոսք ու կարծիք չկար: Չկար ոչ մի կարգին փաստ ու վկայություն: Իսկ սպանությունից հետո անցել էր բավական ժամանակ: Փաստորեն, ստացվում էր, որ Վահանը գործի քննությունը պիտի սկսեր սկզբից:

Սևակ Ակիմյանը Վահանին խորհուրդ տվեց գնալ Երևան:

Խելոք խորհուրդ էր տվել Սևակը: Երևանում էր ապրում ու աշխատում Սիրոգ քաղաքի ոստիկանության սպանությունների գծով նախկին պետ Էդվարդ Ստեփանյանը, որի ժամանակ էր տեղի ունեցել աղջիկների սպանությունը: Գործի կապակցությամբ հենց նրանից էլ կարելի էր իմանալ օգտակար շատ տեղեկություններ:

Մանավանդ Ստեփանյանն այժմ էլ աշխատում էր Հանրապետության Ներքին գործերի նախարարությունում դարձյալ որպես սպանությունների գծով ավագ մասնագետ:

-Գնա մայրաքաղաք, հանդիպիր Էդվարդ Ստեփանյանի հետ: Նա ինձ վրա շատ խելոք մարդու տպավորություն է թողել, պրոֆեսիոնալ է իր գործում: Նա քեզ շատ օգտակար կլինի,- Վահանին դարձյալ հորդորում էր Սևակը:

Վահանը որոշեց մեկնել Երևան:

-Եթե կոնկրետ ոչինչ չասի, ապա գոնե խորհուրդ կտա, թե ինչ անես,- համոզել էր նրան Սևակը:

Վահանը զանգեց իր նախկին օգնական Արմանին:

-Բարև, թմրադեղերի վարպետ-մասնագետ, ո՞նց ես, ո՞նց էն գործերդ:

-Թողել-գնացել ես, դեռ ինձ էլ վարպետ-մասնագե՞տ ես ասում,- դժգոհ ասաց Արմանը:

-Ոչինչ, մի՛ շտապիր, շուտով ամեն ինչ իր տեղը կընկնի: Ես այդպես եմ կարծում, ինչպես կասեր մեր հանճարեղ դերասանը՝ Մհեր Մկրտչյանը: Գիտե՞ս ինչ, ինձ հարկավոր է քո ավտոմեքենան: Այս գիշեր ուզում եմ մեկնել Երևան:

-Ի՞նչ հարցով,- ակամա հարցրեց Արմանը:

-Կգամ, կասեմ,- պատասխանեց Վահանը:

-Այս պահից ավտոմեքենան հաշվիր քո տրամադրության տակ, շատ չէ, մի երկու օրով,- կատակեց Արմանը,- ե՞րբ կգաս մեքենայի ետևից:

-Մի երկու ժամից:

Երկու ժամից հետո Վահանը գնաց Արմանենց տուն: Սեղմեց դռան զանգի կոճակը: Դուռը բացեց Արմանի մայրը՝ տիկին Շուշանը:

-Բարև ձեզ,- խոնարհումով ասաց Վահանը և ներս մտավ:

-Բարև, Վահան ջան, համեցեք:

Արմանը հեռուստացույց էր նայում:

-Տղաներ, կուզե՞ք սուրճ խմել,- հարցրեց տիկին Շուշանը:

-Մամ ջան, սուրճի համար չէն հարցնում,- ժպտաց Արմանը,- դու դիր, իսկ մենք հաճույքով կխմենք:

Տիկին Շուշանը մտավ խոհանոց:

-Ավտոմեքենան տակից գլուխ նայել եմ, ամեն ինչ սարքին է,- ասաց Արմանը,- բայց դու այդպես էլ չասացիր՝ ինչու ես գնում Երևան:

-Կգամ, կասեմ,- կրկնեց Վահանը::

Տիկին Շուշանիկը սուրճը մատուցեց, վազի մեջ՝ շոկոլադե երկու սալիկ:

Վահանը շոկոլադով խմեց սուրճը: Տիկին Շուշանը նկատեց.

-Ես գիտեի, որ Վահանը շոկոլադ շատ է սիրում:

-Հայրդ ո՞նց է, Արման,- հարցրեց Վահանը:

-Ոչինչ,- ասաց Արմանը,- գնում է գործի, գալիս տուն: Բողոքում է ստամոքսից, մեկ էլ քիմիական նյութերով աճեցրած մանդամիթերքի տեսակներից::

-Եթե ուզում եք ճաշել, այն կարող եմ հենց հիմա տաքացնել,- ասաց տիկին Շուշանը:

-Չէ, մամ ջան, Վահանն արդեն գնում է... Համ էլ ուտելու ի՞նչ ունենք, որ...

-Այ տղա,- մեղմ բարկությամբ ասաց տիկին Շուշանը,- քի՛չ խոսիր, մարդիկ էլ կլսեն, կհավատան: -Հետո շուռ եկավ դեպի Վահանը,- հազար անգամ ասել եմ նման բաներ չասես, ինձ չի լսում:

-Կմեծանա, կլսի,- կատակեց Վահանը:

Դրանից հետո մեկ ժամ էլ նստեցին, դեսից-դենից զրուցեցին ու Վահանին անհայտ մնաց, թե տիկին Շուշանը ինչ ճաշ պիտի մատուցեր:

Վահանը տեղը կանգնեց.

-Դե ես գնացի, երեխաները քենակալիս տանն են, պիտի գնամ, տանեմ մեր տուն:

Վահանը Արմանի հետ տնից դուրս եկավ: Գնացին դեպի ավտոմեքենան:

-Բանալիները ավտոմեքենայի մեջ են, Վահան,- ասաց Արմանը:

Վահանը շնորհակալությունն հայտնեց, նստեց ավտոմեքենան և քշեց դեպի քենակալ Հայկի տուն: Երեխաները խաղում էին բակում:

Վահանը մի քիչ հեռվից տեսավ նրանց ու բարձր ողջունեց.

-Բարև ձեզ, երեխաներ:

-Բարև, պապ ջան,- համարյա միասին բացականչեցին ավագ որդին՝ Կարենը, և դուստրը՝ Ամնահիտը:

Հայկը ժպտալով մոտեցավ Վահանին:

-Բարև Հայկ,- ասաց Վահանը մտերմիկ տոնով:

Նույն ջերմությամբ էլ պատասխանեց Հայկը.

-Բարև, բարև, Վահան ջան,- և տեսնելով ավտոմեքենան՝ ասաց,- էդ ի՞նչ է, նոր մեքենա՞ ես գնել:

-Արմանի մեքենան է,- մի տեսակ տխրաշեշտ ասաց Վահանը,- գնում եմ Երևան:

-Ի՞նչ հարցով,- հարցրեց Հայկը:

-Էդվարդ Ստեփանյանի մոտ եմ գնում,- բացատրեց Վահանը,- կարծեմ դու նրան ճանաչում ես:

-Շատ լավ եմ ճանաչում, Մարկոս Նազարյանին հենց ինքն է մի կեղտոտ գործի վրա բռնացրել: Այդ պատճառով է, որ Նազարյանը շտապ միջնորդեց, որ Ստեփանյանին տեղափոխեն Երևան՝ Ներքին գործերի նախարարություն, այն նպատակով, որ ինչքան հնարավոր է, իրենից հեռու լինի այդ «վտանգավոր» մարդը: Բայց դու, Վահա՞ն, էդ Ստեփանյանի հետ ի՞նչ գործ ունես:

-Էն սպանված աղջիկների գործով,- մտազբաղ ասաց Վահանը:

-Կարելի է,- քիչ մտածեց Հայկը և շարունակեց,- այո՛, Ստեփանյանը լավ մասնագետ է, գործից տեղյակ է, ճիշտ խորհուրդներ կտա քեզ:

Մարինեն՝ Հայկի կինը, բոլորին հրավիրեց ճաշի: Ճաշը երկու ժամ տևեց: Վահանը նայեց ժամացույցին.

-Շնորհակալ եմ,- ասաց,- այժմ ինձ թույլ տվեք՝ ես գնամ տանը մի քիչ հանգստանամ, գիշերն եմ ճանապարհ գնալու:

Երկուսով ինքը և Հայկը, դուրս եկան բակ: Հաճելի եղանակ էր: Կանգնեցին ավտոմեքենայի մոտ: Վահանը վառեց սիգարետը: Հայկը նորից մի քանի խորհուրդ տվեց նրան: Վահանը նստեց

ավտոմեքենան և քշեց դեպի տուն: Հենց մտավ տուն, կնոջը բացատրեց, որ Երևան է գնալու և ասաց, որ իրեն արթնացնի գիշերվա ժամը երեքին:

Անուշը երեխաներին տարավ ննջարան: Վահանն ու Անուշը պառկեցին իրենց ննջասենյակում: Վահանը քնքշանքով գրկեց կնոջը և պինդ համբուրեց նրա շուրթերը:

-Ինձ այնպես է թվում,- ինքն իրեն բարձրաձայն խոսում էր Վահանը,- իմ Երևան գնալով կորոշվի ոստիկանությունում իմ մնալը չմնալու հարցը:

-Երկար մի՛ մտածիր, ինչ կլինի, կլինի, երբեմն ինձ թվում է, թե այս աշխարհում ամեն ինչ կատարվում է ճակատագրի բերումով,- ամուսնուն հուսադրեց կինը:

Վահանը նորից համբուրեց կնոջը և ...

Ազնվականական հովերով տարված՝ Արամը ձգտում էր, որ քույրերն ամուսնանան «կապույտ արյուն» ունեցող արիստոկրատ երիտասարդների հետ: Նա էն գլխից դեմ էր Անժելայի և Սևակի ամուսնությանը և ամեն կերպ ձգտում էր նրանց հեռացնել իրարից:

-Իմ քույրը չպիտի ամուսնանա կանաչի ծախողի տղայի հետ,- անընդհատ կրկնում էր նա:

Բայց, ի հեճուկս նրա, Սևակի և Անժելայի հարսանիքը կայացավ: Մինչև հարսանիքը Սևակը և Արամը չէին հանդիպել իրար հետ: Արամն իրեն արժանի չէր համարում հանդիպել ինչ-որ մի «պիժոնի» հետ: Բայց երբ հարսանիքը եղավ, իր կամքին հակառակ Արամն էլ մասնակցեց քրոջ հարսանիքին: Բայց մինչև վերջ չմնաց հարսանքատանը, շուտ դուրս եկավ: Սևակը դա նկատեց, բայց ոչինչ չասաց:

Համալսարանն ավարտելուց հետո Սևակին նշանակեցին Սիրոգ քաղաքի ոստիկանությունում որպես ԲԽՍՍ-ի բաժնի աշխատակից: Սևակը տեղափոխվեց Սիրոգ, Ինժելան մնաց Երևանում մինչև կոնսերվատորիան ավարտելը: Արամը իր Կապլանցի ընկերոջ հետ մեկ-մեկ գալիս էր Ինժելայենց տուն: Կապլանցի իր ընկերը՝ Մանվել Պողոսյանը, ու Արամը ծանոթացել էին պոլիտեխնիկական ինստիտուտում: Մանվելն էլ էր սովորում պոլիտեխնիկականի շինարարական ֆակուլտետում Արամից երկու կուրս առաջ:

Համակուրսեցիներից ոչ ոք չէր սիրում Արամին նրա բանսարկությունների պատճառով: Մի օր նրանք որոշում են Արամի հետ հաշվեհարդար տեսնել, ծեծել նրան, իրենց՝ ուսանողներին դեկանի վրա ծախելու համար:

Մանվելը միջամտում է, պաշտպանում նրան և ազատում ծեծ ու ջարդից:

Մանվելն ինստիտուտ էր ընդունվել խորհրդային բանակում ծառայելուց հետո և տարիքով մեծ էր Արամից: Բայց դա չէր խանգարում, որ նրանք իրար հետ ընկերություն անեն: Արամենց տանը մի երկու անգամ Մանվելը տեսել էր Ինժելային և մինչև ականջների ծայրը սիրահարվել նրան: Ինժելան դա նկատել էր, բայց ուշադրություն չէր դարձնում և շարունակում էր սերտ կապերը Սևակի հետ: Այդ ժամանակ Սևակն ու Ինժելան դեռ ամուսնացած չէին:

Երկու տարուց հետո Ինժելան ավարտեց կոնսերվատորիան: Քույրը՝ Ադան, կարողացավ նրան աշխատանքի տեղավորել Սիրոգի երաժշտական դպրոցում որպես դաշնամուրի դասատու:

Աշնանը կայացավ Սևակի և Ինժելայի հարսանիքը: Մեկ տարի հետո ծնվեց նրանց դուստրը՝ Մարգարիտան: Երկու տարի հետո նրանք ունեցան իրենց երկրորդ դուստրը՝ Աֆրոդիտեն:

Սևակը տեսնում էր, որ իրենց ընտանիքում կամաց-կամաց անախորժություններ են ծագում: Մանավանդ երկրորդ երեխան ու-

նենալուց հետո գործել սկսեց Անժելայի արիստոկրատական բնազդը: Հաճախ սկսեցին վեճեր առաջանալ Սևակի մոր և Անժելայի միջև: Անժելան շաբաթներով կեսուրի հետ չէր խոսում: Նա բացահայտ ցույց էր տալիս, որ Սևակի ծնողներն իր համար գոյություն չունեն: Սևակն սկզբից չէր ուզում խառնվել կանանց վեճ ու կռիվներին, բայց հետո տեսավ, որ դրանք վտանգավոր չափերի են հասնում: Ինչպես ասում են, գնացքը վաղուց տեղից շարժվել էր, իսկ ինքը գնացքից ուշացել էր: Սևակի և Անժելայի միջև հետզհետե ծագեցին վեճեր, ընդհարումներ: Անժելան ստիպում էր Սևակին ծնողներից բաժանվել և ապրել առանձին: Սևակը, դրան հակառակ, չէր ուզում բաժանվել հարազատ ծնողներից: Աստիճանաբար նա հասկանում էր, որ այդ ամենը Անժելայի ավագ քրոջ՝ Ադայի սարքած գործն է: Վեճերն ավելի հաճախացան, որոնք ուղեկցվում էին փոխադարձ կոպտություններով ու վիրավորանքներով: Բանը վերջացավ նրանով, որ ընտանիքը չկորցնելու համար Սևակն այնուամենայնիվ ծնողներից բաժանվեց ու Սիրոգ քաղաքից տեղափոխվեց Կապլանի ոստիկանություն: Իսկ Անժելան ուսմասվարի պաշտոնով աշխատում էր Կապլանի երաժշտական դպրոցներից մեկում: Սկզբում ամեն ինչ հարթ էր գնում: Երկուսն էլ իրենց տեղերում հանգիստ աշխատում էին: Երեխաները կանոնավոր մանկապարտեզ էին հաճախում: Կյանքը կարծես մտնում էր իր հունի մեջ: Սակայն հետո Սևակը նկատեց, որ Անժելան սովորականից ուշ է վերադառնում տուն:

Սևակը հարցրեց պատճառը: Անժելան անհարկի պատճառաբանություններով փորձում էր արդարացնել իր ուշացումները: Մի օր էլ Սևակի երեսին ուղղակի շպրտեց՝ տուն կգամ, իմ ցանկացած ժամին: Մի օր էլ Անժելան տուն վերադարձավ գիշերվա ժամը մեկին: Դա արդեն հանդուրժել չի կարելի: Սևակն այլևս չհամբերեց, գոռաց կնոջ վրա: Անժելան հակաճառեց, Սևակն ապտակեց նրան ու հասկացավ, որ կնոջ կյանքում ուրիշ տղամարդ կա:

Վահան Դարբինյանն արթնացավ գիշերվա մոտ ժամը երեքն անց կեսին: Թեյ տաքացրեց, մի բաժակ խմեց ու անորոշ տրամադրությամբ դուրս եկավ բնակարանից: Նայեց երկնքին, պարզ էր: Մտածեց. «Շատ լավ է: Ուրեմն ամեն ինչ լավ է լինելու»:

Տրամադրությունը փոխվեց: Ուրախ ու վստահ նստեց ավտոմեքենան և քշեց դեպի Երևան: Առավոտյան ժամը ութին նա արդեն Երևանում էր: Գնաց Նորագավիթի ճանապարհով: Քիչ ավտոմեքենաներ էին երևում փողոցներում: Կես ժամ հետո հասավ Ներքին գործերի նախարարություն: Ավտոմեքենան կանգնեցրեց քիչ հեռու, իջավ, հանեց սիգարետի տուփը, մի գլանակ հանեց, վառեց և սկսեց ծխել և ուշադիր հետևել անցուդարձին: Ոմանք դանդաղ, ոմանք շտապով գալիս մտնում էին նախարարություն: Վահանի հայացքը փնտրում էր Էդվարդ Ստեփանյանին: Վերջապես ահա և նա: Վահանը մոտեցավ նրան.

-Բարև Ձեզ, պարոն Ստեփանյան:

-Բարև Ձեզ,- Ստեփանյանը զննողաբար նայեց իրեն բարևողին,- եթե չեմ սխալվում, Դուք Վահանն եք:

-Այո,- ուրախացավ, որ դիմացինը միանգամից ճանաչեց իրեն,- ես Վահանն եմ Սիրոգից, պարոն մայոր, դուք կարո՞ղ եք Ձեր թանկ ժամանակից կես ժամը տրամադրել ինձ:

-Այո, իհարկե: Այդ դեպքում սպասեք այստեղ, մտնեմ նախարարություն, տեղյակ պահեմ, որ մի երկու-երեք ժամով բացակայելու եմ: Կներեք, ես հիմա ետ կգամ,- ասաց Ստեփանյանը՝ մտածելով, որ երևի կարևոր գործ է, թե չէ Սիրոգից հենց այնպես չէին գա իր մոտ:

Ստեփանյանը մտավ նախարարություն: Վահանը գնաց դեպի իր ավտոմեքենան: Ուղիղ տասը րոպե հետո մայոր Ստեփանյանը երևաց մուտքի մոտ: Վահանը մոտեցավ նրան:

-Ոտքով գնանք,- առաջարկեց Ստեփանյանը,- մտնենք մի սրճարան, զրույցի համար մի հարմար տեղ, կսրճենք, կզրուցենք: Վահանին հենց այդպես էլ պետք էր: «Փորձված մարդ է երևում,- մտածեց նա,- կարծես կռահում է, թե ինչու եմ եկել Երևան»: Ու նրանք մտան ի վեր քայլեցին դեպի մոտակա սրճարանը:

Հաճելի եղանակ է: Դիմացի մայթից նկատեցին «Հրազդան» սրճարանի ցուցանակը: Հենց այնտեղ էլ մտան: Սրճարանում դեռ հաճախորդ չկար, բոլոր տեղերն էլ ազատ էին: Պատուհանի մոտ տեղ ընտրեցին, նստեցին: Մոտեցավ մատուցողը.

-Բարի լույս ձեզ, այսօր դուք մեր սրճարանի առաջին հաճախորդներն եք, ուրեմն մեզ և ձեզ համար հաջող օր է լինելու.

-Մեզ համար երկու բաժակ սուրճ և երկու բաժին ձվածեղ,- պատվիրեց Ստեփանյանը:

Մատուցողը գլուխը կախեց և հեռացավ:

Ստեփանյանը նայեց Վահանին, ասաց.

-Գիշե՞ր էք եկել, թե՞ գիշերել էք Երևանում:

-Գիշերն եմ եկել: Չարժեր ցերեկով գալ, այստեղ շատ շոգ է:

-Երևում է՝ վաղուց չէք եղել Երևանում: Մի երկու-երեք օր մնացեք այստեղ, կտրվեք առօրյա հոգսերից,- ասաց Ստեփանյանը:

-Հաճույքով կմնայի, բայց ես դրա համար ժամանակ չունեմ,- մտահոգ ասաց Վահանը և ժպտաց:

Մատուցողը մոտեցավ, սեղանի վրա դրեց սուրճն ու ձվածեղը: Երկուսով լուռ կերան ձվածեղը, անցան սուրճին: Ստեփանյանը դանդաղ խմում էր սուրճը և սպասում, թե ինչ պիտի ասի Սիրոգից ժամանած ոստիկանը:

Վահանը վառեց ծխախոտը, ծխեց և ի վերջո խոսեց:

-Ես, պարո՞ն Ստեփանյան, եկել եմ Երևան՝ իմանալու Ձեր խորհուրդներն ու կարծիքը Սիրոգ քաղաքում սպանված աղջիկների հայտնի գործի մասին: Ի՞նչ կասեք այդ գործի վերաբերյալ:

-Ես այդպես էլ կռահում էի,- զննական հայացքը Վահանին ուղղած՝ ասաց Ստեփանյանը,- իմ հնարավորությունների չափով կօգնեմ ձեզ, բայց պիտի որ գործի վերաբերյալ անձնական թղթապանակներում որոշակի փաստեր լինեն արձանագրված:

-Պարոն Ստեփանյան, բանը հենց նրանում է, որ այդ թղթապանակներում գործի վերաբերյալ համարյա ոչինչ չկա,- Ստեփանյանը, որ երկու արմունկներով հենված էր սեղանին, միանգամից ուղղվեց, լուրջ դեմք ընդունեց և քննախույզ հայացքով նայեց Վահանին և մատների ծայրերով թիկթիկացրեց սեղանին.

-Հասկանալի է, բայց դու էլ պիտի համոզված լինես, որ կյանքում չբացահայտվող գործեր չեն լինում, միայն բուռն ցանկություն է հարկավոր ու համառ կամք... Գիտե՞ս, որ այդ գործով զբաղվել եմ համարյա վեց տարի:

-Գիտեմ,- ասաց Վահանը,- զարմանալին այն է, որ եթե Ձեր կողմից կազմված թղթապանակները դատարկ են, այնտեղ չկան համապատասխան արձանագրություններ, վկայություններ, փաստեր ապացույցներ:

-Ինչպե՞ս թե չկան,- անկեղծորեն զարմացավ Ստեփանյանը,- ինչքան հիշում եմ, եղել են սպանվածների նկարները, եղել են մի քանի վկաների ցուցմունքներ, դատաբժշկական եզրակացություններ և այլն:

-Այնտեղ նկարներից բացի ուրիշ ոչինչ չկա:

-Տարօրինակ է,- շարունակում էր զարմանալ մայոր Ստեփանյանը,- ուրեմն իմ բացակայությունից հետո վկաների ցուցմունքներն անհետացե՞լ են... Այդ դեպքում հարկավոր է ամեն ինչ սկզբից սկսել: Հարկավոր է վկաների հետ նորից խոսել, նորից նրանցից վերցնել նրանց ցուցմունքները...

-Ես կարծում եմ, որ դա շատ երկար կտևի, և այդ ընթացում ինձ կհաջողվեն աշխատանքից ազատել,- ասաց Վահանը:

-Մ՛, ուրեմն Դո՞ք էլ եք պարոն Նազարյանի հերթական զոհերից,- բացականչեց Ստեփանյանը:

-Այդպես է, որ կա,- հաստատեց Վահանը:

Լուռ խմեցին սուրճը, բայց հետո տեսնելով, որ լռել չի կարելի, Ստեփանյանն ասաց.

-Իմ կարծիքով աղջիկների դիակները նետել են գետը Խաթունարխ գյուղի մերձակայքում...

Սիրոգ քաղաքին մոտ տարածքից դա հնարավոր չէր լինի:

-Ինչո՞ւ,- փորձեց իմանալ Վահանը:

Ստեփանյանը բացատրեց:

-Գետի հարավային մասում էներգոհեկն է: Այստեղ՝ գետի հոսքի վրա մետաղացանցեր են դրված: Դիակները մետաղացանցերից անցնել չէին կարող: Հակառակ դեպքում մետաղացանցերի վրա հետքեր կմնային: Իսկ այնտեղ այդպիսի հետքեր չեն եղել:

-Իսկ գետի աջ կողմից ինչո՞ւ հնարավոր չի եղել,- հարցրեց Վահանը:

-Աջ կողմից ընդհանրապես անհնարին է անցել, մանավանդ աղջիկների հետ կամ տեղափոխել նրանց դիակները, քանի որ այդ մասում բարձր ու անանցանելի ժայռեր են... Իսկ ժայռերի հետևում սեփականատերերի հողամասերն են, այգիները: Գիշեր լիներ, թե ցերեկ այդտեղ նրանց որևէ մեկը կտեսներ:

Մոտ մեկ ժամից հետո նրանք սրճարանից դուրս եկան:

-Ես երևի, այլ մանրամասներ հետո կհիշեմ, այդ դեպքում ես հեռախոսով հայտնի կդարձնեմ քեզ ամեն ինչ: Միայն խնդրում եմ ինձ հետ միշտ կապի մեջ լինեք:

-Ձեր աջակցությունն ինձ խիստ անհրաժեշտ է, պարոն Ստեփանյան, բայց Դուք ինձ ի՞նչ խորհուրդ կտայիք, համենայն դեպս ես որտե՞ղ փնտրեմ մարդասպաններին:

Ստեփանյանը երկար լռեց, Վահանը հարցին ոչ մի պատասխան չտվեց: Դուրս եկան փողոց, քայլեցին դեպի Ներքին գործերի նախարարություն: Հասան Վահանի ավտոմեքենային: Ստեփանյանը մտածկոտ նայեց Վահանին, բռունցքներով տրորեց ճակատը.

-Հա՛, հիշեցի,- ասաց,- եթե ուշադիր նայես Սիսակավանի փոքր ձեռնարկատեր Արտաշես Բեգլարյանի աղջկա դիակի նկարին, դեմքին կնկատես մեծ սպիի հետքեր: Դրանք սուր առարկայի հատվածից առաջացած հետքեր են: Հարվածը կատարվել է ձախ ձեռքով:

-Իսկ ինչի՞ց եք ենթադրում, որ խփել են հենց ձախ ձեռքերով,- աշակերտի նման իր ուսուցչին հարցրեց Վահանը:

-Աշխատանքի բերումով, սիրելիս: Այդպիսի աշխատանքը շատ նուրբ դիտողականություն է պահանջում և փորձ: Եթե դու էլ մի քանի տարի խորանաս այդպիսի գործերի մեջ, դու էլ շատ բաներ կհասկանաս:

-Ինձ համար, երևի, ուշ է արդեն այդքան բան հասկանալը,- պարոն մայոր, ինձ թվում է՝ այդքան հնարավորություն ինձ չեն տա: Մինչև մի բան հասկանամ, ինձ գործից կհեռացնեն,- ափսոսանքի շեշտով ասաց Վահանը:

Որպես Վահանի հարցի պատասխան Ստեփանյանն ասաց միայն որոշակի դադարից հետո.

-Բնական ձախլիկները, Վահան ջան, աշխարհում սովորաբար քիչ են լինում, իսկ ահա Խաթունարխ գյուղում հայտնվել են մի քանի ձախլիկներ:

-Ուզում եք ասել, որ սպանությունը կատարվել է Խաթունարխ գյուղո՞ւմ,- եզրակացրեց Վահանը:

-Չի բացառվում: Հա՛, մի բան էլ: Մեծահասակ տղամարդիկ հազիվ թե ընդունակ լինեին նման սպանության, բոլոր դեպքերում դա ջահել մարդկանց ձեռքի գործ է: Իսկ ահա գյուղում ջահել մարդիկ չկան, բոլորը մեկնել են արտագնա աշխատանքի: Սա ձեզ որևէ բան ասո՞ւմ է, թե՞ չէ: Ուրեմն ենթադրվում է, որ սպանությունը կատարվել է խաթունարիս գյուղում, բայց դրսի մարդկանց միջոցով: Փնտրեք և անպայման կգտնեք մարդասպաններին: Ցավոք, ես չհասցրի գործը մինչև վերջ տանել, ինձ տեղափոխեցին Երևան: Ինձ թվում էր, թե ես ճշմարիտ հետքերի վրա էի: Ո՞վ գիտե, գուցե հենց այդ պատճառով էլ ինձ Սիրոգից տեղափոխեցին Երևան, գուցե հետքերը կորցնելու համար...

Վահանը մինչև հոգու խորքը շնորհակալ էր Ստեփանյանից աջակցության և չափազանց կարևոր խորհուրդների համար: Այդ պատճառով էլ նա մայորից բաժանվեց մեծ ափսոսանքով նրա հետ նորից հանդիպելու պայմանով:

Մայորից բաժանվելուց հետո Վահանը Սիրոգ չվերադարձավ: Նա մեքենան քշեց «Արմենիա» հյուրանոց: Ավտոմեքենան կանգնեցրեց հյուրանոցին մոտիկ վճարովի ավտոկանգառում, իսկ ինքը մտավ հյուրանոց: Արագ մոտեցավ հյուրանոցի հերթապահ-վերակացուին:

-Բարև ձեզ, ազատ սենյակ ունե՞ք գիշերվա համար:

-Ունենք, վերցրեք այս անկետան և լրացրեք:

Դարբինյանն անկետան լրացրեց, վերցրեց սենյակի բանալին և բարձրացավ երկրորդ հարկ: Գտավ սենյակը, բացեց դուռը և ներս մտնելով առաջին հերթին միացրեց հեռուստացույցը: Էկրանի վրա հետաքրքիր բան չգտնելով հանվեց և մտավ լոգարան:

Լոգանք ընդունեց, պառկեց անկողնում և իսկույն քնեց:

Արթնացավ ժամը տասներկուսին: Վերցրեց հեռախոսափողը, զանգեց նախկին համակուրսեցի ընկերոջը՝ Արմեն Հովսեփյանին: Ինքն ու Արմենը միասին էին սովորել համալսարանում, միասին էլ

ավարտել էին իրավաբանական ֆակուլտետը: Գիտեր, որ Արմենն այժմ աշխատում է Շահումյանի շրջանի դատախազությունում:

-Բարի լույս, հայազգի արդարադատ պաշտոնյային,- կատակեց Վահանը:

-Վահան, դո՞ւ ես, բարի լույս: Ինչպե՞ս են հայ ազգի արդար ոստիկանները,- կատակին կատակով պատասխանեց Արմենը,- Ե՞րբ ես եկել Սիրոգից: Թմրանյութերի պրոբլեմները ինչպե՞ս են:

-Այսօր առավոտյան,- պատասխանեց Վահանը,- Նախարարությունում գործ ունեի: Իսկ ես արդեն սպանությունների բաժնում եմ աշխատում:

-Կարճ ասած, առաջ են քաշել:

-Չէ, Արմեն, ընդհակառակը, հետ են քաշել: Կհանդիպենք կպատմեմ: Դու հիմա ինչո՞վ ես զբաղված:

-Աշխատանքի եմ, Վահան, ընդմիջում է, եկել եմ տուն: Եթե այսօր չես մեկնելու Սիրոգ, ժամը վեցին արի մեր տուն: Դուրս կգանք քաղաք, կմտնենք մի սրճարան, կզրուցենք:

Վահանը Արմենին ոչ այո ասաց, ոչ էլ ոչ, ուղղակի հեռախոսն անջատեց: Նրա մտքերն ուրիշ տեղ էին: Վառեց սիգարետը, միտքը կանգ առավ մայոր Ստեփանյանի ասածների վրա: Հիմնականում նրան մի հարց էր մտատանջում. «Ո՞վ կարող էր Խաթունարխում սպանել երիտասարդ աղջիկներին: Ո՞վ է եղել այդ ձախլիկ սրիկան, որտեղից կարող էր մարդասպանը կամ մարդասպանները աղջիկների հետ գալ Խաթունարխ: Աղջիկները... բարոյական աղջիկներ են եղել, ծնվել, ապրել ու դաստիարակվել են օրինակելի ընտանիքներում, բուհի լավագույն ուսանողներն են եղել... Դե արի ու այս ընդհանուր մճճվածքի մեջ գտիր մարդասպանին: Ինց կարելի է գտնել կծիկի ծայրը... »:

Ծխելուց հետո Վահանը որոշեց դուրս գալ քաղաք, գտնե մի քիչ օդափոխվել, իրեն պաշարած մտքերը ցրել: Մտավ քաղաքի կենտրոնական փողոցներից մեկը: Երկար քայլեց: Քայլում էր ու

մոռածում: Մոքերը նրան հանգիստ չէին տալիս: Ամիրյանով քայլեց դեպի անկախության փողոց: Մտավ սրճարան: Սուրճ և թեթև ուտելիքներ պատվիրեց: Սուրճը խմելուց հետո որոշեց ետ վերադառնալ հյուրանոց: Դարձյալ միացրեց հեռուստացույցը: Հետաքրքիր ոչինչ չկար: Եկավ, նստեց բազկաթոռին, վառեց ծխախոտը, ծխեց: Մոքերը դարձյալ նրան տարան անհայտների գիրկը: Պառկեց, փակեց աչքերը, քնել չկարողացավ: Այդպես անցավ մեկ ժամ: Նայեց ժամացույցին: Շհամբերեց: Վեր կացավ, դարձյալ դուրս եկավ հյուրանոցից: Գնաց դեպի ավտոմեքենաների կանգառը: Նստեց ավտոմեքենան ու Մալաթիա փողոցով քշեց դեպի իր ընկերոջ՝ Արմենենց տուն:

Վահանը դեռ ուսանող ժամանակներից գիտեր Արմենենց տան տեղը: Մոտեցավ շենքին, ավտոմեքենան կանգնեցրեց ու բարձրացավ առաջին մուտքի երկրորդ հարկը: Սեղմեց դռան զանգի կոճակը: Դուռը բացեց Արմենի մայրը՝ տիկին Հասմիկը:

-Բարև ձեզ, տիկին Հասմիկ:

-Բարև, Վահան ջան,- ուրախ բացականչեց տիկին Հասմիկը,- ներս եկեք, վաղուց է՝ չեք երևում մեր կողմերում:

-Գործով եմ եկել, տիկին Հասմիկ,- ասաց Վահանը և ներս մտավ,- որոշեցի այս անգամ գալ ձեր տուն:

Իր սենյակից դուրս եկավ Արմեն Հովակիմյանը:

-Բարև Վահան ջան,- ընկերոջը գրկելով ասաց Արմենը,- բարի գալուստ:

Երկուսով մտան հյուրասենյակ:

-Նստիր, նստիր,- ասաց Արմենը, և առաջ ինքը նստեց բազկաթոռին,- լսիր հո սովա՞ծ չես:

-Չէ, Արմեն ջան, շնորհակալ եմ, այս շոգ ու կրակին ո՞վ ախորժակ ունի:

-Այդ դեպքում սուրճ խմենք: Մամ ջան, երկու բաժակ սուրճ:

-Ինչո՞ւ միայն սուրճ, հաց չեք ուզո՞ւմ ուտել,- ձայնեց տիկին Հասմիկը:

-Չէ՛, մամ ջան, ես արդեն Վահանին հարցրել եմ, սոված չէ, համ էլ առանձնապես ուտելու բան կա՞:

Ա՛յ տղա, քիչ խոսի: Մեզ վայել էլի մի բան կգտնվի, ամեն ինչ էլ կա: Հո սոված չե՞նք մնում,- նեղսրտվեց տիկին Հասմիկը:

Տիկին Հասմիկը մտավ խոհանոց և քիչ հետո երկու բաժակ սուրճ բերելով, նայելով դեպի Վահանը՝ հարցրեց.

-Վահան ջան, ո՞նց եք ապրում մեր այս ծանր ժամանակնե-րում: Կինդ, երեխաներդ ո՞նց են:

-Փառք Աստծո, լավ են: Մի կերպ յոլա ենք գնում: Ինձ հետ բերել եմ նրանց ջերմ բարևները:

Տիկին Հասմիկը հանդիմանանքով նայեց Արմենի կողմը և ա-սաց.

-Էդ քո ընկերոջն ասա թող ամուսնանա, ախր տարիքն անց-նում է:

-Մամ ջան, էս պայմաններում ինչ ամուսնության մասին ես խոսում, թող մի քիչ կյանքը փոխվի, վիճակներս մի քիչ լավանա:

Սուրճը խմելուց հետո Արմենն առաջարկեց դուրս գալ:

-Քո մեքենան կթողնենք «Արմենիա» հյուրանոցի կանգա-ռում,- ասաց նա,- իմ մեքենայով կգնանք Երևանյան լճի մոտ: Այն-տեղ լավ ռեստորան կա: Կգնանք այդ ռեստորանում ճաշելու, ժա-մանակ անցկացնելու, եթե, իհարկե, դեմ չես, Դարբինյան:

-Չէ՛, դեմ չեմ,- մի քիչ մտածելուց հետո ասաց Վահանը,- քշիր որտեղ ցանկանում ես, դու ես Երևանի տերը, պարոն Հովսեփյան:

Վահանի ավտոմեքենան տարան կանգնեցրին «Արմենիա» հյուրանոցի կանգառում, նստեցին Արմենի ավտոմեքենան: Արմենը մեքենան քշեց Երևանյան լիճ, որտեղ գտնվում էր «Ակվարիում» ռեստորանը: Բարձրացան երկրորդ հարկ, այստեղ ճաշկերույթի հիանալի սրահ կար: Նստեցին պատուհանի մոտ:

Քիչ հետո նրանց մոտեցավ մատուցողը:

-Բարև ձեզ և բարի գալուստ,- ասաց մատուցողը և Վահանին տվեց ճաշացուցակը: Վահանը ճաշացուցակը փոխանցեց Արմենին.

-Ընտրիր ինչ ցանկանում ես: Ինչ էլ ընտրես, ես քեզ հետ համաձայն եմ:

Արմենը վերցրեց ճաշացուցակը, մենյուն նայեց, պատվիրեց ինչ պետք էր և վերջում ասաց.

-Նաև մի շիշ հայկական կոնյակ: Իսկ կոնյակից հետո երկու բաժակ սուրճ:

Տասը րոպե չանցած՝ մատուցողը բերեց առաջին ճաշատեսակը: Սկսեցին ճաշել: Արմենը Վահանին հարցրեց.

-Ի՞նչ գործով ես եկել Երևան:

-Ճիշտն ասած,- բացատրեց Վահանը,- ինձ թմրանյութերի բաժնից տեղափոխել են սպանությունների բաժին: Եկել եմ Ներքին գործերի նախարարության աշխատակից մայոր Էդվարդ Ստեփանյանի մոտ խորհրդատվության: Նա մինչև Երևան գալը աշխատել է Սիրոգ քաղաքի ոստիկանության սպանությունների բաժնում, այն ժամանակ, երբ տեղի է ունեցել երկու անմեղ աղջկա սպանություն: Գործից տեղյակ մարդ է, հիանալի մասնագետ: Եթե չկարողանամ բացահայտել գործի հանգամանքները, ինձ կհեռացնեն աշխատանքից, հասկանո՞ւմ ես, Արմեն:

-Այդ կապակցությամբ մայորը որևէ օգտակար բան ասե՞լ է, թե...

-Նրա խորհուրդները ընդհանրապես օգտակար էին, բայց դեռ քիչ բան է նշանակում, հարկավոր է շատ ջանքեր թափել հանցագործին գտնելու համար,- ասաց Վահանը և տեղից վեր կացավ,- գնանք, ինձ հարկավոր է քնել և առավոտյան շուտ արթնանալ:

-Գնանք,- համաձայնեց Արմենը և երկուսով դուրս եկան ռեստորանից: Արմենը նստեց մեքենայի ղեկին, Վահանը՝ նրա կողքին:

Կես ժամ հետո հասան «Արմենիա» հյուրանոց:

-Լավ անցավ չէ մեր ճաշկերույթը,- Արմենն ուզեց իմանալ Վահանի կարծիքը:

Վահանը նրան չպատասխանեց, նա մտահոգ էր, հասան հյուրանոց, Վահանն իջավ ավտոմեքենայից:

-Բարի գիշեր, Արմեն ջան, վաղուց չէինք հանդիպել: Ամեն ինչ լավ էր:

-Բարի գիշեր, Վահան, ջան, Սիրոգ համեա՝ անպայման կզանգես:

Արմենը ժպտաց Վահանին ու հեռացավ: Վահանը բարձրացավ հյուրանոցային իր սենյակը: Սենյակում սաստիկ շոգ էր, բացեց պատուհանը, վերնաշապիկը հանեց, նստեց հեռուստացույցի առաջ: Հանեց սիգարետը, վառեց, սկսեց ծխել: Նորից գլխի մեջ պտտվում էր Ստեփանյանի հետ ունեցած զրույցը: «Ո՞վ կարող է լինել այդ ձախլիկը, ո՞վ կարող է լինել»,- անընդհատ կրկնում էր նա, բայց պատասխան չէր գտնում:

Ծխելուց հետո անջատեց հեռուստացույցը, հանեց շորերը և պառկեց քնելու: Երկար ժամանակ քունը չէր տանում: Հետո քնեց: Անընդհատ երազներ էր տեսնում:

Առավոտ շուտ արթնացավ՝ սառը քրտինքի մեջ կորած: Հիշեց տեսած երազը: Հետաքրքիր երազ էր: Ինքը կանգնած է վերևում ինչ-որ տեղ: Ներքևում երևում է դատախազության աշխատող Հարությունյան Մարգարյանը և իրենից պահանջում է ցած գցել ավտոմեքենայի բանալիները: Վերցնում է բանալիները և նետում դեպի Մարգարյանը: Եվ Մարգարյանը բանալիները բռնում է ձախ ձեռքով: «Դա ես հստակ նկատեցի,- արդեն քնից արթնացած՝ մտածեց Վահանը,- նա բանալիները բռնեց ձախ ձեռքով: Այ քեզ երազ: Ուրեմն Հարությունյան Մարգարյանը ձախլիկ է, թե չէ ինչո՞ւ պիտի բանալիները բռներ ձախ ձեռքով: Ի՞նչ է ուզում ինձ ասել իմ այս երազը, հետաքրքիր է: Էդ Հարությունյան Մարգարյանը որևէ կապ ունի՞

այդ գործի հետ: Գուցե այդ ամենը սովորական խաբկանք է: Բայց ինչո՞ւ Մարգարյանը և ոչ մի ուրիշը... »:

Թեև շատ վաղ էր, բայց Վահանը այլևս քնել չկարողացավ: Աչքերը տրորեց, տեղից վեր կացավ և մտավ լոգարան: Հենց լոգարանում էլ սկսեց մտածել Հարություն Մարգարյանի մասին:

Էդ Հարությունը Խաթունարխ գյուղից է, այնտեղ է ծնվել: Իրենց գյուղի միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետհամալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Հեռակա կարգով է սովորել: Նա համալսարանն ընդունվել է համագյուղացի, իրավաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Մանուկ Շիրիմյանի օգնությամբ ու աջակցությամբ: Հեռակայում սովորելու տարիներին Մարգարյանը աշխատել է Սիրոգ քաղաքում որպես հրշեջ: Վահանն էլի բաներ հիշեց Մարգարյանի կենսագրության հետ կապված, բայց դրանք համարելով երկրորդական՝ մոքից հանեց:

Վահանն արագ դուրս եկավ լոգարանից, շորերը հագավ և որոշեց վերադառնալ Սիրոգ, բայց մինչև մեկնելը մտավ սրճարան:

-Բարի լույս,- ասաց բարմենին,- եթե կարելի է, մի բաժակ սուրճ:

-Բարի լույս,- բայց սրճարանն աշխատում է ժամը յոթից, հիմա դեռ վեցն է:

-Այդ դեպքում,- ժպտաց բարմենը,- սպասեք երկու րոպե ես ձեզ համար սուրճ կդնեմ,- և քիչ հետո սուրճը բերեց դրեց սեղանին.

-Համեցեք:

Սուրճը խմելուց հետո Վահանն արագ դուրս եկավ սրճարանից.

Հյուրանոցի դիմացի հրապարակում ավտոմեքենաներ էին կանգնած, դրանցից մեկի դուռը բացվեց, դուրս եկավ մի երիտասարդ, նայեց չորս կողմը և սկսեց մաքրել մեքենայի դիմապակին: Երիտասարդը Վահանին կասկածելի թվաց: «Ինչքան նման է կիլլերի: Ասես պատրաստվում է կատարել ինչ-որ մեկի պատվերը»,- մտածեց

նա: Չգիտես ինչու դիմացի երիտասարդը նրա աչքին մարդասպան էր թվում, որ դարանակալ սպասում էր իր զոհին:

Վահանը փորձեց թոթափել այդ մտքերը, արագ նստեց ավտոմեքենան և ուղղություն վերցրեց դեպի Սիրոգ: Քաղաք հասավ առավոտյան ժամը տասնմեկի կողմերը: Սկզբից որոշեց գնալ տուն, բայց հետո միտքը փոխեց և գնաց դեպի ոստիկանություն:

Տեղ հասավ, իջավ ավտոմեքենայից, մտավ շենքից ներս, բարևեց հերթապահներին:

-Բարի լույս ձեզ:

-Բարի լույս,- պատասխանեցին հերթապահ ոստիկանները:

Վահանը բարձրացավ երկրորդ հարկ, մոտեցավ Սևակ Ակիմյանի աշխատասենյակին, դուռը ծեծեց, ներս մտավ:

-Բարև, Սևակ ջան:

-Բարև, Վահան ջան, այդ ե՞րբ ես մայրաքաղաքից ժամանել:

-Հենց նոր եկա,- գործնական տոնով ասաց Վահանը,- Հանդիպեցի մայոր Ստեփանյանի հետ:

-Հետո՞, ի՞նչ ասաց,- մի անգամից հետաքրքրվեց Սևակը,- որևէ բանով օգնե՞ց քեզ:

-Օգտակար խորհուրդներ, իհարկե, շատ տվեց, բայց մարդասպանին գտնելու համար պետք է դեռ շատ չարչարվենք,- ասաց Վահանը և տեսնելով Սևակի տոնական հագուստը՝ ուրախ ասաց,- ոստիկանի տոնական հագուստը այդ ինչքա՞ն է սազում քեզ:

-Այսօր որոշել եմ արտակարգ լինել,- ժպտաց Սևակը:

Շհարցնելով ընկերոջ ուրախ տրամադրության դրդապատճառը՝ Վահանն ասաց.

-Դե լավ, ես գնամ, դեռ ժամանակ կունենանք խոսելու:

Վահանը մտավ իր աշխատասենյակը, նստեց տեղը, բայց հիշեց, որ ավտոմեքենան պիտի հանձնի տիրոջը, վեր կացավ ու մտավ թմրանյութերի դեմ պայքարի բաժինը, դուռը բացեց, բարևեց.

-Արման ջան, ավտոմեքենադ ողջ ու առողջ բերել եմ, սա էլ բանալիները, վերցրու: Շատ-շատ շնորհակալ եմ:

Վահանը կրկին վերադարձավ իր աշխատասենյակ: Բացեց չհրկիզվող պահարանը, հանեց սպանության մասին փաստաթղթերը և սկսեց ուշիուշով նայել: Նրա հայացքը կանգ առավ հատկապես Արտաշես Բեգլարյանի աղջկա նկարի վրա: Կրկին մեծ ուշադրությամբ նայեց նկարին: Իրոք պարզ երևում էր նրա դեմքի վրա դաջված սպին: «Ուրեմն ճիշտ էր մայոր Ստեփանյանը,- ինքն իրեն մտածեց Վահանը,- Հարվածը իրոք կատարվել է ձախ ձեռքով»:

Էլի նայեց, նորից համոզվեց և որոշեց աշխատանքի վերջում մտնել դատախազության բաժին: Այնտեղ աշխատում էր իր դասընկերուհի Սիլվա Մաշուրյանը:

Ինչպես որոշել էր, աշխատանքը ավարտելուց կես ժամ առաջ մտավ դատախազության կադրերի բաժին:

-Բարև, Սիլվա,- ասաց Վահանը՝ նրա առջև դնելով շոկոլադե սալիկը:

-Բարև, Վահան, երկար ժամանակ չես երևում, ի՞նչ է եղել, պարոն Դարբինյան,- ձայնի մեջ ջերմություն դնելով՝ ասաց Սիլվան:

-Ոչինչ, Սիլվա ջան, ապրում ենք՝ մի օր լավ, մի օր վատ, գործերս էլ մի քիչ խառն են՝ մի օր հաջող, մի օր անհաջող::

-Այդ ի՞նչ է եղել, լսել եմ՝ պաշտոնդ փոխել ես, գնացել ես սպանությունների բաժին, ճի՞շտ է:

-Այդպես է: Բաժինս փոխել եմ: Հիմա քեզ մոտ եկել եմ բոլորովին ուրիշ հարցով: Ուզում եմ իմանալ, թե հունվար ամսից սկսած Հարությունն Մարգարյանը քանի՞ անգամ է գործուղման գնացել Երևան: Խնդրում եմ՝ ասեք ամսաթվերով:

Սիլվան հարցական նայում է Վահանին և գլուխը բացասաբար օրորում:

-Շնեղանաս, Վահան ջան, բայց դա հնարավոր չէ: Ուզում ես՝ ինձ վրա խոսակցությո՞ն բացվի: Չեմ կարող:

-Սիլվա ջան, հասկացի՛ր, ինձ դա խիստ անհրաժեշտ է իմանալ: Խոստանում եմ քո անունը ոչ մի տեղ չի շոշափվի:

-Վահան ջան, ինձ ռիսկի տակ ես դնում,- շփոթված ասում է Սիլվան ու քիչ հետո ասում,- խոսք չեմ տալիս, բայց... կձգտեմ...

-Շատ բարի, ես հույս ունեմ, որ դու ինձ կօգնես,- ասաց Վահանը, համբուրեց ձեռքը և դուրս եկավ:

Սևակ Ակիմյանին առավոտ շուտ զանգեցին: Սևակը վերցրեց ընկալուչը.

-Լսում եմ:

Հեռախոսի մյուս ծայրից խոսողը իր անունը չասաց, միայն ցածրաձայն հաղորդեց հետևյալը.

-Նա եկավ քրոջ՝ Ադայի հետ: Ավտոմեքենան կանգնեցրին, իջան, մոտն տուն, որտեղ գտնվում էր ձեր կինը՝ Անժելան:

Սևակի ձայնը դողաց հեռախոսի մեջ:

-Շնորհակալ եմ, այդքանի համար էլ ապրես:

Ասաց, գլուխն առավ ափերի մեջ: Այս էլ որերորդ անգամ Արամն ու Ադամ խառնվում են իր ընտանեկան գործերին՝ փորձելով Սևակին ու Անժելային բաժանել իրարից: Արամն ամեն կերպ ձգտում էր այն բանին, որ Անժելան օրինական ամուսնուց բաժանվի ու ամուսնանա Սամվել Պողոսյանի հետ:

Գիշեր-ցերեկ Սևակն այդ մասին էր մտածում: Չէր ուզում բաժանվել Անժելայից, մանավանդ երեխաներից: Հորդորում էր կնոջը, որ չենթարկվի Արամի և Ադայի սադրանքներին: Բայց տեսնում էր, որ Անժելան ավելի շատ նրանց է լսում, քան իրեն: Ակնհայտորեն Անժելան դավաճանում էր իրեն: Դա արդեն Սևակը հանդուրժել չէր կարող: Խանդը կրծում էր նրա սիրտը: Խելագարվելն աստիճանի էր հասնում, երբ մտածում էր այդ

մասին: Սաստիկ լարումից գլուխը պայթում էր: Սևակն իրեն սաստիկ վիրավորված էր զգում: Կինը գետնով էր տվել նրա տղամարդկային արժանապատվությունը, պախարակել նրա անունը, ջախջախել ինքնասիրությունը և հայտնվել ուրիշ տղամարդու գրկում: Իսկ ի՞նչ են անում նման դեպքերում: Լռո՞ւմ են... Ինքը չի կարող լռել: Արհամարհո՞ւմ են, բա ո՞ւր մնաց տղամարդու արժանապատվությունը...

Սևակը բարձրացրեց ուսերին ծանրացած գլուխը, ձեռքը տարավ ու շոշափեց գոտուց կախված ատրճանակը: «Միայն սրան է արժանի անամոթը»,- ինքն իրեն առյուծի նման մռնչաց սենյակով մեկ, բռունցքը զարկեց սեղանին և դուրս եկավ: Սովորականի նման բարևեց բակում գտնվող ոստիկաններին, գնաց Հանգիստ նստեց ավտոմեքենան և քշեց դեպի Առաքելյան փողոց: Տեղ հասավ, ավտոմեքենան կանգնեցրեց 225 համարի տան մոտ: Այստեղ էր ապրում Ինժելայի քույրերից մեկը: Սևակին արդեն հայտնի էր, որ այդ օրը պիտի նշեին Ինժելայի քրոջ՝ Լուսինեի ծնունդը և Ինժելան էլ պիտի անշուշտ այնտեղ լիներ: Սևակն իջավ ավտոմեքենայից, նայեց աջ ու ձախ և գնաց մտավ շենքից ներս: Դուռը բացեց, ներս մտավ: Ոչ ոք չկար: Դանդաղ բարձրացավ երկրորդ հարկ: Ծեծեց մուտքի դուռը, ներս մտավ: Այս տանը ինքն ու Ինժելան մի քանի անգամ արդեն եղել էին: Այստեղ Սևակին ամեն ինչ ծանոթ էր:

Դռան մեջ երևաց տիկին Լուսինեն՝ Ինժելայի քույրը:

-Բարև՛ ձեզ, տիկի՛ն Լուսինե, ծնունդդ շնորհավոր,- ասաց Սևակը: Ի զարմանս Սևակի, տիկին Լուսինեն Սևակին չպատասխանեց, սառն ու անտարբեր շուռ եկավ և մտավ խոհանոց՝ իր ետևից ցուցադրաբար փակելով դուռը:

Սևակը մնաց կանգնած: Կողքի սենյակից նրա ականջը ձայներ որսաց: Դուռը բացեց և ներս մտավ: Նրա դիմաց կանգնած էին իր երկու քենակալները՝ Մարտինը և Լուսինեի ամուսինը՝ Սուրենը: Ինժելան կանգնած էր նրանցից մի քիչ հեռու՝ պատուհանի մոտ:

Նրանցից և ոչ մեկը ուշադրություն չդարձրեց ներս մտնող Սևակին: Սևակն իսկույն ջոկեց նրանց տրամադրությունը, չբարևեց:

Լուռ ու հաստատուն քայլերով մոտեցավ կնոջը և շեշտապահանջ ասաց:

-Պատրաստվիր, հենց հիմա տուն ենք գնում,- հետո նայեց շուրջը,- բա երեխաներն ո՞ւր են:

Անժելան խոժոռ ու թթված հայացքով նայեց ամուսնուն:

-Երեխաներին չեմ բերել, դա առաջին և երկրորդ՝ ես արդեն դիմում եմ գրել մեր բաժանման մասին: Այնպես որ ես արդեն քո կինը չեմ:

Սևակը զայրույթը հազիվ զսպեց ու կարողացավ հանգիստ ասել.

-Շատ ես սխալվում,- ասաց Սևակը և փորձեց կնոջ թևը բռնել: Անժելան կոպտորեն թևը քաշեց իրեն:

-Քեզ ո՞վ է կանչել այստեղ, ինչ եկել ես, այնպես էլ կարող ես գնալ, ես այլևս քո կինը չեմ:

Սևակի ներսում եռում էր զայրույթը, բայց արտաքնապես հանգիստ էր:

-Արի դուրս գանք այստեղից,- դիմեց կնոջը, գնանք տանը հանգիստ խոսենք, մեր ներկայությամբ չխանգարենք ներկաներին:

-Այդ ո՞ւմ ես ուզում խանգարել, «մենթ» սրիկա,- հանկարծ բռնկվեց Մարտինը, որ Երևանից էր եկել իր քենու ծննդին:

Սևակի բարկությունը հասավ իր գագաթնակետին, բայց դարձյալ զսպեց իրեն և հանգիստ ասաց.

-Ես «մենթ» չեմ, ես ոստիկանության սպա եմ: Իսկ դու չափերդ մի՛ անցիր և քեզ մի քիչ համեստ պահիր:

-«Մենթ»-ը մնում է «մենթ»,- բառերը դեպի Սևակը շպրտեց Մարտինը,- հենց հիմա օդը մաքրիր և ռադդ քաշիր այստեղից, թե չէ շան ծեծ կուտես: Անժելան քեզ համար չէ, հասկացա՞ր:

Այս ասելով Մարտինը մոտեցավ Սևակին և բռունցքը բարձրացրեց: Սևակը պատրաստ էր դրան: Նա հասցրեց երկու քայլ ետ գնալ և բոլորի համար անսպասելի հանեց ատրճանակը: Սևակը սաստիկ բորբոքված էր, կարծես գիտակցությունը չէր գործում:

-Ինձ համբերությունից մի՛ հանեք,- գոռաց նա,- Էյ դու Մարտին ես, ինչ ես, հեռո՛ւ գնա ինձնից, թե չէ... կկրակեմ:

-Ի՞նչ,- աչքերը չռեց Մարտինը,- էդ ի՞նձ վրա ես ուզում կրակել, ես քո հերը կանիծեմ, սրիկա, հալա փորձի՛ր, «մենթ»:

Սևակի մյուս քենակալը փորձեց նրանց խաղաղեցնել:

-Տղե՛ր, հանգի՛ստ մնացեք: Այդպես հարց չեն լուծում,- ու շուռ եկավ դեպի Ախժելան,- վեր կաց գնա ձեր տուն, ձեր պրոբլեմները ամուսնուդ հետ ձեր տանը լուծեք: Մեր տունը կռվի դաշտ չէ ձեզ համար:

-Ես թքած ունեմ այս «մենթ»-ի վրա,- ասաց Ախժելան՝ ձեռքը մեկնելով դեպի Սևակը,- նրա ներկայությունն անգամ ինձ համար խիստ տհաճ է:

Մարտինը, արհամարհելով դիմացինին, հարձակվեց Սևակի վրա՝ նրան ուժգին հրելով: Սևակը մեջքով հետ գնաց ու զարկվեց պատին: Ինքն էլ չիմացավ, թե ինչպես կրակեց առանց նշան բռնելու:

Մշուշված գիտակցությամբ զգաց, որ գնդակը Մարտինին չի կպել: Զարմացած նայեց շուրջը: Իր դիմաց կանգնած էր Ախժելան՝ կուրծքը բռնած, ձեռքերը արյունոտ: Աստվա՛ծ իմ, ուրեմն գնդակն Ախժելայի՞ն է կպել: Ուրեմն ինքն իր ձեռքով սպանել է կնոջը: Ճչալով և ծնկներին զարկելով սենյակ մտավ Ախժելայի քույրը:

-Վա՛յ մամա ջան, այս ի՞նչ է կատարվում այստեղ,- նա սարսափով նկատեց, թե ինչպես կուրծքը բռնած՝ ամբողջ հասակով մեկ գետնին շրմփաց Ախժելան: Խելագարի նման կոկորդով մեկ բղավեց.

-Ախ դու սրիկա, դու սպանե՞լ ես Ախժելային:

Մարտինը, մոռացած ամեն վտանգ, նորից հարձակվեց Սևակի վրա՝ այս անգամ փորձելով նրա ձեռքից խլել ատրճանակը: Սևակը խելագարվելու չափ իրեն կորցրել էր: Առաջին անդառնալի քայլն արդեն կատարել էր: Այլևս նահանջելու տեղ չուներ: Նա վրեժխնդիր կատաղությամբ մի քանի անգամ կրակեց Մարտինի վրա: Քենակալ Սուրենը նույնպես խառնվել էր իրար: Նա ամեն կերպ փորձում էր դադարեցնել արյունահեղությունը: Սևակն արդեն դարձել էր բոլորովին անկառավարելի: Նա աջ ու ձախ կրակում էր, առանց գիտակցելու, թե ինչ է անում: Բարեբախտաբար նրա կրակոցներից Սուրենը միայն վիրավորվեց: Դրանից հետո, երբ Սևակի գիտակցությունը մի պահ եկավ տեղը, նա գլուխը բռնեց և ահասարսուռ գոռաց.

-Այս ի՞նչ արեցի ես...սպանեցի Անժելային: Ես եկել էի՝ հաշվեհարդար տեսնեմ Արամի և Ադայի հետ, բայց քեզ սպանեցի...Թունույան Արամը պիտի փռվեր իմ ոտքերի առջև, նրա «կապույտ» արյունը պիտի ես կարմրացնեի, բայց ...այս ի՞նչ եղավ... Ադայի փոխարեն քեզ ուղարկեցի էն աշխարհը,- մղկտում, հառաչում, կանչում էր Սևակը:

Զգալով, որ անվերադարձ կորցրել է սիրելի կնոջը և որբացրել իր երկու դուստրերին, նա խելագարի պես գոռաց, պատեպատ ընկավ և չռված բռունցքը զարկեց ճակատին.

-Անժելա՛, Անժելա՛, ախր ես քեզ սիրում էի...իսկ դու ինձ դավաճանեցիր: Եղբայրդ և քույրդ քեզ շեղեցին ճիշտ ճանապարհից, խաբեցին քեզ,- և կյանքում առաջին անգամ հոնգուր-հոնգուր լաց եղավ:

Եվ ամեն ինչ թողնելով այդպես՝ սգի ու արյան մեջ, Սևակը տնից դուրս եկավ և ատրճանակը օդում թափահարելով՝ վագրի նման մռնչաց.

-Ես եկել էի, Արամ, քո հետևից, եկել էի քո վերջը տալու, «արիստոկրատ» Արամ, բայց քո փոխարեն սպանեցի երկու ուրիշ մարդկանց:

Թարմ օդը խփեց նրա ճակատին: Նա նոր միայն ամբողջ խորությամբ զգաց իր արածի անսերելի չափերը: Գիտակցությունը սկսեց հստակ գործել: Ստուգեց մոտը եղած փամփուշտների թիվը: Ատրճանակի փամփուշտակալում ընդամենը մի փամփուշտ էր մնացել: Ավտոմեքենան թափով քշեց դեպի ոստիկանություն: Միտք ուներ նոր փամփուշտներ վերցնելու: «Էդ սրիկա Արամին պետք է ոչնչացնել, այսքանից հետո նա ապրելու իրավունք չունի: Հարկավոր է գնալ նրա աշխատանքի վայրը և հենց տեղում նրան սատկացնել»,- անընդհատ թմբկահարում էր նրա ուղեղը:

-Իր որոշումը անհապաղ իրականացնելու մտադրությամբ էլ նա գնաց ոստիկանություն: Ավտոմեքենան հարմար տեղ կանգնեցրեց, արագ բարձրացավ երկրորդ հարկ, մտավ իր աշխատասենյակը, մոտեցավ չհրկիզվող պահարանին, բացեց, փամփուշտներ վերցրեց և մինչև վերջ լիցքավորեց այն: Դրանից հետո նա շատ արագ փորձեց իջնել: Հենց այդ պահին ականջին հնչեց ոստիկանության մեքենայի սուլոց-ազդանշանի ձայնը: Նայեց պատուհանից: Զինված ոստիկանները ինչ-որ ձերբակալված հանցագործի փորձում էին հանել ավտոմեքենայից:

«Գրողը տանի, այս ինչ շուտ իմացան ինձ հետ կատարված դեպքերի մասին: Երևի եկել են իմ հետևից»,- մտածեց Սևակը և նորից վերադարձավ իր աշխատասենյակը: Մտավ ներս, ներսից փակեց դուռը: «Վերջ ամեն ինչին»,- մտածեց նա և չոված մատները մեկնեց հեռախոսին, դանդաղ զանգեց ընկերոջը՝ Վազգենին.

-Վազգեն, հենց այսօր կտեսնես Վահան Դարբինյանին, նրան կասես, որ Սևակը խնդրել է երեխեքիս լավ նայի, նրանց միշտ աչքի պահի, երեխեքս նրան սիրում են, Վազգեն, լսո՞ւմ ես:

-Չհասկացա Սևակ ջան, ի՞նչ է պատահել, ձայնիդ մեջ տագնապ կա, ո՞նց թե երեխաներին...բա դու ո՞ւր ես գնում:

-Ես... հրաժեշտ եմ տալիս այս աշխարհին, Վազգեն ջան, գնում եմ երկինք...,- ու դողաց Սևակի ձայնը:

Նա դանդաղ հեռախոսը դրեց իր տեղը:

Զարմանալի զուգադիպությամբ հենց այդ պահին Վահան Դարբինյանը, որ նոր էր եկել ընդմիջումից, իր աշխատասենյակը մտնելուց առաջ ցանկացավ նախ տեսնել Սևակին:

Մոտեցավ Սևակի աշխատասենյակի դուռը ծեծեց: Ներսից արձագանք չեղավ: Դուռը հրեց, որ ներս մտնի, փակ էր. «Երևի դեռ ընդմիջումից չի եկել»,- մտմտաց Վահանը և շուռ եկավ, որ գնա, լսվեց կրակոցի ձայն: Վահանն ակամա ձեռքը տարավ դեպի իր ատրճանակը և ճչաց:

-Ո՞վ կրակեց:

Միջանցքում գտնվող ոստիկաններից մեկը կասկածանքով ասաց.

-Ինձ թվաց, թե կրակոցի ձայնը Սևակ Ակիմյանի աշխատասենյակից լսվեց:

Վահանը նույնպես այդ կարծիքին էր, կրակոցը Սևակի սենյակից լսվեց: Նա մոտեցավ դռանը և բարձրաձայն կոչեց.

-Սևա՛կ, ես եմ Վահանը, հենց հիմա դուռը բա՛ց արա:

Ոչ մի ձայն: Ներսում քար լռություն էր: Վահանը վատ բան գուշակեց:

-Քեզ հետ եմ, Սևակ, ողջ կոկորդով բղավեց Վահանը,- դուռը բա՛ց արա, ասում եմ, թե չէ այն կջարդեմ:

Դարձյալ ներսից ոչ մի ձայն:

Վերահաս վտանգի կանխազգացողությամբ Վահանը ետ գնաց և ոտքի ամբողջ թափով հարվածեց դռանը: Դուռը մի անգամից բացվեց: Վահանը նետվեց ներս, նրա հետևից էլ մի քանի ոստիկան: Սարսափելի էր նրանց առջև բացված տեսարանը: Սևակը

նստած էր բազկաթոռին՝ ձեռքում պինդ բռնած ատրճանակը: Նրա քունքին գտնվում էր կրակոցի հետքը:

-Սևա՛կ, այս ի՞նչ ես արել,- ամբողջ կոկորդով գոռաց Վահանը և գրկեց Սևակի անշնչացած գլուխը:

Չանցած մի քանի րոպե՝ Սևակի աշխատասենյակը լցվեց ոստիկաններով: Քիչ հետո եկավ նաև կապիտան Սեյրան Արզումանյանը:

-Ի՞նչ է պատահել,- անորոշ հայացքով, պաշտոնական սառնասրտությամբ հարցրեց նա:

-Սևակ Ակիմյանը ինքնասպան է եղել,- լսվեցին այս ու այն կողմից:

-Տեսնում եմ,- սառն ու անտարբեր ասաց Արզումանյանը և նույն սառնությամբ էլ ավելացրեց,- միայն կամքից թույլ մարդը կարող էր նման քայլի դիմել:

-Շատերի համար է տարօրինակ հնչում Սեյրան Արզումանյանի խոսքը, քանի որ լավ էին ճանաչում Սևակին՝ որպես սրտապինդ ու վճռական ոստիկանի:

Վահանը, որ ցնցված էր Սևակի կորստից, չկարողացավ զսպել իրեն: Նա սաստիկ զայրացել էր այդ անբարտավ Սեյրանի խոսքերից: Եվ զայրույթի պահին կռացավ, վերցրեց Սևակի ատրճանակը և այն ուղղեց Սեյրանի վրա:

-Էդ ո՞ւմ ես թույլ մարդ ասում, անասո՛ւն,- գոռաց Վահանը: Թույլ է, որովհետև քեզ նմանը աշխատո՞ւմ է ոստիկանությունում, թե՞ նրա համար է թույլ, որ թողել է քեզ՝ վարորդներից փող շորթես քո սեփական գրպանի համար:

-Վահա՛ն, էդ ի՞նչ ես անում,- տեսնելով իրեն ուղղված ատրճանակի փողը՝ դողալով ասաց Սեյրանը,- Վահան, երևի ինձ ճիտ չես հասկացել:

-Չոքի՛ր, չոքի՛ր, անասուն և ներողություն խնդրիր Սևակից քո ասած բառերի համար, թե չէ գանգդ կփշրեմ:

-Վահ՛ն, խնդրում եմ քեզ՝ հանկարծ չկրակես,- լսվեց Արման Աբրահամյանի ձայնը, քեզ վրա մեղք մի՛ վերցրու: Այդ անասունը դրան չարժի:

Բոլորի լեզուն վախից բռնվել էր: Շունչները պահած՝ սպասում էին, թե վերջը ինչ է լինելու:

Սեյրանը, որ ծնկի էր իջել Սևակի դիակի առաջ, սկսեց խոսել.

-Սևա՛կ, ներողություն եմ խնդրում քեզնից իմ սխալ բառերի համար, ներիր ինձ:

-Վահ՛ն, խնդրում եմ, ատրճանակը իջեցրու,- կրկնեց Արմանը: Վահանը իջեցրեց ատրճանակը, արցունքախեղդ աչքերով նայեց Սևակին և ասաց.

-Ի՞նչ երիտասարդ կորցրինք:

Շուտով եկան քրեական գործի մասնագետները, տակից գլուխ զննեցին, ստուգեցին ամեն ինչ: Սևակի աշխատասենյակում ամեն ինչ իր տեղում էր: Ատրճանակը, որպես իրեղեն ապացույց, փաթաթեցին անջրանցիկ շորի մեջ: Դրանից հետո էլ Սևակի դիակը հանեցին սենյակից:

Գործի քննությունը երկու-երեք օր տևեց: Քննելու-քննարկելու բան չկար: Ամեն ինչ պարզ էր: Կատարված հանցագործության ամբողջ մեխանիզմը հայտնի էր: Եվ դա ոչ միայն ոստիկանությանը, այլև քաղաքի ողջ բնակչությանը: Շարժառիթներն էլ պարզ էին բոլորի համար: Սպանողն էլ էր հայտնի, սպանվողներն էլ: Հետաքննությունն անցկացնելու կարիք չէր զգացվում: Մնում էր գործը կարճել: Այդպես էլ արեցին: Կատարված ողբերգական փաստի վերաբերյալ համապատասխան արձանագրություն կազմվեց, ու դրանով գործը փակվեց:

Սակայն տեղի ունեցած ահավոր դեպքը լայն արձագանք գտավ քաղաքում: Քաղաքը փաստորեն բաժանվեց երկու մասի: Մի մասը պաշտպանում էր Անժելային ու նրա հարազատներին, մյուս մասը արդարացնում էր Սևակի արարքը: Տեղի ունեցածը մարդիկ

քննարկում էին տարբեր տեսակետներից: Շատերը գտնում էին, որ իր արժանապատվությունը հարգող յուրաքանչյուր տղամարդ էլ նման հանգամանքներում այդպես կվարվեր: Սուգ ու շիվանով ողողված քաղաքը զոհերի հուղարկավորություններին էլ մասնակցեց տարբեր մոտեցումներով: Զոհվածներին թաղեցին առանձին-առանձին, ամեն մեկին իրենց նախնիների գերեզմանատանը: Սևակի հուղարկավորությանն ավելի շատ բազմություն էր հավաքվել: Շատերն էին ափսոսում նրա ջահելությունը:

Սևակի հուղարկավորությունը կայացավ շաբաթ օրը: Բազմահազար հուղարկավորների մեջ էր նաև Վահան Դարբինյանը կնոջ՝ Ֆնուշի հետ: Վահանը չէր կարողանում զսպել արցունքները: Հանձին Սևակի՝ նա կորցրել էր իր հավատարիմ ու ազնիվ ընկերոջը:

Թաղման արարողությունից հետո Վահանը կնոջ հետ լուռ ու գլխիկոր քայլեց դեպի գերեզմանատան ելքը: Դեռ դարպասին չհասած՝ նկատեց, որ մեկն անընդհատ, անսովոր ուշադրությամբ հետևում է իրեն: Դեմքը ծանոթ էր, բայց այդպես էլ չիմացավ, թե ով է: Զգում էր, որ անծանոթը ուզում է մոտենալ ու խոսել իր հետ: Գլխի ընկավ, որ կնոջ ներկայությունը խանգարում է նրան: Կնոջը խնդրեց առանձնանալ իրենից: Ֆնուշը գնաց ու միացավ գերեզմանատնից դուրս եկող կանանց խմբին:

Անծանոթն իսկույն մոտեցավ Վահանից ու գլխով բարևեց...

-Ես ձեզ հետ ուզում եմ խոսել Սևակի ցանկությամբ: Նա ինձ հետ հեռախոսով խոսել է իր ինքնասպանությունից մի քանի րոպե առաջ,- դա արդեն չափազանց հետաքրքիր էր: Վահանը խորը նայեց անծանոթի աչքերի մեջ.

-Ձեր դեմքն ինձ ծանոթ է, բայց, կներեք ինձ՝ ես չեմ կարողանում հիշել, թե որտեղ եմ տեսել ձեզ և ինչ պայմաններում:

-Այդ դեպքում,- ժպտաց անծանոթը,- խնդրում եմ նստեք իմ ավտոմեքենան, ճանապարհին մենք կզրուցենք, և ես ձեզ կտանեմ կհասցնեմ սգո սեղանին:

-Ո՛չ, ես սգո սեղանին չեմ մասնակցի: Այնտեղ մի քանի սրիկա ոստիկաններ կան, ես չեմ ուզում Նրանց հետ սեղան նստել,- կտրուկ ասաց Վահանը և նստեց անծանոթի ավտոմեքենան:

-Իմ անունը Վազգեն է, Առուստամյան Վազգեն,- ասաց անծանոթը՝ ավտոմեքենայի ղեկին նստելով: Վահանը խորը, շատ խորը նայեց անծանոթին.

-Իսկապես ես ձեզ արդեն հիշեցի: Դուք մի ժամանակ աշխատել եք ոստիկանությունում Սևակի հետ, ճիշտ է:

-Այո՛, միանգամայն ճիշտ է: Ես Սևակի հետ միասին աշխատել եմ միևնույն բաժնում: Ճիշտ է՝ կարճ ժամանակով, բայց դրանից հետո ես ու Սևակը դարձել ենք անբաժան ընկերներ: Եթե սգո սեղանին չեք մասնակցելու, այդ դեպքում գնանք որևէ սրճարան, մի-մի թաս օղի խմենք Սևակի հոգու համար, կարելի՞ է:

-Կարելի է,- համաձայնեց Վահանը:

Վազգենը ավտոմեքենան քշեց ու կանգ առավ «Կարին» սրճարանի մոտ: Մեքենայից իջան, մտան սրճարան: Մատուցողը մոտեցավ: Պատվիրեցին սուրճ, սալաթ և երկու բաժակ օղի: Քիչ հետո մատուցողը բերեց պատվերը:

-Խմենք Սևակ Ակիմյանի կենդանի հոգու կենացը,- ասաց Վազգենը՝ տեղը կանգնելով:

Վահանը նույնպես տեղը կանգնեց:

-Պայծառություն նրա հոգուն,- ասաց Վահանը՝ հայացքը առաստաղին:

Ի հիշատակ Սևակի՝ նրանք երկար կանգնած մնացին տխուր ու գլխահակ: Հետո Վազգենը խոսեց.

-Մահից առաջ Սևակն ինձ խնդրել է, որ ձեզ ասեմ նրա վերջին պատվիրանը՝ օգնեք նրա ծնողներին երեխաներին դաստիարակելու գործում:

-Ես, իհարկե, պատրաստ եմ կատարելու սիրելի Սևակի կամքը, բայց չեմ հավատում, որ Արամը թույլատրի, որ ես զբաղվեմ այդ հարցով: Նա ամեն քայլի կդիմի, որ ինձ հեռացնի նման գործից:

-Ձեզ շատ էր հարգում Սևակը,- թախծոտ ձայնով ասաց Վազգենը,- հաճախ էր պատմում ուսանողական տարիներին միասին անցկացրած ժամանակների մասին:

Վահանի կոկորդում հառաչանքի նման մի բան խեղդվեց:

Նա ոչինչ չուներ ասելու:

Խմեցին սուրճը և լուռումունջ դուրս եկան սրճարանից: Երբ նստեցին ավտոմեքենան, Վահանը Վազգենին խնդրեց քշել ոստիկանության: Մի քանի րոպեից հետո կանգ առան ոստիկանության շենքի առջև: Վահանը իջավ ավտոմեքենայից, բարձրացավ իր աշխատասենյակը: Երկար կանգնեց պատուհանի մոտ՝ տխուր հայացքը դրսի անցուդարձին: Տրամադրությունն ահավոր վատ էր: Վառեց սիգարետը, սկսեց ծխել: Աչքի առջև Սևակի թաղման արարողությունն էր: Հիշեց՝ ինչպես իրեն մոտեցավ դատախազության մի աշխատակից և լուռ իրեն հանձնեց ինչ-որ թուղթ: Վահանը միայն այստեղ թուղթը հանեց գրպանից, ուշադրությամբ նայեց և կարդաց: Թղթում գրված էին Հարությունն Մարգարյանի գործուղումների ժամկետների մասին տվյալներ՝ սկսած հունվար ամսից: Պարզվեց, որ Հարությունն Մարգարյանն առանձնապես շատ չէր բացակայել Սիրոգից, բայց հետաքրքիր էին մայրաքաղաքում նրա օրերի հերթագայությունը: Վահանն ուզում էր պարզել, թե Մարգարյանը ինչու հատկապես այդ օրերին է եղել Երևանում: Նա չհրկիզվող պահարանից հանեց աղջիկների սպանության մասին կազմված «գործը»: Բացեց Արտաշես Բեգլարյանի աղջկա սպանությունը ներկայացնող էջը: Նայեց նկարին, նորից նայեց ու խոսեց ինքն իրեն. «պետք է գտնել, պետք է հայտնաբերել հանցագործին: Չպիտի թողնել, որ իր համար ազատ ապրի ու չարաինդա այս աշխարհի վրա»:

Վահանն արագ փակեց «գործը», տեղից վեր կացավ ու գնաց տունն:

Ոստիկանությունում այդ շաբաթ ամեն ինչ խաղաղ էր:

Քաղաքը շարունակում էր սգալ Սևակի մահը:

Ուրբաթ օրը՝ աշխատանքից հետո, Վահանը տանն էր: Կլիներ երեկոյան ժամը յոթը: Վահանը խիստ անհանգիստ էր: Խառնի-խուռն մտքերը պաշարել էին նրան: Նա չէր կարողանում տեղը հանգիստ մնալ: Մեկ նստում էր բազկաթոռին, մեկ տեղից վեր էր կենում, քայլում էր սենյակի մի ծայրից մյուսը: Ծխելու համար գնաց պատշգամբ: Իրար հետևից երկու սիգար ծխեց: Հետո ծխելն ավարտեց, ծխուկը բարկացած նետեց մոխրամանի մեջ, վերցրեց հեռախոսափողը և զանգեց:

-Բարի երեկո, Արման, ինչո՞վ ես զբաղված:

-Բարի երեկո, Վահան ջան, նստած հեռուստացույց եմ նայում, գնացել էի հողամաս, մի քիչ աշխատել, հոգնել եմ:

Վահանը միանգամից անցել է խոսակցության բուն նպատակին:

-Լսիր, Արման, վաղը ուզում եմ գնալ ձկնորսության, կգա՞ս ինձ հետ:

-Ձկնորսությա՞ն...,- զարմացավ Արմանը,- երևի կատակ ես անում, դու որտեղ, ձկնորսությունը որտեղ:

-Կատակը մի կողմ, Արման,- միանգամայն գործնական ու լուրջ ասաց Վահանը,- վաղը շաբաթ օր է, կեսօրին մոտ ձկնորսության երկու սարք ես վերցնում, գալիս ինձ մոտ: Ճմռանաս՝ նաև երկու շիշ օղի վերցնես հետդ: Մնացած ուտելիքը իմ հաշվին: Հա, չմոռանամ ասել, որ գիշերը մնալու ենք այնտեղ:

-Իսկ որտե՞ղ՝ այնտեղ, կարելի՞ է իմանալ,- քիչ զարմացած ասաց Արմանը:

-Ուրեմն չիմացա՞ր՝ որտեղ ենք գնում: Գնում ենք Խաթունարխ:

-Ի՞նչ Խաթունարխ,- ձայնը երկարացրեց Արմանը, ինչո՞ւ այդքան հեռու: Քաղաքին ավելի մոտիկ տեղեր՝ ինչքան ասեմ:

-Վաղը ավտոմեքենադ նստած կգաս, կասեմ, թե ուր պիտի քշես: Այդ Խաթունարխը ամնման տեղ է: Հրաշք կլինի մի օր այնտեղ գիշերել: Այնպես որ վաղը՝ կեսօրից հետո, սպասում եմ քեզ,- ասաց Վահանը և անջատեց հեռախոսը:

Անուշը, որ լսել էր Վահանի հեռախոսազրույցը, հարցրեց.

-Էդ ի՞նչ է, հիմա էլ որոշել ես ձկնորսումդյամ մը զբաղվել:

-Այո՛,- ժպտաց Վահանը,- որոշել եմ այսքան լարված աշխատանքից մի քիչ հանգստացնել ներվերս:

-Հասկանալի է,- ասաց Անուշը,- բայց ինչո՞ւ այդքան հեռու, Սիրոգին ավելի մոտ ու հարմար տեղեր շատ կան:

-Հեռու ենք գնում, որ մեզ անհանգստացնող չլինի,- բացատրեց Վահանը:

Հաջորդ առավոտ՝ մինչև ժամը տասնմեկը, Վահանը երեխաների հետ էր: Հարցեր էր տալիս, ինքն էր պատասխանում նրանց հարցերին: Ժամը տասնմեկից հետո Վահանը գնաց խանութ, երշիկ, հաց, կանաչի, պոմիդոր, վարունգ գնեց և վերադարձավ տուն: Ոտքը դեռ դռան շեմին չդրած՝ Անուշը տեղեկացրեց.

-Արմանը զանգեց, ասաց մի քանի րոպեից կերևա:

Շուտով բակից լսվեց Արմանի ավտոմեքենայի ձայնը: Վահանը պատշգամբից Արմանին հասկացրեց, որ բարձրանա վերև: Արմանն իջավ ավտոմեքենայից, բարձրացավ վերև: Վահանը նայեց Արմանին և ուրախ-ուրախ առաջարկեց.

-Այ տղա, դե արի էլի, մեկնելուց առաջ մի կտոր հաց ուտենք:

Ուտելուց հետո Վահանը կնոջից գաղտնի վերցրեց ատրճանակը և թաքցրեց գրպանում ասելով.

-Թմի օղին հո չե՞ս մոռացել, Արման:

-Վերցրել եմ, բա ոնց:

Նստեցին ավտոմեքենան: Վահանն արդեն կնոջը զգուշացրել էր, որ գիշերը չի գալու, թող չանհանգստանա:

Ավտոմեքենան շարժվեց դեպի Խաթունարխ: Տեղ հասան մի ժամից հետո:

-Գյուղամիջում դանդա՛ղ քշիր, հանկարծ մարդ չքցես մեքենայի տակ,- կես կատակ, կես լուրջ ասաց Վահանը:

-Լավ էլ հիշեցրիր,- կատակին կատակով պատասխանեց Արմանը,- թե չէ լրիվ մոռացել էի:

Դեռ հարյուր մետր առաջ չգնացած՝ Վահանն Արմանին խնդրեց՝ մեքենան աջ քաշի ու կանգնեցնի: Նա նկատել էր ճանապարհի աջ եզրով քայլող քեռի Ավետիսին: Արմանը ավտոմեքենան կանգնեցրեց:

-Քեռի Ավետիսն է, Արման, հրաշալի մի մարդ, իջնենք, հարցնենք որպիսությունը:

Վահանն իջավ ավտոմեքենայից, Արմանը հետևեց նրան:

Մինչև Վահանի և Արմանի մոտենալը առաջինն ինքը՝ քեռի Ավետիսը ողջունեց բավական խրոխտ ու զվարթ ձայնով.

-Բա՛, Վահան ջան, էդ դո՞ւ ես, աչքերիս չեմ հավատում, բարի գալուստ, ա՛յ տղա, մեր կողմերումքանի՞ տարի կլինի՝ չես երևում:

Ասաց, պինդ-պինդ գրկեց Վահանին, ճակատը համբուրեց:

-Բարև, քեռի Ավետիս,- նրա գրկից դուրս գալով՝ ասաց Վահանը,- ինչպե՞ս է ձեր թանկագին առողջությունը:

-Ոչինչ էլի, Վահան ջան, ապրում ենք... Ամեն մեռնողին երանի տալով, ինչպես կասեր մեծն Թումանյանը:

-Իմ ընկերներից է, քեռի Ավետիս,- Վահանը ցույց տվեց Արմանին,- ծանոթացեք:

-Բարև ձեզ, քեռի Ավետիս,- ձեռքը մեկնեց Արմանը,- ձեր մասին Վահանն արդեն պատմել է:

-Բարև, երիտասարդ, շատ ուրախ եմ ծանոթանալու համար: Ես քեռի Ավետիսն եմ, կարճ՝ Ավո, գյուղում բոլորն ինձ այդպես են ասում: Այժմ մտնենք մեր տուն, մի քիչ հանգստանանք, համ էլ էս շոգ ու կրակին մի-մի գավաթ թան խմենք:

Քեռի Ավետիսը հյուրերին առաջնորդեց իրենց տուն: Տանը ոչ ոք չէր երևում:

-Մարիա՛մ,- կանչեց քեռի Ավետիսը,- Մարիա՛մ, դուրս արի, որտե՞ղ ես:

-Հա՛, պապիկ, լսում եմ,- դիմացի հացատնից դուրս եկավ Մարիամը:

-Արի այստեղ, իմ սիրելի թոռնիկ: Ահա, ծանոթացիր, ինձ հարազատ մարդիկ են: Հիշո՞ւմ ես, որ պապայիդ ոստիկանները բռնեցին, դատի պիտի տային, այս երիտասարդը փրկեց նրան,- ասաց քեռի Ավետիսը՝ ցույց տալով Վահանին:

-Ուրախ եմ,- ասաց Մարիամը՝ հնորհակալ նայելով Վահանին:

-Իմ անունը Վահան է, Վահան Դարբինյան,- ներկայացավ Վահանը շիկնանքից շառագունած Մարիամին:

-Ես էլ Արմանն եմ Վահանի ընկերը,- իր հերթին ներկայացավ Արմանը:

-Մարիամ ջան, էն սառը թանից երկու գավաթ բեր, թող հյուրերը խմեն, հովանան: Երկու շիշ էլ կսարքես, որ հետները տանեն,- հորդորեց քեռի Ավետիսը և ավելացրեց,- աքանչելի թան է, ամբողջ Հայաստանը գիտի մեր գյուղի թանի մասին:

-Ձեր թանն իսկապես անմման է, քեռի Ավո,- ասաց Վահանը:

Ոստիկան Արմանը երկար նայում էր Մարիամի ետևից: Նա ապշել, քարացել էր գյուղացի այդ աղջկա գեղեցկությունից: Արմանի այդ հիացական հայացքը չէր վրիպել քեռի Ավետիսի աչքից, և նա սկսեց պատմել իր սիրելի թոռնուհու մասին:

-Մարիամն աքանչելի աղջիկ է՝ խելոք, ուշիմ, աշխատասեր: Թոռնիկներից ամենամեծն է: Օգնում է ծնողներին ամեն ինչում: Դպրոցն ավարտել է գերազանց, բայց... երևի իզուր:

-Բայց ինչո՞ւ իզուր,- զարմացավ Վահանը:

-Հասկանո՞ւմ ես, Մարիամիկս պիտի սովորեր բժշկականում, փող չունեինք, դուրս մնաց: Նա շատ է սիրում բժշկի մասնագիտությունը: Բայց դե ի՞նչ արած: Երեխես շատ է մտածում այդ մասին: Այդ պատճառով էլ մի քիչ անտրամադիր է: Ուզո՞ւմ եք՝ նա ձեզ համար ճաշ պատրաստի,- խոսքը փոխեց քեռի Ավետիսը:

-Չէ, ճաշել չենք ուզում,- ասաց, մի քիչ լռեց Վահանը, հետո հարցրեց,- տղադ ո՞նց է, տղադ:

-Լավ է, Վահան ջան, ուրախ եմ, նա անաշա օգտագործելուց միանգամից հրաժարվել է: Հիմա էլ կնոջ հետ գնացել է սար՝ խոտ հնձելու:

-Դե հիմա մի քիչ էլ ձեր առողջության մասին խոսեք, ո՞նց եք, քեռի Ավետիս:

-Չեմ բողոքում, լավ եմ, միակ դարդս Մարիամիկս է, ընդունվեր բժշկական, ես էլ արխային գնայի էն աշխարհը: Իսկ դուք ինչո՞ւ եք եկել Խաթունարխ, կարելի՞ է իմանալ:

-Եկել ենք ձեր գյուղում ձուկ բռնելու, ուզում ենք մի քիչ ձեր գեղեցիկ բնության մեջ հանգստանալ, մի գիշեր էլ մնալ այստեղ և հիանալ ձեր երկնքի չքնաղ աստղերով,- ասաց Վահանը:-Քեռի Ավետիս, դուք կարո՞ղ եք ձուկ բռնելու հարմար տեղ ցույց տալ մեզ:

-Իհարկե, կարող եմ, Վահան ջան, էն դիմացի ճանապարհը տեսնում եք չէ՞: Հենց այդ ճանապարհով ուղիղ կգնաք երկու հարյուր մետր, կհասնեք գետի ափին: Հետո կթեքվեք դեպի աջ, մի քիչ էլ առաջ կգնաք և կկանգնեք: Այդտեղ համ ձուկ կբռնեք, համ էլ կգիշերեք: Խորհուրդ կտայի դրանից էն կողմ չգնաք: Գետի այն ափն ահագին տեղ սեփականություն է, մի գաղազած շուն էլ տեղամասից կապած:

-Իսկ էդ գաղաղած շան տերն ո՞վ է, մենք կարո՞ղ է ճանաչում էնք նրան,- հարցրեց Արմանը:

-Շատերն են նրան ճանաչում, բա ո՞նց... Դուք էլ նրան կճանաչեք: Նա ձեր աշխատողներից է,- ասաց քեռի Ավոն,- ազգանունը Մարգարյան է, բոլորը նրան պարոն Մարգարյան են ասում:

Վահանն ու Արմանը բազմանշանակ նայեցին իրար:

Հենց այդ ժամանակ եկավ Մարիամը՝ սեղանի վրա դնելով երեք բաժակ սուրճ և նույնքան էլ թան:

-Պապի՛կ, շշերի մեջ էլ թան եմ լցրել հյուրերի համար, որ հետները տանեն,- ասաց Մարիամը շիկնելով,- դրել եմ խոհանոցի սեղանի վրա:

Երբ Մարիամը գնաց, Վահանը քեռի Ավետիսին հարցրեց.

-Քեռի Ավո, ոնց որ չէք սիրում էդ Մարգարյանին, շատ անտրամադիր տվեցիք նրա անունը:

-Դե մեր գյուղում ո՞վ ա նրան սիրում որ... ոնց որ ազգի թշնամի լինի... Նրա անվան հետ շատ տխուր պատմություններ են կապված: Մարդիկ բնազդով անգամ զգում են, որ նա լավ մարդ չէ:

-Նրա գործերի մասին մի քանի բան պատմի՛ր, քեռի Ավետիս,- մտերմական տոնով խնդրում է Վահանը,- նրա մասին մի քիչ մենք էլ իմանանք, հո ուրիշ մարդ չե՞նք:

Քեռի Ավոն նայեց Վահանի աչքերի մեջ, իր բաժին սուրճից մի երկու կում արեց և տեսնելով, որ դիմացինները վստահելի մարդիկ են՝ ասաց.

-Դրա պապը եղել է, այսպես ասած, կեղծ հեղափոխական, սարքովի բոլշևիկ: Իրեն դնելով նվիրված և ազնիվ կոմունիստի տեղ՝ նա գյուղում շատերին է զրպարտել, շատերի վրա է կեղծ բանսարկություններ սարքել: Նրա մատնությամբ շատերին են գնդակահարել՝ համարելով իբր «ժողովրդի թշնամիներ», շատերին էլ աքսորել են հեռավոր Սիբիր... որն ասեմ, որը թողնեմ...

Քեռի Ավոն ծանր տնքաց, լռեց, ատելություն հավաքեց հոնքամիջում և նորից սկսեց խոսել.

-Կուլակաթափության անվան տակ նա հափշտակում է հորեղբորս վերջին երկու կովը և նրա ընտանիքը մատնում սովի: Ծանր է տանում հորեղբայրս այդ ամենը, մի օր փախչում է գյուղից, ընկնում անտառները և երդվում վրեժ լուծել էդ Հարությունն Մարգարյանի սրիկա պապից: Երկու տարի փնտրելուց հետո վերջապես մի օր նրան հաջողվում է առերես հանդիպել նրան և գյուղախորով անել այդ անպատկառին:

Սիրոգի միլիցիայությունը ընկնում է հորեղբորս ետևից: Մի այն երեք տարի հետո են օրենքի ներկայացուցիչները կարողանում բռնել իմ հորեղբայր Սմբատին: Հորեղբայրս գնդակահարվում է: Դրանից հետո սկսում են նաև հորս հետապնդել: Օրենքի պահապանները հորս ձերբակալում են և աքսորում Սիբիր: Մինչև հորս Սիբիր աքսորելը նա է հորս «գործերը» քննում, ծեծում նրան վայրենաբար, փորձում նրան սովամահ անել: Քառասունմեկ թվականին մեկնում է պատերազմ և հայտնի չէ՝ ինչ հնարքներով ողջ, առողջ վերադառնում և շարունակում իր սև գործը՝ աշխատանքի անցնելով Սիրոգի միլիցիայում:

Քեռի Ավետիսը նորից լռեց, ձեռքով հարթեց ճակատի կնճիռները և աչքերը ատելություն կայծկլտացին: Այդ տոնով էլ նա շարունակեց.

-Հիմա էլ տղան է շարունակում իր հոր գործը: Էհ, հայրն ինչ է եղել, որ որդին ինչ լինի... Ես մինչև հիմա էլ այն կարծիքին եմ, որ նա բռնել տվեց որդուս:

Վահան Դարբինյանը փորձում է Հարությունն Մարգարյանի մասին որքան հնարավոր է շատ բան իմանալ և հենց այդ նպատակով էլ հարցնում է.

-Դե հիմա նա գյուղում չի ապրում, էլ ինչո՞վ կարող է գյուղացիներին նեղացնել քեռի Ավետիս:

-Ճիշտ է, գյուղում չի ապրում, բայց ամեն շաբաթ օր գալիս է գյուղ իր Բաբկեն եղբոր մոտ:

-Եղբայրն ո՞վ է, Սիրոգո՞ւմ է ապրում,- հարցրեց Արմանը:

-Չէ, այս Բաբկեն եղբայրը մի տեսակ իր ազգ ու տոհմի մեղքերն է փորձում քավել,- քիչ լռելուց հետո ասում է քեռի Ավետիսը և շարունակում,- էս Բաբկեն եղբայրը ընդունվեց, սովորեց, ավարտեց համալսարանը, պատմաբանականը: Դրանից հետո եկավ գյուղ: Ամուսնացավ Թամարա անունով մի աղջկա հետ: Երեք-չորս տարի երեխա չունեցան: Էս Բաբկենը սկսեց զբաղվել ցնդաբանությունների: Ինչ որ գրառումներ էր անում, ինքն իրեն բաներ էր հնարում և ապացուցում, որ Նապոլեոնի, Բախի, Մոցարտի և աշխարհահռչակ շատ մարդկանց տատիկներն ու պապիկները հայեր են եղել:

-Սպասի՛ր, սպասի՛ր,- քեռի Ավետիսի խոսքը կտրում է Վահանը,- դա էն երիտասարդը չի՞, որ Սիրոգի նախկին օդանավակայանում զանազան թերթոնների վրա տպագրած թղթեր էր բաժանում ծանոթ-անծանոթներին, և հպարտությամբ նշում, որ Լենին, Ստալինի տատիկներն ու պապիկները նույնպես հայեր են եղել: Ամբողջ քաղաքը նրան «խփնված» էր կոչում: Շատերը համոզված էին, որ այդ ցնդած պատմաբանը հոգեկան հիվանդ է:

-Հա՛, հա՛, հենց էդ է,- հաստատեց քեռի Ավետիսը,- խոսքը հենց այդ ցնդած պատմաբանի մասին է: Կինը բաժանվեց նրանից, գնաց Սիրոգ, իսկ ինքը մնաց դպրոցում որպես պատմության դասատու: Հիվանդության պատճառով հետո նրան դպրոցից հանեցին: Հիմա ամբողջ օրը տանն է, իսկ ամռան ամիսներին ապրում է եղբոր՝ Հարութի սարքած ամառանոցում: Հարությունը ամեն շաբաթ օր լինում է իր ամառանոցում: Երեկ էլ ն իր «ժիգուլի» ավտոմեքենայով եկել էր իր «ֆազենդան»:

Քեռի Ավետիսի այս զրույց-պատմությունից հետո Վահանն ու Արմանը տեղից վեր կացան:

-Շատ շնորհակալ ենք, քեռի Ավետիս, ձեզանից, ձեր տնից, ջերմ հյուրընկալության համար: Ժամանակն է, որ մենք արդեն գնանք,- ասաց Վահանը:

-Հա՛, Վահան ջան, գնացեք իմ ասած ճանապարհով: Ձեր գործերին հաջողություն,- ասաց քեռի Ավետիսը՝ ինքն էլ տեղից վեր կենալով:

Վահանն ու Արմանը նստեցին ավտոմեքենան: Ղեկին այս անգամ նստեց Վահանը: Հասան գետի ափին: Երկուսով իջան ավտոմեքենայից, սկսեցին զննել շրջապատը:

Գետի ջուրը պարզ էր, հոսքը՝ հանդարտ: Այ ափին քարակարկառներ էին՝ այստեղ-այնտեղ բուսած գաճաճ թփուտներով: Վահանը հետաքրքրությամբ նայեց դեպի ձախ և միանգամից աչքին զարնվեցին ցանկապատված հողամասի եզրին ցցված երկու երկաթե դարպասները: «Ուրեմն սա է Հարությունի Մարգարյանի «ֆազենդան»,- եզրակացրեց Վահանը: Նստեցին ավտոմեքենան և շարժվեցին առաջ, որ ավելի մոտիկից ծանոթանան Հարության ամառանոցին: Հետաքրքիր տեսարան էր: Նրանք տեսան գեղեցիկ ծառաշարքերով շրջապատված մի հսկա տարածք: Ավելի մոտեցան: Այգում թռչունները հաճելիորեն դայլայլում էին: Վահանը որոշեց հենց այդտեղ էլ՝ գետի ափին՝ Հարության «ֆազենդայի» դիմաց հանգրվանել: Ավտոմեքենայի խցիկից հանեցին ձուկ որսալու հարմարանքները, դրեցին գետի ափին և սկսեցին առաջին հերթին ուտելիքի հոգս քաշել: Արմանը երկու շիշ օղին և թանը տարավ դրեց գետի սառը ջրի մեջ: Հետո իրարից բավական հեռու սկսեցին իրենց ձկնորսական գործը: Քիչ հետո Արմանը զվարթաձայն կանչեց.

-Մո՛տ արի, տես՝ ինչ ձուկ եմ բռնել:

Վահանը մոտեցավ:

-Պահ, պահ, իրոք, էս ինչ խոշոր ձուկ ես բռնել: Մի նայի՛ր, տես՝ իմ կարթո՞ւմ էլ ձուկ կա, թե՞ ոչ...

Վահանի կարթում ոչինչ չկար:

-Իմ բախտը միշտ այդպես չի բերում,- դժգոհեց Վահանը,- այդ պատճառով էլ ես ձկնորսությունն չեմ սիրում: Բայց թող մի հատ էլ փորձեմ:

Վահանը կարթը թողեց ջրի մեջ, ինքը գնաց ծառի չորացած ճյուղեր հավաքեց, դարսեց իրար վրա, օջախ սարքեց, մի քանի ուղիղ և ճկուն ճյուղեր ջոկեց, դանակով ոստերը քերեց, ողորկեցրեց, շամփուրներ սարքեց և նայեց ժամացույցին:

-Այս ինչքան արագ անցավ ժամանակը,- մտմտաց Վահանը և քայլեց դեպի Արմանը:

-Կարգին ձկնորս ես երևում,- ասաց,- երանի ես էլ քո համբերությունն ունենայի:

-Այո՛,- ժպտաց Արմանը,- ձկնորսը պիտի ծով համբերություն ունենա: Ձկնորսության սիրահարներ կան, ժամերով նստում, սպասում են՝ նույնիսկ հաց ուտելը մոռանալով: Ամառ լինի թե ձմեռ նրանք մշտապես իրենց գործին են:

-Սպասի՛ր, սպասի՛ր,- ասաց Վահանը՝ նայելով առաջ,- կարթը ինչ որ տեղից շարժվեց, կարող է ձուկ է բռնել:

Վահանը վազեց դեպի կարթը, բարձրացրեց, ստուգեց:

-Արման, բռնել է,- անսովոր ուրախությամբ ճչաց Վահանը,- բռնել է:-Ու կարթից հանեց իր բռնած ձուկը, մտածեց. «Ուրեմն գործերը հաջող են լինելու»:

Արմանն էլ իր բռնած հինգ ձուկը բերեց: Անցան գործի, մաքրեցին ձկների թեփուվները, փորոտիքները հանեցին, հագցրին շամփուրների մեջ, վառեցին կրակը: Կես ժամ հետո խորոված պատրաստ էր:

-Արման՛, գնա էն թթի օղին բեր, քո ուզած քեֆ ենք անելու: Հա՛, չմոռանաս թանն էլ բերել:

Արմանը գնաց բերեց օղին ու թանը: Նստեցին օջախի մոտ: Արմանը լցրեց բաժակները:

-Լցնում ես մեկ անգամ,- ասաց Վահանը,- բաժակները մինչև վերջ լցրու, որովհետև մի բաժակ ենք խմելու:

-Իսկ ինչո՞ւ մի բաժակ, չեմ հասկանում,- դժգոհեց Արմանը:

-Հասկացի՛ր, Արման, մենք հատուկ առաջադրանք կատարելու համար ենք եկել այստեղ և ոչ ուտել-խմելու: Բաժակդ խմիր, հետո կասեմ, թե դա ինչ առաջադրանք է:

Վահանը վերցրեց բաժակը.

-Մեր գործի հաջողության կենացը:

Խմեցին, վրայից էլ կերան ձկան խորոված: Այն շատ համեղ էր:

-Գիտե՞ս՝ մենք ինչո՞ւ ենք այստեղ, Արման:

-Ո՛չ, իհարկե, որտեղի՞ց իմանամ:

-Վահանը խորը, շատ խորը նայեց Արմանին, կարծես նոր էր տեսնում նրան և ասաց.

-Մենք այստեղ եկել ենք մարդ բռնելու ոչ թե ձուկ:

-Չեմ հասկանում ի՞նչ մարդ,- անակնկալի եկավ Արմանը:

-Հենց այստեղ՝մեր դիմացի «ֆազենդայում» է այդ մարդը, առայժմ դա իմ կարծիքն է, իմ ենթադրությունը,- դանդաղ ասաց Վահանը:

Արմանի աչքերը շողացին: Նա ինչ-որ բան գլխի ընկավ.

-Եվ այդ մարդը Հարո՞վթն է:

-Հարովթն է,- հաստատեց Վահանը,- մենք հենց նրան էլ պիտի բռնենք: Իսկ հիմա դու շարունակիր քո ձկնորսությունը, իսկ ես գնամ հետախուզության, տեսնեմ այդ «ֆազենդայում» ինչ է կատարվում: Գիշերային հեռադիտակը ինձ կօգնի այստեղից հետևել այնտեղի անցուդարձին:

Վահանը վերցրեց հեռադիտակը և զգուշորեն քայլեց դեպի «ֆազենդան»: Նա առաջ էր գնում, որքան հնարավոր է ավելի մոտիկ: Պառկեց իր համար մի հարմար տեղ ու հեռադիտակն առավ աչքերին: Շուտով «ֆազենդայի» առանձնատան բակում երևացին

երկու տղամարդ։ Նրանք կիսամերկ էին։ Նայեց ժամացույցին՝ երեկոյան ժամը ինն էր։ Մութը դեռ լրիվ չէր ընկել։

Վահանը շարունակեց հեռադիտակով նայել, բայց այլևս ոչ մի կարևոր բան չկարողացավ տեսնել։ Որոշեց մութը լրիվ ընկնելուն պես մտնել ներս։ Նա գիտեր, որ դա վտանգավոր է, բայց ուրիշ հնար չկար։ Պետք էր վերջապես իմանալ՝ այնտեղ ինչ էր կատարվում։ Ո՞վքեր են այդ երկու տղամարդը, ի՞նչ են անում այնտեղ. «Գուցե աղջիկների հետ կապված գո՞րծ է։ Ես չէի ցանկանա, որ այնտեղ աղջիկներ լինեին։ Դա գործը շատ կբարդացներ, թեկուզ շան որդիներ են, բայց էլի մերն են»,- մտմտաց Վահանը և ետ դարձավ Արմանի մոտ։

-Արմա՛ն, կամաց-կամաց հավաքիր էդ ամեն ինչը և տեղավորիր ավտոմեքենայում։ Մութը լրիվ ընկնելուց հետո շարժվում ենք,- գործնական տոնով ասաց Վահանը,- մենք պիտի աննկատ մնանք, այնպես պիտի անենք, որ մեզ ոչ ոք չտեսնի։ Մեզ հարկավոր է իմանալ՝ ովքեր կան այնտեղ, ինչով են զբաղված։ Չէի ցանկանա էդ Հարութին բռնել։ Ճիշտ է, անհաջող տղա է, բայց նրա ձերբակալությունը կազդի մեր շրջանի հեղինակության վրա։

-Դու կասկածում ես, որ...

-Արման, սիրտս գուշակում է, որ դա նրա ձեռքի գործն է։

-Չեմ հասկանում, ի՞նչ գործ։

-Էդ երկու աղջիկների սպանության գործը, որ մենք կապում ենք ինչ որ մանյակի հետ։ Էդ մանյակը կարող է հենց Հարութն է, ո՞վ գիտե։

-Ուրեմն ստացվում է, որ դատախազության աշխատողը մանյա՞կ է։

-Չի բացառվում, Արման, կարող է հենց այդպես է որ կա։ Թող ես սխալված լինեմ, բայց և այնպես ճշմարտությունը պետք է պարզել։ Երկուսն էլ լռեցին։ Ամեն ինչ հասկանալի էր, մնում էր գործել։

Դիմացի սարերն արդեն ծածկվել էին մութի շղարշով: Գետի ափին տիրում էր խորհրդավոր լռություն: Լռել էին ցերեկային բոլոր ձայները: Միայն գետի միալար վշշոցն է շոյում մարդու ականջը:

-Արմա՜ն, պատրաստվի՛ր, քիչ հետո շարժվում ենք,- ասաց Վահանը:

Պարոն Արտաշես Բեգլարյանը, կամ «Տաշը» ինչպես նրան կոչում էին Սիսակավանում, պատրաստվում էր նշել իր ծննդյան 50-ամյակը: Պարոն Արտաշեսը ուրախ էր հատկապես այն բանի համար, որ իր հոբելյանին պիտի գար իր սիրելի աղջիկը՝ Գայանեն:

Գայանեն սովորում էր Ժողտնտեսության Համալսարանի «Էկոնոմիկայի և կառավարման» ֆակուլտետի առաջին կուրսում: «Տաշն» արդեն իր հարազատներին ու բարեկամներին հայտնել էր իր աղջկա ժամանման մասին: Գայանեն դիմում էր գրել դեկանատ, որ իր հայրիկի ծննդյան հոբելյանին մասնակցելու համար խնդրում է՝ բացառության կարգով իրեն թույլատրեն քննություն հանձնելու ժամկետից շուտ: Ֆակուլտետի դեկանը ընդառաջել է նրան:

Արարողությունից մի օր առաջ «Տաշը» կանչում է եղբորը, փող է տալիս և պատվիրում գնալ շուկա և համապատասխան գնումներ կատարել:

-Ես կգնամ հովիվների մոտ՝ ոչխար գնելու, իսկ դու զբաղվիր շուկայի և խանութների հարցերով,- հանձնարարում է «Տաշը»:

Ըստ պայմանի՝ առավոտյան ժամը յոթին «Տաշը» գնաց Սիսակավանի հովիվների մոտ և խնդրեց, որ իրեն մի ջահել, չաղլիկ ոչխար տան: Հովիվները ջոկեցին ամենալավ ոչխարը տվեցին նրան: «Տաշը» վերադարձավ տուն, ոչխարը կապեց տնամերձի մի ծառից և, տեսնելով, որ մաղալի մոտ չոր փայտ չկա, կանչեց դպրոցական որդուն և կարգադրեց.

-Արայիկ ջան, դասերից հետո, որ տուն գաս, հացատան մոտ չոր փայտ կա, կջարդե՛ս, պատրաստ կդնես մաղալի մոտ:

Հաճելի ու տրամադրող եղանակ էր՝ արևոտ , գարնանային:

«Տաշը» մտավ տուն, զանգեց եղբորը՝ Սարգսին:

-Բարև, Սաքո ջան, ի՞նչ արեցիք էդ առևտրի գործը, վերջացրի՞ք:

-Համարյա վերջացնում ենք, ցուցակով նախատեսված ամեն ինչ առել ենք, մի երկու մանր-մունր բան է մնացել, էդ էլ խանութից կգնենք: Ամենհոգ մնա, ամեն ինչ տեղը տեղին արված է:

Այս ամենից հետո «Տաշը» տեղը նստեց, վառեց սիգարետը, ծխեց և սկսեց մտածել. «Այսօր աղջիկս գալու է, ուրեմն հարկավոր է ամեն ինչ արագ վերջացնել, որ նա գա և ամեն ինչ պատրաստ տեսնի»:

«Տաշը» աղջկան շատ էր սիրում, օրերով կարոտում էր նրան: Իսկ այս անգամ ուղղակի չէր համբերում: Ուզում էր ժամ առաջ տեսնել նրան:

Այս մտածմունքի մեջ էլ նա դուրս եկավ տնից, նստեց ավտոմեքենան և քշեց իր աշխատատեղը: Դա իր սեփական ռեստորան-աշխատատեղն էր, որ բացել էր սեփական միջոցներով: Նա շենքի դիմաց իջավ ավտոմեքենայից, մտավ ռեստորանից ներս: Նրան խոկույն դիմավորեցին տեղակալը և շեֆ-խոհարարը: Նա բոպեական զրույց ունեցավ նրանց հետ, արագ բաժանվեց նրանցից և մտավ իր աշխատասենյակը: Գայանեն մոքից չէր հեռանում: Մի անգամից վերցրեց հեռախոսը և զանգեց իրենց տուն: Հեռախոսը վերցրեց կինը:

-Գայանեից ի՞նչ նորություններ կան, Ամնա:

-Այ տղա՛,- հանդիմանանքով ասաց կինը,- այս ժամին ի՞նչ նորություններ, չե՞ս կարողանում մի երկու ժամ համբերել:

-Ամնա ջան, հասկանո՞ւմ ես, բոպե առ բոպե սպասում եմ, չեմ համբերում, ի՞նչ անեմ:

«Տաշը» կես ժամ էլ մի կերպ համբերեց: Սիրտն արագ էր աշխատում: Այլևս չհամբերեց: Նստեց ավտոմեքենան ու գնաց տուն:

Սաքոն արդեն տանն էր: Ինչ անհրաժեշտ էր, նա գնել բերել էր: Սաքոն առաջին հարկում ուտելիք-խմելիքներն էր տեսակավորում, իսկ «Տաշը» բարձրացավ վերև՝ երկրորդ հարկ: Քիչ հետո նա կանչեց Սաքոյին:

-Սաքո՛, բարձրացիր վերև:

Սաքոն բարձրացավ «Տաշի» մոտ: Դեմ դիմաց նստեցին սեղանի շուրջ: «Տաշը» երկու բաժակ կոնյակ լցրեց:

-Սաքո՛, խմե՞նք, գուցե ժամանակն արագ անցնի,- առաջարկեց «Տաշը»:

-Եղբա՛յր, ինչո՞ւ ես այս ժամին կոնյակ խմում,- հարցրեց Սաքոն:

-Խմում եմ, որ ժամանակի տևողությունը չզգամ, իսկ դու ի՞նչ է, չե՞ս ուզում խմել:

-Ես չեմ խմելու «Տաշ» ջան, դու գիտես, որ մեքենա եմ քշելու, էլ ինչո՞ւ ես ինձ ստիպում,- հրաժարվեց Սաքոն:

«Տաշը» բաժակը միանգամից քաշեց գլխին և տեղից վեր կացավ: Ինքն առաջին հարկ: Սաքոն նստեց ավտոմեքենան և քշեց դեպի ռեստորան «Տաշը» մնաց խոհանոցում:

-Գայանեն չզանգե՞ց,- հարցրեց կնոջը:

-Ա՛յ տղա, հեռախոսը քո ձեռքին ինձնի՞ց ես հարցնում: Որ զանգեր, առաջինը քեզ պիտի զանգեր:

-Հա՛, ճիշտ ես ասում: Ուղղակի անհանգիստ եմ, դուրս գամ, մի քիչ թարմ օդ շնչեմ, հա էլ քեզ չնեղացնեմ,- փափուկ տոնով ասաց «Տաշը» և ինքավ գնաց տնամերձ հողամասը:

Անցավ ևս մեկ ժամ: Հարազատները մեկ-մեկ, խումբ-խումբ եկան հավաքվեցին: «Տաշը» ճիշտ է, խոսում էր նրանց հետ, բայց ամբողջ մտածմունքը Գայանեի վրա էր: Հոգու տագնապի միջից էր նա լսում կանաց կարկաչուն ձայները, որ գալիս էին խոհանոցից:

«Տաշն» այլևս չէր համբերում, ինքն իրեն անընդհատ կրկնում էր. «այս ինչո՞ւ ուշացավ»:

Դուրս եկավ բակ, շունչը տեղը բերեց, նայեց ժամացույցին, հետո մտավ տուն, տնից խոհանոց, կնոջը նորից հարցրեց.

-Գայանեն չի՞ զանգել:

-Չէ՛, չի զանգել,- մտահոգ ասաց կինը,- ես էլ եմ անհանգիստ: Նա արդեն պիտի եկած լիներ...

-Մի՛ անհանգստանա,- չնայած ինքն ավելի անհանգիստ էր, հանգստացրեց կնոջը,- հիմա ավտոմեքենան կուղարկեմ նրա հետևից, երևի արդեն հասած կլինի ավտոկայան:

Զանգեց ռեստորան՝ Սաքոյին:

-Սաքո՛ ջան, վարորդին ասա՝ թող գնա ավտոկայան՝ դիմավորի Գայանեին և բերի տուն:

-Շատ լավ «Տաշ» ջան, հենց հիմա վարորդին կուղարկեմ:

Վարորդ Հենոն ավտոմեքենան շտապ քշեց ավտոկայան: Ավտոբուսը ժամանեց: Ուղևորները դուրս եկան: Գայանեն չկար: Վարորդ Հենոն մի կես ժամ էլ սպասեց. «Գուցե տաքսիով է գալիս»,- մտածեց նա: Գայանեն այդպես էլ չեկավ: Հենոյին մնում էր ետ վերադառնալ:

Աննան՝ «Տաշի» կինը, վերջացրել էր բոլոր աշխատանքները, մնում էր մտնել Գայանեի սենյակը, փոշիները տալ: Բայց ոչիսկ չէր անում մտնել այնտեղ: Նա սաստիկ ապրումների մեջ էր: Նրա կանացի նուրբ ու զգային հոգին վատ բան էր գուշակում: Բակում երևաց վարորդ Հենոն իր ավտոմեքենայով: Աննա և «Տաշը» միանգամից դուրս թռան սենյակից: Հենոն եկել էր առանց Գայանեի:

-Ժամից ավել սպասել եմ Գայանեին,- բացատրեց Հենոն,- բայց նա այդպես էլ չեկավ:

-Շատ վատ լուր ես բերել մեզ համար,- հառաչեց «Տաշը»: Իսկ կինը՝ Աննան, բոլորովին իրեն կորցրել էր: «Տաշը» կնոջը սաստեց, որ առայժմ ձայն չհանի, մինչև մի որոշակի բան կպարզվի:

-Խնդրում եմ, ողբ ու կոծդ չդնես, տեսնեմ ինչ կարող եմ ա-նել,- ասաց «Տաշը» և մտավ կողքի սենյակը, բոլորին հայտնեց, որ վարորդ Հենոն գնացել է ավտոկայան, բայց Գայանեին չի բերել: Բոլորը հարցական նայեցին իրար՝ ինչո՞ւ:

-Կարող է երթուղային տաքսով է եկել, և այն ճանապարհին փչացել է, այնպես որ դեռ ոչինչ պարզ չէ,- ինքն իրեն հուսադրելով՝ բացատրեց «Տաշը»:

-«Տաշ» ջան, հե՛չ չմտածես,- ասաց «Տաշի» քույրը,- ոչինչ էլ չի եղել, կտեսնես, որ մինչև մի ժամը կգա:

Մի ժամ ևս անցավ: Մարդիկ սկսեցին ինչ որ բաներ կասկա-ծել, բայց այդ մասին ոչ ոք չհամարձակվեց բարձրաձայն խոսել:

«Տաշը» մտավ խոհանոց, որտեղ կինն էր: Նա, ձեռքը սրտին, մոտեցավ կնոջը, գրկեց նրան, և երկուսով սկսեցին լաց լինել: «Տա-շը» կնոջը գրկից բաց թողեց, կուչ գալով նստեց աթոռին և լացա-կումած ասաց.

-Ինա ջան, շատ մի նեղսրտվիր, կարող է՝ մենք իզուր տեղն ենք այսպես քրքրում մեզ, դեռ ամեն ինչ կորած չէ, ես հիմա կգանգեմ Երևան և ամեն ինչ պարզ կդառնա:

«Տաշը» դողացող ձեռքով վերցրեց հեռախոսափողը, հավաքեց Գայանեի վարձու տան տանտիրոջ համարը:

-Բարև, քեռի Սահակ, ինչպե՞ս եք: Գիտես ինչ, ուզում եմ իմանալ Գայանեն ճանապարհվե՞լ է դեպի Սիսակավան, թե՞ չէ...

-Բարև, պարոն Բեգլարյան, նախ ծնունդդ շնորհավոր,- հեռախոսի մեջ լսվեց Սահակի ձայնը,- Գայանեն երեկ հաջողությամբ հանձնել է վերջին քննությունը և այսօր առավոտյան գնացել ավտոկայան, որ գա ձեզ մոտ, շատ էր վռազում, որ քո ծնունդին հասներ:

-Բայց...,- տարակուսանքով ասաց «Տաշը»,- մինչ հիմա նա դեռ տեղ չի հասել, կարո՞ղ է՝ հանկարծ ավտոբուսից ուշացած

լինի՞... Սիրտս շատ է անհանգիստ, Սահակ, խնդրում եմ մի բան իմացիր և զանգիր ինձ:

-Մի՛ անհանգստանա, պարոն Բեգլարյան, որդուս՝ Վահեին կասեմ, գնա ավտոկայան և այնտեղից ինչ պետք է իմանա:

-Լա՛վ, քեռի Սահակ, սպասում եմ զանգիր, եթե անհրաժեշտ լինի, ես իսկույն կգամ Երևան:

«Տաշը» դանդաղ դրեց հեռախոսը, գլուխն առավ ափերի մեջ և մի պահ հետո զանգեց ռեստորան:

-Սաքո՛, հեռախոսը տուր վարորդ Հենոյին:

Քիչ հետո հեռախոսի մեջ լսվեց Հենոյի ձայնը:

-Լսում եմ:

-Ավտոմեքենան տակից գլուխ կարգի բեր, բաքն էլ մինչև բերանը բենզին լցրու: Գնալու ենք Երևան,- կարգադրեց «Տաշը» և աչքերը սաստիկ հուզումից փակեց:

«Տաշը» իջավ ներքև՝ խոհանոց: Կինը ցնդվածի պես էր: Նա լուռ նայում էր մի կետի առանց տեղից շարժվելու: «Տաշը» մի պահ կանգնեց նրա մոտ, տեսավ նրա վիճակը և չխոսեցրեց նրան: «Տաշը» դուրս եկավ բակ, կանչեց որդուն, ինչ-որ հանձնարարություններ տվեց:

-Մամայի հանդեպ ուշադիր կլինես: Այս մի քանի ժամը տնից դուրս չգաս: Կարող է՝ զանգեն, ուշադիր կլինես:

Երևան գնալու մասին կնոջը ոչինչ չասաց: Կես ժամ հետո վարորդ Հենոն եկավ: «Տաշը» մեկնելուց առաջ ուզում էր կնոջը մխիթարանքի նման մի բան ասել, դարձյալ չասաց ու քայլեց դեպի ավտոմեքենան: Ժամը 8-ն էր: Ավտոմեքենան տեղից շարժվեց: Ժամը տասնմեկին տեղ հասան: «Տաշը», որ ամբողջ ճանապարհին ոչինչ չէր խոսել, ասաց.

-Քշի՛ր ավտոկայան:

Մտան ավտոկայան: Ավտոբուսներն ըստ չվացուցակի արդեն մեկնել էին: Ավտոկայանում միայն պահակն էր մնացել, որից որևէ

բան իմանալ չէր լինի: Գնացին քեռի Սահակենց տուն: «Տաշն» ու վարորդ Հենոն աստիճաններով բարձրացան, դռան մոտ կանգնեցին: «Տաշը» սեղմեց դռան զանգի կոճակը: Դուռը բացեց քեռի Սահակը:

-Ներս մտեք, պարոն Բեգլարյան,- մտահոգ ասաց Սահակը: «Տաշը» վարորդի հետ ներս մտավ: Տանը Սահակի կինն էր, որդին՝ Վահեն կնոջ հետ և Գայանեի տնկեց ընկերուհին: Բոլորն արդեն մոտավորապես գիտեին տեղի ունեցածի մասին և բոլորն էլ անհանգիստ էին: Սպասում էին, թե ինչ կասի Բեգլարյանը, բայց նա լուռ ու քարացած կանգնած էր սենյակի մեջտեղում:

Քեռի Սահակն աթոռը մոտեցրեց, ասաց.

-Նստեք, պարոն Բեգլարյան... Վահեն գնացել է ավտոկայան, հարց ու փորձ արել բոլորից, բայց ոչ մեկը որոշակի բան չի ասել: «Տաշը» ոչինչ չասաց, միայն հառաչեց:

Գայանեի ընկերուհին՝ Արևիկը, որ հազիվ էր կարողանում զսպել արցունքները, ասաց.

-Քեռի Արտաշես, երեկ երեկոյան Գայանեն բարձր տրամադրությամբ եկավ տուն և ուրախությամբ հայտնեց, որ առավոտյան գնալու է Սիսակավան ձեր ծնողին: Լավ հիշում եմ ասաց, որ գնալու է երթուղային տաքսիով:

«Տաշը» դարձյալ լուռ էր՝ արցունքն աչքերին: Բոլորն էլ լուռ էին, մխիթարանքի խոսքեր չէին գտնում ասելու:

-Դե լավ,- խոսեց քեռի Սահակը,- արդեն ուշ ժամ է, պետք է քնել, հանգստանալ, առավոտյան դարձյալ գնալ ավտոկայան, գուցե հնարավոր լինի մի բան իմանալ: Իսկ եթե ոչինչ չստացվի, այդ դեպքում հայտնի դարձնել ոստիկանությանը:

Գիշերը «Տաշը» պառկեց մահճակալին, բայց չկարողացավ քնել:

Առավոտյան ժամը յոթին տեղից վեր կացավ, վարորդին էլ վեր կացրեց: Ավտոմեքենան նորից ուղղությունն վերցրեց դեպի

ավտոկայան: «Տաշը» մոտեցավ տոմսավաճառին, ցույց տվեց Գայանեի լուսանկարը: Տոմսավաճառը ոչինչ չհիշեց:

-Հարյուրավոր մեկնող-հաճախողների մեջ հիշել որևէ մեկին հնարավոր չէ,- ասաց նա ու դրանով ասելիքը ավարտեց::

«Տաշը» գնաց այդ օրվա հերթապահի մոտ: Հերթապահն էլ երկար նայեց նկարին և ասաց, որ ոչինչ չի հիշում: «Տաշը» վերադարձավ վարորդի մոտ, հանձնարարեց քշել ավտոկայանի ոստիկանությունն: Վարորդ Համոն ավտոմեքենան կանգնեցրեց ոստիկանության շենքի առջև: «Տաշը» իջավ և մտավ շենքից ներս.

-Բարև ձեզ,- դիմեց նա ոստիկանության հերթապահին,- ես աղջկաս եմ փնտրում: Նա պետք է ավտոկայանից վերադառնար Սիսակավան, բայց չի եկել: Հայցում եմ ձեր օգնությունը աղջկաս գտնելու հույսով:

-Ամսի քանիսի՞ն նա պիտի գար Սիսակավան,- հարցրեց հերթապահը:

-Երեկ,- ասաց «Տաշը» և ցույց տվեց լուսանկարը:

-Հասկանալի է, հարգելի քաղաքացի,- ասաց հերթապահ սպան,- օրենքով պետք է երեք օրը լրանա, որից հետո միայն դուք կարող եք հայտարարություն տալ ձեր աղջկա անհետացման մասին: Բայց քանի որ դուք Սիսակավան եք գնալու, հիմա կարող եք հայտարարություն տալ ձեր աղջկա անհետացման մասին: Լուսանկարը թողեք մեզ մոտ: Գրեք ձեր տան հասցեն, հեռախոսի համարը: Մենք ձեզ տեղյակ կպահենք արդյունքի մասին:

«Տաշը» գրեց իր տնային հասցեն, անունը, ազգանունը, հեռախոսի համարը և լուսանկարի հետ տվեց հերթապահ սպային: Դրանից հետո նա շտապ դուրս եկավ ոստիկանությունից: Ինքն ու վարորդը մոտեցան ավտոմեքենային: «Տաշը» հանեց սիգարետը սկսեց ծխել՝ վարորդին ասելով.

-Մենք այստեղ այլևս անելիք չունենք, պետք է շտապ մեկնել Սիսակավան:

Ճանապարհ ընկան: Ամբողջ ճանապարհին «Տաշը» չէր խոսում, բայց մտքում հազար ու մի բան էր մտածում: Նա հատկապես կանգ էր առնում այն մտքի վրա, որ կարող է՝ աղջկան փախցրել են նրա հետ ամուսնանալու նպատակով: Բայց եթե այդպես է, ապա ինչո՞ւ այդ մասին տեղյակ չէն պահում ծնողներին: Իսկ եթե այդպես չէ, ապա ուրիշ ի՞նչ կարող է պատահած լինել: «Տաշի» մտքով նաև սարսափելի բաներ էին անցնում: Իսկ եթե նրան սպանե՞լ են... Տուն հասնելուն պես «Տաշը» իրեն գցեց տուն և կնոջը հարցրեց.

-Ոչ ոք չի՞ զանգել:

-Ոչ մեկը,- ասաց Անանն՝ բարձր հեծկլտալով:

Եվ այդպես էլ երկար ժամանակ Գայանեի մասին ոչ մի լուր: Աղջիկը խորհրդավոր պայման- ներում անհետ կորել էր, կարծես իսկի չէր էլ եղել:

Եվ այսպես անցավ երեք ամիս:

Երեք ամիս շարունակ ողբում էին ծնողները իրենց կորցրած աղջկա համար: Բայց ահա մի օր առավոտյան հեռախոսը երկար զնգաց: Ընկալուչը վերցրեց «Տաշը»:

-Լսում եմ:

-Պարոն Բեգլարյան, ձեզ զանգում են Սիրոգ քաղաքի ոստիկանությունից,- ասաց անծանոթ մի ձայն,- դուք կարո՞ղ եք գալ մեզ մոտ՝ Սիրոգի ոստիկանատուն:

-Ի՞նչ է եղել, ինչի՞ համար, ի՞նչ է պատահել, խնդրում եմ ասեք,- իրար վրա հարցրեց «Տաշը»:

-Խնդիրը ձեր աղջկա անհետանալու հետ է կապված, պիտի գնաք դիահերձարան, առայժմ անհայտ մի աղջկա ինքնությունը պարզելու համար: Գուցե ձեր աղջիկն է...

«Տաշի» ձայնը դողաց հեռախոսի մեջ:

-Մինչև մեկ ժամը ձեզ մոտ կլինեմ,- և ձեռքը դրեց սաստիկ տրոփող սրտի վրա:

Նա այդ մասին տանը ոչինչ չասաց: Չցանկացավ ավելորդ աղմուկ ստեղծել: Վեր կացավ գնաց իր եղբոր՝ Սաքոյի մոտ, հարազատ է, մի խորհուրդ կտա: Սաքոն տանն էր: Առանց նստելու «Տաշն» ասաց.

-Վեր կաց, հենց հիմա գնում ենք Սիրոգ:

-Ինչո՞ւ,- հարցրեց Սաքոն՝ զարմացած եղբոր անսպասելի առաջարկից,- ի՞նչ կա Սիրոգում, ինչո՞ւ այդպես հանկարծ...

-Նստի՛ր ավտոմեքենան, ճանապարհին կասեմ,- կարճ կտրեց «Տաշը»:

Սաքոն հասկացավ միայն, որ ինչ-որ կարևոր բան է պատահել, գնաց և նստեց ավտոմեքենան: «Տաշը» նստեց ավտոմեքենայի ղեկին և ուղղությունը վերցրեցին դեպի Սիրոգ:

Սաքոն չհամբերեց, հարցրեց.

-«Տաշ», դե հիմա ասա, թե ինչու ենք գնում Սիրոգ:

-Հասկանո՞ւմ ես, Սաքո, ինձ կանչել են Սիրոգ քաղաքի ոստիկանությունից: Պիտի գնանք դիահերձարան: Այնտեղ անծանոթ աղջկա դիակ կա: Պիտի պարզենք, գուցե...

Ամեն ինչ հասկանալի էր: Ամբողջ ճանապարհին երկու եղբայրներն այլևս ոչ մի խոսք չփոխանակեցին իրար հետ:

Հասան Սիրոգ, Ներկայացան ոստիկանություն:

-Բարև ձեզ,- ասաց «Տաշը» հերթապահ սպա ոստիկանին,- մենք Սիսակավանից ենք եկել, պիտի գնանք դիահերձարան, դուք էք զանգել, որ...

-Այդ մասին տեղյակ եմ, բայց սպասեք զանգեմ կապիտան Սարգսյանին, նա է զբաղվում այդ գործով:

-Պարոն Սարգսյան, հերթապահն է խոսում, Սիսակավանից եկել են, ուզում են գնալ դիահերձարան, ի՞նչ ասեմ նրանց:

-Թող բարձրանան ինձ մոտ,- ասաց կապիտան Սարգսյանը:

«Տաշը» և Սաքոն բարձրացան երկրորդ հարկ, մտան կապիտան Սարգսյանի աշխատասենյակը: Կապիտանը ներս մտնողներին հրավիրեց նստելու և ասաց.

-Հիմա գնալու ենք դիահերձարան, ես ձեզնից խնդրում եմ սառնասիրտ լինել: Առայժմ հայտնի չէ, թե ում դիակն է, բայց հանկարծ, եթե ձեր աղջկա դիակը լինի, պահեք ձեզ տղամարդու նման:

-Հասկանալի է,- շունչը տեղը բերելով ասաց «Տաշը»:

-Ուրեմն՝ գնացինք,- ասաց կապիտանը՝ հետը ինչ-որ թղթեր վերցնելով:

-Մեր մեքենայով գնանք,- առաջարկեց «Տաշը»:

Կապիտանը նստեց Արտաշես Բեգլարյանի ավտոմեքենան:

Հիվանդանոցի բակում կանգ առան: Կապիտանի առաջարկությամբ մտան դատական բժշկի մոտ:

-Բարև ձեզ, բժիշկ Ոսկանյան,- ասաց կապիտանը,- ինչպե՞ս են գործերը:

-Բարև, կապիտան, բարև տղաներ,- ասաց բժիշկը և պատասխանեց,- գործերը նույնն են, ոչինչ չի փոխվել:

-Մենք եկել ենք դիակը ճանաչելու գործով,- և ցույց տալով իր հետ եկած քաղաքացիներին՝ ասաց,- տղաները եկել են Սիսակավանից, դուք էլ կգա՞ք մեզ հետ չէ՞:

-Իհարկե, հիմա կգնանք,- հանգիստ ասաց բժիշկ Ոսկանյանը՝ գործին տեղյակ մարդու փութաջանությամբ, հետո դիմեց «Տաշին» ու նրա եղբորը,- եթե հանկարծ ձեր հարազատը լինի, խնդրում եմ, ձեզ հանգիստ կպահեք:

Չորսով գնացին դիահերձարան, մտան մահասենյակ: Այստեղ մի քանի դիակներ կային՝ սպիտակ սավաններով ծածկված:

-Բացեք երիտասարդ աղջկա դեմքը,- ասաց բժիշկ Ոսկանյանը՝ դիմելով աշխատողին, որն ամենայն հավանականությամբ դիահերձողն էր, որ պատրաստ կանգնած սպասում էր բժշկի կարգադ-

րումներին: Վերջինս դանդաղ մինչև գոտկատեղը բացեց քաշեց դիակը ծածկող սավանը: Դիակի դեմքը բացվեց: Արտաշես Բեգլարյանը զսպված վարանմունքով մոտեցավ դիակին և իսկույն ետ-ետ գնաց: Նրա դիմաց իր աղջիկ Գայանեն էր: Թեկուզ դեմքի սպին խանգարում էր մինչև վերջ ճանաչել մեռածին, բայց Արտաշես Բեգլարյանը համոզված էր , որ դա իր աղջիկն է: Հոր գլուխը պտտվեց, աղջկան տեսնելով՝ դողաց ամբողջ մարմնով, ակամա արցունքներ հորդեցին նրա աչքերից: Սաքոն վախի՞ց, թե՞ սոսկումից չէր կարողանում մոտենալ դիակին: Նա էլ իր հերթին էր ճանաչել եղբոր աղջկան: Արտաշեսը ամբողջովին համոզվելու համար խնդրեց բացել աղջկա ոտքերը: Նա հիշում էր, որ Գայանեի ձախ ոտքի վրա սպի կար, որ առաջացել էր հեծանիվից ընկնելու պատճառով: Ուզում էր տեսնել, սպի կա՞ Գայանեի ոտքի վրա, թե չէ: Դիակի ոտքերը բացեցին: Արտաշեսը տեսավ սպին և ակամա ճչաց: Այլևս ոչ մի կասկած չկար, որ դա իր աղջիկն է, իր սիրելի Գայանեն: Ամեն ինչ պարզ էր նաև մյուսների համար:

Դուրս եկան դիահերձարանից: Արտաշեսը երեխայի պես լաց էր լինում: Գնացին դատական բժշկի մոտ: Վերջինս հարազատներին ստորագրել տվեց կազմված արձանագրությունը և ասաց, որ վաղը հիվանդանոցի «Շտապ օգնության» մեքենայով դիակը կտարվի Սիսակավան: Արտաշեսին և Սաքոյին մնում էր տուն վերադառնալ: Ավտոմեքենայի ղեկին նստեց Սաքոն: Արտաշեսն անկարող էր վարել ավտոմեքենան: Ճանապարհի աղբյուրի մոտ Արտաշեսը խնդրեց կանգ առնել:

Արտաշեսն իջավ մեքենայից, կռացավ աղբյուրի վրա, մի քանի կում ջուր խմեց, լվացվեց, վառեց սիգարետը և սկսեց սիգարետ ծխել: Սաքոն չգիտեր՝ եղբորն ինչ խոսքերով մխիթարեր, ուստի լռում էր:

Երկու ժամ հետո ավտոմեքենան մտավ Սիսակավան: Մոտենալով տանը՝ Արտաշեսը Սաքոյին ասաց.

-Սաքո՛, հիմա ինչ՞ ենք ասելու Ամնային, ինչպե՞ս ենք ասելու, որ նա հանկարծակիի չգա:

-«Տաշ» ջան, դա ես էլ չգիտեմ, ես չեմ կարող:

-Բայց բոլոր դեպքերում այդ մասին նրան պիտի ասվի չէ՞,- նեղսրտվեց Արտաշեսը:

Իջան ավտոմեքենայից: Արտաշեսը, ոտքերը քարշ տալով, շարժվեց դեպի տուն: Տանն անսովոր լռություն էր: Ասես ներսում մարդ չկար: Մտավ խոհանոց: Գիտեր, որ կինն այստեղ կլինի: Եվ իրոք, Ամնան խոհանոցում էր: Սուրճ էր պատրաստում: Հյուրասենյակից ձայներ հասան ականջին: Զգաց, որ տանը հյուրեր կան: Նրանք զրուցում էին անաղմուկ, ցածրաձայն: Արտաշեսը սևեռուն նայեց կնոջը, մոտեցավ և քնքշորեն գրկեց նրա ուսերը.

-Ո՞նց ես Ամնա ջան:

-Նույնն եմ էլի, «Տաշ», սրանից հետո ինչ պիտի փոխվի,- տխրաշեշտ ասաց ու ավելացրեց,- տեսնում ես էլի՝ հյուրերի համար սուրճ եմ պատրաստում:

-Լավ ես անում, ուզեց ժպտալ, չստացվեց, միայն ասաց,- ես սուրճի ախորժակ չունեմ, տար թող հյուրերը խմեն, ես բարձրանամ վերև, ուզում եմ մի քիչ մենակ մնալ:

Ամնան զարմանքով նայեց ամուսնուն, ուզեց առարկել, բայց չհասցրեց: Արտաշեսն արդեն գնացել էր: Սաքոն լուռ նստած էր մնացել ավտոմեքենայում: Չգիտեր ինչ անել: Իջնե՞լ, թե չիջնե՞լ ավտոմեքենայից: Վերջապես որոշեց իջնել և մտնել տուն, գուցե և տեսներ Ամնային: Մտավ Ամնայի մոտ:

-Բարև, Ամնա,- ուզում էր որևէ բան ասել, բայց չասաց, անվստահ ու մոլորված պես բարձրացավ երկրորդ հարկ Արտաշեսի ետևից: Անցավ կես ժամ: Այլևս համբերել չէր կարելի: Արտաշեսը որոշեց կնոջն ամեն ինչ ասել: Ուրիշ ելք չկար: Իջավ հյուրասենյակ, որտեղ կանայք նստած սուրճ էին խմում:

Արտաշեսը խոսքը հեռվից սկսեց: Ասաց, որ ինքն ու Սաքոն գալիս են Սիրոգ քաղաքից: Գնացել են դիահերձարան: Այստեղ երկար սպասելուց և տխուր հոգոց-հառաչանքից հետո կարողացավ ասել, որ ինքն ու Սաքոն մի քանի դիակների մեջ ճանաչել են Գայանեի դիակը:

Տանը ոնց որ միանգամից ռումբ պայթի: Լսելով Գայանեի դիակի մասին՝ Աննան ճչաց ու ուշաթափ ընկավ հատակին: Նրա դեմքին ջուր ցողեցին: Աչքերը մի պահ բացեց, գիտակցությունը մի քիչ տեղը եկավ, նա նորից ուշաթափվեց: «Շտապ օգնություն» կանչեցին նրան ուշքի բերելու համար:

Հաջորդ առավոտյան բերեցին Գայանեի դիակը:

Ամբողջ Սիսակավանը հավաքվել էր Արտաշես Բեգլարյանի տանը:

Տանը, բակում, մոտակա փողոցում ասեղ գցելու տեղ չկար: Այդ փոքրիկ քաղաքում Արտաշես Բեգլարյանին բոլորը ճանաչում և հարգում էին: Նա իր հարազատ քաղաքի սիրված ու գնահատված մարդկանցից մեկն էր: Կինը՝ Աննան էլ շատ հարգված անձնավորություն էր, նրանց երեխաներն էլ կրթված ու դաստիարակված մարդիկ էին: Ամբողջ քաղաքը ցավում էր Գայանեի դաժան վախճանի համար: Հուղարկավորությունը տեղի ունեցավ հաջորդ օրը հազարավոր սգավորների մասնակցությամբ:

Թաղմանը ներկա էին նաև Գայանեի դպրոցական ընկերները, բոլոր մանկավարժները: Թաղումից երկար ժամանակ հետո էլ Արտաշես Բեգլարյանը, նրա ընտանիքը, հարազատներն ու բարեկամները, ծանոթ ու անծանոթ, ընկեր ու հարևան երկար ժամանակ սգի մեջ էին:

Արտաշեսը համարյա աշխատանքի չէր գնում, ամբողջ օրը առանձնանում էր մարդկանցից, մոռածում և իրար վրա ծխում: Առանձնապես ուշքի չէր գալիս տիկին Աննան: Նա չէր կարողանում հաշտվել կատարվածի հետ: Գայանեի մասին դեռ ոչինչ հայտնի չէր,

նա էլի հույս ուներ, որ աղջիկը կենդանի է, իսկ այժմ նրա հույսի բարակ թելն էր ընդմիշտ կտրվել էր:

-Գայանեի մահվան քառասուն օրը նշվեց տխրությանը հատուկ պատշաճ մակարդակով: Դարձյալ մեծ թափորով գնացին գերեզմանատուն: Լուռ խոնարհվեցին Գայանեին շիրիմի առջև, ծաղիկներ դրեցին: Եռ դարձին բոլորի առջև Արտաշես Բեգլարյանը անսպասելի խոստացավ.

-Ով գտնի Գայանեիս սպանող գազանին, ես նրան երեսուն հազար դոլար եմ խոստանում:

Ժամը տասնմեկին, երբ մութն արդեն լրիվ ընկել էր, Վահանն ու Արմանը շարժվեցին դեպի Հարությունի Մարգարյանի «ֆազենդան»: Դարպասների մոտ կանգ առան: Դարբասի հետևից շունն անընդհատ հաչում էր: Վահանը երկու քնաբեր հաբ դրեց երշիկի մի կտորի մեջ, և դարբասի մետաղյա ճաղերի արանքից նետեց շան առաջ: Մի քանի րոպե հետո շունն այլևս չէր հաչում: Վահանը ճաղերի արանքից նկատեց, որ շունը հանգիստ պառկել է գետնին: Հանկարծ առանձնատան դռների մեջ երևաց Հարութի կերպարանքը: Ըստ երևույթին շան լռությունը նրան կասկածելի էր թվացել: Նայեց չորս կողմը, նայեց դեպի դարպասը և կասկածելի ոչինչ չգտնելով նորից մտավ իր առանձնատունը:

Հինգ-տասը րոպե սպասելուց հետո Վահանն ու Արմանը զգուշությամբ բարձրացան դարպասի գլուխը և այնտեղից նույն զգուշությամբ էլ իջան գետնի վրա: Նրանք արդեն «ֆազենդայի» տարածքում էին: Ծառերի տակով նրանք աննկատ մոտեցան ա-ռանձնատունը: Վահանը նայեց պատուհանից ու քիչ հետո անզգու-շաբար ճչաց.

-Վա՛յ ես քու մերը...

Արմանը բոթեց Վահանին և զարմացած շշնջաց.

-Ի՞նչ է պատահել:

-Արի պատուհանից նայիր, կիմանաս,- կամաց ասաց Վահանը:

Այն ինչ տեսավ Արմանը ուղղակի սարսափելի էր: Բոլորովին մերկ մի աղջիկ, ոտքերն ու ձեռքերը կապած, բերանն էլ լաթի մի կտոր խցկած, մեջքի վրա պառկած էր մահճակալին: Այդ պահին նրա մոտ ոչ ոք չկար: Աղջիկը կապանքների մեջ տանջվում էր: Արմանի ձեռքերը բարկությունից բռունցք դարձան, չռված աչքերը կարծես դուրս պիտի թռչեին ակնակապիճներից և նա ակամա փորձեց ճչալ: Վահանն իսկույն ձեռքը դրեց նրա բերանին՝ հասկացնելով, որ խոսել չի կարելի: Մի քանի րոպե այդպես սպասեցին: Վահանը , հասկացրեց Արմանին, որ պետք է ներս մտնեն: Դա չափազանց ռիսկով որոշում էր, բայց ուրիշ ելք չկար: Շատ հավանական է, որ Հարութն իր եղբոր հետ է: Եթե այդպես է, ապա Վահանն զբաղվելու է Հարութի հարցով, իսկ Արմանը ձերբակալելու է նրա եղբորը՝ Գրիգորին:

Վահանն ու Արմանը հանեցին ատրճանակները և գլխներից վեր պահած՝ ոտքի հարվածով բացեցին դուռը ու ներս մտան: Առաջինը նկատեցին Հարութի եղբայր Գրիգորին, որ մեջքով նստած էր պատուհանի մոտ: Դռան հետևում նստած էր Հարութը: Երկուսն էլ, կիսամերկ նստած, հեռուստացույց էին նայում:

-Տեղներիցդ չշարժվեք և չփորձեք դիմադրել,- գոռաց Վահանը,- թե չէ երկուսիդ գանգն էլ կփշրեմ: Հարութ, դու լավ գիտես, որ ես կրակում ու չեմ վրիպում: Արմանը, ատրճանակը առաջ պարզած, կանգնեց Գրիգորի հետևում: Վահանի ուշադրությունը Հարութի վրա էր:

Այս ամենն այնքան արագ ու հանկարծակի կատարվեց, որ Հարութն ու իր եղբայրը, անակնկալի եկած, չկարողացան որևէ բան ձեռնարկել: Նրանց մնում էր հանձնվել:

-Այժմ երկուսդ էլ դանդաղ հագնվում եք և դանդաղ էլ դուրս եք գալիս շենքից,- կարգադրեց Վահանը:

Հարությունն Մարգարյանն ամբողջ մարմնով դողում էր: Նա շատ լավ հասկանում էր, որ իր և իր եղբոր վերջը եկել է: Նա այդ վիճակից դուրս գալու հնար էր մտածում, նույնիսկ մտածում էր հարձակվել Վահանի վրա: Փրկության ինչ-որ հեռավոր հույսով նա սպասում էր հարմար պահի: Վերնաշապիկը վրան քաշելուց հետո նա նայեց Վահանին և աղերսագին խնդրեց.

-Թույլ տու՛ր, շալվարս էլ հագնեմ:

-Առանց ավելորդ շարժումների,- խստորեն կարգադրեց Վահանը,- դանդաղ վերցնում ես շալվարդ և հագնում, չփորձես ուրիշ բան մտածել թե չէ երկուսիդ էլ կսատկացնեմ,- կարգադրեց Վահանը:

Հարությունը ամոթի վրայից դանդաղ վերցրեց շալվարը և աճպարարի արագությամբ այն շպրտեց Վահանի այն ձեռքին, որով բռնած էր ատրճանակը: Վահանը մի պահ շփոթվեց: Հենց այդ պահն օգտագործելով՝ Հարությունը նետվեց Վահանի վրա և հասցրեց ուժգին հարվածել նրա ձեռքին: Վահանի ձեռքից ատրճանակն ընկավ: Արմանը թեքվեց դեպի Վահանը, որ տեսնի նրա հետ ինչ է կատարվել, հենց այդ պահին նա դեմքին ստացավ Գրիգորի հուժկու հարվածը: Արմանը ետ-ետ գնաց, Գրիգորը հասցրեց երկրորդ հարվածը: Արմանն այս անգամ կորցրեց հավասարակշռությունը և ընկավ հատակին: Գրիգորը սեղանի վրայից վերցրեց դանակը և հարձակվեց Արմանի վրա: Նա Արմանից և՛ չաղ էր, և՛ բոյով: Բոլոր դեպքերում ֆիզիկական առավելությունը Գրիգորի կողմն էր: Նա մոտեցավ Արմանին և փորձեց դանակը խրել նրա որովայնը, Արմանը հասցրեց թեքվել մի կողմի վրա: Դանակի հարվածը նպատակին չհասավ: Արմանը միայն մի փոքր վիրավորվել էր ձախ ուսից: Վերքից արյուն էր ծորում: Արմանը, ուշադրություն չդարձնելով դրան, ուզում էր մի կերպ ազատվել Գրիգորի ճանկերից՝ համոզված լինելով, որ նա ֆիզիկապես ավելի ուժեղ է իրենից: Ճիգեր էր գործադրում մի կարծր ա-

ռարկա գտնել և դրանով հարվածել Գրիգորի գլխին: Առայժմ դա նրան չէր հաջողվում: Մենամարտը շարունակվում էր:

Ահեղ մենամարտ էր տեղի ունենում նաև Վահանի և Հարումի միջև: Հարումը, տեսնելով, որ ատրճանակը ընկել է հատակին, ոգևորված հարձակվեց Վահանի վրա: Վահանին հաջողվեց ձախ ձեռքով Հարումին կողային հարված հասցնել: Հարումը հասցրեց բռնել Վահանի օձիքից: Վահանը հարվածեց նրա մռումին, բայց հարվածը թույլ ստացվեց: Հարումը երկու ձեռքով կառչեց Վահանի կոկորդից և փորձեց խեղդել նրան:

Գրիգորին հաջողվեց հարվածել Արմանի ոտքերին և բռնեց նրան: Արմանն ընկավ հատակին, Գրիգորն ընկավ նրա վրա և բռնեց նրա կոկորդը:

Վահանը զգում էր, որ ուժասպառ է լինում: Եթե այդպես շարունակվեր, Հարումն անկասկած հաղթանակ կտաներ: Հարումի չռված ձեռքերը ամուր օղակել էին Վահանի կոկորդը: Վահանը մի վայրկյան զգաց, որ խեղդվում է: Մոտալուտ մահվան զգացողությունը ուժ տվեց նրան: Վահանը հավաքեց վերջին ուժերը, երկու ձեռքով հարվածեց Հարումի ականջին: Հարվածն այնքան ուժեղ էր, որ հակառակորդը ցավից գոռաց, երերաց ու տեղում չդեգեց: Նրա ականջներից ու քթից արյունը հոսեց: Վահանը պահը չկորցրեց, այս անգամ արմունկով հուժկու հարված հասցրեց Հարումի մեջքին: Հարումն անզոր փռվեց հատակին: Վահանը գոտկատեղից հանեց ձեռնաշղթան և ամուր շղթայեց Հարումի ձեռքերը: Նա, Հարումին թողնելով այդպես գետնին պառկած, նետվեց դեպի Արմանը: Վահանը հասավ ճիշտ ժամանակին: Գրիգորն արդեն փորձում էր դանակով մորթել Արմանին, իսկ Արմանը վերջին ուժերով հաղիվ էր կարողանում բռնած պահել Գրիգորի ձեռքը: Վահանը ոտքով ուժգին հարվածեց Գրիգորի գլխին, վերջինս կծկվեց ու գալարվեց հատակին: Վայրկյան անց Գրիգորն էլ արժանացավ իր եղբոր ճակա-

տագրին: Վահանը ու Արմանը հոգնած ու ուժասպառ հանգիստ շունչ քաշեցին և նստեցին իրար կողքի:

-Վահա՜ն, դու չգիտեմ, բայց ես մահից հազիվ պրծա: Երկրորդ բաժակը չպիտի խմեի,- գլուխն օրորելով ասաց Արմանը:

-Ի՞նչ երկրորդ բաժակ,- չհասկացավ Վահանը,- կարո՞ղ է՝ ինձնից թաքուն մի բաժակ էլ ես խմել:

-Մեղքս ինչ թաքցնեմ, հենց այդպես էլ եղել է, Վահան: Հենց իմացա, որ պիտի գանք էս մանյակների մոտ, քաջությունն հավաքելու համար երկրորդ բաժակն էլ խմեցի,- ինքնախարազանման նման ասաց Արմանը:

Հարևան սենյակից, որտեղ թողել էին աղջկան, տնքոցի ձայներ լսվեցին: Տեղներից վեր թռան ու գնացին աղջկան տեսնելու:

Աղջկան տեսան նույն վիճակում՝ ձեռքերը, ոտքերը և բերանը կապած, մահճակալի վրա ընկած: Արմանը վերցրեց Գրիգորի դանակը և կտրեց աղջկա կապանքները:

-Վտանգն արդեն անցել է, քույր ջան, դուք արդեն ազատ եք,- ասաց Վահանը:

Աղջիկն սկսեց հոնգուր-հոնգուր լաց լինել, հայտնի չէ, ուրախությունից, թե տխրությունից:

-Հիմա մենք դուրս գանք,- Վահանը դիմեց Արմանին,- թողնենք, որ աղջիկն ազատ շորերը հագնի:

Վահանն ու Արմանը Հարությի և Գրիգորի կապերը նորից ստուգեցին, համոզվեցին, որ նրանք ամուր կապված են, սենյակից դուրս եկան:

Վահանն ավտոմեքենայի բանալին տվեց Արմանին:

-Գնա ավտոմեքենան քշի՛ր բեր տան մոտ, հարկավոր է այս ավազականոցից որքան հնարավոր է շուտ դուրս գալ:

Արմանը գնաց ավտոմեքենայի ետևից և, շատ չանցած, ավտոմեքենայով եկավ ու կանգնեց «Ֆազենդայի» դիմաց:

Վահանը գնաց աղջկա մոտ: Աղջիկը, պատռված շորերը հագին, կանգնեց նրա դիմաց: Նա շարունակ լաց էր լինում:

-Գնացինք, քույրիկ ջան, միայն խնդրում եմ լաց մի եղեք, չէ՞ որ ամեն ինչ անցել է արդեն,- երևում է, որ աղջկան ծեծել էին, շատ էին չարչարել: Նա հազիվ էր կարողանում քայլել:

-Այս մարդասպանները կնստեն մեքենայի ետնամասում,- Վահանը դիմեց աղջկան,- իսկ դուք կնստեք առջևի նստատեղում վարորդի կողքին:

Արմանն ու Վահանը հանցագործներին լիքը պարկի նման շպրտեցին ավտոմեքենայի մեջ: Արմանը նստեց նրանց կողքին:

Ավտոմեքենան քշում էր Վահանը:

Մի քանի կիլոմետր անցնելուց հետո Վահանը շուռ եկավ դեպի աղջիկը և հարցրեց.

-Կներեք, ձեր անունն ի՞նչ է:

-Անունս Քրիստինե է,- տխրաշեշտ պատասխանեց աղջիկը:

Վահանն իր կուրտկան հանեց և տվեց աղջկան, որ մարդիկ նրան ճղճղված շորերով չտեսնեն: Ձերբակալվածները լուռ էին և հանկարծ Հարումը խոսեց.

-Մեզ տանում եք ոստիկանությո՞ւն...

-Չէ,- քամահրեց Վահան Դարբինյանը,- ձեզ տանում ենք գիտաժողովի կամ... դատախազության աշխատողների պլենում է, գնում եք մասնակցելու, առանց ձեզ ո՞նց կլինի...

Բայց զարմանալի ինքնավստահությամբ հնչեցին Հարումի խոսքերը: Վահան Դարբինյանը դրանում համոզվեց, երբ Հարումը շարունակեց իր միտքը՝ զարմանալի հանգիստ և անվրդով.

-Գիտես ինչ,- ասաց նա,- ես ինքս եմ ուզում կամավոր հանձնվել Սիրոգի ոստիկանությանը:

-Էդ ինչո՞ւ,- ծիծաղեց Վահանը:

-Վահան Դարբինյան,- շարունակեց Հարումը,- ես զարմանում եմ քո միամտության վրա:

Վահանն զգաց Հարութի խոսքերի մեջ թաքնված ծաղրը: Նա բարկացավ ինքն իր ներսում. «Սա ի՞նչ հանելուկ: Ինչո՞ւ է նա այդ-քան ինքնավստահ, չեմ հասկանում» մտածեց նա, շուռ եկավ և անտրտունջ սրիկայի երեսին շպրտեց հետևյալ խոսքերը.

-Դու հանցագործ ես և բռնվել ես հանցագործություն կատարելու պահին: Դու պատասխան պիտի տաս քո հանցագործություն-ների համար:

Հարութը քմծիծաղեց.

-Ախր ինչպես գլխի չես ընկնում, որ դու այսօր ինձ կհանձնես ոստիկանություն, իսկ վաղը պարոն Նազարյանը ինձ ազատ կարձակի:

Վահանը չկարողացավ ատելությունը զսպել, ասաց.

-Այդ դու ես այդպես կարծում և քեզ նման բոլոր սրիկաները, իսկ ես կարծում եմ, եթե ոչ այսօր, ապա վաղը, մյուս օրը, թեկուզ մի տարի հետո քո այդ Նազարյանն էլ կստանա իր արժանի պատի-ժը:

-Դու, Վահան Դարբինյան, չես կարող ապացուցել, որ ես հան-ցագործ եմ,- լեզուն ծամելով քմծիծաղեց Հարութը:

-Այդ ինչպե՞ս,- ճչաց Վահանը,- չէ՞ որ դրա համար կենդանի վկա ունենք: Ահա այս աղջիկը, որ ճղճղված շորերով նստած է իմ կողքին:

-Այդ աղջիկը երբեք վկայություն չի տա, ես դրանում համոզված եմ,- իր եզրակացությունն արեց Հարութը,- չէ՞ որ վկայություն տալու դեպքում ամուսինն այլևս նրան տեր չի կանգնի, ինքն էլ ողջ Երևանում կխայտառակվի, մատի փաթաթան կդառնա, այդպես չէ՞ քոյր ջան:

Քրիստինեն չպատասխանեց, միայն սկսեց լաց լինել:

-Քեզ ո՞վ ասաց, որ նա կհրաժարվի վկայություն տալուց: Չէ՞ որ դու նրան դժբախտացրել ես, խորտակել ես նրա երջանկությու-նը, ոտնատակ տվել ես նրա մարդկային արժանապատվությունը:

Երեք-չորս այդպիսի աղջիկների մահվան պատճառ ես դարձել: Եվ այդքանից հետո փոխանակ փտես բանտում, ուզում ես ջրից չոր դուրս գալ: Դու գնդակահարության ես արժանի , անուղղելի սրիկա:

-Փոխանակ անտեղի հոխորտանքներ թափես իմ գլխին,- շարունակեց չարախնդալ Հարությունը,- Վահան Դարբինյան, հիմա հարցրու քո այդ ընկերուհուն, տես վկայություն կտա՞, թե՞ ոչ:

Համոզված լինելով, որ Քրիստինեն չի հրաժարվի վկայություն տալուց և կօգնի հանցագործությունը արագ բացահայտելու, Վահանը վստահորեն շուռ եկավ դեպի Քրիստինեն և ասաց.

-Քրիստինե ջան, այսօր մենք գնալու ենք ոստիկանություն, և դուք մանրամասն բացատրություն պիտի տաք կատարվածի մասին: Վերջապես հարկավոր է պարզել այս սրիկայի իրական դեմքը: Հը՛, ի՞նչ ես ասում, Քրիստինե:

Քրիստինեն, լացը հազիվ զսպելով, ասաց.

-Ես չեմ կարող վկայություն տալ: Հասկացեք ինձ: Խայտառակ կլինեմ ամբողջ Երևանում և մեր Եղեգնաձորի շրջանում: Ամուսինս կբաժանվի ինձանից, ես կզրկվեմ իմ երեխայից: Խնդրում եմ ձեզ, ինձ մի տարեք ոստիկանություն:

Վահանն այդպիսի պատասխանի չէր սպասում: Դա անակնկալ էր: Նա ապշել էր Քրիստինեի անտարբերությունից: Մի աղջիկ, որին սրիկայաբար առևանգել էին ու պատվազրկել, չպետք է հանդուրժեր կատարվածը: Փոխանակ վրեժխնդիր լինելու, մինչև վերջ լկտի ու անպատկառ մեկի դեմ պայքարելու, հաշտվում է ստեղծված վիճակի հետ: Քրիստինեի պահվածքը Վահանին շատ զայրացրեց: Նա հիասթափված, թևաթափ եղած էր զգում իրեն: Իսկ սրիկան իրեն հաղթանակած էր զգում: Վահանը տեսնում էր՝ ինչպես են ուրախությունից փայլում Հարությունի բորենու աչքերը:

-Մարդկանց լավ չես ճանաչում, պարոն Դարբինյան,- անթաքույց քամահրանքով ասաց Հարությունը,- ես քեզ ասում էի չէ՞, որ

կհրաժարվի վկայությունն տալուց, իսկ դու ինձ չէիր հավատում: Համարիր, որ վկա չունես, ո՞նց կապացուցես, որ ես հանցագործ եմ: Ոչ ոք քեզ ու քո ընկերոջը չի հավատա: Լավ կանես, ինձ ազատես, հանգիստ գնամ մեր տունն: Տանես ոստիկանություն, մեկ է՝ Նազարյանը ինձ տեղն ու տեղը ազատելու է:

Դարբինյանը ոչինչ չպատասխանեց: Նա իր մտքերի հետ կռիվ էր տալիս: «Արժե՞ սրանց տանել Սիրոգի ոստիկանություն,- մտածում էր նա,- էդ սրիկան ճիշտ է ասում: Չէ՞ որ այնտեղ մի ուրիշ սրիկա էլ կա՝ Նազարյան է, ինչ է: Իսկ սրիկան սրիկային շատ լավ կհասկանա: Էդ Նազարյանն առանց որևէ քննության ազատ կարձակի սրանց, մեջտեղ ես մեղավոր կդառնամ, այո՛, այո, ինձ կմեղադրեն զրպարտության քողի տակ... ուրեմն ի՞նչ անեմ: Չէ՛, չարժե Սիրոգ գնալ»: Վահան Դարբինյանը, որոշում կայացնելով, մեքենան արագ շուռ տվեց Խափոնարխի ճանապարհից դեպի Երևան:

Բոլորից շուտ դա Հարությունը նկատեց և անհանգստությունը թաքցնելով ասաց.

-Ի՞նչ է, բա՞ն ես մոռացել, Դարբինյան, թե՞ ճանապարհն ես շփոթել:

Քամահրելու հերթն արդեն Վահանինն էր: Ավտոմեքենայի արագությունն ավելացնելով նա ոչ թե խոսեց, այլ բառերը մի տեսակ շպրտեց ատամների արանքից.

-Չէ՛, ոչինչ էլ չեմ մոռացել: Ես շատ լավ գիտեմ, թե ուր եմ գնում, ուղղակի որոշեցի Սիսիակավան գնալ, որ քեզ Սիրոգի ոստիկանություն հանձնելու փոխարեն հանձնեմ պարոն Արտաշես Բեգլարյանին:

-Էդ Բեգլարյանն ո՞վ է,- չհասկացավ Հարությունը:

-Էդ Բեգլարյանը,- դանդաղ ու հատ-հատ ասաց Վահանը.-- Սիսիակավանում հարգված գործարար «Տաշն» է, իմացա՞ր՝ «-Տաշն» այն մարդն է, որի աղջկան բռնաբարել և ապա գազանաբար սպանել են: Նա այդպիսի մարդու երբեք չի ներ, և քեզ կուղարկի էն

աշխարհը, պարոն մարդասպան: Նա իր աղջկան սպանողին հայտնաբերող մարդուն հո իզուր չէ երեսուն հազար դոլար խոստացել:

-Կանգնեցրու, կանգնեցրու ավտոմեքենան,- հանկարծ գոռաց Գրիգորը, որ մինչ այդ ընդհանրապես չէր խոսել,- քեզ ասում եմ ավտոմեքեան կանգնեցրու:

Վահանը թեկուզ հետաքրքրության համար կանգնեցրեց ավտոմեքենան ու հետ նայեց դեպի Գրիգորը և ասաց.

-Ինչ է, քեզ դուր չեկա՞վ, որ Սիրոգ չենք գնում: Ինչո՞ւ այդպես հանկարծ վախեցար:

-Ես ուզում եմ ասել,- կմկմաց Գրիգորը,- իզուր ես գնում Սիսակավան: Ուզում եմ ասել, որ էդ Բեգլարյանը երեսուն հազար դոլար է խոստացել, ես քեզ հիսուն հազար կտամ: Եթե կուզես, մի քիչ էլ ավել կտամ, միայն խոստացիր, որ մեզ բաց կթողնես: Արի քո հիսուն հազարից մի հրաժարվիր, դա այնքան էլ քիչ փող չէ:

-Ձե՞նդ կտրիր,- ճչաց Հարությը,- ի՞նչ փողի մասին ես խոսում: Մենք փող չունենք տալու ամեն մի ուզողի: Առանց փողի էլ մեր դեմը խաղ չկա:

-Դու ձենդ կտրիր,- երևի առաջին անգամ եղբորն առարկեց Գրիգորը ու դարձավ դեպի Վահանը,- ես քեզ խնդրում եմ, մեզ տար Խաթունարխ, այն նույն տեղը, որտեղ մենք բռնվել ենք: Տղամարդու խոսք՝ մենք այլևս նման գործերով չենք զբաղվի:

Այստեղ արդեն Հարությը չդիմացավ ու միանգամից գոռաց եղբոր վրա.

-Քեզ ասում եմ ավելորդ դուրս մի տուր: Ի՞նչ դոլար, ի՞նչ բան: Որտեղ էլ լինի Նազարյանը, մեզ ազատելու է, հասկացի՛ր, հիմար:

-Քո գործը չէ: Այս անգամ իմ հարցերը ես եմ լուծում: Քեզ ինչ, թե խայտառակ եմ դառնալու ամբողջ շրջանում: Վատ հոտ է փչում այս գործից,- եզրակացրեց Գրիգորը:

Բոլորը միանգամից լռեցին: Վահանը մտածմունքի մեջ ընկավ. «Ուրեմն բոլոր հանցագործությունները երկու եղբորով միասին են արել: «Տաշի» աղջկա գործն էլ սրանցից հեռու չէ: Հիմա ի՞նչ անեմ Խաթունա՞րխ գնամ, Սիրո՞գ, թե՞ Սիսակավան»:

Վահանը ճամփի վրա ավտոմեքենան կանգնեցրել էր ու չէր կոմնորոշվում որտեղ քշել:

-Փողը գտնվում է չհրկիզվող պահարանում,- նորից խոսեց Գրիգորը,- պատից կախված նկարի ետևում:

Վահանը ոչինչ չասաց, դուրս եկավ ավտոմեքենայից: Վառեց սիգարետը, սկսեց ծխել: Մտածում ու մտածում էր. «ի՞նչ անեմ, քշեմ Խաթունա՞րխ, թե՞ ... »: Ու հանկարծ նկատեց դիմացից եկող ավտոմեքենան: Ուշադիր նայեց ավտոմեքենայի համարներին ու անակնկալի եկավ: «Սա այն նույն ավտոմեքենան է, որ ինքը տեսել է Երևանում Հյուրանոցի դիմաց, դե իհարկե այդ ավտոմեքենան է, հաստատ, կասկած չկա»:

-Վահանը շպրտեց սիգարետի մնացորդը, որոշեց՝ վերջ գնում եմ Խաթունարխ: Հա՛, հենց փողի ետևից: Եթե խաբեցին, փողը չտվեցին, երկուսի վերջն էլ հենց այնտեղ կտամ, թող ինչ ուզում է լինի...

Վահանը նստեց ավտոմեքենան և ուղղություն վերցրեց դեպի Խաթունարխ: Բայց բոլոր դեպքերում նրա ուշքը Երևանում տեսած ավտոմեքենայի վրա էր: Նա քշում էր և ավտոմեքենայի հայելու մեջ անընդհատ հետևում էր իր ետևից եկող ավտոմեքենային: Նա ծռվեց դեպի Խաթունարխ և շատ զարմացավ, երբ իր երևից եկող ավտոմեքենան էլ գլխավոր ճանապարհից դուրս եկավ և քշեց իր ետևից: Հասկացավ, որ հետևի ավտոմեքենան հետապնդում է իրեն: Հասան Խաթունարխ: Գյուղում հատուկենտ լույսեր էին վառվում: Շատերն արդեն վաղուց պառկած քնած էին:

Առանց մոռածելու Վահանն ավտոմեքենան քշեց դեպի Հարութի «ֆաղենդան»: Հասան դարպասների մոտ: Վահանը շուռ եկավ դեպի Արմանը.

-Իջիր, գնա դարպասը բաց արա, մենք պետք է ավտոմեքենայով ներս մտնենք:

Արմանն իջավ, գնաց բացեց դարպասը: Վահանն ավտոմեքենան քշեց առաջ՝ Արմանին ասելով.

-Դարպասը թող բաց մնա, կարող է՝ շատ արագ ետ վերադառնանք:

Վահանն առանձնատան դիմաց կանգնեց և մոտեցող Արմանին ասաց.

-Դու Քրիստինեի հետ մնա ավտոմեքենայում, իսկ դուք, պարոն եղբայրներ, դուրս եկեք ավտոմեքենայից: Եղբայրները դուրս եկան ավտոմեքենայից: Վահանը նրանց տարավ առանձնատուն: Ներս մտնելուն պես, Վահանը հարցրեց.

-Որտե՞ղ է սեյֆը, ո՞ւր են բանալիները:

-Սեյֆը նկարի ետևում է, իսկ բանալիները այ էն սեղանի դարակում են,- ասաց Գրիգորը:

Վահանը ատրճանակը դեմ արեց Հարութի ճակատին:

-Հենց հիմա բանալիները գնա հանիր:

Հարութը գնաց և բերեց բանալիները:

-Ձեռքերս ազատեք, որ բացեմ սեյֆը:

Վահանը սևեռուն նայեց Հարութին և ատրճանակը պահելով նրա վրա՝ արձակեց ձեռնաշղթան:

Հարութն իջեցրեց պատի նկարը, բանալին դանդաղ մոցրեց չհրկիզվող պահարանի անցքը և բացեց այն: Նա կամաց ձեռքը ներս տարավ, նայեց Վահանին և հաջորդ վայրկյանից փողի փոխարեն հանեց ատրճանակը: Վահանն զգաց, թե ինչ կկատարվի, արագ անցավ Գրիգորի ետևը: Հենց այդ պահին ճայթեց կրակոցը: Գրիգորն

ընկավ հատակին: Տեսնելով հատակին ընկած արյունաշաղախ եղբորը՝ Հարոմը ամբողջ կոկորդով մեկ գոռաց:

-Ես այս ի՞նչ արեցի: Վահա՜ն, անիծվես դու, քո փոխարեն եղբորս սպանեցի: Հարոմը խելակորույս արագությամբ վազեց դեպի դուրս: Վահանը հետևեց նրան, բայց ինչ իմանար Հարությունն Մարգարյանը, որ այստեղ ուրիշ ավտոմեքենա էլ կա: Նա վազեց դեպի դարպասները: Այդ անծանոթ ավտոմեքենայի վարորդը, նկատելով դեպի իրենց վազողին, ատրճանակը ձեռքին, Հարոմին նշան բռնեց և կրակեց: Հարոմն ընկավ: Փամփուշտը խրվել էր գլխի մեջ: Կրակոց լսելով՝ Վահանը դուրս եկավ «Ֆազենդայից» և նայեց դեպի կրակոցի կողմը: Մեքենայի վարորդը այս անգամ նշան բռնեց Վահանի վրա: Վարորդի ընկերը՝ «Տաշի» եղբայր Սաքոն, իսկույն բռնեց նրա ձեռքը, չթողեց կրակել:

-Նրանցից մեկը արդեն սպանված է, թող այս մեկն ապրի, գուցե յուրային է, ինչ իմանաս: Նստիր ավտոմեքենան, գնում ենք տուն: Վահանը լսեց այս խոսքերը, հասկացավ, որ իր վրա այլևս չեն կրակի, հանգիստ գնաց դեպի իր ավտոմեքենան: Նստեց ավտոմեքենան և վճռական ասաց.

-Հիմա երկուսով գնում ենք առանձնատուն, մտնում ենք Գրիգորի սենյակը, նրա ձեռքերն ազատում ենք ձեռնաշղթաներից և ինչքան հնարավոր է մաքրում, ոչնչացնում ենք մատնահետքերը: Մի խոսքով ոչնչացնում ենք բոլոր կասկածելի հետքերը, այնպես որ մեզ վրա ոչ ոք չկասկածի:

Վահանը մոտեցավ չհրկիզվող պահարանին, վերցրեց այնտեղ եղած բոլոր դոլարները: Պահարանում կար նաև մինչև մեկ կիլոգրամի հասնող ադամանդյա, ոսկյա և արծաթյա զարդեղեն: Վահանը դրան ձեռք չտվեց: Վերջում նկատեց երկու ձայնագրված ժապավեն: Դրանք վերցրեց: Դրանից հետո նա ձեռնամուխ եղավ բոլոր մատնահետքերի ոչնչացման գործին: Համոզվելով, որ Արմանն իր գործն է արել ինչպես հարկն է, ասաց.

-Հարկավոր է արագ հեռանալ այստեղից:

Նստեցին ավտոմեքենան: Դարպասի մոտ Վահանը նկատեց Հարութի դիակը, ցածրաձայն, ատելությամբ ասաց.

-Քեզ արժանի էր, ինչ ցանել ես, այն էլ հնձել ես, սրիկա:

Արմանը, որ լավ չէր լսել Վահանի ասածը, հարցրեց.

-Ի՞նչ ասացիր, Վահան:

-Ոչինչ, ասացի՝ շունը շան նման սատկեց:

-Հիմա ո՞ւր ենք գնալու,- հարցրեց Արմանը:

Վահանը քիչ մտածելուց հետո, ասաց.

-Սիսակավան, գիշերը կմնանք մորաքրոջս տղայի տանը, իսկ առավոտյան կմեկնենք Երևան:

Երբ հասան Սիսակավան, արդեն գիշերվա ժամը երեքն էր: Վահանը ավտոմեքենան կանգնեցրեց փոստի շենքի մոտ, գնաց զանգելու մորաքրոջ տղային՝ Գևորգին:

Զանգին ոչ ոք չպատասխանեց: Նստեց ավտոմեքենան, քշեց Գևորգի անտրոջ տուն: Ծեծեց դուռը, բացող չեղավ: Նորից ծեծեց:

-Ո՞վ է,- վերջապես լսվեց քեռի Ստեփանի ձայնը:

-Ես եմ, Վահանը, քեռի Ստեփան:

Քեռի Ստեփանը ճանաչեց Վահանի ձայնը, դուռը բացեց:

-Ի՞նչ է պատահել այս ուշ ժամին, Վահան ջան,- տագնապով հարցրեց քեռի Ստեփանը:

-Առանձնապես ոչինչ, ամեն ինչ նորմալ է, քեռի Ստեփան, միայն խնդրում եմ, եթե հնարավոր է, Գևորգին կանչեք այստեղ,- խնդրեց Վահանը:

-Դե ներս մտեք, ի՞նչ եք դրսում կանգնել, իսկ ես կփորձեմ կանչել Գևորգին:

Վահանը ներս մտավ, քեռի Ստեփանը գնաց Գևորգի ետևից: Չանցած մի քանի րոպե՝ քեռի Ստեփանը Գևորգի հետ եկավ:

-Բարև, Գևորգ ջան,- ասաց Վահանը:

-Բարև, Վահան, այս ի՞նչ է պատահել, ինչո՞ւ այս ուշ ժամին,- ասաց Գևորգը և գրկախառնվեց Վահանի հետ:

-Ոչինչ, Գևորգ ջան, արի դուրս գանք, առանձին խոսենք:

Դուրս եկան: Վահանն ասաց.

-Ինձ հարկավոր է քո բնակարանի բանալին, հետս էլի մարդ կա: Որոշել ենք գիշերը մնալ քո բնակարանում: Առավոտյան մեկնելու ենք Երևան: Հա՛, դու կարո՞ղ ես մեզ տրամադրել քո ավտոմեքենան:

Դու առանց ավտոմեքենա՞յի ես եկել, ինչ է,- Հարցրեց Գևորգը:

-Չէ՛,- պատասխանեց Վահանը,- իմ ընկերները գնալու են Երևան, իսկ ես ետ եմ վերադառնալու Սիրոգ: Մնացածի մասին հետո կզրուցենք:

Գևորգը գնաց և շատ չանցած՝ եկավ ավտոմեքենայով: Բանալիները տվեց Վահանին ու հարցրեց.

-Բայց այնուամենայնիվ ի՞նչ է պատահել:

-Լավ է, մի անհանգստանա, ամեն ինչ նորմալ է, հիմա ժամանակը չէ այդ մասին խոսել,- Գևորգին հանգստացրեց Վահանը:

Վահանը նստեց Գևորգի ավտոմեքենան և գնաց Արմանի մոտ: Առանց իջնելու Վահանն ասաց.

-Քշիր իմ ետևից:

Արմանն աշխատեցրեց ավտոմեքենայի շարժիչը: Գնացին դեպի Գևորգի տան կողմը: Տնից քիչ հեռու կանգնեցրին ավտոմեքենաները:

-Բոլորդ իջեք,- կարգադրությունն նման ասաց Վահանը,- այստեղից ոտքով պիտի գնանք:

Իջան ավտոմեքենաներից: Վահանը չէր մոռացել իր հետ վերցնել տեսաժապավենները: Հասան շենքի մոտ: Ներս մտան, բարձրացան երկրորդ հարկ: Վահանը բացեց Գևորգի բնակարանի դուռը,

ներս մտան: Նստեցին ճաշասենյակում: Վահանը քիչ մնալուց հետո դուրս եկավ:

Դուք այստեղ նստեցեք, ես մի քիչ շրջեմ սենյակներով, տեսնեմ ինչ կա, ինչ չկա:

Նա մտավ ննջարան, հետո խոհանոց, բացեց լոգարանի դուռը, վառեց լույսը, գնաց պատշգամբ: Պատշգամբի մի անկյունում վառարանի համար փայտ էր դասավորված: Ամեն ինչ ստուգեց, ետ վերադարձավ:

-Արմա՜ն, հիմա բաղնիքն աշխատեցրու, թող մեր ընկերուհին լոգանք ընդունի:

Վահանը հետո եկավ Քրիստինեի մոտ, ասաց.

-Գնացեք ննջարան, մի քիչ պառկեք, հանգստացեք, մինչև բաղնիքը մի քիչ տաքանա: Շատ չմտածեք, ամեն ինչ լավ կլինի:

Շնորհակալություն,- ասաց Քրիստինեն ու լռեց:

Վահանը Քրիստինեին ուղեկցեց մինչև ննջարան և ետ դարձավ: Վահանը գնաց նստեց բազկաթոռին, հիշեց, որ մոտը տեսաժապավենների կան, ասաց.

-Արմա՜ն, երեք բաժակ սուրճ դիր, իսկ ես նայեմ տեսնեմ այս ինչ տեսաժապավենների են:

Արմանը գնաց սուրճ պատրաստելու: Վահանը գրպանից հանեց թղթե փաթոցյթը, սկզբից հաշվեց եղած դոլարները՝ քսաներեք հազար հինգ հարյուր, հետո սկսեց դիտել տեսաժապավենների մեկը: Տեսագրության մեջ հետաքրքիր ոչինչ չկար: Ինչ-որ ինքնույթի տեսարան էր՝ կանանց, և մի քանի ոստիկանների մասնակցությամբ: Վահանը դեն նետեց այդ ժապավենը և միացրեց երկրորդը: Արմանը խոհանոցում զբաղված էր, երբ հանկարծ լսեց Վահանի անսովոր ճիչը·

-Ես քու մերը... Եկեք, տեսեք, թե ինչով է զբաղված պարոն ոստիկանապետը և նորից կրկնեց՝ ես քու մերը... Վահանի զայրույթի վրա ներս մտավ Արմանը և մի քիչ անհանգստացած՝ հարցրեց.

-Ի՞նչ է պատահել, Վահան, ինչո՞ւ ես այդպես զայրացել:

-Արի, արի ու քո աչքով տես, թե Սիրոգ քաղաքի համար առաջին ոստիկանը ինչով է զբաղված լրբերի հետ:

Արմանը մի քիչ նայեց ու չկարողացավ զսպել իրեն, բացականչեց.

-Սա խայտառակություն է, անասունները միայն այդպիսի բաներ կանեն, աչքերիս չեմ հավատում, միթե՞ սա Սիրոգ քաղաքի ոստիկանապետն է, նա բացարձակ լիրբ է, անամոթ սրիկա:

-Ոչինչ, Արման ջան, ժամանակը կգա, և նա էլ կստանա իր արժանի պատիժը,- համոզված ասաց Վահանը և ավելացրեց,- և այսքանից հետո այդ սրիկան փորձում է մեզ նման մարդկանց մեղադրել: Այս ժապավենը, Արման, չի թույլատրի, որ նա նեղի մեզ:

Արմանը զայրույթից ու զարմանքից գլուխը տարուբերելով գնաց և երկու սուրճի բաժակ ձեռքին՝ վերադարձավ: Բաժակներից մեկը Վահանի համար էր, մյուսը՝ Քրիստինեի: Վահանն իր բաժին սուրճը վերցրեց, իսկ Արմանը մյուս բաժակը տարավ, որ տա Քրիստինեին: Ծեծեց ննջարանի դուռը: Ներսից ոչ մի ձայն: Վահանը այդ նկատեց, ասաց.

-Երևի քնած է: Ոչինչ, Արման թող քնի, իսկ սուրճը հետո կխմի:

Սուրճը խմելուց հետո Վահանը շարունակեց խոսքը.

-Ես կես ժամից հետո Գևորգի ավտոմեքենայով գնալու եմ Սիրոգ: Կարծում եմ շուտով հայտնի կդառնա Խաթունարիսում տեղի ունեցածը: Ես պետք է անպայման Սիրոգում լինեմ: Քո ավտոմեքենայով, Արման, առավոտյան Քրիստինեին կհասցնես Երևան: Կկանգնես նրանց տնից մի քիչ հեռու: Կասես, որ մինչև Երևան հասնելը զանգի ամուսնուն: Թող հայտնի, որ գտնվում է Եղեգնաձորում հոր տանը: Այս տեսաժապավենը վերցրու և որևէ աղջկա անունից ուղարկիր պարոն Նազարյանին: Վերցրու այս հինգ հարյուր դոլարը, Քրիստինեի համար վաղը շորեր կգնեք: Եվ ամենակարևորը՝ այս ե-

րեք հազար դոլարը վերցրու, կգտնես Մարիամի ֆակուլտետի դեկանին և կտաս նրան, Մարիամի համար է:

-Հասկացա, ամեն ինչ կարվի քո ասածի նման,- ասաց Արմանը,- բայց մի բան լավ չհասկացա՝ բժշկական ինստիտուտին ինչո՞ւ եմ տալիս այդ երեք հազար դոլարը:

-Որ քեռի Ավետիսի թոռ Մարիամը սովորի առանց որևէ դժվարությունների,- բացատրեց Վահանը և ավելացրեց,- Հանցագործի փողեր են, օգտագործենք բարի նպատակներով և կողքանց նայելով Արմանին՝ կիսաժպիտ ասաց,- ես ճի՞շտ եմ հասկացել, որ դու անտարբեր չես Մարիամի նկատմամբ:

Արմանը շառագունեց և ոչինչ չպատասխանեց: Առանց այդ էլ ամեն ինչ հասկանալի էր: Վահանը թերթի մեջ փաթաթած տեսաժապավենը տվեց Արմանին և նայեց ժամացույցին:

-Կես ժամից ինձ քնից կհանես, իսկ Քրիստինեին չարթնացնես, թող քնի: Կարթնացնես մեկնելուց կես ժամ առաջ:

Արմանը Վահանին արթնացրեց մի քիչ ուշ:

-Ինչո՞ւ ես ինձ ուշ արթնացրել, Արման:

-Տես՝ շատ խորն էիր քնած, ասացի՝կես ժամը չի խանգարի:

Վահանը թեյը խմեց, վերցրեց հեռախոսը և զանգեց կնոջը՝ Անուշին:

-Բարև, Անուշ ջան, ինձ զանգող եղե՞լ է:

-Ոչ,- պատասխանեց կինը,- չի եղել:

-Մեկ ժամից տանը կլինեմ, Անուշ ջան, եթե զանգեն, կամ իմ ետևից գան, կասես՝ բաղնիքում լողանում է, լա՞վ...

Շուտով Վահանն արդեն դեպի Սիրոգ տանող ճանապարհի վրա էր: Մի ժամ հետո տեղ հասավ: Ավտոմեքենան կանգնեցրեց շենքից մի քիչ հեռու, գնաց բարձրացավ իրենց բնակարանը, զանգը տվեց: Անուշը, որ վայրկյան առ վայրկյան սպասում էր ամուսնու վերադարձին, իսկույն բացեց դուռը: Ամուսինները ողջագուրվեցին, Անուշն ասաց.

-Ինչո՞ւ այդքան շուտ վերադարձար, ի՞նչ է, ձուկ չկա՞ր բռնելու:

Ի պատասխան Ախուշի կատակին, Վահանը պատասխանեց.

-Երկու այնպիսի խոշոր ձուկ բռնեցինք, էլ դու սուս: Հիմա մտնեմ լողանամ, էդ ձկան հոտերը անցնեն:

-Այ տղա, ի՞նչ ձկան հոտ, քեզնից ոչ մի ձկան հոտ էլ չի գալիս,- փորձեց լրջանալ Ախուշը:

-Գալիս է, գալիս է, դու այն չես զգում, իսկ ես զգում եմ,- ասաց Վահանը և մտավ լոգարան:

Հենց այդ ժամանակ էլ հնչեց հեռախոսի զանգը: Ախուշը վերցրեց հեռախոսափողը:

-Բարև ձեզ, ոստիկանության հերթապահությունից են ձեզ անհանգստացնում, պարոն Դարբինյանին կարելի՞ է:

-Բարև ձեզ,- պատասխանեց Ախուշը,- Վահանն այս պահին լոգանք է ընդունում, որ վերջացնի, ի՞նչ ասեմ նրան:

-Ասացեք, որ պատրաստ լինի, մենք նրա ետևից ավտոմեքենա ենք ուղարկելու:

Կես ժամ հետո եկավ ոստիկանության ավտոմեքենան: Բայց ավտոմեքենան ոստիկանություն չգնաց: Այն ուղղություն վերցրեց դեպի Խաթունարխ: Քրեական հետախուզության սպան բացատրեց, որ այնտեղ սպանություն է տեղի ունեցել: Սպանել են Սիրոգի դատախազության պատասխանատու աշխատող Հարությունն Մարգարյանին և նրա եղբորը: Գնում են տեղանքն ուսումնասիրելու և սպանության հանգամանքները պարզելու:

Վահան Դարբինյանը միայն լուռ լսում էր:

Վահանի մեկնելուց հետո Արման Աբրահամյանը փակեց սենյակի դուռը, նստեց բազկաթոռին և արագ քնեց: Արթնացավ ութ

անց կեսին: Մտավ լոգարան, բայց չլողացավ, լվացվեց և դուրս եկավ: Գնաց ծեծեց ննջարանի դուռը, ուր քնած էր Քրիստինեն:

-Հիմա դուրս կգամ,- ներսից լսվեց Քրիստինեի ձայնը:

Արմանը մտավ խոհանոց, թեյնիկը դրեց գազօջախին: Քրիստինեն եկավ և քնքշաձայն բարևեց.

-Բարև ձեզ:

-Բարի լույս,- պատասխանեց Արմանը,- ջուրը տաքացել է, կարող եք լոգանք ընդունել: Թեյ լցնե՞մ ձեզ համար:

-Շնորհակալություն,- ասաց Քրիստինեն և լուռ գնաց լոգարան:

Արմանը թեյը լցրեց, խմեց և սպասեց Քրիստինեին: Քրիստինեն մի խալաթ հագին դուրս եկավ լոգարանից:

-Այդ խալաթը որտեղի՞ց,- հարցրեց Արմանը:

-Լոգարանից կախած էր, երևի Գևորգի կնոջ խալաթն է, սխա՞լ եմ արել, որ հագել եմ,- երկյուղածորեն ասաց Քրիստինեն:

Արմանը դրա վրա ուշադրություն չդարձրեց, ասաց.

-Քրիստինե, ես հիմա քաղաք պիտի գնամ: Պիտի բինտ ու դեղեր գնեմ ձեռքս փաթաթելու համար:-Հետո ոտից գլուխ նայելով Քրիստինեին՝ ավելացրեց,- քեզ համար էլ պիտի շորեր գնեմ, հո էդ ճղճղված շորերով չե՞ս գնալու Երևան:

Քրիստինեն լռեց և ամաչկոտությամբ կախեց գլուխը:

-Ես ձեռքիս փող ունեմ,- շարունակեց Արմանը,- միայն այդ շորերը ձեր չափսով լինեն ու ձեր ճաշակով: Ամաչելու բան չկա: Մենք ուղղակի ուզում ենք ձեզ օգնել, ուրիշ ոչինչ: Վերցրեք այդ սեղանի 100 դոլարը:

-Ո՛չ,- առարկեց Քրիստինեն,- ինձ այդ փողը պետք չէ, ինձ համար, խնդրում եմ, նեղություն մի քաշեք: Այդ փողը պահեք ձեզ: Առանց այն էլ դուք ինձ մահից փրկել եք:

-Լավ, եթե չէք ուզում, ձեր գործն է: Հիմա ես գնում եմ, իսկ դուք զանգեք ձեր ամուսնուն և ասացեք, որ գտնվում եք Եղեգնաձորում՝ ձեր հոր տանը, և շուտով կլինեք Երևանում:

Քրիստինեի աչքերը լցվեցին արցունքներով: Նա սկսեց փոքր երեխայի նման հեկեկալ:

-Դե լավ, ես գնամ,- ասաց Արմանը,- եթե դուռը ծեծեն, չպատասխանեք ոչ մեկին, սպասեք մինչև իմ գալը:

Արմանը դրսից բանալիով փակեց դուռը և ինքավ փողոց, մտավ մոտակա դեղատունը: Հետո գնաց շուկա և իր քրոջ չափսերով շորեր գնեց Քրիստինեի համար: Մթերային խանութից էլ ուտելիք ու քաղցրավենիք գնեց և մեկ ժամից հետո վերադարձավ տուն: Բացեց դուռը և ներս մտավ: Տեսավ՝ Քրիստինեն խոհանոցը կարգի է բերում:

Արմանը ձեռքի փաթեթները դրեց սեղանին և դարձավ Քրիստինեին:

-Վերցրեք այս փաթեթները, սրանք բոլորը ձեզ համար են: Այստեղ շորեր են, քաղցրավենիք է ձեր երեխաների համար: Կարող եք մտնել ննջարան և էդ շորերը փորձել՝ ձեր վրայով է, թե չէ:

Քրիստինեն շատ ամաչեց դրանից, բայց եղածն արդեն եղել էր: Նրան մնում էր մտնել ննջարան և հագնել շորերը: Արմանը սպասեց մինչև Քրիստինեն դուրս եկավ սենյակից և կանգնեց Արմանի առաջ: Արմանը նայեց և իսկապես, զարմացավ:

-Ձեզ անչափ սազում է, ոնց որ հատուկ ձեզ համար կարված լինի, շնորհավորում եմ, բարով մաշեք:

-Շնորհակալությո՛ւն,- նկատելի ժպտաց Քրիստինեն,- ձեզ և Վահան Դարբինյանին պարտական եմ իմ ամբողջ կյանքում: Դուք հերոս եք, գիտե՞ք, դուք վտանգելով ձեր կյանքը, ուրիշի կյանք եք փրկել: Հասկանո՞ւմ եք՝ դա ի՞նչ է: Ձեզ բոլորը պիտի հարգեն ու գնահատեն:

Արմանը միայն ժպտաց, ասաց.

-Որպես շնորհավորանք, ինչ եք կարծում, սուրճ չդնե՞նք, խմենք:

-Այո՛, կարելի է,- ջերմագին տոնով ասաց Քրիստինեն և նորից անկախ իրենից արտասվեց: Բայց այս անգամ դրանք արդեն ուրախության արցունքներ էին:

-Ամուսնու զանգեցի,- լացի միջից ասաց Քրիստինեն,- ներողություն խնդրեցի նրանից, ասաց, որ ներում է ինձ և ապասում իմ գնալուն:

Արմանը մտավ խոհանոց՝ սուրճ պատրաստելու, իսկ Քրիստինեն նախաճաշի պատրաստության տեսավ: Արմանը սուրճը դրեց սեղանին: Սկսեցին նախաճաշել: Երբ նախաճաշը վերջացրին, Արմանը հայտնեց, որ ժամանակն է ճանապարհ ընկնելու:

-Ձեր ձեռքի վերքը չե՞ք ուզում վիրակապել,- հիշեցրեց Քրիստինեն:

-Ա՛խ, հա, մոռացել էի,- ասաց Արմանը:

Քրիստինեն Արմանին հասկացրեց, որ ձեռքը հարմար պահի: Արմանը ձեռքը պահեց Քրիստինեի առաջ: Քրիստինեն Արմանի վերքի վրա վիրակապ դրեց: Դրանից հետո նրանք երկուսով դուրս եկան սենյակից: Արմանը տան դուռը բանալիով փակեց, գնաց ավտոմեքենայի մոտ: Քրիստինեն նստեց նրա կողքը: Արմանն աշխատեցրեց շարժիչը և ընթացավ դեպի Երևան:

Ուղիղ ժամը երեքին հասան Երևան: Արմանը հարցրեց.

-Որտե՞ղ եք ապրում:

-Շենգավիթում,- ասաց Քրիստինեն,- մետրոյի մոտ է մեր տունը: Մետրոյի մոտ էլ կպահեք, ես այնտեղից ոտքով կգնամ:

Արմանը ավտոմեքենան կանգնեցրեց Քրիստինեի ուզած տեղը: Քրիստինեն իջավ ավտոմեքենայից: Արմանն ասաց.

-Քեզ հաջողություն և ամենայն բարիք:

-Շնորհակալ եմ,- գլուխը դեպի Արմանը թեքելով՝ ասաց Քրիստինեն,- այսօրվանից դուք և Դարբինյանը իմ և ամուսնուս մեծ բարեկամներն եք:

Արմանը շրջեց ավտոմեքենան ու ընթացավ դեպի բժշկական ինստիտուտ: Տեղ հասնելուն պես նա իջավ ավտոմեքենայից և մտավ բժշկականի շենքից ներս: Պահակը նրան ասաց մանկաբուժական ֆակուլտետի դեկանի աշխատասենյակի համարը: Արմանը հեշտությամբ գտավ այն, ծեծեց դուռը և ներս մտավ: Դեկանատում ընդամենը մի մարդ էր նստած: Արմանը ենթադրեց, որ նա հենց դեկանն է: Բարևելուց հետո անմիջապես ասաց.

-Եթե չեմ սխալվում դուք եք մանկաբուժական ֆակուլտետի դեկանը:

-Այո՛, ես եմ,- պատասխանեց դիմացինը,- Համեցեք, նստեցեք: Ի՞նչ հարցով եք եկել:

-Ես ձեր ֆակուլտետի ուսանողուհի Մարիամ Պետրոսյանի եղբայրն եմ, եկել եմ Խաթունարիս գյուղից: Քրոջս վրա երեք հազար դոլարի պարտք է կուտակվել և շատ հնարավոր է, որ նա դուրս մնա ինստիտուտից:

Դեկանը միանգամից լրջացավ, ասաց.

-Դուք մեզանից մի նեղացեք, օրենքն ու պայմաններն են ստիպում մեզ, որ դիմենք նման քայլերի:

-Կարևորն այն է, որ քույրս ընդունվել է և ընդունվել է մեծ դժվարությամբ: Ուզում եմ իմանալ՝ ինչ է հարկավոր, որ նա շարունակի ուսումը ձեր ինստիտուտում:

-Ուրիշ ելք չկա, նա պիտի վճարի այդ երեք հազար դոլարը, այլ կերպ դուրս կմնա ինստիտուտից,- կարճ կտրեց դեկանը:

-Ես հետս բերել եմ այդ գումարը: Կարող եմ հիմա այն ձեզ հանձնել:

-Այո՛, կարող եք,- պատասխանեց դեկան Հակոբյանը,- մուծեցեք, այ, այստեղ էլ ստորագրեք, անդորրագիրն էլ վերցրեք, և ձեր քույրը այսուհետև կարող է իր ուսումը շարունակել:

Արմանը գրպանից հանեց ծրարը, դրեց սեղանին: Դեկան Հակոբյանը բացեց ծրարը, հաշվեց գումարը, ժպտաց և ասաց,

-Այժմ դուք հանգիստ կարող եք գնալ:

Արմանը վեր կացավ տեղից, շնորհակալությունհայտնեց և դուրս եկավ: Փողոցն անցնելիս նա տեսավ սրճարանը: «Հիմա արդեն կարելի է մտնել այս սրճարանը և կարգին ճաշել»,- մտմտաց նա և գնաց մտավ սրճարանից ներս: Նստեց ազատ սեղաններից մեկի մոտ, ուտելիք պատվիրեց ու մի բաժակ սուրճ: Ճաշելու ընթացքում հանկարծ հիշեց, որ տեսաժապավենը չի ուղարկել Սիրոգի ոստիկանապետին: «Սրճարանից հենց դուրս եկավ, առաջին հերթին հենց դա պիտի անեմ»,- որոշեց նա:

Արմանը ուտելը վերջացրեց, կանչեց մատուցողին.

-Ինչքա՞ն պիտի վճարեմ:

-Երկու հազար չորս հարյուր դրամ,- հաշվեց մատուցողը:

Արմանը սեղանին դրեց երեք հազար դրամ և ասաց.

-Մանրը վերադարձնել պետք չէ, միայն ասա՝ այստեղ մոտերքում կապի բաժանմունք՝ փոստ կա՞:

-Դուրս եկեք փողոց, թեքվեցեք դեպի ձախ, մի հարյուր մետրի վրա կտեսնեք ձեր ուզածը:

-Շնորհակալ եմ,- ասաց Արմանը, դուրս եկավ, գնաց մի հարյուր մետր և տեսավ կապի բաժանմունքը: Արագ գնաց դեպի փոստային բաժանմունքը: Ներսում համարյա հաճախորդներ չկային:

-Քույր ջան,- Արմանը դիմեց աշխատակցուհուն,- եթե կարելի է ընդունեք այս փոքրիկ ծանրոցը, ուղարկում եմ Սիրոգ:

Աշխատակցուհին վերցրեց ծանրոցը, նայեց և զարմացած ասաց.

-Բայց այստեղ հասցե չկա:

-Գիտե՞ք ինչ,- բացատրեց Արմանը,- այս ծանրոցը քույրս է ուղարկում, մոռացել է հացե գրի: Խնդրում եմ քրոջս՝ Անահիտ Հայրապետյանի անունով հացեն դուք գրեք, կարելի՞ է:

Աշխատակցուհին գլխով արեց և ծանրոցի վրա գրեց պահանջված հացեն: Արմանը վճարեց հինգ հազար դրամ:

-Շատ էք վճարում,- ասաց աշխատակցուհին:

-Ձեր նեղության վճարն էլ հետն է,- ժպտաց Արմանը:

Արմանն այլևս գործ չուներ մայրաքաղաքում, որոշեց վերադառնալ Սիրոգ:

Ոստիկանության ավտոմեքենան հասավ Խաթունարխ, մոտեցավ Հարությունն Մարգարյանի «ֆազենդային»: Այստեղ արդեն ոստիկանության երեք ավտոմեքենաներ էին կանգնած: «Ֆազենդայի» դարպասները բաց էին: Կողմնակի մարդկանց մուտքը չէր թույլատրվում: Որպես արգելանքի նշան ժապավեն էր կապված: Դարբինյանն իջավ ավտոմեքենայից, մոտավ դարպասներից ներս: Արտակարգ դեպքի կապակցությամբ դրսում շատ ժողովուրդ էր հավաքվել: Համարյա ամբողջ Խաթունարին այստեղ էր: Հարությունն Մարգարյանի դիակը դրված էր բակում սպիտակ սավանով ծածկված: Դարբինյանը մոտացավ դիակին, նայեց և դիակի շուրջը գտնվող աստիկաններին բարևեց:

-Բարև ձեզ, պարոն Դարբինյան,- պատասխանեց նրան ոստիկանության քննիչը,- ինչպես տեսնում էք, սպանել են դատախազության աշխատակից Հարությունն Մարգարյանին:

Հարությունն Մարգարյանի եղբայր Գրիգորի դին դեռևս գտնվում էր շենքի ներսում: Բանն այն էր, Հարության ձեռքին ատրճանակ կար, եղբայր Գրիգորը անզեն էր:

-Վերցրեք ատրճանակի համարը,- կարգադրեց Դարբինյանը,- Հետո կպարզենք՝ օրինական է այն, թե՝ ոչ:

-Ստուգել պետք է ոչ միայն զենքը, այլև պետք է պարզել դեպքի հետ կապված բոլոր հանգամանքները ,- ասաց քննիչը:

«Հանկարծ որևէ կասկածելի բան չգտնեն մեզ հետ կապված»,- այս միտքը Դարբինյանի գիտակցությունից չէր հեռանում:

Դարբինյանը գնաց մոտավ առանձնատուն: Այստեղ արդեն աշխատում էին հետաքննության մասնագետները:

-Բարև ձեզ,- ակամա հարցրեց Դարբինյանը,- այստե՞ղ են տեղի ունեցել հիմնական զիրա- դարձությունները:

-Առայժմ պարզ չէ,- պատասխանեցին նրան,- Հայտնի է միայն, որ կատարվել է սպանություն, բայց ինչու և ինչ հանգամանքներում, դա հետո միայն կպարզվի: Ըստ երևույթին առաջինը Հարութն է կրակել: Հետո բակում էլ նա սպանվել է, թե ով է սպանել, դա արդեն դժվար է պարզել:

-Իսկ մատնահետքերը վերցրե՞լ եք,- հարցրեց Դարբինյանը:

-Այո՛, պարոն Դարբինյան, մասնագետները մի ժամ է՝ հենց այդ գործով են զբաղված:

-Ծնողները հիմա որտե՞ղ են,- հետաքրքրվեց Դարբինյանը:

-Կողքի սենյակում են,- պատասխանեց փորցագետներից մեկը:

Դարբինյանը մտավ ծնողների մոտ:

-Բարև ձեզ,- նայելով տխուր ու գլխահակ նստած ծնողներին՝ ասաց Դարբինյանը,- ի սրտե ցավակցում եմ ձեզ, խնդրում եմ շատ չհուզվեք, եղածը եղել է արդեն: Ստիպված եմ հարցնել՝ որևէ մեկի նկատմամբ կասկած ունե՞ք, կամ ընդհանրապես ի՞նչ կարող եք ասել այս կապակցությամբ:

-Մենք ոչինչ էլ չգիտենք, ոչինչ չենք կարող ասել,- ասաց Հայրը,- գիշերը տուն չեկան, չանհանգստացանք, քանի որ շատ էր պա-

տահել , որ գիշերը տուն չէին գալիս: Առավոտյան ինձ զանգեց այ-գու պահակը և ասաց, որ Հարութի վրա կրակել են, այսքան բան:

-Պահակի անուն, ազգանունը, հասցեն կարո՞ղ եք ասել,- հարցրեց Դարբինյանը:

-Իհարկե, կարող եմ ասել, մոտ վաթսունհինգ տարեկան մարդ է, անունը Գասպար, բնակվում է Հրաչյա Քոչար փողոցի վրա:

-Հասկանալի է,- ասաց Դարբինյանը ծոր տալով,- իսկ այս-տեղ չհրկիզվող պահարանում զարդեղեն են հայտնաբերել, դուք որ-և է բան գիտե՞ք այդ մասին, կարո՞ղ եք ասել՝ դա որտեղից է, ումն է կամ ովքեր են տվել:

-Մի քանի զարդերից տեղյակ ենք,- խոստացավ Հայրը,- մնա-ցածը մեզ միանգամայն անհայտ է:

Դարբինյանը կարգադրեց մանրամասն հետազոտելուց հետո դիակները տեղափոխել հիվանդանոց՝ բժշկական քննության: Ինքը արագ դուրս եկավ և վարորդին կարգադրեց քշել Հրաչյա Քոչար փողոց:

Պահակ Գասպարը տանն էր: Նա Վահան Դարբինյանի հար-ցերին անորոշ պատասխաններ տվեց: Միայն ասաց, որ տուն գնա-լուց առաջ նկատել է, որ դարպասի դռները բաց են, իսկ Հարութ-յուն Մարգարյանը մեռած, ընկած է բակում՝ գլխի վրա կրակոցից առաջացած վերքից:

-Հասել եմ տուն և առաջին հերթին զանգել նրա ծնողներին:

Դարբինյանին մնում էր ետ վերադառնալ: Նա վարորդին կարգադրեց վերադառնալ Սիրոգի ոստիկանություն: Տեղ հասնե-լուց հետո նա շտապով մտավ շենքից ներս, բարձրացավ երկրորդ հարկ, բացեց աշխատասենյակի դուռը, նստեց իր տեղում, սկսեց ծխել և մտածել: «Հարկավոր է գնալ ոստիկանապետի մոտ և զեկու-ցել նրան կատարվածի մասին: Կարգն է այդպես»:

Դարբինյանը վեր կացավ և ուղղվեց դեպի պետի աշխատա-սենյակը: Մտավ ընդունարան, բարևեց քարտուղարուհուն և ասաց.

-Պետը տեղո՞ւմ է:

-Այո՛, կարող եք մտնել:

Դարբինյանը դուռը ծեծեց, ներս մտավ:

-Բարի լույս, պարոն Նազարյան,- ասաց և գնաց նստելու:

Պետը բարևի փոխարեն գլխով արեց և անմիջապես ասաց.

-Պատմի՛ր՝ ինչ է կատարվել Խաթունարխում:

-Հարությունն Մարգարյանին և նրա եղբորը սպանել են: Քրեագետները այժմ ուսումնասիրում են հանգամանքները,- զեկուցեց Դարբինյանը և ավելացրեց՝ տեսնելով, որ պետը հարցական նայում է իրեն՝ ցանկանալով էլի մանրամասներ իմանալ,- մատնահետքերը վերցված են: Իմ կարծիքով մարդասպաններն իմացել են, որ չհրկիզվող պահարանում թանկարժեք զարդեղեններ կան, դրա համար էլ մտել են «Ֆազենդա»: Երևի Մարգարյանը դիմադրել է, կամ կողմնակի մարդ է պատահել: Հետքերը թաքցնելու համար սպանել են Մարգարյանին և նրա եղբորը, բայց չեն հասցրել վերցնել սեյֆում գտնվող զարդեղենը: Իհարկե, սա միայն նախնական կարծիք է: Իսկությունը կպարզվի մանրամասն քննությունից հետո:

Դարբինյանի այս զեկույց-տեղեկանքը Նազարյանը լուռումունջ լսեց, հետո մթնած հայացքը հառելով դիմացինին՝ ասաց.

-Հետագա բոլոր անցքերի մասին ինձ շտապ տեղյակ կպահեք: Ինչ գնով ուզում է լինի, պետք է գտնել հանցագործին: Կարող եք գնալ:

Դարբինյանը դուրս եկավ պետի աշխատասենյակից, աստիճանների վրայից նկատեց, որ առաջին հարկի միջանցքում մարդիկ են հավաքվել, որոնք խոսում էին բարձրաձայն: Դարբինյանը հասկացավ՝ լրագրողներ էին:

«Հնար չկա, պետք է իջնել և պատասխանել նրանց կողմից տրված հարցերին»,- մտածեց նա և իջավ առաջին հարկ: Լրագրողներն իսկույն շրջապատեցին նրան:

-Ես լսում եմ ձեզ,- ասաց Դարբինյանը,- սիրով ձեր հարցերին կպատասխանեմ:

-Ի՞նչ կարող եք ասել Խաթունարխում տեղի ունեցած սպանությունների մասին:

-Մենք տեղյակ ենք, որ սպանել են դատախազության աշխատող Հարությունն Մարգարյանին և նրա եղբորը: Ես առավոտյան եղել եմ դեպքի վայրում: Շատ բան պարզված չէ: Քրեագետներն աշխատում են այդ ուղղությամբ: Եթե ընթացքում որևէ բան պարզվի, ձեզ անշուշտ տեղյակ կպահվի: Առայժմ այսքանը:

-Պարոն Դարբինյան, լուրեր են պտտվում, թե այդ սպանությունը տեղի է ունեցել վրեժխնդրության հողի վրա: Նրանց սպանել են աղջիկներին սպանելու պատճառով: Դրա մեջ կա՞ ճշմարտություն:

-Ոչինչ դեռ պարզ չէ: Ոչ մեկին դեռ հայտնի չէ, թե ով է սպանել աղջիկներին: Պարզվելու դեպքում դա էլ ձեզ իրազեկ կդարձվի,- կարճ կտրեց Դարբինյանը:

Դարբինյանը, որ սկզբում որոշել էր դուրս գալ ոստիկանության շենքից, հանկարծ միտքը փոխեց և նորից վերադարձավ իր աշխատասենյակը: Նա նորից ձեռքն առավ աղջիկների սպանության վերաբերյալ «Գործը» և ակամա հիշեց Քրիստինեին: «Իր տեսակետից ճիշտ էր Քրիստինեն,- մտածեց նա,- գործի բացահայտումը և նրա վկայությունը իրոք կխայտառակեր նրան: Ամբողջ քաղաքը կսկսեր խոսել նրա մասին, ընտանիքը կքայքայվեր: Ոչ ոք չի հավատա նրա անմեղությանը: Չէ, ինքը երևի ճիշտ է վարվում, որ Քրիստինեի հետ կապված գործին ընթացք չի տալիս: Առայժմ ինչպես կա, թող այդպես էլ մնա»:

Այդ պահին զանգեց հեռախոսը: Վահանը վերցրեց հեռախոսափողը:

-Պարոն Դարբինյան,- լսվեց հեռախոսի մեջ,- Հիվանդանոցից եմ խոսում, Հիվանդանոցի հետ կապված ամեն ինչ արված է, դատական բժիշկը նայել, եզրակացությունը գրել է, հիմա մենք ի՞նչ անենք:

-Այդ դեպքում,- խոսեց Դարբինյանը,- ես հիմա կգանգեմ Հիվանդանոց, որ սպանվածներին տեղափոխեն դիահերձարան: Դատական բժիշկը հերձելուց հետո էլ պետք է եզրակացություն գրի: Դիակները դիահերձարան տանելուց հետո կարող եք վերադառնալ ոստիկանություն:

Դարբինյանն անկախ իրենից խիստ անհանգիստ էր: Վերցրեց հեռախոսափողը և զանգեց տուն:

-Բարի լույս, Ինուշ: Արմանը չի՞ զանգել:

-Ո՛չ, չի զանգել,- լսվեց Ինուշի անհանգիստ ձայնը,- Վահան, այդ ի՞նչ է կատարվել Խա-թունարխում: Այդ ո՞ւմ են սպանել:

-Դա հեռախոսով ասելու բան չէ, Ինուշ,- ասաց Վահանը,- գամ տուն, ամեն ինչ կպատմեմ:

Ժամը հինգին Դարբինյանը գնաց տուն: Ներս մտնելուն պես կնոջը պատվիրեց.

-Սուրճ դիր, գլուխս սաստիկ ցավում է: Արմանն այդպես էլ չզանգե՞ց:

Վա՛յ, մոռացա ասեմ՞ զանգել է, կես ժամ առաջ է զանգել, ասացի՝ աշխատանքի ես,- մեղայական տոնով ասաց Ինուշը:

Վահանը սուրճ խմեց, պառկեց մահճակալին:

-Հենց Արմանը գա, կարթնացնես,- ասաց ու աչքերը փակեց:

Ինուշը երկու ժամ հետո արթնացրեց Վահանին:

-Արմանը եկել է, վեր կաց,- վերմակը Վահանի վրայից քաշելով՝ ասաց Ինուշը:

Արմանի անունը լսելուն պես Վահանն աչքերը բացեց.

-Բարև, Արման ջան, հետդ ի՞նչ նորություններ ես բերել, պատմիր, տեսնեմ:

-Քո կողմից տրված բոլոր հանձնարարությունները կատարված են, կարող ես հանգիստ լինել: Իսկ Խաթունարխում ինչպես է վիճակը,- հարցրեց Արմանը:

Վեր կենալով մահճակալից՝ Վահանը կողքանց նայեց Արմանին և ասաց.

-Դիակները տեղափոխված են դիահերձարան: Դատական բժիշկը նայում, ուսումնասիրում է: Ամեն ինչ ընթանում է իր հերթական հունով:

-Վահան, ես սաստիկ հոգնած եմ, գնամ տուն, մի քիչ քնեմ: Առավոտյան կհանդիպենք, կխոսենք:

Արմանի գնալուց հետո Վահանը դարձյալ թեքվեց մահճակալի վրա: Անուշը մոտեցավ նրան և հանդիմանանքով ասաց.

-Դու չե՞ս նկատում, որ ես սաստիկ անհանգիստ եմ, ինչո՞ւ չես ասում, թե ինչ է եղել այդ Խաթունարխում:

Վահանը Անուշին պատմեց Խաթունարխի դեպքերի մասին: Պատմեց նաև Քրիստինեի մասին, վկայություն տալուց նրա հրաժարվելու մասին և այն մասին, որ այդ Նազարյանը անհաջող տիպ է:

Մեկ շաբաթ պահանջվեց մինչև ստացան բժշկական հանձնաժողովի վերջնական եզրակացությունը: Վահանն ազատ շունչ քաշեց, իր և Արմանի մատնահետքերը իսպառ բացակայում էին:

Մոտեցավ օգոստոսի երեսունը և Վահանը որոշեց զեկուցագիր-դիմում գրել զբաղեցրած պաշտոնից իրեն ազատելու մասին:

Վահանը զեկուցագիր դիմումը գրում է, բայց այդ մասին չէր մտածում: Ուրիշ բանի մասին էր մտածում. «Ինչ լավ եղավ, որ կնոջս չասացի վերցրածս դոլարների մասին: Առայժմ չասացի: Դրա ժամանակն ու տեղն էլ կգա: Առայժմ որքան գլխացավանքից հեռու, այնքան լավ»:

Հանգիստ գրեց զեկուցագիր-դիմումը, գնաց պետի մոտ և այն լուռումունջ դրեց նրա սեղանին: Նազարյանն այն վերցրեց,

կարդաց և առանց հոնքը շարժելու մակագրեց: Վահանն առանց ետ նայելու դուրս եկավ: Նա այդ գիշեր հանգիստ քնեց:

Սեպտեմբերի մեկին իր երեխային Վահան Դարբինյանը տարավ դպրոց՝ չիմանալով, որ Նազարյանն արդեն անհայտ մի աղջկա հասցեով ստացել է իրեն ուղղված մի ծանրոց-փաթեթ: Նազարյանն աշխատանքից հենց տուն եկավ, որդին՝ Մարգարը, կտրեց նրա ճանապարհը.

-Պա՛, փոստատարը մի կես ժամ առաջ եկավ ու ասաց, որ քո անունով ծանրոց է ստացվել, պիտի գնաս, ստանաս:

-Պիտի գնա՞մ: Իսկ դու ինչ է, չե՞ս կարող գնալ և ստանալ:

-Չէ՛, պա, փոստատարն ասաց, որ անձամբ ինքդ կարող ես ստորագրել և ստանալ:

«Ուրեմն շատ կարևոր բան է»,- մտածեց Նազարյանը, և ինքն անձամբ գնաց ստորագրեց և ստացավ ծանրոց-փաթոյթը: Նազարյանը եկավ տուն: Որոշեց փաթոյթը բացել: Հենց այդ պահին նրան զանգեցին և հրավիրեցին շրջանային խորհրդակցության: Վերադասից էր, չգնալ չէր կարող: Նա, փաթոյթը դնելով սեղանին, զանգեց վարորդին և դուրս եկավ տնից: Որդու աչքն ընկավ հոր ստացած փաթոյթին: Նրա համար շատ հետաքրքիր էր իմանալ, թե փաթոյթի մեջ ինչ կա: Տանը ոչ ոք չկար: Չդիմանալով գայթակղությանը՝ նա ձեռքն առավ փաթոյթը և բացեց այն: Տեսաժապավեներ էին: Որդի Մարգարի հետաքրքրությունն ավելի մեծացավ: «Տեսնես ի՞նչ կա այնտեղ»,- հետաքրքրվեց Մարգարը, բացեց փաթոյթը և ժապավենների մեկը միացրեց: Էկրանի վրա կատարյալ խայտառակություն էր: Ոնց որ ջունգլիներում՝ լիներ՝ վայրենիների շրջանում: Նա ապշած ու զարմացած էր հոր լկտիությունից: Նա հորը տեսավ բոլորովին մերկ վիճակում՝ անամոթ կանանց հետ: Ամնասունների հատուկ այդ խայտառակությունը տեսնելուց հետո Մարգարը նորից ամեն ինչ դասավորեց, դրեց իր տեղը և հոգեխռով ու հորից հիասթափված՝ տնից դուրս եկավ:

Սեպտեմբերի տասի երեկոյան Վահան Դարբինյանը տանն էր: Թեյ էր խմում, երբ հեռախոսը բարձր զնգաց:

Վահանը վերցրեց ընկալուչը:

-Լսում եմ:

-Բարև ձեզ,- լսվեց հեռախոսի մեջ,- կարելի՞ է Վահան Դարբինյանին:

-Վահան Դարբինյանը ձեզ լսում է:

-Ես խոսում եմ Սիսակավանից: Ես պարոն Բեգլարյանի, այսինքն «Տաշի» եղբայրն եմ: Ասեմ, որ «Տաշը» ուզում է ձեզ տեսնել: Մենք հրավիրում ենք ձեզ Սիսակավան վաղը՝ ժամը երեքին:

Վահանը մի քիչ մտածեց, հետո տվեց իր համաձայնությունը:

-Կգամ, բայց որտե՞ղ մենք պետք է հանդիպենք:

-«Այունիք «ռեստորանում,- եղավ պատասխանը:

Հաջորդ օրը, պայմանավորվածության համաձայն, Վահան Դարբինյանը Արմանի ավտոմեքենայով մեկնեց Սիսակավան: Տեղ հասավ և իսկույն քշեց դեպի ռեստորան:

Ռեստորանի մոտ ավտոմեքենան կանգնեցրեց մի ուրիշ ավտոմեքենայի մոտ: Ուշադիր նայեց, ծանոթ ավտոմեքենա էր: Գլխի ընկավ, որ դա «Արմենիա» հյուրանոցի մոտ իր տեսած ավտոմեքենան է, որը երևացել է նաև Խաթունարխում: Այն ժամանակ նա կարծում էր, թե այդ ավտոմեքենան հետապնդում է իրեն, բայց հիմա համոզվեց, որ այստեղ բոլորովին ուրիշ բան կա: Այս մտքերով տարված՝ նա բարձրացավ երկրորդ հարկ, ուր ռեստորանի ընդարձակ սրահն էր: Ռեստորանում այցելուներ համարյա չկային: Վահանը մոտեցավ անծանոթ մեկին, որ հետո պարզվեց, որ ռեստորանի փոխտնօրենն է:

Վերջինս շատ խորը նայեց իրեն մոտեցող երիտասարդ մարդուն և ասաց.

-Դուք երևի պարոն Դարբինյա՞նն եք:

-Այո, ես եմ,- հաստատեց Վահանը:

-Պարոն Բեգլարյանն իր առանձնասենյակում ձեզ է սպասում:

Վահանը փոխտնօրէնի ուղեկցութեամբ մտաւ Բեգլարեանի առանձնասենեակը և գլուխը խոնարհելով՝ ողջունեց ներկաներին:

Վահանի բարևին Բեգլարյանը շատ սիրալիր պատասխանեց:

-Բարև ձեզ, պարոն Դարբինյան,- նստած տեղից վեր կենալով՝ հյուրին ընդառաջ գնաց Բեգլարյանը,- համեցեք, համեցեք:

Իրենց տեղերից բարձրանալով Վահանին ողջունեցին նաև սենյակում գտնվող Սաքոն և վարորդ Հենոն:

-Հենո,- Բեգլարյանը դիմեց վարորդին,- գնա տեղյակ պահիր, որ սեղան պատրաստեն մեր թանկագին հյուրի համար:

Վարորդ Հենոն սենյակից դուրս եկավ:

Բեգլարյանը սևեռուն հայացքը մի պահ գամեց Վահանի վրա, հետո դանդաղ ու շեշտված ասաց.

-Ես խոստացել եմ, որ իմ աղջկան սպանող սրիկային հայտնաբերող մարդուն, որպես պարգև, պարտավորվում եմ տալ երեսուն հազար դոլար:

Եվ «Տաշը» եղբորը՝ Սաքոյին հասկացրեց, որ գնա ու չհրկիզվող պահարանից բերի այդ փողը: Սաքոն գնաց և փողը ծրարի մեջ դրած՝ դրեց «Տաշի» առջև:

Վահանը, որ անսպասելիորեն զարմացած էր, մերթ ծրարին էր նայում, մերթ Բեգլարյանին: Այդ պահին նա չգիտեր իր անելիքը, բայց ամենայն խոստացավ.

-Նրանց վրա ես չեմ կրակել:

Բեգլարյանն ուղիղ նայեց Վահանի աչքերի մեջ:

-Կրակողն արդեն հասանելիքն ստացել է, բայց հանցագործներին դուք եք հայտնաբերել:

-Կներեք, պարոն Բեգլարյան, բայց նման տխուր դեպքի համար փող վերցնելը այնքան էլ պատշաճ չէր լինի ինձ համար: Մի կողմից էլ հանցագործին հայտնաբերելը եղել է իմ աշխատանքային պարտականությունը:

Բեգլարյանը, դիմացինի խոսքերից, իհարկե, չզարմացավ, տեսնելով, որ դա սովորական համեստության ձևական արտահայտություն չէ: Նա ուղղակի հիացավ Վահան Դարբինյանի մարդկային ազնվության ոչ այնքան էլ սովորական չափերից: Բեգլարյանը մի պահ, միայն նայեց Վահան Դարբինյանին և ասաց.

-Գիտեք ինչ, ես ուրախ եմ, որ ձեզ նման մարդիկ այս չար աշխարհում դեռ գոյություն ունեն: Ճիշտն ասած, լինել ոստիկան և այդպես ազնիվ լինել, ես չէի պատկերացնում: Բայց դուք ձեր վարմունքով ապացուցում եք, որ անշահախնդիր մարդիկ դեռ գոյություն ունեն և ձգտում են ժողովրդին օգտակար լինել:

-Ո՛չ, պարոն Բեգլարյան, ես սովորական «մենթ» չեմ , ես մյուսներին հավասար քաղաքացի եմ, որ պարտականություն ունեմ իմ ժողովրդի, իմ քաղաքի, իմ շրջապատի նկատմամբ:

Երևի նաև այդ պատճառով է, որ ամբարտավան և անհատապաշտ ղեկավարների կամայականությանբ ես այսօր աշխատանքից ազատվել եմ ու առայժմ անգործ եմ:

Արտաշես Բեգլարյանի համար դա անսպասելի էր: Նա չէր պատկերացնում, որ Վահան Դարբինյանի նման մարդը կարող է անգործ լինել: Նրա բարետես դեմքը մտահոգություն էր արտահայտում: Մի քիչ մտածելուց հետո նա ասաց.

-Ես ուզում եմ ձեզ առաջարկել, թեկուզ ժամանակավոր, մինչև ձեզ համար ավելի հարմար աշխատանք գտնելը, աշխատեիք ինձ մոտ՝ իմ ձեռնարկությունում որպես անվտանգության պետ: Այդպիսի առաջարկություն, իհարկե, Դարբինյանը չէր սպասում: Նա չկարողացավ կտրուկ մերժել Բեգլարյանին, ուղղակի երախտագետի հայացքով նայեց նրան և ասաց.

-Ինչափ շնորհակալ եմ ձեր առաջարկության համար, պարոն Բեգլարյան: Ես կմտածեմ այդ մասին: Ճիշտն ասած, այժմ ուզում եմ չափազանց լարված աշխատանքից հետո մի քիչ հանգստանալ: Նաև մտադրություն ունեմ գնալ Երևան և այնտեղ աշխատել:

Բեգլարյանն ուշադրությամբ լսեց Դարբինյանին և գոհունակ ժպտաց.

-Կամքը ձերն է, պարոն Դարբինյան: Երբ ցանկանաք, կարող եք օգտվել իմ բարեհաճությունից:

Ձեզ համար, ձեզ նման մարդու համար արժե ամեն ինչ անել: Բոլոր դեպքերում ես ուզում եմ օգտակար լինել ձեզ, հասկանո՞ւմ եք:

Այս խոսքի վրա հնչեց հեռախոսի ձայնը: Հայտնեցին, որ ճաշը պատրաստ է:

-Իսկ այժմ գնանք, սեղանը պատրաստ է, գնանք մի քիչ հաց ուտենք,- ասաց Բեգլարյանը և ավելացրեց,- հիմա, որ մի քիչ հանգիստ եմ զգում ինձ, հոգիս մի տեսակ խաղաղվել է, աղջկաս սպանողը ստացել է իր արժանի պատիժը: Գնանք մի-մի բաժակ խմենք աղջկաս հոգու համար:

Սեղանը պատրաստ էր: Երեքով Արտաշես Բեգլարյանը, Սաքոն և Վահան Դարբինյանը, նստեցին սեղանի շուրջ: Սաքոն լցրեց բաժակները: «Տաշը» վերցրեց բաժակը և ոտքի կանգնեց: -Աղջկաս հոգու հանգստության համար: Հիմա նա իր գերեզմանում կարող է հանգիստ ննջել: Շնորհակալություն պարոն Դարբինյան ոճրագործ մարդասպաններին հայտնաբերելու համար:

Բոլորը ոտքի կանգնած պարպեցին իրենց բաժակները: Կարծես էլ ասելու բան չկար: Ամեն ինչ ասված էր արդեն: Դրանից հետո լուռ հաց կերան, էլի մի-մի բաժակ խմեցին: Եկավ սուրճ խմելու հերթը: Սուրճը խմելուց հետո բաժանվեցին իրարից, նորից հանդիպելու պայմանով:

Անցավ մեկ ամիս: Սիրոգում կարգին հանգստանալուց հետո Վահանը մեկնեց Երևան: Նրան այնտեղ հաջողվեց ստեղծել փաստաբանների ընկերություն: Արման Աբրահամյանը շարունակում էր աշխատել Սիրոգի ոստիկանությունում:

Արտաշես Բեգլարյանը հանգիստ ու խաղաղ շարունակում էր իր աշխատանքը:

Մի քանի ամիս անցնելուց հետո Դարբինյանի ղեկավարած փաստաբանների միությունը Հայոնի դարձավ ամբողջ Երևանում: Այն մի շարք հաջողություններ գրանցեց իրավաբանության ասպարեզում՝ ձեռք բերելով բարի համբավ: Որոշ ժամանակ անցնելուց հետո Արման Աբրահամյանը հրաժեշտ տվեց Սիրոգի իր աշխատանքին, մեկնեց Երևան և դարձավ փաստաբանական ընկերության նախագահ Վահան Դարբինյանի օգնականը:

Մի օր Արմանը ավտոմեքենայով բժշկական ինստիտուտի դիմացի փողոցն անցնելիս, մոքերով տարված, խախտեց երթևեկության կանոնները, անցավ կարմիր լույսի տակով և քիչ մնաց վրաերթի ենթարկի փողոցով անցնող աղջիկներին: Այստեղ տեղի ունեցավ հրաշքը: Նրա դիմաց կանգնած էր Մարիամը: Արմանն անմիջապես ճանաչեց նրան և ... ամեն ինչ մոռացավ: Ավտոմեքենայից իջնելու հնար չկար: Արմանը բացեց ավտոմեքենայի պատուհանը և ձեռքով արեց Մարիամին: Մարիամը նկատեց նրան և ժպտալով բարձրացրեց ձեռքը: «Այս հանդիպումը,- մտածեց Արմանը,- պատահական չէր, այստեղ ոնց որ խառն էր ճակատագրի ձեռքը, սա նշանակում է, որ պետք է հանդիպել Մարիամի հետ և նրա հետ լրջորեն խոսել»:

Մի օր Վահան Դարբինյանն ավտոմեքենայով անցնում էր Շենգավիթ թաղամասով: Կանգնեց մետրոյի մուտքի մոտ: Հիշեց Քրիստինեին: Վահանն իջավ ավտոմեքենայից, մտավ մոտակա խանութ, ջերմուկ ու մի քանի մանր-մունր բաներ գնեց և գնաց նստեց դիմացի նստարանին: Սիգարետը գրպանից հանեց, որ ծխի, հանկարծ նկատեց Քրիստինեին: Նա գալիս էր ամուսնու և երեխայի հետ: Երեքն էլ ուրախ էին: Երեխան վազում, թռչկոտում էր, առաջ ընկնում, նորից ետ վազում և ընկնում իր մայրիկի գիրկը: Վահան Դարբինյանն իր դիմաց տեսնում էր երևանյան սովորական մի ընտանիք, որ երջանիկ էին զգում իրենց անկախ ամեն ինչից: Դա ուրախացնում էր նաև Դարբինյանին: «Գնալ, մոտենալ Քրիստինեին, բախտավորությո՞ն ցանկանալ նրան, նրա հետ թեկուզ երկու բա՞ռ

փոխանակել»,- խորհում էր նա ու չէր կարողանում որոշում կայացնել: Բայց Քրիստինեն նկատեց նրան, ցույց էր տալիս, որ երեխայի ետևից է գալիս, մոտեցավ, արցունքն աչքերին բարևեց Վահանին և հասցրեց միայն մի բառ ասել.

-Շնորհակալություն:

Այս ամենն այնքան արագ կատարվեց, որ Քրիստինեի ամուսինը ոչինչ չնկատեց: Եվ դա շատ լավ էր: Թե չէ նա կարող էր խանդի ավելորդ տեսարաններ սարքել՝ տեսնելով, որ կինը բարևում է բոլորովին մի անծանոթ մարդու:

Երկու ամիս հետո Վահան Դարբինյանը մեկնեց Սիրոդ քենակալ Հայկի ծննդյան հոբելյանին մասնակցելու համար: Նա Հայկի տան բակը մտավ այն ժամանակ, երբ հյուրերն արդեն հավաքվել էին: Մոտեցավ, ջերմորեն բարևեց բոլորին և նկատեց, որ այստեղ է նաև ոստիկանապետ Նազարյանը: Նրանց հանդիպումն այնքան էլ ջերմ չստացվեց:

-Հա՛յկ ջան, ծնունդդ շնորհավոր,- ասաց Դարբինյանը և Նազարյանին շրջանցելով՝ գրկեց քենակալին:

-Բարև, պարոն Դարբինյան,- մի տեսակ հանդիսավոր ասաց Նազարյանը,- բարի գալուստ:

Այդ պահին Հայկին կանչեցին: Հայկը գնաց: Դարբինյանն ու Նազարյանը մնացին մենակ՝ դեմ դիմաց կանգնած:

Վահան Դարբինյանը տրամադրություն չուներ խոսելու: Նա գուշակում էր, որ խոսակցությունը երկուսի միջև շատ տհաճ է լինելու: Երկուսն էլ սպասողական վիճակի մեջ էին: Սպասում էին, թե ով առաջինը պիտի խոսի: Գտնելով, որ այնուամենայնիվ մի բան պիտի ասել, լռությունն առաջինը խզեց Դարբինյանը:

-Պարոն Նազարյան, կուզեի իմանալ՝ ինչ է գրում «Իզվեստիա» թերթը վերջին նորությունների մասին: Նազարյանն իսկույն որսաց Դարբինյանի խոսքի մեջ թաքնված ծաղրը, անցավ հակահարձակման:

-Թերթը գրում է, որ Հարությունն Մարգարյանի սպանության օրը ձեզ տեսել են Խաթունարխում:

Դա արդեն բացահայտ հարձակում էր Դարբինյանի դեմ, որ հնչում էր թշնամական մեղադրանքի նման: Դարբինյանն զգաց, որ արդեն լռել չի կարելի և եկել է ժամանակը ոստիկանապետի իսկական դեմքը ցուցադրելու համար: Նա առանց հապաղելու ասաց.

-Պարոն Նազարյան, նույն այդ «Իզվեստիա» թերթում ես բոլորովին ուրիշ բան եմ կարդացել: Այնտեղ սևով սպիտակի վրա գրված էր, թե դուք ինչպես եք Հարությի տան դիմացի գետում լողանում ձեր մի քանի սիրուհիների հետ:

-Ուրեմն այդ տեսաժապավենները դո՞ւք եք ուղարկել իմ հասցեով,- բարկացայտ աչքերը հառելով Դարբինյանի վրա՝ ասաց Նազարյանը:

-Ի՞նչ ժապավեն, մի՞թե այդպիսի բան գոյություն ունի,- չքմեղացավ Դարբինյանը:

Բայց Նազարյանն արդեն ամեն ինչ հասկացել էր: Նա այլևս չէր կարող մնալ տեղում:

-Հայկո՛ւշ,- հանկարծ գոռաց նա՝ որոնելով կնոջը,- արագ արի այստեղ, հենց հիմա տուն ենք գնում: Շտապ գործ կա:

Նազարյանի կինը շտապ եկավ և հարցական նայեց ամուսնուն՝ այսինքն դա ինչ անակնկալ որոշում է:

-Այ տղա, նոր ենք եկել,- ի՞նչ շտապելու հարց կա:

Հայկի կինը՝ Նարինեն, փորձեց Նազարյանին համոզել, որ այդպիսի բան չանի, դա տգեղ տպավորություն կթողնի հյուրերի վրա, բայց Նազարյանը մնաց անդրդվելի: Հայկը կնոջը քաշեց մի կողմ և ասաց.

-Թող գնան: Առանց այն էլ ես նրանց ձևի համար եմ հրավիրել: Ավելի լավ, թող գնան, մեր տունն ազատեն իրենց տհաճ ներկայությունից:

Անցած երկու ամիս՝ պարոն Նազարյանին հեռացրին զբաղեցրած պաշտոնից: Գտան, որ նա իր մարդկային և վարչական հատկանիշներով արժանի չէ գլխավորելու Սիրոգ քաղաքի ոստիկանությունը:

Դատապաշտպանը

Այդ օրվա դատական պրոցեսը շատ հաջող ավարտ ունեցավ: Դատապաշտպան-փաստաբանների ընկերությունը, Վահան Դարբինյանի և Արման Աբրահամյանի գլխավորությամբ, շահել էին դատը հօգուտ իրենց պաշտպանյալների: Դատը շահելու առթիվ ընկերության անդամները հավաքվել էին Դարբինյանի առանձնասենյակում: Բացելով շամպայնի շիշը՝ Արման Աբրահամյանը լցրեց բաժակները և շնորհավորանքի խոսք ասաց հենց հաղթանակի առթիվ խոսքն ուղղելով հատկապես Վահան Դարբինյանին: Խոսքը դեռ չավարտած՝ դուռը ծեծեցին.

-Մտե՛ք,- զվարթաձայն ասաց Դարբինյանը:

Դուռը բացվեց: Դռների մեջ կանգնած էին երկու հոգի՝ երիտասարդ մի տղամարդ և շեկ մազերով մի աղջիկ:

-Բարև ձեզ,- խոսեց երիտասարդը,- կներեք ձեզ անհանգստացնելու համար. ես ուզում եմ խոսել Վահան Դարբինյանի հետ:

-Դարբինյանը ես եմ,- սևեռուն նայելով երիտասարդին՝ ասաց Վահանը,- ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել:

-Ես ուզում եմ ձեզ հետ առանձին խոսել,- շուրջը նայելով՝ ասաց երիտասարդը:

-Խնդրեմ, խնդրե՛մ:

Երեքով առանձնացան. դուրս եկան սենյակից, քայլեցին դեպի միջանցք:

Երիտասարդը նայեց Դարբինյանին, ասաց.

-Ես Վալտեր Ղազարյանն եմ, դուք պետք է որ ինձ հիշեք:

-Ես,- երիտասարդի խոսքը կտրեց Դարբինյանը,- Հենց տեսա ձեզ, մտածեցի՝ որտեղ եմ տեսել այս մարդուն: Ձեր դեմքը շատ ծանոթ է ինձ... Ա՛խ, հա՛, հիշեցի... Հիշեցի ձեր դժբախտության մասին, ես իմացել եմ, որ ձեր եղբայրը անժամանակ մահացել է: Շավարշ Ղազարյան էր չէ՞ նրա անուն-ազգանունը: Ես չկարողացա ներկա գտնվել նրա հուղարկավորությանը, կներեք...Սպասի՛ր, սպասի՛ր... Մենք նույն դպրոցի նույն դասարանում ենք չէ՞ սովորել, մենք դասընկերներ ենք չէ՞,- միանգամից պայծառացավ Դարբինյանի գիտակցությունը և նա մտերմաբար կիսագրկեց իր նախկին ընկերոջ ուսերը:

-Շնորհակալություն ձեր ջերմ խոսքերի համար, շնորհակալություն, որ հիշեցիք ինձ: Այո՛, ես ձեր դասընկեր Վալտեր Ղազարյանն եմ, ես և Տատյանան՝ եղբորս՝ Շավարշի կինը, եկել ենք ձեզ մոտ մի խնդրանքով, որ դուք զբաղվեք եղբորս՝ Շավարշի սպանության գործով:

Դարբինյանը մի քիչ մտածեց, հետո ասաց.

-Կներեք, բայց ես չեմ կարող, խիստ զբաղված եմ, խոստանում եմ ձեզ համար մասնագիտական բարձր կարողությամբ օժտված իրավաբան-դատապաշտպան գտնել:

-Ո՛չ,- մտերիմ տոնի անցավ Վալտերը,- Վահա՛ն ջան, ես և Շավարշի կինը՝ Տատյանան, կներեք, որ դեռ չեմ ծանոթացրել, ուզում ենք, որ այդ գործով Հենց դուք զբաղվեք:

Դարբինյանը նոր միայն իմացավ, որ Վալտերի հետ եկած այդ շիկահեր կինը Շավարշի կինն է: Մինչև Վալտերը կծանոթացներ իրեն այդ կնոջ հետ, Դարբինյանը սեփական նախաձեռնությամբ ներկայացրեց իրեն՝ ձեռքն առաջ մեկնելով.

-Փաստաբան-իրավաբանների խորհրդի նախագահ Վահան Դարբինյան:

-Տատյանա Ադամովնա, կներեք, որ հայերեն վատ եմ խոսում:

Վալտերը բացատրեց.

-Տատյանա Ադամովնան եղբորս՝ Շավարշի կինն է, ազգությամբ ռուս է, բայց նրա մայրը՝ տիկին Արփինեն, հայուհի է:

-Ուրախ եմ ծանոթանալուս համար: Ես նորից կրկնում եմ, որ ես կարող եմ ձեզ օգնել իսկական, փորձված փաստաբան գտնելու հարցում,- ասաց Վահանը:

-Գուցե ձեզ անհանգստացնում է վճարի հարցը,- ասաց Տատյանան,- այդ հարցում մի՛ անհանգստացեք, մենք կարող ենք ձեզ վճարել ձեր ցանկացածի չափով: Մեզ խորհուրդ են տվել այդ հարցով միայն դիմել ձեզ: Մարդիկ իզուր չէ, որ համոզված են, որ այդ բարդ ու դժվարին գործից միայն դուք կարող եք գլուխ հանել: Մեզ համար կարևոր հանգամանք է նաև այն, որ դուք լավ եք ճանաչել Շավարշին, նրա մասին շատ բան գիտեք: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ դուք Վալտերի դասընկերն եք եղել: Մենք վստահ ենք, որ դուք հարազատի պես կհետաքրքրվեք գործի մանրամասնություններով և կգտնեք մարդասպանին: Մենք ձեզ խնդրում ենք հանուն Շավարշի և հանուն ձեր ընկերոջ ստանձնել այս բարդ ու դժվարին գործը: Մենք ձեզ վարձահատույց կլինենք:

Ի պատասխան Տատյանայի խոսքերի՝ Դաբինյանը միայն հարցրեց.

-Դուք կարծում եք, թե Շավարշին սպանե՞լ են:

-Ես չեմ կարծում,- ասաց Տատյանան,- ես դրանում համոզված եմ: Ոստիկանության այն ենթադրությունը, թե դա ինքնասպանություն է, ուղղակի մոլորություն է: Շավարշը ինքնասպան լինելու պատճառ չուներ, նա դրան ընդունակ չէր: Դա թյուր, ապակողմնորոշող կարծիք է: Շավարշը ծրագրեր ուներ, երազանքներ ուներ: Նա եկավ Հայաստան, որ իր հայրենիքին, իր ժողովրդին օգտակար լինի, մոտ լինի նրա հոգսերին: Նա անհամբեր սպասում էր իր առաջին զավակի լույս աշխարհ գալուն: Նա ինչպե՞ս կարող էր ինքն իր վրա ձեռք բարձրացնել: Դա սուտ է, դա հնարանք է, դա սարքովի բան է: Բոլոր դեպքերում ճշմարտությունը պետք է պարզվի, հանցագործը

պիտի Հայտնաբերվի: Ես դրան հավատում եմ: Եվ դուք, միայն դուք կարող եք այդ ճշմարտությունը ջրի երես հանել:

Դարբինյանն զգում էր, որ Տատյանան ճիշտ է: Նա լավ էր ճանաչում իր ամուսնուն և ճիշտ եզրակացություններ էր անում: Տատյանայի ասածները համոզիչ էին: Ի՞նչ անել, ընդառաջ գնալ նրա առաջարկությանը, թե՞ հրաժարվել:

Դարբինյանն այս անգամ ոչ թե առարկեց, այլ խուսափելով ուղղակի պատասխանից՝ ասաց.

-Տիկի՞ն Տատյանա, այդ դեպքում ժամանակ տվեք ինձ մտածելու: Երկու օրից ես կպատասխանեմ Վալտերին իմ մասին. համաձա՞յն եմ ձեր առաջարկին, թե՞ ոչ:

Վալտերն ու Տատյանան Վահանի խոսքերից հասկացան, որ դա կիսով չափ համաձայնություն է և դրա համար շատ ուրախացան: Այնուամենայնիվ, Վալտերը Վահանին հիշեցրեց.

-Գիտեք ինչ, պարո՞ն Դարբինյան, բանն այն է, որ երկու օր Տատյանան Երևանում մնալ չի կարող: Նա պիտի գնա: Հենց վաղը մենք ճանապարհվում ենք Գանձասար:

-Մի՛ անհանգստացեք,- հավաստիացրեց Դարբինյանը,- եթե ես դրական որոշում կայացնեմ, ապա ես ինքս կգամ Գանձասար և ձեզ կհայտնեմ այդ մասին: Այնպես որ Երևանում ձեր մնալ-չմնալը ոչինչի չի խանգարում:

Վալտերը և Տատյանան շնորհակալություն հայտնեցին Դարբինյանին պարզ ու անկեղծ խոսակցության համար և բաժանվեցին նրանից:

Վահանը վերադարձավ իր ընկերների մոտ և նրանց հետ շարունակեց ուրախությունը: Երեկոյան, երբ ընկերները գնացին իրենց տները, Վահանն ու Արմանը մենակ մնացին: Վահանը խորասուզված էր իր մտքերի մեջ: Արմանը նկատեց.

-Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես այդքան մտահոգ:

Վահանը լուռ մի քիչ սպասեց ու մտածկոտ ասաց.

-Վալտերը և Տատյանան էին ինձ մոտ: Նրանք երկար ժամանակ թախանձում էին, որ ես զբաղվեմ Շավարշի սպանության գործով: Այդ մասին եմ մտածում և չգիտեմ ինչ անեմ, տամ իմ համաձայնությունը, թե՞ ոչ: Եվ առհասարակ, արժե՞ գլուխդ մտցնել այդ չափազանց խճճված գործի մեջ: Ոստիկանությունը իր գործը ավարտված է համարում այն համարելով ինքնասպանություն: Վալտերը և հատկապես Տատյանան համաձայն չէին: Նրանք գտնում են, որ ոստիկանությունը հապճեպ որոշում է կայացրել, ինչպես Հարկն է խորամուխ չի եղել դեպքի հանգամանքների մեջ և սխալ եզրակացության է հանգել: Նրանք ուզում են գործի նոր քննություն սկսել և բացահայտել հանցագործին կամ հանցագործներին:

-Ես այդպես էլ չհասկացա, թե այդ Վալտերն ու Տատյանան ովքեր են և ինչ կապ ունեն գործի հետ,- հարցրեց Արմանը:

-Դու նրանց չես ճանաչում: Վալտերի հետ նույն դասարանում ես սովորել եմ Գանձասարի դպրոցում մինչև ութերորդ դասարանը: Հետո մենք բաժանվել ենք իրարից, երբ ես տեղափոխվել եմ Սիրոգ: Շավարշը Վալտերի ավագ եղբայրն է՝ նրանից 3 տարով մեծ: Տատյանան Շավարշի կինն է՝ ազգությամբ ռուս: Ռուսաստանում են ամուսնացել: Եվ հենց նրանք էլ՝ Վալտերը և Տատյանան, ուզում են ինձ վերցնել որպես դատապաշտպան: Հասկանո՞ւմ ես, նրանք վստահում են ինձ և համոզված են, որ ես կհայտնաբերեմ Շավարշին սպանող հանցագործին:

-Եվ դու ի՞նչ է, նրանց հետ համաձայնե՞լ ես, չթաքնված զարմանքով ասում է Արմանը,- Վահա՞ն, դու չգիտե՞ս, որ դա «մեռած» գործ է: Ոստիկանությունն այն կարճել է և շպրտել արխիվ: Եվ դու այդքանից հետո ուզում ես այդ անհեռանկար գործի բացահայտումը վերցնել քեզ վրա՞:

-Արմա՞ն, ես առայժմ խոսք չեմ տվել նրանց, բայց չեմ էլ ուզում հրաժարվել դրանից: Գիտե՞ս՝ ինձ էլ չափազանց հետաքրքիր են գործի մանրամասները, հետաքրքիր է բացել անհայտության վա-

բագոյրը, գտնել կծիկի ծայրը, որքան էլ այն խճճված լինի, բացա-հայտել իրականությունը, ճանաչել իսկական հանցագործին և, վեր-ջապես, չթողնել, որ հանցագործը տոնի իր հաղթանակը: Գիտեմ, որ դա ինձ համար անչափ դժվար է լինելու, գիտեմ, որ դրա համար տիտանական ջանքեր են պահանջվելու, բայց և այնպես, ուզում եմ տալ իմ համաձայնությունը և մտնել այդ ծանր գործի տակ:

Մեկ-երկու բոպե լռելուց հետո Վահանը շարունակեց իր խոս-քը:

-Համ էլ, ճիշտն ասած, չեմ կարող մերժել ընկերոջս՝ Վալտերի խնդրանքը և հիասթափեցնել նրան: Ուզում եմ, ձեռքովս ինչ գալիս է, օգտակար մի բան անել նրա համար: Համենայն դեպս ես նրանց ասել եմ, որ ինձ մտածելու ժամանակ տան: Պայմանին համաձայն լինելու դեպքում ես պետք է Գանձասար գնամ:

-Հիմա ի՞նչ ես ուզում անել,- հարցրեց Արմանը:

-Առավոտյան այդ մասին կխոսենք իմ առանձնասենյակում,- կարճ կապեց Վահանը:

Երեկոյան Վահանը խիստ անտրամադիր գնաց տուն: Հասկա-նում էր, թե ինչ դժոխային պարտականություն է վերցնում իր վրա: Ինչպես ասում են, հոնքամեջը չէր բացվում: Կինը՝ Անուշը, դա իս-կույն նկատեց:

-Ինչո՞ւ ես այդպես տխուր ու մտամոլոր, ի՞նչ է պատահել:

-Ուղղակի հոգնած եմ, ուրիշ ոչինչ,- ասաց Վահանը,- սիրտս ինչ-որ վատ բան է կանխազգում, կարծես գնում եմ դեպի դժոխք:

-Ի՞նչ դժոխք,- տագնապեց կինը,- ի՞նչ ես ինքդ քեզ բաներ հնարում, անորոշ բաներ ասում, հնարավոր չէ՞՝ պարզ ասես, ես էլ մի կարգին բան հասկանամ, վերջապես ի՞նչ է պատահել:

Վահանը չէր ուզում կնոջ առջև բացել իր անհանգստության դռները, ուզում էր շրջանցել ճշմարտությունը, ավելի շուտ չէր ուզում կնոջ հոգսերը մի ավելորդ անգամ շատացնել և նրան դնել անհան-

գիստ վիճակում: Վահանը նայեց կնոջը, դեմքին ժպիտ սարքեց և ասաց.

-Հիմա չի պատահել, Ֆնու՛շ, բայց հետո կարող է պատահել, մի քիչ պառկեմ, հանգստանամ, հետո կխոսենք:

Առավոտյան Վահանն ու Արմանը հանդիպեցին աշխատավայրում: Արմանին հետաքրքիր էր, թե ինչ որոշում է կայացրել Վահանը, և իսկույն խոսք բացեց Շավարշի սպանության մասին:

Վահանը հեռվից սկսեց: Պատմեց Շավարշի մանկության, պատանեկության տարիների մասին:

-Վալտերի միջոցով էի ես ճանաչում Շավարշին: Նա երեք տարով մեծ էր մեզնից: Հիշում եմ, երբ նա սովորում էր Գանձասարի դպրոցում: Ութերորդ դասարանն ավարտելուց հետո այլևս ուսումը չշարունակեց: Աշխատում էր տեղի կոմբինատի վերանորոգման արտադրամասում: Ակզբում դարբնի օգնական էր, հետո դարձավ դարբին:

Վահանը հիշում էր նաև Շավարշի և Վալտերի հորը, որին Զըռ Թևոս էին ասում: Բարձրահասակ մարդ էր, բոյը երկու մետրից ավելի: Հսկա մարդ էր՝ լայն ուսերով, ջլապինդ թևերով:

-Շավարշի և Վալտերի մորը համարյա չեմ հիշում,- քիչ հետո ասաց Վահանը,- բայց հիշում եմ, որ ունեին նաև երրորդ որդի՝ Ռուբիկը: Վերջինս էլ Շավարշից էր մեծ երեք տարով: Ինչքան հիշում եմ, Ռուբիկը դատվեց ինչ-որ կռիվ անելու պատճառով:

Արմանը կանխազգաց, որ Վահանը արդեն որոշակիորեն մոտադրվել է զբաղվել Շավարշի սպանության հարցերով, նույնիսկ առանձին փաստեր է հավաքել այդ կապակցությամբ և հասկացավ, որ վճիռն արդեն կայացված է՝ Վահան Դարբինյանն արդեն անցել է իր պարտականությունների կատարմանը և պատրաստ է լրջորեն զբաղվել Շավարշի սպանության հարցերով: Արմանը դրանում բոլորովին համոզվեց, երբ Վահանը սովորական զրույցից անցավ գործ-

նական խնդիրների և իրեն՝ Արմանին, այսինքն իր օգնականին հանձնարարություն տվեց.

-Արմա՜ն,- խիստ գործնական ասաց Վահանը,- գնում ես երկաթուղային կայարան, քանի որ Շավարշին հենց կայարանում են ձերբակալել գնացք նստելիս: Իմացիր՝ որտեղ է տրանսպորտային ոստիկանությունը: Ուսումնասիրում ես ոստիկանության շենքը, շրջապատը, բայց շենքից ներսից ներս չմտնես: Այդտեղ ապրող բնակիչներից որոշակի տվյալնե՛ր վերցրու: Մտի՛ր սրճարան, աշխատողներից իմացի՛ր՝ով է Շավարշի սպանության օրը հերթապահել, ովքեր են հաճախել սրճարան, հատկապես ոստիկաններ: Մի խոսքով, գործի կապակցությամբ իմացի՛ր ամեն բան, ինչ որ հնարավոր է: Դու գիտես, որ այս գործում մանրուքներ չկան: Իսկ ես այդ ընթացքում կզանգեմ Ներքին գործերի նախարարության մամուլի բաժին: Կտեսնեմ՝ այդ օրը ինչ են գրել թերթերը, կկարդամ հոդվածներ, նյութեր, գուցե դրանց մեջ որևէ օգտակար կամ հուշող բան գտնեմ:

Արմանը հասկացավ, որ հապաղել չի կարելի: Նստեց ավտոմեքենան և սլացավ դեպի երկաթուղային կայարան:

Արմանը ավտոմեքենան կանգնեցրեց ոստիկանության շենքից մի քիչ հեռու: Այստեղ սրճարան կար՝ «Սասունցի Դավիթ»:

«Ինչ որ կարգին սրճարան է: Կարևորն այն է, որ շատ մոտ է ոստիկանության շենքից»,- մտածեց Արմանը և մտավ սրճարան:

Նստեց պատահական մի տեղ: Բարմենը մոտեցավ նրան:

-Մի բաժակ սուրճ,- պատվիրեց Արմանը:

Սուրճը մատուցվեց: Մի երկու-երեք կում անելուց հետո Արմանը հարցրեց բարմենին:

-Մեր դիմաց այդ ի՞նչ շենք է:

-Խի չգիտե՞ք, Տրանսպորտային ոստիկանության շենքն է: Չե՞ք տեսնում՝ անընդհատ ոստիկաններ են գնում-գալիս:

-Այդ շենքո՞ւմ է կատարվել Շավարշի ինքնասպանությունը:

Բարմենը լրջացավ, մի քիչ զարմացած հարցրեց:

-Բա դուք որտեղի՞ց գիտեք այդ ինքնասպանության մասին:

-Ես,- բացատրեց Արմանը,- Կապլանից եմ, Շավարշն էլ մեր շրջանից էր: Որպես համերկրացի ասացին այդ մասին:

-Ճիշտ եք լսել,- ժպտաց, հետո ծիծաղեց բարմենը,- ես որոշ բաներ տեսել եմ, իհարկե: Մեզ մոտ սրճարան եկավ Շավարշը, նրա հետևից էլ եկան երկու ոստիկան: Ոստիկանները և Շավարշը երկար զրուցեցին իրար հետ: Հետո Շավարշը գնաց հերթապահ երկու ոստիկանների հետ:

-Այդ հերթապահ ոստիկանները հասակն առած մարդի՞կ են, թե՞ ջահելներ,- իմիջիայլոց հարցրեց Արմանը:

-Երկուսն էլ ջահել ոստիկաններ են: Նրանց անուններով էլ գիտեմ, եթե հետաքրքիր է, ասեմ՝ Տիգրան Հախումյան, Համլետ Պետրոսյան: Նրանք հաճախ են մեզ մոտ գալիս ընդմիջման ժամին: Լավ հիշում եմ Շավարշի ինքնասպանությունը տեղի ունեցավ հենց նրանց հերթապահության օրը:

Այ քեզ բան, այ քեզ հաջողություն... Արմանը չէր պատկերացնում, որ այդքան հեշտությամբ կարող էր միանգամից այդքան բան իմանալ: Նա նույնիսկ զարմացած էր իր հաջողությունից:

-Շնորհակալություն, շատ հաճելի սուրճ էր,- ասաց Արմանը և դուրս եկավ սրճարանից: Նա շատ գոհ էր այդ օրվա իր հաջողություններից: Գնաց, անմիջապես նստեց իր ավտոմեքենան, ուղիղ քշեց դեպի իր աշխատավայրը:

Այդ ժամանակ Վահան Դարբինյանը «Նորք» սրճարանում սպասում էր Նարեկ Բաղդասարյանին՝ Ներքին գործերի նախարարության մամուլի բաժնի աշխատողին: Դարբինյանն ընդամենը հինգ րոպե սպասեց նրան: Վերջինս եկավ և առանց շուրջը նայելու ուղղակի մոտեցավ Դարբինյանին և ասաց.

-Կներեք, պարոն Դարբինյան, որ մի քիչ ուշացա:

-Ոչինչ, նստեք, սուրճ կխմենք, կզրուցենք:

-Այո՛, իհարկե,- սիրահոժար ասաց մամուլի աշխատողը,- բայց ուզում եմ իմանալ՝ ինձ ինչու եք կանչել:

Վահան Դարբինյանն առանց ավելորդ արտահայտություններ-ի անմիջապես սկսեց խոսել գործի շուրջը:

-Երևի հիշում եք մոտ երկու ամիս առաջ ճանապարհատրանս-պորտային նախարարությունում տեղի ունեցած սենսացիոն ինք-նասպանության մասին: Խոսքը Շավարշի մասին է: Ի՞նչ կասեք այս հարցի շուրջ:

-Այո՛, շատ լավ հիշում եմ: Եվ ոչ միայն: Այդ լուրը ցնցեց ողջ քաղաքը: Ինչպես ասում են՝ «մաքուր գործ էր»՝շատ կասկածելի հանգամանքներում տեղի ունեցած: Հազար ու մի հակասական կար-ծիքներ էին պտտվում այդ հարցի շուրջ: Շատերն էին գտնում, որ դա ինքնասպանություն չէ: Այն ժամանակ ես ուշիուշով կարդացի ոստիկանության պետի զեկուցագիրն այդ մասին: Դատաբժշկական հանձնաժողովի բժիշկ-մասնագետների հաշվետվություն-եզրակա-ցություններ մեջ կասկածելի ոչինչ չգտա: Ամեն ինչ ասում էր այն մասին, որ տեղի է ունեցել ինքնասպանություն:

-Պարո՛ն Բաղդասարյան,- սուրճից մի կում անելով՝ ասաց Դարբինյանը,- դուք երբևէ չե՞ք մտածել այն մասին, թե ինչպես կա-րող էր նորմալ կյանքով ապրող երիտասարդը, որ կին ուներ, որ սպասում էր իր առաջին երեխայի լույս աշխարհ գալուն, որ չուներ սոցիալ-տնտեսական որևէ լուրջ պրոբլեմ, որ չուներ հոգեկան որևէ խանգարում, որ եկել էր Ռուսաստանից իր հայրենիք Հայաստանը և իր հարազատներին տեսնելու, հանկարծ անհասկանալի պատճառա-բանությամբ ձերբակալում են հենց գնացք նստելու պահին: Եվ դրանից հետո ինչ-որ խորհրդավոր պայմաններում տեղի է ունենում այդ ինքնասպանությունը: Դուք դրան հավատո՞ւմ եք:

-Գիտե՞ք ինչ, պարոն Դարբինյան,- բութ մատը դրած ճակա-տին՝ ասում է մամուլի աշխատողը,- այդ ամենն, իհարկե, կասկածի տեղիք է տալիս, բայց դրան հակառակ կան նաև փաստեր ու ապա-

ցույցներ: Կա բաժնի պետի զեկուցագիրն այն մասին, որ Շավարշը գողացել է Գանձասարի մշակույթի տան սադափանախշ կիթառը: Այդ փաստը հաստատել են Գանձասարի մշակույթի տան երկու աշխատողներ: Եվ հետո, դուք լավ գիտեք, որ, ինչ էլ լինի, «մենթը» «մենթին» երբեք չի մատնի: Այսինքն, այն, ինչ որ իրականում տեղի է ունեցել, մենք իմանալ չենք կարող:

Այս խոսքերի վրա Դարբինյանը միայն ժպտաց, նայեց պատուհանից դուրս և արտասանելու նման հատ-հատ ասաց.

-Մենք դա դեռ կտեսնենք: Իրարից կջոկենք ճիշտն ու սխալը: Այն փաստերն ու փաստարկները, որոնք դուք վկայակոչեցիք, դեռևս քիչ բան են ասում գործի իսկության մասին: Ամեն ինչ դեռ ծածկված է մնում խորհրդավոր քողի տակ: Թե ինչ է թաքնված այդ քողի տակն, դեռևս հայտնի չէ: Իրականությունը պարզելու համար պետք է այդ քողը վերցնել ու տեսել, թե դրա տակ ինչ գաղտնիք է թաքնված: Համենայն դեպս շատ շնորհակալ եմ ձեր նեղության համար:

-Ինձ կներեք, պարոն Դարբինյան, ես խոսեցի իմ իմացածի սահմաններում: Ուրիշ բան ասել չէի կարող:

Սուրճը խմելուց հետո երկուսով դուրս եկան սրճարանից: Վահանը նստեց ավտոմեքենան և քշեց դեպի իր աշխատատեղը: Արմանն արդեն դրասենյակում սպասում էր Վահանի վերադարձին:

-Ի՞նչ նորություններ կան,- հարցրեց Վահանը՝ ներս մտնելով:

Արմանը Վահանին ներկայացրեց «Սասունցի Դավիթ» սրճարանում տեսած-լսածները: Նա հայտնեց, որ հերթապահ ոստիկանները՝ լեյտենանտ Տիգրան Հախումյանը և ավագ լեյտենանտ Համլետ Պետրոսյանը, ըստ բարմենի վկայության, տեսել են Շավարշին և նույնիսկ զրուցել նրա հետ: Դրանից հետո՝գիշերը, տեղի է ունեցել ինքնասպանությունը: Ինքնասպանության օրը այդ ոստիկաններն են եղել հերթապահները:

Վահանն էլ իր հերթին Արմանին տեղյակ դարձրեց այդ օրվա իր արածի մասին:

-Ես Հանդիպեցի մամուլի աշխատողի հետ: Ոչ մի նոր բան չասաց: Միայն հաստատեց, որ ինքը ծանոթացել է ոստիկանության պետի զեկուցագրին, տեղյակ է դատաբժշկական փորձաքննության նյութերին: Այս ամենով Հանդերձ նա եզրակացրեց, որ իրոք տեղի է ունեցել ինքնասպանություն:

Մի պահ երկուսով լռեցին: Երկուսն էլ մտածում էին իրենց հետագա անելիքների մասին: Լռությունն առաջինը խզեց Արմանը.

-Հիմա ի՞նչ ենք անելու,- ու հարցական նայեց Վահանին:

Վահանը դեռ իր մտքերի հետ էր, սթափվեց ու ասաց.

-Ինչքան մտածում եմ, հնարավոր չէ, որ դա ինքնասպանություն լինի: Հնարավոր չէ, որ առողջ երիտասարդը, որ եկել է Ռուսաստանից, որ ապրում է ապահով կյանքով, թույլ տա իրեն գողանալ ինչ-որ մի կիթառ: Առավել ևս չեմ հավատում այն բանին, որ նա հենց այնպես մի գիշերվա ընթացքում որոշում կայացնի ու ինքնասպան լինի: Ինչքան մտածում եմ, այստեղ աՀավոր մի գաղտնիք է թաքնված: Բոլոր դեպքերում կարծում եմ, որ դա արվել է մի սրիկայի ոճրագործ ձեռքով: Մենք այդ գաղտնիքը պետք է կարողանանք պարզել: Բայց մեզ դա կՀաջողվի՝ ժամանակը ցույց կտա: Ճշմարտությունն այն է, որ խճճված-մճճված գործ է, բայց դա մեզ չպետք է վախեցնի:

-Մի րոպե պատկերացնենք, թե, այնուամենայնիվ, Շավարշն այդ կիթառը գողացել է,- շարունակում էր բարձրաձայն մտածել Արմանը, այդ դեպքում արժե՞ր մի կիթառի համար ոտքի կանգնեցնել մի ամբողջ ոստիկանություն և նույն օրն էլ գնացք նստելիս ձերբակալել նրան: Եվ անՀայտ է, թե ինչու է ինքն իր վրա ձեռք բարձրացրել: Ի՞նչ է, ամոթի զգացումի՞ց... կասկածելի է:

-Համենայն դեպս ուշ է արդեն, այսօր գնանք տուն: Վաղը կորոշենք մեր անելիքը,- ասաց Վահանը և տեղից վեր կացավ:

Մյուս օրվա առավոտյան Վահան Դարբինյանն ու Արման Աբրահամյանը սովորականից վաղ եկան աշխատանքի: Ամբողջ գիշերը

երկուսն էլ առանձին-առանձին մտածել էին Շավարշի ճակատագրական քայլի մասին... Մի՞թե, իրոք, նա ինքն է ինքնակամորեն ձեռք բարձրացրել իր վրա: Մտածել էին կիթառը գողանալու մասին և գտել, որ դա նույնպես անհավանական բան է: Ինչ-որ մեկին ձեռնտու է եղել այդպիսի բան սարքելը, որ արդարացվի նրա ձերբակալումը, իսկ ինքնասպան լինելու վարկածը ընդհանրապես անհանական էր թվում և՛ Վահանին, և՛ Արմանին:

-Ի՞նչ ես որոշել անել,- հարցրեց Արմանը:

-Բոլոր դեպքերում, իմ կարծիքով, գործը պիտի վերցնենք, որքան էլ այն դժվար ու ծանր լինի: Հիմա պայմանագի՛ր պատրաստիր: Ես դատապաշտպաններին տնօրենվելը Հայտնի դարձնեմ, որ հանուն այս գործի, ես իմ կողմից դադարեցնում եմ մյուս բոլոր վարույթները: Ուրիշ հարցեր էլ կան նրանց հետ քննարկելու: Եթե մինչև ընդմիջում չվերադառնամ, երեկոյան ես քեզ կզանգեմ:

Երեկոյան Վահանը զանգեց Արմանին:

-Առավոտյան,- ասաց Վահանը,- մոտ ժամը վեցին մեկնում ենք Գանձասար, պատրա՛ստ եղիր: Քեզ այդ ժամին կսպասեմ Նորագավիթի բենզալցակայանի մոտ: Գալու եմ իմ ընտանիքով: Նրանց կթողնենք Սիրոգում, մենք մեր ճանապարհը կշարունակենք դեպի Գանձասար:

Առավոտ շուտ Վահանն ընտանիքով պայմանավորված տեղում սպասում էր Արմանին: Արմանը չուշացավ, եկավ մի քանի րոպե հետո:

-Պայմանագիրը վերցրե՞լ ես,- անհանգստացավ Վահանը:

-Այո՛, վերցրել եմ Վահան ջան, հո միտքդ չե՞ս փոխել, գնո՛ւմ ենք Գանձասար:

-Այո, գնում ենք,- ասաց Վահանը՝ մի քիչ զարմացած Արմանի անհանգստության վրա,- գնում ենք ու վերջ:

Նստեցին ավտոմեքենան և շարժվեցին դեպի Սիրոգ: Սիրոգ հասան մոտ ժամը տասին: Վահանն ավտոմեքենան քշեց դեպի ի-

ռենց շէնքը, իսկ Արմանը սլացավ դեպի իր հայրական տունը: Տուն հասնելուն պես Վահանը կնոջը պատվիրեց սուրճ պատրաստել:

Կեսօրին մոտ Վահանը Արմանի հետ իր մեքենայով ճանապարհվեց դեպի Կապլան, այնտեղից էլ Գանձասար գնալու համար:

-Վաղուց Գանձասարում չեմ եղել,- ասաց Վահանը,- սա մեզ համար այդ տեսակետից հաճելի զբոսաշրջություն է:

Մի քանի կիլոմետր անցնելուց հետո Վահանը նկատեց, որ Արմանը ավտոմեքենայի օրորի տակ քնել է: Վահանը նախանձով նայեց Արմանին. ինքը ղեկի վրա էր, իրավունք չուներ քնելու: Բոլոր դեպքերում հաճելի ճանապարհ էր: Վահանի հայացքը շոյում էին հեռվում երևացող լեռներն ու սարերը: Գեղեցիկ ու վեհաշուք տեսարանները հաջորդում էին մեկը մյուսին: Շուրջը գորգի նման փռված համատարած կանաչ էր: Ավտոմեքենան կարծես թռչում էր ձորերի ու վիհերի վրայով: Կապլանից դեպի Գանձասար տանող ճանապարհի ձախ կողմում ահա երևաց նաև Բաղաբերդի կիսաքանդ եկեղեցու ուրվապատկերը: Ճանապարհի ոլորաններից մեկում Վահանը կտրուկ արգելակեց ավտոմեքենան՝ տեսնելով անձրևաջրերից առաջացած փոսը: Ավտոմեքենայի հանկարծակի կանգից Արմանն արթնացավ և տագնապով նայեց առաջ՝ ի՞նչ է եղել: Վահանը ծիծաղեց.

-Նայի՛ր, Արման, տես՝ ինչ հիասքանչ տեսարաններ են, այստեղ երևի վայրէջք է կատարել բնության Աստվածը, իսկ դու անտարբեր քնել ես: Յոթ տարեկանից սկսած ահա այս դիմացի եկեղեցու բարձրագնա տեղանքում մեր ճամբարն էր՝ անտառի մեջ: Այնտեղ՝ հեռվում, վեհատեսիլ ապառաժից պոկված ժայռաբեկոր կարտակը զովալ աղբյուր: Դա մեր՝ երեխաներիս աղբյուրն էր՝ աշխարհի բոլոր հանքային ջրերից քաղցր ու անուշ: Ժողովուրդը առասպել է

հյուսել ահա այդ հսկա քարաժայռի մասին: Իբր մարդիկ տեսնելու են եկել այստեղի հրաշքները, քարաժայռը հանկարծ փակվել է և իր ներսն առել զարմացած մարդկանց: Վախից մարդիկ դուրս են եկել այդ քարախորշից և ուրիշ ճանապարհ չգտնելով՝ թռել են ներքև՝ դեպի անդունդը: Ասում են՝ այդ թռչողներից մեկը ռուս աղջիկ է եղել, թռել է ժայռից ներքև ու հայերի հետ զոհվել: Դե ժողովուրդ է, ասում է, ո՞վ իմանա դրա սուտն ու ճիշտը: Բանը նրանում է, որ ժայռի մեջ կար երկաթե օղակ:

Զմայլված սյունիքյան այս գլխապտույտ գեղեցկություններով՝ Վահան ու Արմանը չնկատեցին՝ ինչպես Հասան Գանձասար: Քաղաքի հենց մուտքի մոտ մի մարդ էր կանգնած: Վահանը ավտոմեքենայի ընթացքը դանդաղեցրեց և կանգնեց նրանից մի քիչ հեռու՝ ասելով.

-Աչքիս պարոն Սարգսյանն է:

-Սարգսյանն ո՞վ է,- հարցրեց Արմանը:

-Պատմություն առարկայի իմ նախկին ուսուցիչը,- ասաց Վահանը և դուրս եկավ ավտոմեքենայից: Մոտենալով դիմացի մարդուն՝ նա ուրախ բացականչեց.

-Բարև ձեզ, պարո՞ն Սարգսյան:

-Բարև, երիտասա՛րդ,- ասաց Սարգսյանը՝ խորահայաց նայելով իրեն բարևող երիտասարդին,- բա՞ն եք ուզում հարցնել:

Վահանը լայն ժպտաց.

-Ո՛չ, պարոն Սարգսյան,- ինձ չե՞ք ճանաչում:

-Ճիշտն ասած, չէ: Կարո՞ղ է՝ դուք իմ նախկին աշակերտներից մեկը լինեք:

-Այո՛, ճիշտ եք, ես ձեր նախկին աշակերտներից եմ, սովորել եմ երկրորդ միջնակարգում: Հետո մեր ընտանիքը տեղափոխվել է Սիրոգ:

-Սպասի՛ր, սպասի՛ր, հիշեցի, դուք Վահան Դարբինյանն եք, եթե չեմ սխալվում:

-Այո՛, ես Վահան Դարբինյանն եմ,- ուրախացավ, որ նախկին ուսուցիչը ճանաչեց իրեն:

-Դուք սովորել եք իմ դստեր՝ Սվետլանայի հետ նույն դասարանում:

-Այո՛, ես Սվետլանայի համադասարանցին եմ:

-Ընկերդ ո՞վ է,- նայելով Արմանին՝ հարցրեց Սարգսյանը:

-Միասին ենք աշխատում: Անունն Արման է: Արման Աբրահամյան,- հանդիսավոր ներկայացրեց Վահանը:

-Ես անչափ շնորհակալ եմ, որ հիշել եք ինձ,- ներքին մի գորովանքով ասաց Սարգսյանը: Շատերը չէ, որ ավտոմեքենան կկանգնեցնեին իրենց ուսուցչի մոտ: Խնդրում եմ ինձ չմերժեք, գնալու ենք մեր տուն:

Վահանը Արմանին ասաց, որ հարկավոր է գնալ խանութ և ձեռքերով ինչ-որ բան հասկացրեց: Արմանը հասկացավ մի շիշ կոնյակ և շոկոլադ: Եվ գնաց:

-Բա ընկերդ ո՞ւր է, ի՞նչ եղավ,- շուրջը նայելով՝ հարցրեց Սարգսյանը:

-Գնաց ավտոմեքենան հարմար տեղ կանգնեցնելու,- ասաց Վահանը:

Արմանը գնաց և մի քանի րոպեից հետո եկավ: Սարգսյանը նրանց առաջնորդեց իրենց տուն: Դուռը բացեց Սարգսյանի կինը՝ տիկին Ժենյան: Վահանը գիտեր տիկին Ժենյային: Նա ուսուցչուհի էր դպրոցում, տարրական դասարանների դասվար. իրեն դաս չէր տվել, բայց բարի համբավ ուներ դպրոցում:

-Բարև ձեզ,- ոտքը դեռ չդրած շեմին՝ ասաց Վահանը:

-Համեցէ՛ք, համեցէ՛ք,- սիրալիր ասաց տիկին Ժենյան,- բարով եք եկել մեր տուն:

Մտան ճաշասենյակ: Հեռուստացույցը միացրած էր: Նստեցին նրա դիմաց դրված աթոռներին:

-Ժենյա՛ Ջան, այս երիտասարդը,- Սարգսյանը ձեռքը դրեց Վահանի ուսին,- մեր դպրոցի նախկին սանն է՝ պարոն Վահան Դարբինյանը: Ես նրան երկու տարի պատմություն եմ դասավանդել: Չմոռանամ ասել, որ նա ու Սվետլանան միևնույն դասարանում են սովորել:

-Մեզ հիշելու համար շնորհակալություն,- տիկին Ժենյան բազմանշանակ նայեց Անդրանիկին՝ ամուսնուն,- դե ես բարձր դասարաններում չեմ պարապել, չեմ հիշում, կներեք:

Տիկին Ժենյայի դուրս գնալուց հետո Վահանը նայեց Սարգսյանին և հարցրեց.

-Սվետլանան ո՞նց է, ամուսնացել է, չէ՞:

-Լավ է, Վահա՛ն Ջան: Ավարտել է համալսարանի աշխարհագրական ֆակուլտետը, այժմ աշխատում է դպրոցում: Ամուսնացել է Սուրենի հետ: Դու երևի հիշես նրան, ռուսական դպրոցում էր սովորում: Հաճախ էր ձեզ հետ ֆուտբոլ խաղում, նաև վիճում, կռվում էիք իրար հետ:

-Ուրախ եմ Սվետլանայի և նրա ընտանիքի համար,- ասաց Վահանը:

Ճաշի նստելուց առաջ Անդրանիկ Սարգսյանը հարցրեց.

-Եթե կարելի է, հարցնեմ ի՞նչ գործով եք եկել Գանձասար: Բարի՞ թե՞ չար:

-Դե, ինչպես ասեմ, պարոն Սարգսյան, հիմնականում բարի է մեր այցը Գանձասար: Ես եկել եմ քեռուս տունը: Նա մահացել է մի քանի տարի առաջ: Դուք երևի կհիշեք նրան: Անունը Անուշավան էր, եղել է քաղաքային ավտոբուսի վարորդը:

-Հիշում եմ, ինչպես չէ: Նա Գանձասարի միակ ավտոբուսի վարորդն էր: Շատ ջահել մահացավ: Հոյակապ մարդ էր:

Վահանը քիչ մտածելուց հետո գտավ, որ իր նախկին ուսուցչին՝ Անդրանիկ Սարգսյանին արժե ասել իրենց այցի նպատակների մասին: Նա կոկորդը մաքրեց, ասաց.

-Ճիշտն ասած, մենք եկել ենք Շավարշ Ղազարյանի խորհրդավոր մահվան կապակցությամբ: Ամերիկյան պայմաններում հանգուցյալ դարձած Շավարշի եղբայր Վալտերը խնդրեց ինձ, որ ես այդ գործի դատապաշտպանը լինեմ: Չկարողացա մերժել նրան: Եկել ենք այստեղից որոշ նյութեր քաղելու:

Հենց այդ պահին տիկին Ժենյան ներս մտավ: Վահանի և Սարգսյանի խոսակցությունն ընդհատվեց:

-Քիչ հետո ճաշը պատրաստ կլինի,- ժպտալով ասաց տանտիրուհին:

-Չէ, տիկին Ժենյա,- առարկեց Վահանը, ի՞նչ նեղություն է, մենք մեծ հաճույքով սուրճ կխմեինք:

Տիկին Ժենյան ժպտալով նայեց հյուրին և գնաց ճաշի պատրաստությունը շարունակելու: Նրա գնալուց հետո Սարգսյանը խոսքը շարունակեց Շավարշի մասին:

-Այո՛,- ծոր տվեց նա,- Շավարշի մահը ցավալի կորուստ էր մեզ բոլորիս համար: Ամբողջ Գանձասարն էր սգում Շավարշի անժամանակ կորուստը: Նրա թաղմանը հինգ հարյուրից ավելի հուղարկավոր կար: Մարդիկ մինչև հիմա էլ խոսում են նրա մասին:

-Իսկ դուք, պարոն Սարգսյան, ի՞նչ կարող եք ասել այդ մասին: Ճի՞շտ է, որ նա կիթառ է գողացել: Հավատո՞ւմ եք, որ նա իրոք ինքնասպանություն է գործել:

-Շավարշի ինքնասպանությանը հավատալ անհնար է: Այստեղ ոչ ոք դրան չի հավատում: «Լեռնային արծիվները» չէր կարող ինքն իրեն սպանել: Դա սուտ է ոտից գլուխ: Նա կյանքով լի երիտասարդ էր և միայն մի թշնամի ուներ՝ Հայաստանի թուրքը:

-Իսկ ինչո՞ւ եք նրան «Լեռնային արծիվներ» ասում, սա ի՞նչ է նշանակում,- հարցրեց Վահանը՝ տեսնելով, որ Շավարշի կենսագրության նոր էջեր են բացվում:

-Նրան,- բացատրեց Սարգսյանը,- այդպես կոչել են նրա ազատամարտիկ ընկերները Ղարաբաղյան ազատագրական պատե-

բազմի ժամանակ: Հայտնի է, որ Շավարշը եղել է վաշտի հրամանատար և իր տղաների հետ տասնյակ սխրանքներ է գործել՝ Գանձասարը պաշտպանելով Նախիջևանի թուրք հրոսակների հարձակումներից:

Տիրեց տևական լռություն: Վահանը ցանկանում էր էլի անդրադառնալ Շավարշի կենսագրությանը, նրա մարդկային բնութագիրն ամբողջությամբ պարզելու համար: Այս հանգամանքը նկատի ունենալով էլ նա հարցրեց.

-Ասում են, որ Շավարշը մանկուց զբաղվել է գողությամբ, ճի՞շտ է:

-Դա էլ կլինի: Դրանք բոլորը եղել են մանկական չարաճճիությունների արդյունք: Այստեղ զարմանալու բան չկա: Բայց մի անգամ լուրջ գողություն է կատարում: Կարողանում է աննկատ հափշտակել ոստիկանության հերթապահի ատրճանակը: Իմանալով այդ մասին՝ հայրը՝ Զբռ Թևոսը, շան թակ է տալիս որդուն: Եվ հրաշք է տեղի ունենում: Դրանից հետո Շավարշը իսպառ դադարում է գողություն անելուց:

-Սպասեք, սպասեք, ի՞նչ ատրճանակ, ի՞նչ ոստիկանություն...- Դա արդեն հետաքրքիր է: Խնդրում եմ այդ մասին ավելի մանրամասն ասեք,- անսպասելի նորությունից մի քիչ զարմացած՝ հարցնում է Վահանը:

-Դա վաղուց է եղել, և ես զարմանում եմ, որ դուք այդ մասին նոր եք լսում: Չէ՞ որ այդ ժամանակ դուք ապրում էիք Գանձասարում, պիտի որ հիշեք,- ասում է Սարգսյանը:

-Չէ՛, չեմ հիշում: Ինչքան էլ միտքս քրքրում եմ, չեմ հիշում,- ինքն իր վրա զարմացած՝ ասում է Վահանը:

-Տարիներ առաջ,- բացատրում է Սարգսյանը,- Շավարշը գողանում է ոստիկանության հերթապահ սպայի ատրճանակը: Հայրը՝ Զբռ Թևոսը, իմանում է այդ մասին, ատրճանակը տանում, հանձնում, որդուն էլ կիսամեռ է անում: Այքան բան: Սա, Վահա՛ն

ջան, եղել է Շավարշի աղմկահարույց գողությունը: Մնացածներն ե-
ղել են երեխայական արարքներ՝ հատուկ շատ երեխաների: Ասենք
շուկայից միրգ է թռցրել, տարել կերել և այսպիսի բաներ:

Տիկին Ժենյան այդ ընթացքում սուրճը բերեց.

-Ճաշելուց առաջ,- ասաց նա,- խմեցեք, որ պահպանեք ձեր
զվարթ տրամադրությունը:

-Շնորհակալություն,- ասաց Վահանը:

Նրա համար այնքան հետաքրքիր չէր սուրճը, որքան Սարգս-
յանի զրույցը Շավարշի մասին: Վահանն ուզում էր որքան հնարավոր
է շատ բան իմանալ Շավարշի մասին:

-Զարմանալի բան կատարվեց քաղաքում,- շարունակեց
Սարգսյանը,- տարածվեց, թե իբր «մաքուր գող է» Շավարշը: Մա-
նավանդ հասակավոր մարդիկ էին խոսում Նրա գողական կեցվածքի
մասին: Իսկ Շավարշն իրականում թաղի ամենագործունյա և ամե-
նահոգատար տղան էր: Նա տղաներին կազմակերպում էր, որ օգնեն
տարեց մարդկանց: Հարևանները գալիս տեսնում էին, որ առանց
զգուշացնելու իրենց տնամերձը փորված, մշակված է: Հասկանում
էին, որ այդ ամենը կատարվել է Շավարշի նախաձեռնությամբ:
Շավարշը օգնում էր շուկայից տուն դարձող տարեց մարդկանց՝
վերցնելով նրանց ձեռքներից կախված ծանրոցները: Եվ այսպիսի
շատ բաներ: Մարդկանց բարություն անելուց նա հաճույք էր ստա-
նում:

Սուրճը խմեցին, խոսեցին քաղաքականությունից, բնակիչների
ապրելակերպից: Սարգսյանը ասաց, որ կոմբինատն առայժմ չի աշ-
խատում, և բնակիչները մնացել են անգործ:

-Պարո՛ն Սարգսյան, կարելի՞ է՝ այստեղից զանգեմ քեռուս
կնոջը և ասեմ, որ կես ժամից կլինենք իրենց տանը:

-Բա ինչ, Վահա՛ն ջան, զանգի՛ր և իմ կողմից էլ բարևի՛ր
նրան:

Վահանը վերցրեց լսափողը, զանգեց տիկին Ալվարդին:

Տիկին Ժենյան ճաշը մատուցեց: Կերան, խմեցին, օրհնանքի խոսքեր ասացին, բարեմաղթություններ արեցին վաղվա համար: Կես ժամն անցավ, Վահանը կանգնեց տեղը:

-Դե մենք գնանք, պարո՞ն Սարգսյան: Ինչ բարեբախտություն էր, որ մենք հանդիպեցինք, և ես ձեզ ողջ ու առողջ տեսա: Սվետլանային իմ կողմից շատ ու շատ բարևներ հղեք:

-Շնորհակալ եմ ձեր այցի համար,- ի պատասխան Վահանի, ասաց Սարգսյանը,- ինչպես ասում են, նորեն համեցեք:

Վահանն ու Արմանը դուրս եկան Սարգսյանի տնից և ուղղություն վերցրին դեպի Վահանի քեռակնոջ տուն: Վահանը մտավ մթերային խանութ, գնումներ արեց և գեղեցիկ մի ծաղկեփունջ վերցրած՝ մոտեցավ քեռակնոջ շենքին:

Քեռակնոջ ընտանիքն ապրում էր եռահարկ ու հին մի շենքում: Դուռը բացեց քեռու կրտսեր որդին՝ Վաչոն, որ հայոց բանակում ծառայելուց հետո վերադարձել էր տուն: Վահանը գրկեց Վաչոյին:

-Մենք արդեն ձեզ սպասում էինք,- ասաց Վաչոն,- համեցեք ներս:

Ներս մտան: Քեռակին Ալվարդն ուրախ-ուրախ դիմավորեց հյուրերին:

-Բա ո՞ւր են մնացածները,- չորս կողմը նայելով՝ հարցրեց Վահանը:

-Ամեն մեկն իր ընտանիքն ունի,- պատասխանեց տիկին Ալվարդը,- բոլորն էլ այստեղ են ապրում, բոլորին էլ զանգել եմ, որ գալուդ առթիվ հավաքվեն: Երևի հիմա կգան:

Եվ իրոք, քիչ հետո իրար հետևից եկան քեռու զավակները՝ Վարդանը, Արշալույսը, Գրետան: Տունը միանգամից լցվեց ուրախությամբ: Հերթով գրկախառնվեցին Վահանի հետ: Սկսվեց աշխույժ զրույցը, հարց ու պատասխանները: Եռուզեռի մեջ Վահանը բոլորին ծանոթացրեց Արմանի հետ:

-Իմ ընկեր Արման Աբրահամյանը,- մի տեսակ հանդիսավոր ասաց Վահանը:

-Դուք ո՞նց եք, Վահա՛ն ջան, հարցրեց տիկին Ալվարդը,- կինդ, երեխաներդ լա՞վ են, ինչո՞ւ չեն մեր կողմերում երևում:

-Բոլորն էլ լավ են, քեռակի՛ն ջան, բոլորն էլ ի սրտե բարևում են:

-Գրեստա՛ ջան,- տիկին Ալվարդը դիմեց աղջիկներից մեկին,- սեղանը պատրաստի՛ր, տղաները սոված կլինեն, հեռու տեղից են եկել Սիրոգից:

-Ճիշտն ասած, սոված չենք, պարոն Սարգսյանը արդեն մեզ լավ հյուրասիրել է, բայց սուրճը չէր խանգարի,- ասաց Վահանը:

Քիչ հետո սուրճը մատուցվեց:

Տիկին Ալվարդը հարմար ժամանակ գտավ Վահանին հարցնելու.

-Իսկ այժմ ասացեք, թե ինչ հարցով եք եկել մեզ մոտ:

-Ճիշտն ասած, ասաց Վահանը,- եկել ենք Շավարշ Ղազարյանի սպանության, այսինքն ինքնասպանության հարցով: Ուզում ենք իմանալ՝ ինչ է կատարվել այստեղ՝ Գանձասարում, որի պատճառով էլ այդ երիտասարդը ինքնասպան է եղել:

-Ափսոս,- տխրաձայն ասաց տիկին Ալվարդը,- ափսոս այդ ջահելին, անտեղի կորավ գնաց: Մինչև հիմա էլ սգում է ողջ Գանձասարը: Նա մեր Գանձասարի լավագույն տղաներից մեկն էր:

-Տիկի՛ն Ալվարդ,- Վահանը նայեց քեռակնոջ աչքերի մեջ,- բայց նա գողացել է մշակույթի տան կիթառը, թե՞ չէ... Զանգել են ոստիկանություն, օրենքն էլ տեղնուտեղը բռնել է հենց գնացք նստելիս: Տիկի՛ն Ալվարդ, Շավարշն իսկապե՞ս գողացել է այդ չարաբաստիկ կիթառը, թե՞ գլխին սարքել են: Ո՞վ է զանգել ոստիկանություն, տեղյա՞կ եք այդ մասին:

-Կիթառն ով է գողացել՝ մինչև օրս էլ հայտնի չէ, տարբեր բաներ են ասում,- ասաց տիկին Ալվարդը՝ մի քիչ շունչ քաշելով,-

իսկ թե ոնց է զանգել Երևանի ոստիկանությունն, դա բոլորին է հայտնի: Զանգել է Գանձասարի մշակույթի տան տնօրեն Վաղարշակ Սարիբեկյանը: Նա ինքն է խոստովանել դա:

Արշալույսը, որ պատուհանի մոտ կանգնած նայում էր դուրս և միաժամանակ լսում էր իր մայրիկի և Վահանի զրույցը, հանկարծ բացականչեց.

-Ասում են չէ՞ անունը տուր սուփրան փռիր, ահա այնտեղ՝ փողոցի մեջտեղում կանգնած պարոն Սարիբեկյանը զրուցում է մի երկու-երեք հոգու հետ:

Վահանը, լսելով Սարիբեկյանի անունը, ոչ թե տեղից վեր կացավ, այլ թռավ Արշալույսի մոտ ու նայեց պատուհանից.

-Նրանից ո՞րն է էդ պարոն Սարիբեկյանը:

-Այ էն տարիքով մարդը, որ գլխարկով է,- ասաց Արշալույսը:

Վահանը հասկացավ, որ պահը կորցնել չի կարելի, արագ դուրս եկավ, իջավ փողոց և այն պահին հասավ Սարիբեկյանի մոտ, երբ նա արդեն բաժանվել էր իր զրուցակիցներից.

-Բարև ձեզ, պարո՞ն Սարիբեկյան,- ասաց Վահանը՝ ավելի մոտենալով:

-Բարև ձեզ,- պատասխանեց Սարիբեկյանը՝ զննողաբար նայելով դիմացինին,- ճիշտն ասած, ես ձեզ չեմ ճանաչում:

-Դա կարևոր չէ,- ասաց Վահանը՝ նայելով Սարիբեկյանի աչքերի մեջ,- ես շտապում եմ, բայց մի հարց ունեմ ձեզ տալու:

-Խնդրեմ, խնդրեմ,- սիրահոժար ասաց Սարիբեկյանը:

-Ես ուզում եմ իմանալ՝ դո՞ւք եք զանգել Երևանի ճանապարհային ոստիկանությունն Շավարշ Ղազարյանի կողմից կիթառի գողության կապակցությամբ:

Մի քիչ լռելոց հետո Սարիբեկյանը խոսեց.

-Ի՞նչ կա թաքցնելու, այո՛, ես եմ զանգել պարոն Հակոբյանին և այդ մասին տեղյակ պահել նրան: Բայց... Դուք որտեղի՞ց գիտեք

այդ մասին, կամ ինչո՞ւ է ձեզ հետաքրքրում այդ ամենը այսքան ժամանակ անցնելուց հետո: Դուք ո՞վ եք:

-Ես սովորական երևանցի մի քաղաքացի եմ,- ուրթը ծամելով ասաց Վահանը,- ինձ ուղղակի հետաքրքիր է իմանալ այդ տխուր պատմության մի քանի մանրամասներ:

Այս ամենը Վահանն ասաց որպես կողմնակի մի անձ, բայց քիչ հետո մտածեց, որ եկել է ժամանակը «հոգեբանական ճնշում« գործադրել դիմացինի վրա: Այդպես նա անում էր ոստիկանությունում աշխատելու տարիներին: «Հիմա է եկել այդ պահը, ուղղակի պետք է հակահարձակման անցնել և հնարավոր բոլոր միջոցներով իմանալ դուրս կորզել ճշմարտությունը»,- մտածեց նա: Եվ իրոք եկել էր այդ պահը և Վահանն անհապաղ գործի անցավ:

-Դուք, պարո՞ն Սարիբեկյան, բացարձակ զրպարտել եք մի երիտասարդի, որն այդ գողության հետ բոլորովին կապ չունի: Դուք ծախել եք ձեր խիղճն ու հոգին, որպեսզի պատասխանատվությունից ու խայտառակությունից ազատեք ձեր որդուն: Այդ գողության հեղինակը ձեր որդին է, ես դրանում ավելի քան համոզված եմ:

Վահանն սպասում էր, թե իր ասածի ինչ ազդեցություն կունենա դիմացինի վրա: Նա պարզապես հնարել էր Սարիբեկյանի որդու կողմից կիթառի գողության փաստը: Դրանից առաջ նա երկար էր մտածել այդ մասին: Ինչո՞ւ պիտի մշակույթի տան տնօրենը զանգեր ոստիկանություն, ինչո՞ւ էր նա շահագրգռված: Եվ ահա պարզեց, որ նա գտել էր գաղտնիքի բացահայտման ճիշտ ճանապարհը: Վահանի արձակած գնդակը կպել էր թիրախի կենտրոնին: Նրա վարկածը դարձել էր ճշմարտություն: Վահանն իր համար էլ անսպասելի ու հանկարծակի գտել էր գաղտնիքի հայտնաբերման ճիշտ տարբերակը: Այ քեզ բան: Այ քեզ հանկարծահաս հաջողություն: Նա արդեն հարյուր տոկոսով համոզված էր, որ կիթառի գողությունն իրականում կատարել է մշակույթի տան տնօրեն Սարիբեկյանի որդին: Վահանն ասես սրի մեկ հարվածով պատռել էր զրպարտչի դիմակը: Իսկ

զրպարտիչը նրա առջև կանգնել էր սփրթնած, աչքերը չռած, միանգամից անակնկալի եկած, որ, գլխին հարված ստացած բորենու նման վերջին ուժերը հավաքելով, կարողացավ ասել:

-Դուք որտեղի՞ց գիտեք այդ ամենը, դուք ի՞նչ է «մենթ» եք:

-Ո՛չ, ես «մենթ» չեմ, այլ ոստիկանության նախկին աշխատող,- հաղթականորեն ասաց Վահանը:

Մշակույթի տան տնօրենը լրիվ ջախջախված էր: Նապաստակն ընկել էր թակարդը:

Այդ ամենից հետո Վահանը շուռ եկավ ու վերադարձավ իր քեռու տունը: Նա ներս մտավ ու հոգնած նստեց բազկաթոռին: Բոլորը լուռ նայում էին նրան, քանի որ պատուհանից տեսել էին նրա և Սարիբեկյանի զրույցը և սպասում էին, թե Վահանն ինչ կասի զրույցի արդյունքների մասին:

Քեռակնոջ այն հարցին, թե Սարիբեկյանի հետ զրույցի արդյունքն ինչ եղավ, Վահանը կարճ պատասխան տվեց.

-Առայժմ դեռ ոչինչ պարզ չէ:

Սակայն Վահանի միտքը շարունակում էր գործել: Նա մտածում էր այն մասին, որ ժամանակն է հանդիպել Վալտերի և Տատյանայի հետ: Պետք է զանգել ու նրանց ասել, որ տանը սպասեն իր ու Արմանի այցին: Հանդիպումը պետք է տեղի ունենա նրանց տանը և ուրիշ ոչ մի տեղ: «Մենամարտն արդեն սկսված է,- ինքն իրեն մտորում էր Վահանը,- և այն պետք է շարունակել մինչև հաղթական ավարտը»:

Զանգելուց հետո Վահանն ու Արմանը նստեցին ավտոմեքենան և ճանապարհվեցին դեպի Զբռ Թևոսի տունը: Տունը քաղաքի կենտրոնից բավական հեռու էր: Այն գտնվում էր «Սարի թաղ» կոչված հսկա սարի լանջին: Մեկհարկանի բավական մեծ տուն էր՝ շրջապատված վարելահողերով, լոբու և կարտոֆիլի տնամերձ հողամասերով: Տան մոտ ավտոմեքենան կանգնեցնելու հարմար տեղ

կար: Այդ մասին հոգացել էր Զբռ Թևոսը՝ նկատի առնելով տեղի անհարմարությունը:

Վալտերն արդեն դրսում կանգնած սպասում էր: Նա անչափ ուրախ դիմավորեց հյուրերին:

-Բարև, Վալտե՛ր,- համարյա միաժամանակ ասացին Վահանն ու Արմանը:

-Բարև ձեզ, բարով եք եկել մեր տունը: Վահա՛ն ջան, սիրտս անընդհատ վկայում էր, որ գալու եք Գանձասար: Մտեք ներս, մերոնք սպասում են ձեզ:

Վահանն ու Արմանը Վալտերի ուղեկցությամբ ներս մտան: Տանը Տատյանան էր՝ Շավարշի կինը, Կարմենը՝ Վալտերի կինը, և հինգ տարեկան Արտակը՝ Վալտերի փոքրիկը:

Կանայք նրանց ջերմորեն ընդունեցին: Վահանն ու Արմանը նստեցին փափուկ բազկաթոռներին:

-Ինչպե՞ս եկաք մեր Գանձասարը,- ասաց Տատյանան,- շատ ծանր ճանապարհ է:

-Ծանր է, բայց բնությունն անչափ գեղեցիկ է, այդ պատճառով էլ հոգնություն չենք զգում,- ասաց Արմանը:

-Մեզ մոտ՝ Եկատերինբուրգում էլ լեռներ կան, բայց այստեղի նման բարձր չեն ու սրագագաթ,- եզրափակեց Տատյանան, որ փորձում էր ուրախ երևալ, բայց աչքերը տխուր էին:

-Ո՞նց եք, տիկի՛ն Տատյանա,- հարցրեց վահանը:

-Դե ինչպես ասեմ, ուզում եմ ամեն ինչին հարմարվել,- ժպտաց հղի Տատյանան,- մեկ ստացվում է, մեկ չի ստացվում:

-Ոչինչ, տիկին Տատյանա, վերջը լավ է լինելու,- հուսադրեց Վահանը:

Մի քիչ լռելուց հետո Վահանը անհրաժեշտ գտավ խոսել իրենց գալու նպատակների ու դրդապատճառների մասին, մանավանդ զգում էր, որ և՛ Վալտերը, և՛ Տատյանան սպասում էին իր խոսքին:

-Ինչպես տեսնում եք, ես ու Արմանը հանձն ենք առել գործի պատասխանատվությունը և մինչև այստեղ գալը արդեն հավաքել ենք որոշ տեղեկություններ Շավարշի... ինքնասպանության վերաբերյալ: Թույլատրեք առայժմ դա ինքնասպանություն կոչել:

Նախնական տվյալներով մենք եկել ենք այն եզրակացության, որ դա կարող է եղած լինի սպանություն, ոչ թե ինքնասպանություն: Ոչինչ դեռ պարզ չէ: Դեռ գործը նոր է սկսվում: Այժմ մեզ հարկավոր է պարզել երկու բան: Առաջին՝ եթե դա եղել է սպանություն, ապա ինչպե՞ս և ի՞նչ պատճառով: Երկրորդ՝ եթե դա եղել է ինքնասպանություն, ապա ինչ պայմաններում, ինչո՞ւ: Իհարկե, ինքնասպանությունը քիչ հավանական է, բայց համենայն դեպս դա էլ պարզաբանում է պահանջում:

Հետո Վահանը շուռ եկավ ու դիմեց Արմանին.

-Հանի՛ր գործի առթիվ կազմած պայմանագիրը: Ես խնդրում եմ Վալտեր և դուք՝ տիկին Տատյանա, կարդացեք ու լավ ուսումնասիրեք այն և եթե համաձայն եք կետ առ կետ գրված պայմաններին, ապա կարող եք ստորագրել: Օրենքն է այդպես պահանջում: Վալտերը ձեռքն առավ պայմանագիրը, թերթևակի նայեց և առանց կարդալու այն մեկնեց Տատյանային:

-Կարդա՛, եթե կարող ես:

Տատյանան ժպտաց, ասաց.

-Մենք մինչև վերջին տառը համաձայն ենք պայմանագրի բոլոր կետերին և առանց որևէ առարկության վստահում ենք Վահանին:

Երկուսն էլ ստորագրեցին պայմանագիրը:

Ստորագրելուց հետո Տատյանան ձեռնապայուսակից հանեց երեք հազար դոլար և մեկնեց դեպի վահանը:

-Այս փողը վերցրեք որպես կանխավճար, հնարավոր է, որ այն ձեզ շատ պետք գա:

Վահանը փողը վերցրեց:

-Դե ինչ, իսկ հիմա ինձ թվում է՝ պետք է նշենք պայմանագրի ստորագրման պահը,- ասաց Վալտերը,- գործի վերջը թող բարի լի-նի, և մենք վերջապես իմանանք այն սրիկայի անունը, որ ձեռք է բարձրացրել եղբորս՝ Շավարշի վրա:

-Շնորհակալ ենք,- ասաց Վահանը,- ես ու Արմանը իմ քեռու տանը լավ հաց ենք կերել: Տատյանան թող մեզ համար սուրճ պատ-րաստի:

-Սուրճը ես կպատրաստեմ,- ասաց Վալտերի կինը՝ Կարմենը, և իսկույն գնաց խոհանոց:

Սակայն Վալտերը մնաց իր խոսքին:Նա գնաց և իր հետ մի շիշ տնական ինքնաթոր թթի օղի բերեց: Վալտերը տղաների բաժակնե-րը օղի լցրեց: Բոլորը ոտքի կանգնեցին և խմեցին վաղամեռիկ Շա-վարշ Ղազարյանի հոգու հանգստության համար:

Կարմենը սուրճը դրանից հետո բերեց:

Վահանն ու Արմանը նայեցին իրար և որոշեցին հրաժեշտ տալ տնեցիներին: Վալտերը նրանց հետ դուրս եկավ և հարցրեց.

-Հո Սիրոգ չե՞ք գնում:

Վահանը չհասկացավ, թե ինչու է Վալտերը այդ հարցը տալիս, բայց բացասական պատասխան ստացավ:

-Չէ, որոշել ենք այս գիշեր մնալ քեռուս տանը:

Վահանը պարզապես ուզում էր մենակ մնալ Արմանի հետ:

Վահանն ու Արմանը, սակայն, քեռու տանը չմնացին: Վալտերի տնից դուրս գալուց հետո անմիջապես ճանապարհվեցին Սիրոգ: Ժամանակին տեղ հասան: Արմանը Վահանից բաժանվեց, գնաց ի-րենց տուն: Վահանը ավտոմեքենան կանգնեցնելուց հետո շարժվեց դեպի իրենց տուն: Վահանը մոտավ իրենց տուն: Ինուշը տանն էր: Վահանը գրկեց, համբուրեց կնոջը, հարցրեց երեխաներից: Ինուշը հետաքրքրվեց Վահանի քեռակնոջ առողջությամբ:

-Ամեն ինչ լավ է, տիկին Ալվարդը, զավակները, բոլորն էլ ողջ ու առողջ են: Բարևում են: Իսկ ո՞ւր են երեխաները:

-Բակում իրենց հասակակիցների հետ խաղում են:

-Սոված եմ, Ամուշ, ուտելու բան կա՞:

-Նստիր, հանգստացիր, մի բան պատրաստեմ, երեխաներին էլ կանչեմ, միասին նստենք հաց ուտենք,- ուրախ-ուրախ ասաց Ամուշը:

Վահանը միացրեց հեռուստացույցը: Կես ժամից հետո երեխաները եկան: Վահանը գրկեց, համբուրեց նրանց, ասաց.

-Հը՛, կարոտե՞լ եք Սիրոգի ձեր ընկեր-ընկերուհիներին:

Նստեցին սեղանի շուրջը: Հաց ուտելուց հետո Ամուշը նայեց Վահանին, ասաց.

-Արի՛ գնանք քրոջս տուն, ճիշտն ասած, նրան կարոտել եմ:

-Ամու՛շ, հոգնած եմ, մի ժամ, երկու ժամ, մի քիչ պառկեմ, հանգստանամ, երեկոյան կգնանք,- ասաց Վահանը և թեք ընկավ բազմոցի վրա:

Քիչ հետո նա արդեն քնած էր:

Երեկոյան Վահանը, ինչպես խոստացել էր, վեր կացավ, կնոջ և երեխաների հետ գնաց Հայկենց տուն:

-Բարով եք եկել,- ուրախ դիմավորեց Հայկը,- էս ի՞նչ է պատահել, ինչքան ժամանակ է՝ մեր կողմերում չեք երևում: Ինչպե՞ս եք, Վահա՛ն, կարողանո՞ւմ եք մայրաքաղաքային կյանքին հարմարվել:

-Ճարնե՛րս ինչ, ուզած-չուզած պիտի հարմարվենք,- ասաց վահանը:

-Տանդ շինարարությունն ինպե՞ս է, գործն առա՞ջ է գնում,- հարցրեց Հայկը:

-Շինարարությունն արդեն ավարտել ենք, վերանորոգման, ներքին հարդարման աշխատանքներն ենք սկսել: Ճիշտ է, մայրաքաղաքում նոր տուն եմ կառուցել, Հա՛յկ ջան, բայց չգիտեմ ինչու մի տեսակ սիրտս վրան չի:

-Ոչինչ, վերանորոգումից հետո ամեն ինչ տեղը կընկնի,- ժպտաց Հայկը:

-Համեցեք ճաշասենյակ, սեղանը պատրաստ է,- զվարթաձայն ասաց տիկին Մարինեն՝ Հայկի կինը, որ շատ էր ուրախացել քրոջ՝ Ֆնուշի այցելության առթիվ:

Բոլորը, ինչպես նաև երեխաները, նստեցին սեղանի շուրջը:

-Թթի օղի՞, թե՞ կոնյակ,- հարցրեց Հայկը Վահանին:

-Ձէ, օղի չեմ ուզում, կոնյա՛կ լցրու:

-Հո գիշերը չե՞ս մեկնելու Երևան,- հարցրեց Հայկը:

-Ո՛չ, առավոտյան եմ մեկնելու, ժամը ութին-իննին:

Ընթրելուց հետո Վահանն ու Հայկը գնացին պատշգամբ: Մարինեն սուրճը նրանց այստեղ մատուցեց:

-Ի՞նչ եղավ,- Հայկը հարցական նայեց Վահանին,- գանձասարցիները ստորագրեցի՞ն պայմանագիրը:

-Ստորագրելը ստորագրեցին, բայց դա ի՞նչ խնդիր է լուծում որ... Հարցերն շատ ավելի շատ են քան պատասխանները: Ես էն գլխից էլ գիտեի, որ դժվար գործ է,- ասաց Վահանը:

-Միգուցե չարժե՞ր մտնել այդ ծանր բեռան տակ,- մտահոգ ասաց Հայկը,- հը՛, ի՞նչ կասես:

-Իսկ քո կարծիքով ինչո՞ւ չարժե,- ասաց Վահանը՝ սպասելով, թե ինչ կասի Հայկը:

Հայկը միանգամից չկարողացավ պատասխանել այդ հարցին: Լռեց, բայց հետո, այնուամենայնիվ, խոսեց.

-Գիտե՞ս, Վահա՛ն ջան, բարդ ժամանակների ենք եկել դեմ առել, չար ու բարոյազուրկ մարդիկ շատացել են: Դու ինչպե՞ս կարող ես նման պայմաններում պարզել որևէ ճշմարտություն: Համատարած կեղտի տակից դու կարո՞ղ ես հանել մաքուրն ու պարզը:

Վահանը լուռ լսում էր: Հետո դարձավ Հայկին.

-Գիտե՞ս, Հա՛յկ ջան, ես այդ ամենը գիտեմ, այդքանն իմանալով հանդերձ եմ ես հանձն առել այդ դժվարին գործը: Հետո...

Դու ինձ գիտես էլի, ես ատում եմ «մենթերին»: «Մենթերին» ,ոչ թե ազնիվ ու պատասխանատու ոստիկաններին: Ես այդ «մենթերի» դիմակն ուզում եմ պատռել, անխիղճ, անօրեն մարդկանց իսկական դեմքը պարզել: Ես չեմ կարող չպայքարել նրանց դեմ, ովքեր խաբում ու կեղծում են, ժողովրդին պատվազրկում ու արհամարհում են: Ես ուզում եմ ազնիվն ու արդարը ջրի երես հանել, Հա՛յկ: Դու հասկանո՞ւմ ես դաժանաբար ու անտեղի սպանել են մի ազնիվ, հայրենասեր ու կտրիճ երիտասարդի: Վերջապես ուզում եմ պարզել, թե ով է նրան գազանաբար սպանել: Ուզում եմ այդ սրիկային կանգնեցնել իր հերթական հանցագործությունների կես ճանապարհին: Ահա թե ինչու եմ հանձն առել այս դեռևս մութ ու դժվարին գործը, Հա՛յկ ջան:

-Դե ինչ, քո գործին հաջողություն եմ ցանկանում, ես էլ իմ կողմից ինչով կարող եմ, կօգնեմ քեզ,- ոգևորված ասաց Հայկը:

-Առայժմ,- ասաց Վահանը՝ տեղը կանգնելով,- շնորհակալություն հյուրասիրության համար, արդեն տուն գնալու ժամանակն է: Երևանը ինձ է սպասում:

Առավոտյան Վահան արթնացավ մոտ ժամը ութին: Վեր կացավ, գնաց երեխաների ննջարանը:

-Երեխանե՛ր, արթնացե՛ք, Երևան գնալու ժամանակն է:

Հետո զանգեց Արմանին:

-Բարի լույս, արթնացե՞լ ես, թե՞ ...

-Ոչ միայն արթնացել, այլև նախաճաշել եմ,- հնչեց Արմանի ձայնը:

-Լավ է, ավտոմեքենադ պատրաստ է, մեկ ժամից դուրս ենք գալիս: Կհանդիպենք Սիրոգի բաշին՝ «Զանգերի մոտ»:

Ժամը երկուսին մոտն Երևան: Ավտոմեքենաները կանգնեցրին Նորագավիթի «Ադանա» խանութի դիմաց տան համար գնումներ կատարելու համար: Վահանն ու Արմանը պայմանավորվեցին հանդիպել գրասենյակում: Հաջորդ օրվա առավոտյան Վահանն ար-

դեն գրասենյակում էր, երբ հինգ րոպեից հետո էլ Արմանն եկավ: Ի-
րար ողջունելուց հետո Վահանը սուրճ պատրաստեց: Սուրճը խմե-
ցին, անցան իրենց առօրյա գործերին: Վահանը սեղանի գզրոցից
ինչ-որ թղթեր էր հանում, նայում, իսկ Արմանը սպասում էր Վահանի
հետագա հանձնարարություններին: Արմանը ճիշտ էր կռահել, Վա-
հանի հանձնարարությունը չուշացավ: Նա ուղղվեց աթոռի վրա, ար-
մունկները հենեց սեղանին և գործնական տոնով ասաց.

-Իմ կարծիքով, Արման, դու պիտի հանդիպես հերթապահ եր-
կու ոստիկանների հետ:

Ոստիկանություն չգնաս, նրանք այնտեղ քեզ ոչինչ չեն ասի:
Շատ լավ կլինի, որ հանդիպումը տեղի ունենա «Սասունցի Դավիթ»
սրճարանում, այսինքն ազատ միջավայրում: Երբ նրանք սուրճ խմե-
լիս լինեն, կմոտենաս նրանց և կինդրես նստել նրանց հետ նույն սե-
ղանի շուրջը: Ինձ թվում է՝ նրանք քեզ չեն մերժի: Որպես զրույցի
սկիզբ նրանց կասես, որ ցանկություն ունես աշխատելու ոստիկա-
նությունում: Հետո կամաց-կամաց կանցնես Շավարշ Ղազարյանի
մասին խոսակցությանը: Այս մասին կհարցնես միայն այն ժամանակ,
երբ տեսնես, որ պահը հարմար է, հակառակ դեպքում կլռես: Այսքան
բան: Զգույշ կլինես, ավելորդ արտահայտություններ չանես:
Ավելի շատ կլսես, քան կխոսես: Իսկ ես այդ ընթացքում պիտի մտնեմ Ար-
դարադատության նախարարություն: Մեր այս գործի համար
թույլտվություն վերցնելու և դատական գործ սկսելու համար:

Շավարշի ինքնասպանության գործը համակողմանի ուսում-
նասիրություն էր պահանջում: Գործի բացահայտման համար անհ-
րաժեշտ էր պարզել շատ մանրամասնություններ: Ինչ միջավայրում
է մեծացել Շավարշը, դպրոցում ինչպես է սովորել, ովքեր են եղել
նրա մանկության և պատանեկության ընկերները, ինչպիսի երիտա-

սարդությունն է անցկացրել և վերջապես ովքեր են եղել նրա ծնողները:

Այնպես որ Շավարշի ինքնասպանության մասին «գործը» հարստանում էր նոր փաստերով ու վկայություններով, օրեցօր այն մեծանում, ստվարանում էր: «Գործի» սկիզբը ծնողների մասին էր:

Հայրը՝ Թևոս Ղազարյանը, ծնվել է 1935 թվականին Գանձասար քաղաքում: Մայրը՝ Ծովինար Ղազարյանը, ծնվել է 1938 թվականին Գանձասար քաղաքում: Նրանց ամուսնությունը եղել է ոչ այնքան փոխադարձ սիրո, որքան հարմարվողականության հողի վրա: Ամուսնացել են 1958 թվականին: Այդ ժամանակ Թևոսը քսաներեք տարեկան էր, Ծովինարը՝ քսան: Սկզբում ապրել են վարձով: 1959 թվականին ծնվում է նրանց անդրանիկ որդին՝ Ռուբիկը: Հայր Թևոսը սովորել է Գանձասարի միջնակարգ դպրոցում: Ավարտելով ութերորդ դասարանը՝ աշխատանքի է անցել կոմբինատի նորոգման արտադրամասում: Պատանի Թևոսը սկզբում դարբնի օգնական էր, հետո դարձել է դարբին: Այդ ժամանակ էլ նա ստանում է Զըռ Թևոս մականունը: Կինը՝ Ծովինար Ղազարյանը, աշխատում է Գանձասարի հացի գործարանում: Կոմբինատի միջնորդությամբ Ղազարյանները տնամերձ հողամաս են ստանում և իրենց ինայած միջոցներով սկսում են տուն կառուցել: Ծնվում է Ղազարյանների երկրորդ որդին՝ Շավարշը: Երեք տարի է տևում Ղազարյանների տան շինարարությունը, որից հետո նրանք ապրում են իրենց կառուցած տանը: 1964 թվականին ծնվում է նրանց Վալտեր որդին: Երեք արու զավակների դաստիարակության ամբողջ ծանրությունն ընկնում է մոր՝ Ծովինարի ուսերին: Հայր Թևոսը ծանր ու հոգնատանջ աշխատանքից հետո հնարավորություն ու ժամանակ չուներ զբաղվելու երեխաների դաստիարակության հարցերով: Վրա է հասնում դժբախտությունը: Ծովինարը մի քանի տարի հետո դառնում է անկողնային հիվանդ: Ընտանիքի հոգն ամբողջությամբ ծանրանում է հայր Թևոսի ուսերին: Երեխաները մեծանում էին մոր հոգատարությունից

հեռու և ինչպես հարկն է հայրական դաստիարակություն էլ չէին ստանում:

Ընկնելով չարաճճի տղաների շրջապատ՝ Շավարշ Ղազարյանը սկսում է զբաղվել այսպես կոչված մանր գողություններով: Հիմնականում ընկերները, Շավարշի գլխավորությամբ, շուկայից մրգեր էին թռցնում, տանում մի թաքուն տեղ ուտում:

Մի օր Թևոսը սաստիկ զբաղված լինելու պատճառով բժշկի գրած դեղատոմսի հետ փող է տալիս Շավարշին, որ դեղատնից հաշմանդամ Ծովինարի համար դեղեր գնի: Շավարշը դեղատոմս ու փողը վերցնում, տնից դուրս է գալիս: Դեղատոմսը, որ պիտի գնար Շավարշը, գտնվում էր ոստիկանության հինգհարկանի շենքի առաջին հարկում: Դեպի դեղատուն գնալիս Շավարշը հանկարծ նկատում է, որ ցածրադիր պատուհանի գոգին ատրճանակ կա: Նայում է չորս կողմը՝ մարդ չկա: Հանգիստ վերցնում է ատրճանակը, թաքցնում ծոցում, դեղերն առնում ու գնում տուն:

Ոստիկանության ավագ լեյտենանտ Գեղամ Հակոբյանը, որ ատրճանակը հանել, դրել էր պատուհանի գոգին, զուգարանից դուրս է գալիս, տեսնում՝ ատրճանակը չկա:

Շավարշը գալիս է տուն, դեղերը տալիս է մորը: Հենց այդ ժամանակ ներս է մտնում եղբայր Ռուբիկը: Շավարշը ծոցից հանում է ատրճանակը, ցույց տալիս եղբորը: Մտածում են՝ ինչ անեն: Որոշում են գնալ կողքի ձորը և այնտեղ փորձել ատրճանակի զորությունը:

Հայր Թևոսը, որ արդեն եկել էր տուն, ձորից կրակոցից ձայն է լսում: Կանչում է տղաներին, ոչ Ռուբիկն է երևում, ոչ էլ Շավարշը: Կրակոցի ձայնի վրա գնում տեսնում է, որ կրակողները հենց իր տղաներն են: Ատրճանակը Շավարշի ձեռքին է տեսնում:

-Այ տղա,- գոռում է Թևոսը,- քեզ որտեղի՞ց այս ատրճանակը:

Շավարշը լուռ ու շփոթված նայում է հորը:

-Քեզ հետ եմ,- ամբողջ կոկորդով ճչում է Թևոսը:

Թևոսի կատաղության նոպան բռնում է, իսկ Շավարշը, վախից կուչ եկած, լաց է լինում:

-Քեզ նորից եմ հարցնում, որտեղի՞ց ես վերցրել այդ ատրճանակը: Ասա, թե չէ հենց այստեղ էլ կմորթեմ քեզ:

Շավարշի ձեռքը ոլորելով՝ Թևոսը վերցնում է ատրճանակը:

Շավարշը, չկարողանալով արցունքները զսպել, փոքր երեխայի նման կմկմում է.

-Պա...պա...պատուհանը բաց էր, նայեցի՝ մարդ չկար, վերցրի:

-Ի՞նչ պատուհան, որտե՞ղ է այդ պատուհանը, կարո՞ղ ես ինձ ցույց տալ,- կատաղած հարցնում է Թևոսը:

-Դեղատան կողքի շենքի պատուհանը...

-Ուրեմն սա ոստիկանի ատրճանակ է: Դու ոստիկանի ատրճանա՞կ ես գողացել:

Ռոբիկը, տեսնելով հոր կատաղած վիճակը, վաղուց էր փախել:

Թևոսը չի ներում Շավարշին: Մի քանի անգամ ուժգին ապտակում է նրան ու տապալում գետնին:

-Դու հասկանո՞ւմ ես՝ ինչ հանցանք ես գործել, լակոտ:

Տուն գնալուց հետո, երբ շունչը մի քիչ տեղն է գալիս, Թևոսը որոշում է ատրճանակը տանել և հանձնել ոստիկանությունն:

Իսկ նույն ժամանակ ավագ լեյտենանտ Գեղամ Հակոբյանը շարունակում էր փնտրել ատրճանակը՝ հասկանալով, որ չգտնելու դեպքում իրեն մեծ պատիժ է սպասվում:

Գեղամ Հակոբյանը մոտեցավ Հեռախոսի մոտ Հերթապահող ադրբեջանցի Նարիման Մամեդովին: «Կա-չկա նչանից հեռու չի,- մտածեց Հակոբյանը,- ադրբեջանցու սովորությունն է, ատրճանակ տեսնի ու չվերցնի՝ անհնար բան է» :

-Նարիման, ատրճանակը հո դու չե՞ս վերցրել:

-Ի՞նչ ատրճանակ, Հակոբյա՛ն ջան, չէ, ես ատրճանակ չեմ վերցրել:

-Դե լավ, կատակ մի անի, ես լուրջ եմ ասում:

-Ի՞նչ կատակ, Հակոբյան ջան, լուրջ եմ ասում ես ատրճանակ չեմ տեսել:

-Լավ, այդ դեպքում գոնե չէ՞ս տեսել՝ ով է պատուհանին մոտեցել, ով է երևացել մոտերքում:

-Չէ՛, իմ արև, Հակոբյա՛ն ջան, այս կողմերում կողմնակի մարդ չեմ տեսել:

Եվ այս անգամ երկուսով են սկսում փնտրել ատրճանակը:

Գեղամ Հակոբյանը հոյսը կտրած նստում է աթոռին և ուրիշ հնար չգտնելով՝ սկսում է ծխել: Ծխում է ու մտածում. «Ի՞նչ անեմ, խայտառակ կլինեմ ամբողջ ոստիկանությունում: Ղեկավարությունը կպատժի ինձ, Մամեդովն անպայման վերևին կհայտնի այս մասին: Այդ դեպքում լավ է ես զանգեմ»:

Հակոբյանը զանգում է Կապլանի ոստիկանություն: Հեռախոսը վերցնում է ոստիկանապետի տեղակալ Քարամյանը:

-Բարև ձեզ, պարո՛ն Քարամյան,- ընկճված ձայնով ասում է Հակոբյանը,- ձեզ զեկուցում է Գանձասարի ոստիկանության ավագ լեյտենանտ Գեղամ Հակոբյանը: Իմ հերթապահության ժամանակ արտակարգ դեպք է տեղի ունեցել: Ինհայտ պայմաններում ես կորցրել եմ ինձ վրա ամրագրված ատրճանակը: Մտել եմ զուգարան, դուրս եմ եկել տեսել՝ ատրճանակս չկա:

Մի քիչ լռությունից հետո լսվում է Կապլանի ոստիկանապետի տեղակալ Քարամյանի ազդու ձայնը:

-Դու, ավագ լեյտենանտ Հակոբյան, գիտես չէ՞՝ զենք կորցնելու դեպքում քեզ ինչ է սպասվում: Լավագույն դեպքում քեզ աշխատանքից կհեռացնեն: Իսկ եթե քո զենքով հանցագործություն կատարվի, որևէ մեկը սպանվի կամ վիրավորվի, դու կհայտնվես ճաղերի ետևում: Աղոթի՛ր Աստծուն, որ զենքը գտնվի: Ոտքի՛ հանիր բոլո-

ին, խուզարկեք ամբողջ շենքը, շենքի շրջակայքը և ինչ գնով էլ լինի գտեք զենքը: Հակառակ դեպքում, պարո՛ն Հակոբյան, սպասի՛ր քո ահեղ դատաստանին:

Ավագ լեյտենանտ Հակոբյանը, որ մինչ այդ կանգնած էր խոսում հեռախոսով, միանգամից փլվեց աթոռի վրա: Նա ամբողջ մարմնով դողում էր: Սաստիկ շարժումից գլուխը պտտվում էր: Չգիտեր՝ ինչ աներ: Նորից սկսել փնտրտուքը: Բայց դրանից ի՞նչ օգուտ: Արդեն ամեն տեղ նայել էր: Մնում էր սպասել ճակատագրի հրամայականին:

Երեկոյան կողմ Թևոսը որդու՝ Շավարշի հետ գնաց ոստիկանությունը: Տեսնելով հերթապահ Մամեդովին՝ մոտեցավ նրան.

-Իմ որդին ձեր շենքի առաջին հարկի պատուհանի վրայից ատրճանակ է վերցրել, բերել ենք՝ հանձնենք ձեզ:

Նարիման Մամեդովը, որ նման բանի չէր սպասում, անակնկալի եկավ:

Զարմանքից մի երկու անգամ տեղը նստեց, վեր կացավ: Լսածին չհավատալով՝ հարցրեց.

-Զենքը հիմա ձեզ մո՞տ է:

Թևոսը հանեց ատրճանակը, ցույց տվեց:

Մամեդովը չվերցրեց այն, միայն նայեց ու ասաց.

-Մտեք այդ կողքի սենյակը, այնտեղ է ավագ լեյտենանտ Հակոբյանը, տարեք ու տվեք նրան, դա նրա զենքն է:

Թևոսն ու Շավարշը մոտ Մամեդովի ցույց տված սենյակը: Նրանց առջև նստած էր ավագ լեյտենանտի ուսադիրներով մի ոստիկան, որ քնատ ու շաղված աչքերով նայեց ներս մտնողներին և անտարբեր ու չոր հարցրեց.

-Ի՞նչ եք ուզում:

-Պարոն ոստիկան, որդիս՝ Շավարշը, ձեր պատուհանից ատրճանակ է վերցրել առանց հասկանալու, թե ինչ է անում: Կներեք

դրա համար: Հիմա այդ ատրճանակը բերել ենք, որ հանձնենք ոստիկանությանը:

Ատրճանակի մասին լսելով Հակոբյանը տեղից վեր թռավ:

-Ո՞ւր է, ո՞ւր է ատրճանակը:

-Ահա,- և Թևոսը ներքին գրպանից հանեց ատրճանակը:

Հակոբյանը Թևոսի ձեռքից ոչ թե վերցրեց, այլ խլեց զենքը և անակնկալից ցնցված՝ նստեց տեղը: Մի քիչ հետո ուշքի եկավ, սկսեց տնտղել այն, ճշտել համարը: Տեսավ, որ իր զենքն է, ուրախությունից իրեն կորցրած՝ ստուգեց փամփուշտատուփը և անսպասելի ճչաց.

-Երկու փամփուշտ պակասում է, ասացեք՝ ի՞նչ եք արել դրանք, կրակե՞լ եք, ո՞ւմ վրա, որտե՞ղ...

-Դե... երեխան չի հասկացել,- մեղավորի երանգով ասաց Թևոսը,- առել, գնացել է ձորը և իբր խաղ է արել, իր հաճույքի համար երկու անգամ կրակել է քարերի վրա: Ներող եղեք...

-Ներող լինե՞մ, ինչի՞ համար,- նորից գոռաց Հակոբյանը,- դուք հասկանո՞ւմ եք՝ ի՞նչ եք խոսում: Ձեր փոխարեն ինձ են պատժելու, դրա համար ներե՞մ: Էդ երկու կորած փամփուշտների պատասխանը ո՞վ է տալու: Ասացեք՝ ո՞վ է դրա պատասխանը տալու: Հերիք չէ զենքը գողացել եք, դեռ երկու փամփուշտ էլ պակաս եք բերել: Ձեզ ո՞վ է թույլատրել ուրիշի զենքը վերցնել ու կրակել:

Թևոսը բոլորովին կարկամել էր, չգիտեր ինչպես արդարանալ, մի գլուխ միայն ասում էր.

-Երեխա է, չի հասկացել, ներո՛ղ եղեք:

-Դրան՝ քո լակոտին ներում չկա, նա պիտի բանտում փտի, միայն ափսոս, որ անչափահաս է,- գոռում, նախատում էր Հակոբյանը,- բայց մեծանալու է չէ՞, ես դեռ հիշեցնելու եմ՞ նրան: Իսկ հիմա,- դիմացի պատին նայելով՝ ասաց Հակոբյանը,- երկուսդ էլ դուրս եկեք այստեղից և այլևս աչքի՛ս չերևաք:

Զրռ Թևոսը հիասթափված ու շփոթված երեխայի ձեռքից բռնեց ու դուրս եկավ Հակոբյանի աշխատասենյակից:

Դատապաշտպան Վահան Դարբինյանի օգնական Արման Աբրահամյանը առավոտ շուտ ավտոմեքենան նստեց և ուղղություն վերցրեց դեպի երկաթուղային կայարան: Տեղ հասնելուն պես իջավ ավտոմեքենայից և քայլեց դեպի «Սասունցի Դավիթ» սրճարանը, բայց շատ չմոտեցավ, կանգնեց մի 50-60 մետր հեռավորության վրա: Ուշադիր նայեց չորս կողմը: Դեպի սրճարան եկող այցելուների մեջ ոչ մի ոստիկան չնկատեց: Գնաց նստեց ոստիկանության շենքի առջևի այգու նստարանի վրա: Երկար նստեց՝ աչքը սրճարանի վրա: Դարձյալ ոչ մի ոստիկան չերևաց: Էլի սպասեց: Ժամեր էին անցնում, բայց իր ուզած մարդիկ չերևացին: Ուտելու պահանջ զգաց: Մտավ սրճարան: Հեռվից ողջունեց բարմենին:

-Բարև, կապլանցի՛ Արման,- սիրալիր ժպիտով նրան դիմավորեց բարմենը:

-Ուտելու բան և մի բաժակ սուրճ,- պատվիրեց Արմանը:

Արմանը նստեց պատուհանի մոտ, որտեղից երևում էր ոստիկանության շենքի մոտ տեղի ունեցող անցուդարձը: Նա խմեց սուրճը: Իր ուզած ոստիկանները դարձյալ չէին երևում: «Ճիշտ են ասում, որ երկուշաբթին անհաջող օր է»,- անցավ նրա մտքով, և նա սրճարանից դուրս եկավ, քայլեց դեպի ավտոմեքենան: Քշեց, գնաց գրասենյակ: Այստեղ էլ ոչ ոք չկար: Մի քիչ նստեց աշխատասենյակում, տեսավ, որ անելիք չունի, քշեց, գնաց տուն: Տան շեմին նրան դիմավորեց Մարիամը:

-Բարև, Մարիամ ջան,- ասաց, համբուրեց նրան:

-Այսօր սովորականից ավելի ուշ ես տուն գալիս,- ասաց Մարիամը:

-Պարապ թափառում էի քաղաքում, երևի այդ պատճառով: Ավելի ճիշտ, ամբողջ օրը կայարանում էի:

-Իսկ ինչո՞ւ հատկապես կայարանում,- հետաքրքրվեց Մարիամը:

Արմանը տրամադրություն չուներ խոսելու: Լռեց ու նայեց պատուհանից դուրս:

-Սոված չե՞ս,- հարցրեց Մարիամը:

-Ո՛չ, սրճարանում արդեն ճաշել եմ: Սու՛րճ դիր խմենք: Դասերդ ինչպե՞ս են անցնում:

-Ոչինչ, ամբողջ օրը լեկցիա ենք գրում,- պատասխանեց Մարիամը:

Մեկ ժամ հետո Արմանը զանգեց Վահանին:

-Ողջո՛ւյն, պարո՛ն Դարբինյան, ի՞նչ նորություններ կան:

-Բարև, Արմա՛ն ջան, առայժմ թուղթ ենք մտորում, դու ասա՝ ինչ կա:

-Ամբողջ օրը ոստիկանության շենքի առջևի այգում ու սրճարանում նստած էի: Ոչ ոք չերևաց:

-Վաղն առավոտյան կհանդիպենք և կորոշենք մեր անելիքը, առայժմ:

Հաջորդ առավոտյան, համարյա միաժամանակ, Արմանն ու Վահանը եկան գրասենյակ:

-Ինչքան մտածում եմ, Արմա՛ն, դու նորից պիտի գնաս սրճարան: Այս անգամ քո ուզած ոստիկաններն անպայման ընդմիջմանը կգան սրճարան: Փորձիր շատ զգուշությամբ մի բան իմանալ նրանցից: Եթե կարողանաս նրանց հետ առանձին-առանձին հանդիպել, շատ լավ կլինի: Իսկ ես կփորձեմ գտնել Շավարշի ընկերներից մեկին: Ես արդեն որոշակի տեղեկություն ունեմ նրա ընկերներից մեկի մասին, որ ապրում է Երևանում: Արցախյան ազատամարտի տարիներին նա Շավարշի հետ կռվել է թշնամու դեմ: Այդ ընկերոջ միջոցով հնարավոր էր պարզել շատ բան:

Վահանի այս խոսքերից հետո Արմանը գրասենյակից դուրս եկավ: Վահանը ինչ-որ թղթեր դասավորելուց հետո գրասենյակից դուրս եկավ կես ժամ հետո: Տեղեկության համաձայն Շավարշի մարտական ընկերը ապրում էր Կոնդի թաղամասում: Այդ հասցեով էլ նա գնաց և ի զարմանս իրեն բավական դյուրությամբ գտավ Շավարշի ընկերոջ տունը: Եվ ինչ հաջողություն՝ Շավարշի ընկերը տանն էր: Վահանը երկար զրուցեց նրա հետ: Ընկերը պատմեց Շավարշի մասին: Նա մեծ ոգևորությամբ պատմեց Շավարշի քաջագործությունների մասին՝ բնութագրելով նրան որպես հայրենասեր և խիզախ ազատամարտիկի:

-Իսկ դուք գիտե՞ք, որ Շավարշը ինքնասպան է եղել,- հարցրեց Վահանը:

-Ի՞նչ... մի պահ անսպասելի լուրից շփոթվեց Շավարշի ընկերը,- հետո, երբ ուշքի եկավ, աչքերն արցունքով լի, ասաց,- ես դա չգիտեի, չէի լսել, դա ես ձեզնից առաջին անգամ լսեցի, դա իմ կյանքի ամենատխուր լուրն է: Լսածիս չեմ ուզում հավատալ, երանի լսած չլինեի... բայց ես չեմ հավատում, որ նա ինքնասպան եղած կլինի: Այդպիսի երիտասարդը երբեք նման բան չէր անի: Դա ինչ-որ մեկի, ինչ-որ մի սրիկայի ձեռքի գործն է: Դա հնարել են, որ հանցագործին արդարացնեն:

-Կարո՞ղ եք ասել երևանցի էլի ընկերներ կա՞ն, որոնք մասնակցել են Հադրութի ազատագրմանը,- հարցրեց Վահանը:

-Եղել են, հիմա էլ կան: Ավանում, Նորքում, կենտրոնում Շավարշը շատ ընկեր-մարտիկներ է ունեցել: Նրանց մի երկուսին անուններով գիտեմ: Կարող եմ նրանց տնային հասցեներն էլ տալ, եթե հարկավոր է:

Վահանն իսկույն հասցեները գրեց ծոցատետրում:

Վահանը գնաց նաև Շավարշի մյուս ընկերների հասցեների հետքերով, գտավ մարդկանց, որոնք մարտի դաշտում միասին էին կռվել թշնամու դեմ: Վահանը երկար զրուցեց նրանց հետ: Բոլորն էլ

մի առանձին հպարտությամբ էին տալիս Շավարշի անունը՝ համարելով նրան իրենց անփոխարինելի ընկերը: Բայց զարմանալիորեն նրանցից և ոչ մեկը տեղյակ չէր Շավարշի ինքնասպանության մասին:

Արման Աբրահամյանը, ինչպես միշտ, այս անգամ էլ ավտոմեքենան կանգնեցրեց սրճարանից մի քիչ հեռու ու մտավ ներս: Դարձյալ ներսում ոստիկան չտեսավ: Սրճարանում սպասեց, դուրս եկավ, քայլեց դեպի ոստիկանության շենքի դիմացի այգին, նստեց ծառի շվաքի տակ դրված նստարանին՝ աչքը պահելով դեպի սրճարան տանող ճանապարհի վրա: Սպասեց կես ժամ, մի ժամ: Վերջապես նկատեց հերթով դեպի սրճարան գնացող ոստիկաններին, որոնք գնում էին խումբ-խումբ, և առանձին-առանձին: Մտնում էին սրճարան, սուրճ խմում և արագ հեռանում: Ժամը տասներկուսին մոտ Արմանը նկատեց, որ սրճարան մտած երկու ոստիկաններ մյուսների նման շուտ դուրս չեն գալիս: Դա գրավեց Արմանի ուշադրությունը. «Երևի ընդմիջում է, նստած սպասում են»,- անցավ Արմանի մտքով: Դա պետք է ստուգել: Վեր կացավ ու դանդաղ քայլերով գնաց մտավ սրճարան: Որպեսզի ոչ մի կասկածի տեղիք չտա, սուրճ պատվիրեց: Բարմենը գլխով ցույց տվեց երկու ոստիկաններին՝ հասկացնելով, որ սուրճը կմատուցվի նրանցից հետո միայն: Արմանը հարևան աթոռի վրա նստած սպասում էր: Մտածում էր՝ ինչպես խոսակցության մեջ մտնի ոստիկանների հետ: Տեղից վեր կացավ, մոտեցավ ոստիկաններին և շատ սիրալիր ասաց.

-Բարև ձեզ, կարելի՞ է ձեզ հետ նստել:

Ոստիկանները զարմանքով նայեցին իրար, որ նշանակում էր՝ ազատ սեղաններ շատ կան, ինչո՞ւ է այս մարդը հատկապես ուզում իրենց հետ նստել: Այնուամենայնիվ, քաղաքավարությունից դրդված ասացին.

-Խնդրեմ, խնդրեմ...

-Արմանը նստեց և բացատրեց, թե ինչու է ուզում ոստիկան-ների մոտ նստել:

-Ուզում եմ ուղղակի ձեզ մի հարց տալ՝ ես կարո՞ղ եմ աշխա-տանքի ընդունվել ձեզ մոտ՝ ոստիկանությունում:

-Ոստիկաններից մեկը, որ լեյտենանտի ուսադիրներով էր, զննողաբար նայեց Արմանին.

-Նայած թե դու ինչ աշխատանք կարող ես անել և ինչի ես ըն-դունակ:

-Գիտեք ինչ, ասաց Արմանը,- ես թերթում կարդացել եմ, որ ձեզ մոտ ոստիկանությունում աշխատանքի ազատ տեղ կա: Ես ա-վարտել եմ Համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Կուզե-նայի որևէ հարմար պաշտոնով աշխատել ձեզ մոտ:

-Այո՛, ձեզ համար մեզ մոտ աշխատանք կգտնվի, առանց այն էլ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեք:

-Իսկ ավարտելուց հետո որևէ տեղ աշխատե՞լ եք, աշխատան-քի փորձ ունե՞ք,- հարցրեց ավագ լեյտենանտը:

-Երկու տարի աշխատել եմ Սիրոդ քաղաքի ոստիկանությու-նում,- պատասխանեց Արմանը,- թմրամոլության դեմ պայքարի բաժնում:Նվիրված աշխատում էի, բայց աշխատավարձ չէին տալիս: Ես էլ դուրս եկա ու տեղափոխվեցի մայրաքաղաք:

Ոստիկաններն էլի նայեցին իրար, շատ պետքական մարդ է երևում այս երիտասարդը: Եվ զրույցն Արմանի հետ արդեն հաճելի բնույթ էր կրում:

-Վաղը՝ ընդմիջումից հետո,- խորհուրդ տվեց ավագ լեյտե-նանտի ուսադիրներով ոստիկանը,- արի՛ Տրանսպորտի ոստիկա-նություն, ահա այնտեղ է՝ այգու դիմաց: Կմտնես պետի տեղակալ Հակոբյանի մոտ:Նա է այդ հարցերով զբաղվում:Նա կընդունի քեզ, համապատասխան ցուցումներ կտա և կարծում եմ հարցը կլուծի քո օգտին:

-Իսկ ո՞վ է այդ պարոն Հակոբյանը,- հարցրեց Արմանը,- ես կարո՞ղ եմ նրա հետ լեզու գտնել:

-Ոստիկանության մայոր Հակոբյանը,- բացատրեց ավագ լեյտենանտը, իր աշխատանքը հասկացող ոստիկան է և եթե նրա հետ կարողացար լեզու գտնել, նա անպայման քեզ կընդունի: Բայց չմոռանաս, թե միանգամից բարձր պաշտոն կստանաս, սկզբից դու հասարակ հերթապահ կլինես սերժանտ Գևորգ Բարխուդարյանի փոխարեն: Հետո աստիճանաբար կբարձրանաս:

Զրույցն հետզհետե ստացվում էր և ավելի հետաքրքիր դառնում:

-Իսկ ո՞վ է այդ սերժանտ Բարխուդարյանը, ինչո՞ւ եք կարծում, թե ես կաշխատեմ հենց նրա փոխարեն:

Ավագ լեյտենանտը, որ սուրճը կում-կում էր խմում, բաժակը դնում սեղանին և նորից կում անում, ժպտաց, ասաց.

-Ձեզ ասեմ, որ Գևորգ Բարխուդարյանին վերջերս ազատել են աշխատանքից: Նրա տեղը թափուր է մնացել: Այդ պատճառով էլ շատ հավանական է, որ դուք նրա տեղը զբաղեցնեք:

-Իսկ ինչո՞ւ են նրան աշխատանքից ազատել, եթե կարելի է իմանալ,- հարցրեց Արմանը:

Լեյտենանտ Հախումյանը (Արմանը արդեն գիտեր նրանց ազգանունները) խեթ նայեց զրուցակցին:

-Գիտե՞ք ինչ, ամեն մարդ չէ, որ կարող է ոստիկանությունում աշխատել: Շատ դեպքերում աշխատողը պիտի դառնա խոսափողը և արդարացնի վերադասի հույսերը: Այդ Գևորգը ղարաբաղցի էր, մի քիչ ինքնասածի, մի քիչ կողահաստ և հաճախ շրջանցում էր պետի կարգադրությունները, այդ պատճառով էլ նրան աշխատանքից ազատեցին:

-Հեռախոսային զանգերի՞ն է դժվար եղել պատասխանել, թե՞ ապրելու պայմաններն են վատ եղել,- չհասկանալու տալով Հախումյանի ասածները՝ հարցրեց Արմանը:

-Այո՛, հեռախոսային զանգերին էլ երբեմն դժվար է լինում պատասխանելը, եթե այդ պատասխանները դուրս են գալիս վերադասի թելադրանքների սահմաններից,- այս անգամ ասաց մյուս ոստիկանը՝ ավագ լեյտենանտ Պետրոսյանը:

Զգալով, որ աշխատանք փնտրող կապլանցի իրավաբանը էլի է հարցեր տալու, ոստիկանները վեր կացան և շարժվեցին դեպի դուռը՝ ասելով.

-Ուրեմն վաղը գալիս եք ոստիկանություն, եթե իրոք ուզում եք աշխատել մեզ մոտ:

Արմանը գնաց բարմենի մոտ: Նրանց միջև արդեն յուրատեսակ մտերմություն էր ստեղծվել: Նրանց զրույցը հաճելիորեն ստացվում էր: Ուրախ էր Արմանը: Ուրախության շեշտով էլ բարմենին ասաց.

-Դու տեսա՞ր, որ ես երկար զրուցում էի ոստիկանների հետ: Կարևոր զրույց էր: Ես նրանց հայտնեցի, որ ուզում եմ աշխատել ոստիկանությունում:

-Ուրեմն կդառնաք մեր սրճարանի մշտական հաճախորդը, դա շատ լավ է,- ասաց բարմենը:

Արմանը ժպտաց, տվեց խմած սուրճի փողը առանց մանրադրամ վերցնելու: Նա դուրս եկավ սրճարանից և գնաց դեպի իր ավտոմեքենան: Այստեղ նա արդեն անելիք չուներ:

Վահան Դարբինյանը գրասենյակ մտավ մոտ ժամը երեքին, տեսավ, որ Արմանն արդեն այստեղ է ու իրեն է սպասում:

-Ի՞նչ նորություններ ես բերել քեզ հետ,- հարցրեց Վահանը:

-Նորություններ, իհարկե, կան,- պատասխանեց Արմանը,- ճիշտ է, ոչ այնքան կարևոր, բայց ինձ թվում է, որ ինչ-որ լուրջ բանի սկիզբ է դրվել: Սրճարանում հանդիպեցի երկու ոստիկանների հետ: Նրանք ինձ հավաստիացրին, որ ոստիկանությունում աշխատանքի տեղ կա: Կարող եմ ես՝ իրավաբան-համալսարանական, աշխատել հերթափոխությունում և այն էլ հիմնականում գիշերները: Ըստ պայ-

մանավորվածության, ես վաղը պիտի ներկայանամ ոստիկանության և լինեմ ոստիկանապետի տեղակալ մայոր Հակոբյանի մոտ:

-Այդ երկու ոստիկանները ովքե՞ր են,- հետաքրքրվեց Վահանը:

-Հա՛, մոռացա ասել, որ նրանք՝ այդ երկու ոստիկանները, հերթապահել են հենց այն նույն գիշերը, երբ տեղի է ունեցել Շավարշի ենթադրյալ ինքնասպանությունը: Սերժանտ Գևորգ Բարխուդարյանը, որ հերթապահել է հեռախոսի մոտ, հաջորդ օրը ազատվել է աշխատանքից:

-Դա շատ կարևոր նորություն է, Արմա՛ն,- ոգևորվում է Վահանը,- հարկավոր է առանց հապաղելու պարզել, թե որտեղ է ապրում այդ Բարխուդարյանը և հանդիպում կազմակերպել նրա հետ:

Վահանի տրամադրությունը բարձրացավ: Արմանի հայտնած նորությունները ոգևորեցին նրան:

Նա գնաց և գազօջախի վրա սուրճ դրեց:

-Ես հանդիպել եմ Երևանում բնակվող երեք տղաների հետ, որոնք Հադրութի ազատագրման ժամանակ Շավարշի հետ են եղել: Զարմանալին այն է, որ նրանցից ոչ մեկը տեղյակ չէր Շավարշի ինքնասպանության մասին: Հիմա, Արմա՛ն, ես գնում եմ, եթե մինչև ժամը վեցը չեկա, կհանդիպենք մյուս առավոտյան, ցը...

Վահանն ու Արմանը մյուս օրվա առավոտյան հանդիպեցին դրասենյակում:

-Գնա սու՛րճ դիր, քո հերթն է,- ասաց Վահանը:

-Ս՞ուրճն էլ է հերթով,- ժպտաց Արմանը:

Արմանը գնաց սուրճ դնելու՝ քթի տակ մի երգ երգելով: Քիչ հետո սուրճը բերեց, դրեց սեղանին և ասաց.

-Հարկավոր է մի աղջիկ աշխատող ընդունել, Վահա՛ն: Համ մեզ համար սուրճ կսարքի, համ էլ կնստի ու ինչ արձանագրություն ու ակտ, ինչ փաստաթղթեր լինի, ինքը մեր փոխարեն կլրացնի: Ճիշտ չե՞մ ասում, Վահա՛ն ջան:

-Արմա՜ն, մենք հիմա ի վիճակի չենք նոր մարդ ընդունելու: Այս գործը ավարտին հասցնենք, հետո տեսնենք՝ ինչ կստացվի:

Նստեցին սուրճ խմելու, Արմանը հարցրեց.

-Որևէ նորություն կա՞, Վահա՜ն, արցախցի սերժանտ Գևորգի ապրելատեղի մասին, պարզեցի՞ր նրա տնային հասցեն:

-Հաստատ Երևանում չէ, շատ հավանական է՝ ընտանիքով տեղափոխվել է Արցախ,- մտահոգ ասաց Վահանը և ավելացրեց,- երևի անհրաժեշտ է նորից մեկնել Գանձասար:

-Նպատակն ի՞նչ է, ի՞նչ հարցով,- հարցրեց Արմանը:

-Նախ հարկավոր է տվյալներ իմանալ էդ մայոր Հակոբյանի մասին, չէ՞ որ նա մինչև Երևան գալը աշխատել է Գանձասարում: Երկրորդ՝ շատ կարևոր է հանդիպել Շավարշի այն ընկերների հետ, որոնք ներկայումս ապրում են Գանձասարում: Եվ երրորդ՝ պետք է պարզել՝ ովքեր են Շավարշի մոտիկները և թշնամիները: Իսկ այն, որ նա մոտիկներից բացի նաև թշնամիներ է ունեցել, ոչ մի կասկած չկա: Նման հարցի պարզաբանումը, ճիշտ է, մեզնից շատ ջանքեր կպահանջի, բայց առանց դրա մենք չենք կարող համնել հարցի իրական լուծմանը:

Լռեցին, և լռությունը բավական երկար տևեց:

Արմանն անհրաժեշտ գտավ խոսել, հարցրեց.

-Ե՞րբ կարող է գնանք Գանձասար:

-Երևի վաղը չէ մյուս օրը,- աչքերը կիսափակ արած՝ ասաց Վահանը:

-Քո՞ ավտոմեքենայով թե՞ իմ:

-Երկուսիս: Այո՛, Արման, մի՛ զարմացիր, մենք գնալու ենք երկուսիս ավտոմեքենայով:

-Իսկ դա ինչպե՞ս հասկանանք,- զարմացավ Արմանը:

-Շատ պարզ, Արմա՜ն, Գանձասար գնալու եմ ես, իսկ դու գնալու ես Ստեփանակերտ: Հիմա հասկացա՞ր: Գնալու եմ էդ սերժանտ Գևորգի հետքերով: Փնտրելու և գտնելու եմ նրան: Գտնելու

դեպքում՝ներկայանալու եմ որպես դատապաշտպան և ամեն գնով պարզելու եմ, թե նրան ինչու են հանել աշխատանքից:

Մյուս օրն առավոտյան Վահանն ու Արմանը հանդիպեցին Նորագավիթից դուրս՝ բենզինի լիցքավորման կայանում: Ավտոմեքենաները լիցքավորելուց հետո շարժվեցին դեպի Սիրոգ: Ժամը տասի սահմաններում հասան Սիրոգ: Վահանի տան մոտ իջան ավտոմեքենաներից:

-Հիմա, Արմա՛ն ջան, գնում են մեր տները՝ մի քիչ հանգստանանք,- ասաց Վահանը,- մեկ-երկու ժամից նորից շարժվելու ենք, ես՝ Գանձասար, դու՝ Ստեփանակերտ: Ես կզանգեմ Ստեփանակերտ, ոստիկանությունն: Քեզ կդիմավորեն: Այնտեղ ծանոթներ ունեմ, քեզ կօգնեն գտնել Գևորգ Բարխուդարյանին: Հենց սերժանտին գտնես, անմիջապես կզանգես: Առայժմ:

Արմանը գնաց իրենց տուն, Վահանը՝ իրենց: Վահանը տուն հասավ թե չէ, բացեց սառնարանը՝ այնտեղ ուտելու ոչինչ չկար: «-Հարկավոր է խանութ գնալ»,- որոշեց նա ու դուրս եկավ տնից:

-Բարև, Արմե՛ն,- մտնելով խանութ՝ ասաց Վահանը,- ո՞նց ես:

-Բարև, Վահա՛ն ջան, բարով ես եկել: Դե ինչ ասեմ: Ժողովուրդը դրամ չունի, ես էլ պարապ նստել եմ այստեղ: Պարտքի ցուցակը երկու-երեք ընդհանուր տետրում չի տեղավորվում: գրում եմ, հա գրում, թե մարդիկ իրենց պարտքերը երբ են վճարելու, հայտնի չէ,- բողոքեց Արմենը:-Վաղո՞ւց ես եկել, ընտանիքդ ո՞նց է:

-Ոչինչ, Արմե՛ն ջան, մանրից ապրում ենք, ինձ մի քիչ ուտելու բան տուր:

Վահանը վերադարձավ տուն, ճաշեց ինչպես հարկն է, որոշեց մի ժամ հանգստանալ: Բայց դրանից առաջ զանգեց Ստեփանակերտի ոստիկանությունն՝ մայոր Ղուկասյանին:

Արման Աբրահամյանը մտավ տուն, ողջագուրվեց ծողների հետ և մայրիկին ասաց, որ սաստիկ սոված է: Ճաշելուց հետո Արմանն էլ պառկեց մի ժամ հանգստանալու:

Վահանը ժամը տասնմեկին դուրս եկավ Սիրոգից և սլացավ դեպի Գանձասար: Արմանը նույն ժամին ուղղություն վերցրեց սեպի Ստեփանակերտ: Երկու ժամից հետո նա արդեն Ստեփանակերտում էր: Կանգնեց «Մանուշակ» սրճարանի մոտ և սպասեց: Չանցած մի քանի րոպե՝ Արմանի մոտ կանգնեց Ստեփանակերտի ոստիկանության ավտոմեքենան: Վարորդը նրան ուղեկցեց ոստիկանություն: Արմանը վարորդի հետ բարձրացավ երկրորդ հարկ և մտավ ծեծեց քսանմեկ համար ունեցող սենյակի դուռը: Ներսից լսվեց տղամարդու մի բամբ ձայն:

-Մտե՛ք:

Արմանը ներս մտավ: Նրա դիմաց նստած էր մի հաղթանդամ, բարեհամբույր տղամարդ:

-Բարև ձեզ, դուք երևի Նելսոն Ղուկասյա՞ն եք:

-Այո՛, ես եմ Ղուկասյանը, իսկ դուք երևի Արման Աբրահամյանն եք Սիրոգից:

Արմանը չզարմացավ դիմացի անծանոթի խոսքերից՝ կռահելով, որ Վահանն արդեն նրան մանրամասն բացատրել է իր ով լինելու մասին:

-Համեցեք, նստեցեք,- սիրալիր ասաց Ղուկասյանը,- ճանապարհին հո դժվարություններ չհանդիպեցի՞ք:

Արմանը նայեց, ասաց.

-Չէ՛, ամեն ինչ նորմալ էր: Իսկ Ստեփանակերտը սիրուն քաղաք է:

-Այո՛, այդպես է, այնպես ենք անում, որ եկվորները դժգոհ չլինեն:

Արմանը նայեց ժամացույցին.

-Ձեզ երևի Վահան Դարբինյանը զանգել է իմ այստեղ գալու նպատակի՝ Գևորգ Բարխուդարյանի հետ հանդիպում ունենալու մասին:

-Այո՛, Վահանը զանգել է ու մինչև ձեր այստեղ գալն արդեն մենք այդ Գևորգին գտել ենք: Նա Ստեփանակերտում է ապրում: Նա այժմ անհատ ձեռներեց է: Կահույքի փոքր ձեռնարկություն ունի: Հասցեն ինձ մոտ է: Ահա այն, վերցրեք:

Արմանը Ղուկասյանի ձեռքից վերցրեց թուղթը, որտեղ գրված էր Գևորգ Բարխուդարյանի տան հասցեն:

-Ձեզ այդ Գևորգի մոտ գնալու համար ուղեկցորդ պե՞տք է,- հարցրեց Ղուկասյանը:

-Ո՛չ, պարո՛ն Ղուկասյան, ես ինքս նրան կգտնեմ:

-Այդ դեպքում, եթե հարցեր առաջանան, զանգիր, ոստիկաններին այդ ձեռներեցները տհաճությամբ են ընդունում:

-Շնորհակալ եմ,- ասաց Արմանը և պատրաստվեց գալու:

-Սպասի՛ր, բայց դու, պարո՛ն Արման Աբրահամյան, չասացիր, թե մենք երբ ենք տեսնվելու Գևորգի հետ հանդիպելուց հետո:

-Ձեր օգնությունը մեր այս գործին առանց այն էլ շատ ու շատ է: Այդքանից հետո էլ ի՞նչ...

-Չէ՛, Արմա՛ն ջան,- Արմանի խոսքն ընդհատեց Ղուկասյանը,- չեղավ, այդպես չեղավ: Էդ սերժանտին տեսնելուց հետո անպայման գալիս ես ինձ մոտ: Դու մեր թանկագին հյուրն ես և առանց հյուրասիրության չպիտի գնաս այստեղից: Հակառակ դեպքում Վահանը խիստ կնեղանա:

-Եթե դա պարտադիր է,- ժպտաց Արմանը,- ես ձեզ անպայման կզանգեմ: Առայժմ, ցտեսություն:

-Ցտեսություն, անպայման զանգիր, դա պարտադիր է,- իր հերթին ժպտաց Ղուկասյանը:

Արմանը դուրս եկավ ոստիկանությունից, մի անգամ էլ նայեց Գևորգ Բարխուդարյանի հասցեին, նստեց ավտոմեքենան և Ամդ-

բանիկ զորավարի փողոցով ընթացավ առաջ: Տասը րոպեից հետո նա արդեն կանգնած էր «Կարուսել» կոչված կահույքի փոքր ձեռ-նարկության շենքի առաջ: Հենց մուտքի մոտ կանգնած էր մի երի-տասարդ տղամարդ: Արմանը նրանից էլ հարցրեց.

-Բարև ձեզ, կարելի՞ է գնալ Գևորգ Բարխուդարյանի մոտ:

-Ես եմ Բարխուդարյանը,- Արմանի համար անսպասելի ասաց դիմացինը,- ինչո՞վ կարող եմ ծառայել ձեզ: Երևի ձեզ կահո՞ւյք է հարկավոր:

-Ո՛չ, ես եկել եմ Սիրոգից բոլորովին ուրիշ գործով: Այստեղ տեղը չէ խոսելու: Եթե կարելի է, գնանք ձեր աշխատասենյակը: Ես ձեզ երևի մի քիչ ավելի երկար պիտի զբաղեցնեմ, կներեք:

Բարխուդարյանը միանգամից լրջացավ՝ բոլորովին չկռահելով, թե դա ինչ խոսակցություն պիտի լինի և ինչի մասին:

-Համեցեք, համեցեք,- մտահոգ տարակուսանքով ասաց Բար-խուդարյանը և Արմանին առաջնորդեց իր աշխատասենյակը:

Գևորգ Բարխուդարյանի աշխատասենյակը համեմատաբար փոքր էր. մի սեղան էր՝ շուրջը աթոռներ շարած, կար հեռուստա-ցույց, կար մի պահարան թղթերի համար: Սեղանի մի անկյունում դրված էր հեռախոս:

-Նստեցեք,- ասաց Բարխուդարյանը անորոշ վարանմունքով,- ասում եք՝ ի՞նչ գործով եք եկել :

-Ես Սիրոգի քաղաքացի եմ,- այսպես սկսեց իր խոսքը Արման Աբրահամյանը,- բայց եկել եմ Երևանից: Աշխատում եմ որպես դա-տապաշտպանի օգնական Վահան Դարբինյանի մոտ, դուք երևի ճանաչում եք նրան:

-Ո՛չ, չեմ ճանաչում,- մի տեսակ ընկճված տրամադրությամբ ասաց Բարխուդարյանը,- ինչպես հասկացա, տհաճ գործով եք եկել ինձ մոտ:

-Չէ՛, գործը ոչ այնքան տհաճ է, որքան կարևոր: Այն լուրջ պարզաբանումներ է պահանջում, որպեսզի բացահայտվի մի վարպետորեն թաքցված ճշմարտությունն,- բացատրեց Արմանը:

Գևորգ Բարխուդարյանը, որն արդեն գլխի էր ընկել, թե խոսքն ինչի մասին է, իրեն չիմացողի տեղ դրեց.

-Հասկացա, խոսքն ինչի՞ մասին է:

Արմանը միանգամից չպատասխանեց: Նա շոշափում էր դիմացինի տրամադրությունը՝ կասի՞ ճշմարտությունը, թե՞ ոչ:

-Դուք, պարո՞ն Բարխուդարյան, աշխատել եք Երևանի Տրանսպորտային ոստիկանությունում, որտեղ մահացել կամ ինքնասպանություն է գործել Շավարշ Ղազարյանը, ես այդ գործով եմ եկել ձեզ մոտ:

Գևորգ Բարխուդարյանը անհանգիստ շարժվեց տեղում, դեմքը միանգամից մթնեց: Գրպանից հանեց սիգարետը և սկսեց ծխել:

-Ես,- ասաց նա,- այդպես էլ գիտեի, որ վաղ թե ուշ մի օր գալու են ինձ մոտ այդ հարցով: Այդ պատճառով էլ Երևանից տեղափոխվեցի Ստեփանակերտ, այսպես ասած հետքերս թաքցնելու համար:

-Այժմ եկել է ժամանակը, որ դուք որոշ բացատրություններ տաք այդ մասին:

Գևորգ Բարխուդարյանը երկար մտածեց, հետո հոգոց հանելով ասաց.

-Ի՞նչ մահ, ի՞նչ ինքնասպանություն, ես արդեն պատրաստ եմ պատասխանատու ձևով հայտարարելու, որ Շավարշին սպանել են: Սա մատնություն չհամարեք իմ կողմից: Վերջապես մեկը պիտի՞ լինի, որ ճշմարտությունը բարձրաձայն ասի:

Արմանն զգում էր, որ Գևորգը հոգեպես երկար է տանջվել ճշմարտությունն ասելու համար: Նա զգում էր՝ Գևորգի չխոստովանելու պատնեշներն արդեն խորտակվել են, ու նա պատրաստ էր առանց հետևանքները հաշվի առնելու մինչև վերջ ասելու այն ամենը,

ինչին որ ականատես էր եղել նա: Արմանը լուռ սպասում էր նրա խոստովանությանը:

-Դա, իրոք, սպանություն է եղել, մաքուր սպանություն,- շարունակեց Գևորգը,- դա եղել է երկու ավազակ «մենթերի» ձեռքի գործը: Պետի տեղակալ Գեղամ Հակոբյանի պատվերն էր:

-Գեղամ Հակոբյանին հասկացանք, բայց դու ասացիր նաև երկու «մենթ» ավազակի մասին: Կարո՞ղ ես ասել՝ կոնկրետ ո՞ւմ ձեռքով է կատարվել Շավարշի սպանությունը:

-Ով է կոնկրետ սպանել՝ ես չգիտեմ, բայց լավ գիտեմ, թե ինչ է կատարվել այսպես կոչված «տուտուզկայում»: Երկու լեյտենանտ գրեթե ամբողջ գիշերը այդ սենյակում են եղել: Մայոր Հակոբյանը երկու-երեք ժամը մեկ գալիս էր այդ սենյակը: Սենյակից լսվում էին տարօրինակ ճիչեր, գոռոցներ, օգնության կանչեր: Գիշերվա չորսին ինչ-որ մեկը, ինձ կանչեցին ինչ-որ թղթեր ստորագրելու, ես հրաժարվեցի: Հաջորդ օրը մայորը ինձ կանչեց իր առանձնասենյակը և ասաց, որ ես իրավունք չունեմ ոստիկանությունում աշխատելու: Ինձ հեռացրին աշխատանքից: Ես էլ ամեն ինչից հեռու մնալու նպատակով եկա Արցախ:

Հետո Գևորգ Բարխուդարյանը պատմեց ոստիկանության առանձին մարդկանց կողմից կատարված «Բեսպրեդելների» մասին: Այն մասին, որ բարձրապաշտոն ոստիկաններից ոմանք, մայոր Հակոբյանի գլխավորությամբ, ձերբակալվածներին ինչպիսի խոշտանգումների են ենթարկում ու ծեծվածներից շատերին ինչպես են ուղարկում «տուտուզկա»: Ինչպես են ձերբակալվածներին ստիպում խոստովանել իրենց չգործած «մեղքերը»: Բանտարկյալներին սովորաբար հարցաքննում են դաժան ծեծից հետո: Ծեծում են ռետինե մահակներով:

Արմանի համար ամեն ինչ պարզ էր: Նա համոզվեց, որ Գևորգ Բարխուդարյանն անկեղծորեն ամեն ինչ ասել է ու դրանից ավել այլևս բան չունի ասելու, ուստի փոխեց խոսակցության թեման:

-Դե լավ, ես գնամ,- ասաց Արմանը,- շնորհակալ եմ քո անկեղծ զրույցի համար: Հո քեզ շատ չանհանգստացրի՞:

-Չէ՛, ինչ եք ասում, ընդհակառակը: Ես մինչև հիմա այս մասին ոչ մեկին ոչինչ չեմ ասել: Դու առաջին մարդն ես, որի մոտ ես այսպես բացվեցի իմ հոգին անընդհատ տանջող հարցերի մասին: Ես ինձ հիմա հանգիստ եմ զգում, հոգիս ուղղակի թեթևացավ, ծանր բեռ ընկավ ուսերիցս:

Արմանը հիշեց Նելսոն Ղուկասյանի հետ իր հանդիպման մասին.

-Կարելի՞ է ձեր հեռախոսից օգտվել,- ասաց Արմանը Գևորգին:

-Իհարկե, իհարկե, զանգեք, խոսեք, ինչքան ուզում եք:

Արմանը վերցրեց հեռախոսափողը և զանգեց:

Գևորգը դուրս եկավ սենյակից, որ Արմանը ազատ խոսի:

-Ես գործերս այստեղ ավարտեցի, պարո՞ն Ղուկասյան, այժմ ի՞նչ անեմ:

-Ես էլ նստած սպասում եմ քո զանգին: Արի՛ ոստիկանություն:

Արմանը դուրս եկավ սենյակից, սեղմեց դռան մոտ սպասող Գևորգի ձեռքը և շարժվեց դեպի ոստիկանություն:

Ղուկասյանն արդեն դրսում սպասում էր նրան:

-Ավտոմեքենան կանգնեցրու մի հարմար տեղ,- ասաց Ղուկասյանը,- գնում ենք իմ ավտոմեքենայով:

Վահան Դարբինյանը Գանձասար մտավ կեսօրից մի քիչ անց:

Կենտրոնական փողոցով անցնելիս նա նկատեց իր նախկին ուսուցչին՝ Սարգսյանին: Չկանգնել, չբարևել չէր կարող: Սկզբից մոտեցավ ծաղկավաճառին, գնեց մի ծաղկեփունջ, նոր մոտեցավ Սարգսյանին:

-Ողջույն իմ սիրելի ուսուցչին,- զվարթաձայն ասաց Վահանը և նրան մեկնեց ծաղկեփունջը,- սա ձեզ:

Ուսուցիչը ողջագուրվեց իր նախկին աշակերտի հետ և թախանձագին խնդրեց գնալ տուն: Վահանը չկարողացավ մերժել: Գնացին Սարգսյանի տուն: Դռան շեմին նրանց դիմավորեց Սվետլանան՝ Վահանի դասընկերուհին:

-Բարև, Սվետլանա,- ուրախ ողջունեց Վահանը:

-Բարև,- սկզբում անտարբեր, բայց հետո ճանաչեց Վահանին,- վա՛յ, այդ ինչքա՞ն ես փոխվել: Ա՛յ տղա, տեսա ու չճանաչեցի: Դե համեցե՛ք, համեցե՛ք ներս: Պապա՛ ջան, գնացեք ճաշասենյակ, ես հիմա ձեզ համար մի բան կպատրաստեմ:

-Չէ՛, Սվետա ջան,- ասաց Վահանը,- ուտել չեմ ուզում, եթե կարելի է, մի բաժակ սուրճ:

Տիկին Ժենյան այդ պահին տանը չէր:

-Դե, Վահա՛ն ջան, պատմիր՝ ինչ նորություններ կան,- բազկաթոռին նստելով՝ հարցրեց Սարգսյանը:

-Նորություններ որպես այդպիսին համարյա չկան,- ասաց Վահանը,- եկել եմ դարձյալ Շավարշ Ղազարյանի գործով, մի քանի բան կա պարզելու:

Սվետլանան սուրճը բերեց:

-Խմեցեք,- ասաց նա,- ձեզ անուշ լինի,- քնքշաձայն ասաց նա ու դուրս եկավ:

Սուրճը խմելուց հետո Վահանը որոշեց գնալ՝ գործերն իրեն են սպասում: Արագ պետք է գործել:

-Այս երկու օրը ես Գանձասարում եմ, Հնարավորության դեպքում էլի կհանդիպենք,- ասաց նա ու դուրս եկավ:

Վահանը նստեց ավտոմեքենան և գնաց քեռու տուն:

-Եկել եմ Շավարշ Ղազարյանի գործերով: Ի՞նչ նորություններ կան,- տնեցիներին ողջունելուց հետո ասաց Վահանը:

-Վահ՛ն ջան, ոչ մի նորություն էլ չկա,- խոսեց քեռու փոքր տղան՝ Վաչոն,- ոչ ոք չի ուզում այդ մասին խոսել, բոլորն էլ ջղայնացած են, մի գլուխ այն են ասում, որ դա սպանություն է, ինքնասպանությունը հնարած բան է, փչոց:

-Կարո՞ղ եմ հանդիպել մշակույթի տան տնօրենի տղայի հետ, գուցե նրանից մի բան իմանանք:

-Այո՛, նա հաճախ է հոր փոխարեն նստում մշակույթի տանը, երևի հիմա նա այնտեղ կլինի:

-Այդ դեպքում թույլ տվեք՝ ես գնամ:

Վահանը դուրս եկավ և քայլեց դեպի մշակույթի տուն: Մտավ ներս, հարցրեց պահակին.

-Ես կարո՞ղ եմ տեսնել պարոն Սարիբեկյանի որդուն:

-Իհարկե, կարող եք, ես հիմա կուղեկցեմ ձեզ նրա մոտ,- ասաց պահակը, մոտեցավ և ցույց տվեց տնօրենի սենյակը:

Վահանը թեթևակի ծեծեց դուռը և ներս մտավ: Երկար սեղանի գլխին նստած էր մի երիտասարդ: Վահանը բարևեց, ասաց.

-Ինչքան հասկանում եմ, դուք մշակույթի տան տնօրենի որդին եք:

-Այո՛, չեք սխալվում,- ասաց երիտասարդը,- ես ձեզ լսում եմ:

-Կներեք, եթե կարելի է հարցնել, իսկ ո՞ւր է ձեր հայրը:

-Գործերով տեղ է գնացել: Ներեցեք, իսկ դուք ո՞վ եք:

-Ես Շավարշ Ղազարյանի դատապաշտպանն եմ,- միանգամից առանց նախաբանի ասաց Վահան Դարբինյանը,- ես հարցում եմ արել շատերին, մեծ մասն այն կարծիքին է, որ դա եղել է սպանություն, ոչ թե ինքնասպանություն: Իսկ թե ով է Շավարշ Ղազարյանին սպանել, մինչև հիմա էլ հայտնի չէ:

-Իսկ մենք՝ ես ու հայրս, ի՞նչ կապ ունենք դրա հետ: Չէ՞ որ դեպքը կատարվել է Երևանում,- արդեն բոլորովին լրջացած՝ ասաց երիտասարդը:

Վահանը ծակող հայացքով նայեց երիտասարդի աչքերի մեջ և խիստ ու կտրուկ ասաց.

-Դուք, երիտասա՛րդ, լավ գիտեք, թե դա ինչ կապ ունի, չէ՞ որ մշակույթի տան կիթառը դուք էք գողացել: Չփորձե՛ք հրաժարվել, ամեն ինչ մեզ արդեն հայտնի է: Դուք գողացել էք, և ահա կիթառի գողության կասկածանքով Շավարշ Ղազարյանին են ձերբակալել:

Վահանը լռեց, սպասեց, թե իր խոսքերի ինչ չափով կազդեն երիտասարդի վրա: Վահանը շարունակ սևեռուն հայացքով նայում էր երիտասարդին: Եվ իրոք, Վահանի խոսքերը խիստ ազդել էին: Երիտասարդը մի տեսակ ցնցվեց ու գլուխը կախեց: Նա չէր սպասում, որ միանգամից հանցանքը կբարդեն իր վրա: Նա կարծում էր, թե մարդիկ արդեն մոռացել են այդ մասին, և ոչ մեկն իրեն արդեն չէր կասկածի նման արարքի համար: Եվ, ի զարմանս Վահանի, երիտասարդը անսպասելի խոստացավ իր մեղքը:

-Այո՛, ես եմ գողացել այդ կիթառը: Բայց երբ դա դրեցին Շավարշի վրա, ես ինձ չափազանց վատ զգացի: Ամեն ինչ ուշ էր արդեն: Հետո հայրս է զանգել և ասել, որ Շավարշը գնացքով մեկնելու է Ռուսաստան:

-Իսկ գիտե՞ք՝ ում է զանգել:

-Զանգել է կայարանի Տրանսպորտային ոստիկանության՝ պարոն Գեղամ Հակոբյանին:

-Ա՛խ, դուք անունով էլ գիտեք, թե ում է զանգել:

-Իհարկե, գիտեմ, Գեղամ Հակոբյանին հայրս վաղուց է ճանաչում: Այդ Հակոբյանը մի ժամանակ աշխատել է Գանձասարում:

-Ո՞նց թե աշխատել է Գանձասարում,- զարմանքով ասաց Վահանը:

Երիտասարդն զգաց, որ սխալ է գործել: Չպիտի տար Գեղամ Հակոբյանի անունը: Բայց ոչինչ այլևս փոխել չէր կարող: Նա բավական ուշ հասկացավ, որ ոչ մի դեպքում չէր կարելի ասել իր հոր և

Գեղամ Հակոբյանի կապի մասին: Բայց ճակատագրական սխալն արդեն կատարված էր, և երիտասարդը շարունակեց իր խոսքը:

-Այդ Հակոբյանը մեզ մոտ՝ Գանձասարում, աշխատում էր որպես ոստիկանության բաժանմունքի պետի տեղակալ, իսկ հայրս ոչ հաստիքային աշխատող էր ոստիկանությունում և զբաղվում էր զանազան օրինախախտների հարցերով:

-Եթե հայրդ այդքան մոտիկ է եղել Հակոբյանի հետ, ապա նրանց միջև հաճախակի է հեռախոսային խոսակցություն տեղի ունեցել: Այդպե՞ս է:

Այս խոսքի վրա ներս մտավ երիտասարդի հայրը՝ մշակույթի տան տնօրեն պարոն Սարիբեկյանը:

-Դե լավ, ես գնամ, մնացած ամեն ինչի մասին խոսեք հորս հետ,- ասաց երիտասարդը և արագ դուրս եկավ:

-Բարև ձեզ, պարո՞ն Սարիբեկյան, ինչպե՞ս եք,- հարցրեց Վահանը:

-Բարև ձեզ,- ներքին տագնապով ասաց Սարիբեկյանը և ինչոր մթին կասկածանքով նայեց Վահան Դարբինյանին:

Վահանը լուռ էր: Սարիբեկյանը ի վերջո խոսեց:

-Կարո՞ղ եմ իմանալ՝ ինչ հարցով եք եկել մեզ մոտ:

-Իհարկե, կարող եք: Ես Շավարշ Ղազարյանի դատապաշտպանն եմ: Եկել եմ պաշտոնական գործերով,- ասաց Վահանը՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր: Վահանը աչքի տակով նայեց Սարիբեկյանին: Վերջինս լուռ նստեց և սպասես Շավարշի դատապաշտպանի հարցերին: Վահանը հարցը չուշացրեց.

-Ես ուզում եմ իմանալ կիթառի գողության մասին դո՞ւք եք զանգել մայոր Հակոբյանին:

-Այո, ես եմ զանգել: Ես ձեզ արդեն ասել եմ այդ մասին:

-Զանգել եք մայոր Հակոբյանի՞ն, թե՞ Գեղամ Հակոբյանին,- երկու անուններն էլ շեշտված ասաց Դարբինյանը:

Սարիբեկյանը ցնցվեց: Դա նշանակում էր, որ այս դատապաշտպանը ամեն ինչ մանրամասն գիտի, և դժվար է նրան խաբել կամ հարցերը շրջանցել: Համենայն դեպս փորձեց միամիտ ձևանալ:

-Ի՞նչ տարբերություն, թե որ Հակոբյանին:

-Բանից պարզվում է, թե դուք գիտեք ոստիկանության բոլոր մայորներին: Շատերը նրանց անունները չգիտեն, իսկ դուք գիտեք: Ի՞նչ է, վաղո՞ւց եք ծանոթ այդ Գեղամ Հակոբյանի հետ:

-Ը...Ը...,- կմկմաց Սարիբեկյանը,- դա վաղուց է եղել, ես նրան հիմա չեմ էլ հիշում:

-Ծանոթ եք եղել և լավ էլ ճանաչում եք նրան, պարո՞ն Սարիբեկյան: Դուք միասին աշխատել եք Գանձասարի ոստիկանությունում, դուք ոչ հաստիքային գործակալ եք եղել, այսինքն ինչպես ժողովուրդն է որակել ձեզ նմաններին, դուք «ստուկաչ» եք եղել և մատնել եք շատ ու շատ անմեղ մարդկանց:

Սարիբեկյանն այլևս չկարողացավ համբերել: Նա ապուշ կտրած նայում էր դիմացինին և թվում էր, թե հենց հիմա շունչը կտրվելու է:

-Դուք այդ ամենը որտեղի՞ց գիտեք,- ճչաց նա և տեղից վեր կացավ: Թվում էր, թե հարձակվելու է դիմացինի վրա:

Վահանն ամեն ինչի պատրաստ էր: Ցույց չտալով իր անհանգստությունը՝ նա հանգիստ ասաց.

-Էլ ո՞վ պետք է ասի, պարո՞ն Սարիբեկյան, դուք փորձառու մարդ եք, պիտի իմանաք, որ կեղտը ձյունով ծածկել չի լինի: Իսկ ձեր անցյալը կեղտոտ է եղել: Եվ ահա այն այսօր կիսով չափ բացվել է: Եվ դուք զարմանո՞ւմ եք դրա համար:

Սարիբեկյանին այլևս ոչինչ չէր մնում անելու, քան ամեն ինչ խոստովանել, ավելի շուտ ազատել արածի համար:

-Այո՛, ես եմ զանգել Գեղամ Հակոբյանին: Ես ուրիշ կերպ չէի կարող: Ես պետք է փրկեի որդուս: Ես չէի ուզում Շավարշ Ղազարյանին մեղադրել գողության մեջ: Ես նրա անունը տվեցի ակամա

որդուս փրկելու համար: Ես չգիտեի, որ այս գործն ավարտվելու է ողբերգությամբ: Ես ու Շավարշի հայրը՝ Զրու Թևոսը, մտերիմ ընկերներ ենք եղել: Ես չէի ցանկանա Շավարշի մահը: Դա ինձ համար էլ մեծ ցավ ու տխրություն էր:

Վահանը Դարբինյանը այդ օրվա գործը ավարտված համարեց: Իհարկե, նա կցանկանար, որ Սարիբեկյանը պատմեր նաև Գեղամ Հակոբյանի «սև» գործերի մասին, բայց տվյալ դեպքում նա բավարարվեց այդքանով ու տեղից վեր կացավ՝ սառն ու խիստ նայելով Սարիբեկյանին:

-Համենայն դեպս ձեր մատնության պատճառով է եղել Շավարշ Ղազարյանի դաժան սպանությունը:

Սարիբեկյանը ոչինչ չկարողացավ ասել, ընկճված ու ջախջախված կախեց գլուխը: Վահան Դարբինյանն առանց ետ նայելու դուրս եկավ տնօրենի սենյակից: Քայլելով դեպի իր ավտոմեքենան՝ նա որոշեց անպայման տեսնել Վալտեր Ղազարյանին և նրանից իմանալ Ղարաբաղյան ազատագրական պատերազմի մասնակիցների անուն-ազգանունները, հասցեները, որոնք ապրում են Գանձասար քաղաքում: Նրա համար կարևոր էր նաև որոշ մանրամասների համար հանդիպել Շավարշի կնոջ՝ Տատյանայի հետ: Առանց երկարաբարակ մտածելու նա նստեց ավտոմեքենան և ուղիղ քշեց դեպի Վալտեր Ղազարյանի տունը:

Վալտերի որդին բացեց դուռը:

-Բարև, տղա՛ ջան, կարելի՞ է պապայիդ տեսնել:

-Պապ, կանչեց տղան,- քեզ կանչում են:

Դռների մեջ իսկույն երևաց Վալտերը:

-Բարև, Վահա՛ն ջան, համեցե՛ք, նե՛րս մտեք:

Վահանը ներս մտավ: Տանն էին Վալտերի կինը և հղի Տատյանան: Բոլորն էլ արտակարգ ուրախությամբ դիմավորեցին Վահանին: Վահանը նստեց բազկաթոռին: Վալտերն ու Տատյանան սպա-

սում էին Վահանի խոսքին: Վահանը սպասեցնել չտվեց: Կարճ լռությունից հետո խոսեց.

-Ես եկել եմ Գանձասար Շավարշի հետ կռված տղաների հետ հանդիպման նպատակով: Ասեմ, որ Երևանում ում հետ հանդիպել, զրուցել եմ, ոչ ոք չգիտեր Շավարշի մահվան մասին: Բոլորը կարծում էին, թե նա մինչև օրս կենդանի է: Դուք երևի կարող եք տալ նրանց անունները ու հասցեները:

-Մենք,- ասաց Վալտերը, կարող ենք տալ նրանց անունները, որոնք ապրում են Գանձասարում, բայց նրանց ցուցակը գտնվում է եղբորս՝ Ռուբիկի մոտ: Չէ՞ որ Ռուբիկն էլ կռվել է Շավարշի հետ միևնույն ջոկատում:

-Ես կարո՞ղ եմ այսօր Ռուբիկին տեսնել,- հարցրեց Վահանը:

-Այո, ինչքան գիտեմ, նա այսօր տանը պիտի լինի: Համենայն դեպս փորձեմ զանգել:

Վալտերը զանգեց: Ռուբիկը տանն էր:

-Հաց կերեք, հետո կգնանք,- ասաց տիկին Կարմենը:

-Դուք ինչպե՞ս եք, տիկի՛ն Տատյանա:

-Ապրում ենք: Ամեհամբեր սպասում ենք ձեր ջանքերի արդյունքին:

Վահանը Վալտերի հետ դուրս եկավ: Ռուբիկն ապրում էր ինը հարկանի շենքի հինգերորդ հարկում:

-Վերելակը չի աշխատում,- ասաց Վալտերը,- ստիպված պիտի ոտքով բարձրանանք:

Վահանն ու Վալտերը բարձրացան: Դուռը բացեց ինքը՝ Ռուբիկը: Բարևեցին: Վալտերը ներկայացրեց Վահանին:

-Վահան Դարբինյան, իմ նախկին դասընկերը, իսկ հիմա Շավարշի սպանության գործով իմ ու Տատյանայի դատապաշտպանն է:

-Շատ ուրախ եմ ծանոթանալուս համար,- ասաց Ռուբիկը:

Մտան ճաշասենյակ: Հարմար բնակարան էր Ռուբիկի, կնոջ և երկու երեխաների համար:

-Համարձակվում եմ հարցնել,- Ռուբիկը դիմեց Վահանին,- ես կարո՞ղ եմ իմանալ՝ ինչ հույսով եք եկել Գանձասար և այցի եկել մեր տուն:

Հարցը Վահանի սրտովն էր, անմիջապես պատասխանեց.

-Ինձ հարկավոր են ձեր մարտական ջոկատի տղաների անուն-ազգանունները: Ուզում եմ հանդիպել, խոսել, զրուցել նրանց հետ:

-Մեր ջոկատի մարտիկների ցուցակը ես աչքի լույսի նման պահում եմ իմ ծոցագրպանում: Ունեմ բոլոր տղաների անուն-ազգանունները: Տվյալ դեպքում երևի ձեզ պետք է միայն Գանձասարում ապրող տղաների ցուցակը:

-Ձեր խանգարի ամբողջ ջոկատի տղաների ցուցակը ունենալ: Հնարավոր է՝ երբևէ նրանց հետ հանդիպելու անհրաժեշտություն լինի,- ասաց Վահանը և գոհունակ շարունակեց,- ինչ լավ է, որ այս հարցը այսքան հեշտությամբ լուծվեց: Մարտիկներից ոմանք երևի զանգել են ձեզ կամ դուք եք զանգել նրանց:

-Եվ քանի ընկերների հետ կանոնավոր կապ ունեմ: Ես եմ զանգում, իրենք են զանգում: Բոլորն էլ մինչև հիմա սգի մեջ են մեր աննման ընկերոջ Շավարշի մահվան կապակցությամբ:

Վահանը թեման փոխեց.

-Ձեզ ոչինչ չի՞ ասում Գեղամ Հակոբյան անուն-ազգանունը:

Ռուբիկը մի պահ լռեց, մտածեց, հետո միանգամից բացականչեց.

-Դա էն Գեղամն է, աշխատել է Գանձասարի ոստիկանությունում:

-Այո՛, հենց նա ինքն է,- հաստատեց Վահանը:

Ռուբիկի աչքերում զայրույթի կայծեր շողացին, նայեց դեպի պատուհանը, ձեռքը թափ տվեց.

-Այդ ի՞նչ կատարվեց քեզ հետ, ինչո՞ւ միանգամից այլայլվեցիր, զայրացար,- հարցրեց Վալտերը:

-Էդ Գեղամի հետ կապված վաղուց տեղի ունեցած մի դեպք հիշեցի:

-Պատմիր իմանանք, ի՞նչ կա թաքցնելու,- խնդրեց Վալտերը,- ի՞նչ է տեղի ունեցել:

Ռուբիկը շարունակեց ծխել սիգարետը և հոգոց հանեց:

-Ծանր խոսակցություն է, բայց տեղը եկել է, պիտի պատմեմ: Ինչ որ պատմում եմ,- պատմել սկսեց Ռուբիկը,- վաղուց է եղել: Դու չես հիշի, Վալտե՛ր, փոքր ես եղել: Շավարշը պատահական ոստիկանության պատուհանի վրա դրված մի ատրճանակ է վերցնում: Պարզվում է, որ այդ ատրճանակը պատկանել է Գեղամ Հակոբյանին: Պապան այդ մասին ինձ ոչինչ չի պատմել: Ես դա լսել եմ այդ օրվա հերթապահ ադրբեջանցի Մամեդովից:

Պապան Շավարշի ձեռքից բռնում, գնում է ոստիկանությունն և ատրճանակը հանձնում տիրոջը՝ Գեղամին: Բայց մինչ այդ Գեղամ Հակոբյանը վերադասին հայտնած է լինում իր ատրճանակի կորչելու մասին: Վերադասը փոխանակ խստորեն պատժի ատրճանակը կորցնելու համար, Գեղամին ավագ լեյտենանտից իջեցնում են լեյտենանտի և ուղարկում այլ աշխատանքի: Այդ օրվանից Գեղամն ու Շավարշը թշնամանում են:

Միջնակարգը ավարտելու տարին Գանձասարի մի քանի տղաներ գնում են Կապլան, որ այնտեղից էլ գնացքով մեկնեն Երևան: Հենց այստեղ էլ՝ կայարանում կռվից է ծագում մեր տղաների և կայարանի տղաների միջև: Մեզ հետ էր նաև Վաղինակ Սահակյանը՝ Գանձասարի տնային կառավարչի որդին: Սա դանակով թեթև հարված է հասցնում տղաներից մեկի ոտքին: Ճանապարհային ոստիկանությունը բռնում է Սահակյանին և համապատասխան գործ կազմում: Էդ Սահակյանի տնային կառավարիչ հայրը ամեն ինչ անում է որդուն կալանքից փրկելու համար: Այստեղ ես թույլ եմ տալիս

ճակատագրական սխալ: Ինձ համոզում էն, որ հանցանքը վերցնեմ ինձ վրա: Հանուն ընկերոջ և հանուն այն բանի, որ տնային կառավարիչը չիսայտառակվի, ես դիմում եմ այդ վտանգավոր և սխալ քայլին: Ոստիկանությունում խոստանում էն, որ ինձ կալանքի չէն վերցնի, եթե հանցանքը մենակ ես վերցնեմ ինձ վրա:Բայց չանցած երկու օր՝ ինձ ձերբակալում էն: Հանցանքը կատարել էր Վաղինակ Սահակյանը, բայց ես այն վերցրի ինձ վրա: Ինձ կալանքի վերցրին և գցեցին «կուտուզկան»: Ես հետո իմացա, որ այդ ամենը եղել է Գեղամ Հակոբյանի նախաձեռնությամբ: Նրա կարգադրությամբ էլ համարյա ամեն օր ինձ ծեծում էին: Հաճախ ինքը՝ այդ Գեղամ Հակոբյանն էր դուբինկայով դաժանորեն ծեծում ինձ: Խփում էր մեջքից, փորից, որտեղ պատահի: Քանի-քանի անգամ է նա ինձ սպառնացել տանջամահ անել: Բայց ինձ փրկեց իմ դեռահասությունը: Ես դեռ տասնութ տարեկան չկայի:

Ռուբիկը լռեց, խորը հառաչեց, նորից վառեց սիգարետը և նորից խոսեց.

-Շավարշի ատրճանակի գողության պատմությունը Մամեդովը ինձ պատմեց, երբ ինձ Կապլանից տեղափոխեցին Գանձասարի քաղաքժին: Էդ Գեղամ Հակոբյանը հասցրեց ինձ լավ տանջել: Խաչ քաշվեց իմ երազանքի վրա, բարձրագույն կրթություն ստանալը ինձ համար դարձավ սոսկ անիրականանալի ցանկություն: Մամեդովը ինձ գլխի գցեց, որ էդ սրիկա Հակոբյանը վրեժ էր լուծում մեր ընտանիքից:

Վալտերը գլուխն առավ ափերի մեջ: Նա, որ Ռուբիկի պատմածից շատ բան արդեն հասկացել էր, լարվել էր ամբողջ մարմնով, ատելություն էր կուտակվել արցունքոտ աչքերում:

-Ինչ աստիճանի ճիվաղ պիտի լինի մարդ, որ քսան տարի անցնելուց հետո ընդունակ լինի այդպիսի գազանություն անելու,- սիրտը քրքրելով բացականչեց Վալտերը և դարձավ դեպի Վահանը,- Վահա՜ն, խնդրում եմ այդ գործը հասցրու մինչև վերջ: Այդ սրի-

կայի դեմքը պիտի պարզվի, հասարակությունը պիտի թքի նրա երեսին: Մարդու կերպարանքով այդ ավազակը պիտի կանգնի արդար դատաստանի առաջ: Խնդրում եմ, Վահա՛ն, բոլոր ուժերդ, խելքդ, շնորհքդ, հնարավորություններդ օգտագործիր, որպեսզի կեղտը ջրի երես ելնի: Հերիք է այդ վիժվածքը խաղա անմեղ մարդկանց ճակատագրերի հետ: Նա դժոխքի պիտի արժանանա:

Վահանը ուշադիր լսում էր: Քայլ առ քայլ պարզ էր դառնում շատ բան: Վահանի համար էլ պարզ էր, որ հանձին Գեղամ Հակոբյանի, ազնիվ մարդկանց առաջ կանգնած է վտանգավոր մի թշնամի, որն անսղելի է: Բայց այդ ամենը դեռ ապացուցել էր հարկավոր: Դեռ արդարի ու անարդարի պայքարում շատ դեպքերում հաղթում էր անարդարը: Դեռ օրենքը ուժեղի կողմն է, որքան էլ այդ ուժեղը խարդախ լինի ու մարդկային դեմքը կորցրած:

Իսկ այդ սրիկա Հակոբյանը ուժեղ էր, և ուժեղները կպաշտպանեն նրան: Նա շրջապատված էր իր նման տասնյակ անօրեն ու անխիղճ ուժեղներով: Վահանը հասկանում էր, որ այդ սրիկան իր փաստարկումների դեմ կօգտագործեր իր բոլոր գիշատչական հնարավորությունները, կդիմեր զանազան խարդավանքների, գործի կդներ կաշառքի իր զորությունը, զրպարտանքները: Նա թունավոր օձի նման մահացու կերպով կխայթեր իր հակառակորդին: Ուրեմն նրա դեմ պայքարելու, նրա իսկական դեմքը բացահայտելու համար հզոր միջոցներ են հարկավոր: Հզոր մարդիկ, նրանից ավելի հզորները միայն կարող էին նրան տապալել իր պատվանդանից: Կան այդ հզոր մարդիկ: Օրենքը կօգնի այդպիսի դեպքերում դժվար է ասել: Ինքն ընդամենը մի խղճուկ դատապաշտպան է, ուրիշ ոչինչ: Որպես այդպիսին նա կարող է դուրս գալ այդ ծանրածանր բեռան տակից... Դժվար, չափազանց դժվար է...

Խոչընդոտները շատ են: Արդարության ճանապարհները դեռ փակ են իր նման ճամփորդների համար: Ամենամենայնիվ պետք է փորձել ճեղքել խավարը, պետք է անհնարինը հնարավոր դարձնել:

Բայց և այնպես պետք է ընկերոջը՝Վալտերին մի հուսադրական խոսք ասել, թեկուզ մի բարի խոսքով մխիթարել նրան, ասել, որ վերջը լավ է լինելու: Եվ ի պատասխան Վալտերի թախանձագին խնդրանքների, Վահանը միայն կարողացավ ասել.

Շատ բան արդեն պարզվել է, Վալտե՛ր: Արդեն կասկած չկա, որ դա հրեշավոր սպանություն է եղել: Գիտենք նաև սպանության հեղինակին: Գիտենք, որ սպանությունը կատարվել է նրա սև ձեռքերով, բայց այդ ամենը դեռ ապացուցել է հարկավոր: Մենք միայն գործի սկիզբն ենք դրել: Մեր դիմաց կանգնած է հզոր սրիկա: Մենք դեռ փաստերը հաստատող վկաներ էլ չունենք: Մենք դեռ շատ դժվարին ճանապարհ ունենք անցնելու, բայց... ամեն ինչ դեռ այնպես չէ, ինչպես մենք պատկերացնում ենք:

Վահանն այսքանն ասաց ոչ թե Վալտերին հուսախաբ անելու համար, այլ նա պարտավոր էր ներկայացնելու դաժան իրականությունը:

Տիրեց տխուր, մելամաղձոտ լռություն: Ոչ ոք կարծես ռիսկ չէր անում որևէ բան ասելու:

Լռությունը վերջապես խզեց Վահանը:

-Էդ Մամեդովի անունը կարո՞ղ է՝ հիշես,- դիմեց Ռուբիկը:

-Ինչպե՞ս չէ, լավ էլ հիշում եմ,՝Նարիման է նրա անունը,՝Նարիման Մամեդով,- պատասխանեց Ռուբիկը:

Վահանը մտածում էր, որ ինչ-որ ժամանակ էդ Մամեդովը պետք կգա իրեն: Բայց վկայություն կտա՞, թե՞ կվախենա:

Վահանն զգաց, որ ինքն այստեղ այլևս անելիք չունի: Ռուբիկի ձեռքից վերցրեց ազատամարտիկ տղաների ցուցակը և տեղից վեր կացավ: Ինքն ու Վալտերը դուրս եկան: Լուռ գնացին մոտեցան ավտոմեքենային, նստեցին: Վահանը Վալտերին պիտի տուն տաներ: Ճանապարհին Վալտերը խոսեց: Վահանի խոսքերը ազդել էին նրա վրա:

-Վահա՛ն,- ասաց նա,- ես քեզ վրա ծանր բեռ եմ դրել, բայց ինչ էլ լինի, այդ բեռը պետք է տեղ հասցնել: Ես խնդրում եմ ինձ մի՛ պատասխանիր, առանց այն էլ ես գիտեմ քո առջև ծառացած վիթ-խարի դժվարությունը: Ես հույսս չեմ կտրում: Համոզված եմ, որ դու քեզնից կախված ամեն ինչ կանես, որ ճշմարտությունը քնած չմնա: Ցտեսություն,- ասաց Վալտերը և իջավ ավտոմեքենայից:

Վահանը գնաց քեռու տուն: Տիկին Ալվարդը դիմավորեց նրան:

-Կես ժամ առաջ Սիրոգից Արմանը զանգեց, քեզ էր ուզում:

-Զանգողը էլի կզանգի,- ժպտաց Վահանը:

Տիկին Ալվարդը գնաց խոհանոց: Վահանը նստեց բազկաթոռին ու աչքերը փակեց: Նա անհանգիստ էր: Նա խորհում էր վաղվա իր անելիքների մասին. «Այս ինչ անելանելի վիճակում եմ ես: Մի՞թե կարող եմ դուրս գալ այս ահավոր բեռան տակից: Ուժերս կբավականացնե՞ն: Կարո՞ղ եմ ջարդել օրենքի անտարբերության պատը: Բայց... չէ, մարդը պինդ արարած է: Ես չպիտի թուլանամ: Թուլությունն այս գործում մահ է: Ես պիտի կարողանամ հաղթահարել ինքս ինձ՝ հանուն հանուրի, հանուն ճշմարտության «:

Լսվեց հեռախոսի ձայնը, Վահանը վերցրեց ընկալուչը: Գիտեր, որ Արմանն է:

-Վահանը լսում է:

-Բարև, պարո՞ն Դարբինյան, որտե՞ղ ես այս ուշ ժամին:

-Իսկ դու որտեղի՞ց ես զանգում,- հարցին հարցին պատասխանեց Վահանը:

-Սիրոգից, մեր տնից:

-Ի՞նչ նորություններ կան:

-Բոլոր ճանապարհները տանում են դեպի Հռոմ,- կատակեց Արմանը:

-Այսինքն՝ դեպի դեպի Գեղամ Հակոբյա՞նը:

-Այո՛, իհարկե,- հաստատեց Արմանը:

-Ես Գանձասարում եմ հիմա, Արմա՛ն, Գանձասարի սիրելի մարդկանց շրջապատում, այստեղ էլ քիչ չեն դեպի Հռոմ տանող ճանապարհները:

-Կհանդիպենք Սիրոգում: Առավոտյան ես այստեղից դուրս կգամ, դուրս գալուց առաջ կզանգեմ: Բարի գիշեր:

Վահանը խիստ անհանգիստ քնեց: Առավոտյան շուտ զարթնեց: Տիկին Ալվարդն արդեն թեյն ու նախաճաշը պատրաստել էր: Վահանը թեյը խմելուց հետո տնեցիներին հրաժեշտ տվեց ու դուրս եկավ: Նստեց ավտոմեքենան ու քշեց դեպի Սիրոգ: Ամբողջ ճանապարհին Գեղամ Հակոբյանի մասին էր մտածում: Ինչքան ուզում էր նրան իր մտքից դուրս շպրտել, չէր ստացվում: Սիրոգ մտնելուց հետո ավտոմեքենան կանգնեցրեց իրենց շենքի մոտ, գնաց տուն: Մոտավ ճաշասենյակ, նստեց բազկաթոռին և զանգեց Արմանին.

-Ես արդեն Սիրոգում եմ մեր տանը:

-Ես հիմա տանը նստած թեյ եմ խմում,- ասաց Արմանը:

-Արի՛ մեր տուն, մտածենք, տեսնենք՝ ինչ ենք անում:

-Կես ժամից տնից դուրս կգամ,- ասաց Արմանը:

Վահանը դրեց հեռախոսը, միացրեց հեռուստացույցը: Նայում էր, ոչինչ չէր տեսնում, խոսում էին, չէր լսում: «Ալվարդը ճիշտ էր ասում սուրճ շատ եմ խմում, օգուտ-վնասը չգիտեմ, բայց հարկավոր է մի քիչ չափավոր լինել: Վերջ, վաղվանից սկսած մեկ-երկու բաժակից ավել չեմ խմելու»,- մտածեց նա և գնաց խոհանոց՝ թեյ պատրաստելու:

Լսվեց դռան զանգը: Գնաց դուռը բացեց, Արմանն էր:

-Լավ էլ ժամանակին գալիս ես,- չգիտես գոհ թե դժգոհ ասաց Վահանը:

Արմանը կատակի դրեց.

-Շէֆիս խոստացել եմ, ո՞նց կարող էի չգալ:

Վահանը թեյը բերեց, դրեց սեղանին:

-Ձերոնք ո՞նց են,- հարցրեց Վահանը:

-Փառք Աստծո: Ապրում են ինչպես ուրիշները,- ասաց Արմանը և խոսքը փոխեց,- այնտեղ՝ Գանձասարում, ի՞նչ իմացար այդ Գեղամ Հակոբյանի մասին:

-Շատ բան: Բանից պարզվում է, որ էդ գազանը ծեծով է սպանել Շավարշին: Դա հաստատ այդպես է, բայց ո՞նց կարող ենք դա ապացուցել,- երկմտանքով ասաց Վահանը,- ահա գլխավոր խնդիրը:

Թեյը լուռ խմեցին:

-Ես քանի՛ -քանի՛ անգամ քեզ ասել եմ մի կապվիր այդ «մենթերի» հետ: Նրանք բոլորն էլ «բեսպրիդելներ» են, իսկ դու ինձ չլսեցիր,- կատակեց Արմանը:

Իսկ Վահանը լուրջ ընդունեց Արմանի ասածը և հակադարձեց իր համոզումները:

-Չէ՛, Արմա՛ն, բոլոր «մենթերը» չէ, որ «բեսպրիդելներ» են, մենք պիտի հենվենք մարդկային կերպարանքները չկորցրած «մենթերի» վրա: Ես համոզված եմ, որ այդպիսի «մենթերի» թիվն էլ քիչ չէ: Ժամանակավոր է անօրենների իշխանությունը, Արմա՛ն: Այդ անօրենների վերջը մի օր գալու է: Դեռ գալու է մեր հաղթանակը Գեղամ Հակոբյանների նկատմամբ, և հեռու չէ Աստծո ահեղ դատաստանի օրը:

-Հետաքրքիր է՝ հիմա ինչ պլաններ ունես,- հարցրեց Արմանը:

-Առայժմ ճատրակ ենք խաղում և չգիտեմ ով է հաղթելու: Ահա իմ պլանը, Արմա՛ն:

-Չհասկացա, էդ ճատրակը ի՞նչ խաղ է:

-Ուրեմն մինչև հիմա չգիտես՝ ճատրակն ի՞նչ է,- զարմացավ Վահանը:

-Չէ, իսկապես չգիտեմ,- խոստովանեց Արմանը:

-Սփյուռքահայ ուսանողների հետ չես շփվել, եթե շփվեիր, նրանք քեզ կասեին՝ ճատրակն ինչ է: Սրանից հետո իմացիր, որ

ճատրակը շախմատն է: Իմացիր նաև, որ ճատրակ են ասել նաև մեր միջնադարյան պապերը:

-Երևան ե՞րբ ենք գնալու,- հարցրեց Արմանը:

-Գնալու ենք ժամը չորսին-հինգին: Այժմ նստի՛ր մի պարտիա ճատրակ խաղանք,- առաջարկեց Վահանը:

Սկսեցին խաղալ: Առաջին խաղից հետո հաշիվը դարձավ մեկ զրո՝ հօգուտ Վահանի: Երկրորդ խաղից հետո հաշիվը հավասարվեց: Արմանը երեխայի նման հրճվում էր՝ կրել էր Վահանի նման խաղացողին:

-Հիմա պիտի խաղանք երրորդ՝ վճռական պարտիան: Կյանքն էլ, Արմա՛ն, շախմատի նման բան է, մեկը պարտվում է, մյուսը՝ հաղթում: Բայց բոլոր դեպքերում հաղթում է ուժեղը: Հաղթում է նա, ով կարողանում է խաղատախտակի վրա ճիշտ դասավորել և ճիշտ քայլեր անել, առաջ անցնել, իր ծուղակը գցել հակառակորդին: Անգամ հիշում եմ: Կենտրոնական հեռուստացույցով ցույց տվեցին: 90-ական թվականներին Ռուսաստանի ազգային ժողովի պատգամավոր, Հայտնի լրագրող Բորիս Նեվզորովի հարցազրույցը թղթակցի հետ. «Ռուսաստանում գոյություն ունեն երկու տեսակի միլիցիայի աշխատողներ: Նրանցից 80% «մենթեր» են, կաշառակերներ և «բեսպրիդելշիկներ», իսկ 20% ազնիվ ոստիկաններ,- Դարբինյանը մի քիչ լռեց,- իսկ Հայաստանում 90 տոկոսն են «մենթեր», իսկ 10% արդար ոստիկաններ»: Ես՝ Վահան Դարբինյանս, հիմա խաղում եմ ոչ թե քեզ հետ, Արման, այլ... Գեղամ Հակոբյանի հետ...Խաղում եմ ուժերիս ամենավերջին լարումով, տեսնենք՝ ես եմ հաղթում թե... Գեղամ Հակոբյանը: Սկսեցինք: Խաղա՛, Արմա՛ն, մտածված, ամբողջ ուժով:

Խաղատախտակի վրա ծավալվում է ահեղ պայքար: Երկար ժամանակ պարզ չէր, թե ով կհաղթի: Ի վերջո հաղթեց Վահանը: Երկար դիմադրությունից հետո Արմանը զենքերը վայր դրեց:

Արմանի արքան հայտնվեց ծուղակի մեջ, և նա տեսավ, որ փրկության ոչ մի ելք չկա, ձեռքը մեկնեց ու շնորհավորեց Վահանի հաղթանակը:

-Ես չհասկացա՝ մեզնից ո՞վ պարտվեց, ես, թե՞ Գեղամ Հակոբյանը,- ասաց Արմանը՝ տեղից վեր կենալով:

-Արմա՜ն, ես քեզ հետ չէի խաղում, ես երևակայում էի, որ իմ դիմաց նստած է մի դաժան ու գիշատիչ հակառակորդ, որին պարտվել չէր կարելի: Մի հակառակորդ, որ ընդունակ է թաքնված կոմբինացիաներով ու խորամանկ քայլերով հաղթել դիմացինին: Արմա՜ն, հասկացա, որ ինձ պարտվել չի կարելի: Ինչ էլ լիներ, ես պիտի հաղթեի: Այդ պատճառով էլ խաղում էի ամբողջ ուժով միայն հաղթելու ձգտումով: Եվ ահա ես հաղթեցի: Ուժեղ ու խարդախ հակառակորդը ծնկի եկավ: Արմա՜ն, հասկացի՛ր՝ պայքարը դաժան է լինելու, բայց մենք հաղթելու ենք: Դրանում ես ավելի քան համոզված եմ: Մեզ մնում է չթուլանալ, հաղթանակի դրոշ վերցրած անվարան ընթանալ առաջ ու երբեք չերկնչել դժվարություններից ու հակառակորդի խարդավանքներից:

Երկուսով էլ ուրախ էին, ներքին մի ավյունով տոգորված:

Արմանը ինչ-որ բան հիշեց, ձեռքերը շփեց իրար ու նայեց Վահանին:

-Ես կարծում եմ,- ասաց նա,- այս հաղթանակն առանձնահատուկ պետք է նշել: Վահա՜ն, առաջարկում եմ իմ հաշվին հենց հիմա գնանք պանսիոնատ, մի լավ ուրախանանք:

-Համաձայն եմ, Արմա՜ն, միայն իմ հաշվին, բայց քո ավտոմեքենայով:

Որոշումը որոշում էր: Դուրս եկան փողոց, նստեցին ավտոմեքենան և քշեցին ուղիղ «Քյասիբի» տարօրինակ անուն կրող պանսիոնատը, որը գտնվում էր Սիրոգից դեպի Կապլան տանող ճանապարհի բարձրունքի վրա: Մտան պանսիոնատ, մի հարմար տեղ

նստեցին, ուտելիք ու խմելիք պատվիրեցին: Վահանը ժամանակ գտավ հարցնելու:

-Ձերոնք քեզ չե՞ն անհանգստացնում, Արման, չե՞ն ասում տղա ջան, բա ե՞րբ ես ամուսնանալու:

-Մեր տան հիմնական խոսակացությունը հենց այդ մասին է, Վահա՛ն:

-Բա դու ի՞նչ ես մտածում: Ինչ է, մտադիր չե՞ս պսակվելու:

-Ճիշտն ասած, մտածում եմ այս գործն վերջանա՝ հետո: Միշտ վազվռտուքի մեջ ենք, ժանանակ կա՞ որ...

-Այս գործը երկար է տևելու, Արմա՛ն, ուրեմն դու մտադիր ես պառավելո՞ւ: Համ էլ գործի վերջ չկա: Այս գործը վերջանա, մի ուրիշ գործ է սկսվելու: Ուրեմն պիտի հարմար ժամանակ գտնել դրա համար: Հա՛, Արմա՛ն, մի բան էլ: Ինչպե՞ս են գործերդ Մարիամի հետ: Կապերդ պահպանո՞ւմ ես նրա հետ, թե...մոռացել ես: Լսիր, մտադի՞ր ես նրա հետ ամուսնանալ:

-Վահա՛ն, ես նրան սիրում եմ: Օրերով մտքերս նրա հետ են: Շուտով նրա հետ կհանդիպեմ, կխոսենք:

-Արմա՛ն, իսկ նա սիրո՞ւմ է քեզ:

-Համենայն դեպս, Վահա՛ն ջան, չի երևում, որ անտարբեր է իմ նկատմամբ:

-Դե, ինչ ասեմ, Արմա՛ն: Մարիամը լավ աղջիկ է: Երկուսդ էլ իրար սազում եք: Ես ձեզ հաջողություն եմ ցանկանում: Խմենք քո և Մարիամի երջանկության կենացը,- ու Վահանը կոնյակով լի բաժակը խմեց մինչև վերջ:

Ճաշելուց հետո վերադարձան տուն: Վահանը շատ էր ուզում, որ Արմանը մնա իր տանը, զրույցը շարունակեն, մի քիչ հանգստանան, բայց Արմանը չհամաձայնեց: Նա ուզում էր գնալ իր ծնողների մոտ: Արմանի գնալուց հետո Վահանը պառկեց բազմոցին և իսկույն քնեց: Վեր կացավ ժամը չորսին: «Հարկավոր է գնալ Երևան,- մտածեց նա,- որքան շուտ, այնքան լավ»:

Զանգեց Արմանին:

-Արման, արթնացե՞լ ես, թե՞ չես քնել:

-Քնել եմ, Վահա՛ն, ժամը չորսին եմ արթնացել:

-Հինգին շարժվելու ենք, Արմա՛ն:

Դրանից հետո Վահանը հավաքեց Երևանի համարը:

-Բարև, Ա՛նու՛շ, ո՞նց եք, երեխաները ո՞նց են:

-Լավ ենք, Վահա՛ն, քեզ ենք սպասում:

Ժամը հինգին Վահանն ու Արմանը մեկնեցին դեպի Երևան: Ժամը ինն էին հասան Երևան:

-Երկուշաբթի առավոտյան կհանդիպենք: Մի քիչ շուտ կգաս դրասենյակ,- ասաց Վահանը:

Հաջորդ առավոտյան Արմանն ավելի շուտ եկավ դրասենյակ, քան Վահանը:

-Բարի լույս, Արմա՛ն,- ասաց Վահանը,- նորություններ կա՞ն:

-Չէ՛, ի՞նչ նորություն, քնել եմ, զարթնել, եկել այստեղ:

-Սո՛ւրճ դիր, խմենք: Քո հերթն է:

-Ինչքան հիշում եմ վերջին անգամ ես եմ սուրճ դրել, Վահա՛ն:

-Հերթը խախտում ենք, հաշվիր, որ դա կարգադրություն է:

-Եթե կարգադրություն է, չէ՛ ֆ ջան, ես գնացի խոհանոց:

Սուրճը խմելիս հեռախոսը զանգեց: Վահանը վերցրեց ընկալուչը:

-Ալո՛, լսում եմ:

-Բարև ձեզ, դո՞ք եք դատապաշտպան Վահան Դարբինյանը:

-Այո՛, ես եմ, ո՞ւմ հետ պատիվ ունեմ:

-Ձեզ անհանգստացնում է Հանրապետության փաստաբան-դատապաշտպանների կոլեգիայի քարտուղար Հարությունյանը:

-Շատ ուրախ եմ պարոն Հարությունյան, ես ձեզ լսում եմ:

-Ես պետք է ձեզ հայտնեմ, պարո՛ն Դարբինյան, որ Հաջորդ երկուշաբթի Մոսկվայում կայանալու է անկախ պետությունների համագործակցության դատապաշտպան-իրավաբանների ֆորում-

հավաք: Հայաստանի Հանրապետությունից մասնակցելու են հինգ ներկայացուցիչ: Մենք որոշել ենք այդ կապակցությամբ ձեզ էլ գործուղել Մոսկվա: Ինքնաթիռի տոմսերն արդեն պատվիրված են: Լուծված է նաև հյուրանոցի հարցը: Պատվիրակությունը գիշերելու է Մոսկվայի «Կոսմոս» հյուրանոցում: Ֆորում-հավաքը տևելու է երեք օր: Ի՞նչ կասեք, պարո՛ն Դարբինյան:

-Ճիշտն ասած, դա անսպասելի առաջարկություն էր ինձ համար: Շատ ուրախ եմ, որ գնահատում եք մեր ջանքերը իրավաբանության ասպարեզում, բայց ես պիտի մտածեմ, կարելի՞ է հետո պատասխանել առաջարկությանը:

-Այդ դեպքում,- հնչեց հեռախոսի մեջ,- վաղը ճիշտ այս ժամին կզանգեք այս համարով: Մեզ պետք է իմանալ ձեր պատասխանը առնվազն երեք օր առաջ: Այժմ գրեք մեր հեռախոսի համարը:

-Սա իսկապես անսպասելի նորություն է: Սա նշանակում է, որ այնտեղ՝ վերադասում, գիտեն մեր տեղը, մեզ հաշվի են առնում:

Արմանը, որ դեռևս հստակ չէր հասկացել՝ ինչ է եղել, շուռ եկավ դեպի Վահանը և հարցրեց.

-Մի բացատրիր տեսնենք՝ ինչ է եղել: Կարո՞ղ եմ իմանալ՝ ով էր զանգողը:

-Փաստաբան-դատապաշտպանների կոլեգիայի քարտուղար պարոն Հարությունյանը:

-Եվ ի՞նչ ասաց այդ պարոն Հարությունյանը:

-Արմա՜ն, ասաց, որ երկուշաբթի օրը ես պետք է մասնակցեմ Մոսկվայում անկախ պետությունների համագործակցության ֆորում-հավաքին: Հայաստանից հինգ հոգի են, որից մեկը ես եմ:

-Շնորհավորում եմ, պարո՛ն Վահան Դարբինյան,- ուրախացավ Արմանը,- այդպիսի բան հազվադեպ է լինում, դու չպետք է կորցնես այդ հնարավորությունը, անպայման պիտի գնաս: Դրա մեջ ես տեսնում եմ նաև մեր առաջ գնալու հեռանկարը: Դա ուղղակի հոյակապ է, Վահա՜ն:

Վահանը լուռ էր, իսկ Արմանը չէր կարողանում զսպել հրճվանքը:

-Այսօր ի՞նչ օր է, Արմա՛ն,- հարցրեց Վահանը:

-Երկուշաբթի է,- ասաց Արմանը,- բայց ինչո՞ւ ես հարցնում:

-Մինչև Մոսկվա գնալը դեռ մի շաբաթ կա: Դա նշանակում է, որ ես կարող եմ մի երեք-չորս օր առաջ գնալ Բելգորոդ:

-Չեմ հասկանում, Բելգորոդ ինչո՞ւ գնաս:

-Ուզում եմ հանդիպել Վազգեն Մարտիրոսյանի հետ:

-Չհասկացա, այդ Վազգեն Մարտիրոսյանն ո՞վ է,- այս անգամ ավելի շատ զարմացավ Արմանը:

-Այդ Վազգենը, Արմա՛ն, պապայիս հորեղբոր տղան է, ապրել է Բաքվում: Նրանց տունը Բաքվում ռուսական եկեղեցու մոտ՝ երկաթուղային կայարանից երկու փողոց դեպի ձախ: Այ կողմում մեծ բակին կից եղել է Վազգենի տունը: Տան առջև հսկա ծառ է եղել՝ ստվերի տակ դրված մեծ սեղանով, որի վրա շաբաթ-կիրակի օրերին նստել և բակի երիտասարդները դոմինո կամ՝ նարդի են խաղացել: Երկրորդ հարկում Վազգենի բնակարանին կից, ապրել է պրոֆեսոր Ախունդովի ընտանիքը: Պրոֆեսորի որդի Վագիֆը և Վազգենը մոտ ընկերներ են եղել:

-Վահա՛ն, այդ ամենը ինչի՞ համար ես ինձ պատմում: Այդ Վազգենը ի՞նչ պիտի անի:

-Կզանգի Վագիֆին՝ իր ադրբեջանցի նախկին ընկերոջը: Ռուսաստանից շատ հեշտ է Բաքու զանգելը:

-Զանգի՝ ի՞նչ իմանա, ի՞նչ նպատակով զանգի,- հարցնում է Արմանը:

-Մեզ հարկավոր է գտնել Ադրբեջանում ապրող Նարիման Մամեդովին, Հիմա հասկացա՞ր ինչի համար:

-Եվ դու ուզում ես ամբողջ Ադրբեջանում մի կորած-մոլորված Մամեդո՞վ գտնել: Գտնում ես, որ դա հնարավո՞ր է:

-Համենայն դեպս փորձը փորձանք չէ, պարո՞ն Աբրահամյան: Մի՞թե քիչ են պատահում հրաշքներ:

-Լավ, ասենք թե նա գտնվեց, դու կարծում ես, թե նա կգա ու ցուցմունք կտա:

-Գալ հարկավոր չէ: Ցուցմունքը կգրանցվի տեսաժապավենի վրա, և այն Վազգենը կուղարկի մեզ:

-Ես զարմանում եմ քեզնից, Դարբինյան, քեզ չի՞ թվում, որ դու հսկա դեզի մեջ ասեղ ես փնտրում:

-Իրավաբանության մեջ, Արմա՞ն, երբեմն անհնարինը հնարավոր է դառնում: Ես փորձում եմ օգտագործել բոլոր հնարավորությունները՝ անգամ չմտածելով ինչն է հնարավոր, և ինչն է անհնարին: Արմա՞ն, մեզ ապացույցներ են պետք, անառարկելի, ասպասելի փաստեր ու վկայություններ: Մեզ պետք են հզոր փաստարկներ: Պիտի անակնկալի բերել արատավոր դաժան ու անհոգի, օրենքի անունից խոսող, բայց օրենքները շրջանցող մարդկանց: Մենք պետք է օգտագործենք բոլոր հնարավորությունները: Իրավաբանության մեջ մանրուքներ չկան: Մեր նպատակին հասնելու համար պետք է գերազանցենք ինքներս մեզ:Հիմա ես գնում եմ տուն:Երկու օրից թռչելու եմ Մոսկվա, այնտեղից էլ գնացքով գնալու եմ Բելգորոդ: Իսկ դու, Արմա՞ն, այդ օրերի ընթացքում գրասենյակից չբացակայես: Հնարավոր է՝ կարևոր զանգեր լինեն: Կձգտեմ երեկոյան ժամերին կապի մեջ լինել քեզ հետ: Ցտեսություն:

-Քեզ հաջողություն,- ասաց Արմանը:

Վազգեն Մարտիրոսյանը ընտանիքով Բաքվից Բելգորոդ է տեղափոխվել սումգայիթյան արյունոտ նախճիրից հետո: Ընդամենը մի քանի ամսում Բաքուն ամբողջովին հայազրկվեց: Հայերը դարձան փախստականներ: Դրանց թվում էր նաև Վազգեն Մարտիրոս-

յանը: Վազգենի կինը՝ Էլմիրան, ազգությամբ ադրբեջանցի էր: Էլմի-
րան և Վազգենը ծանոթացել էին Բաքվի մանրեսագիտական ինս-
տիտուտում, որտեղ նրանք միասին սովորում էին: Ավելի քան երկու
տարի նրանք ընկերությունն էին անում իրար հետ: Էլմիրայի հայրա-
կան ընտանիքը ապրում էր Նախիջևանում: Հայրը Նախիջևանում
բարձրաստիճան պաշտոնյա էր: Էլմիրայի ծնողների սաստիկ դեմ
էին իրենց աղջկա ընտրությանը և ամեն կերպ խանգարում էին , որ
Վազգենին հեռացնեն իրենց աղջկանից: Հայրը իր երեք որդիներին
Նախիջևանից ուղարկում է Բաքու՝ քրոջը հեռացնելու իր անմիտ ո-
րոշումից: Նրանք մի քանի անգամ սպառնում են Վազգենին, որ
ձեռք քաշի ադրբեջանցի իրենց քրոջից: Տեսնում են, որ սպառնա-
լիքները չեն օգնում, Էլմիրային զոռով տանում են Նախիջևան: Սա-
կայն չանցած մի քանի օր՝ Էլմիրան Նախիջևանից ծածուկ փախչում
է գալիս Բաքու՝ սիրած տղայի մոտ:

Սիրահարներն ամուսնանում են:

Այդ տարիներին Վահան Դարբինյանը մի քանի անգամ լինում
է Բաքվում և մնում է Վազգենենց տանը: Վահանն իր ընկերոջ՝ Կա-
րոյի հետ հատկապես գնում է Բաքու՝ տեսնելու Երևանի «Արարա-
տի» և Բաքվի «Նեֆչի» ֆուտբոլային թիմերի խաղը:

1983 թվականին ծնվում է Վազգենի և Էլմիրայի անդրանիկ
որդին Գարիկը, ութսունյոթ թվականին՝ դուստրը՝ Ալբինան:

Հաշտ ու խաղաղ, սիրով ու հավատով ապրում է Վազգենի ու
Էլմիրայի ընտանիքը: Վրա են հասնում 1988-89 թվականները: Բաք-
վի իշխանությունների թողտվության պայմաններում վայրենի արշա-
վանք է սկսվում հայերի դեմ: Մի օր էլ մոտ հիսուն թուրք ղոչի-թա-
լանչիներ գիշերը հարձակվում են ռուսական եկեղեցու մոտ գտնվող
հայաբնակ շենքերի վրա: Սկսվում է համատարած թալանը: Թուրք-
ազերիների զինված հրոսակները ջարդում-փշրում են ամեն ինչ, իսկ
դիմադրողներին տեղնուտեղը ոչնչացնում են, նույնիսկ պատշգամ-
բից նետում ցած: Ազերի մի քանի ղոչիներ փորձում են ջարդել Վազ-

գենի բնակարանի դուռը և խուժել ներս: Կողքի բնակարանից դուրս է գալիս պրոֆեսոր Ախունդովն իր երկու որդիների հետ, կանգնում հարձակվողների առջև.

-Անմիջապես հեռացե՛ք այստեղից, թե չէ կզանգեմ Անվտանգության կայազորի պետին, կգան և բոլորիդ կձերբակալեն:

Ազերի ղոչիները վախեցնում, թողնում-հեռանում են:

Ախունդովը, տեսնելով իրավիճակը, Վազգենին խորհուրդ է տալիս թողնել Բաքուն ու գնալ Միությանն այլ քաղաքներում ապրելու: Ոչ միայն Վազգենին, այլև շատ հայերի է Ախունդովը օգնում թողնելու Բաքուն՝ զգալով, որ Բաքվում ոչ մի հայ չի կարող պահպանել իր կենդանի գոյությունը:

Վազգենը թողնում-հեռանում է, իսկ կինը՝ Էլմիրան, մնում է Բաքվում հույս ունենալով, որ շուտով ամեն ինչ կկարգավորվի և իրենք կապրեն Բաքվում: Ցավոք դա տեղի չի ունենում, և Էլմիրան ստիպված վերցնում է երեխաների և գնում Բելգորոդ՝ իր ամուսնու մոտ:

Երևան-Բելգորոդ ուղիղ չվերթ չկար: Վահան Դարբինյանը Բելգորոդ գնալու համար պետք է վայրէջք կատարեր Մոսկվայում:

Նա Մոսկվա է հասնում հինգշաբթի օրվա առավոտյան: Հենց իջնում է ինքնաթիռից, անմիջապես գնում է «Կոսմոս» հյուրանոց, իր համար հարմար սենյակ վերցնում և երկաթուղային տեղեկատուից իմանում Մոսկվա-Բելգորոդ գնացքի չվացուցակը: Գնացքի մեկնելուն դեռ ահագին ժամանակ կար:

Վահանը Մոսկվայում վաղուց չէր եղել: Դուրս է գալիս փողոց, մտնում դիմացի այգին, նստում ծառի շվաքում դրված նստարանին, հետաքրքրությամբ նայում անցող-դարձողներին: «Առաջվա Մոսկվան չէ սա: Շատ բան է փոխվել: Միության մայրաքաղաքը հիմա

դարձել է դաշնության մայրաքաղաք: Դրոշի վրա այլևս մուրճ ու մանգաղ չկա: Պետականը դարձել է սեփական: Մարդիկ էլ փոխվել են, դարձել Նոր ռուսներ, Նոր Հայեր... Կյանքը դեպի լա՞վ է փոխվել թե՞... «

Վահանը նայում է ժամացույցին, գնում կայարան:

Գնացքը ժամանում է Բելգորոդ: Վահանը բարձրանում է գնացք, մտնում ներս, գտնում իր կուպեն, պառկում նառի վրա, աչքերը փակում, բայց չի քնում: Այգում սկսված միտքը շարունակվում է գնացքում: «Այսքան տարի է՝ Վազգենին էլ չի տեսնում: Առաջվա Վազգե՞նն է, թե՞ նա էլ է փոխվել: Կօգնի՞ իրեն Մամեդովին գտնելու... և առհասարակ իրեն ինչպես կընդունեն Վազգենը, նրա կինը, երեխաները «: Հետո գնացքի միաշար թիկթիկոցի տակ նրա միտքը թռչում է Երևան, այնտեղից համնում Սիրոգ, համնում Գանձասար: Հետո հանկարծ որտեղից որտեղ հայտնվում է Գեղամ Հակոբյանը և իրեն մենամարտի հրավիրում: Ինքը՝ իրավաբան-դատապաշտպան Վահան Դարբինյանը, և ոստիկանության մայոր Գեղամ Հակոբյանը կոխ են բռնում: Կատաղի գոտեմարտ է սկսվում: Հակոբյանը վիշապի նման ձեռքը փաթաթում է Դարբինյանի մեջքով, որ նրան տապալի գետնին: Մի պահ երերում է Վահանը, բայց շարունակում է մնալ ոտքի վրա: Կատաղում է Գեղամ Հակոբյանը: Թույն էր հոսում երախից, ձգում մկանները, լարում իրեն, փքվում ամբողջ մարմնով, ուռչում, ուռչում և... հանկարծ պայթում: Գեղամ Հակոբյանից ոչինչ չի մնում: Պարզվում է, որ նա թարախով ու թույնով լիքը մի փուչիկ է եղել:

Վահան Դարբինյանը նայում է ու իր դիմաց այլևս մարդ չի տեսնում: Գեղամ Հակոբյանը չքացել է, միանգամից վերացել...

Լսվում է գնացքի շչակի ձայնը: Ուրեմն գնացքը հասել է կառամատույց: Վահանը զարթնում է միանգամից: Նրա արթմնի երազը չքանում է, ընդոստ վեր է կենում տեղից և իջնում գնացքից: Արդեն պայծառացած մտքով Վահանը հիշեց, որ Սիրոգում ապրող

Վազգենի քրոջից՝ Ռաիսա Սուրենովնայից վերցրել է Բելգորոդում ապրող եղբոր Հեռախոսի համարը և տան հասցեն: Աչքը ավտոմատ-Հեռախոս փնտրեց: Փողոցի մի անկյունում գտավ այն, համարը հա-վաքեց.

-Ալո՛, բարև ձեզ, դա Վազգեն Մարտիրոսյանի բնակարա՞նն է:

-Այո՛, նրա որդին է ձեզ պատասխանում:

-Վազգենին մի րոպեով կարելի՞ է Հեռախոսի մոտ:

-Պապան տանը չէ, նա Հիմա աշխատանքի է, իսկ ո՞վ է հարց-նում:

-Այդ դեպքում հաղորդեք նրան, որ Հայաստանից եկել է նրա բարեկամը՝ Վահան Դարբինյանը: Ես կուզեի նրա հետ հանդիպել: Կարելի՞ է ձեզ մոտ հյուր գալ:

-Լավ, ես կզանգեմ պապային, բայց դուք ինչո՞ւ եք սպասում, եկեք մեր տուն: Պապան մի ժամից տանը կլինի:

-Ինչպե՞ս է ձեր անունը:

-Գարիկ:

-Լա՛վ, Գարի՛կ, մինչև կես ժամը ես կլինեմ ձեր տանը:

-Ուրախ կլինենք:

Կես ժամից հետո Վահանն արդեն բարձրանում էր Վազգենի տան աստիճաններով: Վահանն առանց դժվարության գտավ Վազ-գենի բնակարանը, ծեծեց դուռը: Դուռը բացեց մի երիտասարդ:

-Ես ձեզ ճանաչեցի, դուք Վազգենի որդին եք՝ Գարիկը:

-Այո՛,- ժպտաց երիտասարդը,- ես Գարիկն եմ, համեցեք ներս:

Վահանը ներս մտավ:

-Պապային զանգել եմ,- ասաց Գարիկը,- նա մի տասը-տաս-հինգ րոպեից հետո կգա:

-Դուք,- հարցրեց Վահանը՝ տեղը նստելով,- Վազգենի ավագ որդին եք:

-Այո՛, երկու երեխա ենք՝ ես ու քոյրս: Ես սովորում եմ համալսարանում, իսկ քոյրս աշակերտ է, սովորում է տասներորդ դասարանում:

Մայրդ չի՞ աշխատում,- հարցրեց Վահանը:

-Աշխատում է: Շուկայում առևտուր է անում պապայիս հետ:

Հենց այդ ժամանակ լսվեց դռան զանգը:

-Մա՛մ, մենք հյուր ունենք,- դուռը բացելով՝ ասաց Գարիկը,- պապայի բարեկամն է, քեռի Վահանը:

-Ուրախ եմ, վերջապես մեր տեղը իմացան,- ժպտալով ասաց տիկին Էլմիրան՝ մտնելով ճաշասենյակ:

-Բարև ձեզ, ինչքան հասկանում եմ, դուք Վահան Դարբինյանն եք: Ձեր մասին Վազգենը շատ է պատմել:

-Բարև ձեզ, այո՛, ես Վահանն եմ,- ասաց Վահանը,- իսկ դուք Վազգենի կինն եք՝ Էլմիրան:

-Այո՛, ես շատ ուրախ եմ ձեր գալստյան առթիվ,- զվարթաձայն ասաց տիկին Էլմիրան,- ես հիմա ձեզ սուրճ կդնեմ, իսկ հետո կճաշենք: Վազգենը կգա մի տասը րոպեից:

Գարիկը հեռուստացույցը միացրեց՝ նկատի ունենալով զբաղեցնել հյուրին:

-Ինչպե՞ս են ձեր համալսարանակ գործերը,- հարցրեց Վահանը:

-Լավ են: Սովորում ենք մեր ուժերի ներածին չափով:

Տիկին Էլմիրան սեղանը կարգի բերեց: Նա սեղանի անկյունից վերցրեց երեխաների տետրերն ու գրքերը:

-Գարի՛կ, սուրճի՞ն նայիր, չթափվի,- ասաց տիկին Էլմիրան և սեղանին քաղցրավենիք ու միրգ դրեց:

Քիչ հետո Գարիկը խոհանոցից եկավ.

-Սուրճը պատրաստ է:

Լսվեց դռան զանգը:

-Ը՛հը, էս էլ մեր պապան,- ասաց Գարիկը և գնաց դուռը բացելու:

-Օ՛, էս ո՞ւմ եմ տեսնում,- ներս մտնելով ուրախ-ուրախ ասաց Վազգենը,- պարոն Վահան Դարբինյան, ահա ով է եկել մեր տունը:

Վահանն ու Վազգենը գրկախառնվեցին:

-Առիթ կար Մոսկվա գալու, Բելգորոդ եկա: Չէի կարող ձեզ չտեսնել,- ասաց Վահանը:

-Տնեցիները ո՞նց են,- հարցրեց Վազգենը:

-Փա՛ռք Աստծո, բոլորն էլ լավ են, բոլորն էլ բարևում են:

-Լսել եմ, որ արդեն Երևանում ես ապրում:

-Այո՛, ընտանիքով տեղափոխվել ենք Երևան: Հիմա, այսպես ասած, «ադվակատ» եմ, ամբողջ օրը դատական գործերով եմ զբաղված:

-Էդ ի՞նչ է, ոստիկանությունում չկարողացա՞ր աշխատել:

-Ոստիկանությունում, Վազգե՛ն, ինչ-որ չստացվեց, երկար պատմություն է, այդ մասին հետո կխոսենք:

Էլմիրան գնաց խոհանոց՝ ճաշի պատրաստություն տեսնելու: Վազգենը ավելի մոտ նստեց Վահանին և ջերմորեն հարցրեց.

-Դե հիմա պատմիր տեսնենք՝ ինչ հարցով ես եկել Մոսկվա:

-Եկել եմ ԱՊՀ-ի «ադվակատների» միության ֆորում-հավաքին մասնակցելու: Բայց Բելգորոդ երկու նպատակով եմ եկել:

-Վահա՛ն, գլխի չեմ ընկնում, էդ ի՞նչ նպատակներ են:

-Նախ եկել եմ ձեզ տեսնելու, հետո էլ քո օգնությանը դիմելու համար:

-Առաջին նպատակդ հասկացանք, Վահա՛ն, դրա համար շնորհակալություն, բայց երկրորդ նպատակդ ինձ համար անհասկանալի է: Այդ ի՞նչ հարցով ես կարող եմ օգնել քեզ,- ընդգծված զարմանքով հարցրեց Վազգենը:

-Վազգե՛ն,- գործնական տոնով ասաց Վահանը,- ես գիտեմ, որ Բաքու քաղաքում դու ունեցել ես լավ ընկերներ, հավատարիմ ու

բարեհոգի մարդիկ ոչ միայն հայերի շրջանում, այլև ադրբեջանցիներ-ի: Խոսքը հատկապես ձեր հարևան պրոֆեսոր Ախունդովի մասին է: Նրա որդու՝ Վագիֆի հետ դուք միասին եք սովորել դպրոցում և եղել եք շատ մոտ ու հավատարիմ ընկերներ,- ասաց Վահանը և սպասեց Վազգենի պատասխանին:

-Այո՛, իհարկե, ես անչափ շնորհակալ եմ Ախունդովից և նրա ընտանիքի անդամներից: Պրոֆեսորը ինձ, կարելի է ասել, մահից է փրկել: Նրա օգնությամբ ես դուրս պրծա բաշիբոզուկների ճանկերից և եկա այստեղ:

Վահանը լուրջ էր, Վազգենի այդ խոսքերից հետո ավելի լրջացավ և քիչ լռելուց հետո հարցրեց.

-Վազգեն դու կարո՞ղ ես այստեղից զանգել Վագիֆին, դա ինձ համար շատ կարևոր է: Հարկավոր է գտնել Նարիման Մամեդովին, իմանալ՝ որտեղ է նա ապրում:

-Իսկ ո՞վ է այդ Մամեդովը, չեմ հասկանում, դո՞ւ ինչ կապ ունես նրա հետ,- լրջորեն, մի քիչ զարմացած ասաց Վազգենը:

Վահանը պատմեց Շավարշ Ղազարյանի, նրա սպանության մասին և ասաց, որ այդ Մամեդովը Շավարշի սպանության մասին որոշակի տեղեկություններ ունի և այդ տեղեկությունները իրեն անհրաժեշտ են որպես դատապաշտպան:

-Հարկավոր է գտնել այդ Մամեդովին և նրանից իմանալ իրականությունը,- եզրափակեց իր խոսքը Վահանը:

-Վահա՛ն ջան,- տարակուսանքով ասաց Վազգենը,- դա չափազանց բարդ գործ է, մանավանդ մեր ժամանակներում: Ադրբեջանը հիմա թշնամական երկիր է: Այնտեղից այստեղ տեղեկություններ հավաքելը շատ դժվար գործ է, համարյա անհնարին: Ինձ թվում է այդ Մամեդովին գտնելուց հետո էլ ինչ-որ արդյունքի հասնելը դարձյալ անհնարին է: Այսօր ամբողջ Անդրկովկասն է խառնվել իրար: Դու ուզում ես այդ խառնիխուռն իրավիճակներում ինչ-որ

տեղեկություններ ստանալ Հարևան երկրի քաղաքացուց անխիղճ ու անիրավ «մենթերի» մասին...

Տիրեց լռություն: Երկուսն էլ իրենց մտքերի հետ էին:

Դռան զանգը հնչեց: Գարիկը գնաց բացեց դուռը: Ներս մտավ Վազգենի աղջիկը՝ Ալբինան:

-Բարև ձեզ,- ներս մտնելով ասաց նա:

-Բարև աղջիկս,- ասաց Վազգենը,- ծանոթացիր Վահան Դարբինյանի հետ: Նա մեր բարեկամներից է: Ապրում է Հայաստանի Սիրոգ քաղաքում: Հիմա էլ Երևանում:

Վահանը վեր կացավ, մոտեցավ Ալբինային, ճակատը համբուրեց:

-Ինչ փառահեղ աղջիկ ունես, Վազգե՛ն,- ոգևորված ասաց Վահանը:

-Շատ ուրախ եմ Ձեզ տեսնելու համար,- ասաց Ալբինան:

Վահանն ու Վազգենը առանձնացան: Նրանք դեռ չէի ավարտել իրենց խոսակցությունը: Վազգենը ասաց.

-Ես համենայն դեպս կզանգեմ Վագիֆին, միայն երեկոյան, որ նա տանը լինի: Կասեմ, որ փնտրի գտնի այդ Մամեդովին:

-Սեղանը պատրաստ է,- հնչեց տիկին Էլմիրայի ձայնը:

Վազգենը ու Վահանը նստեցին սեղանի շուրջը:

Հաց ուտելուց հետո Վազգենը նայեց ժամացույցին: Ժամը վեցն էր:

-Արդեն կարելի է զանգել Բաքու: Ինձ թվում է՝ Վագիֆն արդեն տանը կլինի: Փորձենք զանգել:

Վազգենը հավաքեց Բաքվի համարը:

-Ալո՛, կներե՛ք, ո՞վ է խոսում: Դա Վագիֆի բնակարա՞նն է, ինդրում եմ նրան կանչեք հեռախոսի մոտ:

Քիչ հետո լսվեց Վագիֆի ձայնը.

-Վագիֆը ձեզ լսում է:

-Բարև՛, Վագի՛ֆ ջան, իմացա՞ր չէ՝ ով է խոսում, ապրես, ո՞նց ես:

-Բարև Վազգեն, շատ ուրախ եմ՞քո զանգի համար, վաղուց է՝ իրար չենք տեսնում: Մերոնք լավ են: Դու, Էլմիրան, երեխաները ո՞նց են:

-Բոլորն էլ լավ են Վագի՛ֆ ջան: Մի հարց կա քեզ հետ լուծելու:

-Խնդրեմ, ես քեզ համար պատրաստ եմ, եթե իմ ուժերից վեր չէ: Ասա տեսնեմ ի՞նչ հարց է:

-Գիտես ինչ, Վագի՛ֆ: Ներկայումս Ադրբեջանում է ապրում Հայաստանի Գանձասար քաղաքի բնակիչ, ոստիկանության նախկին աշխատակից Նարիման Մամեդովը: Նրան հարկավոր է գտնել: Կոչումով սերժանտ է եղել: Հիմա հեռախոսափողը տալիս եմ իմ բարեկամին՝ Վահան Դարբինյանին: Դու պետք է նրան հիշես: Նրան մի քանի անգամ տեսել ես մեր տանը: Մի երկու անգամ էլ միասին ստադիոն ենք գնացել՝ ֆուտբոլ դիտելու: Նա քեզ կբացատրի, թե այդ Մամեդովը նրա ինչին է պետք:

Վազգենը հեռախոսափողը փոխանցեց Վահանին:

-Բարև, աղա՛ Վագիֆ: Մի քանի ամիս առաջ սպանություն է կատարվել: Մամեդովին հայտնի են այդ սպանության որոշ մանրամասներ: Ինձ որպես դատապաշտպանի հարկավոր են այդ մանրամասները: Իմացա՞ր՝ խոսքն ինչի մասին է:

-Այո՛, ամեն ինչ պարզ է: Եթե այդ Նարիման Մամեդովը կենդանի է, երևի դժվար լինի նրան գտնելը: Բայց նա կպատմի իրականությունը թե չէ, դա արդեն ասել չեմ կարող:

-Դրամական պարգև խոստացիր նրան, Վագի՛ֆ, գումարը մենք կուղարկենք ձեր հասցեով,- ասաց Վահանը և ավելացրեց,- Նրա ասածները, վկայությունները հարկավոր է նկարահանել տեսաժապավենի վրա, որ այն հեշտ լինի ուղարկել մեզ:

-Լա՛վ, ես ինչ հարկավոր է կանեմ: Նրան գտնելուն պես անհապաղ կզանգեմ Վազգենին:

-Շնորհակալություն, աղա՛ Վագիֆ,- ասաց Վահանը և անջատեց հեռախոսը:

«Սկզբի համար վատ չէր: Վագիֆը բավական հեշտությամբ համաձայնեց առաջարկված պայմանին, և ես համոզված եմ, որ նա ամեն ինչ անելու է դրա համար»,- մտածեց Վահանը և ներքին ոգևորությամբ ասաց.

-Այժմ, Վազգե՜ն, արի նարդի խաղանք:

Նստեցին խաղալու: Վահանը մտքում որոշեց խաղալ բախտ գցելու վրա: «Եթե ես հաղթեմ, ուրեմն գործերս հաջող են լինելու»: Երեք անգամ խաղացին: Երկու անգամ հաղթեց Վահանը: Վահանը գիշերեց Վազգենի տանը: Լավ քնեց, հանգիստ, առանց անհանգիստ երազների: Առավոտյան զարթնեց առույգ ու զվարթ տրամադրությամբ: Մի ժամից հետո նա մեկնեց Մոսկվա:

Անկախ հանրապետությունների իրավաբան-փաստաբանների ֆորում-հավաքը տևեց երեք օր: Ամբիոն էին բաձրանում նշանավոր իրավաբաններ, պետական-հասարակական ակնավոր գործիչներ: Վահանը լսում և չէր լսում նրանց: Նրա ակնջը խոսողների վրա էր, միտքը՝ Երևանում: Ֆորում-հավաքը հենց ավարտվեց, նա իսկույն գնաց Հյուրանոց, բազմեց փափուկ աթոռին, աչքերը փակեց և փորձեց այդ դիրքում մի քիչ հանգստանալ: Ցանկացավ լոգանք ընդունել: Այդ մտադրությամբ էլ տեղից վեր կացավ, հենց այդ պահին էլ հեռախոսը զնգաց.

-Լսում եմ:

-Վահա՜ն, Վազգենն է: Աչքդ լույս: Վագիֆը Մամեդովին գտել է: Ապրում է Բաքվի արվարձաններից մեկում:

-Շնորհակալություն, Վազգե՜ն, ինձ ահագին ուրախացրիր: Չէի սպասում, որ այդքան շուտ կգտնվի Մամեդովը: Ես երեկոյան կլինեմ Բելգորոդում, ձեզ մոտ:

-Սպասում ենք:

Վահանը գոհ էր: Բայց ինչ-որ տեղ անվստահությունը եկել, նստել էր նրա սրտում: Դեռևս հայտնի չէր՝ ինչ կասի այդ Մամեդով կոչվածը: Բացատրություն կտա՞, թե՞ ոչ: Կասի՞ այն ամենը, ինչ որ իրականում եղել է: Մյուս կողմից էլ նրան անհանգստացնում էր այն հանգամանքը, որ Ադրբեջանը և Հայաստանը թշնամական հարաբերությունների մեջ են, հաշվի կառնե՞ն թշնամու փաստարկներն ու վկայությունները: Երևի չէ: Ուրեմն իզո՞ւր են այս բոլոր ջանքերը:

Որոշեց զանգել Երևան՝ կնոջը՝ Անուշին: Մի քանի օր էր ընդամենը՝ տնից բացակայել էր, բայց կարոտել էր կնոջը, երեխաներին: Հավաքեց իրենց տան համարը, զանգեց.

-Բարև, Անու՛շ, Վահանն է, ինչպե՞ս եք, երեխաները ո՞նց են:

-Լավ ենք, քեզ ենք կարոտել, ե՞րբ ես գալու:

-Վաղը գնում եմ Բելգորոդ, տանը կլինեմ մյուս օրը: Արմանին կասես՝ գա օդանավակայան: Համբուրում եմ բոլորիդ:

Վահանը նայեց ժամացույցին: Բելգորոդ գնացող գնացքի ժամը մոտենում էր: Տեղից վեր կացավ: Կայարանից զանգեց Վազգենից տուն՝ իմանալու՝տանն է լինելու Վազգենը:

-Տա՞նն ես, Վազգեն:

-Գործից շուտ եկել, քեզ եմ սպասում:

Վահանը հեռախոսը դրեց, տաքսի նստեց ու գնաց Վազգենենց տուն: Վազգենը նրան էր սպասում: Իրար ողջունելուց հետո երկուսն էլ նստեցին բազմոցին, Վազգենը հարցրեց.

-Հը՛, ինչպե՞ս անցավ մոսկովյան ձեր ֆորում-հավաքը:

-Ամեն ինչ լավ էր: Հետաքրքիր բաներ կային,- կարճ կապեց Վահանը:

Վազգենը երկու բաժակ տաք թեյ բերեց: Լուռ խմեցին:

-Դե դու տանը մնա, ես գնամ շուկա, Էլմիրային մենակ չթողնեմ,- ասաց Վազգենը,- պառկիր հանգստացիր, շուտով երեխաներն էլ կգան:

Վազգենի գնալուց հետ Վահանը կողքի թեքվեց ու պառկեց բազմոցի վրա:

«Այս ի՞նչ է, ոնց որ հոգնած եմ: Սա ֆիզիկական հոգնածության հետ կապ չունի: Հոգնած եմ ընդհանրապես, հոգնած եմ շատ բաներից: Ո՞նց է լինելու սրա վերջը: Լուծումը չեմ տեսնում: Ավելի լավ է չմոռածեմ այդ մասին: Ես երդվել եմ այս գործը մինչև վերջ տանել: Ինքս ինձ եմ երդվել: Ուրեմն՝ արի ու մի ընկճվիր, Վահա՛ն Դարբինյան: Թեկուզ անչան քայլերով, այնուամենայնիվ, գնա առաջ: Աստված մեծ է: Եթե իրավաբանները ի զորու չլինեն, ապա Աստված չարը կպատժի»: Այսպես մտածելով էլ Վահանը բազմոցի վրա քնեց: Նրան արթնացրեց դռան զանգը: Վեր կացավ գնաց դուռը բացեց: Գարիկն էր եկել:

-Բարև, պարո՞ն Վահան,- խոնարհվելով ասաց Գարիկը:

-Բարև, երիտասա՛րդ, ինչպե՞ս են անցնում դասերդ:

-Ամեն ինչ նորմալ է,- ասաց Գարիկը,- սոված չէ՞ք:

-Չէ՛, պապայիդ հետ արդեն ճաշել եմ:

-Այդ դեպքում սուրճ դնեմ ձեզ համար:

-Աչ, դրանից չէի հրաժարվի:

Կես ժամ հետո Ալբինան էլ եկավ: Պայծառ ժպիտով բարևեց Վահանին ու գնաց իր ննջասենյակը: Ժամը երեքին եկան նաև Վազգենն ու Էլմիրան: Էլմիրան անցավ իր առօրյա գործերին: Վազգենը նստեց Վահանի կողքին.

-Մի բան ասեմ, չես հավատա, Վահա՛ն:

-Եթե մի ուրիշն ասի, գուցե չհավատամ, բայց քեզ, Վազգեն, կհավատամ:

-Հավատո՞ւմ ես Վահան, որ Մամեդովը մեր զանգին է սպասում:

Վահանը նայեց Վազգենի աչքերի մեջ.

-Ճի՞շտ ես ասում:

-Այ, տեսնում ես՝ չհավատացիր: Բայց իսկապես, նա հիմա այս բոպեին սպասում է մեր զանգին:

-Բայց դու դա որտեղի՞ց գիտես:

-Վագիֆը ինձ տվել է Մամեդովի հեռախոսի համարը: Նա հիմա տանը սպասում է մեր զանգին: Ինչպես ասում են՝ փորձը փորձանք չէ: Փորձեմ զանգել, տեսնեմ կստացվի՞:

Վազգենը երկար զանգում է: Հեռախոսի խզզոցի միջից լսվում է Վագիֆի ձայնը:

-Բարև, Վագիֆ, Վազգենն է՝ Բելգորոդից, ինչպե՞ս ես:

-Լավ եմ,- պատասխանում է Վագիֆը,- Վազգե՛ն, ես հիմա նստած եմ Մամեդովի մոտ և հեռախոսը փոխանցում եմ նրան, դու էլ փոխանցիր Վահանին: Թող Մանեդովն ու Վահանը խոսեն իրար հետ:

Վահանը վերցնում է հեռախոսափողը:

-Բարև, աղա՛ Մամեդով, ձեզ հետ խոսում է Վահան Դարբինյանը: Ես ծնունդով գանձասարցի եմ, ինձ չեք ճանաչի, բայց ծնողներիս կճանաչեք:

-Պարո՛ն Դարբինյան, ճիշտն ասած, ես ձեզ չեմ ճանաչում, ձեր մասին ինձ Վագիֆն է պատմել: Ասեք՝ ում զավակն եք, գուցե ձեր ծնողներին ճանաչեմ:

-Ես գանձասարցի Սարգսի տղան եմ, մամայիս անունը Հասմիկ է:

-Ծնողներիդ գիտեմ, իսկ ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել:

-Աղա՛ Մամեդով, դուք հիշո՞ւմ եք ոստիկանովթյան այն ժամանակվա ավագ լեյտենանտ Գեղամ Հակոբյանին:

-Շատ լավ եմ հիշում: Բոլորի հերն անիծում էր, ում ուժը պատում էր: Փող էր շորթում ցանկացածից: Զրպարտում, բամբասում էր ներքևից վերև: Մի անդուր ու անտանելի տիպ էր: Հիմա ասա՝ ինչ է պատահել:

-Ատրճանակի հետ կապված պատմությունն էլ էք հիշում:

-Հիշում եմ այսօրվա նման:

-Զբռ Թևոսի որդուն՝ Շավարշին էլ էք հիշում:

-Հիշում եմ, ինչ չեմ հիշում:

-Աղա՛ Մամեդով, երբ հայրը ատրճանակը ետ էր վերադարձնում, Գեղամ Հակոբյանն ի՞նչ է ասում Շավարշի մասին:

-Լավ հիշում եմ նրա ասած բառերը: Աչքերը կատաղած շուռումուռ տվեց և ասաց. «Սրիկա՛ լակոտ, մենք դեռ կհանդիպենք: Դու դեռ ձեռքս ես ընկնելու, և ես քո վերջը տալու եմ»:

-Դուք, աղա՛ Մամեդով, Շավարշի հասցեին ասված այդ խոսքերը կարո՞ղ էք հաստատել նաև հրապարակայնորեն:

-Իհարկե, կարող եմ: Այդ Գեղամ կոչեցյալը շատ դեպքերում իմ ճանապարհին էլ է կանգնել: Ես նրան սաստիկ ատել եմ: Ցավոք, ես հիմա չեմ կարող գալ Հայաստան և դատարանում վկայություն տալ:

-Դուք համաձա՞յն էք, որ Վագիֆը ձեր խոսքերը գրանցի տեսաժապավենի վրա և ուղարկի Վազգենին:

-Իհարկե, համաձայն եմ:

-Այդ դեպքում, խնդրում եմ հեռախոսը տվեք Վագիֆին: Ես նրան կասեմ, թե ինչ է հարկավոր անել:

Վահանը Վագիֆին բացատրում է ամեն ինչ և վերջում ասում.

-Շնորհակալ եմ, աղա՛ Վագիֆ, հա մի բան էլ: Այս ամենի համար ի՞նչ պիտի վճարենք:

-Երեք հարյուր դոլար: Ես այդ մասին Մամեդովի հետ խոսել եմ: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես դա արել եմ հանուն իմ Վազգեն ընկերոջ: Ինձ ոչինչ պետք չէ:

Հաջորդ օրը Վահանն ու Վազգենը մտնում են բանկ և հինգ հարյուր դոլար ուղարկում Վագիֆի հասցեով: Նույն օրվա երեկոյան Վահանը Մոսկվայից թռչում է Երևան, որտեղ նրան անհամբեր սպասում էր Արման Աբրահամյանը:

Արմանն իր ավտոմեքենայով ինքնաթիռի վայրէջքի պահին սպասում էր Վահանին: Վահանը եկավ, ու երկու աշխատանքային ընկերները ջերմորեն ողջագուրվեցին: Երբ նստեցին ավտոմեքենան, Արմանը հարցրեց.

-Վահա՛ն, ինչպե՞ս անցավ ձեր համաժողովը, նորությունները ասացի՞ն:

-Հետաքրքիր էր: Իրավաբանական առումներով նորությունները շատ ասվեցին: Հայաստանի նման հանրապետության համար խիստ անհրաժեշտ բաներ. օրինակ մարդու ազատությունների մասին, օրենքի գերակայության, ժողովրդավարության, ազատ ու արդար ընտրությունների և նման հարցերի մասին:

-Նարիման Մամեդովի հետ կապված հարցերը ի՞նչ ընթացք ունեցան,- հարցրեց Արմանը:

-Դու՛, Արմա՛ն, հավատո՞ւմ ես, որ ես Բելգորոդից ուղիղ հեռախոսակապով խոսեցի նրա հետ: Նրա վկայությունները արդեն տեսագրված են: Բարեկամ՝ Վազգենը, շուտով տեսագրությունը կուղարկի Երևան: Թե որքանով դա կօգնի մեր գործին, դժվար է ասել: Հիմա ինձ տար մեր տուն: Մի տեսակ շատ հոգնած եմ, գնամ մի քիչ հանգստանամ: Կհանդիպենք առավոտյան:

Կես ժամից հետո Վահանն արդեն տանն էր՝ իր հարազատների մոտ: Վահանն այդ գիշեր քնեց անհոգ ու երջանիկ սիրած կնոջ գրկում:

Առավոտյան, ինչպես միշտ, ժամը իններին Վահանն արդեն գրասենյակում էր:

-Բարի լույս, շե՛ֆ ջան, սուրճը հենց նոր դրեցի ու սպասեցի քո ժամանմանը,- ասաց Արմանը:

-Ճիշտ չես արել,- կատակեց Վահանը,- սուրճ դնելու հերթը այսօր իմն է եղել: Բայց և այնպես ապրես, Արմա՛ն, արդեն սկսում ես մոռածել իրավապաշտպանի նման: Ասում են չէ՞՝ առավոտը երեկոյից իմաստուն, լավ է, մոռածում ես շեֆիդ մասին, շնորհակալ եմ:

Արմանը սուրճը լցրեց և բաժակներից մեկը հանդիսավոր դրեց Վահանի առաջ:

-Վայելի՛ր ենթակայիդ նեղությունը և մոռածիր, շէ՛ֆ: Սրանից հետո սուրճը միշտ ես եմ դնելու,- ու մի քիչ լռելուց հետո ասաց,- անցնենք լրջության: Հիմա ի՞նչ ես ծրագրել, Վահա՛ն, ի՞նչ ենք անելու:

Վահանն էլ իր հերթին լրջացավ, ասաց.

-Երկուսով՝ ես ու դու, գնալու ենք Տրանսպորտային ոստիկանություն: Ես մտնելու եմ մայոր Հակոբյանի, իսկ դու ավագ լեյտենանտի մոտ: Նրանց հարցեր ենք տալու պարզելու համար, թե նրանք ինչ կասեն Շավարշի ինքնասպանության մասին, միայն շատ զգուշորեն:

-Իսկ եթե նրանք ընդհանրապես հրաժարվեն մեր հարցերին պատասխանելուց,- հարցրեց Արմանը:

-Եթե հրաժարվեն, նրանց կասենք, որ համապատասխան ծանուցագրով, ինչպես օրենքն է պահանջում, նրանց կանչելու ենք մեր փաստաբանական գրասենյակ:

-Իսկ եթե գրասենյակ գալո՞ւց էլ հրաժարվեն, այդ դեպքում ի՞նչ ենք անելու,- նախապես ամեն ինչ ուզում էր իմանալ Արմանը:

-Դրանից հետո, Արմա՛ն, մեծ աշխարհ է, մի բան կմոռածենք: Բայց նախօրոք ասեմ՝ ավելի վատ իրենց համար:

Նրանք դուրս եկան գրասենյակից և առանձին ավտոմեքենաներով գնացին ոստիկանություն: Վահանն ավելի շուտ տեղ հասավ: Մտավ շենքից ներս, հերթապահ ոստիկանին ցույց տվեց դատապաշտպանի իր գրքույկը և ասաց, որ ուզում է բարձրանալ մայոր Հակոբյանի մոտ:

Հերթապահը զանգեց.

-Պարո՞ն մայոր, ձեզ հետ ցանկանում է հանդիպել դատապաշտպան Դարբինյանը: Ի՞նչ ասեմ:

-Պարոն Դարբինյանն ո՞վ է, այդպիսի մարդու չգիտեմ: Երևի ինքն էլ չգիտի, թե ես ով եմ: Հալա թող բարձրանա, տեսնենք՝ դա ինչ թռչուն է:

Մայոր Հակոբյանի ձայնի մեջ սպառնալիք կար:

Հերթապահը գլխով արեց, այսինքն կարող ես գնալ մայորի մոտ:

-Շնորհակալ եմ,- ասաց Վահանը և բարձրացավ երկրորդ հարկ:

Վահանը ծեծեց մայորի աշխատասենյակի դուռը և ներս մտավ:

-Բարև ձեզ, պարո՞ն Հակոբյան:

-Բարև,- բերանի մի անկյունով դիմացինի բարևին պատասխանեց Հակոբյանը և անմիջապես ասաց,- կարո՞ղ եմ իմանալ՝ ով եք դուք:

-Ես, պարո՞ն Հակոբյան, իրավաբան եմ տիկին Տատյանայի դատապաշտպանը:

-Տատյան ո՞վ է, չեմ հասկանում,- բառերը ծամեց մայորը և շուռ եկավ պտտվող աթոռի վրա:

-Տիկին Տատյանան,- հանգիստ ասաց Վահանը,- ինքնասպանության գործած Շավարշ Ղազարյանի կինն է: Օգտագործելով իր քաղաքացիական իրավունքը՝ նա ուզում է իմանալ իր ամուսնու ինքնասպանության մանրամասները: Այլ կերպ նա ուզում է պարզել՝ իր ամուսինը ինքնասպանություն է գործել թե՞ ...

-Այդ գործը վաղուց փակված է, պարո՞ն դատապաշտպան, և պարզված, որ դա եղել է ինքնասպանություն: Դրա համար կան համապատասխան վկայություններ, փաստաթղթեր, ցուցմունքներ: Այդ գործն վաղուց արխիվ է նետվել, դուք ի՞նչ եք ուզում պարզել:

-Այնուամենայնիվ այդ գործի կապակցությամբ ձեզ կարելի՞ է մի երկու հարց տալ,- Վահանը շարունակում է հանգիստ մնալ:

-Ի՞նչ հարց պիտի տաք ինձ, պարո՞ն ադվակատ,- ձայնն աստիճանաբար բարձրացնում է մայորը,- հարցերը վաղուց տրված են ու պատասխանված, կարո՞ղ է՝ դուք չէք հասկանում որտեղ էք եկել և ում հետ գործ ունեք: Հալա մի կենտրոնացի՛ր, խելքիդ մի քիչ զո՛ռ տուր, տես, թե ով է նստած քո դիմաց: Ախր դու էդ ո՞ւմ ես ուզում հարցեր տալ, նեղը գցել ինձ, դու դեռ երեխա ես ինձ մոտ, հասկացա՞ր: Էդ ռուս լրբի՞ն ես պաշտպանում, այն էլ ո՞ւմ դեմ, ոստիկանության հեղինակավոր մայոր Գեղամ Հակոբյանի դե՞մ: Հենց հիմա վե՞ր կաց ու ռադդ քաշի՛ր այստեղից, այնպես որ այլևս քեզ չտեսնեմ այս կողմերում: Հլա մի սրա համարձակությանը նայիր,- գոռաց, հոխորտաց մայոր Հակոբյանը և ձեռքը մեկնեց դեպի դուռը,- դու՛րս:

Վահան Դարբինյանը մայոր Հակոբյանի այս տարբերակն էլ նախապես որոշել էր: Նա պատրաստ էր Հակոբյանի կողմից նման հարձակումների և դիմացինի հոխորտանքներից ո՛չ զարմացավ, ո՛չ էլ զայրացավ: Դարբինյանը դանդաղ տեղից վեր կացավ, անթարթ աչքերով նայեց դիմացինի բիրտ ճակատին և հատ-հատ ասաց.

-Նախ ես երեխա չեմ, պարո՞ն մայոր, այլ իրավաբան-դատապաշտպան, երկրորդն էլ ես պատահական լրբի չեմ պաշտպանում, այլ մի երիտասարդ օրինական կնոջ, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Օրենքի մարդը գոնե պիտի օրենքը հարգել իմանա, պարո՞ն մայոր:

-Ի՞նչ օրենք,- օձի նման ֆշշաց մայորը,- այստեղ օրենքը ես եմ:

-Ո՛չ, պարո՞ն մայոր, մենք օրենքի ծառաներ ենք, ոչ թե օրենքը խախտողներ,- հանգիստ ու վստահ ասաց Դարբինյանը,- եթե չէք ուզում օրենքի սահմաններում պատասխանել իմ հարցերին, ապա օրենքի ուժով կպատասխանեք դատապաշտպան Վահան Դարբինյանի գրասենյակում: Ես ծանուցագիր կուղարկեմ ձեզ, թե որ օրը և որ

ժամին պետք է ներկայանաք իմ դրասենյակ: Պատիվ ունեմ, պարո՛ն Հակոբյան, ցտեսություն:

Վահանը դուրս եկավ ոստիկանությունից: Նայեց չորս կողմը, Արմանը դեռ չէր երևում: Գնաց դեպի դիմացի այգին, նստեց մի նստարանի վրա, սպասեց Արմանին: Շուտով Արմանն էլ եկավ, նստեց Վահանի կողքին:

-Ի՞նչ նորություններ ես բերել,- հարցրեց Վահանը:

-Արտակարգ ոչ մի բան, ինչ որ եղել է, ձայնագրել եմ: Կգնանք դրասենյակում կլսենք:

-Քեզ մոտ ի՞նչ կա,- հայացքիցդ կռահում եմ, որ մի բան այն չէ:

-Հուսալի նորություններ առայժմ չկան,- մի տեսակ կոտրված ձայնով ասաց Վահանը,- նստի՛ր ավտոմեքենադ, գնում ենք դրասենյակ, այնտեղ էլ կխոսենք:

Մայոր Հակոբյանը նույն ժամանակ կատաղած քայլում էր սենյակի մի անկյունից մյուսը: Ցնայած հոխորտանքներին՝ նա, այնուամենայնիվ, խիստ անհանգիստ էր: Դատապաշտպանի վերջին խոսքերը՝ «Կգնաք դրասենյակ և այնտեղ պատասխան կտաք», ազդել էին նրա վրա: Նա կամաց-կամաց հասկանում էր, որ դրանք հենց այնպես օդում ասված խոսքեր չեն: «Երևում է՝ օրենքի անունից խոսող այդ քնձռոտ դատապաշտպանը ամուր է կանգնած իր դիրքերի վրա... Հանկարծ մի գլխացավանք չստեղծի՞ ինձ վրա... չէ՛, թույլ չեմ տա: Ես քեզ կճզմեմ, ինչպես շատերին եմ ճզմել, դու էլ կարժանանաս մյուսների ճակատագրին...,- ինքն իրեն մտորում էր նա,- մենք դեռ կտեսնենք՝ ով ում...»:

Եվ Հակոբյանը զանգեց ավագ լեյտենանտ Համլետ Պետրոսյանին:

-Բարև, Համլե՛տ, ի՞նչ նորություններ կան:

-Բարև, պարո՛ն Հակոբյան, ես էի նախապատրաստվում ձեզ զանգել, բայց ահա դուք ինձնից առաջ անցաք:

-Ադիթ կա՞ր զանգելու:

-Այո՛, կար, պարո՛ն մայոր: Տասը րոպե առաջ ինձ մոտ էր դատապաշտպան Դարբինյանի օգնական ոմն Արման Աբրահամյանը: Հարցնում էր Շավարշ Ղազարյանի ինքնասպանության մասին:

Մայոր Հակոբյանի ձայնը միանգամից փոխվեց, դարձավ խիստ ու խռպոտ.

-Հենց հիմա շտապ արի ինձ մոտ: Տեսնենք՝ այդ նապաստակներն ինչ են ուզում առյուծներից:

Ավագ լեյտենանտ Պետրոսյանն իսկույն ներկայացավ մայորին: Հակոբյանը խոժոռ նայեց ավագ լեյտենանտին.

-Դա ի՞նչ Աբրահամյան է... Դա որտեղի՞ց ծլեց:

-Ասաց, որ ես դատապաշտպան Դարբինյանի օգնականն եմ: Հարցրեց Շավարշ Ղազարյանի մասին:

-Եվ դու ի՞նչ ասացիր, հարցերին պատասխանեցի՞ր,- Հակոբյանը աչքերը ոլորեց ավագ լեյտենանտի վրա:

-Ի՞նչ պիտի ասեի: Ասացի, որ Շավարշ Ղազարյանն ինքն է իրեն սպանել, և դա բոլորին է հայտնի:

-Հետո՞, ասածներդ ձայնագրե՞լ է:

-Այո՛, բայց դա ի՞նչ նշանակություն ունի, ես հո ավել-մավել բաներ չե՞մ ասել:

-Տո՛ ախմախ, ինչո՞ւ ես համաձայնել, որ քեզ ձայնագրի: Նրան պիտի դուրս շպրտեիր քո սենյակից: Սրանից հետո, եթե նորից գան, այդպես էլ անում ես՝ ոչ մի պատասխան նրանց տված հարցերին: Նույնն էլ հաղորդի՛ր լեյտենանտ Հախումյանին: Հասկացա՞ր:

Ավագ լեյտենանտ Պետրոսյանը խոնարհ գլխով է անում:

-Հասկացա, պարո՛ն Հակոբյան:

-Դե լավ, գնա՛ սենյակդ և ականջիդ օ՛ղ արա իմ ասածները: Զանգի՛ր ինձ: Ես պետք է ամեն ինչից տեղյակ լինեմ:

Վահանը և Արմանը մնան դրասենյակ: Դեռ տեղները չնստած՝ Արմանը հարցրեց.

-Հիմա ի՞նչ ենք անելու:

-Տխրելուց ժպտա, որ քեզ սիրեն,- կատակեց Վահանը և անցավ լրջության,- մեր հաջորդ քայլը լինելու է Հակոբյանին և նրա մանկլավիկներին դրասենյակ կանչելը: Ծանուցագրե՛ր պատրաստիր նրանց այստեղ հրավիրելու համար, իսկ օրն ու ժամը հետո կորոշենք:

Արմանն անվստահ հարցրեց.

-Կարծո՞ւմ ես կգան, պարո՞ն Դարբինյան:

-Կգան, վազելով կգան, օրենքից ո՞ւր պիտի փախչեն, Արման՛,- ասաց Վահանը:

Արմանը զարմացավ Դարբինյանի ինքնավստահությունից: Նա հավատաց նրան, հավատաց նրա եռանդին ու հաստատակամությանը:

Հաջորդ երկուշաբթի ոստիկանության մայոր Հակոբյանը, ավագ լեյտենանտ Պետրոսյանը և լեյտենանտ Հախումյանը առանձին-առանձին ծանուցագիր ստացան փաստաբանական դրասենյակ ներկայանալու համար:

Ոստիկանության մայոր Գեղամ Հակոբյանը իրոք կատաղել էր: Իրեն՝ մայոր Հակոբյանին, ինչ-որ մի խղճուկ դրասենյակից ծանուցագիր են ուղարկել: Եվ ինքը՝ ոստիկանության երկարամյա աշխատող մայոր Հակոբյանը, որն ուրիշներին է տարիներով պատժել ու հարցաքննել, շատերի ճակատագիրն է որոշել, այժմ ինքն իր ոտով պիտի՞ ներկայանա ինչ-որ մի դրասենյակ և ապացուցի իր անմեղությունը... Սա արդեն չափից դուրս է: Նա այն մարդն է, որ միշտ գործել է՝ օրենքներն արհամարհելով, գտնելով, որ օրենքն իր նմանների համար չէ: Իր՝ մայոր Հակոբյանի դեմ օրենքներն անզոր են: Իսկ հիմա մի խղճուկ դրասենյակի պիտի ներկայանա հարցաքննությա՞ն: Ո՛չ, հազար անգամ ոչ: Նա թույլ չի տա, որ իրեն հրամայեն: Հրամայողը ինքը պիտի լինի: Բոլորը պետք է իրեն ենթարկվեն: Եվ ո՞վ է իրեն ծանուցագիր ուղարկել, քոսոտնե՛ր, դուք դեռ մայոր

Հակոբյանի զորությունը կզգաք, ստացած ծանուցագիրը պատռեց ու նետեց աղբարկղը: Մայորի հրահանգով նույնն արեցին նաև նրա ենթակաները:

Անցնում է մի շաբաթ: Վահան Դարբինյանն երկրորդ ծանուցագիրն է ուղարկում: Դարձյալ ոչ մի պատասխան: Դարբինյանին ուրիշ ելք չի մնում: Գնում է Ներքին գործերի նախարարություն՝ ուղիղ նախարարի մոտ: Նա նախարարին իրազեկ է դարձնում ստեղծված իրավիճակի մասին, մայոր Հակոբյանի արհամարհական վերաբերմունքի մասին: Նախարարը, ճիշտ գնահատելով իրավիճակը, գործի է դնում նախարարական իր զորությունը: Մեկ շաբաթ չանցած՝ Դարբինյանը Ներքին գործերի նախարարության երկու ավագ լեյտենանտի հետ մտնում է մայոր Հակոբյանի աշխատասենյակ: Մայոր Հակոբյանը, տեսնելով Ներքին գործերի նախարարության երկու զինված լեյտենանտներին, անակնկալի է գալիս: Սառը քրտինքը պատում է նրան: Սկվում, ոչինչ չի կարողանում ասել:

-Մայո՛ր Հակոբյան,- ասում է լեյտենանտներից մեկը,- մենք Ներքին գործերի նախարարության կողմից պաշտոնական գրություն ունենք մեզ հետ, որով ձեզ, պարոն Հակոբյան, հանձնարարվում է ներկայանալ փաստաբանական գրասենյակ և ցուցմունք տալ Շավարշ Ղազարյանի մասին, ահա նախարարի ստորագրությամբ գրությունը:

-Մեր ավտոմեքենան դրսում ձեզ է սպասում,- ասում է Վահան Դարբինյանը:

Մայոր Հակոբյանը ինչ-որ դատապաշտպանի կողմից նման համարձակ քայլի չէր սպասում: Նրա մտքովն անգամ չէր անցնում, որ նա կգնա Ներքին գործերի նախարարություն, որի դեմ արդեն ինքն անզոր էր որևէ բան անել: Բավական դժվարին վիճակի մեջ հայտնված Հակոբյանին մնում էր ենթարկվել իրավիճակին:

Քիչ է ասել, թե Արման Աբրահամյանը զարմացավ՝ իրենց գրասենյակում տեսնելով մայոր Հակոբյանին: Զարմանքի հետ միա-

սին նաև ներքին հրճվանք էր ապրում Արմանը այն բանից, որ տես-նում էր, թե իր շուրջը աՀ ու սարսափ տարածած մայոր Հակոբյանը ինչպես է հակառակ իր կամքի, կամավոր, առանց որևէ դիմադ-րության եկել իրենց գրասենյակ: Ցնայած Վահանի հավաստիացում-ներին՝ նա չէր հավատում, որ Հակոբյանն իր հոժար կամքով կգա ի-րենց գրասենյակը: «Ուրեմն աշխարՀում զորեղից զորեղն էլ կա,- մտածում էր Արմանը,- որի դիմաց անզոր են այնպիսի ամբարտա-վան, անգութ ու դաժան մարդիկ, ինչպիսին Հակոբյանն էր: Ուրեմն աշխարՀում բարությունը չի մեռել, ուրեմն ամեն ինչ դեռ կործան-ված չէ: Ուրեմն հավատանք նաև այն բանին, որ ճշմարտությունը վերջապես ջրի երես է ելնելու»:

-ՇնորՀակալություն, պարո՛ն ոստիկաններ, մեզ Հետ Համա-գործակցելու Համար, այժմ կարող եք գնալ,- ասաց Դարբինյանը:

Ոստիկանները գնացին: Վահանը շուռ եկավ դեպի Հակոբյա-նը:

-Նստեցե՛ք, պարո՛ն մայոր:

Մայորը շուրջը նայեց, կարծես Հարմար տեղ էր փնտրում նստելու Համար: Արմանը աթոռը մոտեցրեց: Մայորը տնքալով նստեց:

-Սա Հարցաքննություն չէ, պարո՛ն մայոր,- սկսեց Վահանը,- այլ սովորական զրույց: Մենք զրուցելու ենք Շավարշ Ղազարյանի ինքնասպանության Հետ կապված Հարցերի շուրջ: Ցնայած դրան՝ պարո՛ն Հակոբյան, մեր զրույցը պաշտոնական բնույթ ունի, և այն պետք է ձայնագրվի, Հո դեմ չե՞ք:

Մայորը անտարբեր նայում էր մի կետի և ոչինչ չպատասխա-նեց, այսինքն ձեր գործն է, ինչ ուզում եք արեք: Վահանը չՀրկիզվող պահարանից Հանեց ձայնագրիչը և մի քանի թղթեր: Ձայնագրիչը դրեց սեղանին, մայորին ավելի մոտիկ, իսկ թղթերը ինքը վերցրեց, դրեց իր առջև:

-Դուք,- խոսեց Վահանը,- ավարտել եք համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, ճի՞շտ է:

-Այդպես է,- ասաց Հակոբյանը՝ առաստաղին նայելով:

-Համալսարանն ավարտելուց հետո որտե՞ղ և որպես ի՞նչ եք աշխատել:

-Անմիջապես գործուղվել եմ Գանձասարի ոստիկանական բաժանմունք: Աշխատել եմ ընդհանուր բաժնում լեյտենանտի կոչումով: Երկու տարուց հետո ստացել եմ ավագ լեյտենանտի կոչում և աշխատել որպես բաժանմունքի պետի տեղակալ: Այնուհետև տեղափոխվել եմ Կապլանի տրանսպորտային ոստիկանությունն և այստեղ աշխատել շուրջ երեք տարի:

-Պարո՞ն Հակոբյան, Գանձասարում աշխատելու ժամանակ դուք ծանո՞թ եք եղել Շավարշ Ղազարյանի հետ:

-Ինչքան հիշում եմ՝ ոչ: Անցել է արդեն քսան տարի, շատ բան է մոռացվել:

-Կապլան տեղափոխվել եք որպես ավագ լեյտենա՞նտ, թե՞ ձեր կոչումը բարձրացրել են:

-Ո՛չ, իմ կոչումը բարձրացրել են Գանձասարում՝ որպես երկու տարվա աշխատանքային վաստակի արդյունք:

-Այսինքն դուք ավագ լեյտենանտի կոչումով գնացել եք Կապլանի ոստիկանություն և նույն կոչումով էլ աշխատել:

-Այո՛, այդպես է:

-Ե՞րբ եք տեղափոխվել Երևանի Տրանսպորտային ոստիկանություն:

-Կապլանում երեք տարի աշխատելուց հետո:

-Ձեզ զանգե՞լ են Գանձասարի մշակույթի տան կիթառի գողության մասին:

-Ո՛չ, զանգել են բաժնի հերթապահին: Հերթապահն էլ տեղեկացրել է ավագ հերթապահին: Վերջինս էլ հայտնել է Տրանսպորտային ոստիկանության պետին:

-Ձեզ չե՞ն զանգել ու ասել, որ այդ կիթառը հենց Գանձասարում էլ գտնվել է:

-Չեմ հիշում, գուցե զանգել են: Իմ աշխատանքային օրերը լի են եղել զանազան հեռախոսազանգերով, դրանցից ո՞րը հիշեմ:

-Այսինքն կոնկրետ չեք հիշում:

-Այո՛, չեմ հիշում:

-Պարո՛ն Հակոբյան, ինձ հայտնի է, որ դուք սովորաբար աշխատանքից հետո տուն եք գնացել ժամը վեցին: Այդ օրը, այսինքն Շավարշ Ղազարյանի ինքնասպանության օրը չեք գնացել տուն, ինդրում եմ ասեք՝ ինչու:

-Ճիշտն ասած,- բառերը ծամելով ասում է Հակոբյանը,- այդ օրն առավոտյան կնոջս հետ սաստիկ վիճել էի, որոշեցի չգնալ տուն, գիշերել ոստիկանությունում: Այսպես ասած տնից խռով էի,- և Հակոբյանը անհաջող ժպիտ սարքեց մռայլ դեմքի վրա:

-Այդ օրը դուք մնե՞լ եք ներքնահարկ, որտեղ պահվում էին ժամանակավոր ձերբակալվածները:

-Միգուցե մի քանի րոպեով մնել եմ, և հետո իմ պաշտոնական պարտականությունների մեջ է մտնում իմանալ ձերբակալվածների վիճակը:

-Պարո՛ն Հակոբյան, մի բան էլ, դո՞ւք ես զանգել դատաբժշկական հանձնաժողովի նախագահին և հայտնել կատարված դեպքի մասի:

-Այո՛, ես եմ զանգել, դրա մեջ ի՞նչ կա: Տեղի էր ունեցել արտակարգ դեպք, մարդ էր ինքնասպան եղել, չզանգեի՞:

-Դրա համար ոչ ոք ձեզ մեղադրել չի կարող: Ես ուղղակի հարցնում եմ իմանալու համար,- սովորական զրույց անողի տրամադրությամբ ասում է Դարբինյանը:-Օրինակ ինձ հետաքրքիր է իմանալ՝ ժամը քանիսին զանգեցիք դատաբժշկական հանձնաժողովի նախագահին, կհիշե՞ք:

-Երևի առավոտյան կամ մի քիչ ավելի ուշ: Չեմ հիշում:

-Դուք նո՞ւյնպես ստորագրել եք դատական բժշկի արձանագրած եզրակացությունը:

-Այո՛, ստորագրել եմ: Ի պաշտոնե ես էլ պիտի ստորագրեի:

-Վե՛րջ, պարո՛ն մայոր, այլևս հարցեր չկան: Այժմ ծանոթացեք և ստորագրեք ձեր ասածների տակ:

Մայոր Հակոբյանը թուղթն առանց կարդալու կռացավ և անձայն ստորագրեց: Վահան Դարբինյանը տեղից վեր կացավ և քաղաքավարի դիմեց մայորին:

-Այժմ կարող եք վերադառնալ ձեր ամենօրյա աշխատանքին: Կներեք ձեզ նեղությունն տալու համար:

Մայոր Հակոբյանը ծանր-ծանր վեր կացավ տեղից և դուրս եկավ դրասենյակից: Միայն Արմանն էր քմծիծաղը դեմքին նայում նրա ետևից:

Նույն օրվա երեկոյան Վահանը զանգեց Վազգենին:

-Բարև, բարև, Վահա՛ն ջան, մի՛ անհանգստանա, ոչինչ չեմ մոռացել: Հենց այսօր վստահելի մի մարդու միջոցով ես տեսաժապավենը ուղարկում եմ քեզ: Այդ մարդու անունը Գոռ է, Գոռ Դավթյան: Նա գիտի դրասենյակի հեռախոսի համարը: Տեղ հասնելուն պես անմիջապես նրա հետ հանդիպեք օդանավակայանում: Ցանկանում եմ քեզ հաջողություն:

-Շնորհակալ եմ, Վազգե՛ն, տնեցիներին բարևիր իմ, Անուշի և երեխաների կողմից:

Առանց ժամանակ կորցնելու Վահանը զանգեց Արմանին:

-Հարկավոր է ժամը մեկի սահմաններում գնալ օդանավակայան: Վազգենը տեսաժապավենը ուղարկել է:

-Եղավ, կես ժամից հետո դուրս կգամ:

Գնացին օդանավակայան: Տասը-տասնհինգ րոպե չանցած՝ ինքնաթիռը վայրէջք կատարեց: Վահանն ու Արմանը գրազ եկան՝ ով տասնյակ ուղևորների միջից կջոկի, թե որն է Գոռ Դավթյանը, նա էլ գրազը շահում է: Վահանը ճիշտ դուրս եկավ:

-Ինչպե՞ս իմացար,- զարմացած հարցրեց Արմանը,- պատահակա՞ն էր թե՞...

-Ինքնաթիռի աստիճաններից իջնելիս նկատեցի, թե մեկն ինչպես է այս ու այն կողմնայում, դրանով էլ որոշեցի,- ժպտաց Վահանը:

Վերջնելով տեսաժապավենը՝ նրանք վերադարձան դրասենյակ և ուշիուշով նայեցին, ուսումնասիրեցին այն: Ամեն ինչ իրենց ուզածով էր: Համոզվելով, որ ամեն ինչ ճիշտ ու տեղին է, Վահանը հաջորդ օրը տեսաժապավենը ներկայացրեց դատական խորհրդին: Նույն օրն էլ խորհրդի նախագահի գլխավորությամբ անդամները դիտում են ժապավենը և Վահանին հավաստիացնում, որ այն կդրվի դատական խորհրդի նիստի քննարկմանը և արդյունքների մասին ժամանակին հայտնի կդարձվի դատապաշտպան Վահան Դարբինյանին: Անցնում է հինգ օր: Հինգերորդ օրը զանգում են դրասենյակ:

-Պարոն Դարբինյա՞ն է, բարև՛ ձեզ: Ձեզ անհանգստացնում է դատարանի քարտուղարուհին՝ Լաուրա Գասպարյանը: Երկուշաբթի օրը՝ ժամը տասին նշանակված է ձեր կողմից ներկայացրած տեսաժապավենի քննարկումը: Դուք պետք է ներկա լինեք լրացուցիչ բացատրությունների կարիքի նպատակով: Մնացածը դատարանը կորոշի, թե հետո ինչ անել:

-Շնորհակալություն, տիկի՛ն Գասպարյան: Անպայման կգամ:

Երկուշաբթի օրը Վահանը մենակ չգնաց դատական նիստի: Արմանին էլ հետը տարավ: Խորհրդի նիստին դատապաշտպան Վահան Դարբինյանի խնդրանքով դրված էր Շավարշ Ղազարյանի ինքնասպանության վարկածի հարցը: Վահանը, նիստ ներկայացնելով իր նկատառումները, մանավորապես ասաց, որ Շավարշի կինը՝ Ռուսաստանի քաղաքացուհի Տատյանա Տարասովան գտնում է, որ իր ամուսինը ոչ թե ինքնասպան է եղել, այլ նրան սպանել են: Ինքը՝ դատապաշտպան Վահանը Դարբինյանը, նախնական տվյալների

հիման վրա նույնպես գտնում է, որ դա, իրոք, եղել է սպանություն: Այդ կապակցությամբ նա հատկապես մեղադրում է օրվա հերթապահներին, որոնք պետք է տեսած լինեն՝ ինչ է կատարվել, բայց զարմանալիորեն լռում էին:

Դատապաշտպան Վահան Դարբինյանի փաստարկների հիման վրա դատական խորհրդի նիստը կայացրեց հետևյալ որոշումը.

Ա. Առաջադրված հարցը լսել Մյասնիկյանի շրջանի դատարանում ուղիղ տասն օր հետո:

Բ. Դատական պրոցեսի վարույթը հանձնարարել դատավոր Գալուստ Ոսկանյանին:

Երկու օրից հետո դատավոր Գալուստ Ոսկանյանը զանգում է Ճանապարհային ոստիկանություն՝ Գեղամ Հակոբյանին:

-Բարև ձեզ, պարո՞ն Հակոբյան, ձեզ անհանգստացնում է Մյասնիկյանի շրջանի դատավոր Գալուստ Ոսկանյանը:

-Բարև ձեզ, պարո՞ն դատավոր, կարելի՞ է հարցնել՝ ինչ հարցով:

-Դուք կարո՞ղ եք վաղը՝ ժամը տասին ներկայանալ դատարան: Ձեզ հետ կապված մի երկու հարց կա պարզելու:

-Կարո՞ղ եմ նախապես իմանալ՝ ինչ հարցեր են դրանք, պարո՞ն դատավոր:

-Կներկայանք դատարան, այստեղ՝ ինձ մոտ, և ես ամեն ինչ ձեզ կբացատրեմ: Բայց նախապես ասեմ, որ դա առաջին հերթին անհրաժեշտ է հենց ձեզ համար:

Հաջորդ օրը՝ ժամը տասին, մայոր Հակոբյանը ներկայացավ դատավոր Ոսկանյանին: Դատավորը Հակոբյանին իրազեկում է, որ դրված է Շավարշ Ղազարյանի ինքնասպանության վերաքննության հարցը, քանի որ կասկածներ կան, որ դա եղել է սպանություն:

-Շավարշ Ղազարյանի կինը և դատապաշտպան Վահան Դարբինյանը հայց են ներկայացրել դատարան, որ նախաքննությունը կատարվել է չափազանց հապճեպ, առանց առկա փաստերը հաշ-

վի առնելու: Վահան Դարբինյանը դատարան է ներկայացրել մի տեսաժապավեն, որտեղ կա վկայություն այն մասին, որ դուք՝ պարոն Հակոբյան, սպառնացել եք սպանել Շավարշ Ղազարյանին: Այս ամենը խիստ կասկածի տակ է դնում ինքնասպանության վարկածը: Դատարանը մեկ շաբաթ հետո լսելու է այդ հարցը: Եթե ոստիկանությունը և անձամբ դուք ինքնասպանությունը հաստատող փաստեր ունեք, կարող եք ներկայացնել, եթե չունեք, ապա գործն ավելի քան բարդանում է: Ինձ թվում է՝ դուք հասկանում եք գործի դժվարությունը և ձեր պատասխանատվությունը այս ճակատագրական հարցում:

Մայոր Հակոբյանը վախեցած նայում է դատավորին.

-Պարո՞ն դատավոր,- ասում է նա,- գործը կարճելու հնարավորություն կա՞:

-Կա, իհարկե կա,- թեթևակի ժպտում է դատավորը:

-Իսկ դրա համար ի՞նչ է հարկավոր անել:

Դատավորը ծակող հայացքով նայում է Հակոբյանին:

-Ինձ թվում է՝ դուք այդքան էլ միամիտ մարդ չեք, որ այդ հասարակ բանը չհասկանաք: Դուք ոչ առաջինն եք, ոչ էլ վերջինը, պարո՞ն Հակոբյան, մենք պիտի լավ հասկանանք իրար,- ասում է դատավորը, վերցնում գրիչը և դիմացը դրված թղթի ամբողջ երկարությամբ խոշոր շրիֆտով գրում սկզբում 5, այնուհետև երեք զրո:

Մինչև Հակոբյանը գլխի կընկներ, թե դա ինչ թիվ է, դատավորը աճպարարի ճարպկությամբ թուղթը պատառ-պատառ է անում և նետում աղբարկղը: Միանգամից պայծառանում է մայոր Հակոբյանի մռայլ ու շփոթ դեմքը: Նա արդեն հասկացել էր, թե ինչ նկատի ունի դատավոր Գալուստ Ոսկանյանը: Դատավորն ինքն էլ տեսնում էր, որ դիմացինը հասկացել է իրեն և լուռ սպասում էր դիմացինի արձագանքին:

Հակոբյանը, իհարկե, պատրաստ էր դրան: Դրանից ավելի գումար էլ կտար, միայն կասկածանքն իրենից հեռացներ: Բայց այդքանը հասկանալով հանդերձ փորձեց անմեղությունն խաղալ:

-Դե ես, պարո՞ն դատավոր, ի՞նչ կապ ունեմ այդ ամենի հետ:

Դատավոր Ոսկանյանը միանգամից կանխեց դիմացինի՝ հեռուն գնացող մտադրությունները:

-Քո գլխին, Հակոբյա՛ն, սև ամպեր են կուտակվել և ժամանակի հետ այն ավելի է խտանում: Որոտ ու կայծակ կթափվի գլխիդ, Հակոբյա՛ն: Մի՛ ստիպիր, որ ես ոտս ծուռ դնեմ:

Հակոբյանը հասկացավ, որ ինքը ուրիշ ելք չունի: Միտքը փոխեց ու այս անգամ էլ փորձեց սակարկել պահանջվող գումարի չափի շուրջ:

-Պարո՞ն դատավոր, համարձակվում եմ ասել, որ ես այսքան գումար իմ ձեռքի տակ չունեմ, դժվարանում եմ խոստանալ, որ ես այդքան գումար կարող եմ տալ:

-Դու էլ գիտես՝ ինչ ես ասում և ինչու ես ասում: Ես քեզ, Հակոբյա՛ն, առաջարկել եմ շահավետ գործարք: Միայն այդքան և ոչ մի ցենտ պակաս, հակառակ դեպքում պատրաստ եղիր հայտնվել ճաղերի ետևում:

-Դե ինչ արած,- կմկմաց Հակոբյանը,- մի բան կմտածեմ:

-Ուրբան շուտ, այնքան լավ: Երեք օր ձեզ ժամանակ: Իսկ հիմա կարող ես գնալ:

Ոստիկանության մայոր Գեղամ Հակոբյանը դուրս եկավ դատավոր Գալուստ Ոսկանյանի մոտից: Ինքը՝ դատավորն էր գտել իր փրկության ամենակարճ ճանապարհը: Նա հասկանում էր, թե ինչպիսի անելանելի վիճակում կհայտնվեր, եթե իր դիմաց կարգն ու օրենքը հարգող ուրիշ մեկը հայտնվեր: Ինչքան լավ է, որ Ոսկանյանի նման մարդիկ աշխարհում գոյություն ունեն: Թե չէ ոտով գլխով կորած էր: Բայց մի ներքին ցավ տանջում էր նրան: Ախր մինչև հիմա ինքն էր սրանից-նրանից կաշառք վերցրել, հիմա ինքը պիտի մի ու-

ոիշին կաշառք տա: Եվ առաջին անգամ մայոր Հակոբյանը զգաց իր խեղճությունը մի ուրիշ ավելի հզորի նկատմամբ:

Երկու օր հետո մայոր Հակոբյանը ներկայացավ դատավոր Ոսկանյանին: Ոսկանյանը չնայեց էլ նրա կողմը: Գիտեր՝ ինչի համար է եկել:

-Բերել եմ, պարո՞ն դատավոր,- բերանի մի կողմով ասաց Հակոբյանը,- չորսը, այդքանը հազիվ կարողացա հայթայթել սրանից-նրանից, ահա:

Հակոբյանը փակ ծրարը դրեց դատավորի առջև: Ոսկանյանը չբացեց, չհաշվեց, չստուգեց, վերցրեց ծրարը և շպրտեց բաց գզրոցի մեջ: Երևում էր, որ նա բարկացած էր:

-Դու ի՞նչ է, ինձ հետ ղումա՞ր ես խաղում,- և դատավորի աչքերում կայծկլտացին բարկության ցոլքեր,- ցույց ես տալիս, որ փող չունես, Հակոբյա՞ն: Ես քո փողերի տեղը լավ գիտեմ: Դու մի ամբողջ մնդուկ լիքը փող ունես, այնպես որ վաղը մնացածն էլ լինի իմ սեղանի վրա:

-Հույս ունենա՞մ, որ «Գործը» կփակվի, պարո՞ն դատավոր,- հարցրեց Հակոբյանը՝ տեղից դանդաղ վեր կենալով:

-Ոչինչ հենց այնպես չի փակվում, Հակոբյա՞ն, մնացածն էլ կբերես, ու գործը ինքն իրեն կփակվի:

Հաջորդ օրը մայոր Հակոբյանը չգնաց դատավոր Ոսկանյանի մոտ: Մտածում էր՝ գնա՞լ, թե՞ չգնալ: Չէ՞ որ դատավորն արդեն խայծը կուլ էր տվել:

Կեսօրին մոտ Հակոբյանի հեռախոսը երկար զանգեց:

-Ո՞վ է,- հարցրեց Հակոբյանը:

-Ինձ հետ մուկ ու կատու մի՛ խաղա, դու լավ գիտես, թե ով է,- լսվեց դատավոր Ոսկանյանի սպառնալից ձայնը,- կարո՞ղ է՝ հանկարծ չգաս ինձ մոտ:

Հակոբյանն զգաց, որ մտածելու, հապաղելու ժամանակ այլևս չկար:Նա համոզվեց, որ դատավորը իրեն ոչինչ չի զիջելու:

-Մինչև մեկ ժամը կլինեմ ձեզ մոտ,- ասաց Հակոբյանը և աշխատասենյակից դուրս եկավ:

Հաջորդ օրը՝ նշանակված ժամին, սկսվեց դատական նիստը: Նիստին ներկա էին Շավարշի կինը՝ Տատյանան, և Վալտերը: Ոստիկանությունից ոչ ոք չկար: Ամբամ ներկա չէր Գեղամ Հակոբյանը, որի դեմ էին ուղղված հիմնական բողոքները: Վահան Դարբինյանն զգաց, որ ինչ-որ բան իր տեղում չէ: Ավելի շուտ դա թատերական ներկայացում էր հիշեցնում, քան դատական նիստ:

Նիստը բացեց դատավոր Գալուստ Ոսկանյանը: Նա մի քանի անորոշ ու անհասցե բաներ ասաց՝ ընդգծելով, որ «Գործը» վաղուց քննվել է և հաստատվել, որ Շավարշ Ղազարյանն ինքնասպանություն է գործել, ու դատարանն այսօր այդ ամենը կասկածի տակ դնելու ոչ մի հիմքեր չունի: Այնուհետև դատավոր Ոսկանյանը ձայնը տվեց դատապաշտպան Վահան Դարբինյանին:

Դատապաշտպան Դարբինյանը մանրամասն ներկայացնում է ամեն ինչ, նշում է, որ ձեռքի տակ եղած փաստերն ու վկայությունները լուրջ կասկածի տակ են դնում Շավարշի ինքնասպանության վարկածը: Դարբինյանն իր նկատառումներն է անում նաև այն մասին, որ, ամենայն հավանականությամբ, Շավարշին ծեծելով են սպանել: Նա վկայակոչում է Նարիման Մամեդովի կողմից ներկայացված տեսաժապավենը, Ստեփանակերտում ապրող սերժանտ Գևորգ Բարխուդարյանի պատմածները, որ այդ ժամանակ հերթապահել է հեռախոսի մոտ: Դատապաշտպան Դարբինյանը դատարանից պահանջում է «Գործի» ամենալուրջ քննություն և ճշմարտության բացահայտում:

Այնուհետև դատավոր Ոսկանյանը հայտարարում է ընդմիջում:

Դատապաշտպան Դարբինյանի համար արդեն ամեն ինչ պարզ էր: Նա տեսնում էր, որ իր ջանքերը իզուր են անցնում: Հակառակ օրենքի պահանջների՝ դատավոր Ոսկանյանի մոստեցումներն այս «Գործի» նկատմամբ բոլորովին այլ էին: Պարզ երևում էր,

որ նա «Գործը» կարճելու է, և ամեն ինչ նետվելու է դարձյալ ան-
Հայտության գիրկը: Բայց նա՝ դատապաշտպան Դարբինյանը, դրա դեմն առնելու ինչ հնար ու միջոց ուներ: Այդ դատավոր Ոսկանյանը փորձված գայլ էր երևում և բոլոր թաքնված ու խորամանկ միջոցնե-
րով կարողանում էր թող փչել դահլիճում նստածների վրա, որոնք չէին հասկանում, թե ինչ է տեղի ունենում: Եվ իրոք շատերի համար դեռ պարզ չէր, թե նժարի ծանրությունը դեպի ուր է թեքվում: Դեռ շատերը չէին կռահում, թե դատավորը ինչ որոշում է կայացնելու: Ընդմիջումն ավարտվեց: Վահանը տեսնում էր, որ դատավոր Ոս-
կանյանն ամեն ինչ ձևական է անում, նույնիսկ եղավ մի պահ, որ նա մտածեց լքել դատարանի դահլիճը, բայց մի կերպ զսպեց իրեն: Նա գիտեր, որ Տատյանայի և Վալտերի հայցը մերժվելու է և խղճում էր նրանց: Նա պատկերացնում էր, թե ինչ խոր հիասթափություն են ապրելու նրանք, և և այդ հիասթափությունը միայն այդ դատարա-
նից չի լինելու, այլ երկրի օրենքներից և արդարադատությունից:

Դատավորը խոսում էր, Վահանը չէր լսում: Նա նախապես գի-
տեր, թե նա ինչ է ասելու: Նա տեսնում էր, թե դատավոր Ոսկանյա-
նը ինչ վարպետությամբ է կեղծում օրենքները, ինչպես է կոխկռտում հայցվորների մարդկային իրավունքներն ու արժանապատվությունը:

Կարճատև դադարից հետո դատավոր Ոսկանյանը իր շքախմ-
բով՝ դատախազով, քննիչով և ատենակալներով եկավ և ի լուր դահ-
լիճում նստածների ազդարարեց դատարանի որոշումը.

Ա. Օրվա հերթապահ սերժանտի ցուցմունքը հիմնավոր չէ, մանավանդ նա ականատես չի եղել, թե ով, որտեղ և ինչպես են ծե-
ծել Շավարշ Ղազարյանին:

Բ. Կա շրջանի դատաբժշկական հանձնաժողովի նախագահի ստորագրությունը, որով հաստատում է, որ տեղի ունեցածը ինքնաս-
պանություն է:

Գ. Գանձասարի նախկին բնակիչ, այժմ Ադրբեջանում ապրող քաղաքացի Նարիման Մամեդովի վկայությունը անօրինական է և

վստահություն չի ներշնչում: Այդ տեսաժապավենը միայն արվել է թշնամական Ադրբեջանի կողմից:

Այս և նման մի շարք հանգամանքներից ելնելով դատարանը մերժում է ներկայացված հայցը՝ հիմված միայն անհիմն կասկածանքների վրա:

Շավարշ Ղազարյանի ինքնասպանության դեմ բողոքի հայցը մերժվեց, ու գործի հետագա քննությունը կասեցվեց: Տատյանան ու Վալտերը տեղի ունեցած անարդարությունից ցնցված էին: Պակաս ցնցված չէր նաև Վահան Դարբինյանը: Այն հույսերը, որ այսքան ժամանակ փայփայում էին նրանք, միանգամից հօդս ցնդեցին: Տատյանան սաստիկ հուզումից չէր կարողանում իրեն զսպել: Փոքրիկ երեխայի նման հոնգուր-հոնգուր լաց էր լինում: Իր արցունքները չէր կարողանում զսպել նաև Վալտերը: Վահանը նրանց՝ Տատյանային և Վալտերին, առաջարկեց գնալ փաստաբանական գրասենյակ: Նրանք լուռումունջ հետևեցին Վահանին: Վալտերն զգում էր Վահանի անզոր վիճակը: Հասկանում էր, որ նա ամեն ինչ արել է, որ իրականությունը բացահայտվի, բայց հաղթել էին անիրավությունն ու մարդու ճակատագրի նկատմամբ եղած անմարդկային անտարբերությունը: Այդ պատճառով էլ Վալտերը նեղացած չէր Վահանից, ընդհակառակը շնորհակալ էր նրանից թափած ջանքերի համար:

Գրասենյակում նստած՝ նրանց անհամբեր սպասում էր Արմանը: Վահանի դեմքին ընկճվածություն չկար, բայց Տատյանան լաց էր լինում: Դրանից Արմանը եզրակացրեց, որ գործերն այնքան էլ միսիթարական չեն: Այդ պատճառով էլ նա ոչինչ չհարցրեց: Նրա համար էլ ամեն ինչ հասկանալի էր: Նստեցին՝ ով որտեղ պատահի: Տատյանան նայում էր պատուհանից դուրս և մեկ-մեկ թաշկինակը սեղմում աչքերին: Տխուր էր նաև Վալտերը: Խոսելու, արտահայտվելու տրամադրություն չկար: Հարվածը միանգամից էր վրա հասել դեռ շատ թարմ էր առաջացած վերքը: Մենակ Վահանն էր, որ ըստ էության չէր ընկճվել: Դրա պատճառն այն էր, որ նա ավելի խորն էր

հասկանում տեղի ունեցածի շարժառիթները: Նա դեռ էն գլխից էր սպասում նման հարվածի: Վահանը գիտեր, որ կյանքում ամեն ինչ չէ, որ իր տեղում է: Դեռ շատ դեպքերում տմարդիները տոնում են իրենց հաղթանակը՝ դիմելով զանազան կեղտոտ խարդավանքների և խաբեությունների: Օրենքները հաճախ հենց իրենք՝ օրենքի մարդիկ են խախտում իշխանական իրենց բարձունքներից ոտնատակ տալով շատ սրբություններ: Բայց սա չի նշանակում, որ պետք է կանգ առնել կես ճանապարհին: Ընդհակառակը, պետք է շարունակել նոր թափով ու ավելի ուժգին: Պետք է այնպես անել, որ Հակոբյաններն ու Ոսկանյանները սարսափեն արդարների միությունից ու նրանց հզոր ուժից:

Վահանը նայեց Տատյանային և նրան գոտեպնդելու, հուսադրելու պահանջ զգաց.

-Տատյանա՛,- ասաց նա,- կյանքում ամեն ինչ հնարավոր է, դեռ գայլեր կան, որոնք անխղճորեն հոշոտում են իրենցից թույլերին: Դեռևս փողն ու ընչաքաղցությունը կարողանում են կործանել շատ ազնիվ նպատակներ: Բայց դրա համար ոչ թե պետք է ընկճվել, այլ գոտեպնդվել: Պայքարը դեռ առջևում է: Տատյանա՛, մեր հաղթանակը դեռ հետո է գալու, և դու այն տեսնելու ես:

-Ճիշտ է, Վահա՛ն ջան, ճիշտ է, սրանք ժամանակավոր արցունքներ են: Ես այսպիսի բանի սպասում էի: Գիտեի, որ փողը, հարստությունը չար սատանայի նման կանգնելու են մեր ճանապարհին: Ես դա շատ լավ հասկանում եմ: Հասկանում եմ նաև ձեզ, ես հավատում էի և հավատում եմ ձեզ, պարո՞ն Դարբինյան: Իսկ դա գլխավորն է, որ կյանքում դեռ հավատարիմ, ազնիվ մարդիկ կան: Շնորհակալ եմ ձեր ազնիվ աշխատանքի համար: Շնորհակալ եմ ձեր համառ ջանքերի համար: Այժմ ես հոգով ավելի հանգիստ եմ: Կարևորն այն է, որ մենք բարձրացրինք այդ հարցը: Շատերը մեզ հասկացան: Լռեցին, բայց հասկացան: Դուք մեծ գործ արեցիք մեզ համար, Շավարշի հիշատակի համար: Շնորհակալություն:

-Տատյանա՛, բայց ամեն ինչ սրանով չի ավարտվում: Մենք աշխատելու ենք միասին: Աշխատելու ենք և միասին տոնելու ենք հաղթանակը, արդարության հաղթանակը:

-Դե մենք գնանք, Վահա՛ն,- ասաց Վալտերը,- պիտի Գանձասար գնանք: Առայժմ:

-Ձեզ հաջողություն,- ջերմեռանդորեն ասաց Վահանը,- մինչև նոր տեսություն:

Պետական անվտանգության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Գայանե Թումանյանը նոր էր վերադարձել կոմիտեի հերթական նիստից և նոր էր մտել իր աշխատասենյակ, երբ դուռը ծեծեցին:

-Մտե՛ք,- ասաց տիկին Թումանյանը:

Ներս մտավ Ախկախ պետությունների համագործակցություն կոմիտեի բաժնի պետը:

-Ա՛, այդ դո՞ւ ես, նե՛րս արի, նստի՛ր,- մտերմաբար ասաց տիկին Թումանյանը, հը, ի՞նչ կա:

-Ամեն ինչ նորմալ է, տիկի՛ն Թումանյան:

-Հայացքիցդ երևում է, որ կարևոր գործով ես եկել, ի՞նչ է պատահել:

-Միանգամից ասեմ, որ եկել եմ Շավարշ Ղազարյանի գործով:

-Շվարշ Ղազարյանն ո՞վ է,- չհասկացավ տիկին Թումանյանը:

-Դու պիտի շատ լավ իմանաս նրա մասին: Ես քեզ պատմել եմ այդ խիզախ երիտասարդի մասին: Նա Գանձասար քաղաքից էր, մեր լավագույն ազատամարտիկներից մեկը: Նա է փրկել ինձ և մեր ջոկատի տղաներին: Մենք գտնվում էինք թշնամու շրջապատման օղակի մեջ, մենք բոլորս կզոհվեինք, եթե նա իր ջոկատով չհարձակվեր

ու չփրկեր մեզ: Հասկանո՞ւմ ես, ես իմ կյանքով պարտական եմ նրան:

-Այո՛, հիշեցի, շատ ես պատմել նրա մասին: Բայց ինչքան գիտեմ, նա ինքնասպանություն է գործել, որի պատճառը մինչև հիմա էլ անհայտ է մնում:

Չէի ասի, որ դա ինքնասպանություն է եղել: Ես ու ինձ նման շատերը դրան չեն հավատում: Մարտերի ու մահերի միջով անցած այդ խիզախ երիտասարդը երբեք նման բան չէր անի:

-Այդ դեպքում, ի՞նչ ես կարծում, ի՞նչ կարող էր պատահած լինել:

-Դա, ամենայն հավանականությամբ, ոստիկանության հերթապահ ոստիկանների սև գործն է:

-Ես կարո՞ղ եմ որևէ բանով օգտակար լինել,- ասում է տիկին Թումանյանը:

-Գիտե՞ս ինչ, տիկի՛ն Թումանյան, դեպքից հետո առանց հանգամանքների մանրազնին քննության «Գործն» ուղղակի կարճվել է: «Գործի» քննությունը դատարան չի հասել: Գտել են, որ ամեն ինչ պարզ է, արձանագրել են որպես ինքնասպանություն և վերջ: Հարազատների և կնոջ բազմաթիվ բողոքներից հետո Մյամնիկյանի շրջանի դատարանը լսել է «Գործի» քննությունը և հաստատել նախնական քննության արդյունքները: Այսպիսով, մեզ թվում է դատարանը անհիմն մերժել է հայցվորների գանգատները, հաշվի չեն առնվել դատապաշտպանի փաստարկները, և «Գործը» կարճվել է գրիչի մի հարվածով: Բազմաթիվ հարցերի պատասխաններ մնացել են օդից կախված: Կարճ ասած, ես եկել եմ քեզ մոտ մի նպատակով, որ դու զանգես Հանրապետության գլխավոր դատախազին՝ Շավարշ Ղազարյանի «Գործը» վերստին դատական վարույթ մտցնելու խնդրանքով:

-Ես հասկացա՝ դու ու քո նախկին մարտական ընկերները ցանկանում էք, որ գլխավոր դատախազը Շավարշ Ղազարյանի «-Գործը» վերանայելու թույլտվություն տա: Ես քեզ ճի՞շտ հասկացա:

-Միանգամայն ճիշտ, այսպես է, որ կա: Դուք լավ գիտեք իմ բնավորությունը: Սպանվել է ազգի լավագույն զավակներից մեկը, այո՛, սպանվել է: Խորհրդավոր ու անհայտ պայմաններում կյանքից զրկվել է մի մարդ, որ փրկել է իմ կյանքը: Ես թույլ չեմ տա, որ Շավարշի պայծառ անվան վրա սև բիծ ընկնի: Պետք է վերականգնվի Շավարշի պայծառ անունը: Շավարշի «Գործը» նոր քննություն է պահանջում, ազնիվ ու արդար:

-Շատ լավ, իսկ դու գիտե՞ս՝ այդ օրը ոստիկանության հերթապահները ովքեր են եղել:

-Գիտեմ, ինձ այդ մասին ասել են, գիտեմ՝նաև, որ սպանության գիշերը այնտեղ է եղել նաև ոստիկանության մայոր Գեղամ Հակոբյանը:

-Ո՞վ- ձայնի տարօրինակ երանգով ճչաց տիկին Գայանեն,- ասացիր ո՞վ:

-Գեղամ Հակոբյանը, որ հիմա ճանապարհային ոստիկանության մայոր է: Ի՞նչ կա որ:

Տիկին Թումանյանը ոչինչ չասաց, միանգամից լռեց: Պարզ երևում էր, որ Գեղամ Հակոբյան անուն լսելուն պես նա իրեն վատ է զգացել: Եվ իրոք, նա տեղից վեր կացավ, երեսը շուռ տվեց դեպի պատուհանը, ցույց տվեց, որ նայում է դեպի դուրս, բայց իրականում նա լալիս էր և այնպես էր անում դիմացինը իր արցունքները չտեսնի: ԱՊՀ-ի բաժնի պետը իմանալ չէր կարող, թե ինչ է տեղի ունենում տիկին Գայանեի հոգու խորքում: Նա այդպես էլ չհասկացավ, թե ինչու հանկարծ այդպես հուզվեց նա և այդ պատճառով էլ ոչ մի հարց չտվեց: Տիկին Թումանյանը արագորեն արցունքները սրբեց, հեռացավ պատուհանից և եկավ նստեց իր բազկաթոռի վրա:

-Ես գլխավոր դատախազին այդ մասին տեղյակ կպահեմ: Կ-բացատրեմ նոր դատաքննություն սկսելու անհրաժեշտությունը: Իսկ հայտնի՞ է, թե դատաբժշկական փորձաքննությունը ինչից է եզրակացրել, որ դա ինքնասպանություն է: Հայտնի՞ է՝ ով է ստորագրել այդ մասին կազմված արձանագրություն-ակտը:

-Չէ՛, այդ մանրամասները դեռևս հայտնի չեն, տիկի՛ն Թումանյան:

-Դրանք իմանալը նույնպես շատ կարևոր է: Իմացիր՝ ով է եղել դատաբժշկական հանձնաժողովի նախագահը և ինչի հիման վրա է ստորագրել ակտը: Իմացիր նաև՝ ինքնասպանությունը հաստատող ինչ փաստեր են նշված: Այդ և նման բաների մասին ինձ անհապաղ տեղյակ ես պահում: Իմ խոսակցությունը դատախազի հետ պետք է հիմնավոր լինի: Այլ կերպ նա կարող է չհամաձայնել նոր դատավարություն սկսելու հարցի հետ: Հասկանալի՞ է:

-Ես ամեն ինչ հասկացա, տիկի՛ն Թումանյան: Կանեմ այն ամենը, ինչ իմ ուժերն ու կարողությունները ներում են:

-Հիմա ազատ ես, կարող ես գնալ:

-Շնորհակալ եմ, տիկի՛ն Թումանյան:

ԱՊՀ-ի բաժնի պետի գնալուց հետո տիկին Գայանե Թումանյանը գլուխը դրեց սեղանի վրա և սկսեց մտածել: Հետո գլուխը բարձրացրեց, սեղանի գզրոցից վերցրեց սիգարները, վառեց և սկսեց ծխել: Գայանե Թումանյանը հիշեց Ղարաբաղյան ազատագրական շարժման տարիները: Հիշեց այն ամենը, ինչ որ տեղի էր ունեցել իր հետ...

Թբիլիսիի համալսարանն ավարտելուց հետո եկավ Երևան: Ազատագրական պայքարի ավյունով լեցուն երիտասարդ աղջիկը հանուն Ղարաբաղի ազատագրության սկսեց բոցաշունչ ելույթներով հանդես գալ հանրահավաքներում, միտինգներում: Նրա հռետորական խոսքը ժողովուրդը լսում էր մեծ ուշադրությամբ: Նրա հայրենասիրական ելույթները հատկապես մեծ ազդեցություն էին գործում

քաղաքի երիտասարդության վրա: Բարձրանալով պայքարի տրիբունա՝ նա երիտասարդությանը կոչ էր անում ակտիվորեն մասնակցել հայրենասիրական շարժմանը, մինչև վերջ մարտնչել հայոց պատմական հողերի ազատագրման համար: Եվ ինքը՝ երիտասարդ աղջիկը, աստիճանաբար դառնում էր երիտասարդության պայքարի կազմակերպիչներից մեկը: Իսկ տեղական իշխանությունները հետապնդում էին նրան, փորձում փորձում ճնշել նրա քաղաքական ակտիվությունը, հեռացնել նրան ակտիվ պայքարից: Նրան աշխատեցնում էին, վախեցնում, սպառնում բանտարկությամբ, ձերբակալություններով: Բայց ամենուն աղջիկը չէր հրաժարվում պայքարից...

Գայանե Թումանյանը մի պան սթափվեց իրեն պաշարած մտքերից ու զանգեց քարտուղարուհուն.

-Այսօր մարդ չեմ ընդունելու: Ինձ մոտ եկած այցելուներին ասում ես, որ ես խիստ զբաղված եմ:

Չափազանց անտրամադիր էր տիկին Գայանե Թումանյանը: Թե ինչ էր կատարվում իր հետ, ինքն էլ չէր հասկանում: Մի անորոշ տրտմություն եկել փաթաթվել էր նրան: Եվ նա, որ օրվա ընթացքում երեք-չորս սիգար էր ծխում, ներվերը հանգստացնելու համար հանեց ծխախոտատուփը և նորից սկսեց ծխել: Ձգիտեր իր անելիքը: Խիստ անհանգիստ էր: Վեր կացավ, սիգարետը բերանին մոտեցավ պատուհանին, նայեց անորոշ մի կետի ու նորից ընկավ հուշերի գիրկը: Հիշեց այն ծանր ու մղձավանջային օրերը, որ ապրեց ինքը Երևանում ապրած տարիներին, հիշեց իր տառապանքները: Եվ որտեղից որտեղ նրա աչքերի դիմաց, ինչպես ամպի սև քողի տակից հառնեց Գեղամ Հակոբյանի պատկերը: Հիշեց, որ ինքը հենց նրա պատճառով թողեց Երևանի պետական համալսարանը և գնաց իր Հայրենի քաղաք Կիրովական: Հիշեց, թե ինչպես էր Գեղամ Հակոբյանը սիրահետում իրեն: Ինչպես էր յուրաքանչյուր քայլափոխի սև ուրուի նման տնկվում իր առաջ: Ինչպես էր վարպետորեն սիրո խոստովանություններ անում: Հիշեց, թե իր ծնողները ինչ ապրում-

ներ ունեցան այդ իրադարձությունից: Հիշեց, որ Հայրը դիմեց միլի-ցիային, իսկ նրանք մերժեցին՝ պատճառաբանելով, որ չկան ապա-ցույցներ՝ կատարելով Գեղամի հոր կարգադրությունները, որ այդ ժամանակ աշխատում էր Արարատ քաղաքի միլիցիայի բաժնի պետ: Հիշեց, թե ինչպես մերժեց կատարել հոր առաջարկը՝ կատարել ա-բորտ: Հիշեց, թե ինչպես մեկ տարի անց՝ երեխա ունենալուց հետո թղթերը հանձնեց Թբիլիսիի պետական համալսարանի իրավաբա-նական ֆակուլտետը և ընդունվեց: Հիշեց՝ ինչպես էր աշխատում դասերից հետո, ինչպես էր լացում գիշերները, իր դեմ կատարած ա-նօրինական հանցանքները: Ինչպես էր տանում երեխայի հիվան-դությունները: Ամեն ինչ տարավ, տարավ նրա համար, որ կգա Գե-ղամից վրեժ լուծելու օրը: Այդ պահը եկավ, և ինքը պետք է որպես սառը «գործիք» մատուցի իր հարվածը Գեղամի դեմ: Նա հիշեց ծնողների դժբախտությունը՝ ծանր տանելով այդ օրերը: Նրանց վա-ղաժամ մահը: Այդ բոլորը որպես փոքր գիրք թերթեց տիկին Թու-մանյանը: Նա արցունքներ չթափեց, գիտեր, որ որ դրա համար ար-ցունքներ չեն թափում, այլ հարվածը հասցնում են իդեալական: Իր կատարած մեղքերի համար պետք է պատասխան տա Գեղամ Հա-կոբյանը:

ԱՊՀ-ի պետությունների պետական անվտանգության բաժնի պետ «Բերդը» մտավ իր աշխատասենյակ: Ասես տիկին Թումանյա-նի նման հիշեց, բայց Շավարշ Ղազարյանին: Նրա՝ հայ ֆիդայու կատարած հերոսական գործերը:

Հիշեց, թե ինչպես Հադրութ քաղաքը շրջափակումից ազա-տագրելուց հետո ռադիոկապի միջոցով ստանում է նոր հրաման՝ օգնել Շուշիի բերդում շրջափակված ազատամարտիկներին: Շա-վարշը առանց հանգստանալու իր վաշտը մեքենայով տեղափոխում է Շուշի քաղաքի մոտակայքը: Ճեղքելով շրջափակումը՝ վաշտը մտնում է բերդ: Բերդում հանդիպում է ազատամարտիկներին և ն-

բանց վաշտի հրամանատար, աջ ուսից ծանր վիրավորված «Բերդիին»:

Այս մականունը հրամանատարը ստանում է Շուշիի բերդը մտնելուց հետո: Նրան այդպես էին կոչում իր լեռնային հետախուզական վաշտի բոլոր անդամները: «Բերդի» վաշտի մեջ մտնում էին նախկին տասը հոգուց բաղկացած ջոկատը, որը կռվել էր Աֆղանստանի լեռնային մարտերում: Իր ջոկատով «Բերդը» պարանների միջոցով բարձրանում է բերդը: Ադրբեջանցիները մեծ քանակով կանոնավոր բանակից շրջապատում են բերդի տասը անդամներին:

Լեռնային հետախուզական ջոկատի տասը անդամներից չորսը հերոսաբար զոհվում են՝ ցուցադրելով դիմադրություն:

Երկրորդ օրվա վերջում փամփուշտները համարյա վերջանում են: «Բերդը» կարգադրում է կրակել միայն անհրաժեշտ դեպքում:

Շավարշի վաշտը, ոչնչացնելով թուրքերի բանակը, մտնում է բերդ: Սենյակներից մեկում գտնում են վիրավոր «Բերդիին»:

-Վերցրո՛ւ իմ վաշտի կենդանի մնացածներին քո հրամանատարության տակ: Ինչ գնով ուզում է լինի, կանգնեցրու թուրքերի գրոհը: Կռվեք մինչ վերջին փամփուշտը: Եթե պետք լինի, կռվեք ճակատամարտում: Բերդը երբե՛ք չհանձնեք նրանց,- հազիվ հաստնում է խոսել «Բերդը»,- Ղարաբաղի կանոնավոր բանակը շուտով կմոտենա:

«Բերդը» կիսապառկած ծանր վիճակում օգնում էր իր ազատամարտիկներին, կրակելով հարձակվող թուրքերին՝ Շավարշը կատարում է «Բերդի» հրամանը, և կռվում են մինչև վերջ, մինչև Ղարաբաղի կանոնավոր բանակի օգնության գալը, որը ազատագրում է Շուշիի բերդը թուրքերից:

Հայ ազատամարտիկներից շատերն են մահանում, բայց ոչ մեկի մտքով անգամ չի անցել վախենալու կամ կենդանի հանձնվելու մասին:

«Բերդը» հիշեց նրա խոստումները ու նրա մահը. «Բերդ ես արյան գնով քեզ կփրկեմ, մի՛ մոռացիր»:

Անտանելի մահին, որը կատարեցին հայ ազգի ոստիկանները, նրա աչքերը չդիմացան, նույնիսկ չէին կարող չթափվել արցունքները: Նրանից բացի ուրիշները այդ արցունքները չտեսան:

«Հայ տղամարդը պետք է թափի արցունքներ տարվա մեջ մեկ-երկու անգամ, բացի հարազատներին կորցնելուց, ոչ մեկը այն չպետք է տեսնի»,- մտածեց «Բերդը»:

Վառեց սիգարետը և սկսեց այն ծխել: Ծխելուց հետո վերցրեց հեռախոսը և զանգեց դատավոր Գալուստ Ոսկանյանին:

-Բարև ձեզ, պարո՞ն դատավոր:

-Բարև ձեզ,- պատասխանեց դատավորը,- ո՞վ է խոսում:

-Ուրեմն ինձ ուշադիր լսիր՝ քեզ ինչ եմ ասելու,- պատասխանեց «Բերդը»,- վերցրածդ չորս հազար դոլարը հասցնում ես տիրոջը, ումից վերցրել ես:

-Այդ ո՞վ է այդ տոնով խոսում: Դո՞ւ պետք է ինձ այդպես թելադրես՝ ես ինչ պետք է անեմ:

-Դու երևի չճանաչեցիր՝ քեզ հետ ով է խոսում: Ուշադի՛ր լսիր՝ քեզ ինչ եմ ասում: Չորս հազարին գումարում ես ևս հազար դոլար ու հասցնում ես տիրոջը՝ մայոր Հակոբյանին: Ձեր վարած դատական պրոցեսը հայտարարում ես անվավեր և այն հասցնում գլխավոր դատավորին, հասկացա՞ր:

Դատավորին պատում է սառը քրտինք: Որտեղի՞ց իմացան չորս հազար դոլարի ու գումարած հազար դոլարի մասին, ո՞ւմից իմացան: Անկախ իրենից դատավորը ձեռքը տանում է կոստյումի գրպանը: Հանելով թաշկինակը՝ սրբում է չաղ վզի քրտինքը:

-Ա...ա՛...այդ դո՞ւք եք պարոն...

-Այո՛, ես եմ պարո՞ն «միստր իքսը»,- պատասխանում է «-Բերդը» ու դնում հեռախոսը:

Դատավորը ընկնում է ամբողջովին «մանթռաշի» մեջ: Քրտինքը ճակատից թափվում է դիմացի թղթերին: Ձեռքը նորից տանում է կոստյումի գրպանները՝ ման գալով թաշկինակը: Հանկարծ դիմացին նկատում է այն ու հիշում, որ այն մի քանի րոպե առաջ է հանել գրպանից: Սրբելով ճակատի սառը քրտինքը՝ վերցնում է հեռախոսը ու զանգում ոստիկանություն՝ մայոր Հակոբյանին:

-Պարոն Հակոբյան,- ձայնի մեջ տագնապով ասում է դատավոր Ոսկանյանը: Մենք անհապաղ պետք է հանդիպենք: Լսո՞ւմ եք՝ ինչ եմ ասում ան-հա-պաղ: Ես կես ժամից իմ մեքենայով կայարանամերձ հրապարակում կլինեմ: Շատ կարևոր խոսելու հարց կա, նայիր չուշանաս:

-Ի՞նչ է պատահել,- անհանգստացավ Հակոբյանը:

-Կգա՛ս, կիմանա՛ս: Էլ մի՛ ուշացիր, հիմա դու՛րս արի:

Մոտ կես ժամ հետո նրանք հանդիպեցին:

-Նստի՛ր ավտոմեքենան,- ջղագրգիռ ու անհանգիստ ասաց Ոսկանյանը,- մեզ չպետք է միասին տեսնեն, նստի՛ր:

Հակոբյանն արագ նստեց և դուռը շրխկոցով փակեց: Ոսկանյանն ավտոմեքենան տարավ կանգնեցրեց մի խուլ անկյունում, գրպանից արագ հանեց հինգ հազար դոլարը և ասաց.

-Վերցրո՛ւ քո փողը, գնա և այլևս մեր կողմերում չերևաս:

-Ինչո՞ւ, ախր ի՞նչ է պատահել, ինչո՞ւ պարզ չէք ասում,- շիվար զարմանքով հարցրեց Հակոբյանը:

-Ասեմ չես հավատա: Ինձ զանգել են, պահանջել, սպառնացել, որ ես քեզնից վերցրած փողը ետ վերադարձնեմ:

-Ո՞վ է զանգել, ո՞վ է սպառնացել, ոչ չեմ հասկանում:

-Նրա անունը ես քեզ, իհարկե, չեմ ասի: Բանից պարզվում է, որ իմ ամվտոմեքենան ականջներ ունի, ամեն ինչ լսում է ու հաղորդում վերևներին: Թե չէ այդ որտեղի՞ց նրանք իմացան, որ ես քեզնից փող եմ վերցրել: Հիմա փողդ վերցրո՛ւ և արագ դու՛րս արի իմ

ավտոմեքենայից և շտապ հեռացի՛ր, այնպես որ ոչ ոք չիմանա մեր Հանդիպման մասին:

Գեղամ Հակոբյանը փողն արագ վերցրեց ու դուրս եկավ ավտոմեքենայից՝ չհասկանալով, թե ինչ է տեղի ունեցել և ինչ վտանգի մասին է խոսում դատավոր Ոսկանյանը: «Այս արդեն բանի նման չէ,- մտքերի մեջ ընկավ Հակոբյանը:-Այս ամենից վատ հոտ է փչում: Ինչո՞ւ և ինչի՞ց է այդպես սահաբեկվել դատավոր Ոսկանյանը, ինչո՞ւ է ն իր հոժար կամքով իմ տված փողը ինձ վերադարձնում: Գուցե իմ դեմ ինչ-որ որոգայթ է լարվում, որի մասին ես անտեղյակ եմ: Մի՞թե ամպեր են կուտակվում իմ գլխի վերև: Նորի՞ց է քննարվելու այդ Շավարշի ինքնասպանության հարցը: Նոր փաստե՞ր են հայտնաբերվել, ինչ է: Գուցե էշի գլուխ ոստիկաններն են ծախել ինձ, ո՞վ գիտե: Մի՞թե ինքն իրեն չի կարող պաշտպանել, ինչպես մինչև հիմա պաշտպանել է: Մի՞թե ժամանակներն այդքան փոխվել են, որ նոր ծագած ուժերը կարող են իրեն հաղթել: Համենայն դեպս, պիտի մի հնար գտնել մահվան այս օղակից դուրս գալու համար: Թե չէ ոմանք՝ Դարբինյանների նման այդ ոչնչությունները կցանկանան ինձ նետել անդունդը կամ ճահճի մեջ խորտակել: Ամեն ինչի հնարը, այնուամենայնիվ, կա: Ամեն ինչ կորած չէ դեռ: Ուրիշ ճար չունենամ, կփախչեմ արտասահման»:

Տարված այս պղտոր ու իրարամերժ մտքերով՝ նա նստեց իր ավտոմեքենան, բայց չգնաց իր մշտական աշխատատեղը: Մի քիչ մտածեց ու տուն էլ չգնաց: Քշեց քաղաքից դուրս: Մտքերը ցրելու նպատակ ուներ: Նա սարսափում էր այն մտքից, որ արդեն հասել է իր պարտության ժամը, և ինքն անզոր է դրա դեմն առնելու:

Այսպես անցավ մոտ մեկ ամիս: Վահան Դարբինյանը չէր հուսահատվել, բայց հոգեկան ապրումները պաշարել էին նրան:

Դարբինյանը չէր նահանջել իր նպատակներից: Նա միշտ իր դիրքերում էր և համառորեն շարունակում էր իրականացնել իր մտադրությունները: Առաջացած խոչընդոտները չէին հուսահատեցնում նրան: Նա դրանք համարում էր օրինաչափ երևույթներ և ոչնչից չէր զարմանում: Նրան չզարմացրեց նաև այն հանգամանքը, որ երկար ժամանակ չէր հաջողվում հանդիպել դատաբժշկական հանձնաժողովի նախագահ Մինաս Դաբաղյանի հետ: Վահանն Արմանին էլ էր հանձնարարել զբաղվել այդ հարցով: Բայց Արմանին էլ չէր հաջողվել հանդիպել Դաբաղյանի հետ: Պարզապես Վահանն ու Արմանն փնտրում էին նրան ու չէին գտնում: Այդ Մինաս կոչեցյալը ուղղակի չէր ուզում երևալ դատապաշտպան Դարբինյանի և նրա օգնական Արման Աբրահամյանի տեսադաշտում: Նա շարունակ գործուղման մեջ էր, ասում էին, որ նա Մոսկվայում է, մարզերն է գնացել և այլն:

Դարբինյանը, իհարկե, վստահ չէր, որ դատաբժշկական հանձնաժողովի նախկին նախարարի հետ հանդիպումը որևէ շոշափելի արդյունք կտա: Բայց գտնում էր, որ այդ հանդիպումը ինչ-որ տեղ անհրաժեշտ է, թեկուզ այն իմաստով, որ նա անորոշ կերպով կտա Գեղամ Հակոբյանի անունը: Դրանից Վահանը կեզրակացնի նրանց կապվածության գաղտնիքը և թե նա, իր ստորագրությունը դնելով ակտի տակ, ինչ շահ է հետապնդել: Վահան Դարբինյանը պարզապես ուզում էր հասկանալ, թե հանձնաժողովի նախագահը որևէ բանով իրեն մեղավոր է զգում, զղջացե՞լ է արդյոք իր կեղծիքի համար:

Վահանը տեղյակ չէր, որ ինչ-որ վերևներում ավելի հզոր մարտիկներ են հանդես եկել, որոնք շահագրգիռ են դատը նորից վերանայելու և ճշմարտությունը բացելու հարցում:

Եթե նա այդ մասին իմանար, ոչ միայն շատ կուրախանար, այլև նոր թափով կսկսեր աշխատել և ավելի վստահ կլիներ իր գործունեության մեջ:

Ոչ Վահան Դարբինյանը և ոչ էլ Արման Աբրահամյանը առայժմ արդյունքի չէին հասնում և գտնվում էին սպասողական վիճակում: Նրանք դանդաղ և հաստատուն քայլերով ընթանում էին առաջ՝ սպասելով այն պատեհ ժամանակներին, երբ վերին ատյաններում կգտնվեն մարդիկ, որոնք անշահախնդրորեն կբացեն ճշմարտության աչքերը:

Այդ օրն էլ Արման Աբրահամյանը դատարկաձեռն էր վերադարձել հերթական շրջագայությունից և մտահոգ նստած էր գրասենյակում, երբ լսվեց հեռախոսի զանգը:

-Արմա՜ն, տես ով է,- ասաց Վահանը:

Արմանը վերցրեց լսափողը:

-Ալո՛, Արման Աբրահամյանը լսում է:

-Բարև՛, Արմա՜ն,- հեռախոսի մեջ հնչեց կանացի մի քնքուշ ձայն,- Մարիամն է, չճանաչեցի՞ր:

-Քո ձայնը, Մարիա՛մ, իմ ականջներին մեղեդու նման է հնչում, հնարավոր չէ նման ձայնը չճանաչել:

-Շնորհակալություն, Արմա՜ն, մի խնդրանքով եմ զանգել քեզ:

-Ասա՛, լսում եմ:

-Արմա՜ն, այսօր լրանում է տիկին Էմմայի ծննդյան յոթանասուն ամյակը: Ընկեր-ընկերուհիներով ուզում ենք հավաքվել ու գնալ շնորհավորելու:

-Չհասկացա, տիկին Էմման ո՞վ է:

-Արմա՜ն, տիկին Էմման մի հրաշալի կին է, մեր հանրակացարանի պահակներից մեկը: Վաղը գնում ենք շնորհավորանքի, քո ավտոմեքենան մեզ շատ պետք է: Մենք քեզ ծաղիկներով կդիմավորենք: Կարո՞ղ ես երեկոյան գալ Զեյթուն թաղամասում ուշ ժամին մեզ տուն տանելու,- ասում ու ծիծաղում է Մարիամը:

-Կգամ, հաստա՛տ կգամ, ես քո խոսքը մերժել չեմ կարող, համ էլ... համ էլ առիթ է, քեզ կտեսնեմ: Բայց ինչ հասցեով եմ գալու, Մարիամ:

-Զեյթուն տուն 315, սեփական տուն է, շատ հեշտ է գտնելը,- ուրախանում է Մարիամը:

Արմանը լսափողը դանդաղ դնում է տեղը՝ դեմքին ժպիտ խաղացնելով:

-Ո՞վ էր,- հարցնում է Վահանը,- չնայած Արմանի քնքշաձայն խոսքերից արդեն կռահել էր, թե ով էր հեռախոսի մյուս ծայրում:

-Մարիամն էր, հանրակացարանից էր խոսում: Պիտի երեկոյան՝ ուշ ժամին գնամ Զեյթուն, իրեն և ընկերուհիներին տեղափոխեմ տները:

-Հասկանալի է,- ժպտաց Վահանը,- իսկ դատաբժշկական հանձնաժողովի նախագահից այդպես էլ նորություն չունե՞ս:

-Այսօր նորից գնացի նրա աշխատավայր, տեղում չէր: Ասացին՝ գործուղման մեջ է: Տունն եմ զանգում՝ պատասխան չկա: Ոչ մի տեղ չեմ կարողանում գտնել նրան: Կարծես հօդս է ցնդել,- դժգոհեց Արմանը:

-Գրողը տանի, մոտ մեկ ամիս է՝ փնտրում ենք նրան ու չենք գտնում, մարդը փախչում է մեզնից: Կամ արհամարհում է կամ վախենում է մեզնից: Բայց միևնույն է, մի օր կհանդիպենք նրա հետ: Ինպայման կհանդիպենք, Արման՛, եթե իհարկե չփախչի արտասահման:

Վահանն անտրամադիր դուրս եկավ դրասենյակից՝ պատվիրելով Արմանին, որ սեղանի վրայի թղթերը դասավորի, ամեն մեկը իր տեղը դնի: Արմանը նստեց Վահանի տեղը և սկսեց դիմացը փռված թղթերը դասավորել: Պարապ աշխատանք էր: Կարծես ժամանակ էր սպանում, մինչև կճանապարհվեր Զեյթուն: Անընդհատ մտածում էր Մարիամի մասին: Ինչպե՞ս կդիմավորի, սիրո՞ւմ է, արդյոք իրեն թե՞... Իսկ ինքը, իհարկե, խելագարվում է նրա համար և ուզում է նրան ունենալ իր կողքին: Մարիամը նրա համար հոգեկան նեցուկ էր, գործունեության ամուր հենարան: Մարիամն Արմա-

նի երազանքների բարձունքներից չէր իջնում: Զեյթուն գնալու ճանապարհին էլ նա շարունակ մտածում էր նրա մասին:

Արմանը պայմանավորված ժամանակից մի կես ժամ էլ շուտ հասավ Զեյթուն: Ոչ մի տեղ կանգ չէր առել: Նա հասկանում էր, որ նպատակը միայն Մարիամին տեսնելն էր: «Չէ, այս անգամ հարցը պիտի արագ լուծեմ,- մտածում էր նա,- այս անգամ ամուսնության առաջարկ եմ անելու: Ինչ անենք, որ նա դեռ ուսանողուհի է: Այդ կարգավիճակով շատերն են ամուսնանում, ի՞նչ կա որ...»:

Այս մտածմունքների մեջ էլ Արմանը հասավ Զեյթուն, հասավ այն պահին, երբ հյուրերն արդեն տիկին Էմմայի տնից դուրս էին գալիս: Դուրս եկող աղջիկների հետ էր նաև Մարիամը, բայց ետ կանգնեց այդ մտքից՝ կարծելով, որ Մարիամը դրանից հետո իրեն վատ կզգա: Արմանը Մարիամի ընկերուհիներին տարավ իրենց տները: Աղջիկները Արմանին շնորհակալություն հայտնեցին և բազմանշանակ հայացքներով նայեցին Մարիամին, որ նշանակում էր՝ ապրես Մարիամ, քեզ համար շատ լավ երիտասարդ ես ընտրել: Աղջիկների այդ իմաստավոր ժեստը չվրիպեց Մարիամի ուշադիր հայացքից, և նա ինքնաբավ ժպիտով հրաժեշտ տվեց իր ընկերուհիներին:

-Իսկ այժմ, աղջիկնե՛ր, թույլ տվեք բաժանվել ձեզնից: Ես Արմանի հետ պիտի վերադառնամ վարձու բնակարան:

-Քեզ հաջողություն,- կչկչացին աղջիկները:

Արմանն ավտոմեքենան քշեց դեպի Մարիամի վարձու բնակարանը: Երկուսն էլ լուռ էին, կարծես ասելու բան չկար: Արմանը մտածում էր Մարիամի մասին, Մարիամը՝ Արմանի: Իրար շատ բան ունեին ասելու, բայց խոսակցությունը չէր ստացվում: Համենայն դեպս, մի բան ասելու համար Արմանը հարցրեց:

-Ո՞նց անցկացրիք տիկին Էմմայի յոթանասուն ամյակը:

-Սովորական,- ժպտաց Մարիամը,- բայց չգիտես ինչու հրավիրվածների մի մասը չէին բարեհաճել ներկա գտնվել: Տիկին Էմ-

մայի հարազատներն էին, մեկ էլ մենք՝ մի տասը-տանհինգ աղջիկ ու տղա:

Արմանը դարձյալ լուռ էր: Մարիամն խոսեց տիկին Էմմայի մարդկային հատկանիշների մասին: Մարիամն զգում էր, որ Արմանը բան ունի ասելու, բայց չի ասում: Մարիամն ինքն էր վերցրել խոսակցությունը վարելու նախաձեռնությունը: Նա պատմեց այն մասին, որ տիկին Էմման շատ բանում է օգնել իրենց, չի թույլատրել, որ տղաները նեղացնեն իրենց: Նա եղել է աղջիկների փրկիչ հրեշտակը: Արմանն զգում էր, որ սա այն խոսակցությունը չէ, որ պիտի տեղի ունենա իր և Մարիամի միջև: Բայց չգիտես ինչու իրեն պահում էր լսողի դերում և մի տեսակ նախապատրաստվում էր գլխավոր խոսակցությանը: Իսկ Մարիամը ոգևորությամբ պատմում էի տիկին Էմմայի գեղեցիկ այլ հատկանիշների մասին՝ ընդգծելով այն հանգամանքը, որ նրա շնորհիվ աղջիկներն իրենց հանգիստ ու ապահով էին զգում: Նա տղաների ոչ մի զանցանք աղջիկների նկատմամբ չի հանդուրժում:

-Նա,- ասաց ու ծիծաղեց Մարիամը,- թիսկան հավի պես իր ճտերին կարողանում է առնել թևերի տակ ու հարկ եղած դեպքում պաշտպանում է մեզ:

-Իսկ այդ տղանե՞րը,- վերջապես խոսեց Արմանը,- շա՞տ են նեղացնում ձեզ:

-Պատվարժան աղջիկները,- ասաց Մարիամը,- իհարկե, իրենց պաշտպանել գիտեն, բայց երբեմն պատահում են առանձին անպատկառ տղաներ, որոնք փորձում են համը հանել: Տիկին Էմման կարողանում է ժամանակին սրանց սանձը ձգել:

Արմանը դանդաղեցրեց մեքենայի ընթացքը, նայեց Մարիամին և տագնապով ասաց.

-Մարիա՛մ, կա՞ մեկը, որ քեզ նեղացնում է:

Մարիամը բացեց վարդ-շրթունքները և ծիծաղեց, հետո լրջացավ.

-Չկա, Արմա՛ն, և չի կարող լինել:

Արմանն ավտոմեքենան կտրուկ արգելակեց և ձայնի մեջ անհանգստություն՝ շուռ եկավ դեպի Մարիամը:

-Ճի՞շտ ես ասում:

Այս անգամ Մարիամը քրքջաց և աչքերի մեջ խինդ հավաքելով՝ ասաց.

-Արմա՛ն, էդ անպատկառ տղերքը շատ լավ հասկանում են, թե ում հետ կարելի է անպատկառություն անել: Ես դրանց հետ գործ չունեմ:

-Բայց երբեմն պատահո՞ւմ է չէ, որ բորենին սիրամարգի փետուրներ է հագնում, և միամիտները չեն ջոկում, թե ում հետ գործ ունեն:

-Ճիշտ ես ասում, Արմա՛ն, լինում են նաև նման բաներ: Մի անգամ տիկին Էմմանն ահա թե ինչ պատմեց Համալսարանի իրավաբանական ֆակուլտետում սովորող մի լկտի ու անպատկառ երիտասարդի մասին:

-Տարիներ առաջ, երբ ես էլի Հանրակացարանի պահակ էի,- պատմում է տիկին Էմմանն,- Հանրակացարան էր գալիս մի չար ու անբարոյական տիպ, որն առհասարակ ո՛չ ամոթ ուներ, ո՛չ խիղճ: Կատարյալ մի տականք էր այդ սինքորը: Բոլորին կարողանում էր կարգի հրավիրել, բացի նրանից: Աղջիկներից ոմանք նրա ձեռքին կրակն էին ընկել: Շատերին էր նա խաբել իր օձի լեզվով և կավատի երդումներով: Քանի-քանիսին էր նա դժբախտացրել, քանի հոգու բախտի ու ճակատագրի հետ էր խաղացել: Բորբոսի ու ախտի նման նա ընկել էր մարդկանց մեջ ու գարշահոտություն էր տարածում իր շուրջը: Զարմանալին այն էր, որ նա ինչ այլանդակություն ասես անում էր ու մնում անպատիժ: Բոլորը կարծես վախենում էին նրանից: Համալսարանի ղեկավարությունն անգամ՝ներում էր նրա բոլոր չարագործությունները: Մենակ ես էի, որ չէի հանդուրժում նրա այլանդակությունները: Դիմեցի ոստիկանություն՝ պատժել էդ մարդու

կերպարանքով հրեշին, ոստիկաններն ինձ վրա ծիծաղեցին, ծաղրեցին իմ միամտությունը: Մի օր փորձեցի նրան չթողնել մտնել հանրակացարանից ներս, էդ ավազակը դանակ ցույց տվեց, ինձ շպրտեց մի կողմ ու ներս մտավ: Ես չկարողացա տեսնել, թե նա ինչ այլանդակություններ արեց հանրակացարանում, քանի որ գլուխս կպել էր պատին, ու ես ուշաթափվել էի: Բոլորը խղճում էին ինձ ու զայրանում, բայց ո՛չ օրենքը, ո՛չ էլ մարդիկ չէին կարողանում նրան զսպաշապիկ հագցնել: Նա բացահայտ ու ազատ շարունակում էր շրջապատը թունավորել, աղջիկների պատվի հետ խաղալ: Մինչև այդ պատուհասը «բարով-խերով» ավարտեց համալսարանը ու ռադը քաշեց գնաց:

-Լսի՛ր, Մարիամ,- քսիս նոր զարթնածի նման հանկարծ հարցրեց Արմանը,- տիկին Էմման հո պատահմամբ չի՞ ասել էդ...էդ վիժվածքի անունը:

-Ինչ որ ասել է...որքան հիշում եմ Գեղամ էր ասում:

-Գեղա՞մ,- ոտքը արգելակին դնելով, միանգամից ճռռալով կանգնեցրեց ավտոմեքենան Արմանը ու ճչաց,- ասացիր Գեղա՞մ...

-Քեզ ի՞նչ եղավ, Արմա՛ն, ինչո՞ւ հանկարծ այդպես կանգնեցրիր ավտոմեքենան,- մի քիչ վախեցած ասաց Մարիամը:

Արմանը Մարիամի հարցին չպատասխանեց: Նա համարյա համոզված էր, որ խոսքը Գեղամ Հակոբյանի մասին է: «Ահա որտեղից է սկսվել նրա սրիկայությունը,- ատամներն իրար սեղմեց Արմանը,- մի՞թե քո չարագործություններին վերջ չի լինելու, մինչև ե՞րբ ես դու ծիծաղելու մարդկանց անկարողության և օրենքների թուլության վրա»:

Արմանը, իհարկե, Մարիամին այդ մասին ոչինչ չասաց: Ասեր էլ, միևնույն է, Մարիամը գլխի չէր ընկնի, թե խոսքն ում և ինչի մասին է: Արմանն այլևս մտածելու ժամանակ չուներ: Դիպվածն հենց ինքն էր ոտքով եկել: Պահը կորցնել չէր կարելի: Հարկավոր էր ան-

հապաղ տեսնել այդ տիկին Էմմային: Հարկավոր է մինչև վերջ պարզել այդ անասունի հրեշավոր կերպարանքը:

Արմանն առանց որևէ խոսքի ավտոմեքենան շուռ տվեց հակառակ ուղղությամբ:

-Այդ ո՞ւր,- զարմացավ Մարիամը:

-Ծաղկի խանութ:

-Բայց ինձ ծաղիկ պետք չէ,- ուսերը ձգեց Մարիամը:

-Այդ ծաղիկները քեզ համար չեն,- մեղավոր ժպտաց Արմանը:

-Կարելի՞ է իմանալ՝ ում համար են:

-Տիկին Էմմայի, ես էլ եմ ուզում հնորհավորել նրա յոթանասուն ամյակը, Մարիա՛մ:

Մարիամը խիստ զարմացած էր: Նա չէր հասկանում, թե ինչու Արմանը հանկարծ միտքը փոխեց:

Մտան ծաղկի խանութ: Արմանը մի գեղեցիկ ծաղկեփունջ գնեց, դրեց ավտոմեքենայի ետևի նստարանի վրա և քշեց դեպի տիկին Էմմայի տուն:

Մարիամը չհամբերեց, խոսեց.

-Այս ուշ ժամին, Արմա՛ն, ամոթ չէ՞ գնալ ու մարդկանց անհանգստացնել:

-Ոչինչ, ներողություն կխնդրենք, և նա մեզ կների: Մարիա՛մ, ինձ հարկավոր է հաստատ իմանալ՝ ով է այդ Գեղամը, ինչ է նրա ազգանունը, իմանալ այն աղջիկների մասին, որոնք ընկել են նրա թակարդը:

-Իսկ դրանք քո ինչի՞ն են պետք, Արմա՛ն:

-Մարիա՛մ, իմ մասնագիտությունն է այդպես պահանջում:

Մարիամը հասկացա՞վ, թե՞ չհասկացավ, այլևս հարցեր չտվեց: Միայն եզրակացրեց, որ Արմանը միայն հնորհավորանքի համար չէր գա տիկին Էմմայի մոտ: Մոտավորապես գլխի ընկավ, որ Արմանը տիկին Էմմայի հետ պարզելու ինչ-որ բաներ ունի, այսպես կոչված

մանագիտակա՞ն: Իսկ դա արդեն նրան հետաքրքիր չէր: Այդ պատճառով էլ նա հարցեր չտվեց:

Տեղ հասան: Արմանը դուռը ծեծեց: Ներսից կանացի ձայն լսվեց.

-Ո՞վ է:

-Ես եմ Մարիամը, իմ ընկեր Արմանի հետ:

Տիկին Էմման դուռն իսկույն բացեց:

-Մարիա՛մ,- ուշադիր նայելով այցելուներին՝ ասաց տիկին Էմման,- լավ եք արել, որ եկել եք, բայց ինչո՞ւ այս ուշ ժամին, գուցե բա՞ն է պատահել:

-Չէ՛, տիկի՛ն Էմմա, ոչինչ չի պատահել: Պարզապես Արմանը եկել է ձեր ծնունդը շնորհավորելու:

Արմանը ծաղկեփունջը տվեց տիկին Էմմային:

-Շնորհավորում եմ: Ձեզ առողջություն և երկար տարիների կյանք եմ ցանկանում, տիկի՛ն Էմմա:

-Շնորհակալ եմ, եկեք, նստեցեք: Այս ուշ ժամին նեղություն եք քաշել եկել: Ինչ վառազ էր, կարող էիք վաղն էլ գալ,- ասաց տիկին Էմման:

-Չէ՛, տիկին Էմմա, յոթանասուն ամյակը պետք է նշել նույն օրը, նույն ժամին, դեռ մի ժամ կա,- նայելով ժամացույցին՝ կատակեց Արմանը:

-Ախահի՛տ,- կանչեց տիկին Էմման:

Կողքի սենյակից սիրունատես մի աղջիկ դուրս եկավ:

-Աղջիկս է,- թեքվելով դեպի Արմանը՝ ասաց տիկին Էմման,- ուտելիք, թխվածք դիր սեղանին:

-Չէ՛, ուտելու ոչինչ պետք չէ, տիկի՛ն Էմմա, եթե կարելի է, միայն սուրճ:

Քիչ հետո Ախահիտը սուրճը բերեց: Արմանը նստեց տիկին Էմմայի դիմաց: Վերցրեց սուրճի բաժակը, մի կում արեց և հարցրեց.

-Ինչքան գիտեմ, դուք, տիկի՛ն Էմմա, տարիներ առաջ աշխատել եք իրավաբանական ֆակուլտետի Հանրակացարանում:

-Այո՛, ճիշտ է: Դա յոթանասունականների էր: Ես այնտեղ էլի պահակ էի աշխատում: Բայց ինչի՞ համար եք հարցնում:

-Ես ինքս էլ սովորել եմ իրավաբանակում, բայց Հանրակացարանում չեմ ապրել: Երևի այդ պատճառով էլ ձեզ չեմ հիշում:

-Ես ութսունհինգ թվականին արդեն տեղափոխվել եմ բժշկական ինստիտուտի Հանրակացարան՝ կողքի մանաշենքը:

-Կարելի՞ է հարցնել՝ ինչու իրավաբանականից տեղափոխվեցիք բժշկական Հանրակացարան, չէ՞ որ նույն աշխատանքը պիտի կատարեիք:

-Ճիշտն ասած, ես չուզեցի այդ իրավաբանականում մնալ: Մի անբարոյական տիպ կար, որ աղջիկներին շատ էր նեղությունս տալիս: Ես հաճախ էի կռվում այդ լպիրշ արարածի հետ: Չէի կարողանում տանել նրա լկտիությունը: Բանը նույնիսկ վտանգավոր չափերի էր հասնում: Մի անգամ այդ ստահակը ինձ վրա նույնիսկ դանակ քաշեց: Զզվեցի ու թողեցի գնացի ուրիշ Հանրակացարան:

-Բայց ո՞վ էր այդ ստահակը, անունը հիշո՞ւմ եք՝ ինչ էր, տիկի՛ն Էմմա:

-Ա՛յ, կատվի դրա անունը: Այդ փչացածի անունը Գեղամ էր: Հոր պաշտոնով էր աՀաբեկում սրան-նրան: Հայրը, որքան գիտեմ, Արարատի շրջանի ոստիկանապետն էր: Լկտի ու ամբարտավան այդ Գեղամ կոչվածը, հոր թիւի տակ մնած, խաբում ու խայտառակում էր անմեղ աղջիկներին ու հռհռում նրանց վրա: Չափ ու սահման չկար նրա համար: Օրենքը լռում էր, իսկ էդ սանձարձակը ինչ ուզում անում էր:

-Տիկի՛ն Էմմա,- հարցրեց Արմանը,- ես էլ եմ աշխատել Սիրոգ քաղաքի ոստիկանությունում: Այնտեղ շոշափվում էր հաճախ ոմն Հակոբյանի մասին, հո Հակոբյան չի՞ եղել այդ Գեղամի ազգանունը:

-Հակոբյան էր, այ հիմա հիշեցի, ճիշտ որ Հակոբյան էր, այդ ոչ ու փուչին հենց Հակոբյան էլ ասում էին:

Արմանը վերջնականապես համոզվեց, որ խոսքը ոստիկանության մայոր Գեղամ Հակոբյանի մասին է: Բայց նրան ուրիշ բան էլ էր հետաքրքրում: Նա ուզում էր իմանալ, թե այդ Գեղամի ուսանող ընկերներից ովքեր են եղել, որ սատարել են նրան: Ինչ շրջապատի օգնությամբ է նա կարողացել կատարել իր անիրավությունները: Ովքեր են եղել նրա պաշտպանները: Այդ նպատակով նա հարցրեց.

-Տիկի՜ն Էմմա, այնուամենայնիվ, նա՝ այդ Գեղամը մենակ չէր կարող այդքան անիրավություններ անել, եթե իր նման ընկերներ չունենար: Նա ի՞նչ ընկերներ ուներ, ովքե՞ր էին դրանք: Կարո՞ղ է՝ նրանցից առավել նշանավորներից մեկ-երկուսին հիշեք:

-Այո՛, նա ուներ իր ընկերները: Նա իր անօրեն գործերում մենակ չէր: Օրինակ՝ նրա հետ էին իր հայրենակիցներից մի երկու հոգի: Նրանցից մեկը Գեղամի նման մի շփացած անամոթ էր, Գեղամի հետ նույն դպրոցում էի սովորել և միշտ Գեղամի հետ էր: Նա էլ պակաս անբարեն ու լկտին չէր: Ինչ անպատկառություն անում, միասին էին անում:

-Տիկի՜ն Էմմա, Գեղամի հետ միասին սովորած ընկերոջ անունը կարո՞ղ է իմանաս,- հարցրեց Արմանը:

-Չէ՛, չեմ հիշում, բայց սպասիր, նա մի հայ նշանավոր նկարչի անունն էր կրում...

-Գուցե Մարտիրո՞ս էր նրա անունը:

-Չէ՛, Մարտիրոս չէր...Հաստատ Մարտիրոս չէր...Դրա նման մի անուն էր: Հիմա կհիշեմ... Դե հայտնի էլ ի՞նչ նկարիչներ կան...

-Դե ասենք Վարդգես, Հակոբ, Մինաս...

-Վերջինն ի՞նչ ասացիր...

-Ասացի Մինաս:

-Ա՜յ, ապրես, հենց էդ է, որ կա՝ Մինաս: Նրան ասում էին Մինաս,- ժպտաց տիկին Էմման ու լռեց:

-Շնորհակալություն, տիկի՛ն Էմմա, ամեն ինչի համար շնորհակալություն, իսկ հիմա թույլ տվեք՝ մենք գնանք, արդեն շատ է ուշ:

Արմանը Մարիամին ուղեկցում է մինչև նրա բնակարանը: Ամբողջ ճանապարհին Արմանի միտքը զբաղված էր մի կարևոր հարցով՝ ահա թե ովքեր են Գեղամ Հակոբյանը և Մինաս Դաբաղյանը:

«Ինձ համար շատ բան պարզվեց,- մտածում էր նա,- ես ի վերջո հասկացա, թե որտեղից է գալիս Գեղամ Հակոբյանի ամբարտավանությունն ու լկիրշությունը: Ահա թե ով է եղել նա դեռևս ուսանողական տարիներին, ինչ դաստիարակություն է ստացել իր պաշտոնյա հոր կողմից: Ահա թե ինչ ճանապարհով է Գեղամ Հակոբյանը չարիք դարձել շրջապատի և առհասարակ հասարակության համար: Մի բան էլ հասկանալի է, որ նրան խրախուսել են իր շրջապատի փչացած ընկերները, այնպիսին, ինչպիսին եղել է նրա վաղեմի դասընկեր Մինաս Դաբաղյանը: Հենց նրա աջակցությամբ է Գեղամ Հակոբյանը փրկվել քրեական պատասխանատվությունից: Նա է որպես դատաբժշկական հանձնաժողովի նախագահ ստորագրել Շավարշ Ղազարյանի ինքնասպանության վերաբերյալ կազմված կեղծ ակտը: Ահա թե ինչու է, որ այսքան ժամանակ մենք փնտրում ու չենք կարողանում գտնել նրան: Ուրեմն մայոր Հակոբյանը նախապես հանդիպել է իր հանցակից ընկերոջ՝ Դաբաղյանի հետ և նրան ստիպել ժամանակավորապես անհետանալ տեսադաշտից: Պարզ է»:

Արմանը, Մարիամին հասցնելով նրա բնակարանը, անհապաղ վերադարձավ: Գիշերը անհանգիստ քնեց: Առավոտյան նա սովորականից շուտ գնաց աշխատանքի: Վահանը դեռ չէր եկել: Նա անհամբեր սպասում էր Վահանի գալուն: Պարապ չմնալու համար սուրճի պատրաստություն տեսավ: Սուրճն արդեն պատրաստ էր, երբ Վահանը եկավ:

-Բարի լույս, Արմա՛ն, սուրճի համ եմ զգում:

-Այո՛, շե՛ֆ, սուրճը պատրաստ է, նստիր խոսելու բան կա:

Վահանը նստեց, սպասեց Արմանի խոսքին: Արմանը սուրճը բերեց, դրեց սեղանին: Վահանը չհամբերեց, հարցրեց.

-Լսում եմ, Արման, ի՞նչ պիտի ասես:

-Երեկ Մարիամի հետ եղա տիկին Էմմայի մոտ, նրանց տանը:

-Տիկին Էմման ո՞վ է,- զարմացավ Վահանը:

-Իրավաբանական ֆակուլտետի ուսանողական հանրակացարանի պահակը:

-Հետո ի՞նչ,- շեշտեց Վահանը:

Ու Արմանը պատմեց իր և տիկին Էմմայի միջև կայացած զրույցի մասին:

Վահանը մի քիչ մտածեց, հետո ասաց.

-Արմա՛ն, մենք պետք է գտնենք այդ Մինաս Դաբաղյանին, որտեղ էլ լինի, ինչ գնով լինի: Իսկ ի՞նչ ես կարծում, եթե հարկ լինի, այդ տիկին Էմման դատարանում ցուցմունք կտա՞, թե՞ կհրաժարվի:

-Չեմ կարծում, որ հրաժարվի,- ասաց Արմանը:

-Լավ, կփորձենք, ուրիշ ճանապարհ չկա,- խոսեց Վահանը,- պետք է գտնել Մինաս Դաբաղյանին: Նա կարող է ճիշտը պատմել: Բայց ինչպե՞ս գտնել:

Առավոտյան տիկին Գայանե Թումանյանի աշխատասենյակի դուռը ծեծեցին:

-Մտեք,- ասաց տիկին Թումանյանը և դռների մեջ նկատելով ԱՊՀ-ի հետ համագործակցության բաժնի պետ պարոն «Բերդին»՝ բացականչեց,- ա, այդ դո՞ւ ես: Ողջույն, քաջարի ազատամարտիկ և պետական գործիչ «Բերդին», համեցեք, համեցե՛ք:

-Իմ անկեղծ ու սրտաբուխ ողջույնը փառահեղ տիկին Գայանե Թումանյանին,- պատասխանեց «Բերդը» և նստեց մոտիկ աթոռին,- ինչպե՞ս են գործերը:

-Գործերն ընթանում են իրենց բնական հունով, «Բերդ», կարո՞ղ եմ իմանալ՝ ինչ գործով ես ժամանել ինձ մոտ:

-Ես, տիկի՛ն Գայանե, եկել եմ բոլորովին ուրիշ մտահոգությամբ:

-Ես համակ ուշադրությամբ լսում եմ:

-Իմ մտահոգությունը դարձյալ կապված է Շավարշ Ղազարյանի սպանության հետ,- ասաց «Բերդը»:

-Խնդրեմ ներկայացրեք,- պատրաստակամ ասաց տիկին Թումանյանը:

-Կարճ ասեմ, տիկի՛ն Գայանե, հարկավոր է շտապ գտնել Մինաս Դաբաղյանին՝ Մյամնիկյանի շրջանի դատաբժշկական հանձնաժողովի նախագահին, որն ստորագրել է Շավարշ Ղազարյանի ինքնասպանությունը հաստատող ակտի տակ:

Տիկին Թումանյանը միանգամից զգաստացավ, ձեռքը տարավ դեպի գրաֆինը, մի կես բաժակ ջուր լցրեց, մի երկու կում արեց և ուշադիր նայեց «Բերդի» դեմքին:

-Ուրեմն՝ ասում ես այդ կեղտոտ ոչնչությունը պետք է գտնել: Իսկ նա ի՞նչ է, Երևանում չէ՞:

-Ոչ միայն Երևանում չէ, այլև Հայաստանում չէ:

-Դրանք ստուգված ու ճշտված տվյալնե՞ր են, թե՞ ենթադրում ես:

-Չէ՛, ստուգված, ճշտված է մինչև վերջը, մեր մարդիկ բնակավայրերում եղել են: Դաբաղյանը ոչ մի տեղ չկա:

-Իսկ նրա բնակարանո՞ւմ էլ ոչ ոք չկա,- հարցրեց տիկին Թումանյանը:

-Բնակարանը մշտապես հսկողության տակ է: Այնտեղ ոչ մեկը այսօրվա դրությամբ չի ապրում: Կինն ու աղջիկն էլ չկան, կարծես գետնի տակ են անցել: Տիկի՛ն Թումանյան, հարկավոր է, որ դու զանգես Թբիլիսի՝ Վրաստանի պետական անվտանգության կոմիտեի նախագահի տեղակալ պարոն Վախթանգ Կոտրիկաձեին:

-Զանգելը կզանգեմ, դա իրենից մի առանձին դժվարություն չի ներկայացնում, բայց ինչո՞ւ Վրաստան, չեմ հասկանում:

-Մեր տվյալներով այդ Մինաս Դաբաղյանը պետք է, որ գտնվի Վրաստանում: Ըստ տեղեկությունների նա իր ընտանիքով տեղափոխվել է Վրաստան: ՈՒրեմն նրան հենց այնտեղ էլ պետք է փնտրել:

-Հասկանալի է: Լավ, «Բերդ», դու գնա, ես կզանգեմ Թբիլիսի՝ Կոտրիկաձեին: Հենց որ տեղեկություն իմանամ, ես այդ մասին իսկույն տեղյակ կպահեմ քեզ:

«Բերդի» գնալուց հետո տիկին Թումանյանն ընկավ մտքերի մեջ:

« Ուրեմն սա կազմակերպված գործ է: Էդ Դաբաղյան կոչվածը ինքնակամ չէր թողնի գնար Հայաստանից: ՈՒրեմն նրան ստիպել են: ՈՒրեմն նրա ետևին կանգնած մութ ուժեր կան: Շատ հնարավոր է, որ այդ մարդկանցից մեկը հենց այդ սրիկա Գեղամ Հակոբյանը լինի...»

Տիկին Թումանյանը զանգեց Թբիլիսի:

-Գամար ջոբա, բատոնո Կոտրիկաձե, ես եմ Գայանե Թումանյանը Երևանից: Ինչպե՞ս եք ձեզ զգում: Գործերը ո՞նց են:

-Օ՛, տիկին Թումանյան, որքա՜ն հաճելի է ձեր ձայնը լսել, ԱՊՀ-ի երկրների գեղեցկուհի, իմացիր, որ ես քեզ շատ, շատ եմ սիրում, իսկ հիմա մեծ հաճույքով լսում եմ քեզ և անհանգստանում՝ ինչ է պատահել:

-Շնորհակալություն՛, բատոնո Կոտրիկաձե, ես զգացված եմ ձեր ջերմ խոսքերի համար: Ինչպե՞ս են ձեր տիկինը, երեխաները:

-Շնորհակալ եմ, տիկի՛ն Թումանյան, բոլորն էլ լավ են, ողջ ու առողջ, նույն էլ քեզ եմ ցանկանում:

-Բատոնո Կոտրիկաձե, ես ձեզ զանգել եմ մի կարևոր հարցով: Վերջերս մի մարդ՝ Մինաս Դաբաղյան անուն-ազգանունով, ընտանիքով տեղափոխվել է Վրաստան՝ ամենայն հավանականությամբ Բաթումի: Մեզ պետք է գտնել նրան: Դուք այդ հարցում կարո՞ղ եք օգնել մեզ:

-Իհարկե, կարող եմ: Մեզ մոտ այդպիսի հարցերով հենց ես եմ զբաղվում: Միայն դուք պետական հետախուզում հայտարարեք, այդ մարդու բոլոր տվյալներով, և մենք մեկ-երկու շաբաթում կգտնենք նրան, եթե նա իրոք գտնվում է Վրաստանի սահմաններում:

-Բատոնո Կոտրիկաձե,- ասում է տիկին Թումանյանը,- ինձ թվում է՝ պետական հետախուզում հայտարարել պետք չէ: Այլ կերպ ամեն ինչ պետք է կատարվի սուսուփուս, ներքին կարգով, գործի նրբությունն է այդպես պահանջում: Դուք ձեր մարդկանցով ուղղակի գտեք նրան, տեղեկացեք՝ որտեղ է նա, մնացած հարցերը մենք ինքներս կլուծենք: Իմ տղաները նրան իսկույն կտեղափոխեն Հայաստան:

-Շատ լավ, տիկի՛ն Թումանյան, ես քեզ հասկացա: Կզանգեմ: Բարևիր քո ընտանիքի անդամներին, իմ հայ ծանոթներին և ընկերներին:

-Շնորհակալ եմ ձեր պատրաստակամության համար,- ասաց տիկին Թումանյանը,- սպասում եմ ձեր պատասխանին: Ցտեսություն:

Հեռախոսային այս խոսակցությունը տիկին Թումանյանը և բատոնո Կոտրիկաձեն վարում էին հայերենով:

Պարոն Վախթանգ Կոտրիկաձեի հայրական տունը գտնվում էր Թբիլիսիի Հավլաբար թաղամասում: Վախթանգի մանկությունը անցել էր այդ թաղամասում հայ մանուկների շրջապատում: Նրա ընկերների մեծ մասը հայեր էին: Կոտրիկաձեն փայլուն կերպով տիրապետում էր հայոց լեզվին: Հավլաբարի տեղական անշուք մարզադաշտում նա մեծ մասամբ հայ տղաների հետ էր ֆուտբոլ խաղում: Կոտրիկաձեն ֆուտբոլ լավ էր խաղում, այնքան լավ, որ տղաները նրան «Կիպիանի» էին ասում նկատի ունենալով վրացի հայտնի ֆուտբոլիստ Դավիթ Կիպիանիին: Նրա հայրը՝ Դաթո Կոտրիկաձեն, իրավաբանական գիտությունների դոկտոր էր: Հոր խորհրդով Կոտրիկաձեի որդին ընդունվում է Թբիլիսիի համալսարանի իրա-

վաբանական ֆակուլտետը և սովորում Գայանե Թումանյանի հետ նույն կուրսում: Վախթանգը շուտով մինչև ականջների ծայրը սիրահարվում է գեղեցկուհի Գայանեին: Վախթանգը երկար ժամանակ սիրահետում է հայ գեղեցկուհուն, բայց Գայանեն մերժում է նրան: Վաղուց նրա սիրտը փշրել էր ոմն սրիկա և ջախջախել նրա զգացմունքները: Չնայած Գայանեն մերժեց Վախթանգի սերը իր նկատմամբ՝ բայց նրանք մեկընդմիշտ մնացին որպես մտերիմ ընկերներ:

Համալսարանն ավարտելուց հետո Գայանեն վերադարձավ Հայրենի Կիրովական: Այստեղ նա աշխատեց քիմիական գործարանում որպես իրավաբան: Այդ ժամանակ իրար հանդիպեցին Գայանեն ու Կարենը: Կարենն աշխատում էր Կիրովականի քաղխորհրդում:Նա իրավաբանության գծով ասպիրանտ էր: Շուտով Կարենն ու Գայանեն ամուսնանում են: Ծնվում է նրանց դուստրը՝ Վիկտորիան: Ապրում են հաշտ ու համերաշխ չորս հոգով՝ ինքը, ամուսինը, Վիկտորիան ու Գայանեի որդին, որն իր հորը չի ճանաչում: Կարենը տարբերություն չէ դնում իր դստեր և որդու միջև՝ նրանց երկուսին էլ համարելով իր զավակները:

Հինգ օր հետո պարոն Կոտրիկաձեն զանգում է տիկին Գայանեին:

-Աչքդ լույս, Գայանե՛, մենք քո ուզած մարդուն գտել ենք:

-Որտե՞ղ,- ակամա բացականչում է տիկին Թումանյանը:

-Պատկերացնո՞ւմ ես՝ նրան գտել ենք Բաթում քաղաքի մերձակայքում մի կորած ու խուլ գյուղում: Առոք-փառոք ապրում են մի վրացի մարդու սեփական տանը: Մեր տղաները նրանց անընդհատ հսկողության տակ են պահում: Հայրը տնից դուրս չի գալիս: Ամենրաժեշտ գնումները կինն ու աղջիկն են անում: Ձեր տղաներին մերոնք կսպասեն Ախալքալաք-Բաթումի մայրուղու վրա: Մնացած հարցերը, եթե առաջանան, կճշտենք հետո, պայմանների հետ կապված:

-Շատ բարի, բատոնո Կոտրիկաձե: Մեր տղաները Երևանից դուրս կգան այսօր երեկոյան՝ ժամը չորսի-հինգի սահմաններում: Կապի մեջ կլինենք, ես ձեզ ամեն ինչի համար կզանգեմ: Շնորհակալ եմ: Ցտեսություն:

-Եղավ, տիկի՛ն Գայանե, առայժմ:

Տիկին Թումանյանը շտապ զանգեց «Բերդին».

-Արի՛ ինձ մոտ:

Շանցած կես ժամ «Բերդը» եկավ: Նայեց տիկին Թումանյանի սիրուն, փայլող աչքերին ու հասկացավ, որ նա ուրախ լուր ունի հայտնելու: «Բերդը» նստեց և հարցական նայեց տիկին Թումանյանին:

-Ի՞նչ լուր Վրաստանից:

-«Բերդ», միանգամից ասեմ, որ պարոն Մինաս Դաբաղյանը, որին փնտրում ենք, արդեն հայտնաբերվել է և գտնվում է բատոնո Կոտրիկաձեի հսկողության տակ,- անթաքույց ուրախությամբ ասաց տիկին Թումանյանը և վերցրեց մի թուղթ և գրեց հասցեն,- երեկոյան ժամը չորսին քո տղաներին ուղարկում ես Վրաստան ահա այս հասցեով: Տղաներին զգուշացնում ես, որ նրա նկատմամբ ուժ չգործադրեն: Ընտանիքի անդամներին էլ չվիրավորեն:

-Տիկին Գայանե,- գոհունակության ժպիտը դեմքին՝ ասաց «-Բերդը»,- իմ տղաներին ոչ թե կուղարկեմ, այլ ես ինքս կգնամ նրանց հետ:

-Ի՞նչ է, «Բերդ», դու կասկածո՞ւմ ես քո տղաների հավատարմության վրա,- հանդիմանեց տիկին Թումանյանը:

-Չէ՛, չեմ կասկածում, ուղղակի ուզում եմ ամեն ինչ իմ ձեռքով լինի:

-Չէ՛,- հորդորում է տիկին Թումանյանը,- քո գնալը պետք չէ: Քո գնալը ավելորդ կասկածանքների տեղիք կտա: Թող ամեն ինչ հաշտ ու համերաշխ, խաղաղ ընթանա: Ուղարկիր տղաներին, հանգիստ, առանց հուզումների: Նման գործերում անձնական վերաբեր-

մունքը պետք է մի կողմ դնել և առաջնորդվել սառը դատողությամբ:

-Եղավ,- համաձայնվում է «Բերդը»,- դու ավելի դիվանագիտորեն ես մտածում քան ես:

-Հիմա,- շոյվում է տիկին Թումանյանը,- ազատ ես, կարող ես հանգիստ գնալ և սպասել քո ուղարկած տղաների հաջող վերադարձին:

-Շնորհակալ եմ, տիկի՛ն Գայանե,- տեղից վեր կենալով ասում է «Բերդը»,- շատ եմ շնորհակալ:

-Շնորհակալության կարիք չկա, «Բերդ», և գիտե՞ս ինչի համար:

Բերդը կկոցում է աչքերը, մտասևեռ նայում տիկին Թումանյանին.

-Ինչի՞ համար:

-Այն բանի համար, «Բերդ», որ այս գործում քեզնից էլ ավել ես եմ շահագրգռված, իսկ թե ինչու, այդ մասին հետո: Իսկ այս պահին միայն իմացիր, որ ես քեզնից ավելի շատ եմ ցանկանում, որ օրենքի ամբողջ ուժով պարզվի Շավարշ Ղազարյանին սպանող սրիկան:

«Բերդը» առաջին անգամ զգաց, որ տիկին Թումանյանն իրենից ինչ-որ կարևոր բան է թաքցնում: Իսկ թե ինչ, նա այդ պահին իմանալ չէր կարող:

«Բերդը» ուղիղ ժամը հինգին չորս երիտասարդներ՝ սև գույնի «Ֆիատ» ավտոմեքենայով, ուղարկեց Վրաստան:

Մաքսատանը ուշացումներ չեղան, քանի որ «Բերդը» նախօրոք զանգել էր, զգուշացրել: Ժամը տասին Հասան Ախալքալաք: Այստեղ կանգնեցին: Որոշեցին մտնել մայրուղու մոտ գտնվող սրճարանը: Չորս բաժակ սուրճ պատվիրեցին: Սուրճը խմեցին, հանգստացան ու շարժվեցին դեպի Բաթում: Երկու ժամ հետո Հասան Բաթում, որտեղից մինչև գյուղ, որտեղ ապրում էր Մինաս Դաբաղյանը, ընդամենը մի քանի կիլոմետր էր: Այդտեղ էլ սրճարան կար: Մ-

տան սրճարան, ոչ այնքան սուրճ խմելու, որքան զանգելու համար: Զանգեցին Մինաս Դաբաղյանին հսկող վրացի տղաներին, որոնց հասցեն «Բերդն» էր տվել: Պայմանավորվեցին՝ որտեղ հանդիպեն: ՏանՀինգ րոպեից հետո «Տոյոտա» ավտոմեքենայով եկան երկու վրացի երիտասարդ:

-Գամար ջոբա,- բարևեց վրացի տղաներից մեկը:

-Գամար ջոբա՛,- պատասխանեցին հայ տղաները:

-Որքան մեզ հայտնի է, դուք ուզում եք տեսնել Մինաս Դաբաղյանին,- ասացին վրացիները:

-Այո՛, մենք նրան պիտի տեսնենք ու նրան պիտի տանենք Հայաստան:

-Մենք ձեզ կուղեկցենք մինչև դիմացի գյուղը և ցույց կտանք այն տունը, որտեղ ապրում է Մինաս Դաբաղյանն իր ընտանիքով,- ասացին վրացիները:

Վրացի վարորդը ավտոմեքենան շուռ տվեց դեպի գյուղ, հայ տղաները հետևեցին նրան: Հասան միՀարկանի բավական ընդարձակ մի տան բան:

Վրացի վարորդն ասաց.

-Ահա այս տանն են ապրում: Երևի հիմա քնած են: Կարող եք ներս մտնել և համոզվել:

Վրացի տղաները, իրենց գործն ավարտված համարելով, թողեցին գնացին: Հայ տղաները մտան ներս: Օրվա այդ ժամին բոլորն արդեն քնած էին: Տղաները նայում են իրար երեսի, հասկացնում իրար, որ հարկավոր է առանց իրարանցման նախապես կազմված ծրագրով քնաբեր ներարկել նրանց, թե չէ զարթնելուն պես կվախենան, ճիչ ու աղմուկ կբարձրացնեն: Այդպես էլ անում են, ընդ որում Մինաս Դաբաղյանին երկու բաժին քնաբեր ավել են ներարկում քան կնոջն ու աղջկան: Այդպես քնած-քնած էլ նրան վերցնում տեղավորում են ավտոմեքենայի մեջ՝ կնոջն ու աղջկան թողնելով պառկած և քշում դեպի Հայաստան: Պայմանավորվածության համաձայն

խորն ու Հանգիստ քնած Մինաս Դաբաղյանին տանում Հասցնում էն իր Ննջարանի փափուկ մահճակալին, Հետո զանգում «Բերդին»:

-Բարի լույս, պարո՞ն «Բերդ», մենք անփորձ ու անվնաս եկել Հասել էնք Հայաստան և Հիմա գտնվում էնք Մինաս Դաբաղյանի տանը: Սպասում էնք ձեր Հետագա ցուցումներին՝ ինչ անենք:

-Ապրեք, տղաներ, այժմ ձեզանից թող երկուսը մնան Մինասի մոտ, դուք աչքներդ անընդհատ Մինասի վրա պահեք, չասեք, թե քնած է: Ուշադիր եղեք, կարող են անսպասելի բաներ լինել: Դուք ինձ Հասկացա՞ք:

-Ամեն ինչ Հասկանալի է, շե՛ֆ, ինչպես ասացիր, այդպես էլ կանենք:

Մի քանի ժամից Հետո Մինաս Դաբաղյանը խոր քնից արթնացավ, նայեց շուրջը:

-Բարի լույս, պարո՞ն Դաբաղյան,- ասաց երիտասարդներից մեկը:

-Բարի լույս,- ակամա պատասխանեց Դարբինյանը և ինչ-որ բան Հիշելով՝ ասաց,- ես այս որտե՞ղ եմ:

-Դուք Երևանում էք, ձեր բնակարանում:

-Երևանում ի՞նչ գործ ունեմ: Ես պիտի Վրաստանում լինեմ,- արդեն ամբողջովին զգաստացած՝ ասաց Դաբաղյանը:

-Այո՛, դուք մի քանի ժամ առաջ Վրաստանում էիք, իսկ Հիմա Երևանում էք, ձեր Հայրենի քաղաքում,- քամահրեց երիտասարդը,- ձեզ ոչ ոք չի ստիպել, դուք ձեր կամքով էք եկել ձեր տուն: Ի՞նչ է, վա՞տ է, որ դուք Հիմա ձեր տանն էք: Դուք, Հարգելիս, կարևո՛ր դեմք էք, պիտի կարևոր փաստաթղթեր ստորագրեք:

-Դուք կատակում էք, իսկ իմ սրտից արյուն է կաթում, երիտասարդ, ուզում եմ իմանալ՝ ես ինչ Հրաշքով եմ Հայտնվել այստեղ:

-Երևի չեք Հիշում: Դուք զանգել էք մեզ, մենք էլ եկել էնք ու ձեր ցանկությամբ բերել էնք այստեղ: Մի՞թե ձեզ Համար Հաճելի չէ գտնվել այստեղ՝ Երևանում՝ ձեր տանը... Լավ, Հիմա վեր կացեք,

լվացվեք, նախաճաշեք և զանգեք ձեր կնոջն ու աղջկան: Երևի նրանք այնտեղ անհանգստանում են ձեզ համար: Նրանց հայտնեցեք, որ կարևոր գործով եկել եք Երևան և շուտով ետ եք վերադառնալու:

Պարոն Մինաս Դաբաղյանը գլխի ընկավ, որ իրեն անգիտակից վիճակում Վրաստանից փախցրել բերել են, ու ինքը ոչնչից տեղյակ չէ: Եվ այս երիտասարդ մարդիկ, որ հիմա այսքան բարեհաճ խոսում են իր հետ, գաղտնի գործակալներ են և իրեն առջևում դեռ նոր ու ծանր փորձություն է սպասվում: Այդ պատճառով էլ նա առանց ձայն հանելու, սուսուփուս գնաց լվացարան և սկսեց դանդաղ լվացվել: Նա արդեն համոզված էր, որ ինքն այժմ գտնվում է կալանավորվածի կարգավիճակում և այլևս փախչել հնարավոր չէ: Իրեն մնում է միայն ենթարկվել և սպասել գործերի հետագա ընթացքին: Տղաները թեյ պատրաստեցին, ձվածեղ արեցին և սկսեցին նախաճաշել: Մինասը զանգեց Վրաստան՝ կնոջն ու աղջկան, և հավատցրեց նրանց, որ ոչինչ չի եղել, թող չանհանգստանան:

Իսկ կինը հեռախոսի մյուս ծայրում ճչում, աղաղակում էր.

-Այ տղա, անգանգիստ մեռնում ենք, ասա՝ քեզ հետ ինչ է պատահել: Դա ի՞նչ հանկարծակի բացակայություն է, կարո՞ղ ես բացատրել: Լսի՛ր, գուցե խաբում ես, ներվերի հետ ես խաղում:

-Չէ՛, իրոք, ես հիմա Երևանում եմ,- Դաբաղյանը փորձում էր հանգստացնել կնոջը և աղջկան,- առավոտ շուտ զանգեցին, թե կարևոր գործ կա, ես էլ ձեզ չարթնացրի: Կարևոր փաստաթղթեր կային, պիտի ստորագրեի... Մի երկու օրից կլինեմ ձեզ մոտ, ցտեսություն:

Դաբաղյանը հեռախոսափողը դանդաղ դրեց իր տեղը, նայեց երիտասարդներին և ընկճված ձայնով հարցրեց.

-Հիմա ես ի՞նչ եմ անելու:

-Հիմա՞,- ժպտաց երիտասարդներից մեկը,- հիմա հանգստանալու ես, բազմոցին պառկելու ես ու հեռուստացույց ես նայելու, որից հետո հյուրեր են գալու քեզ մոտ, անսպասելի հյուրեր...

-Ներողություն, կարելի՞ է իմանալ՝ դուք ովքեր եք,- ասաց Դաբաղյանը:

-Մե՞նք, մենք ընդամենը Հրաման կատարողներ ենք: Մեզ ինչ որ հրամայում են, այն էլ անում ենք: Մեզ կարգադրել են՝ ձեզ լավ պահենք, վերաբերվենք հարազատի նման: Մի՛ վախենա, մեզնից վտանգ չկա: Ձեզ հետ ինչ որ լինի, հետո է լինելու: Իսկ թե ինչ, մենք դա չգիտենք և իմանալ չենք կարող:

Այդ նույն ժամանակ դատապաշտպան Վահան Դարբինյանն ու նրա օգնական Արման Աբրահամյանը շարունակում էին փնտրել Մինաս Դաբաղյանին: Երկուսով վաղ առավոտյան եկել էին դրասենյակ և մտածում էին, թե հետո ինչ են անելու, երբ հնչեց հեռախոսը: Դարբինյանն այն վերցրեց:

-Լսում եմ, ո՞վ է խոսում:

-Պետական անվտանգության կոմիտեից է: Դո՞ւք եք պարոն Դարբինյանը:

-Այո՛, ես եմ: Ես ձեզ ուշադիր լսում եմ:

-Մեզ հայտնի է, պարոն Դարբինյան, որ դուք փնտրում եք դատաբժշկական հանձնաժողովի նախագահ պարոն Մինաս Դաբաղյանին, ճի՞շտ է:

-Միանգամայն ճիշտ է,- պատասխանում է Դարբինյանը,- իսկ ո՞վ է խոսում:

-Ձեր բարին կամեցող պատասխանատու մի մարդ: Ես պետք է ձեզ ասեմ, որ այս պահին, պարոն Դարբինյան, Մինաս Դաբաղյանը գտնվում է իր բնակարանում: Եթե ցանկանում եք, կարող եք նրա հետ հանդիպել:

-Իհարկե, իհարկե,- ասում է Դարբինյանը,- դա մեզ շատ պետք է:

-Այդ դեպքում ձեզ հարմար ժամի կարող եք այցելել նրան: Նա իր տանն է:

Դարբինյանը հեռախոսն անջատեց: Արմանը սրճեփը ձեռքին ներս մտավ:

-Այդ ո՞ւմ հետ էիր խոսում, Վահա՛ն:

-Արման,- բացականչեց Վահանը,- փոխանակ մենք գնանք որսի հետևից, որն իր ոտով եկել է մեզ մոտ: Մինաս Դաբաղյանը գտնվել է:

-Որտե՞ղ,- ճչաց Արմանը:

-Որտեղից՝ չգիտեմ, բայց նա հիմա գտնվում է իր բնակարանում: Այլևս սպասելու բան չկա, Արման, ես գնում եմ նրա մոտ:

-Ես էլ եմ գալիս,- ասում է Արմանը:

-Չէ՛, Արմա՛ն, դու մնա գրասենյակում, այստեղ էլ գործերը քիչ չեն: Վահանն անմիջապես ավտոմեքենան նստում ու սլանում է Կոմիտասի փողոց: Բնակարանի մոտ նրան կանգնեցնում է մի երիտասարդ:

-Ո՞ւր եք գնում:

-Գնում եմ Մինաս Դաբաղյանի մոտ, քիչ առաջ զանգեցին, որ նա այստեղ է:

Երիտասարդը լայն ժպտաց և դուռը բացեց նրա առջև: Վահանը նորս մտավ: Նա իր դիմաց տեսավ կիսաճաղատ մի մարդու, որ նստած հեռուստացույց էր նայում:

-Բարև՛ ձեզ, դուք Մինաս Դաբաղյա՞ն եք:

-Այո՛, է՛ս եմ: Իսկ դուք ո՞վ եք:

-Ե՛ս,- նստելով բազկաթոռին՝ ասաց Դարբինյանը,- ես տիկին Տատյանա Տարասովյանի դատապաշտպանն եմ: Գիտե՞ք այդպիսի կնոջ: Նա վաղամեռիկ Շավարշ Ղազարյանի կինն է:

-Չէ՛, չգիտեմ: Բայց դա ի՞նչ կարևո՞ր է: Ես լսում եմ ձեզ:

Վահանը նկատեց, որ դիմացինն այնքան էլ հուզված չէ, իր անակնկալ ներկայությունից: Իրեն պահում է սովորական՝ հանգիստ, անվրդով:

-Որպես դատապաշտպան՝ ես ձեզ մի քանի հարց ունեմ տալու:

-Խնդրեմ, խնդրեմ: Ես պատրաստ եմ ձեր տված յուրաքանչյուր հարցին պատասխանելու:

Դարբինյանը մի պահ լռեց՝ սպասելով դիմացինի արձագանքին: Բայց վերջինիս դեմքի արտահայտությունից բան չհասկացավ:

-Դո՞ւք եք ստորագրել Շավարշ Ղազարյանի ինքնասպանությունը հաստատող դատաբժշկական հանձնաժողովի եզրակացության մանրագիտական ակտը,- միանգամից հարցրեց Դարբինյանը:

-Այո՛, ես եմ ստորագրել, իսկ ի՞նչ կա որ,- խոսքը ձգեց Դաբաղյանը՝ կողքանց նայելով դիմացինին:

-Օրվա ո՞ր ժամին եք ստորագրել, կարո՞ղ եք հիշել:

Դաբաղյանը մի պահ լռելուց հետո պատասխանեց:

-Չեմ հիշում, երևի առավոտյան՝ աշխատանքներն ավարտելուց հետո:

-Ավարտելուց հետո՞, թե՞ ավարտելուց առաջ:

-Դա, կներե՛ք, խորամանկ հարց է: Ի՞նչպե՞ս կարող էի փաստերն ստուգելուց առաջ ես ստորագրեի նման պատասխանատու ակտը: Չէ՛, ոչ մեկի հետ պայմանավորվածություն չի եղել: Մենք մեր մասնագիտական գործն ենք կատարել:

-Ինքնասպանությունը հաստատող նկարահանումներ արե՞լ եք:

-Անպայման: Առանց դրա մենք եղածը հաստատել չէինք կարող:

-Իսկ ուրիշ էլ ինչո՞վ եք հաստատել, որ դա, իրոք, ինքնասպանություն է եղել:

-Շավարշ Ղազարյանի պարանոցին պարան է եղել: Դա նույնպես ապացույց էր այն բանի, որ նա իրեն պարանով է կախել:

-Ո՞վ կամ ովքե՞ր են առաջինը նկատել սպանվածի վզի պարանը:

-Հերթապահ ոստիկանները: Հենց նրանք էլ կտրել են պարանը և արդեն անշնչացած Շավարշին իջեցրել գետնին:

-Դուք դատարանո՞ւմ էլ կհաստատեք, որ դա, իրո՛ք, ինքնասպանություն է եղել:

-Անպայման, ես դա ամենուրեք կհաստատեմ:

-Իսկ չե՞ք վախենում պատասխանատվությունից,- Դարբինյանը տվեց վերջին հարցը:

-Ո՛չ, ես իմ ստորագրության համար պատասխանատու եմ:

-Վե՛րջ: Այլևս հարցեր չունեմ: Ցտեսություն,- ասաց Վահանը և դուրս եկավ Դաբաղյանի բնակարանից:

Վահանը Դարբինյանը Դաբաղյանի մոտից դուրս եկավ մի տեսակ թևաթափ եղած: Թեթևակի այդ հարցաքննությունից հետո նա ոչինչ նոր բան չէր կարողացել պարզել: Իրար հետևից տրված խաչաձև հարցերը ոչ մի լուրջ եզրակացության չհանգեցրին: Նա զարմացել էր հատկապես Դաբաղյան ինքնավստահությունից: Վահանը համոզված էր, որ Դաբաղյանը ստում է, ոչինչ ճիշտ չի ասում: Բայց որտեղի՞ց նրան այդպիսի ամբարտավան վերաբերմունք: Ամեն ինչից երևում էր, որ Դաբաղյանը համոզված է, որ շատ հեշտությամբ դուրս է պրծնելու պատասխանատվությունից, որ ինքը կարողանալու է կեղծության տակից դուրս գալ:

Վահանը գնում էր դեպի գրասենյակ և ամբողջ ճանապարհին մտածում էր իր ձեռնարկած գործի հաջողության մասին: Եվ ինչ էլ մտածում էր, գալիս կանգ էր առնում Գեղամ Հակոբյանի վրա: Նա ամբողջ էությամբ զգում էր, որ այս կծիկի ծայրը նրա ձեռքում է: Նա է Շավարշ Ղազարյանի սպանության կազմակերպման դիրիժորը: Նա է այդ բոլոր Մինաս Դաբաղյանների բերանում լեզու դնում: Նա է նրանց հնարավորությունները օգտագործում իր շահերի համար՝ շեղելով նրանց կյանքի ճշմարիտ ճանապարհից: Նա է իր համակիրներին համոզում, որ իրենք ուժեղ են ու իրենց դեմը խաղ չկա: Ուրեմն որպեսզի թուլացնեն այդ սրիկաների դիմադրողական ճակատը, պետք է նախ և առաջ ջախջախել Գեղամ-հնաձկան գլուխը:

Ահա թե որտեղից է գալիս էդ Մինասի ինքնավստահությունը: Քանի ասպարեզի վրա Գեղամը գոյությունի ունի իր հաղթական տեսքով, նրանք՝ այդ Մինասներն իրենց ուժեղ ու անպարտելի են զգալու:

Վահան Դարբինյանի գնալուց հետո երիտասարդները շարունակում էին հսկողության տակ պահել Մինաս Դաբաղյանին: Նրա նկատմամբ ոչ մի վիրավորական բան թույլ չէին տալիս, բայց պահում էին իրենց տեսադաշտում: Հսկում էին մուտքը, որ նրա մոտ հանկարծ կողմնակի մարդ չմտնի, չէին թողնում, որ նա հեռախոսով կապվի որևէ մեկի հետ: Հերթով հսկում էին նրան: Բայց մի օր անզգույշ գտնվեցին: Երիտասարդներից մեկը, որ գիշերն արթուն էր մնացել, ճաշասենյակի բազմոցին պառկել քնել էր, իսկ մյուսը, տեսնելով, որ ամեն ինչ կարգին է, բնական կարիքը բավարարելու համար մտել էր զուգարան: Օգտվելով պահից՝ Մինաս Դաբաղյանն արագ վերցում է հեռախոսը և զանգում Գեղամ Հակոբյանին:

-Լսո՞ւմ ես, ես եմ Մինաս Դաբաղյանը: Ինձ Վրաստանից բերել են Երևան: Հիմա ես փակված եմ իմ բնակարանում հսկողության տակ: Ինձ մոտ էր եկել դատապաշտպան Վահան Դարբինյանը: Ինձ հարցեր տվեց, ինչպես հարկն է պատասխանեցի: Բայց...ամեն ինչ նոր է սկսվում: Դեռ կգան, կչարչարեն ինձ: Կարող է չդիմանամ: Կարող է բացվեմ, ճիշտն ասեմ: Ամեն ինչ ինձ վրա վերցնել չեմ կարող: Հասկացա՞ր՝ ինչ եմ ասում: Իմ հարցը շուտ լուծիր, թե չէ... վերջ:

Մայոր Հակոբյանն առանց այդ զանգի էլ ցայտնոտի մեջ էր: Նա արդեն զանգել էր Վրաստան, իմացել, որ Մինասն այլևս այնտեղ չէ: Հասկանալով ամեն ինչ՝ շփոթվել էր: Նա գլխի էր ընկել, որ նրան առևանգել են: Բայց ով է դա արել ու որտեղ են տարել՝ այդ մասին նա ոչինչ չգիտեր: Մինաս Դաբաղյանի զանգից հետո նա իմացավ, որ նրան բերել են Երևան ու կատաղեց. «Գրողը տանի, մի՞թե վտանգն իմ շուրջը մեծանում է: Մի՞թե այդ անողնաշարը կարող

է բերանը բացել և մատնել ինձ: Հարակավոր է անհապաղ միջոցներ ձեռք առնել»,- անընդհատ թմբկահարում էր նրա գիտակցությունը: Նա վերին ատյաններից դեռևս տեղեկություն չուներ և հիմնական «մեղքը» գցում էր դատապաշտպան Վահան Դարբինյանի վրա:

Մայոր Հակոբյանը զանգեց հերթապահ ոստիկաններին.

-Շտապ եկեք ինձ մոտ:

Դեռ բոպեն չլրացած՝ ոստիկանները տնկվեցին նրա առաջ: Ոստիկանները բարևեցին, իսկ մայորը ի պատասխան գոռաց.

-Կործանման եզրին ենք, իսկ դուք ուղտի ականջում քնած: Վ-րաստանում գտել են Մինաս Դաբաղյանին և տեղափոխել Երևան, դուք հասկանո՞ւմ եք՝ դա ինչ է նշանակում:

-Պարոն մայոր, մենք ամեն ինչ արել ենք ձեր կարգադրության համաձայն: Նրան տարել ենք Վրաստան՝ շատ ապահով տեղ: Զար-մանալի է, թե ոնց են իմացել նրա տեղը:

-Հիմա,- հևոցը հազիվ զսպելով՝ ասում է մայորը,- հիմա դրա ժամանակը չէ, ուրիշ բան պետք է մտածել, նրանց գործողություն-ներին հակառակ բան: Հասկանո՞ւմ եք, դմբոներ, պետք է գործել ա-րագ և անսպասելի:

-Ասացեք, պարոն Հակոբյան, և մենք պատրաստ ենք կատա-րելու ձեր յուրաքանչյուր հրամանը,- ասում է հերթապահ ավագ լեյ-տենանտը:

-Հարկավոր է վախեցնել նրանց, առաջին հերթին այդ դատա-պաշտպան Դարբինյանին: Նա ընտանիք ունի, չէ՞: Հասկանո՞ւմ եք՝ ինչ պետք է անել:

-Ընտանիքի անդամներին ահաբեկել, որ դատապաշտպանը լռի,- ասաց լեյտենանտը:

-Գլուխդ աշխատում է, պարոն ավագ լեյտենանտ, մնում է ձեռքերդ բանեցնես,- ատամները սեղմում է մայորը,- ընտանիքի ոչնչացման սպառնալիքով պետք է լռեցնել նրան: Եթե չլռի, այդ դեպքում մեզ ուրիշ ելք չի մնում, բացի նրան վերացնելը: Հիմա ա-

ռանց ուշացնելու պետք է զինված մարդիկ ուղարկել նրանց տուն և վախեցնել կնոջն ու երեխաներին, առայժմ, իսկ հետո կտեսնենք:

-Կարվի, պարոն մայոր:

-Որպես սկիզբ,- աչքերը չռելով էնթականների վրա՝ ասաց մայորը, պետք է այս գիշեր կրակի մատնել էդ Դարբինյանի նորակառույց տունը: Դա ընդամենը կլինի նախազգուշացում: Դրանից հետո, եթե չլռի, կմիացնենք մեր երկրորդ արագությունը, հասկանալի է: Գործում եք աչքներդ չորս արած, բերաններդ փակ: Մենք դեռ կտեսնենք՝ ով ում,- ատամները կրճտացրեց մայորը,- այժմ ազատ եք, կարող եք գնալ:

Դատապաշտպան Վահան Դարբինյանը երկար խորհելուց հետո եկավ այն եզրակացության, որ արդեն եկել է ճիշտ ժամանակը նորից դատարանի առջև բարձրացնելու Շավարշ Ղազարյանի ինքնասպանության հարցը: Վերջին շրջանում տեղի ունեցած իրադարձությունները բերեցին այն համոզման, որ այլևս ուշացնել չի կարելի: Հավաքագրված նյութերն ու փաստերը բավական էին ապացուցելու, որ տեղի է ունեցել սպանություն: Նա այդ մասին խորհրդակցեց իր օգնականի՝ Արման Աբրահամյանի հետ: Վերջինս լիովին համաձայն էր Վահանի որոշմանը: Մնում էր կազմել համապատասխան փաստաթղթեր և բողոքական կարգով դրանք հանձնել դատարան՝ այս անգամ արդեն Գերագույն դատարանի մակարդակով:

-Քանի դեռ Մինաս Դաբաղյանը մեր ձեռքում է և գտնվում է հսկողության տակ, Արման, պետք է շտապել: Ո՞վ է իմանում հետո ինչ կարող է պատահել: Էդ սրիկա Գեղամ Հակոբյանին ամեն ինչ սպասելի է:

-Իսկ ի՞նչ կարող է անել այդ Հակոբյանը,- հարցրեց Արմանը:

-Հասկացի՛ր, Արման, այդ սրիկան այժմ գտնվում է անելանելի վիճակում և ստեղծված վիճակից փրկվելու եղքեր է փնտրում: Այդ-պիսի գազանն ընդունակ է ցանկացած ստորություն: Նա այլևս կորցնելու բան չունի: Կարող է այնպիսի ստոր միջոցների դիմել, որ մեր մտքով անգամ չի անցնում: Նա վտանգավոր գազան է և կօգ-տագործի իր և իր ոհմակի բոլոր հնարավորությունները: Այնպես որ մենք էլ մեր կողմից պետք է պատրաստ լինենք ամեն անակնկալի:

-Վահա՛ն, մի՞թե մեզ ձեռնտու չէ, որ էդ սրիկան այժմ շփոթ-ված է և խեղդվողի նման ձեռքը փրփուրներին է գցում:

-Այնպես չէ, որ այդ Գեղամներն անպարտելի են, Արմա՛ն: Ինչ էլ ուզում է լինի, դրանց վերջը մի օր գալու է: Ես համոզվել եմ, որ դրանք դաժան պարտություն են կրելու և պատասխան են տալու ի-րենց վայրագությունների համար: Ես, Արման, համոզված եմ, որ ի վերջո հաղթանակը մերն է լինելու: Իսկ որ նրանք իրենց կաշին փրկելու համար փորձելու են հարվածել մեզ, դրանում արդեն ես կասկած չունեմ:

Եվ Վահանն Արմանի հետ նոր վստահությամբ ու եռանդով ձեռնամուխ եղան գործին:

-Մեզ,- վճռականորեն ասաց Վահանը,- հարկավոր է ուսանո-ղական հանրակացարանի պահակ տիկին Էմմայի ներկայությունը: Որպես վկա՝ նա անպայման պետք է ներկայանա դատարան: Դո՛ւ, Արմա՛ն, կարո՞ղ ես կազմակերպել այդ գործը: Ես վստահ եմ, որ նա ցուցմունք կտա, միայն պետք է հոգեբանորեն նախապատրաստել նրան, բացատրել նրա ցուցմունքների կարևորությունը:

-Վահա՛ն, տիկին Էմման միայն կարող է խոսք ասել Գեղամ Հակոբյանի և նրա մի քանի ընկերների ուսանողական ժամանակնե-րի մասին, որը ոչ մի կապ չունի Շավարշ Ղազարյանի սպանության հետ: Դա ինչո՞վ կօգնի գործին:

-Արման,- ասաց Վահանը,- մեզ հարկավոր է պարզել Գեղամ Հակոբյանի ամբողջ կենսագրությունը, նրա գործած այլանդակա-

յունները դեռևս ուսանողական ժամանակներից սկսած: Խիստ անհրաժեշտ է ապացուցել, որ Գեղամ Հակոբյանը և Մինաս Դաբաղյանը ընկերներ են եղել և հանցագործությունների մեծ մասը միասին են գործել:

-Հասկանալի է,- ասաց Արմանը,- և դրանով իսկ ապացուցել նաև, թե ինչու է դատաբժշկական հանձնաժողովի նախագահ Մինաս Դաբաղյանը ստորագրել Շավարշ Ղազարյանի ինքնասպանության մասին կեղծ փաստաթուղթը:

-Այո՛, տեսնո՞ւմ ես՝ որքան անհրաժեշտ է տիկին Էմմայի ցուցմունքը: Տիկին Էմման կհաստատի ոչ միայն ուսանողներ Գեղամ Հակոբյանի և Մինաս Դաբաղյանի մտերմությունը, այլև Մինաս Դաբաղյանը դրանից կվախենա և գուցե հանձն առնի իր մեղքերը: Այնպես որ, Արման, դու անպայման պիտի հանդիպես տիկին Էմմայի հետ և համոզես նրան, որ ճշմարիտ վկայությամբ հանդես գա դատարանում:

-Հասկանալի է, Վահան, ես շուտով կայցելեմ տիկին Էմմային և նրան կբացատրեմ, թե որքան անհրաժեշտ են նրա վկայությունները դատական պրոցեսի համար:

Արմանի այս խոսքերի վրա հնչեց հեռախոսի ձայնը:

-Լսում եմ,- Վահանը վերցրեց ընկալուչը,- ես ձեզ լսում եմ:

-Լսիր, գեղացի դատապաշտպան,- հեռախոսի մեջ հնչեց ինչոր մեկի անծանոթ ձայնը,- դու ուզո՞ւմ ես ապրել:

-Դա ի՞նչ տարօրինակ հարց է,- զարմանքով ասում է Վահանը,- աշխարհում բոլորն էլ ուզում են ապրել:

-Եթե ուզում ես ապրել,- հնչում է անծանոթի սպառնալից ձայնը,- այդ դեպքում հրաժարվիր այդ Շավարշի գործի քննությունից: Հակառակ դեպքում, իմացի՛ր, պարոն Վահան Դարբինյան, վերջդ եկել է, հասկացա՞ր:

-Իսկ ո՞վ է խոսում,- դողում է Վահանի ձայնը:

Ի պատասխան Վահան Դարբինյանի հարցման՝ հեռախոսի մեջ հռհռոց լսվեց:

-Հարցնում ես՝ ով է խոսում, ասե՛մ: Խոսում է կյանքին վերջ տվողը: Իմացի՛ր՝ ում հետ գործ ունես:

Եվ հեռախոսը լռեց:

-Սկսվեց,- ինքն իրեն խոսեց Վահանը,- ես այս սպառնալիք-ներին վաղուց էի սպասում: Ես գիտեի, որ թշնամին չի լռելու, փոր-ձելու է ինձ հեռացնել այս գործից:

-Վահան, ո՞վ էր, ի՞նչ էր ուզում,- հարցրեց Արմանը:

-Կյանքիս վերջ տվողն էր,- արհամարհական տոնով ժպտաց Վահանը,- սպառնում էր, որ ինձ կսպանի, եթե ես չհրաժարվեմ Շավարշ Ղազարյանի գործի քննությունից:

Արմանը միանգամից զգաստացավ, հարցրեց.

-Վահա՞ն, ի՞նչ ես կարծում դա միայն սպառնալի՞ք է, թե՞...

-Արմա՞ն, նման դեպքում սկզբից սպառնում են, նախազգու-շացնում, իսկ հետո...

-Վահա՞ն, ուզում ես ասել՝ հետո իրականացնո՞ւմ են իրենց սպառնալիքները,- վախեցած ասաց Արմանը:

-Իհարկե, եթե կարողանում են, իրականացնում են:

-Իսկ դու, Վահան, հիմա ի՞նչ ես մտածում:

-Բոլոր դեպքերում, Արմա՞ն, մենք շարունակելու ենք մեր գոր-ծը: Այս գործից հրաժարվել չկա, թեկուզ մեր կյանքը վտանգի տակ լինի,- վճռականորեն ասաց Վահանը:

-Ես միշտ քեզ հետ եմ, Վահան, ինչ էլ, որ լինի:

-Արմա՞ն, հենց այսօրվանից մենք՝ ես և դու, պիտի ծայրահեղ զգույշ լինենք, հո իզուր չէ՞ն այդ սպառնալիքները:

Արմանը միայն գլխով համաձայնություն նշան արեց:

Երեկոյան՝ ուշ ժամին, երբ Վահան Դարբինյանը հեռուստա-ցույց էր դիտում, հեռախոսը զանգեց: Վահանը վերցրեց լսափողը:

-Ալո՛, Վահան Դարբինյանը լսում է:

-Վահանի ականջի մեջ հնչեց նույն կոպիտ, սպառնալից ձայնը:

-Ի՞նչ ես մտածել մեր առաջարկի մասին, հրաժարակնդ տվե՞լ ես չէ, շարունակո՞ւմ ես քո անհեռանկար հիմարությունը:

Դարբինյանը, լսափողն ականջին դրած, երկար ժամանակ լռում է, հետո դանդաղ խոսում.

-Ես չգիտեմ դուք ով եք, դա ի՞նչ սպառնալիք է իմ հասցեին:

-Լսի՛ր, դատապաշտպան, քեզ համար դեռ պա՞րզ չէ՝ ինչ պիտի անեմ: Քեզ պա՞րզ չեմ ասում, որ անհապաղ պիտի հրաժարվես Շավարշ Ղազարյանի գործի քննությունից: Դու ժամանակ չունես մտածելու, դատապաշտպան: Քեզ 12 ժամ ժամանակ: Մեր պահանջը չկատարելու դեպքում սկզբից ընտանիքիդ վերջը կտանք, հետո՝ քո, հասկացա՞ր:

-Լսի՛ր,- ջղագրգիռ տոնով ասաց Վահանը,- լավ կլիներ՝ ներկայանայիր, ես էլ հասկանայի, թե ում հետ գործ ունեմ: Եվ երկրորդ, հնարավո՞ր չէ, մենք հանդիպենք իրար, կարգին զրուցենք:

Հեռախոսի մյուս ծայրում դարձյալ արհամարհանքով հռհռում են և հռհռոցի միջից անծանոթ մի ձայն ծաղրանքով ասում է.

-Մենք քեզ հետ հանդիպելու ժամանակ չունենք: Հավաքիր քո ընտանիքը և փասա-փուսադ քաշի՛ր գնա Երևանից: Հասկացա՞ր մեր պահանջը: Թե չէ ընտանիքդ կվերացնենք, դու էլ հաշվիր, որ արդեն դիակ ես:

Վահանը ոչինչ ասել չկարողացավ. հեռախոսն անջատված էր: Վահան Դարբինյանը լռեց, տեղը մնաց նստած, քարացած: Նա շատ լավ գիտեր՝ որտեղից ու ում պատվերով են իրեն զանգել, հասկանում էր, որ դա արդեն լուրջ սպառնալիք է, որ դա հենց այնպես օդում ասված դատարկ կրակոց չէ: Նա պատրաստ էր գիտակցաբար գնալ վտանգին ընդառաջ: Բա ընտանի՞քը...Նա իր համար չէր վախենում: Նա վախենում էր իր ընտանիքի համար: Նա սարսափում էր այն մտքից, թե հանկարծ ընտանիքի գլխին մի սև օյին կխաղան: Նա զգում էր, որ ընտանիքի գլխին սև ամպեր են կուտակվել: Նա մտա-

ծում էր նախ և առաջ ընտանիքի փրկության մասին: Այդ չարաբաստիկ զանգից հետո նա բոլորովին կորցրել էր հանգստությունը: Չգիտեր ինչ անել: Քայլում էր սենյակի մի անկյունից մյուսը: Հետո գնաց պատշգամբ: Հանեց սիգարետը, վառեց և սկսեց ծխել: Հանկարծ անսպասելի հնչեց կնոջ՝ Անուշի ձայնը:

-Վահա՛ն, քիչ առաջ ո՞վ զանգեց քեզ, որ այդպես միանգամից տրամադրությունդ ընկավ:

-Իմ ծանոթներից մեկն էր, Անուշ: Ոչ մի լուրջ բան չկա:

Անուշը նայեց ամուսնու աչքերի մեջ:

-Չէ՛, Վահան, շատ ես անհանգիստ, երևում է, որ մի բան եղել է:

-Չէ՛, Անո՛ւշ, պարզապես հոգնած եմ: Հենց մի քիչ քնեմ, կանցնի:

Առավոտյան Վահանը լարված ու անհանգիստ գնաց դրասենյակ: Իր անհանգստության մասին հայտնեց Արմանին:

-Ուշ երեկոյան զանգեցին, այս անգամ ընտանիքիս վերացնելու սպառնալիքով: Առաջարկեցի հանդիպել: Չհամաձայնեցին: Գիտեն՝ ինչով կարելի է ինձ խեղճացնել սրիկաները: Ընտանիքս դաժան սպառնալիքի տակ է, ի՞նչ անեմ, Արման:

-Այո՛, իրոք, վտանգը շատ մեծ է,- տխրաշեշտ ասաց Արմանը,- Վահան պետք է ընտանիքիդ փրկել, ինչ էլ որ լինի:

-Իսկ ի՞նչ ես դրա համար առաջարկում, Արման:

-Մնում է նրանց հեռացնել քաղաքից, Վահան, տանել այնպիսի տեղ, որ ինձնից ու քեզնից բացի ուրիշ ոչ ոք չիմանա նրանց տեղը:

Արմանը տեղը կանգնեց և քայլերն ուղղեց դեպի դուռը: Վահանը նայեց նրա ետևից և ասաց:

-Զգու՛յշ եղիր, Արման, շատ հավանական է, որ դու էլ ես նշանառության տակ:

-Ինձ համար մի բան լավ է, Վահան:

-Ի՞նչն է լավ,- զարմացավ Վահանը:

-Ի տարբերությունն քեզ, ես ընտանիք չունեմ: Իսկ ինձ հետ թող լինի այն, ինչ որ լինելու է: Ես չեմ վախենում:

Արմանի գնալուց հետո Վահանը գլուխն առավ ափերի մեջ, սկսեց մտածել. «Արմանը ճիշտ էր ասում՝ կնոջս ու երեխաներիս Երևանում թողնել չի կարելի: Հարկավոր է շատ շտապ նրանց հեռացնել քաղաքից»:

Արմանի գնալուց հետո Վահանը դատարան ներկայացվող փաստաթղթերը նորից աչքի անցկացրեց, տեսավ, համոզվեց, որ ամեն ինչ կարգին է, թղթերը վերցրեց ու դուրս եկավ: Նա շատ լավ հասկանում էր, որ այլևս ոչ մի ժամ ուշացնել չի կարելի: Հարկավոր է շտապել, քանի դեռ ինքը չի ընկել Գեղամ Հակոբյանի սարքած որոգայթը: «Հարկավոր է շտապել, հարկավոր է շտապել»,- անընդհատ թմբկահարում էր նրա ուղեղը: Գնաց նստեց իր ավտոմեքենան և քշեց դեպի Գերագույն դատարան: Նա գնում էր պահանջված արագությամբ, երբ հանկարծ նրա զգուշավոր աչքը նկատեց, որ իրենց մի ուրիշ ավտոմեքենա է հետապնդում, որ գալիս է սրընթաց արագությամբ իրենց վրաերթի ենթարկելու նպատակով: Վահանն արագ կողմնորոշվեց, ավտոմեքենան քաշեց դեպի աջ, բացեց դուռը, թռավ ավտոմեքենայից և անցավ մայթեզրի այն եռևը: Իրեն հետապնդող «Աուդի» մակնիշի ավտոմքենան սրընթաց եկավ ու մեծ արագությամբ սլացավ Վահանի ավտոմեքենայի կողքով: Հետապնդողները նկատել էին, որ վարորդը դուրս է եկել ավտոմեքենայից և այլևս իմաստ չկար վրաերթի ենթարկել դիմացի ավտոմեքենային:

Վահան Դարբինյանը փրկված էր: Նա մի քիչ մնաց այն եռևում, նայեց չորս կողմը, համոզվեց, որ վտանգն անցել է, նորից նստեց ավտոմեքենան և քշեց դեպի Գերագույն դատարան: Դատապաշտպան Վահան Դարբինյանը համապատասխան փաստաթղթերը հանձնեց Գերագույնի քարտուղարությունն, որտեղ նրան խոստացան դատապրոցեսն սկսել առնվազն մեկ շաբաթ հետո, եթե ոչ, ապա այդ մասին իրեն տեղյան կպահեն:

Փաստաթղթերը Գերագույնին հանձնելուց հետո Վահան Դարբինյանն անմիջապես վերադարձավ գրասենյակ և իր մոտ կանչեց Արմանին: Արմանը շատ շտապ եկավ Վահանի ձայնի մեջ որսալով անհանգստություն ու տագնապ: Նա ներս եկավ և բարևելուն պես ասաց.

-Որևէ բա՞ն է պատահել, Վահա՞ն:

-Նստի՛ր, Արմա՛ն, և լսիր ինձ,- իրեն ոչ հատուկ շտապողականությամբ ասաց Վահանը,- օղակն անընկատելի սեղմվում է մեր շուրջը, Արմա՛ն: Այսօր Գեղամ Հակոբյանի մարդիկ քիչ մնաց վրաերթի ենթարկեին ինձ: Հազիվ կարողացա վտանգից խուսափել: Մեր կողմից կազմված բողոք-հայցը՝ համապատասխան փաստաթղթերով, հանձնված է Գերագույնին: Խոստացել են մեկ շաբաթվա ընթացքում սկսել դատապրոցեսը: Այժմ գլխավորը մնում է իմ ընտանիքը վերահաս վտանգից փրկելու խնդիրը: Արմա՛ն, առանց ժամանակ կորցնելու հենց այսօր վերցնում ես Անուշին ու երեխաներին և դուրս ես գալիս Հանրապետության սահմաններից, գնում ես Վրաստան: Նրանց տեղավորում ես աչքից հեռու, անվտանգ մի տեղ ու դու արագ վերադառնում: Պիտի գնաս տիկին Էմմայի հետ հանդիպելու:

-Շատ լավ, կարվի քո ասածի նման, միայն զանգիր տուն և նրանց զգուշացրու այդ մասին,- ասաց Արմանը և դուրս եկավ գրասենյակից:

Կես ճանապարհին Վահանը նրան կանգնեցրեց:

-Արմա՛ն, մինչև տնեցիները պատրաստվեն ճանապարհ գնալու, դու Մարիամին վերցրու և մի կես ժամով գնացեք տիկին Էմմայի մոտ: Զգտիր նրան համոզել, որ անպայման ներկայանա դատարան:

-Եղավ,- ինչպես միշտ, այս անգամ էլ պատրաստական ասաց Արմանը:

Նրանց՝ Արմանի և Մարիամին առաջինը դիմավորեց տիկին Էմմայի աղջիկը: Արմանը, որ ձեռքի ծաղկեփունջը նախատեսել էր

տիկին Էմմայի համար, տվեց նրա աղջկան: Տիկին Էմման նրանց ուրախությամբ դիմավորեց:

-Տիկի՛ն Էմմա,- ասաց Արմանը՝ բազմոցին նստելով,- ես ձեզ հետ լո՛ւրջ խոսակցություն ունեմ:

-Ի՞նչ է պատահել,- ահաբեկվեց տիկին Էմման:

Արմանը նրան բացատրեց այցի նպատակը՝ ընդգծելով հարցի կարևորությունը և նրա ցուցմունքների անհրաժեշտությունը:

Տիկին Էմմայի համար, իհարկե, անսպասելի չէր Արմանը նման հարցադրումը: Նա վաղուց համոզված էր, որ էդ սրիկա Գեղամ Հակոբյանը մի օր կանգնելու է արդար օրենքի առաջ և պատասխան է տալու իր այլանդակությունների համար: Նա համոզված էր նաև, որ օրենքի մարդիկ գալու են իր մոտ և իրենից ցուցմունքներ են պահանջելու: Տիկին Էմման երկար էր մտածել այդ մասին և այն մասին, թե անհրաժեշտության դեպքում ինքը ցուցմունք տալու է թե ոչ: Եվ եկել է այն եզրահանգման, որ ինքն իրավունք չունի ցուցմունք տալու: Իրավունք չունի, քանի որ իրենց հարցնելու են ոչ միայն էդ սրիկա Գեղամ Հակոբյանի, այլև այն աղջիկների մասին, որոնք խաբվել են այդ սրիկայից: Նա իրավունք չունի մարդկանց առաջ, հասարակության առաջ տալու այդ անմեղ մեղավորների անունները:

Իսկ դատապաշտպանի օգնական Արման Աբրահամյանը փորձում էր համոզել տիկին Էմմային, որ ներկայանա դատական նիստին և որպես վկա ցուցմունք տա Գեղամ Հակոբյանի մասին:

-Ի՞նչ եք ասում, Արման ջան, ես ո՞նց կարող եմ ներկա լինել դատական պրոցեսին: Դա անհնար է:

-Տիկին Էմմա, դատարանում որպես մեղադրյալներ, ներկա են լինելու մայոր Գեղամ Հակոբյանը և Մինաս Դաբաղյանը, դուք չե՞ք ուզում, որ նրանք դատվեն:

-Ի՞նչ եք ասում, Արման ջան, ես պատրաստ եմ իմ այս ձեռքով խեղդել այդ մարդկային տականքներին: Բայց հարցը դրա մեջ չէ:

-Բա էլ ուրիշ ի՞նչ խանգարող հանգամանք կա:

-Արման ջան, անցել է արդեն երեսուն տարի և այն ուսանողուհի անմեղ աղջիկները, որոնք ակամա զոհ են դարձել Գեղամ Հակոբյանի վայրենի կրքերին, հիմա տարեց կանայք են՝ ամեն մեկը մի տան տիրուհի, ամուսիններ ունի, զավակներ, շատերը նույնիսկ թոռներ: Մի՞թե ես կարող եմ նրանց անունները տալ: Դա կնշանակի խառնակություն գցել նրանց ընտանիքներում, ցեխ շպրտել նրանց անվան վրա, նույնիսկ պատճառ դառնալ նրանց ընտանիքների քայքայմանը: Խնդրում եմ, Արման ջան, այդ մասին մոռացիր: Ես դատարան չեմ ներկայանա: Ներկայանալու դեպքում միևնույն է, ոչինչ չեմ ասի:

Արմանը չէր սպասում, որ տիկին Էմման այդ աստիճանի համառություն կցուցաբերի: Նա կարծում էր, թե իրավաբանի իր կարողություններով, խոսք ու մեթոդով կարող է համոզել կիսագրագետ մի կնոջ, որ կատարի օրենքի պահանջը: Արմանը միայն մի պահ իրենց վատ զգաց: Հաջորդ պահին նա զգաց, որ հանձին տիկին Էմմայի՝ իր առջև կանգնած է մի բարեսիրտ կին, որ չի ուզում աղ լցնել մարդկանց անցյալի վերքերին, չի ուզում նորից ցավեցնել նրանց սրտերը:

Արմանը վեր կացավ, սրտանց սեղմեց տիկին Էմմայի ձեռքը, ցտեսություն ասաց և Մարիամի հետ դուրս եկավ փողոց:

Գնացին տուն, Արմանը զանգեց Վահանին:

-Բարև, Վահան:

-Ի՞նչ կա,- հարցրեց Վահանը:

Արմանը բացատրեց, թե ինչ խոսակցություն է եղել իր և տիկին Էմմայի միջև: Ասաց, որ տիկին Էմման հրաժարվել է ներկայանալ դատարան և ցուցմունքներ տալ:

Վահանը հասկացավ Արմանին, հասկացավ նաև տիկին Էմմային:

-Ընդհանուր առմամբ,- եզրակացրեց Վահանը,- տիկին Էմմայի մոտեցումները մարդասիրական են, բայց մեր և դատարանի

շահերից չէն բխում: Ոչի՛նչ, կփորձենք մի այլ ճանապարհով հարցը լուծել:

Ուշ երեկոյան՝ ժամը տասի սահմաններում, Արմանը Մարիամին վերցրեց ու գնաց Վահանենց տուն: Արմանի այցին Վահանն անհամբեր սպասում էր: Պատուհանի մոտ կանգնած՝ անընդհատ նայում էր դեպի փողոց: Նա արդեն կնոջը՝ Անուշին, և երեխաներին նախապատարստել էր ճամփորդության, համոզել նրանց, որ այլևս ելք չկա, որ այս ամենը միայն ժամանակավոր է: Կինը համաձայնել էր բացակայել Հանրապետությունից միայն հանուն երեխաների անվտանգության, իսկ այն, որ Վահանը մնում է Երևանում, նրան շատ էր անհանգստացնում:

-Դու էլ արի մեզ հետ, Վահան, ես քեզ համար վախենում եմ,- թախանձում էր Անուշը:

-Ես չեմ կարող, Անուշ, ես այստեղ պիտի մնամ,- ասել էր Վահանը,- հանուն այս գործի հաղթանակի , ես պետք է մնամ: Չարը պիտի խափանվի: Իսկ այդ չարը խափանողներից մեկը ես պետք է լինեմ:

Անուշը հասկացել էր ամուսնուն: Հասկացել էր, որ այդ խոսքերը վերջնական են՝ երդման նման ասված: Անուշը այդ պատճառով էլ լռեց և սպասեց Արմանի ժամանմանը: Վահանը, որ պատուհանից ուշադիր նայում էր դեպի փողոց, առաջինը նկատեց Արմանի ավտոմեքենան:

-Տնեցիները պատրաստ են ճամփորդության,- հարցրեց Արմանը:

-Սուրճ խմենք հետո,- մտահոգ առաջարկեց Վահանը:

Անուշը լուռումունջ սուրճ պատրաստեց:

-Տեսնում եմ սաստիկ ապրումների մեջ ես, Վահան,- ասաց Արմանը,- ամեն ինչ լավ է լինելու, առանձնապես մտահոգվելու բան չկա: Ես արդեն զանգել եմ Բաթում՝ իմ վրացի ընկերոջը՝ Վաժային, նա այնտեղ ձեզ է սպասում:

-Ինձ հետ անընդհատ կապի մեջ կլինես, Արման, հենց տեղ հասաք, անմիջապես զանգիր,- ասաց Վահանը,- Ես ձեզ կճանապարհեմ մինչև Երևանից դուրս:

Արմանը նստեց ավտոմեքենայի ղեկին: Անուշը Մարիամի և երեխաների հետ տեղավորվեց ավտոմեքենայի ետնամասում: Երևանից դուրս եկան: Վահանը մի բանից էր վախենում՝ հո՞ իրենց չէն հետևում:

Երբ անցան մի քսան-քսանհինգ կիլոմետր, Վահանը համոզվեց, որ իրենց հետապնդող չկա:

Վահանն իր հարազատներին ճանապարհեց դեպի Վրաստան և վերադարձավ Երևան: Այդ օրը նա իր բնակարանում չգիշերեց՝ վտանգավոր էր: Ընկերներից մեկի տուն էլ չգնաց: Գիշերը մնաց հյուրանոցում, առավոտյան եկավ գրասենյակ իր սովորական աշխատանքին: Թուղթ ու գրիչ վերցրեց, մտածեց դատարանում իր ելույթի բովանդակության շուրջ, գրառումներ արեց, մի քանի առանցքային կետեր նշեց: Հենց այդ ժամանակ էլ զնգաց հեռախոսը:

-Լսում եմ:

Մի քիչ լռությունից հետո հնչեց նույն անծանոթի ձայնը:

-Դու դեռ Երևանո՞ւմ ես, ես քո...-ու թանձր մի հայհոյանք լցվեց Վահան Դարբինյանի ականջը:

Վահանը ոչինչ չպատասխանեց, հեռախոսն անջատեց և գրասենյակից դուրս եկավ: Վահանի միտքն անընդհատ գործում էր: Նրա գիտակցությունն զբաղված էր տարբեր մտորումներով. «Ահա թե ինչի են ընդունակ սրիկաները: Պարզապես ուզում են իրեն հեռու քշել Երևանից: Ստիպում են, որ ես հրաժարվեմ Շավարշ Ղազարյանի «Գործի» պաշտպանությունից: Այնպես են անում, որ դատը չկայանա... Վահան Դարբինյան քեզ պինդ պահիր, դու էն մարդը չես, որ սպառնալիքներից վախենաս, շարունակիր քո գործը: Չէ՛, ինձ այս գործից հրաժարվել չկա, թեկուզ...»

Ուզում էր ասել՝ թեկուզ կյանքի գնով, բայց չասաց: Դա պարտության նման մի բան կլիներ: Ու Վահանը որոշեց գնալ տեսնելու իր նորակառույց շենքը: Նա ինչ-որ բան էր կասկածում կարող են ռումբ դնել իր նորակառույց տան պատի տակ, կարող են... Հո իզուր չէն սպառնացել, որ տունը հրդեհելու են: Վահանը գնում էր նոր շենքը ճնշված սրտով, իրարամերժ զգացումներով:

Ամեն ինչ իր տեղում էր: Նորակառույցի համար կահույք էր գնել, սեղան, աթոռներ է պատրաստել, լայնէկրան հեռուստացույց էր դրել շքեղ կահավորված սենյակում և մի քանի շաբաթից հետո պատրաստվում էր ընտանիքը տեղափոխել իր նոր շենքը: Հիմա Վահանն ուրախացել էր, որ ամեն ինչ իր տեղում է ու Գեղամները վնասներ չեն տվել. «Վախեցե՞լ են, թե՞ չեն հասցրել,- մտածում էր նա,- երևի հարմար չեն գտել: Վախեցել են, բայց ումի՞ց՝ օրենքի՞ց, պատժի՞ց, թե՞ մտածել են, որ ես կարող է արդեն հրաժարվել եմ դատապաշտպանի իմ պարտականություններից: Սրիկաներ, ձեր ականջը կտեսնք, բայց ինձ իմ որոշումից հրաժարված չեք տեսնի: Աշխարհում դեռ բարի մարդիկ կան: Դուք դեռ կանգնելու եք ահեղ դատաստանի առջև»:

Վահանը նեղքին ինքնագոհությամբ վերադարձավ պետական իր բնակարանը և դեռ աստիճանների վրայից լսեց հեռախոսի ձայնը: Դուռը արագ բացեց, վերցրեց հեռախոսը: Արմանն էր:

-Բարև՛, Վահա՛ն, բարեհաջող տեղ ենք հասել: Վաժան՝ ընկերդ դիմավորեց մեզ, տարավ իրենց տուն: Օգնեց, որ տուն վարձենք: Վարձեցինք մի շատ լավ հարմար տուն՝ ընդարձակ, դիմացն էլ այգի:

-Ուրախ եմ,- ասաց Վահանը,- Արման, եթե ամեն ինչ լավ է, այդ դեպքում վերադարձի՛ր Երևան: Իսկ այժմ հեռախոսը տուր Անուշին: Բարև՛, Աննո՛ւշ ջան, ամեն ինչ լա՞վ է:

-Բարև, Վահան, այստեղ իսկապես ամեն ինչ լավ է, մեր սպասածից շատ ավելի լավ, երեխաներն իրենց լավ են զգում: Դու ո՞նց ես, Վահան, քեզ համար շատ անհանգիստ եմ:

-Ինձ համար մի մտահոգվիր, ամեն ինչ կարգին է, համբուրում եմ ցլ՛:

Վահանը խմեց իր ձեռքով պատրաստած սուրճը: Ակամա վերցրեց Լևանդովսկու «Իմ Մարատի սիրտը» գիրքը և սկսեց կարդալ: Մի քանի էջ կարդաց, քունը տարավ: Պառկեց ու անմիջապես քնեց:

Հաջորդ առավոտյան զանգեցին, այս անգամ Գերագույն դատարանից:

-Պարոն Դարբինյան, բարև ձեզ, քարտուղարուհին է Գերագույն դատարանից: Հայտնում եմ ձեզ, որ հաջորդ երկուշաբթի օրը լսվելու է Շավարշ Ղազարյանի ինքնասպանության դեմ ձեր հայցադիմումի հարցը: Դատական պրոցեսը սկսվում է առավոտյան ժամը տասին: Դուք որպես բողոքարկող կողմի դատապաշտպան, պետք է ներկայանաք մեկ ժամ շուտ՝ ժամը ինն նախապես առանձին հարցեր քննարկելու համար:

-Շնորհակալություն,- ասաց Վահան Դարբինյանը և հեռախոսը դրեց տեղը:

Հաջորդ երկուշաբթի. դա նշանակում էր, որ մինչև դատավարությունը դեռ մի ամբողջ հինգ օր կար: Դատապաշտպան Վահան Դարբինյանն անհանգստանալու բան համարյա չուներ: Ամեն ինչ պատրաստ էր: Միայն բացակայում էր տիկին Էմման, որ այդպես էլ համառորեն հրաժարվում էր վկայություն տալուց: Ըստ ընձեռված հնարավորություններ և հավաքագրված փաստերի՝ այս անգամ Վահանն իր հաջողության վրա չէր կասկածում: Բայց նրան ուղղակի խանգարում էին երկար մտածել այդ մասին: Օրվա ընթացքում նրան հինգ-վեց անգամ զանգահարեցին և սպառնացին ետ կանգնել իր որոշումից, թողնել Երևանը և փախչել Հանրապետությունից,

եթե կյանքը թանկ էր նրա համար: Դարբինյանն այդ զանգերին ուշադրություն չէր դարձնում, շարունակում էր իր գործը, բայց ակամա անհանգստանում էր: Գիշերը շատ անհանգիստ քնեց: Քունը չէր տանում: Դուռը պինդ կողպել էր՝ ականջն անընդհատ ինչ-որ օտար ձայների: Գիշերվա ժամը հինգին կես քուն, կես կիսարթուն երկար հնչեց հեռախոսի ձայնը: Վահանը ձեռքը մեկնեց և վերցրեց լսափողը:

-Պարո՞ն Դարբինյան,- լսվեց ինչ-որ մեկի տագնապալից ձայնը,- դուք ինձ լսո՞ւմ եք լսում: Դուք այդտեղ քնած, իսկ այստեղ ձեր նորակառույց տունը վառվում է: Շտապե՛ք, եկե՛ք տեսեք՝ ինչ է կատարվում այստեղ: Բոցը հասել է մինչև առաստաղ:

-Այդ ո՞վ է խոսում, ներկայացեք, մի բան հասկանամ,- հեռախոսի մեջ գոռաց Վահանը:

-Ես եմ, պարոն Դարբինյան, ձեր նորակառույց տան հարևանը: Հապաղել չի կարելի: Ես արդեն հրշեջներ են կանչել գուցե կարողանամ մի բան փրկել:

«Ուրեմն սա երազ չէ ու ինձ չեն խաբում: ՈՒրեմն ճշմարիտ է, որ իմ տունը վառվում է: Սրիկաները հրդեհել են այն: Սա արդեն դաժան իրականություն է: Մի անգամից ջուրը թափվեց իմ վերջին երեք-չորս տարիների ջանքերի արդյունքը: Թշնամին դրանով ուզում է ինձ թևաթափ անել, խեղճացնել, ընկճել, ինձ շեղել ճանապարհից»,- մտածում էր Վահանը: Բայց էլ ի՞նչ մտածել...

Նա ընդոստ տեղից վեր կացավ, արագ հագնվեց, իջավ փողոց: Նա արագ նստեց ավտոմեքենան ու սլացավ դեպի Այգեստան...

Տունը ջահի նման վառվում էր: Կարծես հրդեհվել էր ամբողջ թաղամասի: Գիշերվա թանձր խավարի մեջ ծուխն ու բոցը խառնվել էին իրար: Ամենակով բոցերի երախից արդեն հնարավոր չէր փրկել որևէ բան: Ճիշտ է, հրշեջները եկել էին և ամեն կերպ ձգտում էին հանգցնել կրակը, բայց դա արդեն անօգուտ էր. ինչ որ պիտի վառվեր, արդեն վառվել էր:

Վահանը երկու ձեռքով բռնեց գլուխը և ծնկի իջավ իր վառվող տան առաջ:

-Աստվա՛ծ իմ, ո՞ր մեղքիս համար,- ահեղաձայն գոչեց նա:

Միայն լուսադեմին հրշեջներին հաջողվեց կրակը հանգցնել, բայց արդեն ուշ էր: Ամեն ինչ կրակի բաժին էր դարձել: Վահանը արցունքները հազիվ էր զսպում: Նա տխրել էր ոչ այնքան նյութական միջոցների կորստի պատճառով, որքան իր թափած վիթխարի ջանքերի համար:

Առավոտյան արդեն ամբողջ քաղաքը գիտեր այդ մասին: Լուրը գնաց հասավ մինչև երկրի խորքերը: Մարդիկ հասկանում էին, որ հենց այնպես չի վառվում դատապաշտպան-իրավաբանի տունը, ով էլ որ եղած լինի:

Կիրակի օրը «Բերդն» իր ավտոմեքենան կանգնեցրեց տիկին Էմմայի տան մոտ, նայեց չորս կողմը: Դեպի տուն տանող ուղին անցնում էր մի փոքրիկ այգու միջով, որի դիմաց դարպաս կար: Տուն մտնելու համար հարկավոր էր դարպասը բացել, անցնել ծառուղին և նոր մտնել տուն: «Բերդը» նայեց. դարպասը փակ էր:

Մի քանի անգամ ծեծեց այն: Տնից ոչ ոք դուրս չեկավ: «-Բերդն» էլի ծեծեց դարպասը, դարձյալ մարդ չերևաց: Ստիպված քաշեց դարպասը փակող սողնակը և ներս մտավ: Անցավ փոքրիկ ծառուղին, հայտնվեց տան առջև: Այստեղ արդեն նրան դիմավորեց մի կին: «Բերդը» հասկացավ, որ դա հենց տիկին Էմման է:

-Բարև՛ ձեզ, տիկի՛ն Էմմա,- մոտ գալով ասաց «Բերդը»:

Տիկին Էմման խորաթափանց նայեց իր դիմացի անծանոթ մարդուն և ասաց:

-Դուք ո՞վ եք, որ առանց թույլտվության բացել եք մեր տան դարպասը և ներս մտել:

«Բերդը» մեղմորեն ժպտաց, գրպանից հանեց կարմիր շապիկով գրքույկը, ցույց տվեց և ասաց.

-Ես Պետական անվտանգության կոմիտեի աշխատակից եմ, եկել եմ ձեզ մոտ մի կարևոր հարցով:

-Այդ գրքույկը իզուր էլ ցույց եք տալիս,- ասաց տիկին Էմման,- ձեր տիրական պահվածքից հասկանալի է, որ դուք ինչ մարդ եք, ներս մտեք, համեցեք և ասացեք, թե ինչ եք ուզում:

-Նստե՞նք, հետո խոսենք, կարելի՞ է, տիկին Էմմա:

-Խնդրեմ, որտեղ ձեզ հարմար է, նստեց:

«Բերդը» նստեց սեղանին ավելի մոտ դրված աթոռին, ձեռքերը հենեց սեղանին, հանեց արևային ակնոցները և բարյացկամորեն նայեց տիկին Էմմային: Տիկին Էմման նույնպես նստեց և խորը նայեց դիմացինին:

-Չգիտեմ ինչու, ինձ թվում է, թե մենք ինչ-որ տեղ հանդիպել ենք:

-Թե՞ ոչ, տիկի՞ն Էմմա, ինչքան հիշում եմ, մենք իրար չենք հանդիպել:

-Զարմանալի է,- ասաց տիկին Էմման,- մի՞թե աչքերս ինձ խաբում են: Դուք ինձ ծանոթ մեկին եք հիշեցնում: Դուք երիտասարդ, ինչ-որ տեղ վիրավորվե՞լ եք:

Այս անգամ «Բերդն», իրոք, զարմացավ:

-Ի՞նչ, դուք այդ ինչպե՞ս, ինչի՞ց իմացաք:

-Ես այն տեսնում եմ, երիտասա՛րդ, դո՛ւք, իսկապես, վիրավորվե՞լ եք, չէ՞:

-Հա՛, իհարկե, ես վիրավորվել եմ Ղարաբաղյան ազատամարտի ժամանակ, Շուշի քաղաքի ազատագրման համար մղված մարտերից մեկում:

-Գիտեք, ես ձեզ նմանեցնում եմ ինչ-որ մեկին: Ձեր հայացքը ինձ հիշեցնում է մեկին, բայց չեմ հիշում՝ ում:

Տիկին Էմմայի ասածները «Բերդի» վրա տպավորություն չգործեց, քանի որ համոզված էր, որ ինքն ու տիկին Էմման դժվար թե որևէ տեղ հանդիպած լինեն: Ոատի հարցեր չտվեց, անցավ իր այցի հիմնական նպատակին, ասաց.

-Ե՛ս, տիկի՛ն Էմմա, եկել եմ ձեզ խնդրելու, որ ներկա գտնվեք երկուշաբթի օրը կայանալիք դատավարությանը, որտեղ խիստ անհրաժեշտ է ձեր ներկայությունը:

Տիկին Էմման անակնկալի չեկավ դիմացինի խոսքերից, նա արդեն գլխի էր ընկել, որ դիմացինը հենց այդ նպատակով էլ եկած կլինի՝ իրենց մանակից դարձնել դատին: Նա կռահել էր, որ այս երիտասարդ մարդու հետ զրույցը հենց այդ մասին է լինելու:

-Ախահի՛տ,- տիկին Էմման կանչեց աղջկան, որ այդ պահին գտնվում էր կողքի սենյակում,- սուրճ դիր խմենք, երևում է մեր խոսակցությունը այս երիտասարդի հետ երկար ու լուրջ է լինելու:

-Չէ՛, տիկին Էմմա, մեր զրույցը երկար չի լինելու, բայց որ այն լուրջ է լինելու, դրանում՝ ոչ մի խոսք:

-Ասացեք, ես ձեզ լսում եմ,- տիկին Էմման լուրջ տեսք է ընդունում:

-Ես արդեն ասացի, տիկին Էմմա, որ մենք ցանկանում ենք, որ դուք մանակցեք այդ դատավարությանը: Իսկ մենք մեր կողմից խոստանում ենք ապահովել ձեր անվտանգությունը: Դուք չափազանց պետք եք այնտեղ, նույնիսկ այն դեպքում, եթե ոչինչ էլ չասեք: Դուք պետք եք հատկապես այն ժամանակ, երբ հարցաքննվի Մինաս Դաբաղյանը: Ձեր ներկայությունը կճնշի նրան և նա ավելորդ ստեր չի փչի: Երբ նա նայի ձեր հայացքին, կեղծ արդարացման խոսքեր չի գտնի: Դուք ձեր աչքով եք տեսել նրա վայրենի արարքները:

-Թույլ տալի՞ս եք, որ ես մտածեմ՝ ձեր առաջարկի մասին,- ասաց տիկին Էմման:

-Մինչև վաղը դեռ շատ ժամանակ կա, մտածեք, ինչքան ուզում եք, բայց մեզ մի մերժեք. Ես ուղղակի խնդրում եմ: Շատ

մարդկանց բախտ է կախված ձեր ներկայությունից: Առանց ձեր մասնակցության դժվար կլինի շատ հարցերի պատասխաններ գտնել: Ձեր աչքի առջև են տեղի ունեցել այն այլանդակությունները, որ գործել են Գեղամ Հակոբյանը և Մինաս Դաբաղյանը: Ես սա ասում եմ նաև Ղարաբաղյան ազատագրական պատերազմի հերոսներից մեկի՝ իմ վաղամեռիկ ընկերոջ՝ Շավարշ Ղազարյանի անունից, որի գազանաբար սպանել են և անունը դրել ինքնասպանություն:

Տիկին Էմման շարունակում էր լուռ մնալ: Ըստ երևույթին նա դեռ չէր վճռել իր անելիքը՝ գնա՞լ թե՞ չգնալ:

«Բերդն» սպասում էր տիկին Էմմայի վճռին և զգում էր, որ նա տատանվում է և դժվարանում է վերջին խոսքն ասել:

Ինահիտը սուրճը բերեց:

Երկուսն էլ լուռ խմեցին: Տիկին Էմման սպասում էր, թե ինչ կասի օրենքի հետքերով իր մոտ եկած երիտասարդը, իսկ «Բերդն» էլ սպասում էր, թե ինչ կասի դիմացի հասարակ, արդարամիտ կինը: Վերջապես խոսեց տիկին Էմման:

-Այն, ինչի մասին դուք այստեղ խոսեցիք, ինձ արդեն հայտնի է: Ձեզնից առաջ նույն հարցով ինձ մոտ էր եկել դատապաշտպան Վահան Դարբինյանի օգնական Արման Աբրահամյանը: Նա էլ էր ինձ հորդորում, որ ես նեկայանամ առաջիկա դատավարությանը, բայց ես նրան մերժեցի: Ասացի, որ չեմ կարող Գեղամ Հակոբյանի և Մինաս Դաբաղյանի վայրենի կրքերին զոհ դարձած անմեղ աղջիկների անունները տալ, երեսուն տարի հետո նրանց անունները պահարակել: Այդ պատճառով ես Արման Աբրահամյանին մերժեցի, բայց ձեզ ոնց որ մերժել չեմ կարող: Ես ատում եմ այդ երկու այլանդակներին, ես մտածեցի, որ պետք է ի վերջո նրանց դիմակները պատռել, ցույց տալ, թե ինչ սրիկաներ են եղել նրանք դեռևս ուսանողական տարիներին: Ես զգում եմ, որ դուք արդարության կողմն եք: Հանուն արդարության էլ ես համաձայն եմ ձեզ հետ: Ես կգամ դատավարությանը, անպայման կգամ: Ինչ վերաբերում է իմ անվ-

տանգությանը, ապա ասեմ, որ նեղություն մի կրեք: Ես չեմ վախենում այդ տականքներից: Մեր երեխաների համար եմ վախենում, որ հանկարծ չընկնեն այդ գազանների ձեռքը, որ ազնվությունը չսպանվի, որ բարին ու գեղեցիկը հաղթեն: Մնացածը Տեր Աստծո կամքն է՝ կամ կապրեցնի ինձ կամ կմեռցնի: Ինչ լինելու է, թող լինի:

-Շատ շնորհակա՛լ եմ, տիկի՛ն Էմմա,- հատուկ հարգանքով ասաց «Բերդը»,- երկուշաբթի առավոտյան ձեր ետևից ավտոմեքենա եմ ուղարկելու:

Վահան Դարբինյանը հոգեխռով ու անտրամադիր արթնացավ քնից ու որոշեց այդ օրը աշխատանքի չգնալ, պարզապես մնալ: Ինչ որ պիտի աներ, արդեն արել էր: Զանգել էր բոլոր վկաներին, ապահովել էր նրանց ներկայությունը դատական պրոցեսին: Բոլորն էլ պատրաստակամ պատասխանել էին նրա խոսքին, որ անպայմանն ինչպես հարկն է ցուցմունքներ կտան: Այս անգամ դատապաշտպան Վահանը, իսկապես համոզված էր, որ դատը շահելու է: Ամեն ինչ խոսում է իր օգտին: Դեպքերն ու իրադարձությունները այնպես են դասավորվել, որ նա դրանում չի կասկածում: Այս անգամ Գեղամ Հակոբյանը կպարտվի, կընկնի թակարդը և որքան էլ թպրտա, չի կարող թակարդից դուս պրծնել: Նրա երգն արդեն երգված է: Շուտով այդ մարդասպան գազանը հայտնվելու է ճաղերի ետևում, ստանալու է իր արժանի պատիժը:

Վահան Դարբինյանը մի հյուլեի չափ անգամ կասկած չուներ, որ իր նորակառույց տան հրդեհն էլ այդ սրիկայի ձեռքիի գործն է: Բայց դրանով նրա չարագործությունները, իհարկե, չեն ավարտվել: Նա պատրաստ է ավելի ծայրահեղ միջոցների դիմել, ֆիզիկապես ոչնչացնել դատապաշտպան Վահան Դարբինյանին: Բայց համոզված եմ, որ հասցնի, շաբաթն ավելի շուտ կգա, քան ուրբաթը: Մինչ

այդ նրա կեղտոտ ձեռքերին շղթա կդրվի: Նա չի կարող այլևս պատուհասել մարդկանց, իրեն՝ Վահան Դարբինյանին ընտանիքով ուղարկել էն աշխարհը:

Վահանը մտածում էր նաև իր գործունեության մասին: Ո՞րն է ճիշտը, ո՞րն է սխալը: Ո՞րն է իր մեղքի բաժինն այս աշխարհում: Իր ո՞ր մեղքի համար են ուզում իրեն պատժել: Մի՞թե այն բանի համար, որ ազնվորեն ծառայում է մարդկանց, իր ժողովրդին: Այո՛, նաև օրենքին: Նա միայն մի ձգտում ուներ՝ այնպես անել, որ մարդն անիրավություններ չգործի: Նա հասկանում էր, որ կյանքը պայքար է, անընդհատ ու անվերջ պայքար: Մեկը տուժում է, մյուսը՝ շահում, մեկը պարտվում է, մյուսը՝ հաղթում: Բայց հո չի՞ կարելի թողնել, որ միշտ հաղթի չարը: Կյանքը նման է նաև հեքիաթի, իսկ հեքիաթների վերջում միշտ հաղթում է բարին: Այս անգամ էլ պիտի այդպես լինի: Բարին պետք է հաղթի:

Այս մտորումների մճճվածքի մեջ նրա միտքը ետ գնաց, և նա հիշեց Հարությունն Մարգարյանին, որի չհրկիզվող պահարանից ինքը վերցրեց այնտեղ գտնվող դոլարները: Այո՛, այնտեղ գտնվող ոսկեղեն զարդերը թողեց ու միայն դոլարները վերցրեց: Եթե ինքը շատերի պես ընչաքաղց լիներ, զարդերն էլ կվերցներ: Բայց չվերցրեց: Նա չէր մտածում հարստանալու մասին, առավոտ ևս ուրիշի փողերը յուրացնելու մասին: Նա դրանք՝ այդ դոլարները ծախսեց հանուրի գործի համար: Հիշեց Մարիամին: Հիշեց՝ ինչպես մուծեց նրա ուսման վարձը, որ խեղճը համալսարանից դուրս չմնար: Հիշեց՝ ինչպես ստեղծեց փաստաբանական-դատապաշտպանական իր գրասենյակը: Ո՞ւմ համար: Իհարկե, իր ժողովրդի համար, հասարակ մարդկանց իրավունքների պաշտպանության համար:

Գուցե սխա՞լ էր, որ Այգեստան թաղամասում սկսեց նոր տուն կառուցել: Բայց ինքն էլ իրավունք ուներ չէ՞ ունենալու իր սեփական բնակարանը: Իրավունք ուներ չէ՞ հոգալու իր ընտանիքի, իր երեխաների կարիքները: Ո՞րն էլ իր մեղքը, ո՞րն էր իր սխալը: Չէ՛, դա-

տապաշտպան Վահան Դարբինյանը սխալ չի գործել, այնպիսի սխալ. Որի համար զղջա: Ինքն առանձնապես չի էլ մտածում Հրդեհի ճարակ դարձած այն կահ-կարասիների մասին, որոնք գնել էր վերջերս իր նորակառույցը կահավորելու համար: Թշնամին կարծել է, թե դա նրան մեծ ցավ է պատճառելու: Թշնամին, իհարկե, սխալվել էր: Կահույք և ունեցվածք ունենալը երբեք էլ Վահանի գլխավոր նպատակը չի եղել: Տան կորուստը շատ մեծ ցավ չէ նրա համար: Բուն ցավը թշնամու գիշատիչ վերաբերմունքի զգացողությունն է մի մարդու նկատմամբ, որն իր կյանքում փորձել է միշտ օգտակար լինել ուրիշներին: Տուն՝ վառվել է, նորը կկառուցի, կահույք՝ վառվել է, նորը կգնի, բայց վերքը կմնա, թշնամու վայրենի վերաբերմունքի վիրավորանքը կմնա: Դա անվերջ նրան հիշեցնելու է, որ աշխարհի երեսին դեռ վայրենի մարդը կա, ու ինքը պարտավոր է որպես քաղաքացի պայքարելու չարի ու անիրավության դեմ:

Ահա թե ինչու է նա, ամեն մի վտանգ արհամարհելով, գնում դատարան: Ահա ինչի դեմ են ուղղված նրա ջանքերը:

Այս մտքերի մեջ էլ նա վերցրեց հեռախոսը և զանգեց Արմանին:

-Բարև, Վահան, ի՞նչ նորություններ կան,- հարցրեց Արմանը:

Վահանը մի պահ լռեց, մտածեց՝ ասի՞, թե՞ չասի իր տանը տեղի ունեցած հրդեհի մասին, հետո չհամբերեց՝ խոսքերն իրենց իրենց դուրս թռան նրա բերանից:

-Ոչ մի լավ բան, Արման: Իմ նորակառույցը ամբողջովին վառվել է:

-Ինչպե՞ս թե վառվել է,- հնչում է Արմանի զարմացած ձայնը:

-Այո՛, Արման, հիմքից մինչև առաստաղ վառվել է:

-Վառվե՞լ է, թե՞ վառել են, Վահան:

-Դու այդ հարցի պատասխանը լավ գիտես, Արման, ուղղակի փորձել են ինձ վախեցնել, ահաբեկել:

-Լսի՛ր, Վահան, զգույշ մնա, էդ ավազակները կարող են քեզ էլ վնաս հասցնել:

-Չեն հասցնի, Արման, երկուշաբթի օրն արդեն դատավարությունն է սկսվում: Շտապ արի, որ դու էլ մասնակցես: Իսկ տա վառվելու մասին խնդրում եմ Ֆնուշին չասես:

-Լավ, Վահան, կիրակի օրը ես Երևանում կլինեմ:

Երկուշաբթի օրը դատավարությունն սկսվեց: Երկու կողմն էլ ինչպես հարկն է նախապատրաստվել էին: Դատարանի ընդարձակ դահլիճում ազատ տեղ չկար: Այն, որ Հանրապետության դատական Գերագույն մարմինը վերաքննում է Շավարշ Ղազարյանի ինքնասպանության չարչրկված հարցը, շարժել էր շատերի հետաքրքրությունը: Երկու կողմերն էլ շահագրգիռ մարդիկ էին հավաքել իրենց շուրջը: Պաշտպանական կողմն այս անգամ շատ լավ էր նախապատրաստվել դատավարությանը և իր ձեռքի տակ ուներ ամեն ինչ հաղթանակի հասնելու համար: Գլխավոր խնդիրն էր ապացուցել, որ Շավարշ Ղազարյանը ոչ թե ինքնասպան է եղել, այլ նրան գազանաբար սպանել են: Իսկ դա նշանակում էր գտնել հանցագործ-մարդասպաններին և խստագույնս պատժել նրանց:

Դատավարությանը լավ էր նախապատրաստվել նաև հակառակ կողմը՝ նրանք, որոնք դատարան էին կանչվել կասկածյալների կարգավիճակով: Գեղամ Հակոբյանն իր հետ դատարան էր բերել ոստիկանների մի շփացած խումբ, որի պարտականությունն էի իր աղմկահարությամբ ճնշում գործադրել հակառակ կողմի վրա և փորձել լռեցնել ճշմարիտ խոսքերն ու վկայությունները, որոնք ուղղված էին Գեղամ Հակոբյանի դեմ: Այդ խմբին Գեղամ Հակոբյանը բերել էր հատկապես այն բանի համար, որ իրենց ելույթներով տպավորություն ստեղծեին, թե իբր մայոր Հակոբյանը ազնիվ ու արդար ոս-

տիկան է և այս ամենը նրա դեմ ուղղված կեղծարարություն ու զրպարտություն է: Ոստիկանական այդ խմբի մարդիկ նստած էին դահլիճի առաջին շարքերում, որի մեջտեղում տիրականորեն բազմել էր նրանց շեֆը՝ մայոր Գեղամ Հակոբյանը: Նա իրեն պահում էր այնպես, կարծես այս ամենը իրենց չի վերաբերում և ինքն այստեղ գտնվում է ոչ թե մեղավորության համար, այլ եկել է ուրիշներին մեղադրելու համար: Գեղամ Հակոբյանը մի վայրկյան անգամ չէր կասկածում, որ այս անգամ էլ ինքը տոնելու է իր հերթական հաղթանակը: Նա համոզված էր, որ իր հավատարիմ ընկերները օգնելու են իրեն և ապացուցելու են, որ այս գործում իրենց պետը ոչ մի մեղք չունի:

Կասկածյալների աթոռին նստած էր նաև Մինաս Դաբաղյանը, որն ամեն կերպ փորձեր էր անելու ապացուցել իր և մայոր Հակոբյանի «անմեղությունը»:

Այնպես որ մինչև դատական պրոցեսն սկսելը խիստ լարված վիճակ էր: Զգացվում էր, որ պայքարը շատ թեժ է լինելու: Երկու կողմերն էլ եկել էին դաժան ու անզիջում ճակատամարտ տալու: Երկու կողմերն էլ ամուր նստած էին իրենց դիրքերում, մի կողմը պաշտպանվելու, մյուս կողմը հարձակվելու պատրաստ:

Վահան Դարբինյանը, որ գլխավորում էի պաշտպանվող կողմի շահերը, հանգիստ ու անվրդով սպասում էի իր դերակատարությանը, իսկ կասկածյալները դահլիճում նստած էին հարձակողական տրամադրությամբ և անընդհատ աղմկում էին:

Բոլորն անհամբեր սպասում էին դատական ատյանի ժամանմանը: Եվ ահա դահլիճը միանգամից սկվեց լռեց, երբ լսվեց դատական քարտուղարի հնչեղ ու ազդու ձայնը.

-Ոտքի, դատարանն է գալիս:

Դատական ատյանի անդամները եկան նստեցին իրենց տեղերը: Դատավոր Սուսաննա Գաբրիելյանը դատական նիստը հայտարարում է բացված, մի քանի խոքով բացատրում դատարանի վա-

բոյթում դրված հարցի բովանդակությունը և ձայնը տալիս պետա-կան մեղադրող-դատախազին: Վերջինս անդրադառնում է մի քանի գլխավոր հարցերի, կանգ առնում հարազատների կողմից դատա-րանին ներկայացված բողոք-հայցի վրա, խոսում այն մասին, որ ըստ այդ բողոքի կասկածի տակ է դրվում Շավարշ Ղազարյանի ինքնաս-պանության վարկածը: Պետական մեղադրողը խոսում է այն մասին, որ դատարանը, հարգելով հարազատների քաղաքացիական իրա-վունքները, բողոքարկման կարգի համաձայն, նորից է անդրադառ-նում հարցի քննարկմանը՝ նպատակ ունենալով պարզելու, թե Շա-վարշ Ղազարյանը ինքնասպան է եղել, թե՞ նրան բանտում սպանել են: Դատախազի այս խոսքի վրա դահլիճից հանկարծ լսվում է մեկի զիլ բացականչությունը:

-Դատարանն իզուր է այդ հարցը քննարկում, քանի որ բոլորին հայտնի է, որ ինքնասպանություն է եղել:

-Իզուր ջուր եք ծեծում, պարոնա՛յք, մի՛ փորձեք պատճառ գտնել այնտեղ, որտեղ մեղավորներ չկան: Մեղավորն ինքը՝ էդ Շա-վարշ Ղազարյանն է, որ ինքնասպանություն է գործել,- գոռում է մեկ ուրիշը:

-Նիստը մի՛ խանգարեք, պարոն ոստիկաններ,- սաստում է դատավորը, ամեն ինչ քննությամբ կպարզվի:

Դատախազը խոսքն ավարտեց հետևյալ նախադասությամբ.

-«Գործի» վերաքննության համար կան բոլոր հիմքերը: Ներ-կայացված են ծանրակշիռ փաստեր ու վկայություններ, որոնք մենք հաշվի չառնել չենք կարող: Հենց այդ բանի համար էլ հրավիրված է այս դատական նիստը:

Դատավորի առաջարկությամբ դատարանն սկսեց հարցի քննարկումը: Ձայնը տրվեց դատապաշտպան Վահան Դարբինյա-նին: Վերջինս մանրամասն անդրադարձավ հարցի քննարկման անհ-րաժեշտությանը: Այդ կապացությամբ նա ասաց, որ նախկինում «-Գործը» կարճվել է կասկածելի, գուցե որոշ մարդկանց շահագրգիռ

ջանքերով, կամայական մոտեցումների հիման վրա: Դատաբժշկական ակտը, որոց հաստատվել է ինքնասպանության վարկածը, ստորագրվել է առանց դեպքի մարամսն ուսումնասիրման և տեղի ունեցածի պատշաճ ստուգման: Մի խոսքով, մակերեսային, կողմնակալ մոտեցում է ցուցաբերվել և նույնիսկ «Գործի» քննարկումը դատարան չի մտել: Շավարշ Ղազարյանի ինքնասպանության վարկածը ընդունվել է որպես մինչև վերջ հաստատված բացարձակ ճշմարտություն: Սակայն մեր ձեռքի տակ եղած փաստերը և վկայությունները մեզ բերում են այն հետևությանը, որ տեղի է ունեցել սպանություն և Շավարշ Ղազարյանի ողբերգական վախճանի հետևում թաքնված է մնում իսկական հանցագործը: Թե ով է այդ հանցագործը, կամ ովքեր են հանցագործները, դա արդեն դատարանի պարզելու խնդիրն է:

-Դատապաշտպանը կաշառվա՛ծ է,- գոռում է մեկը առաջին շարքում նստածներից: Բոլորը ճանաչում են Վաղո անունով այն ոստիկանի ձայնը, որ շատերին հայտնի էր որպես շառլատան ու զազրախոս անձնավորություն:

-Հաջորդ անգամ տեղից ռեպլիկ տվողը դուրս է գալու դատարանի դահլիճից: Ձեզ կարգին պահե՛ք,- կրկին զգուշացրեց դատավորը:

Դատապաշտպան Դարբինյանը խոսքն ավարտում ու գնում նստում է իր տեղը:

Սկսվում է վկաների հարցաքննության գործընթացը:

Ոստիկանության լեյտենանտ Տիգրան Հախումյանը, որ Շավարշ Ղազարյանի սպանության օրը հերթապահ էր եղել, վկայեց, որ իրոք ինքնասպանություն է եղել, և իր աչքով է տեսել Շավարշի վզից կախված պարանը: Նույնը կրկնեց նաև մյուս ոստիկան հերթապահը՝ ավագ լեյտենանտ Համլետ Պետրոսյանը: Վերջինս էլ իր նախորդի ասածներին հավելեց, որ ինքն է իր ձեռքով կտրել սպանվածի պարանոցը խեղդող պարանը: Որպես վկա հարցաքննեցին

նաև Գեղամ Հակոբյանին: Սա, կեղծ ժպիտի դեմքին, վեր կացավ և տրված բոլոր հարցերին անշփոթ պատասխանեց: Շատ հասարակ ու պարզ ասաց, որ ինքն այդ օրը, ճիշտ է, գիշերել է ոստիկանությունում, բայց միայն առավոտյան է լսել դեպքի մասին: Թե գիշերը ինչ է կատարվել, ինքը բոլորովին տեղյակ չէ: Նա առանձնապես ընդգծեց, որ դեպքից հետո երկու օր շարունակ տեղաշնությունում է կատարվել, յուրաքանչյուր մանրուք տեղում ստուգվել է, այդ մասին կազմվել է համապատասխան ակտ-արձանագրություն, ականատեսները ստորագրել են այն և ոչ մի կասկած չեն թողել, որ դա, իրոք, եղել է ինքնասպանություն: Միայն հանգամանալից քննությունից-քննարկումից հետո են դատաբժշկական հանձնաժողովի բոլոր անդամները, որոնք իրենց գործի հմուտ մասնագետներ են, հաստատել ու ստորագրել ակտը, այդ թվում նաև հանձնաժողովի նախագահ Մինաս Դաբաղյանը:

-Ոստիկանության և ոչ մի աշխատակցի մոքովն անգամ չի անցել, որ դա հանկարծ կարող է սպանություն լինել: Ես էլ դրանում համոզված եմ եղել և մինչ հիմա էլ համոզված եմ,- իր խոսքը հաղթականորեն եզրափակում է ոստիկանության մայորը:

Ոստիկանության մայորից հետո հարցաքննության է հրավիրվում նաև նրա կինը՝ Սեդա Հակոբյանը: Այն հարցին, թե այդ օրը ամուսինն ինչու է մնացել ոստիկանությունում և աշխատանքից հետո տուն չի գնացել, տիկինը պատասխանեց, որ ինքն ու ամուսինը դրանից առաջ սաստիկ կռվել են իրար հետ, խռով են եղել իրարից, այդ պատճառով էլ նա չի ցանկացել գիշերել տանը:

Դատախազի կողմից հրավիրված վկաների ցուցմունքներից հետո այդ օրվա նիստը հայտարարվեց փակված:

Հաջորդ օրը առավոտյան սկսված նիստին հանդես եկան դատապաշտպանի կողմից հրավիրված վկաները: Վկաներին տրված հարցերի մեծ մասը ուղղված էր «Գործի» բուն քննությանը, որ տալիս էր Վահան Դարբինյանը:

«Գործով» վկա, ոստիկանության նախկին աշխատակից սեր-ժանտ Գևորգ Բարխուդարյանին դատապաշտպան Դարբինյանը խաչաձև հարցեր տվեց:

-Քաղաքացի՛ Բարխուդարյան, դեպքի օրը դո՞ւք էք հերթապահել հեռախոսի մոտ:

-Այո՛, այդ օրը ես եմ եղել հեռախոսի մոտ հերթապահը:

-Դուք այդ օրը տեսե՞լ էք որևէ արտակարգ բան, որ ձեզ տարօրինակ է թվացել:

-Մինչև երեկոյան ժամը ինը-տասը չէ, որևէ տարօրինակ ու անսովոր բան չեմ նկատել:

-Իսկ դրանից հետո՞...

-Դրանից հետո ոստիկանները բերեցին մի քանի խմած-հարբած իրավախախտների և փակեցին ընդհանուր մի բանտախցում: Հետո շատ լավ հիշում եմ երկու ոստիկանների ուղեկցությամբ բերեցին Շավարշ Ղազարյանին, որի ձեռքերը ամուր շղթայված էին: Այդ պահին մայոր Հակոբյանն այդտեղ էր: Նրա ցուցումով Շավարշին գցեցին առանձին խուց: Իմ հարցին, թե ինչու առանձին խուց, ոստիկաններից մեկն ասաց, որ նա վտանգավոր հանցագործ է:

-Ի՞նչ եղավ դրանից հետո,- հարցապնդումը շարունակեց դատապաշտպան Վահան Դարբինյանը:

-Ինձ տարօրինակ թվաց այն, որ ոստիկանության մայոր Գեղամ Հակոբյանը մի քանի անգամ մոտավ այն խուցը, որտեղ գտնվում էր Շավարշ Ղազարյանը:

-Շարունակեք, շարունակեք,- ասաց դատապաշտպանը,- խնդրում եմ ասեք՝ ուրիշ էլ ի՞նչ տեսաք կամ լսեցիք դուք:

-Հետո գիշերվա տասներկուսին-մեկին Շավարշ Ղազարյանի խցից տարօրինակ ձայներ հասան ականջիս: Այնտեղից այնպիսի բղավոցներ, կանչեր ու հառաչանքներ լսեցի, որ ինձ թվաց, թե այնտեղ անասուն են մորթում:

-Հետո՞... Այդ ձայները երկար շարունակվեցի՞ն:

-Չէ, մոտ մեկ ժամ հետո ամեն ինչ խաղաղվեց ու ես մթության մեջ նկատեցի, որ երկու ոստիկաններ դուրս եկան խցից ու շտապ հեռացան:

-Դու ճանաչեցի՞ր Շավարշ Ղազարյանի խցից դուրս եկող այդ ոստիկաններին:

-Չէ, շատ մութ էր, հազիվ նկատելի էին նրանց կերպարանքները:

-Դրանից հետո կարո՞ղ է մայոր Հակոբյանը կամ մեկ ուրիշը երևացած լինի:

-Չէ, ամեն ինչ խաղաղվելուց հետո այլևս այնտեղ ոչ ոք չի երևացել:

Դատարանի դահլիճում աղմուկ բարձրացավ: Ոստիկանական շարքերում ոմանք սկսեցին աղմկել, գոռալ, ճչալ, լուտանքներ թափել դատապաշտպանի կողմնակիցների հասցեին՝ ասելով, որ այդ ամենը նախապես կազմակերպված դավադրություն է մայոր Հակոբյանի դեմ: Այս ու այն կողմից բացականչություններ էին լսվում դատապրոցեսը դադարեցնում մասին և այլն: Դատավոր Սուսաննա Գաբրիելյանը մի քանի անգամ միջամտեց, փորձեց լռեցնել դատաքննությունը խանգարողներին, սպառնաց դատն անցկացնել փակ դահլիճում առանց հանդիսատեսների: Ի վերջո Գեղամ Հակոբյանի մի նշանով ոստիկանները հանգստացան: Հակոբյանը հասկացրեց, որ համը հանել պետք չէ: Հերիք է՝ որքան աղմկել էն: Մի այն դրանից հետո դահլիճում տիրեց լռություն:

Դատապաշտպան Վահան Դարբինյանի միջամտությամբ ձայնը տրվում է Շավարշ Ղազարյանի եղբայր Ռուբիկ Ղազարյանին: Վերջինս դատարանին պատմում է ոստիկանության մայոր Հակոբյանի անմարդկային հատկանիշների մասին, և այն մասին, որ նա իր նկատմամբ էլ շատ դաժան է եղել. Ծեծել է իրեն և իր նկատմամբ անօրինական որոշում է կայացրել: Իր խոսքի վերջում Ռուբիկ Ղա-

զարյանը դատարանին համոզում է, որ Շավարշի սպանությունն էլ կատարվել է անձնական հողի վրա:

Ոստիկանների կողմից նորից աղմուկ բարձրացավ: Ամենից բարձր գոռում-գոչում էր Վաղը անունով մի նախկին ոստիկան, որ ըմբոստության ցույցեր էր անում Վահան Դարբինյանի կողմնակիցների դեմ վարակելով իր նման մի քանի ամբարտավանների:

Դատապաշտպան Վահանն անտարբեր էր այդ ամենի նկատմամբ և հասկացնում էր իր շրջապատի մարդկանց, որ ուշադրություն չդարձնեն հակառակ կողմի հայհոյանքների ու սպառնալիքներին: Ռուբիկ Ղազարյանի ցուցմունքներից հետո Վահան Դարբինյանը խնդրում է դատավորին ձայնի իրավունք տալ Շավարշ Ղազարյանի կնոջը՝ Տատյանա Տարասովային: Նախկին ոստիկանության շարքերում նորից աղմուկ է բարձրանում: Ոստիկան Վաղն կոկորդը պատռելու չափ գոռում է.

-Այդ ռուս լիրբը ի՞նչ գործ ունի այստեղ: Նա ի՞նչ իրավունք ունի խոսելու իր ամուսնու մասին, որի հազար անգամ դավաճանել է:

Աղմուկը հասավ գագաթնակետին:

Դատավորի ջղագրգիռ ձայնը խլանում էր ընդհանուր աղմուկի մեջ: Ճիչ ու աղմուկի միջից առանձնանում էր Վաղոյի ձայնը.

-Մենք պահանջում ենք դադարեցնել դատավորությունը: Մենք չենք ուզում լսել այդ ռուս փչացածին: Մենք թույլ չենք տա արատավորել ազնիվ ու վաստակաշատ մարդկանց անունները: Մենք պահանջում ենք ձայն չտալ հայ ոստիկանի պատիվը ոտնատակ տվող մարդկանց:

-Լռվի՜ն, լռվի՜ն, թե չէ բոլորիդ դուրս կհանեմ դահլիճից, տանտիրոջ օրվա կալանք կնշանակեմ խանգարողներին,- ընդհանուր աղմուկի միջից սաստկաձայն ճչում էր դատավոր Սուսաննա Գաբրիելյանը:

Այդ ժամանակ Գեղամ Հակոբյանը ձեռքը բարձրացրեց: Դա նշան էր, որ աղմուկը դադրեցնեն:

Աղմկարարները իսկույն հանդարտվեցին: Տիրեց լռություն...

-Տիկի՛ն Տարասովա, ձեզ ենք լսում,- ասաց դատավորը:

Տատյանան դանդաղ ու հպարտ քայլերով մոտեցավ ամբիոնին:

-Խնդրում եմ ասեք՝ դուք երբ եք ամուսնացել Շավարշ Ղազարյանի հետ,- հարցրեց դատապաշտպան Դարբինյանը:

-Հազար ինը հարյուր իննսունյոթ թվականի սեպտեմբերի տասին Եկատերինբուրգ քաղաքում,- հանգիստ պատասխանեց Տատյանա Տարասովան:

-Պատմեք ձեր ամուսնու բացասական կողմերի մասին:

-Մեր ամուսնական կյանքում ես բացասական բաներ չեմ տեսել նրա մեջ: Միայն սաստիկ ջղայնանում էր, երբ անաշնիվ բաներ էր տեսնում իր շրջապատում:

-Նկատե՞լ եք, որ նա տեղի-անտեղի ընդհարվի ընկերների հետ կամ գողությամբ զբաղվի:

-Ո՛չ, նա էլեգանտ ու աշնիվ տղամարդ էր և իրեն թույլ չէր տա իջնել գողի կամ կռվազանի մակարդակի: Նա չափազանց հեռու էր այդպիսի բաներից:

-Դուք եկել եք Հայաստան: Ապրել եք Գանձասարում, կարո՞ղ է նկատել եք նրա կոմից թույլ տրված հակաօրինական քայլեր: ուրիշի ունեցվածքը գողանալու հակումներ:

-Ես արդեն ասացի, որ նա հեռու էր այդպիսի բաներից: Նա ատում էր գողությունը, խաբեությունն ու կեղծիքը: Նա հոգով շիտակ մարդ էր: Նա միշտ ծանրաբեռնված էր հասարակական հոգսերով: Նրան սիրում ու պաշտում էին իր ազատամարտիկ ընկերները:

-Տատյանա Տարասովա, Շավարշի ձեռքին կիթառ կար չէ՞, որի պատճառով էլ նրան ձերբակալեցին Երևանի երկաթուղային կայարանում:

-Այո՛, կար, նա ուր էլ գնում, կիթառը հետը տանում էր:

-Իսկ դա ի՞նչ կիթառ էր նրա ձեռքին:

-Դա Շավարշի սեփական կիթառն էր, որ գնել էր Եկատերինբուրգի երաժշտական խանութներից մեկից: Նա հաճախ էր ընկերական հավաքույթներում նվագում ու երգում:

-Զերբակալելուց հետո դուք հանդիպե՞լ էք ձեր ամուսնու հետ:

-Ո՛չ, դրանից հետո ես այլևս նրա հետ չհանդիպեցի: Հետո լսեցի, որ իբր նա բանտում ինքնասպանություն է գործել...

Հուզվեց, լաց եղավ Տատյանա Տարասովան: Երկար ժամանակ հուզմունքը խեղդում էր նրան և չէր կարողանում որևէ բան ասել: Հետո, երբ հուզմունքը քիչ թե շատ անցավ, Վահան Դարբինյանը նոր հարց տվեց:

-Տատյանա Ադամովնա, դու հավատո՞ւմ էք, որ Շավարշը ինքնասպան եղած լինի:

-Ես առաջին իսկ օրից չեմ հավատացել դրան և մինչև օրս էլ չեմ հավատում: Շավարշը կենսուրախ, կյանքով լեցուն տղամարդ էր: Նա այս աշխարհից ինքնակամորեն հեռանալու ոչ մի պատճառ չուներ: Նա իրեն երջանիկ էր զգում, ուրախ ու հպարտ էր, որ ինքն էլ մասնակցել է Ղարաբաղի ազատագրմանը: Նա ուզում էր վայելել կյանքը: Ուզում էր ապրել ու ապրել: ՈՒզում էր հզոր տեսնել իր Հայրենիքը՝ հզոր ու անպարտելի: Բայց սրիկաները խավարեցրի նրա արևը, գազանաբար հոշոտեցին նրան, անկատար թողեցի նրա լուսավոր նպատակներն ու ծրագրերը: Նա պատերազմում չզոհվեց, թուրքը չկարողացավ սպանել նրան, բայց այստեղ նրան սպանեցին թուրքից ավելի վտանգավոր թշնամիները: Մեր ներքին թշնամին դավադրաբար կործանեց մի երդվյալ Հայրենասերի ու վառվռուն մի երիտասարդի,- նորից հուզվեց Տատյանա Ադամովնան, նորից աղի արցունքներ թափեց՝ ձեռքերը երեսին սեղմած:

Փոքր դադարից հետո Վահան Դարբինյանը մի նոր ու անսպասելի հարց տվեց.

-Տատյանա Ադամովնա, դուք սիրո՞ւմ էիք ձեր ամուսնուն:

Վահանի նման հարցը բոլորի համար շատ անսպասելի էր:

-Այդ ո՞ւմ եք նման հարց տալիս: Ո՞նց կարող է ռուս լիրբը նրան սիրել՝ հայ տղամարդուն: Դա ի՞նչ հարց է:

Տատյանան սրբեց արցունքները և սրտի խորքից դուրս թռչող հառաչանքը զսպելով՝ ասաց.

-Դա ի՞նչ հարց է, ես չեմ հասկանում այդ բառի իմաստը: Այդ զգացմունքը արտահայտում են այլ կերպ: Սերը երեխաների հանդեպ է, ծնողների, քույրերի, եղբայրների: Իսկ երկու հակառակ սեռի ներկայացուցիչները իրենց զգացմունքները արտահայտում են այլ կերպ: -Տատյանան լռեց. բոլորը սպասում էին, թե ինչ կասի նա՝ ասես ժխտելով սերը: -Ապրելով գերագույն հաճույք՝ և դաժան տանջանքի զգացմունքներով ահա այդ է սերը:

Ամբողջ դահլիճը լսեց այդ զգացմունքների մասին, անգամ դրա մասին շատերը պատկերացում չունեին կամ էլ արտահայտվել էին կարող՝ չիմանալով դրա մասին:

«Բերդը» նստած տեղից լրջացած առաջ նստեց, ընդունեց լուրջ տեսք:

Տիկին դատավորը բոլորովին կենտրոնացած, լուրջ նայեց Տատյանային, իր մեջ ապրելով այն, ինչի հանդեպ ապրել է իր հասունացած կյանքում: Տպավորությունն թողեց, թե խորը չի՞ հասկանում այդ բառերի իմաստը:

Հեռուստատեսությամբ «Հայրենիքի ձայնը» ալիքով դատական պրոցեսը շարունակում էին ցուցադրել: Դիտողները բարձրացրի հեռուստացույցի ձայնը: Գանձասարում համարյա բոլորը դիտում էին այդ ալիքով դատական պրոցեսը: Նրանք ճանաչում էին Տատյանային: Ամուսինները, թողնելով իրենց զբաղմունքները, մոտեցան հեռուստացույցին: Սկսեցին լրջորեն դիտել դատական պրոցեսը:

-Հաճույք ստանում են այն ամուսինները, երբ իրար հանդիպում են ամեն օր, իսկ գերագույն հաճույք, երբ երկուսով պառկում են անկողնում իրար գրկելով:

Տատյանան լռեց: Բոլորի մարմնով անցավ սարսուռ:

-Տանջանք,- շարունակեց Տատյանան,- երբ մեկ-երկու օր իրար չեն տեսնում: Իսկ երբ բաժանվում են երկար օրերով, նրանց մեջ իրենցից անկախ առաջանում է դաժան տանջանք:

Դատարանի դահլիճը շարունակեց լռությունը: Ասես իրենց համար անհասկանալի բառեր են լսում: Ոչ մեկը իրեն իրավունք չէր վերապահում արտահայտվելու: Դատապաշտպան Դարբինյանը՝ չսպասելով նման պատասխանի, լուռ կանգնած նայում էր Տատյանային:

Դատավոր Սուսաննա Գաբրիելյանը թափեր արցունքներ, թե իրեն պահեր լուրջ, իր համար անսպասելի արցունքներից:

«Բերդը» մտածում էր. «Մի՞թե կարող են երկու այլազգի ներկայացուցիչ իրար սիրեն այդ աստիճանի: Հերագույն հաճույքի և դաժան տանջանքի, որին արժանացան երկու անձանվորությունները: Հայազգի ֆիդային և Ռուսաստանի սովորական քաղաքացին»:

Տատյանան, սրբելով արցունքները և սրտի խորքից դուրս թռչող հառաչանքը զսպելով, ասաց.

-Այժմ այդ երկար արտահայտությունը փոխարինվում է սեր գեղեցիկ բառով: Ես ոչ միայն սիրել եմ նրան, այլ հիմա էլ սիրում եմ: Նա իմ երազանքների տղամարդն էր: Իմ հոգու նեցուկն ու հենարանը:

Դատական ամբիոն բարձրացած այդ ռուս կինն էր միտքն ավարտում հետևյալ խոսքերով:

-Հարգելի դատավոր, դատական ատյանի հարգելի մասնակիցներ, Շավարշ Ղազարյանի հիշատակը հարգող սիրելի քաղաքացիներ, ես կորցրել եմ իմ կյանքի կեսը, աշխարհում ինձ համար ամենաթանկ մարդուն, և ինձ մի քիչ սփոփված կզգամ, եթե դատարանը

կարողանա պարզել, թե ով է սպանել մեր երկրի փառապանծ զա-
վակներից մեկին, անբասիր ու նվիրական կենսագրություն ունեցող
Շավարշ Ղազարյանին: Եթե տեսնեմ նրան իմ աչքով, այդ մարդա-
կերպ հրեշին, այնժամ իմ այս կանացի բռունցքները քար կդառնան
ու կփշրեն ոճրագործ սատանայի գանգը, իմ մատները սրեր կդառ-
նան ու կմխրճվեն մարդասպանի սիրտը, և ես ամբողջությամբ վրեժ
կդառնամ ու փոշի կդարձնեմ այդ այլանդակ գոյությունը:

-Հարգելի դատավոր, դատական ատյանի հարգելի անդամ-
ներ, ազնիվ քաղաքացիներ, է՛ս, Շավարշ Ղազարյանի կնոջ իրա-
վունքով, սարսափելի վիշտ կրած քաղաքացու իրավունքով դատա-
րանից պահանջում եմ գտնել ամուսնուս սպանող ճիվաղին և խստո-
րեն պատժել: Ես պահանջում եմ հասարակությունը մաքրել նման
տականքներից, որ չաղտոտեն մեր շրջապատը, որ չարատավորեն
մեր երկրի ազնիվ քաղաքացիների պատիվն ու արժանապատվութ-
յունը:

Հայաստանի բնակչության մեծ մասը հնարավորություն ուներ
դիտելու այն ամենը, ինչը որ տեղի էր ունենում Հանրապետության
Գերագույն դատարանի բեմի վրա և դահլիճում: Շատերն էին ի-
րենց հայացքները էկրանին հառած մեծ հետաքրքրությամբ նայում
դատական ընթացքին, լսում վկաների ելույթներն ու պատասխան-
ները:

Առանձնակի հետաքրքրությամբ դատարանում տեղի ունեցող
իրադարձություններին հետևում էին Գանձասարի բնակիչները: Ն-
րանք լավ էին ճանաչում իրենց քաղաքի հարգված ու սիրված որ-
դուն՝ Շավարշ Ղազարյանին, սգում էին նրա կորուստը և անհամ-
բեր սպասում դատարանի վճռին: Մարդիկ սպասում էին այն պա-
հին, երբ կհայտարավի մարդասպանի անունը:

Ամբողջ այդ պրոցեսն հեռուստացույցով դիտողները դեռ եր-
կար նստած նայում էին իրար:

Քառասուն-հիսուն տարվա ամուսնացածները գրկեցին իրար՝ գլուխները միացնելով մեկը մյուսին, բռնելով մեկը մյուսի ձեռքը: Մ-տովի հիշեցին իրենց ամուսնական կյանքը՝ լուռ իրարից ներողություն խնդրելով իրար դաժան տանջանքների համար:

Երիտասարդ ամուսինները գրկեցին իրար՝ նայելով մեկը մյուսի աչքերին, համբուրվում էին՝ ասես իրարից ներողություն խնդրելով: Որոշ, զույգեր բաժանված լինելով իրարից, ապրելով տարբեր սենյակներում, չդիմանալով, թափեցին հաճույքի և տանջանքների արցունքներ:

Այդ օրը դատական նիստը չավարտվեց: Դեռ ամեն ինչ հստակեցված չէր: Դեռ շատ հարցեր էին ապացուցման կարիք զգում: Դատական ատյանի նախագահ՝ առաջին կարգի դատավոր Սուսաննա Գաբրիելյանը այդ օրվա նիստը հայտարարեց փակված:

«Բերդը» դահլիճից դուրս եկավ տարակուսանքների բեռով: Նա ինքն իր համար պարզել էր ամեն ինչ: Նա համոզված էր, որ գլխավոր հանցագործի իր կողմնակիցների հետ նստած էր դատարանի դահլիճում: Դատարանը իրավունք չուներ հապճեպ որոշումներ կայացնելու: Հարկավոր էր մինչև վերջ պարզել ամեն ինչ:

«Դահիճ-մարդասպանը, երևի պարզ կդառնա դատական նիստում»,- մտածեց «Բերդը» և մտավ մոտիկ սրճարանը:

Նստեց, նայեց պատուհանից: Սուրճի բաժակը դեռ լրիվ չխմած՝ դուրս եկավ սրճարանից: Նա նկատել էր, որ դատական նիստի ամենամոլեռանդ աղմկարարներից մեկին, որին Վաղը էին ասում: Ահա այդ Վաղն, ինչ-որ բանից փախչողի նման անընդհատ ետ նայելով, անցնում էր դիմացի փողոցը: «Բերդը» կանգնում է նրա ճանապարհին:

-Էդ ո՞ւր ես գնում, քաղաքացի՛ Վաղը,- ծաղրաշեշտ ասում է «Բերդը»:

-Որոշեցի տուն գնալ,- նայելով իր դիմաց ժայռի նման կանգնած մարդուն՝ կմկմաց Վաղն և շարժվեց, որ ճանապարհը շարու-

նակի, մեկ էլ նկատող, որ իր ետևին կանգնած երկու ուրիշ մարդ էլ կա, մնաց տեղը մեխված:

-Հը՛, ինչպե՞ս ես քեզ զգում, հրդեհելու պարոն մանագետ,- քրթմնջալով ասաց Վաղոյի ետևին կանգնած հաղթանդամ երիտասարդը:

Վաղոն, մինչ հասկանա իր գլխին կախված վտանգի չափը, նրա ձեռքերը ծալեցին ետևին և մի հզոր բազուկ կոտրելու աստիճան սեղմեց Վաղոյի ձեռքը:

-Հանձն առ, որ դատապաշտպան Վահան Դարբինյանի նորակառույց տունը դու ես հրդեհել, թե չէ հենց այստեղ կսատկացնենք քեզ:

-Ես մեղավոր չեմ, ես պատվեր եմ կատարել, ինձ ստիպել են ,- բառերի կեսը կուլ տալով ասաց Վաղոն:

-Իսկ ո՞ւմ պատվերն ես կատարել, ասա՛, շուտ, անասո՛ւն:

-Գեղամ Հակոբյանի, նա է ինձ ստիպել...դե խնդրում եմ ինձ բաց թողեք:

-Խոստացիր, որ դատարանում էլ ես նույն բանը ասելու. Թե չէ կխեղդենք քեզ հենց այստեղ: Ձոքի՛ր ու խոստացի՛ր, դե...

Վաղոն դողալով ծնկում է գետնին:

-Խոստանում եմ, միայն ինձ մի սպանեք:

Արմանը դատարանի դահլիճից ուղիղ գնաց տուն: Անհանգիստ էր: Նրա համար դեռ ոչինչ պարզ չէր: Ո՞վ կհաղթի, խարդավանքը, խաբեությունը, թե՞ ճշմարտությունը: Մի՞թե այդ կեղտոտ ու ապականված սրիկաները նորից դուրս կպրծնեն օրենքի ճաղերի արանքից: Մի՞թե օրենքը նորից կարող է արդարացնել այդ կեղտոտ ավազակներին: Արմանը հավատում ու չէր հավատում արդարությանը: Նրա հոգում ամեն ինչ խառնվել էր իրար:

Դատապաշտպան Դարբինյանի աչքին ողջ գիշեր քուն չեկավ: Նա լարված մտածում էր, թե ինչ կարող էր անել, որ չի արել: Ուրիշ ի՞նչ հնարավորություն է ձեռքից բաց թողել: Բայց և այնպես, նա

զգում էր, որ կամաց-կամաց օղակը սեղմվում է Գեղամ Հակոբյանի և նրա կամակատարների շուրջը: Նա այլևս մահվան օղակից դուրս գալու եղք չունի: Փողն ու կաշառքը, նրա շառլատան ընկերները նրան այլևս օգնել չեն կարող: Նա զգում էր, որ դատարանն ամեն կերպ ձգտում է ճշմարտությունն ջրի երես հանել: Նա արդեն համոզված էր, որ դատավարությունը ճիշտ է գնում, և հանձին դատավոր Սուսաննա Գաբրիելյանի, մարդիկ գործ ունեն արդարադատ պաշտոնյայի հետ:

Վահանն այս մտքերի մեջ էր, երբ լսվեց հեռախոսի ձայնը:

-Լսում եմ,- ասաց Վահանը:

-Լա՞վ եք լսում ինձ, դատապաշտպան Վահան Դարբինյան,- հեռախոսի մեջ լսվեց տղամարդու մի բամբ ձայն:

-Այո՛, ես ձեզ շատ պարզ ու հստակ լսում եմ,- կրկնեց Վահանը:

-Այդ դեպքում դու պատրաստ եղեք դատարանի մուտքի մոտ դիմավորելու տիկին Էմմային:

-Բայց նա մեզ մերժել է ներկայանալ դատարան:

-Ձեզ մերժել է, բայց մեզ չի մերժել,- մանր ծիծաղեց անծանոթ տղամարդը,- տիկին Էմման անպայման ներկայանալու է դատարան, պարոն Դարբինյան, մնում է, որ դուք նրան դիմավորեք դատարանի շենքի մուտքի մոտ:

-Ներեցեք, բայց ես ում հետ գործ ունեմ, ո՞վ է խոսողը:

-Դա ի՞նչ կարևոր է, թե ով է խոսողը, ասենք «միստր իքսն» է: Դա ձեզ ի՞նչ կտա,- ու դրեց հեռախոսը:

Վահան Դարբինյանը բոլորովին զգաստացավ, քնատ աչքերը տրորեց ու ինքն իրեն ժպտաց: Նա հասկացավ, որ ինքը մենակ չէ, որ բացի իրենից էլի ուժեր կան, որ շահագրգռված են ի վերջո բացել Շավարշ Ղազարյանի մահվան հետ կապված առեղծվածը: Եվ ինչպես երևում է, այդ բարի ու բարյացակամ մարդիկ գտնվում են վերևում: Թե ովքեր են այդ մարդիկ, ինքը չգիտի, բայց նրանց գոյությունը-

յունը շատ ուրախացրեց դատապաշտպան Վահան Դարբինյանին: «Ուրեմն մենք հաջողության ենք հասնելու»,- մտածեց նա, արագ վեր կացավ ու պատրաստվեց գնալու դատական հերթական նիստին:

Վաղ առավոտյան Արման Աբրահամյանը դատարանի շենքի մուտքի մոտ սպասում էր տիկին Էմմայի երևալուն: Վահանը զանգել էր նրան և ասել ինչ-որ «միստր իքսի» առաջարկի մասին: Տիկին Էմման չուշացավ, եկավ ինչ-որ մի թանկարժեք ավտոմեքենայով: Արմանը նայեց՝ վարորդն անծանոթ էր: Տիկին Էմման իջավ, նայեց շուրջը, տեսավ Արմանին, ժպտաց: Նրանք երկուսով մտան դատարանի դահլիճ:

Դատավոր Սուսաննա Գաբրիելյանը բացեց դատարանի հերթական նիստը: Դահլիճում քար լռություն էր: Բոլորն անհամբեր սպասում էին դեպքերի հետագա ընթացքին: Դատապաշտպան Վահան Դարբինյանը խնդրեց դատավորին նիստը սկսել դատաբժշկական հանձնաժողովի նախագահ Մինաս Դաբաղյանի հարցաքննությունից:

Դատավորը տալիս է իր համաձայնությունը: Գործով վկա Մինաս Դաբաղյանը մոտենում է ամբիոնին: Դատապաշտպան Վահան Դարբինյանը ցույց է տալիս իրար մոտ նստած երեք ոստիկանների:

-Դուք, պարոն Մինաս Դաբաղյան, ճանաչո՞ւմ եք այս երեք անձնավորություններին:

Մինաս Դաբաղյանը նայում է դատապաշտպանի ցույց տված կողմը:

-Այո՛, ճանաչում եմ, գործի բերումով:

-Այս մարդկանցից որի՞ն եք ավելի վաղ ժամանակներից ճանաչում:

-Չէ՛, ես նրանց ճանաչել եմ համարյա միաժամանակ:

-Դուք, պարոն Դաբաղյան, ո՞ր բաձրագույն ուսումնական հաստատությունում եք սովորել:

-Երևանի բժշկականում:

-Ուսանողական տարիներին որտե՞ղ էք ապրել:

-Բժշկական ինստիտուտի ուսանողական հանրակացարանում:

-Ուսանող ընկեր ունեցե՞լ էք Արարատի շրջանից:

-Մենք ուսանողներ էին, ո՞վ էր հարցնում, թե ով որտեղից էի, որ շրջանից կամ գյուղից: Համ էլ հարգելի դատապաշտպան, դա ի՞նչ կապ ունի այսօրվա հարցի հետ:

-Ես եմ որոշում, թե ինչ հարցեր առաջադրեմ վկաներին, հարգելիս, իսկ դուք պարտավոր էք պատասխանել,- և Վահանը կրկնեց հարցը,- Արարատի շրջանից ո՞վ է եղել ձեր ամենամոտ ընկերը:

-Ես շատ ընկերներ եմ ունեցել և նրանց չեմ տարբերել իրարից:

-Ավելի մտերիմներին հնարավոր չէ չհիշել, պարոն Դաբաղյան,- ձեր մոտ ընկերներից մեկի-երկուսի անունը կարո՞ղ էք տալ:

-Ճիշտն ասած, ես իմ ընկերներին չեմ առանձնացրել իրարից, երևի դրանից է, որ նրանց անունները հիմա չեմ հիշում:

-Դուք սովորել էք գինեկոլոգիական-մանկաբարձական ֆակուլտետում, ճի՞շտ է:

-Միանգամայն ճիշտ է,- անվրդով պատասխանեց Դաբաղյանը:

-Պարոն Դարբինյան, անցել է քսանհինգ տարի, ի՞նչ իմաստ ունի այդ հարցը հիմա տալ,- միջամտեց դատավոր Գաբրիելյանը:

-Քաղաքացի դատավոր,- ասաց Դարբինյանը,- գործի համար դա շատ կարևոր հարց է, ինդիրն այն է, որ այն կապված է ուսանողական շրջանի նրանց կողմից կատարված հանցագործությունների հետ:

-Եթե այդպես է, դուք կարող էք շարունակել,- համաձայնեց դատավորը:

-Ճշմարիտն ասեք, պարոն Դաբաղյան,- հարցերը շարունակեց դատապաշտպան Դարբինյանը,- ձեր և ձեր ընկերների մասնակ-

ցումյամբ եղե՞լ էն ասենք, ուսանող աղջիկներին հետապնդելու կամ բռնաբարելու դեպքեր: Կարո՞ղ եք գոնե մի դեպք հիշել,- հարձակողական տոնով ասաց Վահան Դարբինյանը:

-Ես այդպիսի բան չեմ հիշում,- կտրուկ ասաց Դաբաղյանը:

-Դուք չեք հիշում, բայց ահա այստեղ մի կին կա, որ շատ լավ հիշում է ձեր սեռական սանձարձակումյունների մասին: Ապա լավ նայեք այս հարգելի տիկնոջը,- Վահանը ցույց է տալիս տիկին Էմմային,- տեսեք հիշո՞ւմ եք նրան:

Մինաս Դաբաղյանը նայեց ու...սարսափից կուչ եկավ: Նրա դիմաց՝ դահլիճում, նստած էր ուսանողական հանրակացարանի պահակ տիկին Էմման, որն ականատես էր եղել իրենց կողմից թույլ տրված մի շարք խուլիգանական արարքների: «Ես կորա,- մտածեց Մինաս Դաբաղյանը և նրա մարմնով սարսուռ անցավ,- այս կնոջ մոտ ես արդեն փաստերը կեղծել չեմ կարող: Չեմ կարող այլևս թաքցնել իրականությունը: Այդ կինը հոգեառի պես կասի ամեն ինչ»: Ու Դաբաղյանը խեղճացած ու շփոթված հազիվ կարողացավ ասել.

-Ես այլևս ձեր ոչ մի հարցի չեմ պատասխանի:

-Դա ձեր իրավունքն է,- ասաց դատապաշտպան Վահան Դարբինյանը ընդգծված քմծիծաղով և դիմեց դատավոր Սուսաննա Գաբրիելյանին,- քաղաքացի դատավոր, թույլ տվեք այժմ մի երկու հարց ուղղել գործով վկա, ուսանողական հանրակացարանի նախկին պահակ տիկին Էմմային:

-Խնդրեմ, խնդրեմ,- կամեցողաբար ասաց դատավոր Գաբրիելյանը:

Դահլիճում նստած մի երկու ոստիկան փորձեցին աղմուկ բարձրացնել: Նրանցից մեկը գոռաց.

-Այդ խելքը թռած հավաքարարը ի՞նչ պիտի ասի: Մի՛ լսեք նրան, նա հոգեկան հիվանդ է և միայն կարող է զրպարտել ազնիվ մարդկանց:

Դատավոր Սուսաննա Գաբրիելյանը դահլիճում նստած մարդկանց օգնությամբ լուսեցրեց Գեղամ Հակոբյանի մոտ նստած պոռոտախոս ոստիկանին:

Վահան Դարբինյանը, կուրծքն առաջ պարզած, հպարտության խոր զգացումով դիմեց դահլիճին.

-Դատական նիստի հարգելի մասնակիցներ, տեսնո՞ւմ եք՝ առանձին մարդիկ ինչպես են ուզում խեղաթյուրել ճշմարտությունը, ճնշել ազնիվ մարդկանց ազատ խոսքը, սպանել ազնվությունը՝ ճգնելով խուսափել պատժից ու պատասխանատվությունից: Եկել է ժամանակը պատռելու ոչխարի մորթու տակ թաքցրած նրանց գայլային դիմակները:

Այժմ լսենք գործով վկա տիկին Էմմային, որին ես ուզում եմ ընդամենը երկու հարց տալ:

-Տիկի՛ն Էմմա, դուք կարո՞ղ եք հաստատել, որ այն ժամանակ ուսանողական հանրակացարանում ավազակաբարո մի երկու երիտասարդ անմեղ տաջիկներ են բռնաբարել՝ դիմելով վայրենի ուժի:

-Այո՛,- խոսեց տիկին Էմման,- ես ականատես եմ եղել դրանց՝ այդ անասունների այլանդակություններին, որոնք ահ ու սարսափ էին տարածել աղջիկների շրջանում: Նրանցից երկուսն առավել քան վտանգավոր էին: Նրանց զենքը ծեծն ու ջարդն էր և շեղբավոր դանակը, որով վախեցնում էին անհնազանդներին: Ամբողջ օրը թմրադեղերի ազդեցության տակ, այլանդակ մռութներով և շշմած հայացքներով գալիս էին հանրակացարան, սկանդալներ սարքում և գայլի նման անմեղ աղջիկներ ճանկում-տանում իրենց որջը:

-Տիկի՛ն Էմմա, իսկ ովքե՞ր էին այդ թմրամոլ, անբարո ուսանողները, որոնց մասին դուք նշեցիք:

-Ես, հարգելի դատապաշտպան, չեմ կարող տալ այն անմեղ աղջիկների անունները, որոնք զոհ են գնացել բիրտ ու անամոթ, անառակ ու անօրեն այդ մարդկանց անասնական կրքերին: Բայց այդ խուժան-խուլիգանների, մինչև հիմա թաքնված այդ ավազակների

անունները կարող եմ ասել: Այդ փչացածներից երկուսը այստեղ են: Ահա նրանք՝ ոստիկանության մայոր դարձած Գեղամ Հակոբյան և նրա կամակատար Մինաս Դաբաղյանը: Ես իմ ասելիքն ասացի: Մ-նացածը թող մնա դատարանի կամքին ու խղճին:

Դահլիճը մեկեն քարացավ: Անգամ դատավոր Սուսաննա Գաբրիելյանի համար տարօրինակ ու զարմանալի էր, որ հասարակ մի կին այդպես բացարձակ ու արիաբար նզովքի խոսքեր շպրտեց սրիկաների երեսին: Բայց նա հասկացավ, որ դա տարիների ընթաց-քում նրա հոգում կուտակված ատելությունից է, որ ամբարտակը պատռած հեղեղի նման շառաչեց ատելի մարդկանց երեսին: Դա մահացու հարված էր Գեղամ Հակոբյանի և Մինաս Դաբաղյանի ա-նամոթ մռութներին և թվում էր, թե դրանից հետո պետք է ամեն ինչ ավարտվեր, և փակվեր դատական նիստը: Բայց դատապաշտպան Վահան Դարբինյանը դատարանից պահանջեց լսել նաև Մինաս Դաբաղյանի ցուցմունքները: Դատավոր Սուսաննա Գաբրիելյանը այս անգամ ևս հարգեց դատապաշտպանի առաջարկությունը: Իսկ դահլիճի հանդիսատեսներին ընդհանրապես հետաքրքրում էր, թե այդքանից հետո այդ Մինաս կոչեցյալը ինչ պետք է ասի:

Այդ նույն ժամանակ տիկին Գայանե Թումանյանի ուշադ-րությունն ամբողջովին գամված էր հեռուստացույցի էկրանին: Նա ինքնամոռաց դիտում էր դատաքննության ընթացքը, հետևում մարդկանց ելույթներին և ցուցմունքներին: Տիկին Գայանեն գոհ էր դատավարության ընթացքից: Նրան գոհացնում էին վկաների ցուց-մունքները: Նա անչափ ուրախացավ, հատկապես տիկին Էմմայի ե-լույթից, երբ նա համարձակորեն տվեց սրիկա Հակոբյանի անունը:

«Վերջապես, վերջապես սիրամարգի փետուրներով քողարկ-ված սրիկայի դիմակը պատռվեց,- խոր շունչ քաշեց տիկին Գայա-նեն:-Վերջապես այդ տականքը կստանա իր արժանի պատիժը»:

Եվ տիկին Գայանեն մոքով սլացավ դեպի տարիների խորքը: Ինքն այդ ժամանակ ուսանողուհի էր՝ պայծառ երազանքներով ո-

ղողված մի աղջնակ: Բայց այդ անասունը խորտակեց իր երազանք-ները:

Գայանեն չարագուշակ երազի նման հիշեցի ճակատագրական այն պահերը, որ տեղի ունեցան իր հետ: Տխուր ու հոգեմաշ հուշերը պաշարեցին նրան:

...Նա իր ծննդյան օրը անցկացրեց Հայրենի Կիրովականում:

Ամեն ինչ ուրախ անցավ: Ծնողները, հարազատները, ընկեր-ներն անչափ ուրախացան և առավոտյան ավտոբուսով նրան ճանա-պարհեցին Երևան: Ճանապարհի կեսին ավտոբուսը փչացավ: Ուղ-ևորներն ստիպված սպասեցին մինչև վարորդը կարողացավ կարգի բերել մեքենան: Երբ ճանապարհվեցին, արդեն մութ ընկել էր: Գա-յանեն հանրակացարան հասավ համարյա կեսգիշերին: Դուռը ծեծեց: Այն բացեց պահակ տիկին Էմման՝ զայրացած ооթռնթռալով.

-Աղջիկ ջան, կեսգիշեր է արդեն, հասկանո՞ւմ ես...ինչո՞ւ ես այսքան ուշ գալիս: Բա որ դուռը չբացեի, ի՞նչ պիտի անեիր: Դե լավ, շուտ ներս արի և կամաց բարձրացիր քո սենյակը:

Գայանեն տիկին Էմմային բացատրեց, թե ինչու է ուշացել և դանդաղ բարձրացավ երրորդ հարկ: Եվ այստեղ՝ դեռ իր սենյակին չհասած նրա առջև հայտնեց Գեղամ Հակոբյանը.

-Էդ ո՞ւր ես գնում, գեղեցկուհի,- կտրված ձայնով ասում է թմրադեղից արբած-փքված երիտասարդը և փորձում գրկել Գայա-նեի բարակ մեջքը:

Գայանեն փորձ է անում դուրս գալ օձի նման մեջքին փա-թաթված ձեռքերի օղակից և հրելով նրան դեպի դիմացի պատը՝ ու-զում է փախչել դեպի իր սենյակը: Հենց այդ ժամանակ էլ Գայանեի սեմքին հուժկու հարված է իջնում, և նա, գիտակցությունը կորցրած, փռվում է հատակին:

Գեղամ Հակոբյանը ուշագնաց աղջկան քարշ է տալիս դեպի իր սենյակը:

Գայանեն ուշքի է գալիս միայն երկու ժամ հետո և սարսափով զգում, թե ինչ է տեղի ունեցել իր հետ: Վայրի գազանի ճանկն ընկած Գայանեն բռնում է գլուխը և գոռում է ամբողջ սենյակով մեկ: Ահսոսվոր ձայնից ահաբեկված՝ աղջիկները դուրս են գալիս կողքի սենյակից և Գայանեի հոշոտված մարմինը տեղափոխում հիվանդանոց:

Այդ հրեշավոր դեպքից հետո Գայանեն այլևս Երևանում չի մնում: Նա թողնում է ամեն ինչ և մեկնում Կիրովական՝ իր ծնողների մոտ: Ծնողները բողոքում են, դատի տալիս, պահանջում պատժել հանցագործին: Բայց իզուր: Ոչինչ չի ստացվում: Ստոր սրիկայի ոստիկանապետ հայրը կարողանում է պատասխանատվությունից ազատել որդուն:

Տիկին Թումանյանը հիշում է ամեն ինչ և հիշում է ցավով, ձեռքը սրտին սեղմած: Բայց ցավին հաջորդում են հրճվանքի պահերը, երբ զգում է, որ սրիկան այլևս փրկվելու հնար չունի, որ արդարադատ զենքի թակարդից այլևս դուրս գալ չի կարող: Նրան չի կարող փրկել նույնիսկ ամենազոր հայրը, որը հիմա պահեստի գեներալ է: Այդ պահին պահեստի գեներալը հաշմանդամի սայլակից նույնպես դիտում էր «Հայրենիքի ձայնը» ալիքը հեռուստացույցով:

Տիկին Թումանյանը չանջատեց հեռուստացույցը, քանի որ դատավարությունը դեռ չէր ավարտվել: Նա շարունակում էր համակ ուշադրությամբ նայել էկրանի վրա տեղի ունեցող իրադարձությունները: Նա անհամբեր սպասում էր, թե ձեռնաշղթաներ կդնեն Գեղամ Հակոբյանի կեղտոտ ձեռքերին: Այդ պահը դեռ չի հասունացել:

Դատարանը հանգիստ շարունակում էր իր գործընթացը: Վկաների հարցաքննությունը դեռ շարունակվում էր: Հետզհետե բացվում էր գաղտնիքների կծիկը: Հարցաքննության ամբիոնի մոտ է հայտնվում գործով վկա Մինաս Դաբաղյանը:

Առջևի կարգում նստած տիկին Էմման խորը հայացքով նայեց Մինաս Դաբաղյանին: Նրանց հայացքները համընկան: Մինասը զգաց այդ հայացքի ծանր ազդեցությունը: Ահա նա փշրված, խեղ-

ճացած, վհատ ու կոտրված կանգնել է, և շփոթված աչքերով նայում էր դահլիճում գտնվող մարդկանց աչքերին և կարծես նրանցից գութ էր աղերսում: Նա համոզված էր, որ այլևս ստելու և ճշմարտությունից խուսափելու տեղ չկա: Եկել է պահը, երբ նա ամեն ինչ պետք է խոստովանի և ինչ-որ չափով կարողանա քավել անցյալում թույլ տված իր անսերելի ու հանցավոր սխալները:

Մարդիկ շունչները պահած սպասում են, թե նա ինչ պիտի ասի:

Մինաս Դաբաղյանը խոսեց.

-Մայոր Հակոբյանն ինձ զանգեց գիշերվա կեսին: Ասաց, որ ես շտապ ներկայանամ ոստիկանություն:

Չանցած կես ժամ ես արդեն այնտեղ էի: Ոստիկանության այդ օրվա հերթապահը ինձ ուղեկցեց Շավարշ Ղազարյանի խուցը: Նայեցի՝ Շավարշը արյան մեջ կորած, բերանքսիվայր պառկած էր հատակին: Նրա դեմքին, թիկունքի և որովայնի շրջանում ռետինե մահակների տասնյակ հետքեր կային: Սկզբում կարծեցի, թե ողջ է, պատրաստվում էի բժշկական օգնություն ցույց տալ, բայց քիչ հետո նկատեցի, որ նա արդեն մեռած է, Շավարշի արյունլվա վերնաշապկի գույնը չէր երևում: Նա ոտից գլուխ արյան մեջ կորած էր: Ցնայած դրան, ոստիկաններն իրենք էլ չէին հավատում, որ նա արդեն մեռած է: Երբ համոզվեցին, մի պահ շփոթվեցին: Եկավ մայոր Հակոբյանը, չնայեց էլ դեպի մեռած Շավարշը՝ փորձելով ծածկել արյան հետքերը: Տեսնելով մի պահ շփոթված ոստիկաններին, մայոր Հակոբյանն ասաց. «Բայց դուք ի՞նչ մեղավոր եք, որ նա ինքնասպան է եղել»:

Ես հասկացա, որ Շավարշին Հակոբյանի հրամանով ծեծելով են սպանել: Մայոր Հակոբյանը կարգադրեց պարան բերել և արդեն մեռած Շավարշին կախել առաստաղից: Այդպես էլ արեցին:

Երկու ժամ հետո բոլորովին լուսացավ: Աշխատանքի եկած բոլոր ոստիկանները հերթով եկան և իրենց աչքով տեսան, որ Շավարշ

Ղազարյանն իրոք կախված է առաստաղից: Ոստիկանությունում աղմուկ գնաց այն մասին, որ բանտարկյալ Շավարշ Ղազարյանը ինքն իրեն կախել է: Շուտով այդ մասին լուրը տարածվեց ամբողջ քաղաքում: Ես որպես բժիշկ-մանրագետ ստուգելու, տեղազննում կատարելու, իրողության հանգամանքները ճշտելու անհրաժեշտություն չունեի: Գեղամ Հակոբյանը մոտեցավ ինձ ու ականջիս շշնջաց. «Գիտես չէ՞՝ ինչ պիտի անես»: Ես բացասաբար շարժեցի գլուխս: Այնժամ՝նա, արմունկս սեղմելով, կարգադրեց. «Հենց հիմա արձանագրություն կազմիր ինքնասպանության մասին»:

Սկզբում փորձեցի հրաժարվել՝ զգալով, թե ինչ մեծ պատասխանատվություն եմ վերցնում ինձ վրա: Բայց և այնպես գիտեի մայոր Հակոբյանի դաժանության մասին: Գիտեի, թե նա նման դեպքերում ինչի է ընդունակ: Նա ինձ ֆիզիկապես կոչնչացնի: Վախեցա, չկարողացա հրաժարվել: Ակտ-արձանագրությունը կազմվեց, ըստ որի հաստատվեց, որ, իրոք, տեղի է ունեցել ինքնասպանություն: Մնում էր այն ստորագրել: Նորից տատանվեցի՝ ստորագրե՞լ, թե՞ չստորագրել:

Որսալով իմ տատանման պահը՝ Հակոբյանը մոտեցավ ինձ և ականջիս մեջ ֆշշաց. «Դիակդ հենց այստեղ կփռեմ, եթե չստորագրես»: Ես ստորագրեցի ակտը: Ստորագրեցին նաև հանձնաժողովի մյուս անդամները՝ անտեղյակ այն բանից, թե գիշերը ինչ է տեղի ունեցել: Ահա այն ամենը, ինչ կարող էի ասել:

Դահլիճում աղմուկ բարձրացավ: Մեկը բարձր գոռաց.

-Մահ հանցագործներին:

Ամբողջ դահլիճը կրկնեց.

-Մահ հանցագործներին:

-Պահանջում եմ լռություն,- ասաց դատավորը,- ամեն ինչ կարվի օրենքի սահմաններում:

Տիկին Էմման ոչ մի խոսք չասաց: Նա հավատաց «Բերդին» և Արմանին:

Դատապաշտպան Վահան Դարբինյանը զգաց, որ դատավարությունը մոտենում է իր ավարտին: Թաքնված հանցագործությունը մինչև վերջ բացահայտված է, և ինքը հաղթանակ է տարել ստոր ու նենգ թշնամու նկատմամբ: Եվ չգիտես ինչու այդքան տարիներ անցնելուց հետո խղճում էր Շավարշի կնոջը՝ Տատյանա Տարասովային և եղբորը՝ Վալտեր Ղազարյանին: Այսքան տարիների ընթացքում որքա՞ն են տանջվել նրանք, որքա՞ն են տառապել Շավարշին սպանողին հայտնաբերելու համար: Որքա՞ն են նրանք բողոքել ճշմարտության համար, բայց այդպես էլ արդյունքի չեն հասել: Վահանն զգում էր, որ Շավարշի թշնամուն հայտնաբերելը հոգեկան ինչ անբավարարվածության զգացում է պարգևել հարազատներին: Այս մտքերի մեջ պարուրված՝ Վահանը հայացքն ուղղեց Տատյանային: Տատյանան լալիս էր, առատորեն արցունք էր թափում, հեկեկում երեխայի նման: Վահանը չէր հասկանում դրանք ուրախության թե տխրության արցունքներ են: Այդ ինչ վշտից է Տատյանան լալիս, ափսոսանքի՞ց, թե՞ սիրտանքից: Այնուամենայնիվ, նա հպարտ էր իր արածով: Վահանը մեծ դժվարությունների ու անելանելի պայմանների գնով հասել էր իր նպատակին: Վահանը գոհ էր իր տիտանական ջանքերի արդյունքից: Մայոր Գեղամ Հակոբյանի նման անգութ ու չար գոյությունը վերջապես տապալված է: Եվ դա միայն իր ջանքերի արդյունքը չէ: Նրան սատար են կանգնել իրենից ավելի ուժեղ ու հզոր մարդիկ: Ինքն, իհարկե, մենակ չէր կարող համնել հաջողության: Դժվար է ասել՝ ինչ կլիներ, եթե չլինեին գործով շահագրգիռ ուրիշ էլ ավելի զորեղ մարդիկ: Վահան Դարբինյանն առաջին անգամ գոհ էր նաև օրենքից ու դատարանից: Վերջապես արդարությունն ու ճշմարտությունը հաղթանակ տարան, իսկ դա քիչ բան չէր:

Դատավոր Սուսաննա Գաբրիելյանը հայտարարեց ընդմիջում: Դատարանը հեռանում է վերջնական վճիռ կայացնելու:

Ոչ ոք դահլիճից չհեռացավ: Բոլորը սպասում էին դատարանի վճռին: Կես ժամից հետո դատական ատյանը նորից երևաց: Դատավորը համակ լռության մեջ կարդաց դատական ատյանի համատեղ վճռի մասին:

Դահլիճում նստածների մեծ մասը ծափահարեց: Գեղամ Հակոբյանի ցմահ բանտարկությունը խանդավառություն էր առաջացրել շատերի մոտ: Պատժվեցին նաև երկու ոստիկանները: Մինաս Դաբաղյանը ենթարկվել էր 14 տարվա ազատազրկման:

-Արժանի են,- բացականչեց դահլիճը:

Գայանե Թումանյանը, որը երկար տարիներ իր մոտ օրինական կերպով ատրճանակ էր պահում, առաջին անգամ զգաց նրա անհրաժեշտությունը: Եթե տիկին Էմման կտա նրա անունը, տիկին Գայանեն գտնում էր, որ իր ապրելը ավելորդ է: Դա չկատարվեց: Նա հանգիստ ատրճանակը գզրոցում հետ հրեց, վերցրեց սիգարետը ու մոտեցավ պատուհանին: Վերջապես իր երազանքը կատարվեց: Հակոբյանը ստացավ իր պատիժը: Ու նրա աչքերից թափվեցին արցունքներ: Դրանք ուրախության արցունքներ էին...

Դատավորի՝ վճիռը կայացնելուց հետո պահեստի գեներալը, միայնակ նստած հաշմանդամի սայլակին, շշնջաց. «Ես ճիշտ չեմ դաստիարակել իմ որդուն»:

Հետո լավեց կրակոց: Գեներալը ավարտեց իր դժբախտ կյանքը:

«Բերդը» դուրս եկավ դատարանի դահլիճից ու քայլերն ուղղեց դեպի մոտակա բացօթյա սրճարանը: Նրան հետևեց Վահանը: «Բերդը» նստեց ազատ սեղաններից մեկի մոտ: Վահանը նստեց նրա դիմաց ու երկար նայեց «Բերդի» աչքերին:

-Ո՞վ եք դուք,- վերջապես հարցրեց Վահանը:

-Ե՛ս, ես «Բերդն» եմ,- ժպտալով պատասխանեց «Բերդը»,- այն մարդը, որին նաև «միստր իքս» են անվանում:

-Բայց...ինձ չափազանց հետաքրքիր է, թե դուք ինչով էք շահագրգռված, որ այդ սրիկա Գեղամ Հակոբյանը ստանա այդ արժանի պատիժը,- հարցրեց դատապաշտպան Դարբինյանը:

-Ճիշտ էք նկատել, ես իրոք ուզում էի, որ դատարանը ճշմարիտ ու արդար որոշում կայացնի:

-Կարելի՞ է հարցնել՝ ինչու...

«Բերդը» սրճի բաժակը դանդաղ դրեց սեղանի վրա և սևեռուն նայեց Վահանին ու լրջորեն պատասխանեց:

-Կգա ժամանակը, և ամեն ինչ կիմանաք:

Էպիլոգ

Հաջորդ տարի ամռանը Գանձասարում կայացավ Շավարշ Ղազարյանի մահվան տարեդարձը: Այն տեղի էր ունենում քաղաքային իշխանությունների հովանու ներքո: Ղազարյան գերդաստանի ամենից առաջ Տատյանա Տարասովայի և Շավարշի եղբայրների ակտիվ նախաձեռնությամբ: Մեծ շուքով և հանդիսությամբ էր նշվում Հայրենիքի խիզախ որդու, Ղարաբաղյան ազատամարտի մասնակից ու երկրապահների վաշտի հրամանատար Շավարշ Ղազարյանի սգո հանդեսը: Քաղաքապետարանի հանդիսությունների պալատում ասեղ գցելու տեղ չկար:

Քաջ երիտասարդի անմեռ հիշատակի առթիվ եկել էին հանրապետության տարբեր քաղաքներից ու գյուղերից: Եկել էին Երևանից, Գյումրիից, Վանաձորից, Վրաստանից, Կազանից, Լեռնային Ղարաբաղից: Հյուրեր կային Ռուսաստանի Դաշնությունից, Բելառուսից, Ուկրաինայից, անգամ Հունաստանից, Ֆրանսիայից: Աստեղ էին «Լեռնային արծիվներ» վաշտի տասնյակ ֆիդայիներ:

Բոլորը, բոլորը եկել էին իրենց գլուխները խոնարհելու Շավարշ Ղազարյանի հիշատակի առջև: Այստեղ էր պարոն Անդրանիկ Սիմոնյանը կնոջ հետ, Սվետլանա Սիմոնյանը ամուսնու հետ, Վահան Դարբինյանի քեռակինը՝ տիկին Ալվարդը: Եկել էին կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում նաև «Բերդը»:

Ներկա էին մշակույթի և արվեստի ներկայացուցիչներ, այդ թվում Գանձասարի մշակույթի տան տնօրենը որդու հետ:

Ժամը տասներկուսին թափորը շարժվեց դեպի գերեզմանատուն: Բոլորը հերթով խոնարհվեցին իրենց ընկերոջ ազնիվ քաղաքացու, քաջարի ազատամարտիկի հուշարձանի առջև: Շավարշի հուշարձանը ծածկվեց ծաղիկներով և ծաղկեպսակներով:

Հուշարձանի քարե արձանը, որտեղից Շավարշը, իր հաճելի ժպիտով, քարին նստած, աջ ձեռքի ափը ճակատին, արևից աչքերը ապահովելու համար, ավտոմատը ծնկներին, ապահով հսկելում էր Գանձասարի խաղաղ կյանքը՝ պաշտպանելով Նախիջևանը Թուրքերի հարձակումից:

Հուշարձանի վերևում շողում-շողշողում էր կապույտ ու խաղաղ երկինքը:

Ժպիտը դեմքին՝ ասես Շավարշը բարևում էր բոլորին: Ժպիտ, որը իրեն ուղեկցում էր թե՛ Գանձասարում աշխատանքի պահին, թե՛ Ղարաբաղում թեժ մարտերի պահին:

Տատյանան նորածին տղայի հետ կանգնած էր Հուշարձանի դիմաց: Հավաքվածները, գլուխները բարձրացրած, նայում էին Շավարշի Հուշարձանին: Հանկարծ Հուշարձանի վերևում հավաքվեցին կտոր-կտոր ամպեր: Բոլորը լուռ անկախ իրենցից բարձրացրին իրենց գլուխները դեպի երկինք: Բոլորը և ամեն մեկը իր համար նկատեցին Շավարշի ուրվականը: Սպիտակ երկար վերնաշապիկով, ճակատը կապած սև ժապավենով: Բոլորը և ամենքը իրենց համար լսեցին Շավարշի ձայնը. «Բարև՛, իմ հայ ժողովուրդ, բարև՛ իմ սիրելի կին՝ Տատյանա: Ես գիտեմ, որ նորածին որդուս անվանել ես Շավարշ: Համբուրում եմ նրա ճակատը և ցանկանում եմ նրան երջանկություն: Բարևում եմ իմ հարազատ եղբայրներին՝ Վալտերին և Ռուբենին: Բարևում եմ իմ բոլոր հարազատներին:

Բարև՛ ղարաբաղցի հայ ֆիդայիներ, բարև՛ իմ «Լեռնային արծիվներ» վաշտի անդամներին: Բարև՛ իմ դատապաշտպան Վահան Դարբինյան ու նրա օգնական Արման Աբրահամյան:

Մեծ հաճույքով բարևում եմ ու գրկում պարոն «Բերդին», իր կատարած ծանր գործի, իմ արդարությունը պաշտպանելու համար:

Ես ուրախ եմ՝ ձեզ տեսնելով իմ կյանքից վաղաժամ հեռացած տարեդարձի առթիվ: Ես անվանվեցի չարակամ ու չարասիրտ մարդկանց կողմից: Նրանք միայն իմ մարմինը սպանեցին, հոգիս

սպանել չկարողացան: Ընդմիշտ հիշեք, արտաքին թշնամու դեմ կռվելը հեշտ է, քանի որ նրանց նկատելը հեշտ է բոլոր կողմերից: Վտանգավորը ներքին թշնամին է, քանի որ նա հաճախ անտեսանելի է: Ագնիվ և արդար եղեք իրար նկատմամբ:

Մնակախ Հայաստանի Հանրապետության ազա՛տ քաղաքացիներ, ապրե՛ք երջանիկ ու ուրախ: Բոլորիդ ասում եմ ցտեսություն ու մինչ նոր հանդիպում:

Աստվա՛ծ ձեզ պահապան»:

Բոլորը լուռ նայում էին երկնքում հայտնված ուրվականին: Նայում էին ու լուռ արտասվում:

Արցունքներ, որ ոչ մեկը չի կարող ասել տխրության թե ուրախության արցունքներ էին:

Վահան Դարբինյանը և Արման Աբրահամյանը սրբեցին իրենց աչքերի արցունքները ու նայեցին Շավարշի հուշարձանին:

Շավարշ Ղազարյանի մահվան տարեդաձին ներկայացել էր նաև «Բերդը», կանգնել էր քիչ հեռու հուշարձանից, մենակ: Նա լաց չէր լինում, բայց տխրություն էր կաթում նրա թախծոտ աչքերից:

Վահանը նկատեց նրան: Նայեցին իրար: Ասես ուզում էին մեկ մյուսից շնորհակալություն հայտնել տաժանակիր աշխատանքի համար:

Վահանը մոտեցավ «Բերդին».

-Բարև՛ «Բերդ»:

-Բարև՛ հարգելի ընկեր Վահան ջան,- պատասխանեց «Բերդը»,- ես անչափ ուրախ եմ, որ դուք կարողացաք վերականգնել իմ ընկերոջը՝ Շավարշ Ղազարյանի մարդկային արժանապատվությունը:

-Այդ գործում մեծ էր նաև Ձեր օգնությունը: Առանց Ձեր օգնության շատ դժվար կլիներ այդ ամենը իր ավարտին հասցնելը:

-Պարզապես ես չէի կարող անտարբեր մնալ,- պատասխանեց «Բերդը»:

-Ինչո՞ւ,- հարցրեց Վահանը:

Կարճ լռությունից հետո «Բերդը» պատասխանեց.

-Քանի որ ես Գայանե Թումանյանի որդին եմ, որին ես շատ եմ սիրում և Գեղամ Հակոբյանի ապօրինի որդին, որին և շատ եմ ատում: Ես Վրեժ Թումանյանն եմ: Ինչո՞ւ Վրեժ, դա քեզ հասկանալի պետք է լինի:

-Հասկանալի՛ է,- պատասխանեց Վահանը:

Վրեժը մի պահ խոր նայեց Վահանի աչքերին ու ասաց.

-Սառը խորտիկները մատուցում են սկուտեղի վրա:

Վերջ

5.10.2016թ. ք. Գորիս